Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 87

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՔՆՆԱԿԱՆ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

*ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց*

## ՄԱՍՆ Դ.

## ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԺԱՄԱՆԱԿ ԱՆՏԵՐՆՋՈՒԹԵԱՆ, ՄԻՆՉԵՒ Ի ՎԱԽՃԱՆ Ե. ԴԱՐՈՒ։

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՇԱՐԺՄՈՒՆՔ։

ԹԻՖԼԻՍ

*Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի*

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1895

*Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառւում են Ընկերութեան գրասենեակում եւ կենտրոնական գրավաճառանոցում:*

| | | Ր. | Կ. |
|---|---|---|---|
| 1 | Թուամաղ մեղու (սպառ.) } թարգմ. օր. Ն. . . . . . . | — | 40 |
| 2 | Կարմիր լապտեր } Տէր-Մարկոսեան . . . . | — | 30 |
| 3 | Մանկական երգեր, Գամառ-Քաթիպայի . . . . . . . | — | 15 |
| 4 | Թովմաս եղբօր տնակը, } թարգմ. օր. Ն. . . . . . | — | 45 |
| | Նոյնը կազմած . } Տէր-Մարկոսեանի . . . . . | — | 60 |
| 5 | Մորեխ և նրա ջնջելու հնարները, աշխ. Հ. Տ.-Բարսեղեանի | — | 10 |
| 6 | Նեղ և խոնաւ բնակարանների մասին, Հ. Առաքելեանի | — | 10 |
| 7 | Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. . . . . . | — | 80 |
| 8 | Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան, Մօրիս Բլօքի | — | 50 |
| 9 | Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւններ, (սպառ.). . | — | 50 |
| 10 | Ռօբինզօնի պատմութիւն, թարգմ. Գիւտ ք. Աղանեանի | — | 60 |
| 11 | Ուխտաւորք, գործ Վիլհէլմ Հաուֆի, աշխ. Ռ. Պատկան. | — | 75 |
| 12 | Գառնուկ և Լուսատտնիկ, Շմիդտի, թարգմ. Նուարդի. | — | 25 |
| 13 | Սայեաթ-Նովա, ազգային երգիչ . . . . . . . . . | — | 5 |
| 14 | Ծննդեան պատմութիւնը. . . . . . . . . . . . | — | 10 |
| 15 | Ագաթանգեղեայ պատմութիւն . . . . . . . . . | 1 | — |
| 16 | Գիւղական խալիֆայ, Ա. Արարատեան . . . . . . . | — | 50 |
| 17 | Վանայ սաղ, Դ. Շերենցի . . . . . . . . . . | — | 75 |
| 18 | Փնջիկ, գրեց Աղէքս. Արարատեան . . . . . . . . | — | 20 |
| 19 | Նամուս, վէպ, գրեց Շիրվանզադէ . . . . . . . . | 1 | — |
| 20 | Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմ. տիեզերական | 2 | — |
| 21 | Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը } Տէր-Աղէք- . . . . . . | 1 | 50 |
| | Նոյնը ընտիր թղթի վերայ } սանդրեանի. . . . . . | 2 | — |
| 22 | Ղեւոնդ պատմագիր . . . . . . . . . . . . . | 2 | — |
| 23 | Սրբազան պատմութիւն (սպառ.) } Ս. քահ. Սա- . . . . | — | 30 |
| 24 | Նոյնը ուսուցիչների համար } հակեանի . . . . | 1 | 75 |
| 25 | Սոկրատէս, թարգմ. օր. Թ. Ստեփանեան . . . . . . | — | 10 |
| 26 | Պատմութիւն Հայոց, Պալասանեանի (սպառ.). . . . . | 1 | 50 |
| 27 | Ուղեցոյց գործնական շերամապահութեան, Կ. Մել.-Շահն. | — | 40 |
| 28 | Ժամանակագրութիւն Հայոց Յ. Դարգելի . . . . . . . | 1 | 25 |
| 29 | Վարդ-Ուէսլին Սալիրի, թարգմ. Ի. Յ. . . . . . . . . | — | 10 |
| 30 | Նալ և Դամայեանթի, Ֆ. Շմիդտի . . . . . . . . . | — | 20 |
| 31 | Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, Կոմս Լ. Տոլստոյի | — | 7 |

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 87

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

# ՔՆՆԱԿԱՆ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

*ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց*

## ՄԱՍՆ Դ.

## ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԺԱՄԱՆԱԿ ԱՆՏԷՐՆՉՈՒԹԵԱՆ, ՄԻՆՉԵւ Ի ՎԱԽՃԱՆ Ե. ԴԱՐՈՒ։

**ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՇԱՐԺՄՈՒՆՔ։**

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 7 Іюня 1895 года.

665

# ՄԱՍՆ Դ.

## ԺԱՄԱՆԱԿ ԱՆՏԷՐՆՋՈՒԹԵԱՆ, ՄԻՆՉԵՒ Ի ՎԱԽՃԱՆ Ե. ԴԱՐՈՒ: ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՇԱՐԺՄՈՒՆՔ:

# ՄԱՍՆ Դ

## ԳԼՈՒԽ Ա.

### ՀԱՅՔ ՅԱՆՏԵՐՆՋՈՒԹԵԱՆ: ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ:

*1. Անարժան աթոռակալք զկնի Սահակայ: 2. Միտումն Հայոց Պարսից բաժնին ի Յոյնս. Առնմախոսութիւն Սահակայ: 3. Շմուէլ. Արթնութիւն Սահակայ եւ Մեսրոպայ ի հսկել հօտին: 4. Տեսիլ Սահակայ. Յայտնութիւնք: 5. Վախճան վերջին թագաւորին Արտաշրի. Հայաստան կը գրաւուի զօրօք: 6. Սպուռէք. Աշակերտք Սահակայ. Մահ նորա: 7. Մեսրոպ. Գիւտ հայերէն նշանագրաց. Առաքելական ջանք Մեսրոպայ: 8. Զարմանալի վկայութիւն մի: 9. Ջանք վասն Վրաց եւ Աղուանից: 10. Մահ Մեսրոպայ. 11. Ժամանակագրական ինչ տեղեկութիւն: 12. Պատմութիւն գիւտի նշանագրաց: 13. Թարգմանութիւն Գրոյն: 14. Առաքումն աշակերտաց: 15. Թուղթք Պրոկղի եւ այլոց առ Սահակ վասն Նեստորի: 16. Թուական առաքման եւ դարձի աշակերտաց: 17. Թէ ինչ պարտ է իմանալ թարգմանչօք: 18. Թէ Հայք յառաջագոյն եւս կ'երթային յուսումն ի Յոյնս: 19. ԿԱ. գլուխ Գ. դպրութեան Խորենացւոյն, եւ յետին մատենագիրք ըզթարգմանչաց: 20. Կարծիք յետնոց զԽաչի ծառէն եւ զաշակերտաց թարգմանչաց: 21. Խորենացւոյն Գ. դպրութեան ԿԱ. գլխոյն վրայ: 22. Ժամանակագրական խնդիր զառաքմանէ աշակերտաց յԱղեքսանդրիա ըստ Խորենացւոյն: 23. Հաւանական ժամանակ գրութեան ԿԱ. գլխոյ Գ. դպրութեան Խորենացւոյն եւ Ողբին: 24. Հնագոյն մնացորդք հայ լեզուին: 25. Զանազանութիւն ոճոյ ի գրուածս Ե. դարու: 26. Մատենագրութիւն երկրորդ կիսոյ Ե. դարուն: 27. Խորենացի եւ գործք որ կ'ընծայուին նմա: Պատմութիւն պատկերին. Պատմութիւն Հռիփսիմեանց: Ճառ Հռիփսիմեանց եւ Վարդավառին. Գիրք Պիտոյից. Աշխարհացոյցն: 28. Եղիշէ եւ Փարպեցին: 29. Մամբրէ: 30. Դաւիթ Անյաղթ:*

1. «Իսկ նախարարք մեր խնդրէին ի Վռամայ այլ աթոռակալ, և Վռամ ետ նոցա զԲրքիշոյ ոմն ասորի: Սա եկեալ վատթար ընկերակցօք, ածեալ ընդ ինքեան և կանայս անկարուչս, անժուժա-

բար և անելորդօք և յափշտակութեամբ վախճանելոցն վիճակաց վարեալ ամս երիս. որում տանել ոչ կարացեալ նախարարացն՝ դարձեալ աղաչեն զՎռամ՝ փոխել զնա և տալ զայլ ոք ըստ կրօնից նոցա. և կիսոցն ի նոցանէ զմեծն Սահակ խնդրեալ» (Խոր. Գ. ԿԳ.)։

Այսպէս յետ Բրքիշոյի նախարարք բաժնուելով երկու՝ մի մասը կը խնդրէ ի Վռամայ կաթողիկոս զո՛ և հաճի տալ Վռամ, միւս կողմն՝ զմեծն Սահակ։ Ըստ Խորենացւոյն՝ Անատոլիոս զօրավար կը խնդրէ ի Վռամայ տալ զՍահակ բաժնին Յունաց, եթէ ինքն չհաճիր պահել զնա. զնոյն կը խնդրեն նաև եպիսկոպոսունք և կղերն համօրէն։ Վռամ կը կատարէ երկու կողման ևս խնդիրը, կացուցանելով Շմուէլ զամն ասորի՝ քաղաքական կաթողիկոս ընդ ձեռամբ մարզպանին, և զՍահակ՝ իբրև հոգևոր հովիւ, նմա յանձնելով վարդապետութեան և ձեռնադրութեան գործն հաւանութեամբ Շմուէլի.— «Որպէս ասացաք, յերկուս բաժանեալ նախարարքն Հայոց՝ յերկաքանչիւրոցն առաքեցին խնդրել աթոռակալ յարքայէն Պարսից. Վաչէ Արծրունեաց տէր և Հմայեակ Աշոցայ տէր՝ զոր ոք և արքայ կամեսցի. իսկ Մանէճ Ապահունեաց տէր և Սպանդարատ Արշարունեաց տէր՝ զմեծն Սահակ. նաև զօրավարին Յունաց Անատոլեայ ի Կարնոյ զՀաւուկ ի Կուկայառճոյ (առաքէ), զի եթէ ոչ իցէ նմա հաճոյ ունել (զՍահակ) յիւրում բաժնին՝ տացէ զնա մասինն Յունաց։ Յղեցին և բազմութիւնք եպիսկոպոսացն հանդերձ երանելեաւն Մեսրոպաւ և բովանդակ ուխտիւ եկեղեցւոյն մաղթանս զքահանայն Տիրուկ, զորդի Մովսիսկան ի Զարիշատէ Վանանդայ։ Վասնորոյ հաւանեալ Վռամայ՝ զերկաքանչիւրոցն կատարեաց զխընդիր, տուեալ յաթոռ եպիսկոպոսապետութեանն զայլ ոմն ասորի Շմուէլ անուն, զի լիցի ընդդիմախօս մեծին Սահակայ և հակառաթոռ. և գործ նմա զատուցեալ՝ զընկերել մարզպանին, կալ ի վերայ բաշխից հարկաց խնդրելոյ և դատաստանաց և այլ աշխարհական կարգաց։ Եւ զմեծն Սահակ արձակեալ՝ թողու ի նա սակաւ գիւղս ի նորին տանէ, զի նստցի յինքեան, միայն իշխանութիւն ունելով վարդապետութեան սովորական կրօնիցն, և ձեռնադրութեան զայնոցիկ՝ զորոց և Շմուէլն յանձն առնուցու» (Խոր. Գ. ԿԵ.)։

**2.** Խորենացին հոս կը պատմէ Վռամայ յորդորելն զՍահակ ի հաւատարմութիւն, և Սահակայ բանիբուն ատենախօսութիւնն ի զարմացումն թագաւորին և բոլոր աւագանւոյն Պարսից, մինչև խոստանալ Վռամայ «արծաթ բազում» Սահակայ ի վարձ համարձակախօսութեան նորա։ Սահակ չընկալաւ զարծաթն, այլ ի ձեռն Սուրենայ խնդրեց շնորհս ինչ, որ տրուեցան նմա. նախ՝ որ մարզպանք չունենային իշխանութիւն փոխելու նախարարաց աստիճան-

ներն, այլ պահուէր՝ ինչ որ սահմանուեցաւ առ Արտաշրիւ (իմա Յազկերտիւ Ա.). երկրորդ՝ Հրահատայ որդւոյն, Գազաւոնի մանկան տրուէր Կամսարականաց բուն պատիւն, յորմէ ինկած էին, և կամ ուրիշ որ և իցէ նախարարական պատիւ: Այս խնդիրք Սահակայ ընդունուեցան, և թոռին ևս նորա Վարդանայ ստրատելատի տըրուեցաւ տանուտէրութիւնն Մամիկոնեան ցեղին.—«Բայց յարձակելն (Վռամայ զՍահակ) յանդիման իւր արարեալ ի բազմակոյտ ատենին ասէ. Երդմնեցուցանեմ զքեզ ի քոյին հաւատ՝ միամիտ կալ ի ծառայութեան մերում և ոչ խորհել իրս ապստամբութեան, պատրել ի մոլար հաւատակցութիւնն Յունաց և լինել կորստեան պատճառ Հայոց աշխարհին ի մէնջ, փոխել զբարերար անուն մեր ի չարաչար: Յայնժամ կանգուն կացեալ մեծին Սահակայ, պարկեշտ և նազելի զինքն կազմեալ ի բեմբասացութեան ձևի՝ համեստ հայեցուածովք, համեստագոյն ևս ձայնիւ սկսաւ ճառել զերախտիս ծառայութեանն, և զապերախտն ի նոցանէ լինել, ընդ նմին և զկեղծաւոր քաղցրաբանութիւնն նոցա յանդիմանելով, և զդառնութիւն խորհրդոց և զգործս չարաչարս. յարելով ի նոսին զընդդիմաբանել անմիտ հայհոյութեանցն, զոր ասաց մոլար հաւատակցութիւն. և զնոցայն խայտառակելով պաշտամունս՝ կատարեաց ի հրաշալի աստուածաբանութիւն ըստ հանդուրժելոյ հեթանոսական լսելեաց, և ոչ զբովանդակ բանին զպայծառութիւն անհաւատիցն արկանել առաջի յայպանումն, որպէս զմարգարիտ ի խոզից կոխումն, այլ ընչափ կայծակնաճաճանչեցուցեալ՝ որով զգազաղացան մոգուցն լեզուք, և հիացեալ պակեաւ ինքնին թագաւորն, և ամենայն բազմութիւն հրապարակին անձնագեղայն Պարսից՝ յակճիռս կալով ականջել. մինչև հրամայեաց Վռամ արծաթ բազում տալ նմա իբրև քաջաբանի և ուժգնասրտի առն, համարձակախօսի առաջի այնքանոյ թագաւորի: Այլ նորա ոչ առեալ՝ ասէ ցհամազգին իւր ցՍուրէնն Պահլաւ. Արծաթ նորա նմա լիցի. բայց դու հաւանեցուսցես զնա տալ ինձ զերկուս զայս միայն. զգահ նախարարացն Հայոց, որպէս կարգեալ է յԱրտաշրէ և վարեցան մինչև ցայժմ՝ նորին օրինակաւ հրամայեսցէ և այսպայ, զի մարզպանք պարսիկք մի կարասցեն... փոխել ըստ կամաց իւրեանց: Եւ միւս՝ զի դարձուսցէ զառն ազգականին իմոյ և քոյ (քանզի Կամսարականք ևս էին Պահլաւ), զմանկանն Գազաւոնի զորդւոյն Հրահատայ, թէ ոչ յիւրում տեղ, զԱրշակունին յաջողելով զանուն՝ գէթ ի կարգ ընկեցեալ՝ ընդ այլ նախարարսն թուեսցի, յորում տեղւոջ ինքն կամեսցի... մինչև Աստուած քաղցրասցի դարձուցանել ի կարգ հայրենի ընդ ձեռն որոյ և է թագաւորի: Արդ ջանասցիս դու թողել զօրէն

համոզակեր թուղթ: Այնմ լուր եղեալ Վռամայ՝ հրամայէ զամենայն կատարել. և դարձեալ հաստատելով զԹոռն նորա զՎարդան սորա տեղւոյն ի տէրութիւն իւրոյ Մամիկոնենից՝ արձակէ ի Հայս» (Խոր. Անդ):

Ամբաստանութիւն նախարարացն զՍահակայ, թէ էր «զՅունովք գլեալ խորհրդովն», Վռամայ ի բազմակոյտ ատենին երդմնեցուցանելն զնա «միամիտ կալ ի ծառայութեան և ոչ խորհել իրս ապստամբութեան», չվստահելով Սահակայ և ոչ այլում հայ եպիսկոպոսի՝ երկիցս տալն զկաթողիկոսութիւնն ասորւոյ, և ի տալն Սահակայ զառաջնորդութիւնն հոգևոր, կացուցանելն զասորին ի վերայ նորա հսկող, և ուրիշ ակնարկութիւնք ինչ Խորենացւոյն՝ կու տան կարծել ոչ յանիրաւի, թէ Սահակ ունէր արդարև խորհուրդ ազատելու զազգն, եթէ էր հնար, ի լծոյ Պարսից և մուծանել ընդ իշխանութեամբ Յունաց: Սահակ իսկ իւր պատասխանին մէջ առ Վռամ չուրանար, թէ չունէր կամ չկար ազգին մէջ ապստամբութեան կամ ի Յոյնս գլելու խորհուրդ, այլ կը յիշէ միայն զծառայութիւն ազգին, և զայլերախտութիւնն Պարսից—«սկըսաւ ճառել զերախտիս ծառայութեանն, և զայլերախտն ի նոցանէ լինել»: Ուստի շատ հաւանական կը թուի, թէ Խոսրովու ժամանակէն իսկ Սահակ, և թերևս նախարարներէն և կղերէն ևս կարի մեծ մաս մը կը տածէին ապստամբութեան խորհուրդը, որ ոչ յետ բազմաց ելաւ ի լոյս առ Վարդանամբք:

**3.** Շմուէլ—ասէ Խորենացին, յառաջ տանելով իւր պատմութիւնը (Գ. ԿԶ.)—հետևեցաւ Բրքիշոյի, նա և անցոյց իսկ զնա յագահութեան մասին. չէր թողուր Սահակայ նոր եպիսկոպոս ձեռնադրել փոխանակ մեռելոց. նոցա եկամուտներն կամ ինք կը յափշտակէր և կամ կու տար Սուրմակայ. այսպէս լինէր չար օրինակ ուրիշ եպիսկոպոսաց առնել զնոյն՝ առնելով թէկուզ զԹագաւորն Պարսից կամ իւրաքանչիւր զիւր իշխան: Մինչ եկամուտ կաթողիկոսունք այսպէս չարաչար կը վարէին կաթողիկոսութիւնը՝ Սահակ նստելով ի մայր եկեղեցւոջ Վաղարշապատու (Էջմիածին)՝ կը մատուցանէր անդադար, Մեսրոպաւ հանդերձ, իւր հաւատացեալ հօտին վարդապետութեան անխարդախ կաթը.—«Եկեալ Շմուէլի կալաւ զաթոռ եպիսկոպոսութեանն, հետևեալ վարուցն Բրքիշոյի, և առաւել ևս ագահութեանն մասամբ. զի նա զվախճանեալ եպիսկոպոսացն յափշտակեաց զվիճակ, այլ սա և զկենդանեացն. քանզի փոխանորդ մեռելոցն ոչ տայր թոյլ մեծին Սահակայ ձեռնադրել, և զկենդանեացն դոյզն ինչ պատճառս գտեալ խափանման հարկաց արքունի՝ հալածական առնէր, յինքն կորզելով զամեն-

ցուն տունս։ Վասնորոյ առեցեալ ի բնաւ եպիսկոպոսացն՝ արհա-
մարհեալ լինէր. զի թէ բիւրապատիկ չարիս ի նմանէ կրէին՝ ոչ
երբէք տեսանէին զնա, բայց ի Սուրմակայն յայնմանէ, զորոյ և
մեծացոյց զվիճակն. արքունի հրամանաւ հանեալ ի բազմաց՝ նմա
հաւատայր։ Ընդ որ նախանձեալ և այլ եպիսկոպոսաց՝ ժպրհեցան
զնոյն առնել, խնդրելով ի Պարսից արքայէն օգնականութեամբ
իւրաքանչիւր իշխանաց։ Այլ մեծն Սահակ ոչինչ կասեաց զհոգևոր
կաթնն դիեցուցանել մանկանց եկեղեցւոյ հանդերձ Մեսրոպաւ, զոր
թողեալ խաբսխեաց յեկեղեցւոջն կաթուղիկէ որ ի Վաղարշապատ
քաղաքի, ինքն կալով ի Բագրևանդ գաւառի, ի տեղւոջն ուր ծա-
գեաց յերկնուստ լոյսն ի մկրտել սրբոյն Գրիգորի զՏրդատ արքայ
և զբոլոր Հայսս» (ըստ պատմութեանն Ագաթանգեղոսի ԾԺԸ.)։

**4.** Շմուէլ կը վախճանի յետ հինգ ամաց, և նախարարք կը
խնդրեն ի Սահակայ ունել զաթոռն առանձին, խոստանալով նմա
առնուլ զհաճութիւն թագաւորին. բայց նա պատմելով նոցա մար-
գարէական իմն տեսիլ, որ, ասէ Խորենացին, եղած էր նմա ժա-
մանակաւ՝ կը հրաժարի ընդունել նոցա խնդիրը, և նախարարք կը
մեկնին տխրութեամբ.—«Բայց Շմուէլ կեցեալ ամս հինգ՝ մեռանի
ի մերում աշխարհիս։ Յայնժամ ժողովեալ ի մի տեղին ամենայն նա-
խարարացն՝ չոգան առ մեծն Սահակ, և զմեղանս յանձն առեալ՝
աղաչէին զնա դարձեալ ունել զաթոռն. խոստանային ի Պարսից
արքայէն հաստատել զնա, մուրհակ ամենեցուն կնքեալ՝ ազգաւ
տալ թոռանց նորա զնոյն իշխանութիւն։ Այլ նա ոչ առնոյր յան-
ձրն. և ի բազում թախանձելոյ նոցա հարկաւորեալ՝ պատմեաց
զտեսիլն, զոր յառաջ քան զբազում ժամանակս երևութացաւ նմա
ի քուն ապագայից յայտնութիւնք։ Զոր լուեալ նախարարացն և
գիտացեալ, թէ յաստուածային հրամանէ դադարեաց յազգէ նորա
քահանայապետութիւնն, յարտասուս հարեալ, աւաղելով զինքեանս
ըստ Աւետարանին բանի, թէ Հարկ է գալ գայթակղութեանն, բայց
վա՜յ այնոցիկ ընդ ոյր ձեռն գայցէ գայթակղութիւնն՝ թոյլ ետուն
նմա» (Խոր. Անդ)։

Յայտնութիւնք յանուն հին և նոր սրբոց, ինչպէս Ադամայ,
Ենովքայ, Նոյի, Դանիէլի, Պետրոսի, Յովհաննու, աւելի կամ նուազ
ի պատուի յառաջնում դարու անդ քրիստոնէութեան՝ եղան ար-
գարև, բաց ի միոջէն զոր ունինք ցարդ ի կանոնի նոր Կտակարա-
նին՝ առ սակաւ սակաւ անհետ, սակայն մնաց հետքն ի վարս ո-
մանց ի նշանաւոր սրբոց։ Զարմանք չէ, որ Հայք ևս ունենային,
յանուն երկու լուսաւորչաց իւրեանց Գրիգորի և Սահակայ՝ գոնէ
երկուս, յորոց զմին կ'աւանդէ մեզ մատեանն Ագաթանգեղեան, և

զմիւսն Փարպեցին։ Յայտնութիւնք, ἀποκάλυψις յոյն անուամբ, որ կը համարուէին տեսլեամբ տրուած գուշակութիւնք «ապագայից», ինչպէս կ'անուանէ Խորենացին, եթէ անաչառ քննուին՝ ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ընծայութիւն անցեալ դիպաց ոչ հեռի գրողին ժամանակէն. բայց մարգարէական երեւոյթ տալու համար պատմութեան՝ կ'ընծայուի սրբոյ մը, որ ժամանակաւ յառաջ է քան ընծայուած դէպքը։ Յայտնութեան ձեւն է այս. յանկարծ կը բացուին երկինք, կը ծագէ լոյս, կ'երեւին այլաբանական նշանք և ցոյցք, զորոց նշանակութիւնը չհասկանալով տեսանողն՝ կը նայի զարմացմամբ, մինչև ումն մարդակերպարան և կամ հրեշտակ գալով՝ մի առ մի կը մեկնէ տեսիլը։ Այսպիսի է Սահակայ տեսիլն, որ նմանութիւն է տեսլեան Լուսաւորչին, և՛ արուեստիւ և՛ լեզուաւ խոնարհագոյն քան զնա։ Նպատակն է՝ Վարդանանց ժամանակին պատմութիւնն, ուխտապահաց և ուրացելոց (զորս յայտնի իսկ կ'ակնարկէ ուրեք), ցուցնել մարգարէական ոգւով կանխաւ յայտնուած առ Սահակ՝ իբր նախախնամութեան խորհրդով սահմանուած։ Այս տեսութենէն յայտնի է, թէ գրողն էր յետոյ քան զպատերազմն Վարդանանց, ի միջոցի երեսնամեայ ժամանակին 452—482։ Խորենացին, ինչպէս տեսանք՝ ասէ միայն, թէ Սահակ պատմեց տեսիլը—«պատմեաց զտեսիլն». Փարպեցին աւելի յառաջ երթալով՝ կու տայ նաև տեսիլը, և ի վախճանի կը յաւելու ևս, թէ Սահակ գրեց զայն երկնաւոր հրամանաւ, թէպէտ լեզուն չէ Սահակայ։ Փարպեցին յետ երկրորդելոյ անհամ երկայնաբանութեամբ, թէ ինչպէս յետ մահուն Շմուէլի նախարարք գալով առ Սահակ և խոստովանելով, թէ յանցեան մեծապէս, մատնելով զԹագաւորն իւրեանց Պարսից, աղաչեցին զնա ընդունել միւսանգամ կաթողիկոսութիւնը, խոստանալով առնուլ հրաման յարքայէն Պարսից, իսկ Սահակ մերժեց զխնդիրն և պատմեց նոցա տեսիլ, զոր ունեցած էր շատ տարիներ յառաջ՝—մէջ կը բերէ բուն տեսիլն այսպէս։—Որպէս թէ աղուհացից հինգշաբթի մը, երեկոյեան պաշտաման ժամանակ, մինչ դպիրք բազմօրեայ տքնութեանց պատճառաւ ծանրացեալք ի քնոյ կը ննջէին, կանթեղք և ճրագունք կը վառէին լի լուսով. և ընթերցողն կը յապաղէր զընթերցուածն, սպասելով հաւատացելոց բազմութեան ժողովելուն՝ Սահակ կը նստէր յեկեղեցւոջ Վաղարշապատու, սեղանին մօտ լի թախծութեամբ, վասն զի չունէր արու մանուկ։ Եւ ահա յանկարծ բացուեցաւ հաստատութիւնը, և ծագեց լոյս համատարած։ Սահակ տեսաւ բեմ երկնաբերձ և բեմին վրայ տետրասկեղ (τετρασκελής, այսինքն կազմած չորեքոտնեայ, զոր սովոր էն Յոյնք դնել ի վերայ մաղզմային) ոսկի, սպիտակ կտաւով ծած-

կուած, և խաչ ի վերայ։ Ըստ մեկնութեանն որ տրուեցաւ Սահակայ՝ երկնից բացուել և լուսոյն տարածելն կը նշանակէին զգալուստն Քրիստոսի և զծաւալումն վարդապետութեան նորա. իսկ բեմն բարձր մինչև յերկինս՝ կը նշանակէր ճշմարիտ հաւատքը, որով կը վերանան մարդիկ առ Աստուած. և տետրասկեղն ոսկի ծածկեալ մաքուր կտաւով՝ կը նշանակէր Աստուծոյ անհաս գիտութեան պատուականութիւնը և մաքրութիւնը։ Յետոյ տեսաւ Սահակ, որ մեղմ օդ, օրինակ Հոգւոյն սրբոյ, շնչելով բացաւ զկտաւն, ընդ որով կայր սեղան ընդելուզեալ պատուական քարերով—նշանակ պատուական առաքինութեանց արդարոց, և հաց և ողկոյզ—օրինակ հաղորդութեան խորհրդոյն, որ է նշանակ չարչարանաց և մահուան Քրիստոսի։ Հացին և գինւոյն մօտ տեսաւ Սահակ ձիթենի պտղաւէտ, որմէ կը կախուէին չորս ոտք, երեքն հաւասարաչափ, չորրորդն կիսով չափ նոցա. այս չորս ոտք էին քան զայլ մասունս ձիթենւոյն նուազ և փոխ պտղովք։ Ըստ մեկնութեանն՝ ձիթենին կը նշանակէր սէր և ողորմութիւն. երեք և կէս ոտք նշանակ էին երեք հարիւր յիսուն ամաց, այսինքն երեք և կէս դարուց, որ պէտի անցնէին մինչև ի գալուստ պղծոյն անապատի, և այս ոտից պտուղներուն նուազութիւնը և ցամաքութիւնը կը ցուցնէր, թէ մարդոց սէրն և արդարութիւն պիտի նուազէին և ցամաքէին ի միջոցի այն դարուց։ Պղծոյն անապատի կը թուի նշանակել հոս զՅազկերտ Բ, հալածիչն Հայոց. իսկ երեքհարիւր և յիսուն տարին չունի ամենևին նշանակութիւն. գրողը կը դնէ տարիներու այս հաշիւը՝ նմանցնելու համար իւր տեսիլը Դանիէլի և Յովհաննու Յայտնութեանց։ Բեմին ձախ կողմը կը տեսնէր Սահակ աթոռ չորեքկուսի ծովագոյն, և ի վերայ նորա սկուտեղ արծաթի, ծածկուած թխագոյն կտաւով, և սկուտեղին վրայ նափորտ բեհեզեայ ծալեալ, և գունդ ոսկի։ Աթոռը նշան էր թագաւորութեան և քահանայութեան. ծովու գոյնը և թխագոյն կտաւը կը նշանակէին ծփումն և թանձր սուգ, որ պիտի գար ի վերայ Հայոց և համօրէն աշխարհի. արծաթի սկուտեղն էր բանն Աստուծոյ, զտեալ և փորձեալ իբրև արծաթ, ինչպէս նափորտին ծալուած և գունդին դատարկ կենալը կը նշանակէր քահանայութեան դադրելը Գրիգորի ցեղէն, և թագաւորութեանն՝ Արշակունեաց ազգէն։ Սկուտեղին վրայ կար նաև մագաղաթ չորեքկուսի կտրուած, այսինքն ի ձև մատենի, որոյ ի սկզբան կային տողք ինչ ոսկեգիր, անտի ի խոնարհ դէպ ի մէջն ուրիշ ջնջուած տողեր, և ապա դէպ ի վայր դարձեալ մի և կէս տող ոսկեգիր, և անտի մինչև ի վերջ տողին կարմրագիր։ Ըստ

մեկնութեանն՝ առաջին ոսկեգիր տողերը կը ցուցնէին Լուսաւորչին
ցեղէն նստող կաթողիկոսներն, և ջնջագիր տողք՝ նոցա յաջորդող
անարժան կաթողիկոսներն. իսկ վերջին մի և կէս ոսկեգիր տողք
կը ցուցնէին զՍահակ և զՄեսրոպ, որ խաղաղութեամբ կը վախ-
ճանին. իսկ կարմրագիր կէս տողն՝ զՅովսէփ, որ յետ համբերելոյ
բազում նեղութեանց՝ արեամբ կնքեց զկեանս իւր: Շուրջ զսկըտեղ-
ըն տեսաւ բազմութիւն մանկանց և աղջկանց, ոմանք կարմրագոյն,
այլք երփն երփն պատմուճանօք. այս կը նշանակէր ըստ մեկնու-
թեանն՝ Սահակայ թոռներն, այսինքն զՎարդան և զայլս հանդերձ
ուխտապահ նախարարօք, յորոց ոմանք վկայեցին արեամբ, և այլք
հանդերձ կանամբք պայծառացան զունակ զունակ առաքինու-
թեամբք: Ի վախճանի շարժեցաւ աթոռն, և մանկտին, արու և
էգ, երկրպագանելով առին թեւ և թռան յերկինս. այս կը նշա-
նակէր, թէ բարի մարդիկ աշխարհի վրայ պէսպէս նեղութեամբք
հասնելով ի չափ կատարելութեան՝ ի վախճանի կը թռչին յերկինս
սուրբ մահուամբ: Հուսկ ապա կը վերանայ տեսիլն, և այն որ կը
մեկնէր՝ կը պատուիրէ Սահակայ կնքել տեսիլը: Կնքելն կը նշանակէր՝
թէ էր այն յաւիտենական վճիռ որ պիտի կատարուէր անվրէպ:
Սահակ երբև ի քնոյ զարթնլով՝ կը փառաւորէ զԱստուած, որ ար-
ժանացոյց զնա այսպիսի մեծ և ահաւոր տեսլեան, և կը լաէ. բայց
վախնալով թէ երբև ծածկող պատժուի Աստուծմէ, որ և գրով իսկ
աւանդել պատուիրած էր՝ պատմեց իւր մտերիմներուն: Ահա բանք
Փարպեցւոյն.—«Յառաջ քան զամս բազումս—ասէր Սահակ—խոր-
հուրդք անմխիթարք նեղէին զիս, անդադար զմտաւ ածելով և ա-
ղաչելով զԲարձրեալն՝ շնորհել ինձ արու որդի որպէս և նախնեացն
իմոց, որք յառաջ քան զիս էին ամուսնացեալք յաղագս որդեծնու-
թեան:.. Եւ էի ես ի մեծի հինգշաբաթօջն ի զատկի աղուհացիցն
ի հսկման, հաղորդեալ ի ժամ երեկոյին պաշտաման սրբոց և խոր-
հրդոյ կենարարին, ճաշակեալ այլ ընաւ ուելի ինչ ոչ՝ բայց հաց
և ջուր և աղ... և դասք պաշտօնէիցն ընդ նստելն ծանր նիրհ-
մամբ ի սաստկութենէ բազմօրեայ տքնութեանցն՝ որպէս կիսա-
մեռք եղեն, որոց զաւուրս քառասնորդացն ուժգին պահօք և ան-
դադար աղօթիւք զցայգ և զցերեկ հանեալ էր:.. Եւ լոյս ճրագացն
և կանթեղաց բորբոքեալ առջորէր, և ընթերցողն կամաւ յերկարէր
զկարգացուցմունսն յաղագս սակաւ մի ոգի առնլոյն և բուռեալոյ պաշ-
տօնէիցն առաջարկութեան կանոնին, մնայլին և ժողովրդոցն բազ-
մութեան ժողովելոյ ըստ սովորութեան ի պաշտօն գիշերոյն... և
ես նստէի մերձ առ սեղանն Աստուծոյ ի սուրբ եկեղեցւոջն Վա-
ղարշապատ քաղաքի: Եւ ահա յանկարծակի բացաւ հաստատու-

թիւնն վերին, ընդ որ ծագեալ լոյսն. սաստիկ՝ ելից զամենայն
երկիր։ Եւ կանգնեալ երևեցաւ ինձ յերկրի բեմ չորեքկուսի ամ-
պեղէն, որոյ բարձրութիւնն հասանէր մինչև յերկինս, լայնութիւնն
տարածեալ լնոյր զամենայն երկիր։ Եւ ի վերայ բեմին երևէր տե-
տրասկեղ յոսկւոյ սրբոյ խորանարդ, ըստ արժանի սպասաւորութեան
Տեառն, ծածկեալ լոյծ բարակ կտաւով ոսկետակափայլ գունով։ Եւ
ի վերայ խորանաձև ծածկութեան յայտնապէս նշան տէրունական
խաչին երևէր։ Եւ յանկարծակի եղև շնչիւն խաղաղասիգ օդոյ, և
բացաւ փեղկ մի ծածկութի կտաւոյն. ընդ որ հայեցեալ տեսի, և
ահա կայր ի վերայ բեմին սեղան չորեքկուսի ականակապ ի բազ-
մագունի ականց պատուականաց ընդելուզեալ։ Եւ ի վերայ սեղա-
նոյն կայր հաց մի սուրբ և ողկոյզ մի խաղողոյ ըստ պատուական
խորհրդոյ երկնաւոր փրկութեան։ Եւ մերձ առ սուրբ խորհուրդն
երևէր ծառ մի ձիթենի վարսաւոր պտղալից լոյժ, զորոյ ոչ կարէի
առնուլ զչափ բարձրութեանն և լայնութեանն, որոյ բերն էր բազ-
մապտուղ և առոք, և տեսիլն և գեղեցկութիւնն անպատում և
սքանչելի։ Եւ որոշեալ չորք ոտք ձիթենւոյն ի խոնարհ կողմ երկրի
ձկտեալ մօտէին. որոյ երեք ոտք միաչափ և հաստարակայտուղք
երևէին, և չորրորդն ի նոցանէ որպէս կիսաբաժին և նուազապտուղ
ըստ երկայնաչափութեան երիցն երևէր։ Եւ պտուղք չորեցունց ոտ-
ոցն ոչինչ ընաւ էին նմանք և կամ հաւասար պտղաբերութեան և
պտղաբոյծ առոքութեանն այլ պտղոյ ձիթենւոյն, այլ նուազք
թուով և փոքր առոքութեամբ, որպէս թէ ծնկեալ էին։ Եւ ընդ
ահեկէ բեմին աթոռ մի բարձր չորեքկուսի ծովագոյն սառնակերպ,
և ծածկեալ թանձր կտաւով թխագունիւ։ Եւ վերացեալ կտաւն ի
շնչմանէ քաղցր օդոյն եկելոյ՝ տեսի, և ահա սկտեղ արծաթի մեծ
ի վերայ աթոռոյն։ Եւ ի վերայ սկտեղն կայր նափորտ մի բեհե-
զեայ ծալեալ և եդեալ, և առ նմին գունդ մի ոսկի բոլոր, և մա-
գաղաթ հատուածաձև չորեքկուսի, գրեալ ի սկզբանն կարգս ինչ
սակաւ՝ ոսկետեսիլ գրով սքանչելապէս, իբր թէ ձեռամբ գրչի ճար-
տարի, և ի միջոյ կողման մագաղաթին հեռի յոսկեգիր կարգացն
երևէին այլ կարգք ինչ եղծեալք ջնջեալք, որոց ոչինչ ընաւ երևէր
տեսիլ գրոյն և կամ կերպարան։ Եւ հուսկ յեզր մագաղաթին հեռի
ի ջնջագիր կարգացն դարձեալ տեսանէի այլ ևս կարգ մի և կէս
կարգ գրեալ ոսկեգիր գրով առաւել սքանչելապէս, ըստ տեսոյ ա-
ռաջին կարգացն գրելոց ի սկզբանն մագաղաթին։ Եւ կիսագիր կարգն
մինչև ցմիջոց գրոյն և ևս առաւել էր ոսկւով, և այլն ցկատա-
րումն՝ կարմրագեղով երևէր։ Եւ կային շուրջ զծնօտիւք սկուտեղն
անթիւ բազմութիւն տղայոց արուաց, այլ սակաւ և իգաց. ամենն-

քեան պայծառացեալ լուսազգեցիկք էին։ Բայց ճառագայթ փայլման պատմուճանաց նոցա էր որ կարմրագոյն արձակէին նշոյլս, և էր որ այլ երփն երփն և գոյնս ազգի ազգիս։ Եւ դէմք ամենեցուն ի սուրբ սեղանն հայէին, չդարձուցեալ բնաւ և ոչ ուրեք զաչս իւրեանց ի խորհրդոյն փրկութեան։ Եւ սկսաւ յանկարծակի սաստկապէս դղրդմամբ շարժել աթոռն։ Եւ զմանկտին զոր տեսանէի ի տես տղայութեան՝ առժամայն վաղվաղակի փոփոխեալս ի հասակ երիտասարդութեան՝ կատարեալք լինէին, և եղեալ թեւազգեցիկք ի վեր ի սուրբ սեղանն, որ էր ընդելուզեալ ի բազմագունի ականց, թռուցեալ բնակէին։ Եւ համբարձեալ սուրբ սեղանն հանդերձ նոքօք ի վեր քան զբարձրութիւն հաստատութեան երկնից ծածկէր։ Եւ այսպէս եղեալ աներևոյթ տեսիլն ամփոփէր, և ես ի մեծ զարհուրումն ընկղմեալ ապշէի։ Եւ ահա յանկարծակի կերպարան մարդոյ երևէր ինձ յերկնից, այր լուսեղէն, որոյ տեսութիւն սաստկութեան լուսոյն մառայլեցուցեալ ծածկէր զարեգականն լոյս։ Եւ սլացեալ այրն հասանէր ուր եսն կայի. և իմ առաւել ևս հիացմամբ ապշեալ ի փայլակնացայտ երևմանէ առնն՝ անկայ վաղվաղակի գոգալով ի վերայ երեսաց իմոց յերկիր. և նորա բուռն հարեալ կանգնեաց զիս, և հաստատեալ կացոյց ի վերայ ոտից իմոց, և ասէ ցիս. Քաջալերեաց, զօրացիր և մի երկնչիր, այլ հաստատեա զսիրտ քո յանուն Հզօրին... որ եցոյց քեզ զմեծ խորհուրդ յառաջատես արարչութեան իւրոյ։ Եւ իմ ուշաբերեալ զօրացայ ի բանէ նորա և կանգնեալ կացի ի վերայ ոտից իմոց։ Եւ ասէ ցիս. Վասն է՞ր ես տրտում, և կամ ընդէ՞ր զբազմունս նանրութեան պղտորեն զմիտս քո... վասն չլինելոյ քեզ արու որդի։... Գթալով ի քեզ Բարձրեալն վասն սիրելոյ զքեզ՝ կամեցաւ դարձուցանել ի քէն զայդպիսի մտածութիւնս, և մխիթարեաց զքեզ տեսլեամբդ այդուիկ, որ ցուցաւ քեզ յայտնութիւն մեծ... որպէս նախնոյն քում առն Աստուծոյ սրբոյն Գրիգորի։ Եւ արդ լո՛ւր և պատմեցից քեզ զմեկնութիւն մեծի յայտնութեանդ... և. դու ունկնդիր եղեալ բազում զգուշութեամբ գրեա ի տախտակս սրտի քո անմոռաց, զոր և ի մագաղաթի դրոշմեալ թողցես հաւատացեալ ժողովրդոց։ Զբանալ հաստատութեան երկնից զոր տեսեր, և զտարածել լուսոյն ընդ ամենայն երեսս երկրի՝ քանզի ահա ի գալստենէ կենարարի Որդւոյն Աստուծոյ բացեալ է դուռն շնորհի ողորմութեան նորա առ ամենեսեան, յորս ծագեալ լուսաւորէ լոյս փառաց վարդապետութեան նորա։ Բեմն չորեքկուսի կանգնեալ, որ երևեցաւ քեզ բարձր յերկրէ մինչև յերկինս՝ հաւատոն ճշմարտութեան է, որով վերանան արդարքն ի ծանրութենէ աշխարհիս կենաց ի թեթևութիւն երկնից բնակութեան։

Եւ զի ամպեղէն գունով երևեցաւ բեմն՝ վասնզի որ վերացաւն ամպով՝ նոյն գալոց է վերացուցանել ընդ իւր զարդարս:.. Եւ տետրասկեղն ոսկի որ ի վերայ բեմին, զօրով էր արկեալ մաքուր կտաւն բարակ, որով ծածկեալ էր սուրբ սեղանն և որ ի նմա խորհուրդն՝ գիտեա և ծանիր, զի ծածուկ և անյայտ է խորհուրդ աստուածային գիտութեանն պատուականութեամբ և մաքրութեամբ ըստ պատուականութեան մաքուր ոսկւոյն և լուսափայլ մաքրութեան կտաւոյն:... Եւ զի եղեալ օդ քաղցրաշունչ եբաց զմասն ինչ կտաւոյն՝ իմա, զի ցուցան քեզ սուրբ Հոգւոյն քաղցր խաղացմունք, որ յայտ առնէ սրբոց իւրոց զխորհուրդ ծածկեալ աստուածութեան իւրոյ: Սեղանն ոսկի ի պատուական ականց ընդելուզեալ որ կայր ընդ կըտաւով՝ ծանուցանէ զվարս և զճգնութիւն արդարոցն, որպէս ըզպատուական ականց զանազանումն... Իսկ ըստ երևելոյ քեզ հացն և ողկոյզն ի վերայ սեղանոյն՝ յայտ առնէ զօրինակ մարմնոյ և արեան կենարար չարչարանացն: Իսկ երևումն քեզ սքանչելատեսիլ ձիթենւոյն, որ էր հուպ առ տէրունեան խորհուրդն, բարձր և վարսաւոր բազմաբեր պտղալից՝ զտուրս և զողորմութիւն և զսէր մարդկան որ առ միմեանս՝ եցոյց քեզ ընդունողն: Քանզի մօտ և առաջին և պատուական Աստուածութեանն է աղքատսիրութիւն, որով և առաջին արդարքն ընտիրք երևեցան... առանց որոյ և կուսանացն արհամարհեալ վաստակք կուսութեան՝ արտաքոյ հարսանեացն ընկեցան: Սովաւ ճանաչի յանձինս մարդկան կնիք քարոզութեանն Քրիստոսի որ ասացն, թէ Յայսմ ծանիցեն ամենեքեան զձեզ թէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս... և Տէրն փառաց բնակէ ի մէջ նոցա, շնորհելով զհանգիստ և զառատաբար պտղաբերութիւն երկրի, որպէս տեսանէիր բարձր զձիթենին և լիապտուղ և վարսաւոր: Եւ զի ոտք չորք ձիթենւոյն, որ ի խոնարհ կողմ երկրի ձգեալ երևեցան, երեք ոտք հաստարակատեսք չափով և միաթիւք պտղովք, և չորրորդն կիսաչափ երիցն և պակասաւոր ըստ պտղաբերութեան, և չորեցունց պտուղք փոքր էին և թառամք, և բերքն պակասք և աննմանք քան զայլ տոռքատեսիլ պտուղս ձիթենւոյն՝ լուր և ասացից զոր ինչ սահմանեաց Բարձրեալն յայսմ հետէ մինչև ի վախճան աշխարհիս. Երեք տասնեակք ամաց և կէս տասներեկի համառօտեսցին ի վերայ ամենայն աշխարհի մինչև յերևումն պղծոյն յանապատի, զոր Դանիէլ մարգարէի ասացեալ է սուրբ Հոգւոյն. և լինին սոքա յայտնապէս թուով ամք երեքհարիւր յիսուն, ըստ միազոյգ պտղոց երից ոստոցն և կիսոյն: Եւ զի տեսեր զպտուղ ոստոցն թառամս և ծնկեալս և ոչինչ բնաւ նմանս այլ պտղոցն որ ի ձիթենւոջն էին՝ տես ճըշ-

մարտապէս և ծանիր, զի բարձեալ է սէր և արդարութիւն յամենայն մարդոց, որք սուտութեամբ և ոչ ստուգութեամբ կարծեցուցանեն զանձինս սիրունս և պատուիրանապահս:.. Եւ ընդ ահեկէ բեմին որ ցուցաւ քեզ աթոռ չորեքկուսի ծովագոյն սանակերպ' զնստումն գահու քահանայութեանն և թագաւորութեան ցուցանէ... յորոյ վերայ կայր սկտեղն արծաթի. քանզի իբրև զարծաթ ընտիր և փորձ լուսափայլ յամենայն ազգս ընդունողաց սփռեալ տարածեցաւ բանն, զոր սաղմոսերգն վարդապետէ սուրբ Հոգւովն յասելն, թէ Բանք Տեառն որպէս զարծաթ ընտրեալ և փորձեալ: Եւ զի երևեցաւ քեզ ծովագոյն սանանման տեսիլ աթոռոյն' նշանակեալ ցուցանէ զծփումն ալէկոծութեան աշխարհիս Հայոց. քանզի և թխագոյն թանձր կտաւոցն ծածկումն զօրինակ բերէ զթանձրամած սգոյն, որ ունելոց է զաշխարհս ամենայն: Եւ նափորտն բեհեզեայ, զոր տեսանէիր ծալեալ և եդեալ ի վերայ սկտեղն, և գունդն ոսկի որ կայր մերձ նափորտանն' նշանակէ մինն զքահանայութիւնն, և միւսն զթագաւորութիւնն: Եւ զի ոչ ոք էր արկեալ զիւրեաւ զնափորտն, և ոչ այն ոք էր որ զգունդն ունէր ի ձեռին' լուր ստուգապէս, զի լռեսցէ մերձ ընդ մերձ թագաւորութիւն յազգէդ Արշակունեաց, և քահանայութիւն ի ցեղէ արժանաւոր քահանայապետին Գրիգորի: Եւ մագաղաթն հաստուածաձև, որ ցուցաւ քեզ գրեալ ի սկզբանն կարգս ինչ ոսկեղէն գրով' զձեռնադրութիւն արանց սրբոց եցոյց քեզ շնորհք Հոգւոյն սրբոյ. որք ի զաւակէ երանելոյն Գրիգորի յաջորդեն արժանապէս զաթոռ քահանայապետութեան' նոքա են արք ընտիրք գրեալք ոսկետեսիլ գրով ի դպրութիւն կենաց: Եւ զի երևեցաւ ի միջոյ կողմն մագաղաթին հեռի յոսկեգիր կարգացն կարգք ինչ խանդարեալք և ջնջագիրք' գիտեա զի նստելոց են քահանայապետք ոմանք յաթոռ սրբոյն Գրիգորի, որ ոչ ըստ հրամանի սրբոց առաքելոցն և ոչ ըստ կանոնի պատուական սուրբ ժողովոյն երեքհարիւր ութուտասանցն լինին ձեռնադրեալք յերկնաւոր պաշտօնն, այլ ըստ փառաց աշխարհիս ձգտին ի պատիւն յանդգնութեամբ, որք են արծաթասէրք առաւել քան աստուածասէրք: Եւ վասն զի խոտան և օտար է քահանայապետութիւն նոցա և ոչ ըստ հաճոյից Բարձրելոյն' ջնջեալ են նոքա ի դպրութենէ երկնից:... Եւ այլ կարգն և միւս ևս կէս կարգի, որ երևեցաւ քեզ գրեալ սքանչելապէս ոսկի գրով ի ստորին եզեր մագաղաթին' ծանիր հաւաստեաւ, զի մերձ յերևումն պղծոյն անապատի դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց, և նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւիղէ սրբոյն Գրիգորի, վասն զի ոչ էին արհամարհեալք և ընկեցեալք յերկիր ի կոխումն, այլ կայր

գունդն, և ծալեալ պատուականութեամբ ցուցաւ քեզ նափորտն.
և ծանօյց զայս վերին ազգեցութիւնն սքանչելատեսիլ ոսկեգիր կար-
գովն և կարգակիսաւն, թէ ի ժամանակս զօրազացելոյ թշնամւոյն
ուղղափառութեան նստցի քահանայապետ արդար ի ճշմարիտ վիճակէ
ցեղին սրբոյն Գրիգորի. և քահանայացեալ առաջինն կատարէ զա-
ւուրս իւր կրեալ ճգնութիւնս բազումս ի սուտ առաքելոց իշխանին
կորստեան, և վախճանի խաղաղական հանգստիւ և ոչ սրով։ Եւ
միւս զաւակ նորին յաջորդեալ զաթոռ քահանայապետութեանն, և
բազում և ազգի ազգի համբերեալ քերանաց և գանից և սովոյ և
հալածանաց և դառն նեղութեան ժամանակս բազումս՝ յանօրէն
իշխանին դաւճացն սրով ընկալցի զվախճանն մարտիրոսութեան։ Այն
է զի ցուցաւ քեզ ի կարգին մասն մի գրելոցն կարմրագեղով։ Եւ
որ երևեցան քեզ բազմութիւնք ողայոց շուրջ կալով ի վերայ ար-
ծաթ սիւեղն, զուարթատեսիկ ցնծալից ուրախութեամբ՝ զի աչա
յորդանգէ զաւակիդ որ տուաւ քեզ յԱրարչէն՝ ելցեն բազում շա-
ռաւիղք, որք ընտիրք զօրութեամբ, ընդ որս միաբանեալք և այլ
բազմութիւնք լաւ արանց յազգէ նախարարացդ Հայոց, որք զօրա-
ցեալք սուրբ բանիւն Աստուծոյ՝ զյարուցմունս թագաւորաց և
զապառնալիս իշխանաց առ ոչինչ համարեալ արհամարհեսցեն, միա-
ցուցեալ զանձինս ընդ լոյսն բարձալի երկնաւոր կոչմանն, չհայելով
ի մեծութիւնս անցաւոր և ոչ ի փառս առժամայնս. ընդ որոյ վաճա-
ռեալ ոմանց զփառս անեղծին Աստուծոյ ընդ անցաւոր և ապականա-
ցու կենաց աշխարհիս՝ ուրացողք լինին. վասն զի մօտ է առ դուրս
վաճառ՝ թուլացելոցն ի կորուստ, և հասեալ կայ հուպ օգնութիւն՝
զօրացելոցն ի փրկութիւն։ Յորս և դու հայեցեալ շնորհի ակամբ
տեսեր շուրջ զաստուածային սեղանովն պարելով զողայսն. չհայելով
բնաւ ի սայթաքմունս անցաւոր հեթանոսական պաշտամանն. յորոց
ոմանք կատարելութեան հասեալք՝ մարտիրոսական պսակին լինին
արժանիք։ Եւ այլք յարանց բազմաց, և ոչ միայն յարանց, այլ
զատնին և ի կանանց, որք թէպէտև ոչ սրով, այլ ի շնորհաց
սուրբ Հոգւոյն զօրացեալք բազում բարեգործութեամբք կատարին։
Որպէս երևէին քեզ լուսափայլ նշոյլք արձակեալք ի մանկտւոյն,
յորոց կարմրագոյն փայլմամբ երփնէր գոյնն՝ զկատարելոցն արեամբն
ցուցանէ զուշակելով զնահատակութիւն. և զայլոցն պէսպէս ճառա-
գայթիւք ցուցանէր զշողումն, որպէս և զբազմափայլ գոյնս լուսա-
ւորութեան առաքինի մարդոյ. վասն զի բազում են և անթիւ
ճգնութիւն և վաստակք արանց արդարոց և սրբոց։ Եւ վասն զի
շարժեցաւ սաստիկ գղորդմամբ աթոռն զոր տեսեր, և որ երբեմն
ողայք քեզ երևէին, յաճումն կատարելութեան բովանդակեալք

յերկրէ յերկինս թռուցեալ համբարձան՝ բովանդակապէս քեզ զերկրիս կենցաղս արդարոցն և յերկինս գլինելոց նոցա զհրեշտականման փոփոխումն եցոյց պարգևատուն բարեաց։ Քանզի իբրև զողալ յաշխարհի կացին արդարքն անմեղութեամբ, չդարձուցանելով և ոչ ուրեք զհայեցուածս մտաց իւրեանց ի զբաղմունս նանրութեան, այլ ուշադրեալք ի հրաւիրումն երկնաւոր ուրախութեանն ևեթ հային։ Քանզի բազում և խիստ դղորդմունք յայսմ հետէ լինելոց են յաշխարհի, յարուցմունք թագաւորաց ի վերայ միմեանց, սովք և սասանութիւնք և բազում նեղութիւնք, որք զմօտալուտ գալուստ որդւոյն կորստեան նշանակեն։.. Եւ դու կնքեա զտեսիլդ որ ցուցաւ քեզ յայտնութիւն ի բարձանց. քանզի ոչ վրիպեսցի այտի բան մի՝ մինչև կատարեսցի ամենայն։

«Եւ ես իբրև ի քնոյ զարթուցեալ ի տեսլենէն, զոր եցոյց ինձ Բարձրեալն, և ի զարմացման մեծի եղեալ՝ փառաւորեցի զմարդասէրն Աստուած, որ արժանի արար զանարժանութիւնս իմ այսպիսի մեծ և ահաւոր տեսչութեան։ Եւ լռեալ դադարեցի ի յայտնելոյ զայս ումեք մինչև ցայսօր ժամանակի։ Եւ արդ պատմեցի ձեզ ոչ միայն առ նեղել սրտիս, այլ թաքուցանել երկուցեալ, զի մի իբրև զլացօղ պատուհասեալ դատեցայց ի ցուցողէ յայտնութեանս այսորիկ, որ և գրով իսկ հրամայեաց ինձ զաւանդս զայս թողուլ աշխարհի»։

Աւելորդ է ասել, թէ տեսիլս այս, զոր իբրև յԱստուածուստ յայտնութիւն առ Սահակ կ'աւանդէ մեզ Փարպեցին՝ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ կեղծիք բարեպաշտ քրիստոնէի, այն դարերուն ճաշակին յարմար՝ հոգևոր, շատ անգամ ցուրտ այլաբանութիւններով լի, զորս այսպէս երկար մէջ բերել արդարև չէր արժեր, եթէ պատմութեան կարգը և դարուն ոգին ցուցնելու հարկը չպահանջէին։ Բարեմիտ նախնիք մեր քրիստոնէական եռանդով վառեալ, մոլեռանդ բարբարոսներու բռնութենէն մատնուած սաստիկ հալածանաց, տանջանաց և մահու անգամ, զոր միշտ առաջի աչաց կը տեսնէին, կրնայի՞ն այլ ազգ մխիթարուիլ և զօրանալ՝ եթէ ոչ խրատուելով նկատել զայն ամենայն իբր բարձր տեսչութեան մի իմաստութենէն պատրաստուած գաղտնիս, զոր քննել յաստիս չէ տրուած մարդոյ։ Այս տեսութեամբ պարտ է ընթեռնուլ հին պատմութեան մէջ սոյն նման ձանձրալի կտորներ։ Գիտել արժան է սակայն, թէ բարեպաշտ հեղինակն, ո՛ ոք և է, համբակ էր իւր արուեստին. քանզի կուտայ գուշակել առ Սահակ իբր յայտնութեամբ թէ Լուսաւորչայցեղէն պիտի նստէին ժամանակ մը կաթողիկոս ընտիր անձինք, որոց պիտի յաջորդէին յետոյ անարժան մարդիկ. բայց այս եղաւ յառաջ

քան զՍահակ, մինչ տեսիլը որ է մարգարէութիւն՝ ապագային համար է և ոչ անցելոյն. նա մանաւանդ այն յայտնութեան մէջ երբ ապագայ ցուցուած անձանց մին է նոյն ինքն Սահակ։ Ապաքէն զՍահակ կ'ակնարկեն սա բանք. «Ի ժամանակս գոռոզացելոյ թշնամւոյն արդարութեան (Յազկերտի Ա.) նստցի քահանայապետ արդար ի ճշմարիտ վիճակէ ցեղին սրբոյն Գրիգորի, և քահանայացեալ կատարէ զաւուրս իւր կրեալ ճգնութիւնս բազումս ի սուտ առաքելոց իշխանին կորստեան (Սուրմակ, Բրքիշոյ, Շմուէլ), և վախճանի խաղաղական հանգստիւ և ոչ սրով»։

**5.** Արդէն տեսանք, թէ ինչպէս Արտաշէս կամ Արտաշիր, վերջին թագաւորն Արշակունի, ամբաստանուելով առ Վռամայ նախարարներէն, հարկաւ միոյ մասէն և ոչ ամենէն՝ արկաւ աթոռէն։ Թէ ինչ եղաւ վախճան անկեալ թագաւորին՝ չէ յայտ. ըստ Խորենացւոյն՝ Վռամ հրամայեց «անդէն արգելուլ զնա»։ Ուստի հաւանական է թէ Արտաշէս պահուեցաւ ի Պարսկաստան, ուր և մեռաւ իսկ։ Թէ ինչ եղան յետ այնորիկ Հայք՝ Խորենացին սաչափ միայն ասէ, թէ Վռամ «մեծապարգև զնախարարսն արձակեաց պարսիկ մարզպանաւ, որում անուն էր Վեհդենշապուհ»։ Եւ իսկոյն կը յարէ Սահակայ և կաթողիկոսութեան վրայ համառօտ տեղեկութիւն, այսինքն թէ ինչպէս Սուրմակ, Բրքիշոյ և Շմուէլ տրուեցան հակառակաթոռ Սահակայ, որ վարեց միայն հոգևոր իշխանութիւն մինչև ի մահ իւր, զոր կը պատմէ այսպէս.—Վռամ Ե. թագաւորելով քսան և մի ամ ըստ Խորենացւոյն՝ կը մեռնի, և կը յաջորդէ Յազկերտ Բ. (440—457), այսինքն 32-դ ամէն փոքուն Թէոդոսի (408—450) մինչև Մարկիանոսի (450—457) վերջին տարին։ Յազկերտ իսկ և իսկ կը յարձակի Յունաց վրայ ի Միջագետս (Թէոդորետ. Ե. 39, Պրոկոպ. Պարս. պատմ. Ա. 2, առ Գաթըրճ.), հրամայելով երթալ ի Հայս Ատրպատականի զօրուն, որ գալով կը բանակին մօտ ի Բագաւան ուր էր Սահակ։ Սահակ հիւանդանալով կը տարուի Բլուր կոչուած գիւղն, իբրև տեղի հանդարտ յերեսաց Պարսից զօրուն։ Հոն կը վախճանի Սահակ, ըստ անուանն արդարև մեծ, յետ վարելոյ զկաթողիկոսութիւնն 51 տարի, այսինքն՝ յ3-դ ամէն Խոսրովու (388) մինչև ի սկիզբն երկրորդ ամին կամ ի վախճան առաջնոյն Յազկերտի Բ. (440)։ «Մահկանացու ծնեալ, ասէ Խորենացին, անմահ զիւրն յիշատակ եթող»։ «Զորմէ պարտ էր մեզ, կը յաւելու, հրաշափառագունիւ անցանել բանիւ ըստ արժանի հօրն դրուատից. այլ զի մի յերկարութիւն ճառիցս լիցի ձանձրութիւն ընթերցողաց՝ այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողցուք»։ Սարկաւագապետ նորա Երեմիա հանդերձ աշակերտօք նորա, և մանկ-

ւանդ նուն նորա Դուստր կամ Դստրիկ, տիկինն Մամիկոնեան, կին մեծին Վարդանայ, տանելով մարմինը կը թաղեն յիւրեանց (Մամիկոնեանց) գիւղն յԱշտիշատ.—«Զքսան և զմի ամ (ոչ այնչափ) թագաւորեալ Պարսից Վռամ երկրորդ (հինգերորդ)՝ մեռանի, թողլով զտէրութիւնն որդւոյ իւրում Յազկերտի (Բ.), որոյ մոռացեալ զհաշտութիւնն՝ իսկ և իսկ ընդ թագաւորելն դիմէ ի վերայ զօրացն Յունաց որք առ Մծբին, հրամայելով գնդին Ատրպատականի ի մեր աշխարհս ելանել. որք եկեալ անկարգապէս բանակեցան հուպ առ Բագնացն աւանի: Յայնժամ մեծին Սահակայ հասեալ հիւանդութիւն մահու. և առեալ աշակերտացն տարան ի գիւղն որ կոչի Բլուր, որպէս թէ ի վայր և՛ ընտանեգոյն և՛ զերծ տեղի մատուցեալ ի զօրացն Պարսից կատաղաց գնդաց: Ուր եհաս վախճան, կեցեալ եպիսկոպոսապետութեամբ ամս յիսուն և մի, սկսեալ յերրորդամէ վերջնոյ Խոսրովայ Հայոց արքայի մինչև ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղելոյ Պարսից թագաւորի, յելս ամսոյն նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեան:... Զպատուական մարմին նորա բարձեալ սարկաւագապետին նորին Երեմիայի՝ հանդերձ աշակերտակցօք և տիկնաւն Մամիկոնենից, նորին նուաւ, որում անուն էր Դստրիկ, կին Վարդանայ սպարապետի, տարեալ հանգուցին յիւրեանց գեւղն յԱշտիշատ, որ է ի գաւառին Տարօն» (Խոր. Գ. ԿԷ.):

Ե. Խորենացին կը յաւելու. «Եւ ցրուեալ աշակերտաց նորա կրօնաւորաց սպուդէից ի գաւառս իւրաքանչիւր՝ վանորայս շինեցին ժողովեալ եղբարս»: Աստի, ինչպէս նաև նոյն դպրութեան Խթ. գլխէն կը տեսնուի, թէ Սահակ հաստատած էր, հաւանականապէս ի Վաղարշապատ, ըստ Յունաց Սպուդէք, այսինքն փոյթք, կամ Ակումիտք, այսինքն անքունք կամ անհանգիստք կոչուած քաղաքենակ միանձանց վանս, ուր վանականք ըստ կանոնի անապատական միանձանց՝ կ՚ապրէին խստամբերութեամբ, կ՚զբաղէին նաև ուսմանց: Սահակ ունէր այն վանատան մէջ, որ չէր հեռի կաթողիկոսարանէն, թերևս ի կաթողիկոսարանին իսկ, իբր վաթսուն այնպիսի միանձունս ընդ իւրով առաջնորդութեամբ, յորոց և միշտ գէթ զոմանս կը շրջեցունէր ընդ իւր իբրև օգնական, թերևս կը ղրկէր զնոսա նաև ի քարոզութիւն: Այս կարծենք կը հասկցուի յիշեալ Խթ. գլխէն, ուր Խորենացին յետ պատմելոյ զընտրութիւն Սահակայ ի կաթողիկոսութիւն՝ անդէն կը յարէ ի գովեստ Սահակայ. «Սա ամենայն առաքինութեանց հարցն նմանեալ՝ աղօթիցն մասամբ առաւելեալ: Քանզի ստացաւ աշակերտս վաթսուն ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուդէից, որք կրօնաւորք, խարազնազգեստք, երկաթապատք, բոկագնացք, որ յար ընդ

նմա շրջէին»։ Ուստի Սահակ, թէև ամուսնացեալ, տէր ընտանեաց, միանգամայն բեւնաւորեալ ծանր հոգւովք կաթողիկոսութեան՝ կը վարէր իւր վանականաց հետ ճշմարիտ միանձնական կեանս, միացունելով տեսականն ընդ գործնականին։ Զայս կը նշանակէ ապաքէն առեալն Խորենացւոյն, թէ «Որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն որպէս զայն որ յանապատսն էին, և հոգայր զաշխարհս որպէս զայն որ յաշխարհի են»։ Եթէ խստամբերութիւնն, զովելի ըստ ոգւոյ ժամանակին, զարմանալի է յանձին Սահակայ, որ զկնի թագաւորին կը վարէր առաջին պաշտօնը, և ներելի էր նմա ճաշել թագաւորաբար և զգենուլ կնգմենիս և սամուրենիս, ինչպէս Զաւէնն և Շահակ՝ ևս առաւել գովութեան և զարմանաց արժանի է մեծ հմտութիւն նորա, զոր Փարպեցին այնպէս գրուատելով կը յիշէ, մինչև վերագոյն դնել զնա քան զՄեսրոպ, որ, ասէ, յօրինեց հայերէն այբուբենն՝ «ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ... որ յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովք Յունաց»․ Նոյնպէս թարգմանութեան համար ասէ, թէ «Երանելին Մաշթոց և որ ընդ նմա պատուական քահանայք էին՝ ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարեւոր գործ, թարգմանել գիրս ի յոյն լեզուոյն ի հայ բարբառ․ վասն զի ոչինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսման»։ Որչափ և աւելի համարինք զգովեստ Փարպեցւոյն՝ նշանագրաց գիւտին և թարգմանութեան գործք, յորս ոչ ձեռնտու միայն, այլ և գլուխ և առաջնորդ էր Սահակ՝ բաւական են ցուցնել նորա մեծ հմտութիւնն ոչ միայն յունարէնի ուսման, այլև ասորւոյն, հաւանականապէս նաև պարսկին, թողումք ասել նաև հայոյն։ Զմահն և զթաղումն Սահակայ կը պատմէ նաև աշակերտ նորա Կորիւն իւր գարգարուն ոճով այսպէս․ «Յետ այնորիկ դէպ լինէր երանելոյն Սահակայ լցեալ աւուրբք երկայն ժամանակօք, և վայելչացեալ աստուածաբեր պտղոցն բարութեամբք․ յառաջնում ամի Յազկերտի որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ գաւառի, ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտաման տնուշահոտ իւղոյն, հանգերձ աստուածահաճոյ աղօթիւք՝ ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ, հայեցեալ ի մարգարէին որ ասէր․ Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ, և Ստեփանոսի երանելոյ որ ասէր․ Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ։ Ըստ նմին օրինակի և նորա ապաւարեալ զանձն և զմնացեալս ամենապահ շնորհացն Աստուծոյ։ Զոր և առեալ վաղվաղակի ձեռնասուն աստուածասէր պաշտօնէիցն իւրոց, որոյ ԳԲԼ

խաւարին Երեմիա անուն ճանաչէր, այր սուրբ և բարեպաշտօն, հանդերձ աստուածասէր իշխանակնաւ միով որ անուանեալ կոչէր Դուստր, որ էր կին Վարդանայ զոր ի վերոյն յիշեցաք, և բազում ամբոխից ուրոց ժողովոց, բարձեալ զսուրբն սաղմոսիւք և օրհնութեամբ և հոգևոր բարբառով, յետ սակաւ ինչ աւուրց ընդ տիւ և ընդ գիշեր ի Տարօն հասուցանէին մինչ ի բուն իսկ գիւղն յԱշտիշատ։ Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղ սրբոցն, հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եդեալ և կնքեալ քրիստոսադրոշմ կնքովն, և զօրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ՝ այնուհետև իւրաքանչիւրն դառնային» (Կորիւն)։ «Որոց և նոյնպէս ամի ամի գումարելովք ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն տօնախմբէին» (Անդ)։

**7**. Բաւական համարելով այսչափ զՍահակայ՝ դանք նշանագրոց գիւտին և թարգմանութեան գործին, որ է մին ի նշանաւորագոյն անցից պատմութեան ժամանակին և ազգին միանգամայն։ Բայց որովհետև այս գործը կապուած է սերտիւ ընդ պատմութեան Մեսրոպայ՝ հարկ է յետ Սահակայ խօսել և զմանէ։ Ունինք Մեսրոպայ վարուց պատմութիւն մի, գրեալ, որպէս ասի ի յառաջաբանին՝ ի խնդրոյ ուրումն Յովսեփայ, աշակերտի Մեսրոպայ։ Գրուածն է արդարև մթին. յայտնի է սակայն լեզուէն, թէ է գործ առաջնոյ կիսուն Ե. դարուն, ուստի և գրողն էր ժամանակակից, և չէ անհաւանական, թէ ըստ աւանդութեանն՝ է աշխատութիւն Կորեան, միոյ յաշակերտաց Մեսրոպայ։ Զայս կը հաստատէ բուն իսկ մատեանն, ուր պատմիչն ի յիշելն զերթն թարգմանչաց ի Կոստանդնուպոլիս՝ ասէ. «Յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղևոնդէս առաջնոյն անուն էր, և երկրորդին՝ Կորիւն»։ ԶՄեսրոպայ կը խօսի նաև Խորենացին։ Մենք կ'առնունք ի Կորենէ, իբրև ժամանակցէ և մերձաւորէ Մեսրոպայ, յիշելով նաև զպատմութիւն Խորենացւոյն, մանաւանդ ուր սա կը տարբերի յառաջնոյն, կամ կը պատմէ աւելի ինչ քան զնա։

Մեսրոպ, որ և Մաշթոց, կրկին անուանք ցայժմ անծանօթք, այժմ կը թուին ըստ բուականին ծանուցեալ. առաջինն՝ պարսիկ բառէն միւշրիֆ, որ կը նշանակէ դպիր կամ քարտուղար, և երկրորդն՝ յոյն բառէն μάστος, որ նշանակէ *բարձրութիւն*, իբրև եկեղեցական տիտղոս, ինչպէս *Եկղեսիաստիկոսն* (Խոր. Գ. ԾԷ.) և *ակումիտ* (Կորիւն), որ այլով ամիթիւ տրուեցան նմա։ Կորիւն կը կոչէ զնա համակ այս եկեղեցական անուամբ *Մաշթոց*. Մեսրոպ՝ ոչ ուրեք. մինչ Խորենացին կը վարէ համակ զանունն Մեսրոպ, միան-

գամ միայն Մաշտոց, որում կը կցէ վարդապետ բառը—«Զորս ետ թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի Հայ լեզու» (Խոր. Բ. ժ.). Այս Մեսրոպ կամ Մաշթոց է, որ խորհրդակցութեամբ թերևս և գործակցութեամբ Սահակայ, ի քաջալերելոյ ևս Վռամշապհոյ թագաւորին, ինչպէս կ'ըսուի՝ գտաւ մեր այժմու նշանագիրներն։ Կորիւն նշանագրաց գիւտին, ինչպէս նաև թարգմանութեան պատմութիւնը կը պատմէ խառն ընդ պատմութեան վարուցն Մեսրոպայ այսպիսի կարգաւ։ Մեսրոպ, ծնեալ յամին իբր 361, էր Տարօնոյ Հացեկաց գիւղէն, որդի ուրումն Վարդանայ, ի մանկութեան ուսեալ յունարէն. գալով ապա յԱյրարատ՝ կը մտնէ ի ծառայութիւն արքունեաց, հաւանականապէս ի սկզբան թագաւորութեանն Վռամշապհոյ (392), և ապա հրաժարելով կը մտնէ ի կարգ եկեղեցական, և ընտրելով վանականութեան կեանք՝ կ'ստանայ աշակերտներ, ընդ որս կ'երթայ ի գաւառն Գողթան (395), ուր կային տակաւին հին կռապաշտութեան մնացորդք, զոր կը ջնջէ երևելի նշանօք, ինչպէս եղած էր, ասէ Կորիւն, առ Լուսաւորչաւ։ Անտի ապա կ'երթայ ի կողմանս Մարաց, այն է Ատրպատականի կամ Հայոց արևելեան հարաւային մասը, որ այսպէս կը կոչուէր։ Յետոյ տեսնելով ազգին կարօտութիւնն ուսման և հոգևոր դաստիարակութեան, որմէ Հայք, թէպէտ քրիստոնեայ, մնացած էին զուրկ առ ի չգոյէ գրութեան՝ կը հնարէ հայերէն գիրն (398—405), ստէպ աշխատութեամբ և ճանապարհորդութեամբք ի Միջագետս և յԱսորիս. կը հաստատէ դպրոցներ յուսումն հայերէն գրութեան, և լինի գործակից թարգմանութեան հին և նոր Կտակարանաց ի հայ լեզու։ Յետ այս մեծ և ծանր աշխատութեան կ'սկսի Մեսրոպ իւր առաքելական առաջին շրջանն ի գաւառս ինչ Հայոց։ Նախ առնէ միւսանգամ այցելութիւն Գողթան, որ նորա սիրելի գաւառն էր. անտի կ'երթայ ի Սիւնիս, անտի ի Վիրս, ապա հանդերձ Սահակաւ ի Հայս բաժնին Յունաց, ուր, ինչպէս տեսանք, մեծ դժուարութեանց հանդիպելով Յունաց երեսէն՝ կը ղրկուի ի Կոստանդնուպոլիս (420)՝ առնուլ հրաման վարդապետել այն մասին հայ ժողովուրդը։ Հոն հանդիպելով բանիբուն աղուան երիցու Բենիամին անուն՝ կը թելադրէ նմա յօրինել Աղուանից լեզուին նշանագիր։ Յետ այսր ամենայնի գալով ի բաժինն Պարսից առ Սահակ և առ թագաւորն Հայոց Արտաշիր (425)՝ կ'սկսի իւր երկրորդ առաքելական շրջանն նախ յԱղուանս, անտի ի Զորն Գարդմանայ, ապա ի բուն Վիրս, անտի ի գաւառն Տաշրայ, այսինքն ի հայ Վիրս, որ առաջ կը կոչուէր Գուգարք, մեծ պատուով ընդունուելով այս ամէն երկիրներուն իշխաններէն իբրև

արդարև լուսաւորիչ։ Ի վախճանի գալով ի Հայս առ Սահակ (428)՝ կ'սկսի նովաւ հանդերձ գրել և թարգմանել։ Յետ ամաց ինչ (430 կամ 31) կը ղրկուին թարգմանիչք, այսինքն Յովհան, Եզնիկ, ուրիշ երեք կամ չորս ընկերներով յԵդեսիա և ի Կոստանդնուպոլիս թարգմանել զգիրս յոյն և ասորի հարց, և յետ իբր չորս կամ հինգ ամաց (435 կամ 436) կը դառնան օրինակօք Ս. Գրոց, որովք կ'ուղղուի առաջին թարգմանութիւնն, որ աճապարանօք եղած էր։ Իբր չորս կամ հինգ ամօք յետոյ (440), Սահակայ մահուան տարին, կը վախճանի Մեսրոպ, յետ բանիւ և արդեամբ և գրով եւս աշխատելոյ յօգուտ ազգին։ Այս է պատմութիւն Կորեան, զոր աւասիկ քաղելով կը դնենք.—

«Առն. վասն որոյ փոյթ արարեալ (է) մեր պատմելոյ՝ էր Մաշթոց անուն ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ. (և էր սա) որդի առն երանելւոյ Վարդան անուն կոչեցելոյ։ Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբ,—(ըստ Խորենացւոյն՝ «սնեալ և ուսեալ առ մեծին Ներսիսի»)—եկեալ հասանէր ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական դիւանին լինել սպասաւոր արքայական հրամանին—(ըստ Խորենացւոյն՝ «յետ ելիցն Ներսիսի յաշխարհէ՝ ի դրան արքունի կարգեալ քարտուղար»)—տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն։... Յետ այնորիկ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ՝ մերկանայր այնուհետև զիշխանական ցանկութիւնսն, անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր. բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ Աւետարանին կրէր. ամենայն կըրթութեամբ հոգևորացն զանձն տուեալ մենաւորութեամբ, լեռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեստ և գետնատարած անկողնոց, և բազում անգամ զհեշտական հանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ յանաւոր ոտքնութեանն ի թօթափել ական վճարէր։—(Խորենացին համառօտիւ «Սիրեաց, ասէ, զմենակեցութեան վարս»)։—Եւ գտեալ եւս զոմանս յինքն յարեցուցանէր. (զորս) առեալ այնուհետև դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան։ Այլ և ընդառաջ ելանէր նմա աստուածասէր իշխանն Գողթան, այր երկիւղած։... Իսկ երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ՝ ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին, գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր։ Եւ յորժամ ի նոսա զբանն

կենաց սերմանէր՝ յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երեւէին, կերպակերպ նմանութիւն գիւացն փախստական լինելով անկանէին ի կողմանս Մարաց»։—(Նոյնպէս Խորենացին, բայց աւելի պարզ.—«Երթեալ ի գաւառն Գողթան բնակէ. և որ ի նմա վօղեալ աղանդն հեթանոսական, թագուցեալ յաւուրցն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունեաց՝ զայն երարձ օգնականութեամբ իշխանի գաւառին որում անուն էր Շաբիթ։ Ուր նշանք աստուածայինք լինէին որպէս առ սրբովն Գրիգորիւ. հալածական լեալ դեւք մարմնաւոր տեսլեամբ անկանէին ի կողմանս Մարաց»)։—Հոս կը դնէ Կորիւն նշանագրաց գիւտին պատմութիւնը, զորմէ մեք պիտի խօսինք ուրոյն։ Ապա յառաջ տանելով պատմութիւնը՝ «Յայնժամ վաղվաղակի, ասէ, հրաման առնոյր ի թագաւորէն (աւետարանել) զխուժադուժ կողմանսն Մարաց (այսպէս կը կոչուէր հարաւային արևելեան մասն մեծին Հայոց, սահմանակից Սիւնեաց), որք ոչ միայն վասն գիւական սատանայակիր բարուցն ճիւաղութեան, այլև վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին դժուարամատոյցք էին... առեալ (գնաց) պարզախօսս հռետորաբանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծնունդս կացուցանէր։... Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս զի տէր եպիսկոպոսն ի կայենականսն և նա ի սփիւռս հեթանոսաց (այսինքն Սահակ բուն Հայոց մէջ, և ինքն Մեսրոպ շրջակայ գաւառներն) զբանն կենաց սերմանիցեն։ Եւ հրաժարեալ ի նոցանէ հանդերձ այլովք ևս օգնականօքն... սպասաւորօք Աւետարանին... երթեալ իջանէր առ ոտս տանն Գողթան, յառաջին դաստակերտն իւր, և անդ ընտելական սովորութեամբն ի կեր արկեալ զվարդապետութիւնն հաւատարութեամբն բարեպաշտին Շաբաթայ՝ լի առնէր զգաւառն ողջունիւ Աւետարանին Քրիստոսի, և կարգէր յամենայն գիւղս գաւառին դասս սրբոց վանականաց։ Որում և հասեալ ժամանեալ (յաջորդեալ) հայրաբարուին Գոտայ, որդւոյ Շաբաթայ՝ բազում սպասաւորութիւն իբրև հաւասարի որդւոյ վարդապետին տանէր։—(Խորենացին ևս գիտէ Մեսրոպայ այս երկրորդ երթն ի Գողթն, բայց կը դնէ յետ դարձին ի բաժնէն Յունաց—«Ինքն եկեալ յԱյրարատ՝ անցանէ յառաջնոյ բնակութեան գաւառն Գողթն, բնաբարձ առնէ (զմնացորդս) հեթանոսական աղանդոյն հանդերձ օգնականութեամբ հօրաբարոյին Գոտայ, որդւոյ Շաբիթայ, իշխանի գաւառին»)։—«Ապա յետ այնորիկ ի սահմանակիցն, ի Սիւնական գաւառն եկանէր, և անդ աստուածասէր հնազանդութեամբ ընդունէր զնա իշխանն Սիւնեաց որ էր Վաղինակ անուն։ (Այս Վաղինակ էր հօրեղբայր Վասակայ, և Վա-

սակ, ըստ պատմութեանն Եղիշէի, որպէս թէ «նենգութեամբ և քսութեամբ» տալով սպանանել զնա՝ առաւ իշխանութիւնը։

Ը. Զարմանալի է սակայն, թէ ինչպէս Կորիւն, որ քան զհեղինակն պատմութեան Եղիշէի, ո՛ ոք և է, առաւել հմուտ էր պատմութեանն Վասակայ իբրև աշակերտ Մեսրոպայ, նաև եպիսկոպոս այն կողմանց, կրնար ըսել սպանողի մը համար, թէ «Պարգևեալ յԱստուծոյ հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց, այր խորհրդական և հանճարեղ», ա. հ., մանաւանդ որ Կորիւն գրած է իւր պատմութիւնն զկնի պատերազմին Վարդանանց, քանզի գիտէ քահանայից հալածումն ի Տիզբոն, և զմահն Վահանայ Ամատունւոյ որ էր աքսորեալ նախարարներէն, դարձելոց առ Պերոզիւ)։ «Եւ ժողովէր մանկունս առ ի նիւթ վարդապետութեան, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւաղաբարոյ կողմանցն (Սիւնեաց արևելեան մասին բնակիչք էին արդարև բարբարոս). և այնչափ փոյթ ի վերայ ունելով դայեկաբար սնուցանէր և խրատէր՝ մինչև ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոսս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս, այր սուրբ և երևելի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ. ապա և զերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լնոյր»։—(Խորենացին դարձեալ համառօտիւ կ՚անցնի—«Եւ ոչինչ յայնցանէ (զորս արարն ի Գողթան), ասէ, պակաս արարեալ գտանի և Սիւնեաց աշխարհին, օգնականութեամբ նորին իշխանին որ կոչէր Վաղինակ»)։—Զարմանալի է Կորեան մեծ գովութեամբ յիշելն հոս զՎասակ.—«Յորում ժամանակի (իմա յետ մահուն Վաղինակայ) պարգևեալ յԱստուծոյ հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիսականն Վասակ, այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ։ Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր ուսումնարանագործ վարդապետութեանն, իբրև որդւոյ առ հայր հպատակութիւն ցուցեալ և ծառայեալ ըստ Աւետարանին վայելչութեան. մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր։

Թ. «Յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ գոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի և վասն բարբարոսական կողմանն. առնոյր կարգէր նշանագիրս վրացերէն լեզուին ըստ շնորհեցելոյ նմա ի Տեառնէ։ Գրէր կարգէր և յօրինեալ յարդարէր, և առնոյր ընդ իւր զոմանս յաւագոյնս յաշակերտացն իւրոց, յարուցեալ գնայր իջանել ի կողմանս Վրաց, և երթեալ յանդիման լինէր թագաւորին, որում անուն էր Բակուր, և եպիսկոպոսի աշխարհին Մովսէս։... Եւ զիւր արուեստն առաջի արկեալ խրատէր։... Եւ գտեալ զայր մի

թարգման վրացերէն լեզուին որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ և ճշմարտահաւատ՝ հրաման տայր արքային Վրաց ի կողմանց կողմանց և ի խառնիճաղանջ գաւառաց իշխանութեան իւրոյ ժողովել մանկունս, տալ ի ձեռն վարդապետին։ Զոր առեալ արկանէր ի բովս վարդապետութեանն, և հոգևոր սիրոյն եռանդմամբ զաղտ և զժանգ շարաւահոտ դիւացն և զմոտախագործ պաշտամանն ի բաց անջատեալ անյիշատակ ցուցանէր։... Զնոսա որ յայնչափ ի մասնաւոր և ի բաժանեալ լեզուացն ժողովեցան՝ միով աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կացեալ փառաբանիչս միոյ Աստուծոյ յօրինէր. յորոց և իմ անարժանիս եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ. որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ և բարեպաշտօն՝ եպիսկոպոս կացեալ տանն արքունականին»։ — (Զայս կը կրկնէ համառօտիւ և Խորենացին. «Իսկ Մեսրոպայ երթեալ յաշխարհն Վրաց՝ առնէ և նոցա նշանագիրս տուեալովն ի վերուստ շնորհաւն, հանդերձ Ջաղայիւ ումեմբ թարգմանաւ հելլէն և հայ լեզուի, ձեռնտու լինելոյ արքային նոցա Բակրոյ, և եպիսկոպոսին Մովսիսի։ Եւ ընտրեալ մանկունս և յերկուս բաժանեալ դասս՝ վարդապետս թողու նոցա յաշակերտաց իւրոց»)։ — Հոս Կորիւն յետ պատմելոյ զերթալն Մեսրոպայ ի Կոստանդնուպօլիս Յունաց բաժնին Հայոց համար, և ինչ որ եղաւ այն բաժնին մէջ յետ դարձին նորա ի Կոստանդնուպօլսոյ, ինչպէս պատմեցինք այլուր՝ յառաջ կը տանի զպատմութիւնն այսպէս. «Յայնմ ժամանակի — այսինքն մինչդեռ էր ի բաժնին Յունաց — եկեալ դիպէր նմա այր մի երէց աղուան ազգով, Բենիամին անուն. և նորա (Մեսրոպայ) հարցեալ և քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին՝ առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգև կորովի սովորութեան իւրում։... Յետ այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց և յիշխանաց աշխարհին և յամենայն եկեղեցեաց, թողեալ վերակացուս հաւատացելոցն զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն, որոց առաջնոյն Ենովք անուն էր, և երկրորդին Դանան, արք կրօնաւորք և յառաջադէմք յաւետարանական սպասաւորութեանն... ինքն գայր անցանէր ի կողմանս Հայոց մեծաց. և հասեալ ի նոր քաղաքն յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ, և թագաւորին Հայոց որում անուն Արտաշէս կոչէին և ամենայն բանակին... Եւ ապա հրաժարեալ գնայր ի կողմանս Աղուանից, և հասեալ ի թագաւորական տեղին՝ տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր որում Արսվաղ էր անուն... (որք և) տային հրաման ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեան իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեան ածել, և գումարել ըստ արժանաւոր

և պատեհ տեղեաց դասս դպրոցաց և ռոճիկս կարգել ի դարմանս: Ապա յնուհետև երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն տուեալ վաղվաղակի զաստուածեղէն գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, որով անդէն յական թօթափել վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից մարգարէագէտք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք լինէին. և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իւիք անտեղեակք: Դարձեալ տուեալ ևս երկիղածն յԱստուծոյ արքայն Աղուանից միամիտ փութով հրաման տայր սատանայակիր և գիւամոլ ազգին սաստիւ՝ թափել զերծանել յունայնավար հնացելոցն, և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի: Զայս արարեալ հաւատարութեամբ և լցեալ զկիտոյն իւրեանց, ձեռնտու ևս եղեալ նմա ի Բաղասական կողմանս (մին ի գաւառաց Աղուանից) սրբոյ եպիսկոպոսին, որում Մուշեղ կոչէին՝ հրաժարէր ապա ի թագաւորէն և յեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցւոյն Աղուանից: Եւ զամանս յիւրոց աշակերտացն վերակացուս կացուցանէր հանդերձ արամբ քահանայիւ արքունական դրանն, որում անուն Յովնաթան կոչէին, և յանձն առնելով զնոսա և զանձն ամենապահ շնորհացն Աստուծոյ՝ խաղացեալ գայր ի կողմանցն Աղուանից, անցանել յաշխարհն Վրաց, և հանդէպ հասեալ գայր Գարգմանական ձորոյն (գաւառ ի մէջ Աղուանից և Վրաց): Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարգմանից, որում Խուրս կոչէին, և առընջական եղեալ նմա աստուածասէր երկիւղածութեամբ՝ առաջի դնէր զանձն վարդապետին հանդերձ իշխանութեամբն իւրով, առաւելագոյն իսկ վայելեալ ի հիւթ և ի պարարտութիւն վարդապետութեանն՝ յուղարկէր զերանելին ուր և երթալոցն էր: Իսկ նորա անցեալ դիմեալ ի կողմանսն (բուն Վրաց), առ որով ժամանակաւ Արձիւղ անուն թագաւորէր Վրաց, պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն: Յայնժամ իշխանին Տաշրացւոց (հին անուամբ՝ Գուգարաց) տան պատուականի և աստուածասիրի որ անուանեալ կոչէր Աշուշայ՝ (ընկալեալ զնա) ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով. և նորա ամենափոյթ վարդապետութիւնն ոչինչ պակասութեամբ քան զայլոցն գաւառաց անցուցեալ, և յանձն արարեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուէլի, այնմ զոր ի վերոյ նշանակեցաք՝ ինքն դառնայր ի կողմանս Հայոց մեծաց. և եկեալ ի սովորական տեղին զընտելական ողջոյնն սրբոյն Սահակայ և ամենայն պատահելոցն տուեալ՝ պատմէր նոցա վասն ամենայն նորագործ իրացն»:—(Համաձայն Կորեան կը պատմէ և Խորենացին, թէպէտ ոչ կարգաւ, այլ այլևայլ առթիւ մասն մասն, սակայն Կորեան կարգն հաւանական կը թուի մեզ: Արդ՝ ըստ Խորենացւոյն ևս

«Թողեալ Մեսրոպայ վերակացուս յիւրոց աշակերտելոցն ի նմին տեղւոջ (ի բաժնին Յունաց), զՂեւոնդ և զԵնովք ի Սպեր, իսկ ի Դերջան զնոցին եպիսկոպոսն զԳնիթ, և յԵկեղեաց զԴանան՝ ինքն գայ յԱյրարատ: (Սպա) յԱգուանս իջեալ առ Արսվաղէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիա. որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա՝ ետուն մանկունս ընտիրս: Եւ կոչեցեալ զԲենիամին ումն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վաչակ, Սիւնեաց տէր, ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ. որովք առեալ զնշանագիրս կոկորդախօս աղխագուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարգարացւոց (Հայ Ագուանից) լեզուին, վերակացու թողեալ զաշակերտ իւր զՅովնաթան, միանգամայն և քահանայս կացուցեալ դրանն արքունի:... Տեղեկացեալ ևս, եթէ չարեաց վարդապետացն (հեթանոսական աղանդոյն) նախագոյնք ի Բաղասականն են կողմանս՝ երթեալ զբազումս յուղղութիւն ածէ, և զսակաւս անդարձս յիշխանութիւն Հոնաց հալածականս առնէ. հաւատալով զվարդապետութիւն կողմանցն այնոցիկ եպիսկոպոսի որում Մուշէն կոչէին՝ ինքն դառնայ զԳարգմանայ ձորովն, զի և ի նմա լուաւ լինել յընկերաց նոցին աղանդոյն: Զորս դարձեալ ածէ և զնոսա ի գիտութիւն ճշմարտութեան, հանդերձ վերստին ուղղութեամբ իշխանին Գարգմանայ որում անուն էր Խուրս: Հրաւիրի անդէն ի բդեշխէն Գուգարացւոց Աշուշայէ յաղագս նորին գործոյ գալ յիւր իշխանութիւնն ի գաւառն Տաշրայ, ուր երթեալ լուագոյնս վարդապետեաց և հաստատագոյնս քան զամենայն աշակերտեալսն. առ որով ժամանակաւ Արձիլ ոմն էր կացեալ թագաւոր Վրաց»:—«Յետ այնորիկ (իմա յետ դարձին Մեսրոպայ ի քարոզութենէն առ մեծն Սահակ) ուշ եդեալ երկոցունց երանելեացն զիւրեանց ազգին զպիտոյութիւն առաւել յարգել և դիւրացուցանել՝ ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել մեծն Սահակ ըստ յառաջագոյն սովորութեանն»: Կորիւն յետ յիշելոյ զառաքումն թարգմանչաց, և այլ ինչ ինչ զթարգմանութենէ Գրոյն՝ կը յաւելու. «Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց յընթերցուածս գրոց ծախէին հարքն զտիւ և զգիշեր, և նովիմբ և ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առընթերակայից լինէին:... Առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի յուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգեալ յօրինէր, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան: Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորացս առնէ, առաւելագոյն վասն յարութենական յուսոյն առ

ի հանդերձեալսն յերկրեալ կազմէր, զի հեշտընկալք և դիւրահասոյցք տխմարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին… Եւ դարձեալ—(որ մեծագոյն գովեստն է ժամանակին)—բազում և անհամար գունդս վանականաց ի շէնս և յանշէնս, դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և արգելականս բնակեցուցեալ հաստատէր: Զորս ընդ ժամանակս ժամանակս… առեալ յիւրաքանչիւր մենաստանացն և երթեալ լեռնակեաց սորամուտ ծակախիթ լեալ՝ զառօրէական զկերակուրն խոտաբուտ ճաշակօքն վճարէին»: Ապա յետ պատմելոյ զմահն Սահակայ, ինչպէս արդէն յիշեցինք՝ կը դնէ Մեսրոպայ մահուան պատմութիւնը, որով կը կնքէ իւր սքանչելի մատենիկն.— «Իսկ երանելի զուգակցին, զՄաշթոցէ ասեմ, լուեալ զմահ նորա (Սահակայ)՝ բազում անձկայրեաց տրտմութեամբ և արտօսրագութ ողբովք և ծանրաթախիծ սգովք պաշարեալ գնէր… Բայց թէպէտև միայնաւորութեանն տրտմութիւն չթողոյր զուարթանալ՝ սակայն զաւետարանական ընթացսն և զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր, և առաւել փութայր, զուն եդեալ զամենեսեան յորդորելով առ բարեացն քաջութիւն: Եւ զցայգ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք և բարձրագոյն բարբառովք, աստուածադիր պատուիրանացն հրամանս ուշ առնելով զգուշացուցանէր զամենայն մարդ. մանաւանդ զի և զմտաւ խոկ ածէր զօր վախճանին. չտայր քուն աչաց և ոչ նիրհ արտևանանց, մինչև հասանել ի հանգիստն Տեառն:

**10.** «Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրև զհոգևոր եռանդն ածէր, և բազում թուղթս խրատադիրս և զգացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր՝ անդէն ի նմին ամի, յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ՝ լինէր հանդերձ սըրբով վարդապետով բանակն Հայոց յԱյրարատեան ի Նոր քաղաք, և նովին հոգեկրօն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի: Եւ յորժամ որոշել ի միջոյ ձեռնասուն աշակերտաց և խառնել ի գունդն Քրիստոսի հասանէր՝ թեթևացեալ և սթափեալ ի ցաւոցն կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռսն հանապազատարածս յերկինս՝ զամէն մնացեալսն յանձն առնէր շնորհացն Աստուծոյ, վասն նոցա օգնականութիւն հայցէր: Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոց են այս. առաջնում Յովսէփ, զոր և ի սկզբան գրեցաք, երկրորդին Թադիկ, արք զգաստք, զգուշագոյնք հրամանաց վարդապետութեանն: Ի զինուորական կողմանէն՝ առաջնումն Վահան ա-

նուն յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց մեծաց, և երկրորդին՝ Հմայեակ ի Մամիկոնեան տոհմէն, որք պատուականք, երկիւղածք, հրամանատարք վարդապետական հրամանաց։ Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին՝ տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր երևէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ և ոչ առ յընկերէ պատմեալ»։ Արդարև, ըստ սկզբանց ժամանակին՝ չէր արժան այնպիսի սրբոյ մահը թողուլ անցանել առանց երևելի նշանաց։ «Զսէր և զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս և զհեռաւորս օրհնութեամբ պսակեալ և զհաճոյական աղօթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեաւ։ Զոր առեալ Վահանայ և Հմայեկի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ և հոգևոր ցնծութեամբք, կանթեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք և ամենայն լուսաճաճանչ գնդիւն, և այնու խաչանշան լուսաւոր առաջախաղաց նշանաւն՝ յՕշականն եղանէին, և անդ ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ՝ ապա նշանն աներևոյթ լինէր, և նոքա իւրաքանչիւր դառնային»։ Այսպէս կը պատմէ և Խորենացին, առանց թողլոյ յիշել նաև խաչանման լուսաւոր տեսիլը, յաւելլով և փառաւոր գովեստ զերանելւոյն.—«Զկնի վեց ամսոց անցելոց (ի վերայ վախճանին Սահակայ), յերեքտասանն Մեհեկանի, երանելին Մեսրոպ փոխեցաւ յաշխարհէ ի Վաղարշապատ քաղաքի. գերազանցեալ քան զամենայն որք զայնու ժամանակաւ էին առաքինիք։ Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբէք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր։ Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ։ Այլ վասն զի զբոլոր ուղղութիւնս նորա ոչ բաւական եմ ասել՝ ի հանգիստ նորա նշխարացն դարձուցից զբանս։ Որպէս լուայ ի բազմաց և ի հաւատարիմ արանց, եթէ եկաց լոյս շողապէս ընդ աղօտ նշան խաչի ի վերայ դրանն ուր երանելին զհոգին աւանդեաց. ոչ փոյթ ընդ փոյթ լեալ էանց ծագումն, կամ սակաւուց տեսանելի, այլ ամենայն բազմութեան, մինչ յոլովից մկրտել յանհաւատից։ Յայնժամ լեալ աղմուկ շփոթի յամբոխութեանն, բաժանեալ յերիս գունդս, վասն հանգուցանելոյն զպարկեշտն զայն մարմին և նախ քան զմահն կրթեալ ի մեռելութիւն։ Կէսքն ա-

սէին տանել ի բնագաւառն իւր ի Տարօն, և ոմանք՝ ի նախ աշակերտեալն Գողթն, և այլք անդէն ի Վաղարշապատ քաղաքի ի սրբոցն գիրս։ Բայց յաղթեալ քաջն Վահան Ամատունի, զի էր զօրաւոր հաւատովք և ճոխութեամբ մարմնաւորաւ. վասն զի ի ժամանակին յայնմիկ ի նա էր հաւատացեալ Պարսից զհազարապետութիւն Հայոց աշխարհիս. որոյ բարձեալ՝ տարաւ զնա արժանի յուղարկմամբ յիւր գիւղն Օշական։ Եւ նոյն տեւոյ լուսեղէն խաչին ի վերայ երթեալ գագաղացն՝ յանդիման ամենայն ժողովրդեանն, մինչև ի հանգիստ զնա փոխեցին Վահան և Թաթիկ նորին արբանեակք, և ապա նշանն աներևոյթ լինէր» (Խոր. Գ. ԿԷ)։

**11**. Ըստ ժամանակագրութեանն, զոր կը դնէ Կորիւն ի վերջկոյս պատմութեանն, գիտնալով ևս Մեսրոպայ մահուան տարին, որ է 440՝ կը գտնենք գիրը գտնուած իբր 405-ին, այսինքն իբր 35 տարի յառաջ քան զմահ նորա. զհրաժարումն նորա յաշխարհէ՝ իբր 395-ին առ Վռամշապհով, այսինքն իբր 45 տարի յառաջ քան զմահն. իսկ մտանելն ի դուռն արքունի՝ իբր 386-ին առ Խոսրովաւ, այսինքն՝ իբր 53 տարի յառաջ քան զմահն։ Եթէ դնենք զնա իբր 24-ամեայ մտած ի դուռն՝ ծնունդ նորա կը հանդիպի իբր 361-ին կամ 362-ին. ուստի և կը հետևի թէ Մեսրոպ չէր աւելի քան 12-ամեայ, երբ առ Ներսէսի, իմա ի դպրոցի ուրեք նորա սկսաւ ուսանել։ Այս հաշուով Մեսրոպայ կենաց տարիներն եթէ չեղան շատ աւելի՝ չեղան ևս շատ պակաս քան 78։ Մեսրոպայ այնպէս իշխանաբար գործելէն ի Վիրս և յԱղուանս, այսինքն իբր իւր թեմին մէջ, կը տեսնուի թէ այն երկիրներն, այսինքն ոչ միայն Հայոց Վիրք և Աղուանք, որ կը թուին զայնու ժամանակաւ բաժանեալ ի Հայոց և միացեալ ընդ բուն կամ ազատ Վրաց և Աղուանից, այլ և վերջինք, զատուցեալք ի վաղուց անտի ի Հայոց Կուր գետով՝ էին ընդ իրաւասութեամբ եկեղեցւոյն Հայոց։ Զիարդ և իցէ՝ քրիստոնէական տեսութեամբ, այն մեծ շարժումը որում պատճառ եղաւ Մեսրոպ իբրև ճշմարիտ առաքեալ յետ Լուսաւորչին՝ եղաւ անտարակոյս պատրաստութիւն մեծ այն սաստիկ հալածանաց դէմ, զոր յարոյց Սասանեան հարստութիւնն ընդդէմ քրիստոնէութեան, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։ Բայց քան առաքելական նախանձն Մեսրոպայ ի նպաստ քրիստոնէական հաւատոյ՝ ոչինչ ընդհատ մեծ և կարևոր է գիւտ հայերէն դպրութեան, զոր Մեսրոպայ պարտի ազգն։

**12**. Կարծենք յայտնի է, թէ յառաջ քան զՄեսրոպ և առ Մեսրոպաւ մինչև ի գիւտ հայերէն նշանագրաց՝ արքունիքն և եկեղեցին կը վարուէին յոյն կամ ասորի գրով, այսինքն յոյն կամ

ասորի լեզուաւ, քանզի գիր կը նշանակէ լեզու կամ դպրութիւն, (և ոչ լոկ նշանագիր, որպէս թէ Հայք կը գրէին հայերէն՝ յոյն կամ ասորի նշանագրօք, ինչպէս մեք այսօր կը գրենք թուրքերէն՝ հայերէն նշանագրօք)։ Շատ յայտնի է այս ի Փարպեցւոյն.— «Մաշթոց... ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն զյոյն, զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն, վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորին Հայոց արքունի դպիրքն, զվճռոցն և զհրովարտակաց» (Փարպ. Ժ.). և այլուր (Անդ)—«Հոգացեալ յարաժամ տրտմէր երանելի այրն Մաշթոց, տեսանելով զմեծաջան ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թօշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան։ Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք Գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այնպիսի մեծի աշխարհի, յանկրութենէ լեզուին ասորոյ»։ Արքունիքը կը վարուէր նաև պարսկերէնիւ (Խոր. Գ. ԾԲ.), և այս թերևս յետ բաժանման երկրին, երբ յունարէնն արգելուեցաւ Պարսից բաժնին մէջ։ Ապաքէն դժուարութիւն մեծ էր այս թէ եկեղեցւոյն և թէ դրան։ Եկեղեցւոյն համար ասէ Խորենացին. «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր՝ զանխուլ ի ժողովրդենէն լինէր, յաղագս ոչ լինելոյն թարգմանիչ։ Վասնորոյ եդ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. և արկեալ զանձն ի ջանս՝ պէսպէս փորձիւք տաժանէր» (Խոր. Գ. ԽԷ.)։ Իսկ վասն արքունեաց ասէ դարձեալ նոյն զՎռամշապհոյ. «Եւ իջեալ նորա (ի Միջագետս) և կարգեալ զամենայն՝ ոչ փոքր ինչ կրէ աշխատութիւն յաղագս քարտուղարի. զի մինչև գնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք ի ճարտարաց գտանէր անդ ի դպրաց, քանզի պարսկականաւն վարէին գրով» (Խոր. Գ. ԾԲ.)։ Վռամշապուհ մնացաւ թերևս իւր դժուարութիւնը, բայց ոչ նոյնպէս Մեսրոպ, որ այս խնդրոյն համար գալով առ Սահակ՝ կը գտնէ զնա ի նոյն միտս, բայց չկարելով առժամուն գտանել հնարս՝ կը մեկնի։ «Առ նա (առ Սահակ) եկեալ Մեսրոպ յաղագս խնդրոյ նշանագրաց Հայոց՝ եգիտ զնա առաւել ևս փափագող այնմ. և յետ բազում ջանից և ոչինչ օգտելոյ մեկնեալ ի միմեանց՝ գնաց Մեսրոպ ի գաւառս իւր» (Խոր. Գ. ԽԹ.)։ Այսպէս ունի և Կորիւն. «Տրտմական հոգովք պաշարեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի

արդեօք ելս իրացն գտանիցէ (վասն նշանագրաց)։ Իբրև աւուրս բազումս անձէն ի նմին դեգերէր՝ յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ»։ Այս խորհրդակցութիւնը կը թուի թէ տևեց և հասարակաց եղաւ բարձրագոյն կղերին. քանզի յետ պատմելոյ Խորենացւոյն Վռամշապհոյ դժուարութիւնն ի Միջագետս վասն քարտուղարի՝ ասէ. «Եկեալ արքայի ի Հայս՝ գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս հոգալ զգիւտ դպրութեան Հայոց» (Խոր. Գ. ԾԲ.)։ Կորիւն, որ ոչինչ ընդհատ քան զԽորենացին մեծ ճոխութիւն է, մանաւանդ թէ առաւել քան զնա, ոչ միայն իբրև ժամանակակից, այլև իբրև ի մօտոյ տեղեակ գործոյն՝ «ժողովեցին, ասէ, (Սահակ և Մեսրոպ) աշխարհահոգ խորհուրդ»։ Այսպէս հոգն եղաւ հասարակաց, մանաւանդ կղերական դասուն։ Ինչպէս կը տեսնուի ի բանից Կորեան, ևս և Փարպեցւոյն որ չէր հեռի ժամանակաւ՝ Սահակայ և Մեսրոպայ առաջին և մեծագոյն նպատակն է տալ ազգին գիր և դպրութիւն՝ էր բոլորովին հոգևոր —ընծայել ազգին իւր լեզուաւ զՀին և զՆոր Կտակարանս, քանզի այնու միայն կը համարէին հաստատել զազգն ի հաւատս քրիստոնէութեան և դնել հիմն մտաւոր և բարոյական կրթութեան նորա։ Այս խորհուրդն ունէին բարեպաշտ մարդիկ, մանաւանդ կղերն, բազմօք յառաջ քան զՍահակ և զՄեսրոպ։ Անկարող կը տեսնէին զժողովուրդըն օգտել քրիստոնէական վարդապետութենէ առանց ունելոյ ի ձեռին զայն մատեան։ Չէ անհաւանական կարծել, թէ Մեսրոպ հայերէն գիր հնարելով Աստուածաշունչ մատեանն թարգմանելու խորհուրդն յղացաւ ի Գողթան, ուր վիպասանք յօրինելով երգեր կը տարածէին, և ժողովուրդը կ'ուսանէր զնոսա սիրով։ Մեսրոպ կը խորհէր թերևս, թէ եթէ Աստուածաշունչն հայերէն լեզուաւ և գրով տրուէր ժողովրդեան՝ կը խափանուէին հեթանոսական երգք և ցուցք, զորոց այնպէս կաթոգի էր ազգն, նախարարք և շինականք միանգամայն։ Զայս կը թուի յայտ առնել Բուզանդ. քրիստոնէական վարդապետութենէ կարէին օգտել, ասէ, նոքա միայն, «որք զհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեան», քանզի հմուտք այն լեզուաց կարող էին կարդալ զսուրբ Գիրս. «Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին այլ խառնաղանճ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն և շինականութեանն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետացն ըստ նմանութեան ամպոցն իբրև զյորդահեղեղ ինչ անձրևաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին՝ ոչ ոք ի նոցանէն և ոչ մի

բան, և ոչ կէս բանի, և ոչ զոյգն յիշատակ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն՝ կարէին ինչ ունել ի մտի։ Վասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտս և եթ զբօսեալ էին... զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, և նմին հաւատացեալք և ի նոյն հանապազորդեալք» (Բուզ. Գ. ԺԳ.)։ Զնոյն ասէ և Փարպեցին, որ յետ յիշելոյ ասորերէն լեզուն ուսանելու անհնարին և գրեթէ անօգուտ աշխատութիւնը՝ կը յաւելու. «Բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցւոյն. և ուսուցիչքն հանելով յոգւոց և հառաչելով զղջանային զնոտի ջանն իւրեանց, յորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս ի վարդապետութենէ հոգևոր խրատուցն, որ է կերակուր և պարարումն իմաստնախնդիր անձանց, մինչև—կը յարէ—գտաւ գիր, և յաջողելով Քրիստոսի եկեալ յաճումն տակաւին զօրանայ» (Փարպ. ԺԱ.)։ Այս էր պատճառ Սահակայ և Մեսրոպայ այն ծանր թախծութեանն, զոր կը նկարագրէ Կորիւն. «Տրտմական հոգովք պաշարեալ և թակարթապատեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի՜ արդեօք ելս իրացն գտանիցէ։ Եւ իբրև աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր՝ յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ։ Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ. և զայն առնէին աւուրս բազումս»։

Գանք այժմ ի պատմութիւն գիւտին նշանագրաց։ Ըստ Կորեան, որ է առանց երկբայութեան ժամանակակից և մերձաւորագոյն աղբիւր, երբ Սահակ և Մեսրոպ հանդերձ եպիսկոպոսօք յայտնեցին զիւրեանց փափագն վասն գիւտի հայերէն դպրութեան՝ Վռամշապուհ պատմեց նոցա, թէ Դանիէլ անուն ասորի եպիսկոպոսի մը քով կը գտնուէին հայերէն նշանագիրներ, ուստի և ըստ խնդրոյ նոցա ղրկուեցաւ առ Դանիէլ Վահրիճ ոմն, և բերուեցան նշանագիրքն։ Իբր երկու տարի փորձուելով տեսնուեցան անբաւական ուղիղ հնչելու հայերէն բառերն—«ողջ ածել զսիղոբայս և զկապս հայերէն լեզուոյն», ուստի և թողուեցան, և արդէն այն նշանագիրք ժամանակաւ փորձուած և իբր անյարմար՝ թողուած էին։ Երբ այս յոյս նոցա ելաւ ի դերև՝ Սահակ և Մեսրոպ փորձեցին ժամանակ մի ևս ուրիշ հնարս, բայց չյաջողեցան։ Ապա Մեսրոպ գնաց յԱսորիս, յԵդեսիա, յԱմիդ, և յետ երկար աշխատելոյ՝ հնարեց մեր այժմու այբուբենն յԵդեսիա, և անտի երթալով ի Սամոսատ

(ոչ ի Սամոս), գտնելով քաջ հելլենագէտ ումն դպիր (դրիչ կամ քերական) Հռոփանոս անուն՝ նովաւ հանդերձ տառերուն զանազանութիւններն, նուրբը, երկայնը, կարճը, առանձինը, կրկնաւորը ճանչնալով և որոշելով, (այսինքն այբուբենը կազմելով)՝ կ'սկսի թարգմանել: Այսպէս է բառ առ բառ: Ահա բնագիրն.—«Բազում հարց փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ (ժողով եպիսկոպոսացն հանդերձ Սահակաւ և Մեսրոպաւ)՝ ազդ առնէին ապա զկանխագոյն խնդրելլին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ: Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ (էր գտեալ) յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի: Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն (թերևս գրենոյն) ի Դանիելէ՝ յօժարեցին զարքայ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիելի ասորւոյ եպիսկոպոսի: Իսկ Հաբելին զայն լուեալ՝ փութանակի հասանէր առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիելէ նշանագրոյն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց, ի հինգերորդի ամի (396 կամ 397) թագաւորութեան նորա ի նա հասուցանէր: Իսկ արքայն հանդերձ սրբովն Սահակաւ և Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն՝ ուրախ լինէին: Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն՝ խնդրէին հայցէին ևս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն մարթասցեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային՝ ապա հրաման տայր (Մեսրոպ) ամենայն ուրեք նովին կրթել... և իբրև ամս երկուս կարգեալ զվարդապետութիւն իւր նովին նշանագրովք տանէր: Իսկ իբրև ի վերայ հասեալ (հասանէր), թէ չեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղոբայս և զկապս հայերէն լեզուոյն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան՝ յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ: Վասնորոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ... խաղայր գնայր ի հինգերորդ (իմա՝ յեօթներորդ) ամի Վռամշապհոյ. և երթեալ հասանէր ի կողմանս Արամի (Ասորւոց) ի քաղաքս երկուս Ասորւոց, որոց առաջինն Եդեսիա կոչի, և երկրորդն՝ Ամիդ անուն:.. Զատրեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ՝ զոմանս յասորի դպրութեանն կարգէր, և զոմանս յունական դպրութիւն... Եւ նորա իւրովք հաւասարօք զսովորականն

առաջի եդեալ զաղօթս և զոքնութիւնս և զպաղատանս արտասուալից, զխստամբերութիւնս, զհոգս աշխարհահեծս:... Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց օճան գտանելոյ. որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական չափուն ծնեալ (ծնանել) ծնունդս նորոգ և սքանչելի, սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիւղոբայիւք և կապօք:... Ապա հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացւոց... և անդէն ի նմին քաղաքի գրիչ ումն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն, զնրբագոյնսն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ՝ ի թարգմանութիւն դառնային» (Կորիւն):

Խորենացին այս մութ պատմութիւնը ջանալով պարզել՝ առաւել կը խառնակէ: Ըստ Խորենացւոյն՝ Հաբէլ «խոստանայր (Վռամշապհոյ) Հայկականացս *լեզուաց* (քանի՞ հայերէն կար) առնել (յօրինել, շինել) նշանագիր, *յարմարեալ* ի Դանիելէ եպիսկոպոսէ յիւրմէ մերձաւորէ»: Ուրեմն այն նշանագիրք շինուած և յարմարուած էին, բայց յումմէ, Հաբելէ՞ թէ Դանիելէ: Եթէ նշանագիրքն պիտի շինուէին Հաբելէ (ըստ խոստման նորա—«խոստանայր Հայկականացս լեզուաց առնել նշանագիր». Խոր. Գ. ԾԲ.), և յարմարեալ էին ի Դանիելէ («յարմարեալ ի Դանիելէ եպիսկոպոսէ յիւրմէ մերձաւորէ» Խոր. Անդ.—անիմաստ խօսք), ի՞նչ կը նշանակէ կոչելն Խորենացւոյն այն նշանագիրները «վաղընջուց գտեալ»: Դարձեալ՝ ըստ Խորենացւոյն Հաբէլ և Վահրիճ «կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվաղընջուց գտեալ նշանագիր տուեց՝ եկեալ տուն ցմեծ Սահակ և Մեսրոպ»: Ի՞նչ կը նշանակէ «կարգել ըստ ձևոյ օրինակի յունականին». յունարէն նշանագրաց ձև՞ը տուին նոցա, թէ ըստ յունարէն այբուբենին շարեցին: Ի բանից Խորենացւոյն այնպէս կը հասկցուի, թէ կային ի վաղուց մնացած նշանագիրներ, այսինքն հին անծանօթ այբուբեն մը, զոր Դանիէլ յարմարցուցած էր հայերէն լեզուին, և Հաբէլ և Վահրիճ յունարէն տառերուն ձև տալով նոցա՝ բերին առ Սահակ և Մեսրոպ: Կորիւն չունի այս պարագաներն, այլ ասէ. «Որոյ (Դանիէլի, գտեալ էր) յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի»: Կորիւն չասէ նաև թէ այս ինչ կամ այն ինչ ձևով կամ օրինակաւ կարգեցան այս նշանագիրք: Առ Կորեան այս գիւտին մէջ հրաշք ընդ աղօտ միայն կը նշմարուի. ըստ Խորենացւոյն յայտնի հրաշք կայ: Ըստ Կորեան՝ «ամենաշնորհողն Աստուած» պարգևեց նմա՝ իբրև

Հայր իւր (զՄեսրոպ ակնարկելով) սուրբ աջովն ծնանել այս նորոգ և սքանչելի ծնունդը, զնշանագիրս Հայերէն լեզուին։ Այս, որ գրեթէ այլաբանութիւն է կամ բարեպաշտ ստացուած՝ առ Խորենացւոյն կը փոխուի ի յայտնութիւն.—Մեսրոպ «տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ. այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի ա, ե, է, ը, ի, ո, ւ. զի որպէս ի ձեան վերջք գծին կուտեալ ունէր քարն»։ Եւ այս «ոչ միայն երևութացաւ, այլև հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ»։ Եթէ Մեսրոպ արդարև կը տեսնէր «թաթ ձեռին աջոյ գրելով ի վերայ վիմի»՝ կը տեսնէր կամ ի քուն իբրև երազ, կամ յարթնութեան իբրև տեսիլ. եթէ չէր ոչ մին և ոչ միւսն, որպէս ասէ Խորենացին՝ ապա էր ոչինչ։ Անիմաստ բառեր են «հոգւոյն աչք», «սրտին գործարան»։ Եթէ Խորենացին այս բառերով կ'իմանայ յայտնութիւն՝ յայտնութիւնը չէ երևոյթ, այլ ինչպէս կ'ըսուի՝ ազդումն ինչ յԱստուածուստ։ Բայց յայտնութիւն երազով կամ տեսլեամբ՝ մեզի համար չունի ամենեւին նշանակութիւն. մենք չենք կրնար որ և իցէ կերպ յայտնութեան ընծայելով մեր գրոյն գիւտն՝ առնել ծաղրելի մեր պատմութիւնը լուսաւորեալ աշխարհի։ Ուստի թողլով մեր սիրելի ծերունին իւր բարեպաշտ միամտութեան մէջ՝ բնականէ դուրս բան չենք տեսներ մեր այբուբենի գիւտին մէջ։ Թեթև ակնարկութիւն մի միայն մեր այբուբենին վրայ բաւական է ցուցնել, թէ Մեսրոպայ գործն եղաւ այս անուանեալ գիւտին մէջ՝ հայացունել Յունաց այբուբենական գրութիւնը։ Զարմանալի է, որ «թաթն ձեռին աջոյ» Խորենացւոյն գրեց քարին վրայ ա, ե, է, ը, ի, ո, ւ, և ոչ՝ ա, բ, գ, դ, ե, զ, ևն։ Ուրեմն մեր «Մանէ, Թեկեղ Փարէսն» էին ձայնաւորք։ Երբ ա, ե, է, ը, ի, ո, ւ գտնուեցան, կամ մանաւանդ մուծան յունարէն այբուբենին միւս տառերուն հետ՝ լուծաւ առեղծուածն, իսկոյն սկսան «փոխադրել Հայերէն աթութայք (բաղաձայնք) ըստ անսայթաքութեան սիղոբայից Հելլենացւոց»։ Եթէ այն հրաշալի թաթն գրեց ձայնաւորներ միայն՝ յայտնի է թէ չկային պէտք բաղաձայնից։ Հաս բնական խելքը կ'ելլէ ջատագով գերբնական թաթին, վկայելով թէ Հայերէն լեզուն ունէր գիր. ապա թէ ոչ ինչպէս կրնար հասնել յայն չափ՝ յոր հասած էր մինչև ի Մեսրոպ։ Հարկ է ուրեմն դնել, թէ Մեսրոպ ունէր ի ձեռին հին Հայերէն անշունչ և անկենդան այբուբէն մը բաղաձայններէ կազմեալ, ոչ անծանօթ սակաւ գրոգիտաց, նոյին իսկ Սահակայ և Մեսրոպայ և նոցայոցն, որում տուաւ Մեսրոպ շունչ և կենդանութիւն՝ մուծանելով Յունաց ձայնաւորներն։ «Փչեաց Աստուած յԱդամ

շունչ կենդանի, և եղև Ադամ յոգի կենդանի»։ Ահա գաղտնիք Մեսրոպեան գիւտին։ Մեսրոպ յետ մուծանելոյ հին այբուբենին մէջ Յունաց ձայնաւորներն՝ կը մնար շարել հայերէն տառերն ըստ այփաբետին Յունաց. յայսմ օգնեց նմա Հռոփանոս, «Հրաշալին արուեստիւ հելլէն դրչութեան»։ Թէ ինչպէս՝ բաւական են ցուցանել բառք Կորեան—«նրբագոյն», «կարճ», «երկայն», «առանձին», «կրկնաւոր»։ Հրաշալին արուեստիւ ունէր արուեստ մը, որ նպաստեց Մեսրոպայ ի շարել հայերէն տառերն առաջի յունականաց ըստ բնութեան նոցա։ Այս արուեստը չէր «կերպաձևել», բառ մը՝ որ չունի վայելչութիւն, հոս և ոչ տեղի։ Հոս ունինք կարևոր հարցում մը, որում պարտի պատասխանել Խորենացին։ Մեսրոպ յետ ընդունելոյ իւր այբուբենն յԱստուծոյ, ինչ պէտք ունէր վազել Հռոփանոսներու։ Միթէ աւելի՞ ինչ գիտէր Հռոփանոս քան զՀրաշալին Թաթ ձեռին աջոյ, որով ոչ միայն ցուցան նմա նշանագիրքն, այլև «հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ»։ Մեծաբոյ պատմիչք մեր շատ անգամ յայտնել մեզ ճշմարտութիւնը կամ չեն կամիր, և կամ չեն կարող։ Այս չուառ բախտին հանդիպած կ'երևի նաև նշանագրաց գիւտին պատմութիւնը։ Ուստի իբրև բովանդակութիւն կը յաւելունք.—

Նախ. չէ ճշմարիտ այն որ ընդհանրապէս կը կարծուի, թէ Հայք յառաջ քան զՄեսրոպ չունէին նշանագիր, ուստի և էին անմասն դպրութենէ։ Նայելով հանգամանաց հայերէն լեզուին յառաջ քան զՄեսրոպ՝ անհնար էր լեզուին առանց դպրութեան հասնել այն աստիճան զարգացման՝ յորում կը գտնենք զնա ի հատակոտորս երգոց վիպասանաց, որոց կատարեալ նմանութիւն է թարգմանչաց լեզուն։ Այսմ վկայ ունինք զՓարպեցին, որ ի մեղադրելն զազգն վարուելուն համար ասորի լեզուաւ ի պաշտամունս եկեղեցւոյ՝ կը յաւելու. «մանաւանդ թէ զոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ և ոչ մուրացածոյ բարբառով շահել զոգիս արանց և կանանց առ հասարակ»։ Զայս ասէ Փարպեցին յառաջ քան զգիւտ Մեսրոպեան նշանագրաց, թէպէտ չյայտներ, թէ որպիսի ինչ կամ ուր էին այն նշանագիրք։

Երկրորդ. բաւական յայտնի է, թէ Դանիէլեան գիրն ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ սեմական լեզուաց, յանուանէ ասորերէնի ոճով առանց ձայնաւորի շինուած այբուբեն մը, յարմարցուած հայերէնի, բայց ինչպէս կ'երևի՝ անկատար յոյժ, թերևս աջէն ձախ, մինչև երկիցս փորձուելով՝ տեսնուեցաւ անյարմար։

Գալով Մեսրոպեան նշանագրաց՝ յայտնի է թէ շինուած է յունարէն այբուբենի ոճով և արուեստիւ, կամ եթէ արժան է ասել՝

յունարէնի ատաղձիւ, ճշդիւ նման նմին, ինչպէս արդէն ըսուեցաւ։ Ահա Մեսրոպեան այբուբենն համեմատեալ ընդ յունին․

ա բ գ դ ե զ է (ը) թ (ժ) ի (լ խ ծ) կ (հ ձ) ղ (ճ)
α β γ δ ε ζ η θ ι κ λ

մ (յ) ն (շ) ո (չ) պ (ջ ռ) ս (վ) տ ր (ց) ւ փ ք․
μ ν ο π σ τ ρ υ φ χ.

Տառք փակագծէ դուրս՝ են ճիշդ յունարէն։ Փակագծի մէջ առնուածներէն Ը, (հնչում մը զոր չունի յունարէնը, և որ հայերէնի համար պարտ էր ունենալ զատ նշանագիր բառերու սկիզբը Ն. Մ; Ղ գիրերէ առաջ), առնուած է հին այբուբենէն կամ հնարուած։ Ժ, Շ լծորդ են ընդ Ս-ի, թէպէտ ուրոյն հնչումն։ Լ կը պատասխանէ յունարէն λ-ի, միայն է աւելի թանձր, ուստի և յարմարցուած է λ-ին Ղ, իբրև աւելի մեղմ հնչումն։ Խ է կոկորդային զոր չունի յունարէնն, ուստի և մուծուած հին այբուբենէն։ Ծ, Ձ, Ց, ինչպէս նաև Ճ. Ջ; Չ են հայերէնի յատուկ հնչումներ, միւս բաղաձայններուն պէս երեք կարգ—կակուղ (ծ, ճ), միջին (ձ, ջ) և թանձր (ց, չ)։ Հ է հագագային, որ ընդհանրապէս կը պատասխանէ յունարէնի ՙ և ՚ նշաններուն։ Յ նոյն է ընդ Ի ձայնաւորին։ Ո կը պատասխանէ յունարէնի ὁ-ի և շատ անգամ կը գրուի Հ-իւ—Հո։ Ւ—υ, որ չգտնուիր բառերու սկիզբը՝ յունարէն υ-ի պէս ուրիշ ձայնաւորներով կը կազմէ երկբարբառներ, ինչպէս ԱՒ—αυ, ԵՒ—ευ, ԻՒ—ιυ, ՈՒ—ου։ Վ ունի ւ-ի և ու-ի հնչումը բառերու սկիզբը, և Ո-իւ—ՈՎ՝ կը պատասխանէ յունարէն ω-ի։

Այս է արուեստ կամ գաղտնիք Մեսրոպեան այբուբենին, որոյ յօրինման համար ոչ տեսիլ պիտոյ էր և ոչ հրաշալի թաթ ձեռին աջոյ։ Բայց և այնպէս հարկ է խոստովանել շնորհակալութեամբ, թէ Մեսրոպ եղաւ արդարեւ նոր Կադմոս, հայր հայերէն այբուբենին։

**13.** Գանք այժմ Թարգմանութեան։ Թարգմանութեամբ կ'իմացուի մանաւանդ Հին և Նոր Կտակարանաց Թարգմանութիւնն, որ կ'ընծայուի Սահակայ և Մեսրոպայ և ոմանց յաշակերտաց նոցա։ Այսպէս է արդարեւ ըստ վկայութեան ժամանակակից և ստուգագոյն պատմութեան։ Կորիւն, որ ոչ միայն ժամանակակից, այլև միջամուխ է Թարգմանութեան գործին՝ կը պատմէ ուրեք զՄեսրոպայ այսպէս.—Յետ կարգելոյ և յօրինելոյ զհայերէն այբուբենն՝ Մեսրոպ ուրիշ երկու աշակերտօք սկսաւ թարգմանել, սկիզբն առնելով յԱռակաց.—«Որով (Հռոփանոսիւ) զամենայն ընտրութիւնս նշանագրոյն... յօրինեալ և յանկուցեալ՝ ի Թարգմանութիւն դառնային (դառնայր) հանդերձ արամբք երկուք աշակերտօքն իւրովք,

որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յԵկեղեաց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն, ի Պաղանական տանէն. եդեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեան ընծայեցուցանէ լինել ասելով, եթէ ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Կորիւն)։ Խորենացին ևս կը պատմէ նոյնպէս, միայն կու տայ թարգմանել Մեսրոպայ բովանդակ Հին և Նոր Կտակարաններն.—«Հանդերձ Հռոփանոսիւ կերպաձևեալ գծիրն Մեսրոպայ առ ձեռն պատրաստ... իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց, բովանդակ զքսան և երկու յայտնիսս և զՆոր Կտակս յեղու ի Հայ բան. նա և աշակերտք նորա Յովհան Եկեղեցային և Յովսէփ Պաղնացի» (Խոր. Գ. ԾԳ.)։ Հաւանականագոյն է սակայն, թէ թարգմանեալն ի Մեսրոպայ էր Առակաց գիրք միայն, քանզի Կորիւն բովանդակ Ս. Գրոց թարգմանութիւնը կ'ընծայէ Սահակայ.—«Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական Գրոց գումարութիւն կանխաւ յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, դարձեալ յետ այնորիկ (այսինքն երբ թարգմանիչք բերին ի Կոստանդնուպոլսոյ սուրբ Գրոց ընտիր օրինակներ) առեալ հանդերձ Եզնկաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի թարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք»։ Խորենացին ևս գիտէ թարգմանութիւն մի որ առաջ եղած էր՝ ուղղուած յետոյ ըստ ստուգագոյն օրինակաց. բայց յայսմ ևս կը տարբերի իւիք իւիք ի Կորենէ. —«Ապա եկեալ թարգմանիչք մեր... մատուցին զստոյգ օրինակս Գրոց, զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ» (Խոր. Գ. ԿԱ.)։

Ըստ Կորեան՝ թարգմանութիւնն էր Սահակայ, և նա էր դարձեալ ուղղիչ կամ սրբագրող հանդերձ Եզնկաւ։ Խորենացին զՄեսրոպ ևս կը խառնէ, ուղղութիւնը կը դնէ եղած ոչ Եզնկաւ միայն, այլ «նոքօք հանդերձ», այսինքն բոլոր թարգմանչօք։ Կորիւն ասէ. «Հաստատէր զյառաջագոյն թարգմանութիւնսն ճշմարիտ օրինակօք»։ Խորենացին ասէ. «Միւսանգամ թարգմանեցին զմիանգամ թարգմանեալն փութանակի։ Բայց թարգմանութեամբ չիմացուէր հին և նոր Կտակարանաց թարգմանութիւնը միայն, այլև ուրիշ գրոց, մանաւանդ հին հարց Յունաց։ Կորիւն յետ յիշելոյ Գրոյն թարգմանութեան ուղղութիւնը, որ եղաւ ի ձեռն Սահակայ և Եզնկայ ըստ ստոյգ օրինակաց՝ կը յաւելու. «Եւ շատ ևս մեկնութիւն Գրոց թարգմանէին»։ Աստ կրնանք հետևցունել, թէ Ոսկեբերանի, Կիւրղի և այլ հարց, մանաւանդ առաջնոյն մեկնութիւններուն մեծ

մասն են գործք Սահակայ և Եզնկայ։ Այլուր ասէ Կորիւն զՍահակայ և Մեսրոպայ միանգամայն, և մանաւանդ զՍահակայ, թէ կը պարապէին ի թարգմանել և ի գրել.—«Յետ այնորիկ ուշ եդեալ երկոցունց երանելեացն զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և դիւրացուցանել՝ ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել մեծն Սահակ ըստ յառաջագոյն սովորութեանն»։ Եւ Մեսրոպայ համար ասէ. «Թարգմանէր, գրէր և ուսուցանէր»։

**14.** Սահակ և Մեսրոպ բաւական չհամարելով զիւրեանց աշխատութիւնն՝ կը ղրկեն նաև իւրեանց աշակերտներէն զոմանս որ հմուտ էին թարգմանութեան, որ այն ժամանակ առանձին արուեստ էր՝ յԵդեսիա և ի Կոստանդնուպոլիս, թարգմանել ի հայ զգործս ասորի և յոյն հարց։ Թարգմանչաց առաքման պատմութիւնն է այս ըստ Կորեան։—Սահակ և Մեսրոպ իւրեանց աշակերտներէն զերկուս, զՅովսէփ ումն և զԵզնիկ, կը ղրկեն յԵդեսիա թարգմանել ասորի հարց գրուածներն։ Թարգմանիչք կատարելով այս գործը և ղրկելով թարգմանութիւններն առ Սահակ և Մեսրոպ՝ կ'երթան ի Կոստանդնուպոլիս, և քաջ ուսանելով յունարէն՝ կ'սկսին թարգմանել նաև յոյն հարց գործերէն։ Կ'երթան առ նոսա ուրիշ երկու աշակերտք առանց ղրկուելու, այն է Ղևոնդ և Կորիւն, և միաբանութեամբ կատարելով գործը՝ կը դառնան ի Հայս, բերելով Ս. Գրոց վաւերական օրինակներ, հարց գրուածներ և Նիկիոյ և Եփեսոսի ժողովներուն կանոններն.—«Որոց (Սահակայ և Մեսրոպայ), ասէ Կորիւն, դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն յուղարկել ի կողմանս Ասորւոց ի քաղաքն Եդեսացւոց, զՅովսէփ զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն, յԱյրարատեան գաւառէն, ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուսցեն։ Իսկ թարգմանչացն հասեալ ուր առաքեցանն և կատարեալ զհրամանսն և առ պատուական հարսն առաքեալ՝ անցեալ գնային ի կողմանս Յունաց, ուր և ուսեալք տեղեկացեալք՝ թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին։ Այսպ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղևոնդէս առաջնոյն անուն էր և երկրորդին՝ Կորիւնս, և մատուցեալ յարէին յԵզնիկն, եբրև առ ընտանեգոյն սնընդակից ի Կոստանդինական քաղաքին, և անդ միաբանութեամբ հոգևոր պիտոյից զխնդիրն վճարէին։ Եւ յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր Գրոցն և բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք և Նիկիական և Եփեսոսական կանոնօք գային երևելով աշխարհին Հայոց, և առաջի դնէին հարցն

ջերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ» (Կորիւն)։ Խորենացին ևս կը պատմէ նոյնպէս, յաւելլով պարագայս ինչ։ Ըստ Խորենացւոյն՝ Յովսէփ և Եզնիկ, որ ղրկուեցան յԵդեսիա, լսելով յոմանց, թէ Սահակ և Մեսրոպ կը խորհին գալս առաքել ի Կոստանդնուպոլիս նոյն գործին համար՝ առանց հրամանի Սահակայ և Մեսրոպայ կը փութան երթալ ի Կոստանդնուպոլիս։ Ընդ նոսա նախանձելով Ղևոնդ և Կորիւն՝ ինքնակամ կ՚երթան ի Կոստանդնուպոլիս. յետոյ կը հասնին Յովհան և Արձան, որ վաղ իսկ սահմանեալ էին Կոստանդնուպոլսոյ համար, բայց դանդաղութեամբ ճանապարհորդելով յամեցին։ Թարգմանիչք մեր գտան մեծ ընդունելութիւն, կը յաւելու Խորենացին, Նեստորի յաջորդէն Մաքսիմիանոսէ (431), որ էր յայնժամ պատրիարք Կոստանդնուպոլսի.—«Ապա եկեալ և առեալ Մեսրոպայ և մեծին Սահակայ զնոյն աշակերտս, զՅովսէփ և միւս ընկեր նմին ի Կողբ գեղջէ, որում անուն Եզնիկ կոչիւր՝ առաքեն ի Միջագետս ի քաղաքն Եդեսիայ, զի որ միանգամ գտցի անդ գիրք ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց՝ թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն փութով. զի յետ այնր ի Բիւզանդիոն առաքեսցեն ի նոյն գործ։ Որոց ընկալեալ զհրապուրական թուղթս սուտակապասաց ոմանց, իբր թէ պատրաստին մեծն Սահակ և Մեսրոպ գալս առաքել ի Բիւզանդիոն՝ վասնորոյ առանց հրամանի վարդապետացն իւրեանց նոյն ընդ նոյն չուեալ գնացին ի Բիւզանդիոն, նախանձաւոր բարեաց եղեալ ումանց. և քաջ վարժեալ հելլէն դպրութեամբ՝ ձեռնարկեցին ի թարգմանել և ի գրել։ Եւ ընդ նոսա նախանձեալ ընկերաց իւրեանց աշակերտակցաց, որոց անուանքն Ղևոնդ և Կորիւն կարգային՝ յիւրեանց կամաց ելին առ նոսա ի Բիւզանդիոն։ Ապա եկանեն անդր Յովհան և Արձան, զորս կանխագոյն առաքեալ էր Մեծին Սահակայ և Մեսրոպայ. որոց յուլաբար ուղևորեալ և ծուլաբար գեգերեալք պատաղեցան ի Կեսարիա։ Որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոսն Բիւզանդացւոց»։

**15**. Խորենացին յետ յարելոյ ի նոյն Եփեսոսի ժողովոյն պատմութիւնը (Խոր Գ. ԿԱ.)՝ կը յաւելու. «Եւ վասն զի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի մեծն Սահակ և Մեսրոպ՝ գրեն առ նոսա Կիւրեղ Աղեքսանդրացի և Պրոկղոս Կոստանդնուպոլսի և Ակակ Մելիտինոյ եպիսկոպոսք, զգուշացուցանելով զնոսա. քանզի լուան եթէ ոմանք ի չարափառացն աշակերտացն առեալ զգիրսն Թէոդորոսի Մամուեստացւոյ, զվարդապետին Նեստորի և աշակերտին Թէոդորի (Դիոդորի)՝ գնացին յաշխարհն Հայոց։ Ապա եկեալ թարգմանիչքն մեր, զորոց անուանսն յիշատակեցաք յառաջագոյն՝ գտին զմեծն Սա-

հակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ, և մատուցին զԹուղթս և զկանոնս ժողովոյն Եփեսոսի, վեց սահմանեալ կանոնաւ գլխով, և զստոյգ օրինակս Գրոց։ Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ դարձեալ Թարգմանեցին զմի անգամ Թարգմանեալն փութանակի հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ» (Խոր. Գ. ԿԱ.)։

**16.** Խորենացւոյն այս պատմութիւնը կու տայ մեզ գրեթէ թարգմանչաց առաքման հաւանական թուականը։ Ընդունելութիւն Մաքսիմիանոսի պատրիարքին, որ յաջորդեց Նեստորի (431—434) և թուղթն Պրոկղի, որ նստաւ յետ Մաքսիմիանոսի (434—437) կը ցուցնեն, թէ ո՛չ գնալն թարգմանչաց ի Կոստանդնուպոլիս եղա յառաջ քան 431, և ոչ մեկնել նոցա Կոստանդնուպոլսէ եղաւ յե 437-ին. ուստի թարգմանիչք դարձան ի Հայս իբր 3 կամ 4 ամօ յառաջ քան զմահ վարդապետաց իւրեանց, այն է իբր 437-ին։

**17.** Կը մնայ մեզ գիտել, թէ զո՛վ կամ ինչ պարտ է իմանա թարգմանիչ անուամբ։ Այս անունը կը գտնենք տրուած ժամանա կակից պատմութեան մէջ Մեսրոպայ և նորա աշակերտներէն իբ հինգ կամ վեց մարդոց, որ են Յովհան, Յովսէփ, Եզնիկ, Կորիւն Ղևոնդ և Արձան. ո՛չ վասն զի եղան նոքա թարգմանիչ յետ գիւտ գրոյն՝ այլ վասն զի էին արուեստիւ թարգմանիչ յառաջագոյն իսկ քան զգիւտ գրոյն։ Այս յայտնի է մանաւանդ զՄեսրոպայ, զոր Խո րենացին, ինչպէս տեսանք՝ կ'անուանէ յառաջագոյն իսկ քան զգիւ գրոյն՝ թարգմանիչ. տիտղոս՝ որ չէր հասարակ բոլոր վարդապ տաց կամ ընթերցողաց ժամանակին.—«Եւ ի վարդապետել երան լոյն Մեսրոպայ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցո և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր ուր նա ոչ հանդիպէ զանխուլ ի ժողովրդոցն լինէր, յաղագս ոչ լինելոյն թարգմանիչ» Ինչպէս յայտնի է՝ հօս կ'ակնարկուի ժամանակն յառաջ քան զգիւ գրոյն։ Ի ԿԱ. գլուխ Գ. դպրութեանն կու տայ Խորենացին նոյ անունն իբրև տիտղոս նաև յիշեալ վեցին.—«Ապա եկեալ թարգմ նիչքն մեր զորոց անուանսն յիշատակեցաք յառաջագոյն», և այլ այսինքն Յովսէփ, Յովհան, Եզնիկ, Կորիւն, Ղևոնդ, Արձան, զո յիշած է նախորդ (Կ) գլխոյն մէջ։ Կորիւն ևս այս անունը կ տայ նոյն անձանց.—«Իսկ թարգմանչացն հասեալ ուր առաքեցա և այլն,—բաց ի վերջնոյն, յԱրձանայ, որոյ անունը չիք ա րեան։ Հաւանական է, թէ Յովհան, Յովսէփ, Եզնիկ և այլք, որ ի և իսկ ի գտանել գրոյն սկսան առնել թարգմանութիւնս՝ էին ա դէն վարժք և ընդելք ի թարգմանել, ուստի և հմուտ թարգմ նութեան արուեստին։ Դրացի քրիստոնեայ ազգեր ևս, յանուա Վիրք և Աղուանք, ունէին զայնու ժամանակաւ այսպիսի թարգ

մաններ։ Այսպէս Ջաղայ ոմն էր «թարգման վրացերէն լեզուին, այր գրագէտ և ճշմարտահաւատ» ըստ Կորեան։ Ջաղայ կը յիշուի նաև ի Խորենացւոյն իբրև թարգման.—«Ջաղայիւ ոմամբ թարգմանաւ հելլէն և հայ լեզուի»։ Թարգման էր և «Բենիամէն երէց Աղուան ազգաւ» ըստ Կորեան, ըստ Խորենացւոյն՝ «շնորհաւոր թարգման»։ Սոցա հետ խորհրդակցելով յօրինեց Մեսրոպ Վրաց և Աղուանից այբուբենն ըստ մեր պատմութեան։ Թէ ինչ էր և ինչպէս կ'ուսանէին թարգմանչութիւնը՝ չենք գիտեր որոշ ինչ. կը թուի սակայն, թէ թարգմանչութիւնն էր առանձին ուսումն և արուեստ, զոր ոչ ամենեքին գիտէին, այլ սակաւք ոմանք, ինչպէս էր վիպասանութիւնն։ Ինչպէս արուեստը՝ նոյնպէս մեթոտը կամ եղանակն որով կ'ուսանէին այն ուսումը կամ արուեստն՝ է մեզ անծանօթ։ Այս արուեստին առանձին յատկութիւններէն մին էր անսպառ ծննդականութիւնը, որով կը յաւելուին նոր նոր բառեր ի լեզուին։ Այս ծննդականութեան գաղտնիքն սկսած է նշմարուիլ։ Այսպիսի բեղմնաւոր լեզու անհնար էր որ չունենար իւր գանձարանն, ուր աւանդէր իւր հարստութիւնն յաջորդ սերնդոց. ուստի և անըմբռնելի կը թուի մեզ գտնել մեր հին լեզուն ամենևին առանց իրիք գրի և դպրութեան յառաջ քան զՄեսրոպեանն։ Յետ գիւտի գրոյն, երբ մատենագրութիւնը դիւրացաւ և ընդհանրացաւ՝ դադարեցաւ թարգմանչութիւնը, նովին և արուեստը և ծննդականութիւնը։

**18.** Սակայն Հայք յառաջագոյն իսկ քան զթարգմանիչս սովոր էին երթալ ինչպէս յԵդեսիա՝ նոյնպէս յԱթէնս, ի յոյն և յասորի դպրութիւն։ Փարպեցին գանգատելով կը յիշէ հայ պատանեկաց յաճախելն յԱսորիս յուսումն այն լեզուին, և ուրախ է որ Հայք գիւտիւ գրոյն ազատեցան ի տանջանաց ասորի լեզուոյն.—«Հոգացեալ յորժամ տրտմէր երանելի այրն Մաշթոց, տեսանելով զմեծաջան ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան» (Փարպ. Ժ.). և սակաւ մի յետոյ. «Ամենայն անձն փափաքէր յուսումն Հայերէն գիտութեան. որպէս ի խաւարէ՝ յասորի տանջանացն զերծեալք ի լոյս՝ խնդային» (Անդ)։ Իսկ զերթալն Հայոց յԱթէնս առ իւրով ժամանակաւ (այն է ի միջոցի Դ. դարուն) կը յիշէ Գրիգոր Աստուածաբան որ և Նազիանզացի ի ճառին զԲարսղէ (եթէ նորա է այն ճառ). «Յորժամ յԱթէնս էի, ասէ, ի մանկութեան՝ եկն անդր և Բարսեղ, ընդ որում կապեալ էի սիրով վասն բարուցն ազնուութեան և հանճարեղ մտացն, փոյթ յանձին կալեալ վաղվաղակի բարձրացուցանել զնա։ Էին անդ և ոմանք ի Հայոց յուսումն դպրու-

թեան, որք և կանխաւ ծանօթ էին Բարսղի ի տղայութենէ. որոց և տեսեալ զնա յառաջադէմ և սիրելի յաչս ամենեցուն՝ նախանձէին իմն, զի գչարէին թէ ինքեանք որ վաղագոյն մտեալ էին յուսումն փիլիսոփայութեան՝ թերևս խոնարհագոյն քան զԲարսեղ գտանիցին որ այն ինչ եկեալ էր, վասնորոյ և խստիւ վիճէին ընդ նմանա՝ ի միում նուագի մօտ ի յաղթահարել իսկ էին զնա և զընկերս նորա, մինչև ահ արկանել նոցա և ընկճել: Իմ տեսեալ զայս՝ զդէմ կալայ նոցա. նախ զերկոցունց կողմանց զպայքարն հաւասար երևեցուցեալ՝ անյայտ զյաղթութիւնն թողի. ապա միւս անգամ նորոգեալ զպայքարն՝ կացի ջատագով Բարսղի: Այսպէս զօրացեալ նորա ազգի ազգի հաւանութեամբք՝ յաղթէր մանկանցն այնոցիկ քաջայ. վասնորոյ սկսանէին նոքա ընդ ակամբ իմն հայել ի մեզ»: Վանական վարդապետ, մատենագիր ԺԳ. դարու, կը յիշէ Նազիանզացւոյն ճառը. «Օրէն էր, ասէ, ուսանել յԱթէնս լուռ կալով և ի հնազանդութեան. այլ զմերոցն ամբաստանէին, թէ սակաւ ուսանէին և խօսելով ընդ երկար ընդդիմանային: Զայս Աստուածաբանն հուշակեցոյց ի Բարսղի արձանականին»: Վանական, ըստ Չամչեանի, կը յաւելու պատմութիւն ինչ առասպելական, ինչպէս սովորութիւն է յետին մատենագրաց, թէ ինչ աղբերէ՝ չէ յայտ. «Նախանձ, ասէ, ի վաղուց հետէ կայր ի մէջ Յունաց և Հայոց, և յայտնի ի Բարսղի արձանականէն է. և պատճառ զայս իմացաք, զի սահմանակից է նոցա Հայոց աշխարհն և սրբութեամբ աւելի, և շատ ինչ յիշատակ քաջութեան գրով ունին և քան զայլ ազգս սեպհական լեզուաւ: Բիծս ինչ իմացեալ երբեմն հայ աշակերտաց ի վարս վարդապետին իւրեանց՝ յերեսսն հանին, և նա յառաջագոյն ետ նկարել զպատկերս նոցա, և ապա յարոյց զքաղաքն ի վերայ նոցա, և հանին (Յոյնք) զնոսա արտաքս: Նոքա երթեալ ի Միջագետս Ասորւոց՝ ուսան գիր և լեզու, յամեալք անդ մինչև ի գալ հաւասարել հերացն և մօրուաց, ապա ամենևին ասորի ձևացեալ՝ մտին անդրէն յԱթէնս. զոր իմացեալ հանին վերստին, օրէնս եդեալ, Հայի մի ումեք մտանել անդր: Եւ զի նախանձ և հեռ ուր մտանէ, քակէ՝ աւերեալ բարձաւ անդ ուսումն և արուեստ»: Եթէ չունենայինք ևս վկայութիւն արտաքուստ՝ թարգմանութիւնքն ի սկզբան գիւտի գրոյն ի յունէ և յասորւոյն այնպէս արագ և այնպէս ընտիր, նաև կազմութիւն իսկ լեզուին բաւական էին ինքնին ցուցնել, թէ ուսեալ մասն մի ազգէն, թերևս ի ժամանակէ անտի հեթանոսութեան, բայց մանաւանդ յետ քրիստոնէութեան՝ հմուտ էր աւելի քան զոր մեք կարծեմք՝ դրացի ազգաց լեզուներուն, յունին ևս առաւել: Չէ սակաւ զարմանալի ասելն Պլուտարքոսի զԱրտաւազ-

դայ առաջնոյ, թէ յօրինէր վէպս և երգս ի յոյն լեզու, թէպէտ չենք գիտեր, թէ մինչև ինչ աստիճան ստուգութիւն ունի այս պատմութիւն Պլուտարքոսի. ըստ մեզ չէ ամենևին անհաւանական։ Վկայեալ է Պարթև թագաւորաց հելլենասիրութիւնն և յունական կրթութիւնը. և մեր յայնժամու թագաւորք մանաւանդ չկարէին լինել խոնարհագոյն քան զՊարթևս։ Որպէս նոցայն՝ նոյնպէս և մեր արքայազուն իշխանք կը կրթուէին իբրև պատանդ առ Յոյնս և առ Հռոմայեցիս։

**19.** Հաւանական է թէ թարգմանիչք, զորս յիշեցաք յանուանէ ըստ վկայութեան Կորեան՝ ունէին և այլ գործակիցներ. բայց թէ սոքա էին առաջին աշակերտք, և յետ սոցա միւս ևս երկրորդ խումբ, իբրև երկրորդ թարգմանիչք, ղրկուեցան յԱղեքսանդրիա և յԱթէնս յուսումն արտաքին գիտութեանց՝ գիւտ է արդեաց։ Այս կարծեաց առիթ տուած է Խորենացւոյն պատմութեան ԿԱ. գլխոյն վերջին մասն, ուր հեղինակն յետ պատմելոյ, թէ Սահակ և Մեսրոպ «դարձեալ թարգմանեցին զմիանգամ թարգմանեալն փութանակի» ըստ ստուգագոյն օրինակաց բերելոց ի Կոստանդնուպոլսէ՝ կը յաւելու. «Բայց քանզի *անգէտք էին մերում արուեստի՝ ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր*. վասնորոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիա ի լեզու պանծալի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան»։ Յաջորդ գլխով (ԿԲ.) կը պատմուի այս առաքման ճանապարհորդութիւնը, որ և կ'ակնարկուի յՈղբսն որ յանուն Խորենացւոյն։ Ս. Գրոց թարգմանութեան կարծեցեալ թերակատարութիւնք, և առաքումն Խորենացւոյն (ընդ որում յետին մատենագիրք կը կցեն ուրիշ շատեր այլ ընդ այլոյ պատմութեամբք) յԱղեքսանդրիա յուսումն առ ի լնուլ այն թերակատարութիւնը՝ մեր գրագիտութեան պատմութեան մէջ առեղծուած է, զոր պիտի ջանանք լուծել ըստ կարի։

Կորեան պատմութենէն, ինչպէս տեսանք՝ իբր հինգ անձինք Մեսրոպայ աշակերտներէն, Յովսէփ, Յոհան, Եզնիկ, Կորիւն, Ղևոնդ, յորս կը յաւելու Խորենացին նաև Արձան ումն՝ ղրկուեցան յԵդեսիա և ի Կոստանդնուպոլիս ի թարգմանութիւն։ Յետինք ոմանք կը յարեն ի սոսա խառնիխուռն ուրիշներ յաշակերտաց Մեսրոպայ, ինչպէս Տիրայր, Մուշէ, Ենովք, Դանան, Գնիթ, այլովքն հանդերձ, որք յիշել կը յիշուին ի Կորենէ իբրև աշակերտ, բայց ոչ իբրև թարգմանիչ, այլ իբրև եպիսկոպոս կամ վերակացու կարգեալ յայլևայլ տեղիս ի գործ հոգևոր մշակութեան։ Այսչափ ևս բաւական չհամարելով՝ յետինք կը յաւելուն նաև զայլս իբրև աշակերտ

Մեսրոպայ և թարգմանիչ, թէպէտ սոքա չեն յիշուիր ո՛չ ի Կորենէ և ոչ ի Խորենացւոյն, այլ ոմանք են ծանօթ յազգին իբրև մատենագիր, ինչպէս Խորենացին, Եղիշէ, Մամբրէ, Դաւիթ Անյաղթ, Մանդակունին, Գիւտ, Ղազար Փարպեցի, և այլք ոմանք անծանօթք և՛ ժամանակաւ և՛ գործով, ինչպէս Սահակ ոմն, Յովհաննէս, Աբրահամ կամ Աբէլ, Անանիա, Յովնաթան, Եզրաս Անգեղացի, Ղազարիկ, Խաչիկ կամ Խաչատուր, Անդրէաս, Թաթուլ, Վարոս, և կը համարին զոսա զամենեսին իբրև թարգմանիչս ղրկուած ի Սահակայ և ի Մեսրոպայ, և յետ բազում ամաց դարձած ի Հայրենիս:

Զամչեան իւր պատմութեան առաջին հատորին մէջ խօսելով թարգմանչաց աշակերտներուն վրայ՝ կը բերէ յետին մատենագրաց, ինչպէս Յայսմաւուրաց, Շնորհալւոյն, Ասողկայ, Սամուէլի, Կիրակոսի, Ստեփաննոսի Ուռպելեանց, Վարդանայ, Թովմայի Մեծոբեցւոյ, Զահկեցւոյն և ուրիշ յետին մատենագրաց հակասական պատմութիւնները, զորս կը գտնենք հոս. «Էին երևելիք և գլխաւորք յաշակերտաց նոցա (Սահակայ և Մեսրոպայ) այսոքիկ. Սուրբն Յովսէփ և սուրբն Ղևոնդ երէց որ ի Պարսս վկայեցին, սուրբն Եղիշէ վարդապետն, և Մովսէս Խորենացի, և եղբայրն Մովսէսի Մամբրէ Վերծանող, և Եզնակ Կողբացին, և Ստեփաննոս Ասողիկ, Խոսրով և Ղազար պատմագիր, Արձան և Կորիւն և Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ, ընդ որս և այլք բազումք» (Յայսմ. սեպտ. 17). և այլուր (նոյ. 25). Սուրբն Սահակ և Մեսրոպ «առաքեցին մանկունս յԱթէնս ի մայրն իմաստութեան, զՄովսէս Խորենացին, որ ասի թէ քուերորդի էր Մեսրոպայ, և զԴաւիթ Ներքինացի, որ եղև անյաղթ փիլիսոփայ, զԵզնակ Կողբացին և զՄամբրէ Վերծանող, զՂազար Փարպեցին, և զՍտեփաննոս Ասողնիկն պատմագիր, և զայլ աշակերտսն»: Դարձեալ (փետր. 19). «Եւ յետ փոխման սրբոյն (Մեսրոպայ և Սահակայ) եկին աշակերտքն նոցա յԱթենայ՝ ճոխացեալ և փարթամացեալ ուսմամբ. Մովսէս քերթողն և Դաւիթ անյաղթ փիլիսոփայն, Մամբրէ Վերծանողն, Եղիշէ պատմագիրն, Ղազար Փարպեցի և Եզնակ և (Ստեփաննոս) Ասողիկ, և այլ ոմանք»: «Մանկունս ուշիմըս ժողովեալ—նոր դըպրութեամբ այնու վարժեալ—որք թարգմանիչ հոգւովն եղեալ—ըստ Պըտղոմեայ ի նոյն շարժեալ—յԱթենացւոց քաղաքն երթեալ—զիմաստութեան ծաղիկս առեալ—որպէս մեղու թեւօք բարձեալ—յեկեղեցիս Հայոց բերեալ—այս է Մովսէս Դաւթիւ եղեալ—և Մամբրէիւ այլք հետևեալ» (Շնորհ. Վիպաս.): Հեղինակն յառաջաբանի Բարձրացուցէքին, ոչ միայն Դաւթի Անյաղթի հետ ղրկուած կը գտնէ յԱղեքսանդրիա և յԱթէնս «զՄամբրէ եղբայրն Մով-

սէսի, զՄուշէ, զԵղիշէ, զԵզնակ, զԱրձան Արծրունի և զԱղան՝ այլև զդարձ նոցա կը դնէ կաթողիկոսութեան բաժանման ժամանակ, երբ 600-ին, այսինքն 160 ամօք յետոյ քան զմահն Սահակայ և Մեսրոպայ.—«Դաւիթ փիլիսոփայ ասացեալ, ի Հարք գաւառէ ի Հերեթն գեղջէ, աշակերտ Սահակայ և Մեսրոպայ, զոր ասեն քուերորդի Մովսէսի քերթողահօրն, ի վաթսնիցն որք ընտրեցան ուշեղք և փափկաձայն և երկարոգիք, և ամենայն առաքինութեամբ զարդարեալք. որք յետ Հարիւր մետասան ամի սրբոյն Գրիգորի ի գտանել գրոյ ազգիս ընտրեցան, և չոքան յազգս ուսանել իմաստասիրութիւն և արուեստախօսութիւն և առնել թարգմանութիւն, յԱղեքսանդրիա և յԱթէնս և յայլ գաւառս: Եւ որք ընդ նմա գնացին՝ Մամբրէ եղբայրն Մովսէսի, Մուշէ և Եղիշէ, Եզնակ և Արձան Արծրունի և Աղան: Եւ ի դառնալն, զի բազում ժամանակք էին անցեալ, և յոլով անցք անցեալ ընդ երկիրս, ընկենուլ զսուրբն Սահակ յաթոռոյն, և սպանանել Արտաշրի ի Սուրմակ քահանայէն ի սադրելոյ, և Ասորւոց առաջնորդ կացուցանելն, և յետ քսան և ութ ամի գիւտի գրոյն կոտորումն սրբոց Վարդանանց, և բաժանումն Հայրապետութեանն յերկուս, Յովհան Մանդակունի ի Պարսից կողման կաթողիկոս, և Գիւտ ի կողմանս Յունաց, յաշակերտաց սրբոց քահանայիցն»: Ասողիկ կը դնէ այս դարձն առ Մանդակունւով, երբ 40 տարի յետոյ քան զմահն Սահակայ.—«Յայսմ ժամանակի (առ Մանդակունւով) Մամբրէ եղբայր Մովսէսի, զորմէ ասեն երրորդ դնեալ ի փիլիսոփայս՝ դառնայր ի Հայս»: Սամուէլ Երէց կը դնէ առ Ներսիսիւ Աշտարակեցւով, այսինքն երբ 90 ամօք յետոյ քան զմահն Սահակայ.—«Մամբրէ եղբայր Մովսէսի դառնայր ի Հայս, զորմէ ասեն երրորդ գրել փիլիսոփոս»: Նոյնպէս Կիրակոս, առնլով ի Սամուէլէ:

Նոյնչափ հակասական են տեղեկութիւնք յետնոց առանձինն զԽորենացւոյն, զԴաւթէ Անյաղթէ և զայլոց: Մաշտոցի կարգադրութեան հին յիշատակարանաց մէջ, ըստ Զամչեանի, կը յիշուի երբև քարտուղար Սահակայ Պարթևի Մովսէս ոմն թարգմանիչ, որ որպէս թէ հրամանաւ Սահակայ և Մեսրոպայ կարգաւորեց Մաշտոցը «յերրորդ ամի թարգմանութեան սրբոյն Մեսրոպայ (այսինքն գիւտի գրոյն), և ի ԻԱ. ամի հայրապետութեան սրբոյն Սահակայ, յետ ԾԺԱ. ամի լուսաւորութեան սրբոյն Գրիգորի, այն է դարձին Հայոց»: Զամչեան հաշուելով այս երեք թուականներն՝ կը գտնէ Մաշտոցին կարգաւորութիւնը կատարուած ըստ յիշատակարանին՝ յամին 410 կամ 411, ուստի յիշատակարանին Մովսէսը չգտներ նոյն ընդ Մովսէսի Խորենացւոյ, զոր այն թուականին (410 կամ 411) կը հա-

մարի այն ինչ ծնեալ։ Զամչեան պարտէր մանաւանդ մերժել յիշատակարանին տեղեկութիւնն քերև ոչ պատմական, քանզի Մաշտոց կոչուած ծիսարանին գոյութիւնը բազմօք յետոյ է քան զՍահակ և զՄեսրոպ, առ որովք Հայաստանեայց եկեղեցին կը վարուէր դեռ յոյն լեզուաւ և ծիսիւ։

Զամչեան յիշելով ուրիշ վկայութիւն, այն է Գրիգոր անուն սարկաւագապետի ուրուք որպէս թէ վեցերորդ դարու մէջ յԵրուսաղէմ խօսած ճառն, ուր Մովսէս Խորենացի կոչուած է քարտուղար ոչ Սահակայ Պարթևի, այլ Սահակայ Բագրատունւոյ՝ զայն ևս կը համարի անվաւեր։ Ըստ մեզ՝ նոյն իսկ ճառն համարելի է անվաւեր, յետին դարուց խաբեբայի ուրուք գործ, և ոչ վեցերորդ դարու Գրիգոր անուն սարկաւագապետի, եթէ երբէք եղած է այնպիսի անձն վեցերորդ դարու մէջ։ Ըստ Ստեփանոսի Ուռպելեանց (մատենագիր ԺԳ. դարու), «Մովսէս քերթող (Խորենացին) էր դատաւոր հայրապետանոցին» Քաղկեդոնի ժողովին ժամանակ։ Զամչեան կը մերժէ և զայս, և է արդարև մերժելի։ Ըստ Յայսմաւուրաց (փետր. 19), ի շինութեան Թէոդուպոլսի (Կարնոյ) «էր վերակացու գործաւորացն և խրատտու շինուածոյն Մովսէս Խորենացի, քեռորդի Մեսրոպայ վարդապետի»։ Զայս կը յիշէ և Յակոբ Նալեան, համարելով գործակից Մովսիսի և զԴաւիթ Անյաղթ։ Զամչեան իբրև «ամենևին անհիմն» կը մերժէ այս ամէնը։ ԵՒս աւելի այլանդակ են տեղեկութիւնք յետնոց Դաւթի Անյաղթի վրայ։ Թող վերագոյն յիշուած կոչումներն Յայսմաւուրաց և այլոց, որ զԴաւիթ կը համարին յաշակերտաց Սահակայ և Մեսրոպայ՝ Առիստակէս գրիչ, մատենագիր ԺԳ. դարու, կը համարի զԴաւիթ «մին ի վաթսնից որք ընտրեցան առաքիլ յԱթէնս», որպէս թէ յԱղեքսանդրիա և յԱթէնս ղրկուած աշակերտք ի Սահակայ և ի Մեսրոպայ՝ էին վաթսուն թուով։ Զամչեան կը բերէ նաև Շնորհալւոյն վկայութիւնը, որ որպէս թէ հին օրինակներու կամ յիշատակարաններու մէջ գտած էր «զԴաւիթ աշակերտեալ մեծին Մովսիսի քերթողի աստուածեղէն Գրոց, ի Հարք գաւառէ ի Հերեթն կամ Հերեան կամ Ներգեն գեղջէ, որդի առն բարեպաշտի և սիրողի Աստուծոյ, մի յայնցանէ որ ընտրեցան յաշակերտութիւն հելլենական դպրութեան ի ժամանակս Վահանայ... և ի հայրապետութեան տեառն Գիւտայ և զկնի՝ Յովհաննու Մանդակունւոյ»։ Ձևս այլանդակն ունի Ջահկեցին, որ յետ դնելոյ զԴաւիթ աշակերտ Մովսիսի քերթողի՝ կը յաւելու թէ «աշակերտ Դաւթի եղև Եզնակ Կողբացի, և Եզնակայ աշակերտ եղև Մամբրէ, և Մամբրէի աշակերտ եղև Ղազար Փարպեցի»։

**20.** Որովհետեւ Բարձրացուցէք-ին հեղինակ համարուած է Դաւիթ Անյաղթ՝ այս ճառին յօրինման վրայ ևս հնարուած են ի յետնոց ոչ սակաւ անհեդեդ պատմութիւններ, զորս յիշելով Շնորհալին՝ ստուգագոյն կը համարի զայն, թէ Դաւիթ գրեց այն ճառն ի խնդրոյ Գիւտայ կաթողիկոսի։ Ահա բանք Շնորհալւոյն. «Աւանդի, թէ սուրբն Սահակ և Մեսրոպ առաքեն յաշակերտաց անտի ի կողմանս Յունաց յուսումն իմաստութեան ի մայրաքաղաքն յԱթէնս. որք ուսեալք և տեղեկացեալք՝ թարգմանիչ եղեն հելլենական լեզուին. զի պարտ էր նախ հմտանալ յամենայն իմաստասիրականս բանից և ոլորակաց, և ապա համարձակել ի թարգմանութիւն։ Զոր ասացին ոմանք, եթէ օրէն էր աթենացւոցն որ վարդապետք էին իմաստութեան՝ հոգ տանելով աշակերտացն զեօթն ամ. և յորժամ կատարեալ լինէր սահման կլոլին եդելոյ՝ էր նշանաւոր ինչ տեղի կազմեալ, և որ վարդապետն էր՝ հրամայէր ելանել աշակերտին ի բարձր դիտանոցն և խօսել բանս հաճոյականս ըստ ժամանակին և ըստ պիտոյից լսողացն։ Որով և նոյն ինքն երանելին Դաւիթ, մի յայնցանէ աշակերտացն հասեալ յաստիճան՝ ել եկաց ի վերայ աշտարակին առաջի սրբոյ նշանին. զի յայն վայր կործանեալ կռոցն պատկեր՝ պատուականութիւն Խաչին յառաջանայր ի մէջ Աթենացւոցն. ասեն թէ անդ ասաց (զճառն Բարձրացուցէք) յուրախութիւն լսողացն և ի պատիւ Խաչին։ Իսկ այլք ասեն, եթէ ի դառնալն յԱթենայ ի քաղաքն Կոստանդնուպոլիս՝ ըստ օրինաց յունականացն ընկերակիցք նորա մեծարեցին զնա յաւուր տօնի Խաչվերացին, ի պատուասիրութիւն տօնախմբութեանն է ասացեալ։ Եւ այլք՝ թէ յԵրուսաղէմ առաջի փրկական Խաչին։ Եւ ոմանք՝ յետ դարձին ի Պարսից։ Եւ կէսք՝ ի տեղի ինչ անապատի գրեալ։ Բայց զի՞նչ այսպիսի ի ծուփ և ի խնդիր ծախել զժամանակ վարդապետութեան ստայօդ պատմութեան»։ Ապա կը հաստատէ Շնորհալին, թէ «գտի ի հին օրինակս, զի հրամանաւ հայրապետին արարեալ է զայս»։ Կը յաւելու ևս, թէ ի սկզբան այն օրինակին կար այսպիսի ինչ ի բերանոյ Դաւթի ասացեալ. «Զառ ի յԱստուածուստ պատուեալ սրբոյ քահանայապետիդ ի մեծանձնութենէ ընկալաք զհրաման», այլովքն հանդերձ։ Դաւթի Անյաղթի գործերուն սկիզբը (Տպագր. Վենետ. 1833) կայ հատուածն այն յիշեալ ի Շնորհալւոյն, թէպէտ տարբեր բանիւք, իբրև պատասխանի թղթոյն Գիւտայ առ Դաւիթ. —«Զառ ի յԱստուածուստ պատուեալ զերիցս երջանկի, զմեծի հայրապետի և զաթոռակալի սրբոյն Գրիգորի, Հայոց մեծաց վերադիտողի զաստուածահրաման խնդիր հարկապահանջութեան եկեղեցական գործառնութեան՝ զոր հրամայեցեր մերում կրտսերութեան»,

այլովքն հանդերձ։ Յայտնի է, թէ օրինակ Շնորհալւոյն էր տարբեր։ Թէպէտ Շնորհալին չլինէր զանուն հայրապետին, որոյ հրամանաւ ասի գրուած Բարձրացուցէքն՝ ըստ Կիրակոսի այն հայրապետն էր Գիւտ, զորոյ և նամակն կու տայ Վենետեան տպագրութիւնն գործոց Անյաղթի։ Բարձրացուցէք-ի յառաջաբանին վերջը կայ հատուած, ուր կը պատմուի, թէ ուստի շարժեալ Գիւտ խընդրեց ի Դաւթայ գրել այն ճառը, և պատմութիւնն է այս.—Գիւտայ կաթողիկոսութեան ժամանակ Անտիոքայ կողմէն կու գան ի Հայս երեք արք, որ կը քարոզեն, թէ Մարիամ չէ Աստուածածին, և Խաչն ոչ թէ նշան է փրկարար, այլ գործի պատժելոյ զաւազակս։ Այս միջոցին Դաւիթ և ընկերք նորա կը դառնան ի Հայս, և Գիւտ կ՚առաջարկէ Դաւթի գրել այն ճառն յիշեալ հերետիկոսաց դէմ.— «Յաւուրս վերադիտողութեան Հայոց տեառն Գիւտայ եկին արք ոմանք ի նահանգէն Անտիոքայ ի գեղջէն որ կոչի Աւշին, որոց անուանքն Կոստանդին և Պետրոս և Թէոդորէ, խորագնագգեացք, բոկագնացք, պահողք և կեղծաւորք. որք ասէին ոչ գոլ զՄարիամ Աստուածածին, և ոչ զԽաչն Աստուծոյ Խաչ, այլ գողոց պատժարան։ Իբրև լուաւ Գիւտ զգալն Դաւթի և զընկերացն՝ բերկրեցաւ և մխիթարեցաւ յոգի, և գրեաց առ Դաւիթ նամակ»։ Դաւթի գործերուն Վենետեան տպագրութեան մէջ ի ստորև Դաւթի նամակին առ Գիւտ կայ նաև այսպիսի ինչ յաւելուած. «Եւ եղև այս ի ժամանակս մարզպանութեան և սպարապետութեան Վահանայ, որդւոյ Մագնեսի, որդւոյ Վարդանայ, կամ որպէս ասեն՝ եղբօր, փորձոցք և գիտողք։ Սուտ ասեն զայլ պատճառսն՝ յԱթէնս կամ ի Բիւզանդիա կամ յԵրուսաղէմ կամ յորժամ ի Պարսից դարձաւ Խաչն՝ և խօսեցաւ. իսկ այս առանց կարծեաց է»։ Կայ սակայն անանուն գրուած մը, ուր կը պատմուի, թէ Դաւիթ այն ճառը խօսեցաւ ի Կոստանդնուպոլիս։ Այս անանուն գրուածն, ոչ անծանօթ Շնորհալւոյն, և որմէ նաև հեղինակն Պատմութեան հայերէն դպրութեանց կ՚առնու ինչ ինչ իբրև վաւերական՝ յետ յօդելոյ անհամ առասպելներ գրոյն գիւտին, Ս. Գրոց թարգմանութեան, Մովսէսի Խորենացւոյ, Դաւթի Անյաղթի և այլոց վրայ՝ կը յարէ Խաչի ճառին յօրինման պատմութիւնը։ Թէպէտ այսպիսի առասպելեալ պատմութիւններ յիշել անգամ չարժեր, սակայն ցուցնելու համար մեր դպրութեան յետին դարուց գրուածներուն անճահութիւնը՝ քաղենք հոս յիշեալ տետրակին պատմութիւնն համառօտիւ։ «Յայսմ ժամանակի (այսինքն յաւուրս ժողովոյն Եփեսոսի) եղև խնդիր պակասութեան գրոյն Հայոց, զոր ունէին ԻԹ. գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ, աշակերտ սրբոյն Գրիգորի։ Իսկ սուրբն Սահակ և Մեսրոպ

բազում աշխատութեամբ պէտս արարին ի լերինս տքնեալ զԽ․ տիւ և զԽ․ գիշեր։ Եւ լուաւ Տէր աղօթից նոցա, և ի տեսլեան գիշերոյն Հրեշտակ Տեառն էջ յերկնից առ նոսա, և որպէս ի տուընջեան խօսէր ընդ նոսա, և յաժմն ինչ խեցեղէն մատամբ նկարեալ տայր նոցա գիրս Ն։․․․ Եւ եղև օրն այն մեծ և երևելի ի մէջ ազգին Հայոց։ Եւ լուեալ թագաւորն Թէոդոս յոյժ ուրախանայր, և առաքէր առ սուրբն Սահակ և Մեսրոպ թուղթս վասն թարգմանութեան գրենեացն, զի շուտով արասցեն զթարգմանութիւնն, մինչ ես ի մարմնի իցեմ, զի մի արխոսականքն խառնեսցեն և պղտորեսցեն զբանս աստուածաշունչ Գրոց։ Եւ հրամայեաց թագաւորն Եւթաղեայ ցանկօք փակել տուն առ տուն և վկայութիւն առ վկայութիւն, զի մի ապականեսցեն հերձուածողքն զԳրոց պատուիրանսն։ Եւ հասեալ թուղթն առ սուրբն Սահակ և Մեսրոպ, և խնդիր արարին մանկանցն, և ընտրեցին աշակերտս Խ․ մտաւոր և սրագլուխս ի լեզուս Հրեղէնս ներկեալ ի շնորհաց Հոգւոյն սրբոյ, և եղեն արք երևելիք։ Եւ յետ աւուրց բազմաց առաքեցին արս Ե․ Սահակ և Մեսրոպ առ թագաւորն Թէոդոս, զի թարգմանեսցեն զգրեանսն։ Դաւիթ Անյաղթ, կոչեցեալն փիլիսոփայ, և Մովսէս քերթողահայրն, իմաստասէրն Մամբրէ, և հռետորն Աբրահամ, և սոցին նմանակիցն Պօղոս — առաքեցան ի կայսերական պալատն։ Եւ թագաւորն Թէոդոս յոյժ ուրախ եղև, և փառաւորութեամբ ընկալաւ զնոսա, և զԴաւիթ և զՄովսէս դատաւորս կացոյց ի տանն հայրապետանոցին. և ի թարգմանութեան ոչ դադարէին. կամեցան հրամանաւ թագաւորին երթալ ի փիլիսոփայական քաղաքն յԱթէնք։ Իսկ թագաւորն խորհուրդ ի մէջ առեալ կամեցաւ շինել քաղաքս երկուս, և զնոսա կացուցանել վերակացու շինուածոյ քաղաքին, զի տեսանէր զնոսա յոյժ իմաստունս և հանճարեղս. և առաքեաց զնոսա ի Հայս շինել զԿարնոյ քաղաք։․․․ Իսկ Մովսէս և Դաւիթ, որպէս զարս քաջս՝ անդադար սկիզբն արարին շինել զքաղաքն Կարնոյ։․․․ Եւ պարապեալ յամենայն գործոց քաղաքին՝ խաղացին գնացին յաշխարհն Յունաց առ թագաւորն Թէոդոս, և լուեալ վասն քաղաքին՝ առաւել քան զառաջինն մեծարէր զնոսա, և հրամանաւ արքունի առաքեաց զնոսա յԱթէնս, և մեծաւ շքեղութեամբ խաղացին գնացին ի փիլիսոփայական քաղաքն Դաւիթ և Մովսէս, Մամբրէ և Պօղոս և Աբրահամ։ Եւ մտեալ յիմաստասիրական քաղաքն Դաւիթն, և տուեալ զթագաւորական մատանին ցվարդապետն իմաստասիրաց, և առեալ ի նոցանէ յոյժ ուրախացան, զի ի վաղուց հետէ սպասէին նոցա գալստեանն, զի համբաւ բազում ելեալ էր վասն նոցա յԱթէնս։․․․ Եւ յետ աւուրց բազմաց գային ի Կապա-

դովկացւոց աշխարհէն վարդապետք Յունաց Գրիգոր, որ կոչեցաւ Աստուածաբան, և Գրիգոր Նիւսացի և Բարսեղ Կեսարացի։ Իբրև կատարեցան ամք ուսման Դաւթի և Մովսէսի, Մամբրէի Վերծանողի և Պօղոսի և Աբրահամու ամք Է՝ բերէին զնոսա. և էր ի մէջ քաղաքին սիւն մի մեծ և բարձր յոյժ պղնձի, և էր գրեալ թագաւորական բան եօթն թագաւորի։... Եւ ելեալ Դաւիթ ի վերին աստիճանն... և սկսաւ ծագել զլոյս վարդապետութեանն իւրոյ, և բան առ բան զծածկեալ բան թագաւորացն մեկնէր. և ամենեցուն հիացեալ զարհուրեցան, և բերեալ ասպար ոսկի զարդարեալ ակամբք և մարգարտօք, և Դաւիթ եդեալ ի վերայ ասպարին, և ընկերք ուսման իւրոյ բարձեալ ի վերայ ուսոց և գլխոց, ձայնեալ ի վերայ նորա անուն *անյաղթ*, որով կոչեցաւ Անյաղթ փիլիսոփայ, և զօրն ամենայն ածին ընդ քաղաքն ի շուրջ ձայնիւ ցնծութեան, սրնգովք և փողովք. և Աստուածաբանն և Նիւսացին հաւանեալ ուսման Դաւթի՝ կացուցին զնա վարդապետ ամենայն Աթենացւոց»։ (Հոս ի հարևանցի կը յիշենք, թէ Գրիգոր Աստուածաբան, Նիւսացին և Բարսեղ էին ի սկզբան Դ. դարու, իբրև հարիւր ամօք յառաջ քան զՍահակ և Մեսրոպ)։ Առասպելաբան հեղինակ տեղական յետ այլընդայլոյ բանիւք խօսելոյ զժողովոյն Քաղկեդոնի և զՄարկիանոս կայսերէ՝ յառաջ կը տանի Դաւթի և Մովսէսի առասպելն այսպէս. «Յետ այսր անցից ժամանակացս և ահագին կոտորածին լուեալ զդառն համբաւ կսկծաղետիցս Դաւիթ և Մովսէս և ոչ հանդուրժեալ՝ կամեցան ելանել յաշխարհն Հայոց, և եկեալ ի Կոստանդնուպօլիս՝ լուան վասն մահուան վարդապետացն Հայոց Սահակայ և Մեսրոպայ։... Եւ լուեալ իմաստասէրք քաղաքին պատմեցին թագաւորին Մարկիանոսի, եթէ Արք երևելիք և փառաւորք ի Հայոց իջին յԱթէնք ի վաղուց հետէ, և այժմ առաքեցան առ մեզ։ Եւ լուեալ թագաւորն ուրախ եղև վասն գալստեանն նոցա, և ասէ ցնոսա. Ընդէր ոչ եկիք ի ժողովն մեր (Քաղկեդոնի)։ Եւ նոքա ասեն. Ի բազում չփոթմանէ մոռացաք. և մեղադիր եղեն թագաւորին, եթէ Ընդէր եղև ժողովն այն առանց մերոյ գալստեան և կոչման։ Եւ Յոբնաղ եպիսկոպոս պալատին ասէր. Վասն զի զձեզ ոչ գիտէաք կենդանիս, այլ մեռեալս։ Մովսէս ասէ. Վասն մեր չկոչելոյս չէ այդ պատճառն, այլ զի կամեցայք ապականել զկանոն սրբոց հարցն։ Եւ ասէ թագաւորն. Ստո՞յգ ապականեցան կանոնք հայրապետացն։ Եւ ասէ Մովսէս. Այո՛, ստոյգ։ Եւ դարձաւ Մովսէս ի Յոբնաղ, և այլայլեցաւ գոյն երեսաց նորա ընդդէմ նորա, և ասէ, Ո՛վ Յոբնաղ, ճանաչե՞ս զիս, զի ես եմ Մովսէս, և սա՝ Դաւիթ, բազմահմուտ գիտութեամբ ԺԲ. ազգաց, և պարծանք Աթենացւոց, և առաւել Հայոց աշխարհին։...

Եւ ասէ թագաւորն. Պատրաստեսցին Մովսէս և Դաւիթ խօսել ընդ վարդապետացն մերոց, և այն բաւական է մեզ։ Ասէ Մովսէս. Յամենայնի պատրաստ եմք ամենայն արուեստից։ Եւ առ վաղւն եկին առ թագաւորն. եկին և իմաստասէրք պալատին։ Եւ հարկեցին զՅոբնաղ խօսել ընդ Մովսէսի քերթողահօրն։ Հիացաւ թագաւորն Մարկիանոս և ամենայն իմաստասիրական ժողովն, զի տեսին զնոսա (զՄովսէս և զԴաւիթ) անպարտելի և անսասանելի։ Մովսէս և Դաւիթ կարկեցին զնոցա զաներասանակ լեզուսն. որք ափ ի բերան եղեալ՝ առաջի ոչինչ կարացին խօսել։ Իսկ նոցա երկիր պագեալ երեսաց թագաւորին յանդիման մեծ աթոռոյն, և թագաւորն բարեբանեալ զնոսա մեծաւ գովութեամբ՝ ասէ. Մեծ ես, ո՛վ Մովսէս, և երանի՛ աշխարհին Հայոց ի տեսանել զսուրբ կերպարանս ալեաց քոց։ Աւետիս մատուցանէ արեւմուտք արեւելեան աշխարհին, կարօտիւ ողջունեն զձեզ եկեղեցիք սրբոց։ Թագաւորն հրամայեաց ի բաց գնալ ժողովոյն և շնորհակալ լինէր Դաւթի և Մովսիսի, որ սկսան ի թարգմանութիւնս գրոց անդադար, ոչինչ համարելով զտկարութիւն, այլև ի բաց եդեալ զծերութիւնն։ Թագաւորն յաւուրս տօնի սրբոյ Խաչին հարկեալ զմեծ փիլիսոփոսն Դաւիթ խօսել զբանս շնորհաց ի պատիւ սրբոյ Խաչին. և Մովսէս մեծարէր զԴաւիթ, զի խօսեսցի բանս ինչ։ Եւ Դաւիթ կամեցաւ կատարել զհրամանս թագաւորին. ելեալ ի վերայ բարձր ամբիոնին, յանդիման երեսաց սրբոյ սեղանոյն, և քահանայքն բարձեալ զնշանն տէրունական։ Եւ Դաւիթ համբարձեալ զձեռս իւր խաչանման, կնքեալ նշանաւ Խաչին՝ ասէր այսպէս. «Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր, մարգարէն ձայնէ, երկրպագեցէք պատուանդանի սրբոյ ոտից նորա, և ես զնոյն ձայնեմ ընդ հոգւոյն», և որ ի կարգին։ Եւ հրաշաբան շարակարգեաց զգովասանութիւն սրբոյ Խաչին, և երկրպագեալ թագաւորին և ամենայն ժողովոյն՝ էջ յամբիոնէն. և առհասարակ ժողովն գովէին և բարեբանէին զԴաւիթ և ձայնէին Անյաղթ փիլիսոփայ» (Հնոց և Նորոց. Պատմութիւն վասն Դաւթի և Մովսիսի Խորենացւոյ. Հրատարակեց Գարեգ. Վ. Սրուանձտ. Կոստ. 1874)։

Խորենացւոյն և Դաւթի Անյաղթի անձին և գրուածոց վրայ պիտի խօսինք յետոյ. հոս բաւական է այսչափ միայն ասել, թէ ինչ որ բերինք անանուն տետրակէն այս երկու անձանց վրայ՝ է զուտ առասպել, իսկ Բարձրացուցէքն ոչ թէ գործ է Անյաղթ փիլիսոփայի՝ այլ յետին գործ տգէտ իմաստակի անհեթեթ ոճով և լեզուաւ։

Իսկ զՍտեփաննոսէ Սիւնեցւոյ, զոր Յայսմաւուրք, ինչպէս տե-

սանք վերագոյնն, կը յիշեն իբրև աշակերտ Սահակայ և Մեսրոպայ Կիրակոս կը գրէ այսպէս. «Արձան, Խոսրով, Ղազար և Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս, որ եթող բազում մեկնութիւնս Ս. Գրոց, Յոբայ և Աւետարանաց, այլև Դանիէլի և Եզեկիէլի, և պատասխանիս թղթոյն Գերմանոսի պատրիարքին Կոստանդնուպոլսոյ»: Թովմաս Մեծոփեցի կը շփոթէ զսա ընդ Ստեփանոսի Ասողկայ և կը դասէ ընդ թարգմանիչս: «Փոքր մի սոյին նման, ասէ Զամչեան, գրէ Ջահկեցին ի Գլ. Բ. էջ 624 և 625, ուր ընդ աշակերտսն թուելով զայս Ստեփանոս՝ յաւելու ասել, թէ էր նա աշակերտ Մովսէսի քերթողահօր, և զամենայն շարականս զորս արարեալ է Խորենացին՝ սմա տայ, և այլուր այլոց, և զգրութիւն թղթոյն առ Գերմանոս սորա համարի»: Զամչեան տեսնելով շփոթութիւն ի պատմութեան սոցա՝ կը դնէ երկու Ստեփանոս Սիւնեցի, զմին աշակերտ թարգմանչաց, և զմիւսն յաւուրս Յովհաննու Իմաստասիրի, և կը յաւելու. «Յայսմաւուրքն և Կիրակոս և այլք ոմանք յետինք խառնեալ զսոսա ընդ միմեանս՝ զգործս երկրորդին տան առաջնոյն, և զգործս առաջնոյն տան երկրորդին: Եւ զի Ստեփանոս պատմաբանն երևելի եղև, որ և մականուամբ Ասողիկ կամ Ասողնիկ կոչեցաւ՝ զայս մականուն նորա տան առաջնոյն և կոչեն Ասողնիկ, որ է յայտնի սխալ»: Յետին դարուց ոգէտ պատմիչներէ ինչ աւելի կրնար սպասուիլ՝ եթէ ոչ սխալ: Ստեփանոս Սիւնեցի, իբրև արդարև պատմական անձն՝ է այն որ ծաղկեցաւ ի վերջ կոյս Է. դարուն կամ ի սկզբան Ը-ին, և ունի այլևայլ թարգմանութիւններ և գրուածներ Սիւնեաց գպրոցին ոճով:

Որովհետև, ինչպէս տեսանք, յետին մատենագիրք մեկնելով այլընդայլոյ զբանս ինչ Խորենացւոյն, կը դնեն խառնիխուռն իբր վաթսուն աշակերտ ղրկուած ի Սահակայ և ի Մեսրոպայ յԱղեքսանդրիա և յԱթէնս, յօդելով զնոցանէ այլևայլ անտեղի պատմութիւններ, մինչ Կորիւն ժամանակակից կը պատմէ ղրկուած հինգ աշակերտ միայն—Յովսէփ, Յոհան, Եզնիկ, Կորիւն, Ղևոնդ, նախ ոմանք յԵդեսիա, ապա ամենեքին ի Կոստանդնուպոլիս իսկ և իսկ յետ գիւտի նշանագրաց, և Խորենացին յետ թարգմանութեան Գըրոյն ասէ զանձնէ առաքեալ յԱղեքսանդրիա՝—Զամչեան այս երկու պատմչաց և յետնոց պատմութիւններուն մէջ չգտնելով համաձայնութիւն՝ կը ջանայ միաբանել զնոսա այլևայլ ենթադրութիւններով. նախ (Հտ. Ա. էջ. 775)՝ ասէ. «Յայսոսիկ բանս Խորենացւոյն հայեցեալ, միանգամայն և ի բանս Շնորհալւոյն և այլոց՝ ուղիղ թուեցաւ մեզ ասել, թէ ոմանք յաշակերտաց ուսեալ իցեն յԱղեքսանդրիա, և ոմանք յԱթէնս. իսկ եթէ վասն ամենեցուն ասացեալ

իցէ այս յոմանց, այսինքն թէ ամենեքին յԱթէնս ուսան՝ կրկնակի մարթ է իմանալ, մի՝ զի ամենեքին ի վերջոյ յԱթենայ դարձան ի Հայս, որպէս գրէ և Խորենացին. և միւս ևս՝ զի որովհետև ամենեքին վարժեալ էին յուսումն Հելլենացւոց՝ վասն այն ի դէպ եղև ասել զնոցանէ՝ մարզեալ յուսումն աթենական: Այլ թէ յիրաւի գոյր յազգս Հայոց յառաջն կամ յետոյ առաքել մանկունս ի քաղաքն Աթենացւոց՝ յայտ է նաև ի բանից Գրիգորի Աստուածաբանի»: Հոս կը բերէ Զամչեան Գրիգորի Աստուածաբանի ճառը և զպատմութիւն Վանականին, զորս յիշեցաք վերագոյնն: Ի վախճանի (էջ 784) կը թուի բոլորովին երկբայել յետնոց պատմութիւններուն վրայ.— «Այլ յաղագս վաթսնից, որք յիշին ի գիրս գրչութեան Արիստակեայ և այլոց ոմանց՝ ասի թէ նոքա յաւուրս Գիւտոյ և Յովհաննու Մանդակունւոյ ընտրեալ եղեն և առաքեալ յԱթէնս. այլ թէ որով օրինակաւ լեալ իցէ այս՝ չունիմք ինչ ստուգիւ ասել. վասն զի յոչինչ մատենագիրս մեր յայտնի պատմութեամբ գտաք զայս, և տարակուսիմք իսկ. զի յայնմ ժամանակի վրդովեալ էր Յունաստան յերեսաց Ատտիղայ, և մանաւանդ գաւառն Ատտիկէ, յորում էր քաղաքն Աթէն: Մարթ է ասել, թէ զուցէ յայլ կողմանս և կամ ի Կոստանդնուպոլիս առաքեցան յուսումն հելլենական դպրութեան, զոր և մասամբ իւիք յիշէ Շնորհալին ի նախակարգեալ բանսն»: Չկրնալով սակայն իբրև բոլորովին անհեդեդ մերժել յետնոց պատմութիւններն՝ կը դնէ ըստ քմաց բաժանումն իմն ի մէջ աշակերտաց Թարգմանչաց այսպէս. «Զկարգ աշակերտաց սրբոյն Սահակայ և Մեսրոպայ մարթ է ի չորս դասս որոշել. մի՝ այնոցիկ, որ էին աշակերտեալ յառաջ քան զգիւտ գրոց, որպիսի էին Յովսէփ Պաղնացի, Յոհան Եկեղեցացի, ևն: Երկրորդ՝ այնոցիկ, որք յաւուրս գիւտի գրոց աշակերտեցան, որպիսի էին Կորիւն, Արձան, ևն: Երրորդ՝ այնոցիկ, որ ի ծաղկել անդ դպրոցացն աշակերտեցան, որպիսի էին Խորենացին, Ստեփանոս, ևն: Չորրորդ՝ այնոցիկ, որք ի յետին աւուրս սրբոց Թարգմանչաց աշակերտեալ՝ յետ մահու նոցա առ ոտս երիցագոյն աշակերտաց կամ այլոց ոմանց վարժեցան, յորոց մին համարի Ղազար Փարպեցին: Բայց մեր չկարելով յայտնի որոշել զիւրաքանչիւրսն՝ զամենայն հետզհետէ կարգեցաք ի պատմութեան»: Արդարև Զամչեան իւր պատմութեան առաջին հատորոյն Բ. դպրութեան Կ. գլխոյն մէջ խօսելով զաշակերտաց սրբոյն Սահակայ և Մեսրոպայ՝ կը դնէ խառնիխուռն աւելի քան երեսուն անձանց անուններն, իբրև աշակերտաց Սահակայ և Մեսրոպայ—1. Յովսէփ ի Վայոց ձորոյ, 2. Յովսէփ Պաղնացի, 3. Յովհան Եկեղեցացի, 4. Ղևոնդ երէց, 5. Աբրահամ, 6. Անանիա, 7. Թադիկ, 8.

Տիրայր կամ Տէր Խորձենացի, 9. Մուշէ Տարօնեցի, 10. Ենովք, 11. Դանան, 12. Յովնաթան, 13. Երեմիա, 14. Արձան Արծրունի, 15. Ընձակ, 16. Խոսրով, 17. Ղազրիկ, 18. Խաչիկ, 19. Անդրէաս, 20. Գիւտ, 21. Յովհան Մանդակունի, 22. Եզնիկ Կողբացի, 23. Կորիւն, 24. Եղիշէ, 25. Մովսէս Խորենացի, 26. Մամբրէ, 27. Ստեփանոս Սիւնեցի, 28. Դաւիթ Անյաղթ, 29. Թաթուլ, 30. Վարոս, 31. Ղազար Փարպեցի։

Զամչեան սոյն իւրաքանչիւրին վրայ յաւելլով համառօտ տեղեկութիւններ մեծաւ մասամբ յետին մատենագիրներէ, ինչպէս յԱսողկայ, ի Վարդանայ, ի Կիրակոսէ, ի Սամուէլէ և մանաւանդ ի Յայսմաւուրաց, և գրոց յիշատակարաններէ՝ կը յարէ․ «Իսկ վասն այլոց աշակերտաց չունիմք ինչ աւանդել ի գիր, բայց գիտեմք թէ կային և այլք բազումք յոյժ, զորս չեմք բաւական, աստ Կորիւն, ըստ անուանցն նշանակել»։

Հեղինակն Պատմութեան հայերէն դպրութեանց յիշելով գրեթէ նոյն անուններն՝ կը բաժնէ երկու կարգ, իբրև Առաջին և Երկրորդ աշակերտք։ Առաջին աշակերտներէն էին ըստ յիշեալ հեղինակին— 1. Յովսէփ ի Վայոց ձորոյ 2. Յոհան, 3. Ղևոնդ երէց, 4. Եզնիկ, 5. Կորիւն, 6. Մուշէ Տարօնեցի, 7. Տիրայր, 8. Յովսէփ Պաղնեցի, 9. Յովհան Եկեղեցացի, 10. Ենովք, 11. Դանան, 12. Երեմիա, 13. Թադիկ, 14. Գնիթ, 15. Արձան Արծրունի, 16. Ղազար կամ Ղազարիկ ումն։ Երկրորդ աշակերտներէն էին—1. Մովսէս Խորենացի, 2. Մամբրէ Վերծանող, 3. Դաւիթ Անյաղթ, 4. Գիւտ կաթողիկոս, 5. Յովհան Մանդակունի, 6. Եղիշէ, 7. Ղազար Փարպեցի, 8. Եզրաս Անգեղացի։ Արտաքոյ սոցա իբրև անորոշ ժամանակաւ դասու՝ կը համարի հեղինակն մեր հետևեալներն—1. Սահակ, 2. Յովհաննէս, 3. Աբրահամ, 4. Անանիա, 5. Յովնաթան, 6. Խաչիկ, 7. Անդրէաս, 8. Թաթուլ, 9. Վարոս։

**21**. Որովհետև, ինչպէս արդէն ակնարկեցինք, թարգմանչաց երկրորդ խմբի մը առաքման առասպելին առիթ տուած է Խորենացւոյն Գ. դպրութեան ԿԱ. գլխոյն վերջին մասն, ընդ որում կապուած է յաջորդ ԿԲ. գլխոյն պատմութիւնը և ակնարկութիւնք ինչ յՈղբըն՝ թողլով յետնոց անհեդեդ վկայութիւններն՝ քննենք ի մօտոյ Խորենացւոյն կամ այս անուամբ ծանօթ պատմութեան այն մասերը։ Նախ բաց այն հատուածէ Խորենացւոյն՝ ոչ ոք ի ժամանակակից պատմչաց—ոչ Կորիւն որ յետ մահուն Սահակայ և Մեսրոպայ գրեց և էր հմուտ և միջամուխ թարգմանութեան գործին, և ոչ Փարպեցին, որ չէր հեռի ժամանակաւ և թարգմանութեան վրայ կը գրէ երկար—կը յիշէ թէ Ս. Գրոց թարգմանութիւնը, որ

ծղաւ ի ձեռն Սահակայ և Մեսրոպայ և յետոյ ուղղուեցաւ խնամով
ըստ ստուգագոյն օրինակաց դարձեալ ի ձեռն նոյն թարգմանչաց՝
«թերացեալ գտանէր», և այն՝ «ի բազում մասանց»։ Ո՞յք էին այն
բազում մասունք, յորս կը թերանային թարգմանիչք. Ս. Գրոց
իմաստը, թէ յոյն կամ հայերէն լեզուն։ Աղեքսանդրիոյ մուսէոնին
ուսմանց քաջ տեղեկանալն—քանզի կը թուի թէ զայս կը նշանակէ
«ստոյգ յօգանալն ճեմարանին վերաբանութեան»—կարծեցեալ թե-
րակատարութեանց ո՞րը կրնար ուղղել, կամ ինչ էր Խորենացւոյն
«արուեստը», որում «անգէտ» էին թարգմանիչք. երկրաչափութիւն,
թէ աստեղագիտութիւն կամ բնագիտութիւն և կամ այլ գիտու-
թիւն։ Յետ դարձի Խորենացւոյն յԱղեքսանդրիոյ (եթէ գնաց նա,
գնելով թէ կար յայնժամ այնպիսի ոք) չենք գիտեր զնա քաջ
հմուտ այն գիտութեանց միոյն. չունինք ստոյգ աւանդութեամբ
հաստատուած գրուած յանուն Խորենացւոյ այն գիտութեանց վրայ.
գլխաւոր երկասիրութիւն նորա է Հայոց Պատմութիւնն. ըստ ո-
մանց յետնոց նորա գործ են նաև պատմութիւնք Հռիփսիմեանց և
Պատկերին, գիրք Պիտոյից, Աշխարհացոյցն և ճառք ինչ։ Ողբոց մէջ
կը գանգատի հեղինակն, թէ կը ծիծաղէին զնովաւ և կ'արհամար-
հէին զնա՝ «իբրև որ ոչինչ պիտանացու ունիցի արուեստ»։ Ո՞վ կրնար
ծաղրել և արհամարհել այնպիսի արուեստ մը, զոր մինչև կը հա-
մարձակի կոչել «ամենիմաստ արուեստ և կատարելագոյն յարմարու-
թիւն»։ Այսպիսի անմիտ մեծաբանութիւն անվայել էր Խորենացւոյն
(ըստ հասարակաց կարծեաց կ'ըսենք) թէ հանճարոյն և թէ հա-
մեստութեանն։ Ուստի բոլորովին անհիմն է ըստ մեզ, թէ ի թարգ-
մանութեան Գրոյն, որ եղաւ ի ձեռն Սահակայ և Մեսրոպայ և
աշակերտաց նորա՝ կար թերակատարութիւն, և թէ Խորենացին ա-
ռանձին կամ հանդերձ այլովք (եթէ զմեզն առնունք բազմաբար)
ղրկուեցաւ ուսանել «ամենիմաստ արուեստ» մը՝ առ ի լնուլ այն
արգարև հրաշալի թարգմանութեան թերին. ուստի կը զարմա-
նանք, թէ ուստի և ինչպէս մուտ գտած է Խորենացւոյն Պատ-
մութեան մէջ այն անհեդեդ յօդուածն, մինչև ստիպել մեզ ասել,
թէ այն հատուածն (ինչպէս նաև ԿԲ. գլուխն և Ողբը․), եթէ է
Խորենացւոյն՝—գնելով, ինչպէս ըսինք, թէ կար ոմն այսու անուամբ
ի Ե. դարու—գրուած է կամ ի պատանեկութեան և կամ ի յետին
ծերութեան, և կամ, որ աւելի հաւանական է՝ է եկամուտ։

Առնունք քննել արդ ԿԲ. գլուխը, որոյ վերնագիրն է. «Ի վար-
դապետսն, յինքն և ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ
երկնային զարդու»։ Խորենացին և կամ ո՛ ոք և է հեղինակ այն
գլխոյն, նախ կը դնէ համառօտ ինչ իբր թէ աստեղագիտական

տեսութիւն, որ ո՛չ փիլիսոփայական է և ոչ աստուածաբանական, ո՛չ յունական և ոչ քրիստոնէական. որպէս թէ աստեղք ի լուսնոյ կ'առնուն լոյս, լուսին՝ արեգակնէ, և արեգակն՝ եթերային (արփային) երկնէ. եթերին պէս կը հեղու ծագումն յիւրաքանչիւր գօտի, և իւրաքանչիւր գօտի արեգակամբ կը լուսաւորի ըստ դասու, ըստ բերման, ըստ ժամանակի.—«Յարահետևողք իմաստասիրացն և վերահայեցողք չափաբերապէս մակագրութեանց՝ զաստեղս ի լուսնոյ ասեն ընձուլիլ, և զլուսինն արեգակամբ ուռճացեալ, և զբոլոր արեգակնն յարփայինն երկնէ. հիկէն արփւոյն հեղեալ զծագումն յիւրաքանչիւր գօտիսն, և զանցնիւր գօտիքն ի ձեռն արեգականն ընձուլին՝ ըստ դասի, ըստ բերման, ըստ ժամանակի»: Աստեղագիտական նոր դրութիւն՝ զոր աղեքսանդրացի փիլիսոփայք չունեցան և ոչ իսկ կը հասկնային, ինչպէս մենք չենք հասկնար: Եթէ այս էր «ամենիմաստ արուեստն», զոր գնաց ուսանել Խորենացին յԱղեքսանդրիա՝ ի զուր յոգնեցաւ: Եզնիկ շատ տարբեր կը խօսի փիլիսոփայից վարդապետութեան վրայ: Ահա փիլիսոփայից ուսման վրայ բանք Եզնկայ, որ առանց երթալու յԱղեքսանդրիա ուսանել «ի Նոր Պղատոնէն»՝ քան զԽորենացին գէթ աւելի յստակ իմացած է զուսումն նոցա և կ'իմացունէ: Ըստ Եզնկայ՝ ահա իւր ժամանակին փիլիսոփայից ուսումն լուսաւորաց դրութեան վրայ: Լուսին երեսուն օրն անգամ մը կը կատարէ իւր շրջանը, արեգակը՝ տարին մի անգամ. հինգ աստեղք միայն, այսինքն մոլորակներ, են գնայուն, մնացեալ աստեղք են անշարժ. գնայուն աստեղք, ինչպէս նաև արեգակն և լուսին, (որ մոլորակ կը համարուէին յայնժամ) կ'երթան յարևմտից յարևելս, թէպէտ մեզ կը թուի թէ յարևելից յարևմուտս կ'երթան. երկինք որչափ վեր են՝ նոյնչափ են ի խոնարհ, և այնչափ շուրջ զերկրաւ: Լուսին առանձին լոյս չունի, այլ արեգակնէ կու գայ ի նա լոյս, և այս է պատճառ, որ լուսնին այն կողմը միայն կը լուսաւորուի՝ որ արեգական դիմացն է, և որչափ կը մօտենայ արեգական՝ այնչափ կը յաւելու լոյսն, և որչափ կը հեռանայ՝ այնչափ կը նուազի, մինչև բոլորովին կը պակսէ լոյսն. և կը խաւարի արեգակն՝ երբ լուսին կու գայ ճիշդ հանդէպ արեգական.—«Լուսին, ասեն, երեսուն օր անցեալ ընդ ամենայն աստեղատունսն՝ հասանէ ի նոյն տեղի, և արեգակն ի տարւոջ: Եւ երկինք զմի տիւ և գիշեր առածեալ զինքեամբ՝ շրջին ի նոյն տեղի: Եւ եւթն աստղ միայն է գնայուն, և այլն ամենայն բևեռեալ են յերկինս. և որ գնայուն աստեղքն են, արեգակն և լուսին և այլ ևս հինգ աստեղք՝ ոչ եթէ յարևելից յարևմուտս գնան, այլ յարևմտից յարևելս:... Եւ երկինք, ասեն, որչափ ի վեր են՝ զոյնչափ ի խոնարհ են, և զոյնչափ յամե-

նոյն կողմանց շուրջ զերկրաւ։... Եւ լուսնի չիք իւր լոյս առանձինն, այլ յարեգակնէ գայ ի նա լոյսն. և յայտ անտի է, ասեն, զի յորմէ կուսէ արեգակն իցէ՝ յայնմ թերէ սկսանի ի նմա լոյս ծնանել, և ըստ հեռաւորութեան արեգականն սակաւ գայ ի նա լոյսն, և ըստ տակաւ տակաւ մերձենալոյն՝ յաճախէ ի նա լոյսն. և յորժամ մօտ հասանէ ի նա՝ լնու, և յորժամ անցանէ զարեգակամբ՝ սկսանի տակաւ նուազել, և որչափ ի բացն հեռանայ՝ այնչափ պակասէ ի նմանէ լոյսն, մինչև ամենևին նուազէ. և յորժամ միւսանգամ հանդիպի՝ ծագէ ի նմա սակաւիկ ինչ ի լուսոյն վասն հեռաւորութեանն, և որչափ մերձենայ՝ այնչափ առ սակաւ սակաւ աճէ ի նա լոյսն։ Եւ լուսին, ասեն, ի ներքոյ է քան զարեգակն և քան զամենայն աստեղս. և քանզի ի ներքոյ է՝ յորժամ կշիռ դէպ արեգական պատահիցէ՝ յայնժամ խաւարի արեգակն» (Եզնիկ)։ Եզնիկ գիտէ նաև Պիւթագորեան, Պերիպատետիկեան, Պղատոնեան, Ստոյիկեան, Եպիկուրեան աղանդոց վարդապետութիւնն ճիշդ ինչպէս մեք գիտենք։ Ապա աշակերտք Սահակայ և Մեսրոպայ, անտարակոյս ինքեանք ևս, արդէն ունէին բաւական տեղեկութիւն յոյն փիլիսոփայից վարդապետութեան, ուստի և չունէին պէտս, մանաւանդ յիմացումն Ս. Գրոց, զրկել աշակերտներ յԱղեքսանդրիա «ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան». մանաւանդ թէ ինչպէս Եզնիկ՝ նոյնպէս վարդապետք նորա կը մերժէին այն աղանդոց ուսումն, իբրև մոլար և հակառակ Ս. Գրոց։

Յետոյ հեղինակն յիշեալ (ԿԲ.) գլխոյն, կ՚առնու պատմել իւր ճանապարհորդութիւնը՝ նմանցունելով զայն իւր աստեղագիտական գրութեան։ Այսպէս, ասէ, և մեք հարաւէն դառնալով հասանք յԵդեսիա, և թեթևակի նաւելով գետանին խորէն՝ եկանք երկրպագել ի սուրբ տեղիս, վայրկեան մը մնացինք ի Պաղեստին ի Հրահանգս (թերևս ուսանել եբրայեցերէն), և այնպէս ճեպով մտանք յԵգիպտոս.—«Օրինակ իմն, այսպէս և մեք յաւետախաղաց շնորհիւ ցոլացեալ յիմանալի ճառագայթից հոգևոր հարցն, ըստ հարաւային մասանցն պարպածեալք՝ յԵդեսացւոցն հասանէաք քաղաք, թեթևակի ընդ խորս գետանին նաւեալ, անցաք ի սուրբ տեղիսն երկրպագել, և մնալ վայրկեան ի Պաղեստինացւոց Հրահանգս»։ Արդարև բռնազբօսիկ նմանութիւն։ Կ՚երևի թէ հեղինակ մեր ցուցնելու համար, թէ «ոչ անկատար վարժմամբ յանդգեալ արուեստից ինքնացաւ»՝ քաշելով բերաւ կապեց իւր հոյակապ արեգակնային գրութիւնը ճանապարհորդութեան հետ։ Ապա յետ նկարագրելոյ զԵգիպտոս և զԱղեքսանդրիա մութ ոճով և ևս աւելի մութ ակնարկութիւններով, և յիշելոյ նոր ումն Պղատոն իւր վարդապետ,

որում կը ցաւի թէ չգտաւ արժանի աշակերտ, սակայն կը պարծի թէ «ոչ անկատար վարժմամբ յանգեալ արուեստից ինքնացաւ», այսինքն եղաւ կատարեալ յարուեստին՝—կը յաւելու պատմել իւր վերջին ճանապարհորդութիւնն յԱղեքսանդրիոյ մինչև ի Բիւզանդիոն, ուր լսեց իւր վարդապետաց մահը՝ մինչ կը պատրաստուէր ելանել ի Հայս։ Կամելով, ասէ, նաւել Յունաստան՝ հողմոց բըռնութեամբ ինկանք յԻտալիա, և ողջունելով սրբոյն Պետրոսի և Պօղոսի գերեզմանն՝ առանց երկար մնալու ի Հռոմ՝ եկանք յԵլլադա, անտի յԱտտիկէ, և սակաւ ինչ մնալով յԱթէնս՝ ի վերջ կոյս ձմերան ելանք ի Բիւզանդիոն, փափաքելով դառնալ ի հայրենիս մեր.—«Նաւել յԵլլադա կամելով՝ յԻտալիա բռնութեամբ անկաք հողմոյ, և ողջունեալ ի հանգիստ սրբոյն Պետրոսի և Պաւղոսի, ոչ բազում ի Հռոմայեցւոցն կացեալ քաղաքի, անցանելով ընդ Ելլադա յԱտտիկէ, սակաւ ինչ մնացաք յԱթէնս։ Եւ ի կատարման ձմերայնոյն՝ դէմ եդեալ ի Բիւզանդիոն ելանել, փափաքելով մերոց հայրենեացն» (Խոր. Գ. ԿԲ.)։

**22.** Հոս մեր առջև կ'ելլէ ժամանակագրական խնդիր մը, որոյ լուծումը բաւական է ցուցնել մեզ այս պատմութեան տկարագոյն կողմը։ Ողբին մէջ կը կարդանք. «Մինչ նոքա (Սահակ և Մեսրոպ) զմերն յուսային դարձ, և պատուասիրել *իմով* ամենիմաստ արուեստիւս և կատարելագոյն յարմարութեամբս, համայն և *մեք* փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պարել, անվեհեր երագութեամբ կրթեալք, և առագաստի ասել երգս՝ արդ փոխանակ խրախճանութեանն ի վերայ գերեզմանի ողբս ասելով՝ ողորմելի *հառաչեմ*»։ Հոս դիտելի է նախ՝ որ գրողն, յետ ասելոյ բազմաբար, «*զմերն* յուսային դարձ», և «համայն և *մեք* դիմեալք ի Բիւզանդիոյ՝ *յուսայաք*» ա. հ., արուեստը կ'ընծայէ ինքեան միայն, —«պատուասիրել *իմով* ամենիմաստ արուեստիւս և կատարելագոյն յարմարութեամբս»։ Զարմանք. բազումք կը ղրկուին յուսումն, և մի'ն միայն կ'ուսանի արուեստը։ Երկրորդ՝ այն պատմութենէն կը հասկցուի, թէ մինչ Խորենացին (եթէ Խորենացին է գրող) և ընկերք նորա իրենց ճանապարհորդութիւնը կատարելով այն ինչ ելած էին Բիւզանդիոնէ գալ ի Հայս՝ Սահակ և Մեսրոպ մեռան։ Արդ եթէ գտնենք այս կարծեցեալ թարգմանչաց ելից և դարձին թուականները, և նոցա բացակայութեան հաւանական տարիները՝ կը տեսնենք թէ այս երկրորդ առաքման աւանդութիւնը զուրկ է հաւանականութենէ, եթէ ոչ բոլորովին սուտ։ Նախ այս առաքման պատճառէն յայտնի է, թէ Խորենացին և ընկերք նորա ղրկուեցան եթէ արդարև ղրկուեցան) յետ ուղղութեան Սահակեան թարգմա-

նութեան ըստ ստոյգ օրինակաց բերելոց ի Կոստանդնուպոլսոյ։ Այս եղաւ, ինչպէս արդէն տեսանք՝ 436-ին, և ուղղութիւնը տևեց հարկաւ գոնէ երկու տարի. ապա Խորենեանք չէին կրնար մեկնել յառաջ քան 438 կամ 439. իսկ դարձ նոցա եղաւ, ըստ վերոյիշեալ ակնարկութեան՝ Սահակայ և Մեսրոպայ մահուան տարին, որ է 440։ Այս երկու թուականաց, այն է ելից նոցա և դարձին, համեմատութենէն կը հետևի, թէ ճանապարհորդութիւն նոցա տևեց տարի մը կամ տարի ու կէս, և կամ երկու տարի առ առաւելն։ Ճանապարհորդութիւն մը, որ նայելով պարագաներուն, այն է առաքման նպատակին, տեղւոյն մեծ հեռաւորութեան, դարուն հաղորդակցութեան միջոցներուն մեծ դժուարութեան, հազիւ կրնար կատարուիլ 5 կամ 6 տարուան մէջ, գնել տարի մը միայն տևած՝ ապաքէն չէ հաւանական։ Հայաստանէ ելլել, երթալ յԵդեսիա յուսումն, ապա գնալ յԵրուսաղէմ, երկրպագել սուրբ տեղեաց, մնալ ժամանակ մի «ի Պաղեստինացւոց հրահանգս», անտի մտնել յԵգիպտոս, «ոչ անկատար վարժմամբ յանդգեալ արուեստից ինքանալ» նոր Պղատոնէ մը, ապա յԵլլադա նաւել կամելով լինել յԻտալիա, հարկաւ Իտալիոյ արևելեան ծովեզրը—(քանզի չէ հաւանական թէ հողմոց բռնութիւնը տարաւ զնոսա Սիկիլիոյ բացէն կամ Մեսսինայի վտանգաւոր նեղցէն մինչև Հռոմի նաւահանգիստն յՕստիա անվտանգ)— Իտալիոյ արևելեան եզրէն երթալ մինչև Հռոմ յերկրպագութիւն նշխարացն Պետրոսի և Պօղոսի, մնալ հոն ժամանակ մի, ապա դառնալ—ընդ ծով թէ ընդ ցամաք՝ չէ յայտ—յԵլլադա, անտի յԱտտիկէ, մնալ ժամանակ ինչ յԱթէնս, ապա գալ ի Կոստանդնուպոլիս, և յետ ձմերելոյ անդ ելլել գալ ի հայրենիս իւրեանց ի Հայս՝—այսքէն չէր մի կամ երկու տարուան գործ։ Զայս խորհելով թերևս հեղինակ յառաջաբանի Խաչի ճառին՝ ասէ. «ի դառնալն բազում ժամանակք անցեալ էին, և յոլով անցք անցեալ ընդ երկիրս». Թէպէտ առ անտեղեկութեան ժամանակագրութեան՝ կը գնէ այն դարձը կաթողիկոսութեան բաժանման ժամանակ, այսինքն 600-ին։

**23.** Շատ հաւանական է ուրեմն, թէ ԿԱ. գլխոյն այն վերջին հատուածը և ԿԲ. գլուխն ամբողջ՝ են եկամուտ և անհարազատ։ Անհարազատութեան միւս ևս մեծ նշան է լեզուն, որ ունի Ե. դարուն հելլենաբանութեան տիպը։ Նոյն բան է Ողբին համար, որ նմանութիւն է Գրիգորի Աստուածաբանի ճառին ի Մելիտոս։ Ողբն է արդարև իբրև ի բերանոյ ուրումն աշակերտի Սահակայ և Մեսրոպայ, բայց պատմական ակնարկութիւնք ի նմա կը պատշաճին մանաւանդ առաջնոյ կիսուն Ե. դարուն։ Հեղինակն կը գնէ

Հայոց եկեղեցին երիցս ընկած ընդ իշխանութեամբ անարժան հովիւներու և խանգարուած։ Առաջին և երկրորդ ժամանակներուն երանի կու տայ, քանզի յետ անկման և խանգարման՝ եկաւ կանգնումն և նորոգութիւն։ Առաջին ժամանակով, ինչպէս կ'երևի՝ կ'ակնարկուի ժամանակն յետ Ներսիսի մեծի, երբ նստան կարգաւ Զաւէն, Շահակ և Ասպուրակէս, որոց յաջորդեց բարւոք ժամանակ Սահակաւ.—«Երանի առաջնոյ և երկրորդի փոփոխմանն, զի էր ինչ ժամանակ հեռանալոյ փեսային և փեսաւէրին. և հարսնդ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով»։ Երկրորդ ժամանակով կ'ակնարկուի ժամանակն անկման Սահակայ յաթոռոյ, երբ յափշտակեցին աթոռակալութիւնը Սուրմակ, Բրքիշոյ և Շմուէլ, բայց եկեղեցին գտաւ միւսանգամ իւր պայծառութիւնը՝ վերստին հաստատութեամբն Սահակայ, որում յաջորդեցին Մեսրոպ, Յովսէփ, Գիւտ, Յովհան Մանդակունի և այլք, «նոյնազւակ զուգահարք», այսինքն հարազատ որդիք Սահակայ և Մեսրոպայ.—«Դարձեալ մինչ երբեմն ումն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առագաստդ, և հարսնդ ոչ աղտեղացար, թէպէտ և բռնութիւնն ընդ փեսայն ի բաց վանեաց... սակայն դու և ոչ յայնմ զքեզ ամայի բոլորեցն ցուցեր, զանդրէն քոյոյն յուսալով դարձ հովուակցաւն. ոչ որպէս տայգերբ, այլ իբր նոյնազւակ զուգահարբ զմանկունսն փայփայեցեր»։ Չերրորդ ժամանակն, որ է իւր ժամանակն՝ կը համարի ողբերգուն առանց ակնկալութեան դարձի.—«Իսկ յերրորդ հեռանալս ոչ է ակնկալութիւն դարձի, լուծեալ ի մարմնոյս ընկերաւն և գործակցաւն»։ Ուստի կ'ողբայ և՛ ազգը և՛ եկեղեցին.—«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն, զի բարձաւ թագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն։ Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմբին։... Ոչ ևս տեսանեմ զբանաւոր քո հօտ ի վայրի դալարւոջ և առ ջուրս հանգստեան տածեալս, և ոչ ի փարախ հաւաքեալ զգուշանալով ի գայլոց, այլ ցրուեալս առ նապատաց և գահավիժութեանց»։ Հայոց եկեղեցական պատմութիւնն չտար մեզ բաւական վկայութիւն այսչափ ապականած գնել զեկեղեցին Հայոց առ Սահակաւ, և ոչ առ յաջորդօք նորա մինչև ի Գիւտ և ի Յովհան Մանդակունի, առ որով կը կարծուի գրած Խորենացին զիւր պատմութիւն, եթէ ոչ աւելի յառաջ, ինչպէս կը կարծեցունեն այն պատմութեան պարագաներն։ Բանք Ողբին, ինչպէս նաև ուրիշ ակնարկութիւնք զորս պիտի տեսնենք՝ կը յարմա-

րին փոքր ի շատէ ժամանակին Եզրի և յաջորդաց նորա (630—660),
մինչ պառակտեցան եկեղեցին և ազգը քաղկեդոնական վէճերէ, ե-
ղան ժողովներ, որ մերթ կ'ընդունէին այն ժողովը և մերթ կը
մերժէին. Մայրագոմեցւոյն անուանեալ հերձուածն. ազգէն մաս մի
բաժնուեցաւ եկեղեցիէն դաւանութեամբ և ծխիւ. Յոյնք եղան
միջամուխ. Հերակլ և յաջորդ նորա Կոստանդ Բ. (610—667) գրե-
թէ բռնացան եկեղեցւոյն վրայ՝ սպառնալեօք տալով ընդունել Եզրի
և յաջորդի նորա Ներսիսի Շինողի զժողովն Քաղկեդոնի։ Զայս (և
ոչ Յազկերտի հալածումը, որ դեռ սկսած չէր Խորենացւոյն ժամա-
նակ, եթէ դնենք զայս Ե. դարուն կիսուն, և ուրիշ հաշուով
վաղուց դադրած էր, եթէ դնենք վերջին կիսուն) կը թուի ակնար-
կել ասելն. «Անտիոքոս բռնադատէ թողուլ զօրէնս հայրենիս, և
Մատաթիա ոչ ընդդիմակայէ։ Այժմ մարտք ի ներքուստ և արհա-
ւիրք արտաքուստ. արհաւիրք՝ ի հեթանոսաց, և մարտք՝ ի հերձ-
ուածողաց»։ Այս ամենայն յուզմունք կուտան հեղինակին կարծել
Հայաստանեայց եկեղեցին ի սպառ խանգարեալ, ուստի և կը գոչէ.
«Զարթի՛ր, Երեմիաս, զարթիր և ողբա մարգարէութեամբ՝ որ ինչ
թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս եմք. գուշակեա զյառնել
Հովուաց տգիտաց, որպէս երբեմն Զաքարիաս յԻսրայելին»։ Նաև
քաղաքական արկածք, զորս կը պատմէ եկած ազգին վրայ, ինչպէս
«Հէնք եկեալք անհատք ի յոլովից կողմանց, գերփումն տանց և
յափշտակութիւն ստացուածոց, կապումն գլխաւորաց և բանտք
յայտնեաց, յօտարութիւն վարումն ազատաց և անթիւ նեղութիւնք
ռամկաց, առումն քաղաքաց և քանդումն ամրոցաց, աւերումն ա-
ւանաց և հրդեհումն շինուածոց»—կը յարմարին առաւելապէս յի-
շեալ ժամանակին, այն է ժամանակին Եզրի և յաջորդի նորա։ Այս-
պիսի աղէտք ապաքէն եղան նաև բազմօք յառաջ քան զԷ. դար.
բայց այն ամենայն՝ արդիւնք էին ներքին և արտաքին պատերազ-
մաց որ դադարեցան յետոյ. բայց ակնարկութիւնք Ողբին կը նային
այն անհնարին աղետից, որ սկսան գալ մեր թշուառ հայրենեաց
վրայ յառաջնում կիսուն Է. դարուն, Եզրի և Ներսիսի Շինողի ժա-
մանակ, ի մարզպանութեան Վարազտիրոցայ, Դաւթի Սահառունւոյ
և Թէոդորոսի Ռշտունւոյ, ընտիր և բարեպաշտ իշխանաց, ոչ ա-
պստամբաց, գողոց, կծծեաց, յափշտակողաց, աշխարհաւերից, աղ-
տեղասիրաց, և այն՝ յերեսաց դրացի բարբարոս ազգաց (կարդա
Յովհ. կաթողիկոսի ԺԸ—ԻԱ. գլուխներն, և զՉամչեան, Պատմ. Հյ.
Գլ. ԾԱ—ԾԴ.), որ ստէպ ասպատակութիւններով այն դարուն մէջ
յաւեր և ապականութիւն դարձուցին զբոլոր Ասիա, ևս և յերեսաց
Յունաց, որքան զբարբարոսս նուազ վիշտ չհասուցին մեզ, մինչ

եկեղեցական և աշխարհական գլուխք ազգին շփոթեալ վարանեալ կը տառապէին։ Ապաքէն բնական էր այնպիսի ժամանակ անկարգութեանց սպրդել կղերին և ժողովրդեան մէջ։ Այսչափ միայն թերևս ճշմարիտ է Ը. դարուն առաջին կիսուն համար այն սոսկալի տագնապներուն ժամանակ, բայց ոչ Ե. դարուն առաջին կիսուն, յորում կը կարծուի գրուած պատմութիւն Խորենացւոյն։ Ի՞նչ կը նշանակէ ուրեմն այն տխուր նկարագիր Ողբին, որ յետ կոչելոյ ագէտ իւր ժամանակին հովիւներն՝ կը յարձակի ամէն կարգի և աստիճանի մարդոց դէմ.—«Զարթիր, Երեմիաս, զարթիր և ողբա հանդերձ մարգարէութեամբ որ ինչ թշուառացաքս և որ ինչ թըշուառանալոցս եմք. գուշակեա զյառնել հովուաց ագիտաց, որպէս երբեմն Զաքարիաս յԻսրայէլին։ Վարդապետք տխմարք և ընդնքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ. արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով. ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ զհեզութիւն, յորում Աստուած բնակէ, գայլք եղեալ՝ զիւրեանց հօտս գիշատելով։ Կրօնաւորք կեղծաւորք, ցնձնացոյցք, սնափառք, պատուասէրք քան թէ աստուածասէրք։ Վիճակաւորք հպարտք, դատասացք, զրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդապետական բանից, սիրողք վաճառաց և կատակերգութեանց։ Աշակերտք հեղգ առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն աստուածաբանք։ Ժողովըրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, այրեցողք, վընասակարք, փախչողք ի ժառանգութենէ։ Զօրականք անիրաւք, ստապարծք, զինատեացք, պղերգք, հեշտասէրք, անժուժկալք, կողոպտիչք, համբարողք աւազակաց։ Իշխանք ապստամբք, գողակիցք գողոց, կծլիք, կծծիք, ժլատք, ագահք, յափշտակողք, աշխարհաւերք, աղտեղասէրք, ծառայից համամիտք։ Դատաւորք տմարդիք, ստուտք, խաբողք, կաշառառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք, հակառակողք։ Եւ բարձումն առհասարակ յամենեցունց սիրոյ և ամօթոյ»։ Ապաքէն Ե. դարու մատենագիր են Կորիւն, Փարպեցին, թերևս և Եղիշէ։ Ո՞րչափ տարբեր է նկարագիր սոցա իւրեանց ժամանակին համար։ Կորիւն գրեթէ չյիշեր իշխան մը՝ որում չտայ բարեպաշտ, աստուածասէր վերադիրը. իսկ այնպիսի ընդհանուր ապականութեան չիք առ նմա ամենևին նշմարանք։ Եղիշէ գիտենք թէ ինչ հիացմամբ կը խօսի անխտիր ժողովրդեան բարեպաշտութեան վրայ, ոչ արանց միայն, այլ և կանանց. նոյնպէս Փարպեցին։ Այս վերջին երկու պատմիչք զՎասակ միայն իշխանօք ոմամբք կը բամբասեն իբրև անօրէն և ուրացող։ Գիտենք սակայն, թէ այս պատմութեան մէջ կը տիրէ կուսակցութեան ոգի, և

պատմիչքն են կղերական կուսակցութենէ. Հակառակ կողմէն չունինք ամենևին խօսող։ Կորիւն, որ գրեց իւր մատենիկն եթէ ոչ յետոյ՝ գէթ ոչ բազում ամօք յառաջ քան զպատերազմն Վարդանանց՝ զՎասակ անգամ կը յիշէ մեծ գովեստիւ, իբր «այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց», նպաստող «աւետարանագործ վարդապետութեան», «ծառայեալ (Մեսրոպայ) ըստ Աւետարանին վայելչութեան»։ Չենք կրնար ընդունել, թէ կաթողիկոսունք Հայոց ի Յովսեփայ մինչև Սամուէլ, վերջին կաթողիկոս Ե. դարու, և յետ այնորիկ ևս, նոյն ինքն Եզր և Ներսէս Շինող և այլք՝ էին հովիւք տգէտք, չտածողք զբանաւոր հօտ իւրեանց ի վայրի դալարւոջ և առ ջուրս հանգստեան, չհաւաքողք ի փարախ, չզգուշացողք ի գայլոց, այլ ցրուողք անապատաց և գահավիժութեան. ընդ հակառակն գիտենք, թէ կաթողիկոսունք Հայոց (սակաւ բացառութեամբ, և այն՝ անիշխանութեան ժամանակներ, մինչ ազգը կը հեծէր ընդ իշխանութեամբ այլազգի բռնաւորաց) մինչև արդի հայրապետն, որ կը նստի յաթոռ Լուսաւորչին՝ եղած են արժանաւոր հովիւք։ Գիտենք ի սկզբանէ հետէ մեր ազգին թերութիւններն. չենք կրնար ընդունել սակայն, թէ եղաւ երբէք ժամանակ՝ յորում ազգին մէջ ամէն կարգի և պաշտաման մարդիկ էին տէր ամէն մոլութեանց զոր կը շարէ Ողբը։ Կ'ընդունինք թէ անկարգութիւնք սպրդած են ժամանակ ժամանակ յազգն և յեկեղեցին. բայց չենք կրնար ընդունել, թէ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ արմատացաւ անկարգութիւն, դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն։ Մեր Ողբին հեղինակն, յետ դնելոյ զազգն և զեկեղեցին յետին ապականութեան մատնուած՝ կը դնէ գրեթէ ամէն ազգ բնական չարեաց, զորս կը պատմէ եկած ազգին վրայ՝ իբրև պատուհաս աստուածակոյս կողմանէ.—«Եւ ապա յանդիմանութիւն (ապացոյց) այսոցիկ զէնս, եթէ ոչ անտես առնել Աստուծոյ, և տարերց փոփոխել զբնութիւն։ Գարունն երաշտացեալ, ամառն անձրևայոյզ, աշունն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառոյց, մրրկալից, յերկարացեալ. հողմք բքաբերք, խորշակաբերք, ախտահաւաքք. ամպք հրընկէցք, կարկտածուք. անձրևք անժամանակք և անպիտանք. օդք դառնաշունչք, եղեմնարկուք. ջրոցն առաւելուլն անօգուտ, և նուազելն անհնարաւոր. երկրի անբերութիւնք պտղոց, և անաճելութիւնք կենդանեաց, այլև սասանմունք և դը-ղրդմունք։ Եւ ի վերայ այսր ամենայնի՝ խռովութիւն յամենայն կողմանց, ըստ այնմ թէ Զիք խաղաղութիւն ամբարշտաց։ Զի թագաւորք տիրեալք խիստք և չարաչարք, բեռինս բառնալով ծանունս և դժուարակիրս, հրամանս տալով անտանելիս. վերակացուք

անհարթարարք, անողորմք. սիրելիք դաւաճանեալք, և թշնամիք զօրացեալք... սովք անբաւք և հիւանդութիւնք և մահք»: Գիտենք թէ քաղաքական թշուառութեանց հետ եկած են ազգին վրայ երբեմն նաև բնական անհարթութիւնք (տես Յովհ. Կաթ. ԼԴ. և ԾԲ. գլուխներն). բայց գիտենք նաև, թէ բնական չարիք յառաջ կու գան բնական պատճառներէ և են տեղական, և չունին գործ մարդոց բարուց և վարուց հետ. միայն կու գան երբեմն մարդոց անհոգութենէն, ինչպէս սովք և ապականիչ ախտք. ուստի բնական անհարթութիւններ ընծայել բարոյական պատճառներու՝ չէ ուղիղ և բանաւոր: Բայց չմոռնանք նաև, թէ այն արտաքոյ կարգի բնական աղէտներն զորս կը շարէ հեղինակ Ողբին՝ միանգամայն և ընդհանուր պատահած չենք գիտեր ի պատմութեան՝ Հայաստանի հողին վրայ Ե. դարուն մէջ: Ուստի նայելով Խորենացւոյն ընծայեալ Ողբին ոգւոյն և պատմական ակնարկութեանց՝ չենք կրնար ընծայել այն Ողբն այն ժամանակին՝ յորում կու տայ զանձնէ գրըուած պատմութիւն Խորենացւոյն: Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն՝ Է. կամ Ը. դարուն առաջին կիսուն միայն կը յարմարի, և է գործ դժգոհ լալականի, որ ընդդէմ կրեալ անարգանաց ինչ զչարեալ՝ այնպէս վատթարացեալ կը տեսնէ և՛ եկեղեցին և՛ ազգը: Մենք, որ ժամանակակից աղբիւրներէ դուրս ոևիցէ տեղեկութիւն կը համարինք իբրև անվաւեր կամ անստոյգ՝ այլազգ կը խորհինք Թարգմանչաց աշակերտներուն վրայ: Թարգմանչաց ժամանակին մի միայն վաւերական աղբիւր է, առանց երկբայութեան, Կորիւն: Իբրև աշակերտ Թարգմանչաց, միանգամայն Թարգմանիչ, ծաղկեալ Ե. դարուն կիսուն գիտենք զԿորիւն՝ Խորենացւոյն և մանաւանդ Փարպեցւոյն Պատմութենէն, որ է անտարակոյս գործ երկրորդ կիսոյ Ե. դարուն, ուստի և եթէ ոչ ժամանակակից՝ գէթ մերձաւորագոյն ժամանակաւ Թարգմանչաց, ինչպէս պիտի տեսնենք յետոյ: Արդ Խորենացին կը յիշէ զԿորիւն ոչ միայն իբրև աշակերտ, այլև իբրև Թարգմանիչ.—«Ապա առեալ Մեսրոպայ և մեծին Սահակայ զնոյն աշակերտս, զՅովսէփ և միւս ընկեր նմին ի Կողբ գեղջէ որում անուն Եզնիկ կոչիւր՝ առաքեն ի Միջագետս ի քաղաքն Եդեսիայ... և ընդ նոսա նախանձեալ ընկերաց իւրեանց աշակերտակցաց, որոց անուանքն Ղեւոնդ և Կորիւն կարդային՝ յիւրեանց կամաց ելին առ նոսա ի Բիւզանդիոն» (Խոր. Գ. Կ.): Փարպեցին գիտէ զԿորիւն նաև իբրև մատենագիր վարուց վարդապետին իւրոյ Մեսրոպայ.—«Զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեաւ՝ ի Պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելւոյն Մաշթոցի կարգացեալ տեղեկասցի զվարս կենաց

նորա» (Փարպ. Ժ.). և այլուր (ԺԲ.). «Զոր ծննդեան սրբոյն ի սուրբ գիտողաց և ի Պատմութենէ երանելւոյ առն Կորեան հաստատեալ գրեցաք»: Արդ ի Պատմութեան Կորեան իբրև աշակերտք Սահա-կայ և Մեսրոպայ կը յիշուին 1. Յոհան Եկեղեցացի, 2. Յովսէփ Պաղնեցի, 3. Եզնիկ, 4. Ղևոնդ, 5. Կորիւն, 6. Յովսէփ ի Վայոց ձորոյ, 7. Տիրայր Խորձենացի, 8. Մուշէ Տարօնեցի, 9. Անանիա, 10. Գնիթ, 11. Ենովք, 12. Դանան, 13. Երեմիա, 14. Յովնա-թան, 15. Թադիկ, 16. միւս ևս Յովսէփ: Առաջին հինգը միայն կը յիշուին իբրև թարգմանիչ—«իսկ թարգմանչացն հասեալ ուր առաքեցանն». մնացեալքն իբրև եպիսկոպոսունք և տեսուչք այլ-ևայլ վիճակաց: Ահա աշակերտք Սահակայ և Մեսրոպայ ըստ ժա-մանակակից պատմութեան: Թէ սոքա ամենքին եղան գործակից վարդապետաց իւրեանց ի թարգմանութեան յետ գիւտի գրոյն՝ չենք գիտեր. հնգին համար միայն կարեմք ասել ստուգութեամբ, թէ էին ոչ միայն աշակերտ, այլև արդեամբ թարգմանիչք: Յետին ադէտ մատենագրաց անհիմն պատմութիւններն արդարացունելու համար իբրև «ազգային ընդհանուր աւանդութիւն», բաժնել թարգ-մանչաց աշակերտներն առաջին և երկրորդ կարգ, և զԽորենացին, զԴաւիթ Անյաղթ, զԵղիշէ, զՓարպեցին և զայլս, որոց անուններն չգիտեր ժամանակակից պատմութիւնն, համարել երկրորդ կարգի աշակերտ, հաւասար Եզնկայ և Կորեան՝ ըստ մեզ է բոլորովին կա-մայական: Զայս առնել չտար մեզ թոյլ ո՛չ պատմութիւնն, ո՛չ ժա-մանակագրութիւն և ոչ այն մատենագրաց լեզուն, ինչպէս պիտի տեսնենք:

**24.** Բայց խօսինք նախ մեր լեզուին հնագոյն մնացորդնե-րուն վրայ: Գրեթէ առանց երկբայութեան է, թէ մեր լեզուին հնա-գոյն մնացորդներն կ'սկսին յետ գիւտի գրոյն, այն է Ե. դարուն առաջին կիսէն, իբր 425-էն, որ է հաւանական թուական թարգ-մանութեան Գրոյն: Եթէ հին վիպասանական հատակտորներն ևս, որ հասած են մեզ, առնունք ի համարի՝ կ'ստիպուինք ընդունել, թէ մատենագրական շարժումն սկսած էր ի մեզ յառաջագոյն քան զգիւտ գրոյն: Միթէ կը սխալի՞նք եթէ ասեմք, թէ դպրութիւն մեր գլխովին սկսաւ բազմօք յառաջ քան զգիւտ գրոյն: Վիպասա-նութեան մնացորդք՝ են ըստ ընութեան արդարև համազգիք ընդ լեզուին թարգմանչաց, ըստ նիւթոյն՝ հաւանականապէս հեթանո-սական: Եթէ հարկ է ընդունել (և արդարև հարկ է), թէ վաղուց կային ի Հայս Եղիականներ և Ոգխականներ, առ որս կ'ուղարկէ Խորենացին զՄեկենաս իւր—«Արտաշիսի վերջնոյ գործք բազում մա-ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն որ պատմին ի Գողթան»,

Նաւանդ թէ ստուգագոյն մասն ի Պատմութեան Խորենացւոյն այն ներքին աղբիւրներէն է՝ ապա հարկ է դնել ևս, թէ մատենագրութիւնն սկսած էր ի մեզ յառաջ քան զԹարգմանիչս, և անշուշտ կար ազգ ինչ գրոյ, թէպէտ դժուարին և անկատար և հազիւ մատչելի սակաւուց ոմանց ուսեալ մասնէ ազգին։ Ո՛վ որ գիտէ և կ'զգայ տարբերութիւնը, որ կայ ի մէջ Թարգմանչաց լեզուին և լեզուին յաջորդ դարուց՝ չկրնար ընդունել, թէ վիպասանաց հատակոտորք կրտսեր են քան զԹարգմանիչս։ «Թէ քո Տարայի որկորն է՝ մեր Շիրակայ ամբարքն չեն»։ «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան»։ «Արտաւազդայ ոչ գտեալ, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղի ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է ի դաշտին որ անուանեալ կոչի Շարուրայ»։ «Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս, զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ»։ «Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ, և դև փոխանակ եդին»։ «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստեալ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի»։ «Մինչ դու գնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ»։ «Դու յորս հեծցիս յազատ ի վեր Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յազատ ի վեր ի Մասիս․ անդ կացցես և զլոյս մի տեսցես»։ «Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի և զառաւօտն Նաւասարդի, զվազել եղանց և զվազել եղջերուաց․ մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք»։—այս ամենայն հատակոտորք և սոցին նմանք, թէև սակաւք՝ ունին Թարգմանչաց լեզուին տիպը, և չեն և չկարեն լինել ո՛չ Խորենացւոյն և ոչ ուրիշ որևիցէ յետին դրչի գործ։ Այս են աւասիկ մնացորդք մեր հնագոյն մատենագրութեան, որոյ գալն յայս չափ և ի պայման՝ անհնար էր առանց գրոյ։ Զայներ յօդելու կարողութիւնը, որ մարդուն միայն տրուած է, և որում միայն կ'ընծայուի ըստ արդի լեզուագիտաց (Հովլաք, Լեզուագ. էջ 37) լեզուի ծագումը՝ ունի ընդ իւր կից գրոյ և դպրութեան հարկը, քանզի այսպէս միայն կարէ լեզուն կալ, զարգանալ և աճել․ այս հարկէն դուրս առանձնաշնորհութիւն չենք կրնար խորհել մեր լեզուին համար՝ տեսնելով զնա այնպէս կատարեալ և բարգաւաճ ի վաղուց։ Արդարև առանց գրոյ և դպրութեան չէր մարթ հայ լեզուին հասանել յայն չափ՝ յորում կը գտնենք զնա իսկ և իսկ ի սկզբան գիւտի Մեսրոպեան նշանագրաց։ Զիք տարակոյս, թէ Սահակ և Մեսրոպ և աշակերտք նոցա ոչ թէ հնարեցին լեզուն, այլ գտան․

ուր. ոչ միայն յընտանեկան խօսս կամ ի հասարակաց լեզուին, այլ մանաւանդ յերգս վիպասանաց, որ կը թուի թէ էին մի միայն գըրաւոր երկք ժամանակին։ Ինչպէս դժուարին է մեզ գիտել, թէ— քանզի գրեթէ իսպառ կը լռէ պատմութիւնն—ինչ և որպիսի էր այն գիրն՝ նոյնպէս և առաւել դժուարին է կարծել՝ թէ այսպիսի բազմարուեստ լեզու որպիսի է Հայերէնն՝ իբրև դուստր նախալեզուի մը ինքնին զարգանալով եկած է բերանով ժողովրդեան, առանց մասնաւոր աշխատութեան դաս մը մարդոց, կամ թէ է լոկ գաւառաբարբառներու հաւաքածոյ։ Մեր տեսութեան հաւանականութիւնը ցուցնելու համար հարկ չէ ամենևին իջնել մասնաւոր խնդիրներու լեզուին սկզբան և յօրինման եղանակին վրայ, խնդիրներ՝ որ գէթ առայժմ անլուծելի են։ Լուծման ամէն փորձ ազատ է այսպիսի մթութեանց մէջ։

**25.** Մնացորդք մեր հնագոյն լեզուին են այն սակաւք՝ զորս բերինք. բայց Հայերէն ոսկեղինիկ լեզուին կատարեալ ճաշակը կու տան մեզ թարգմանչաց գործերն, որոց լեզուն, մի ըստ էութեան իբրև անխառն և բուն Հայերէն՝ կ'ընծայեցունէ չորս ուրոյն ոճ, որ այնպէս կը ճանաչին և կ'որոշուին իրարմէ՝ ինչպէս ճարտարապետական ոճք, Դորացին և Բիւզանդեանն, Արուայիկն (Արաբականն) և Գոթացին։ Զառաջին ոճն, արու, ջղոտ, բնական, գեղեցիկ՝ առանց սեթևեթի, առատ՝ առանց գեղխութեան, յանկ առ ամենայն նիւթ, լուրջ վարդապետականէն մինչև ի զուարթ վիպասանականն, դիւրին ի նմանել՝ կու տան մեզ թարգմանութիւնք գրեթէ ամբողջ Հին և Նոր Կտակարանաց (բաց ի գրոց Յայտնութեան, որ յետին ժամանակի թարգմանութիւն է սորին լեզուաւ), մեկնութեան Ոսկեբերանի ի Մատթէոս, ի Թուղթսն Պօղոսի, ի գիրս Ծնընդոց և Եսայեայ, ճառից Սեբերիանոսի, Կիւրղի Աղեքսանդրացւոյ մեկնութեան Ծննդոց և Դատաւորաց, Բարսղի մեկնութեան վեցօրէից, Քրոնիկոնին Եւսեբեայ, Կանոնաց յանուն Ս. Սահակայ ի կանոնագիրս, և այլ մնացորդաց՝ ինչ որ կը գտնուին ուրեք ուրեք, ինչպէս ի Հարանց վարս և այլուր։ Այս ոճով է որ Հայերէնն իբրև մատենագրական լեզու կը մերձենայ և կը հաւասարի իսկ Հին յոյն և լատին և արդի եւրոպական լեզուաց։ Զերկրորդ ոճն, մեղմ, հանդարտ և քաղցր՝ կու տան մեզ Կիւրղի Երուսաղեմացւոյ Կոչումն ընծայութեան, Եւագր Պոնտացի, որ դեռ ի լոյս ընծայուած չէ, առաջին ԺԳ. ճառք մեկնութեան Ոսկեբերանի ի Յովհաննէս. վերջինս այս կը մերձենայ բազում ուրեք առատութեամբն չորրորդ ոճոյ։ Երրորդ ոճոյ, որ մեղմութեամբն և քաղցրութեամբ կը մերձենայ երկրորդին՝ օրինակ են թարգմանութիւնք գործոց ասորի

Հարց, Եփրեմի և Զգօն անուանեալ գրոց, որ կ'ընծայի Յակոբայ Մծբնացւոյն, Թարգմանութիւն Եւսեբեայ Եկեղեցական պատմութեան։ Այս ոճ, նշանաւոր հանդերձ պարզութեամբն և քաղցրութեամբ՝ ունի առանձինն ինչ, որ թերևս արդիւնք է դաշնակաւոր խեցբեկ կարգին *սիրիաք* կոչուած քրիստոնէական ասորերէնին։ Չորրորդ ոճն, զոր յիրաւի է կոչել պերճ, արևելեան ատենական, թէպէտ անչափ յորդութեամբն և անկանոն դարձուածներուն համար օտար արդի ճաշակի, սակայն հոյակապ և սքանչելի, և իբրև գանձարան իմն անսպառ նիւթոյ հայերէնին՝ կը մատուցանէ մեզ նպաստ մեծ յուսումն հայ լեզուին։ Այս ոճոյ օրինակ են Ագաթանգեղոս, Կորիւն, Բուզանդ և մեծ մասն անկանոն գրոց հին Կտակարանին, ինչպէս Յուդթայ, Իմաստութեան և երից Մակաբայեցւոց։

Հարազատ հայերէնի հոյակապ մնացորդաց մէջ, որ գործ են համակ առաջնոյ կիսոյ Ե. դարուն՝ բարձր ի գլուխ կը պարծի մատեան սքանչելւոյն Եզնկայ։ Լեզուն Եզնկայ, որ զհանգամանս առաջին և երկրորդ ոճոյ միանգամայն ունի՝ կ'ընծայեցունէ հայ լեզուին տիպը կատարեալ՝ քան զոր չենք կրնար մտածել հայ լեզուն իւր բոլոր լրութեամբն առնլով։ Այս նիւթոյ վրայ արժան կը համարինք հոս բերել զյառաջաբան «Քաղուածոյք ի Թարգմանութեանց նախնեաց» անուն մատենկան, որ Վեննայի Մխիթարեանց մամլէն ի լոյս ընծայուած է։—«Առանց իրիք երկմտութեան է, թէ վասն հայերէն լեզուի ամենայն գեղեցկութեան, յստակութեան և մեծութեան աղբիւր են մատեանք առաջին կիսոյ հինգերորդ դարուն կամ բուն ոսկեղէն դարուն մերոյ։ Սակայն և այնր ես ծաղկեալ ժամանակի մատեանք, թէպէտ հաւասարք գեղեցկութեամբ, պատուով և ճոխութեամբ (հեղինակութեամբ, իշխանութեամբ)՝ սակայն այլ և այլ իմն նկարագիրս յինքեանս երևեցուցանեն, զորս ի դէպ է ի չորս իմն դասս աստէն ամփոփել ըստ իւրաքանչիւր սեպհական բանից կամ ոճոյ։ Առաջին դաս (որպէս Եզնիկ, Ս. Սահակ ի Կանոնագիրս, Ոսկեբ. մեկն. Մատթէի, Թղթոց Պաւղոսի, Եսայեայ, Ծննդոց, Եւսեբեայ Քրոնիկոն, Սեբերիանոս, Կիւրղի Աղեքս. մեկնութիւն Ծննդոց, Դատաւորաց, Թուղթք Պաւղոսի ի ս. Գիրս և այլք։ —Մեծ մասն ս. Գրոց, որպէս հինգ գիրք Մովսիսի, Թագաւորութիւնք, Մարգարէութիւնք, Աւետարանք՝ ի սմին կարգէ են, միայն առաւել պարզութեան կերպարանս ունին, իսկ մնացեալքն, որպէս Եսթեր, Յուդիթ, Մակաբայեցիք, Թուղթք Պետրոսի՝ մասամբ իւիք յերկրորդ և ի չորրորդ դաս անդր հային) է ընդհանրականագոյն իմն քան զամենայն և դիպող ոճ ի հայերէն մատենագրութեան բուն ոս-

կի դարու՝ վասն կանոնաւորն ընթացից, վասն ճիշդ բանից, առատ և ազգի ազգի ասացուածոյն և անուանց, վասն պարզն զարդուց և զօրեղ դարձուածոյ, որովք է պատեհ ի զօրաւոր ճարտարխօսութիւն, ի գեղեցիկ պատմագրութիւն, ի լուսաւոր փիլիսոփայութիւն և ամենայն իսկ ճշգագոյն մտածութիւն։ Այլ սմին հակառակ՝ այլ ևս երեքին դասք ոճոյ բուն ոսկի դարուն, թէպէտև ամենայն ուրեք և ամենայն մասամբք համգիտապատիւք են առաջնումն այնմիկ՝ սակայն աստիճանաւ իմն հեռանան տակաւ ի համգամանաց անտի, որովք առաջին այն ոճն յարմարագոյն ի մատենագրութիւն է, և դիւրաւ թեքի և խոնարհի յամենայն։ Այսպէս մի դաս (որպէս Ագաթանգեղոս, Բուզանդ, Կորիւն) յերեցունց աստի իբրև դիւանական իմն կամ արքունական բարձրագոյն հրամանաց բարբառ հնչեցուցանէ, և միւս ևս դաս (որպէս Ս. Եփրեմայ մեկնութիւնք, Եւսեբայ Կեսարացւոյ Եկեղեցական պատմութիւն) բանաստեղծական իմն լեզուաւ բարբառի, ամենևին հատեալ ի զարդ և ի ծաղկս. իսկ չորրորդն (որպէս Կոչումն ընծայութեան Կիւրղի Երուսաղեմ., Ոսկ. Մեկն. Յովհաննու յառաջին 13 ճառսն, Եւագր Պոնտացի) մեղմ, հանդարտ և խաղցրախօս և կանոնաւոր քան զերկու առաջինսն, սակայն և ոչ իբրև զառաջինն զայն դաս, յոր Եզնիկն և մեծ մասն մատենագրաց ժամանակին մատենագրեցին»։

**26.** Գանք այժմ մնացորդաց երկրորդ կիսուն Ե. դարուն։ Մեր լեզուն ունի գրուածներ, որ կ'ընծայուին Ե. դարուն երկրորդ կիսուն մէջ կամ անմիջապէս զկնի Թարգմանչաց ապրող ոմանց, որպիսի են Խորենացին, Եղիշէ, Փարպեցին, Մամբրէ և Դաւիթ Անյաղթ, Գիւտ և Մանդակունին, որոց անձին, ժամանակին և գրոց վրայ որ նոցա կ'ընծայուին՝ չունինք միևնոյն ստուգութիւնը, ինչպէս պիտի տեսնենք՝ խօսելով զնոցանէ մի առ մի։ Գիրք մը հրապէս ըլլալը... 

նկարագիրը։ Բայց այսպէս չէ Խորենացւոյն, Եղիշէի, Փարպեցւոյն,
Գիւտայ, Մանդակունւոյն, Մամբրէի և Դաւթի Անյաղթի համար,
որ կ'ընծայուին մեզ իբրև անձինք երկրորդ կիսոյ Ե. դարուն, և
որոց իւրաքանչիւրին կը տրուին այլևայլ մատենագրութիւնք։ Գիւ-
տայ և Մանդակունւոյն համար ունինք վկայութիւն՝ թէ ապրե-
ցան Ե. դարուն երկրորդ կիսուն մէջ, նախ՝ վասն զի կը գտնենք
զնոսա 475—487 ի շարի անուանց կաթողիկոսաց, որ է վաւերական
յիշատակարան. երկրորդ՝ կը յիշուին իբրև նոյնպիսիք ի պատմու-
թեան Փարպեցւոյն։ Բայց գործք որ կ'ընծայուին նոցա՝ ո՛չ յիշուած
են ժամանակակից աղբերէ, և ոչ ներքին հանգամանք այն գործոց
կու տան մեզ ստոյգ վկայութիւն՝ թէ այն գործք են նոցա հարա-
զատ մատենագրութիւն։ Գիւտայ ընծայուած նամակն, որով որպէս
թէ Գիւտ կը խնդրէ Դաւթէ Անյաղթէ հռչակաւոր Բարձրացուցէքը՝
է գործ իմաստակի, անհեգեդ և անպիտան ոճով, և ոչ այլ ինչ է՝
եթէ ոչ անմիտ խաղ նմանաձայն բառերու.—«Բացայայտեալ բոց
բարետրապէս բարուց». «խնդրելի խուզողացս խօսել խորհրդով ի
խաչն». «փրկելոցս փրկաւէտ փայտին փառաց փեսայի». «պաշտելի և
պատուելի, պանծալի ըստ Պաւղոսի պարծել ի պատուական պսակն
Յիսուսի», և ստորագրութիւնը—«Գիւտ գագաշեալ և գերեզման ի
գարշապար»։ Իսկ Մանդակունւոյն ընծայեալ ճառք, թէպէտ չէ
ստուգիւ յայտ, թէ են նորա մտաց ծնունդ, քանզի ընտիրքն այն
ճառերէն ունին յոյն և ասորի հարց ոճը՝ ըստ լեզուին գոնէ, թէև
ոչ հաւասար լեզուին Թարգմանութեանց Ոսկեբերանի և Կիւրղի՝
են, բայց ի սակաւուց՝ ոչ շատ օտար հինգերորդ դարու ճաշակէն,
ուստի և կարեն լինել նորին իսկ Մանդակունւոյ, ժամանակակցի,
թերևս և գործակցի Թարգմանչաց։ Սա ևս չէ անհաւանական, թէ
մեծ մասն ճառից որ հասած են մեզ յանուն Մանդակունւոյն՝ կրած
են տգէտներէ աղաւաղութիւն, առանց որոյ անտարակոյս աւելի
վստահութեամբ պիտի ընդունէինք զՄանդակունին աշակերտակից
Թարգմանչաց, և զգործս ընծայեալս նմա՝ արդարև արժանի նմա։
Բան մը սակայն կը պղտորէ զմեզ. ճառը զոր կը գտնենք ի վախ-
ճանի Պատմութեան Փարպեցւոյն, իբրև խօսուած ի Մանդակու-
նւոյն՝ ոչ լեզուաւ և ոչ այլովք հանգամանօք է արժանի գործ ա-
շակերտի Թարգմանչաց։

Խորենացւոյն, Եղիշէի և Փարպեցւոյն թէ անձին և թէ գոր-
ծոց համար որ նոցա կ'ընծայուին՝ չունինք ամենևին ժամանակա-
կից վկայութիւն. ինչ որ գիտենք զոցանէ՝ է յետին, ԺԱ., ԺԲ, ԺԳ.
դարուց հեղինակներէ, որպիսի են Ասողիկ, Սամուէլ, Կիրակոս, Տնոր-
հալին, Յայսմաւուրք, որոց վկայութիւնը չունի, ըստ սկզբան ա-

ռողջ քննադատութեան, ճշմարիտ պատմական վկայութեան բնութիւն։ Արդարև Փարպեցին ի Թղթին կը յիշէ Մովսէս ումն Փիլիսոփոս, զոր կը դնէ յանիրաւի հալածեալ ազգէն, մինչև հանել զոսկերս նորա գերեզմանէն և ընկենուլ ի գետ.—«Երանելի փիլիսոփոսն Մովսէս, որ արդարև մինչդեռ էր ի մարմնի, ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից, ո՞չ ապաքէն ի տեղւոջէ ի տեղի աբեղեանդ Հայոց հալածական արարին։ Ո՞չ զլուսաւորիչն և զոգիտահալած զգրեանն նորա առ անգիտութեան *փաթաղիկէս* կոչէին, և այլ բազում ինչ իրօք թշնամանեալ՝ յետոյ ապա յաղագս այլոց ամօթոյ գլխաբէական զեպիսկոպոսութիւնս (~) նման դեղոց մահու արբուցեալ որբոյն՝ Հեղձուցին։ Որոյ ի ժամ վախճանին զինչպիսի ահաւոր նզովս գրով ի վերայ գլխաւորաց քահանայութեանդ ասացեալ է՝ ձեզէն իսկ գիտէք տեղեկացեալք։... Զոսկերսն ի գերեզմանէն հանել տալին և ի գետ արկանել»։ Սակայն չէ հաւանական կարծել, թէ այս Մովսէս, փիլիսոփոս ըստ Փարպեցւոյն՝ էր Հայոց Պատմութեան կարծեցեալ հեղինակն, որ կոչուած է Մովսէս Խորենացի քերթողահայր։ Մեր մեծագոյն, թերևս և հնագոյն վկայութիւնն յիշեալ երեք մատենագրաց անձին համար՝ նոցա գրոց ճակատն է— «Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց». «Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին». «Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն Հայոց», վկայութիւն՝ որ չունի ինքնին կատարեալ ապացուցի զօրութիւն, քանզի այն խորագիրք կամ ճակատք կարեն ի յետնոց ևս լինել։ Թողլով այս անձանց առանձին պարագաներն, երև յետին հակասական աղբիւրներէ, զորօրինակ թէ Մովսէս էր քեռորդի Մեսրոպայ, եղբայր Մամբրէի, կամ ատենադպիր Սահակայ. Եղիշէ էր քարտուղար մեծին Վարդանայ, ապա եպիսկոպոս Ամատունեաց, ապա խոտաճարակ մերթ ի լերինս Մոկաց, մերթ ի Ռշտունիս՝—արժան կը համարինք միայն յիշել, թէ այս երեք պատմութիւնք կը համարուին գրուած ի խնդրոյ—առաջինն՝ Սահակայ ասպետի Բագրատունւոյ, երկրորդն՝ Դաւթի ուրումն երիցու Մամիկոնէնի, երրորդն՝ Վահանայ մարզպանի։ Մեր արդի պատմական տեղեկութիւնք այս երեք մատենագրաց անձին վրայ չեն տար մեզ քան զայս աւելի լոյս. ուստի կը մնայ մեզ դարձունել զհայեցուած մեր ներքին հանգամանաց այն գործերուն որ նոցա կ'ընծայուին։ Սկսինք ի Խորենացւոյն։

**27.** Նայելով ժամանակին յորում կը դադրի պատմութիւն Խորենացւոյն, այն է մահն Սահակայ և Մեսրոպայ (440, 441), և վկայութեան նորա, թէ ի գրելն զպատմութիւն իւր էր ծերացեալ՝ հարկ է դնել զնա հասակակից Սահակայ և Մեսրոպայ, ուստի և

ժամանակակից վերջին քսան կամ երեսուն ամաց Դ. դարուն. ամէն
հակառակ, ըստ ժամանակին Սահակայ Բագրատունւոյ († 481),
որոյ հրամանաւ կ'ըսուի թէ գրեց՝ հարկ է դնել զնա ապրած մին-
չև ի վերջ կողս Ե. դարուն, և յայնժամ կ'ելլէ սա դժուարութիւնը,
թէ ընդէր ոչ ինքն կը յիշէ Վարդանանց պատերազմը, և ոչ Փար-
պեցին զնա։

Այս և ուրիշ պատճառներ կու տան իրաւամբ կասկածել, թէ
Խորենացւոյ անուամբ հռչակեալ Պատմութիւնն յետոյ է քան զԵ.
դար, և գործ ճարտար խաբեբայի ուրումն, որ ստէպ կը մատնէ զինքն
պատմական անտեղութիւններով, ցուցնելով մեզ աննշան, թերևս
և սխտակ աղբիւրներ, որպէս են Մարիբաս, Ողիւպ, Բարդածան,
Խոռոհբուտ և սոցին նմանք։ Մեր դատաստանն զԽորենացւոյն աս
և այլուր այնչափ աւելի զարմանալի պիտի թուի շատերուն՝ որչափ
մեծ համարումն վայելած է այս անունն իբրև նշանաւոր ոք թող
ուրիշ մասին՝ մանաւանդ իբրև հայր մեր հնագոյն պատմութեան։
Արդարև Խորենացւոյն Պատմութիւնն է որ կը կարծուի տալ մեզ
հայ ազգին ծագումը՝ ցուցնելով մեզ զՀայկ, նահապետ ազգին՝ իբ-
րև մին Նոյայ որդւոյն Յաբեթի սերունդէն և աշտարակաշինու-
թեան հսկաներէն յետ կործանման աշտարակին և ցրուելոյ գլխա-
ւորաց այն շինութեան։ Այսու տուած կը համարուի մեզ Խորենա-
ցին նաև հայ լեզուին ծագումն՝ իբրև միոյ մայր լեզուներէն, որ
այն առթիւ ելան լեզուաց խառնակութենէն։

Թողլով աշտարակաշինութեան և լեզուաց խառնակութեան ա-
ւանդութիւններն, որ հաւատալեաց կարգէն են և լուրջ գրուած-
ներու մէջ հազիւ և պայմանաւ միայն կրնան մտնել՝ հայ լեզուն
կրնայ իւր կազմութեան տարրներէն միոյ և փոքրագոյն մասին
համար գէթ համարուիլ մայր, կամ լաւ ևս ասել՝ անյիշատակ հին-
իսկ մնացեալ և մեծագոյն մասն լեզուին է արդիւնք արուեստի
կամ ճարտարութեան. Թողլով ասեմք լեզուին կէտը՝ Հայկ և Հայ
անուանց համար համառօտիւ և հարևանցի միայն ըսենք, թէ
Հայկ իբրև անձն և նահապետ ազգին իբրև ստոյգ չկրնար ըն-
դունուիլ անաչառ դատողութենէ։ Հայկ անունն ի Խորենացւոյն
առնուած՝ պատմական մտօք չկրնար առնուիլ։ Արդարև զանուն
զայս յառաջ քան զԽորենացին Թարգմանիչք մեր կը յիշեն ի Թարգ-
մանութեան Գրոյն երկիցս։ Սակայն յայտնի է, թէ Հայկ է սեմա-
կան աստեղագիտութեան Այուգն, որ տրուած է Կասիոպէ անուն
համաստեղութեան, զոր Թարգմանիչք մեր կը շփոթեն թեթև
սխալմամբ Օրիոն համաստեղութեան հետ, և չկայ և ոչ դոյզն

հաւանականութիւն հաւատալոյ, թէ Սահակայ Հայկն է նոյն ընդ
Հայկայ Խորենեան Պատմութեան։

Իսկ զծագումն Հայ անուան, որ արդարեւ ի վաղուց կը թուի
տրուած ազգին, բայց ոչ յառաջ քան զանունն Արարատ, և ազգէն
միայն (քանզի օտարներու անծանօթ է Հայ անունն իբրեւ համա-
նուն Արմէն անուան)՝ չենք կրնար նոյնչափ ստուգիւ ցուցնել։ Միայն
ստոյգ է թէ Հայ անունն չէ այնչափ հին որչափ Արմէնն։ Արարատ
և Արմէն անուններէն, որովք ծանօթ են ազգ և երկիր մեր օտա-
րաց, առաջինն, հնագոյն՝ յիշուած է յեբրայական աւանդութեան,
երկրորդն՝ Պարսից (Դարեհի) ժամանակէն, ուստի և ճանչցուած ի
Յունաց։ Միայն եթէ ներելի է յայսմ ևս հաւանական թելադրութիւն
մը ընել՝ Հայ անունն է սեմական լեզուին *հայ*—կենդանի բառն, զոր
ազգը տուած է ինքեան նմանութեամբ իւր դրացի ցեղին *զէնստ*
անուան, որ կը նշանակէ նոյնպէս կենդանի։ Մեր մեկնութիւնն
*Հայկ* անուան առ այժմ ստուգագոյն կը թուի մեզ՝ քան զմեկնու-
թիւնն զոր տուինք Հայ անուան։

Գալով Խորենացւոյն հայերէնին՝ կ՚ըսենք թէ թէպէտ Խորե-
նացին շեղեալ Ե. դարու հայերէնէն, կ՚ստեղծէ նոր իմն հայերէն,
որով կը հորդէ ճանապարհ մեր դպրութեան միջին դարուն՝ գեր ի
վերոյ է սակայն (բաց ի մասանց ինչ) քան զազնուագոյն գրիչս յետ
թարգմանչաց, զԵղիշէ և զՓարպեցին, մին՝ բառական յստակու-
թեամբն հանդերձ՝ հետեւակ, և միւսն՝ հանդերձ ընտանեկան լեզ-
ուի զուարթութեամբ՝ սակաւ մի գռեհիկ։ Խորենացւոյն լեզուն,
իւր բոլոր անհարթութիւններովն հանդերձ, մանաւանդ անխտրու-
թեամբն և մթութեամբ՝ ունի տակաւին բազում ուրեք բարձրու-
թիւն իմն և ազնուութիւն, մինչև ինքնին բաւական էր երեւցունել
զհայերէնն ի կարգի ազնուագոյն լեզուաց՝ եթէ չգոյր ևս նախորդ
դպրութիւն մի քան զնորայն ազնուագոյն։ Խորենացւով ստեղ-
ծուած դպրութեան խոտիրն իւր նախորդներէն յայսմ է, որ չունի
այն «առանց որոյ ոչն», sine qua non, որ կը յորդորէ լեզուն լինել
օրինակ անստգիւտ, արդի բառով դասական մատենագրութեան։

Հոս երկու դժուարութիւն կ՚ելլէ մեր առջև Խորենացւոյն
Պատմութեան վրայ։ Առաջինն է լռութիւն Փարպեցւոյն։ Փարպե-
ցին, որ գրեթէ ամէն կանխագոյն գրուած պատմութիւն—Ագա-
թանգեղոս, Բուզանդ, Կորիւն—յանուանէ կը յիշէ, զիւր դատաս-
տան ևս յաւելլով իւրաքանչիւրին վրայ՝ զԽորենացին կ՚անցնի լռու-
թեամբ, թէպէտ Փարպեցին պարտէր լինել ծանօթ այն գործին,
եթէ էր այն արդարև գրուած ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ,
գործակցին Վահանայ, բարեկամին և պաշտպանի Փարպեցւոյն։ Կայ

նաև ուրիշ կէտ արժանի դիտողութեան: Փարպեցին ունի հատուածներ, որ գրեթէ բառ առ բառ կան առ Խորենացւոյն: Եթէ դնենք թէ Փարպեցին քաղած է այն հատուածները ի Խորենացւոյն՝ կը հետևի թէ գիտէր նա զԽորենացին. ընդէ՞ր ուրեմն կ'անցնի լռութեամբ:

Նորայր Բուզանդացի եղաւ Փարպեցւոյն այս զարմանալի լռութիւնն առաջին անգամ հրապարակաւ յիշող, որ և կը համարի լուծել հատուածներուն նոյնութեան պատճառն ըսելով, թէ Փարպեցին կ'առնու զնոսա ոչ այն մատենէն որ հասած է առ մեզ յանուն Խորենացւոյն, այլ ուրիշ հասարակաց աղբերէ. որմէ առած է նաև այն մատեանն (Խորենացին): Բայց այսու չվերնար դժուարութիւնն. քանզի խնդիրը բուն Փարպեցւոյն լռութեան վրայ է, ո՛չ թէ հատուածներուն աղբեր: Հատուածներուն համար կրնար ըսուիլ նաև, թէ հեղինակ նոցա է ինքն Փարպեցին (թէպէտ այս ևս ճշմարիտ չէ), և ի նմանէ առնուած և մուծուած են նոքա ի Խորենացին, մանաւանդ եթէ դնենք, ինչպէս հարկ է դնել ըստ մեզ՝ թէ Խորենացւոյն Պատմութիւնն է յետին գործ և խառն, այսինքն ոչ միօրինակ ըստ լեզուին: Այս յայտնի է մանաւանդ առ Սահակ ուղղեալ նամակէն, որոյ թէ ոճը և թէ բառերն կը ցուցնեն, թէ յետնոյ ուրուք յաւելուած է այն թուղթը. զնոյն իմա և Գ. դըպրութեան ԿԲ. գլխոյն համար: Զիարդ և իցէ՝ հատուածներուն խնդրոյն լուծումը չբառնար բուն դժուարութիւնը, որ է լռութիւն Փարպեցւոյն: Ուստի կ'ըսենք դարձեալ. Փարպեցին ի՞նչպէս կրնար զանց առնել յիշել այնպիսի գործ մի՝ զոր չէր մարթ նմա չգիտել: Ապա բանաւոր կը թուի դնել, թէ Մովսէսի Խորենացւոյ անուամբ Հայոց պատմութիւն անծանօթ էր Փարպեցւոյն:

Երկրորդ դժուարութիւնն այն է, թէ Խորենացին գրեց իւր պատմութիւնն ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ, որ էր մարզպան առ Վահանաւ և զօրապետ քաջ ի պատերազմունս նորա, որ և մեռաւ ի կռուի իբր 482-ին: Արդ կ'ըսենք, թէ Խորենացին չէր կրնար գրել իւր Պատմութիւնն ի խնդրոյ այս Սահակայ, ապա թէ ոչ՝ հարկ է դնել, թէ կամ Խորենացին ապրեցաւ յետոյ քան զպատերազմն Վարդանանց—և յայնժամ պիտի հարցուի, թէ ընդէ՞ր չյիշեր զպատերազմն Վարդանանց և այլ սոյն նման կարևոր անցեր— և կամ թէ Սահակ Բագրատունի, խնդրելու համար ի Խորենացւոյն Հայոց պատմութիւն մը՝ պարտէր լինել գոնէ 20 կամ 25-ամեայ ի մահուան մեծին Սահակայ (440), իբր գոնէ 5 ամօք յառաջ քան զհաւանական մահ Խորենացւոյն ըստ իւր Պատմութեան: Եւ արդարև Սահակ ի խնդրելն ի Խորենացւոյն գրել զայն պատմութիւն՝

ըստ բանից նորին Խորենացւոյն էր մանուկ, այսինքն պատանի
խակ.—«Զինչ քեզ կորուստ թիւն առասպելք սուտք, կամ զինչ պէտք
անմիտ և անհանճար բանից յարմարանք (Պարսից)։... Այլ տացուք
զայսոսիկ մանկական քոյոց տիոց և անհասութեան խակութեանդ
լեալ տարփանք. վասնորոյ եղիցի և աստանօր լնուլ մեզ զփափաք
կամաց քոց» (Խոր. Յղգս. Բիւրասպի Աժդահ.)։ Եւ յայնժամ հարկ
է դնել զՍահակ Բագրատունի (այս Սահակ Բագրատունի մարզպան՝
այլ է ի Սահակայ Բագրատունւոյ ակնալեալ, սպարապետէն Խոսրո-
վու վերջնոյ—Խոր. Գ. ԽԱ., ԽԳ, ԽԴ—ԽԶ, ԾԱ.) ի մահուան իւ-
րում (482), աւելի քան 64-ամեայ. դժուարին ի հաւատալ, թէ 65
կամ 67-ամեայ ծերունի մը այնպիսի քաջութեամբ կը կռուէր Վա-
հանայ պատերազմներուն մէջ, մանաւանդ այն դարուն պատերազմ-
ներուն, որ ձեռնմարտութիւն էին մանաւանդ քան ճակատ։ Բայց
թողունք այս կէտը. եթէ Սահակ Բագրատունի մարզպան խնդրեց
ի Խորենացւոյն գրել պատմութիւն Հայոց 440-ին և կամ ամօք ինչ
յառաջ կամ յետոյ՝ կը յիշէին անտարակոյս այն պատմութիւնը հեղի-
նակք որ գրեցին այն դարուն, ինչպէս ըսինք՝ Փարպեցի, նաև
կորիւն, որ շատ անգամ առիթ ունենալով յիշել զԽորենացին՝ եր-
բէք չէ յիշեր։

Ըսինք թէ բանաւոր է դնել, թէ Մովսիսի Խորենացւոյ ան-
ւամբ պատմութիւն անծանօթ էր Փարպեցւոյն. ըստ մեզ աւելի
բանաւոր է, թէ բնաւ եղած չէ այնպիսի մատեան ի Հինգերորդ
դարու։ Ոչ միայն Մովսիսի Խորենացւոյ անուամբ պատմութիւն,
այլև ոչ Մովսէս Խորենացի անուն ոք կայ յիշուած ի Ե. դարու,
բայց միայն այն Պատմութեան Ա.. գրքութեան առաջին գլխոյն
խորագրին մէջ—«Մովսիսի Խորենացւոյ յաղագս մերոյս յիսկզբանն
լոյսմ բանիցս Սահակայ Բագրատունւոյ խնդրալ». բայց այս յիշատա-
կութիւն ևս չկրնար համարուիլ երբև ժամանակակից վկայութիւն
յայլմէ, թէ կար Մովսէս Խորենացի ոմն ի Ե. դարու, հեղինակ այն
Պատմութեան, և թէ Սահակ Բագրատունի ստուգիւ խնդրած է
զայն ի նմանէ։ Մենք եթէ ոչ բոլորովին ճշմարիտ՝ գէթ մեծապէս
հաւանական կը համարինք մտերս հռչակուած կարծիքը, թէ Խո-
րենացին, ո՛ ոք և է՝ չէ մատենագիր Ե. դարու, այլ Է-ին։ (Խորե-
նացւոյն անձին վրայ ևս մեր տարակոյսն արդէն յայտնեցինք)։

Բաց Հայոց Պատմութենէ, զոր, առ ի չգոյէ զօրաւորագոյն
վկայութեան, ի հաւատս գործին տիտղոսին կամ ճակատուն ըն-
դունեցանք երբև մատենագրութիւն Մովսէս Խորենացի անուն նշա-
նաւոր ուրումն՝ կ'ընծայուին նոյն Մովսիսի ուրիշ մատենագրու-
թիւններ. Թուղթ մի առ Սահակ ոմն Արծրունի հանդերձ պատմու-

թեամբ պատկերի Կուսին ի Հոգեաց վանս, Պատմութիւն Հռիփսիմեանց, Ճառք երկու, մին՝ ի Հռիփսիմեանս, և միւսն՝ Յաղագս Վարդավառի, Գիրք Պիտոյից և Աշխարհացոյց։ Մենք այս գործերուն և ոչ մին կրնանք ընծայել Խորենացւոյն։ Եթէ Խորենացւով պարտինք իմանալ Պատմութեան հեղինակը՝ այս պատմութիւնն այնպէս կը տարբերի լեզուաւ և ոճով միւսներէն, որ եթէ մին ի նոցանէ է Խորենացւոյն իբրև հեղինակի այն Պատմութեան՝ միւսները չեն նորա։ Դարձեալ՝ այն գործերէն ոմանք մանաւանդ են անվայել Խորենացւոյն։ Պատկերին պատմութիւնը, որ գովութեամբ կը յիշատակուի յոմանց՝ է գործ անհեթեթ, որ նախատինս մանաւանդ քան պատիւ կը բերէ հեղինակին, թէպէտ ունեցած է զարմացողներ արդի բանասէրներէն իսկ։

Հայկական հնախօսութեան գիտութեամբ պատկառելին Ինճիճեան, որոյ մեծամեծ գործերն յայտնի են Հայաստանի աշխարհագրութեան վրայ, ի Ստորագրութեան հին Հայաստանեայց բերելով ընդարձակ յօդուած մի ի թղթոյն առ Սահակ Արծրունի, ուր յիշուած են տեղիք ինչ երկրին Անձևացեաց՝ կը յաւելու. «Ընդարձակ գրեցաք զբանս Խորենացւոյն որ ոչ սակաւ տեղեկութիւն տայ զդրից երկրին Անձևացեաց» (Ինճ. Ստոր. հին Հյաս. 198, 199)։ Արդարև ի գրուածէն, որոյ տիտղոսն է «Թուղթ Սահակայ Արծրունեաց իշխանի առ երանելի վարդապետն Մովսէս Խորենացի», հանդերձ պատասխանւով այս վերջնոյն՝ կ'առնուի ինչ ինչ տեղեկութիւն զդրից երկրին Անձևացեաց, սակայն գրուածն չունի այն պատմական կարևորութիւնն, զոր կը թուի տալ նմա Ինճիճեան և այլք ըստ նմանէ ի միաբանակցաց նորա։ Որպէս զի տեսնուի, թէ ինչ պատմական յարգ կրնայ ընծայուիլ այն առասպելական պատմութեան, որ ինչպէս ըսինք նախատինք է մանաւանդ քան պատիւ հեղինակին՝ բերենք ընդարձակ հատուած մի, և յաւելունք ինչ որ կրնայ համարուիլ ի նմա հաւանականապէս պատմական։ Նպատակ թըղթոյն կը թուի թէ էր ցուցնել զերկիրն Անձևացեաց իբրև ասպարէզ առաքելութեան Բարթողիմէոսի, բայց հեղինակն ի հեռուստ կ'առնու զիւր նիւթ, այն է ի փոխմանէ Կուսին և ուրիշ պարագաներէ որ նորա կենաց կը վերաբերին։ Հեղինակ թղթոյն, յետ պատմելոյ բազում և այլանդակ սքանչելիս կատարեալ ի շնորհս Կուսին—զորօրինակ, թէ Հրեայք կամեցան անգամ մի այրել զտունն Մարիամու, բայց հուրն փոխանակ այրելոյ զտունն, այրեց Հրեաներէն եօթն այր, յորոց միջի էին Կայիափա և Աննա քահանայապետք, և թէ ուրիշ անգամ ի յարձակել Հրէից ամբոխի մեծաւ ի վերայ Մարեմայ և Յովհաննու առ եզերբ Յորդանանու՝ հրեշտակ

Աստուծոյ դրաւ զՄարիամ և զՅովհաննէս յայնկոյս գետոյն, և Հրեաներէն քսան հոգի կորոյս ի Յորդանան, և դարձեալ թէ Համբարձման օրը դիմելով բազմութիւն Հրէից քարերով Ձիթենեաց լեռը քարկոծել զՄարիամ՝ քարկոծեցին յինքեանց յիսուն մարդ,—յետ պատմելոյ, ասեմք, զայս այլանդակ սքանչելիս՝ կը յաւելու թէ Յովհաննէս աւետարանիչ իմանալով զմօտալուտ փոխումն Կուսին յաշխարհէս՝ կիւպարիս (նոճի) փայտի վրայ յորմէ շինուած էր Խաչափայտն՝ նկարեց զպատկեր Կուսին, և աղաչեց զնա՝ շնորհել այն պատկերին զօրութիւն բժշկելոյ զբորոտս։ Պատկերը կ՚ստանայ սքանչելագործ զօրութիւն։ Կոյսը կը ննջէ, և ի տանել առաքելոց զմարմին նորա ի գերեզման՝ կը կատարուին դարձեալ սքանչելիք.—Սոփոնիա անուն Հրէի մը բազուկն, ի կամել նորա արգելուլ զագաղը, զատուելով յարմկանէ՝ կը կախուի դագաղէն, և սքանչելեօք կը միանայ դարձեալ ընդ մարմնոյն. անթիւ մարդիկ ի Հրէից և ի հեթանոսաց կը դառնան, և բազում բորոտք և այլ ախտաժէտք կը բժշկուին։ Որովհետև Բարթողիմէոս առաքեալ գտնուած չէր ընդ այլ առաքեալս ի փոխման Կուսին՝ միւս առաքեալք ի մխիթարութիւն նորա կու տան նմա զայն պատկեր, զոր առնլով Բարթողիմէոս կու գայ ի Հայս, քանզի լսած էր, թէ Թադէոս առաքեալ սպանուած էր ի Սանատրկոյ, և անտի կ՚երթայ նախ յերկիրն Պարսից մինչև ի մայրաքաղաք նոցա Խորասան, ուր բռնելով զպատկերն ընդդէմ արեգական՝ կը խաւարեցունէ զճառագայթս նորա վեց ժամ, յամօթ և ի յանդիմանութիւն մոգուց արևապաշտից։ Բայց կը հաւատան և կը մկրտուին ութք միայն ի մոգուց, զորս առեալ Բարթողիմէոս կու գայ միւսանգամ ի Հայս, յերկիրն Անձևացեաց, կը հալածէ զդևս այն երկրին Դարբնաց քար կոչուած տեղէն, ինչպէս նաև Կանգուառ և Ագռաւուց քար կոչուած բերդերէն, կը կործանէ զպատկերն Անահտայ, կը հալածէ աստուածուհւոյն պաշտօնեաներն, որ կախարդական դեղեր կը շինէին և կը բաժնէին. ի պատիւ Կուսին կը շինէ եկեղեցի ուր կը դնէ պատկերը, կը շինէ նաև հիւղեր ի բնակութիւն կուսանաց սպասաւորաց եկեղեցւոյն, կոչելով զտեղին Հոգեաց վանս, և զեկեղեցին՝ Սուրբ Աստուածածին։ Սուրբն Գրիգոր, կը յաւելու պատմիչը, յետ իբր երեքհարիւր ամաց, գալով անդր յայցելութիւն պատկերի Կուսին՝ նորոգեց զեկեղեցին և վանքը։ Ահա բուն բանք թղթոյն.—«Սուրբ Կոյսն բազում չարչարանս կրեաց և վտանգս ի Կայիափայ, և հալածանս ի Հրէից։ Զի ոչ տային նմա գնալ ի գերեզմանն կալ աղօթս, կամ ի Գեթսեմանի յայտնապէս, կամ յայլ տեղիս տնօրինականս Փրկչին, բայց միայն գաղտնի։ Հալածեալ զեղբայր Տեառն

զՅակոբ՝ երթեալ հարին հուր տանն յորում կայր սրբուհին. և շրջապատեալ հուրն զՀրեայսն՝ կիզեաց արս եօթն և զԿայիափա և զԱննա և զՂևի քահանայապետս, ոչինչ վնասեալ տանն։ Եւ յաւուր մկրտութեան Տեառն խաժամուժ ամբոխ Հրէիցն գնացին ի Յորդանան ըմբռնել զՏիրամայրն և զՅովհաննէս. իսկ Հրեշտակ Աստուծոյ եդ զնոսա յայնկոյս գետոյն, և ի կամել անցանել Հրէիցն՝ արս քսան ի նոցանէ կորոյս Յորդանան։ Եւ յաւուր Համբարձման Տեառն ի լեառն Ձիթենեաց յախուռն քարամբք հասեալ Հրեայքն ի վերայ սրբուհւոյն՝ սատակեցին յինքեանց արս յիսուն քարավէժս։

«Իբրև հրաւիրեցաւ սրբուհին ի փոխումն առ որդին իւր՝ աւետարանիչն Յովհաննէս ի կիւպարիս փայտէ յորմէ էր կենսաբեր Խաչն՝ կերպաձևեաց զպատկեր Տիրամօրն։ Ի ժողովել աշակերտացն ի յղարկել զԱստուածամայրն իւրեանց՝... Յովհաննէս ընդ այլ առաքելսն աղաչէր զտիրամայրն՝ գնել զփայտեղէն անօթն ի վերայ աստուածատիպ երեսաց իւրոց, օրհնել զնա և խնդրել ի Տեառնէ... բառնալ նովաւ զբորոտութիւն, զի ախտ բորոտութեան մեծապէս ցասմամբ եռայր յերկրի, յԵրուսաղէմ առաւել ևս։.. Յայնժամ առեալ ամենօրհնեալ սրբուհւոյն զպատկերն նկարեալ ի ձեռս իւր, և տարածեալ զաստուածընկալ ձեռս իւր յերկինս՝ ասէ. Տէր Աստուած ամենակալ,.. խնդրեմ ի քէն, բարձ զախտ բորոտութեան ի մարդկանէ ՚ի ձեռն այսր նկարեալ փայտեղէն պատկերիս, զզօրութիւն Երրորդութեանդ տպաւորելով ի նմա ի ձեռն իմոյ աղաչանացս։ Եւ ասացեալ առաքելոցն զամէնն՝ նոյնժամայն կամար լուսեղէն եկաց ի վերայ սրբուհւոյն, և լոյս ամպեղէն խաչանման կաթեաց ի սուրբ պատկերն։ Եւ առեալ ՚առաքելոցն Պետրոսի և Պօղոսի զպատկերն ի ձեռաց սրբուհւոյն՝ երկրպագեցին ամենեքեան։ Իսկ յորժամ աւանդեաց զհոգին իւր անարատ Կոյսն ի ձեռս Տեառն՝ ամբոխ Հրէիցն յուզէր, և հասեալ ի վերայ առաքելոցն՝ կամէին յափշտակել զմարմին Կուսին, և հարան ամենեքեան կուրութեամբ։ Իսկ այր ումն անուն Սոփոնիա բուռն եհար զմահճացն, և մնացին ձեռն Սոփոնեայ կախեալ յարմկացն։ Լայր և աղաչէր այրն, եղուկ զինքն կոչելով մինչև ի գերեզմանն։ Ասէ Պետրոս. Ով մոլորեալ Հրեայք, մինչև ցե՞րբ կայք մոլորեալ և յամառեալ. զի՞որդ ոչ զղջանայք յանդգեղջ սիրտս ձեր, այլ կայք յետս հետեւալք որպէս հայրն ձեր սատանայ։ Եւ լալիւն մեծ էր Հրէիցն։ Ասէ Պաւղոս. Դարձարուք առ Տէր և խոստովանեցէք Աստուածածին զսուրբ Կոյսն, և գթասցի ի ձեզ։ Աղաղակեաց ամբոխն և ասեն. խոստովանիմք զՔրիստոս որդի Աստուծոյ Հօր, որ էառ մարմին անճա-

ռապէս ի Կուսէն։ Եւ առեալ Պետրոսի զձեռանէ Սոփոնեայ՝ եբեր մերձեցոյց ի հատուածս ձեռացն, և միացեալ յարեցան իբրև զառաջինն։ Եւ լուսաւորեցան խաւարեալքն և մկրտեցան Հրեայք և հեթանոսք յոյժ յոյժ բազում. և բորոտք որ էին ի քաղաքին՝ գային առ առաքեալսն և օծանէին իւղով, և տեառնագրէին սուրբ պատկերաւն, և առժամայն բժշկէին յախտիցն, մինչ զի համբաւն ընդ ամենայն Հրէաստան ընթանայր։

«Բարթողիմէոս առաքեալ, մի յերկոտասանիցն, ոչ գոյր ընդ նոսա, զի ընդ Թովմայի ի Հնդիկս էր երթեալ։ Եւ եկեալ նա յետոյ առ առաքեալսն՝ բռնադբօսեաց զնոսա ցուցանել նմա զգանձն աստուածային, զմարմին ամենօրհնեալ Կուսին։ Եւ յօժարեալ նոցա լնուլ զփափաք տենչանաց եղբօրն իւրեանց՝ բացին զսուրբ գերեզմանն, և գտին ունայն յաստուածակիր մարմնոյն։ Ապա յոյժ սգացեալ Բարթողիմէոս... տրտմէր առաւել քան զառաւել։ Զայն տեսեալ երանելի առաքեալքն և մխիթարել զիւրեանց եղբայրն կամեցեալ՝ ետուն նմա զպատկեր տիրամօրն որ էր ի փայտն նկարեալ։ Զոր առեալ Բարթողիմէոսի՝ մեծաւ փութով եկ ի Հայս հրամանաւ Ս. Հոգւոյն, զի զԹադէոս առաքեալ սպանեալ էր Սանատրուկ արքայ յԱրտազ գաւառի։ Իսկ նա եկեալ Հայս՝ գնաց յերկիրն մոգուց և Պարսից. և հասեալ ի քաղաք Թագաւորութեան նոցա, որոյ այժմ Խորասան ասի բարբառովն իւրեանց, և արար ընդ մէջ կրակարանին սիւն լուսոյ հրեղէն, և կալեալ զսուրբ պատկերն ընդդէմ արեգական՝ արգել զճառագայթս նորա և խաւարեցոյց զվեց ժամ, և ոչ հաւատացին՝ բայց միայն ութ ի մոգուցն յայնցանէ, որք երկրպագեցին Փրկչին, և եկեալ մկրտեցան յառաքելոյն։ Զորս հանեալ ի միջոյ ամբարշտացն, և բերեալ ի Հայս, և եկեալ յաշխարհն Անձաւացեաց ի Համբաւ քարի միոջ, քանզի դեւք բազումք բնակեալ էին անդ և պատրէին զմարդիկ տեղւոյն, տուեալ յայնմ տեղւոջէ դեղս կախարդականս ի կատարել զպղծութիւն ախտից, կռանաձայնս դարբնաց ահաւոր հրաշիւք արհաւիրս գործէին. յորս մարդիկ աշխարհին սովորեալք՝ անդ առ քրային դեգերէին, առեալ ի չաստուածոցն ծրարս Թարախածորս ի պատիր ախտիցն, որպէս գծրարսն Կիպրիանոսի առ ի պատիր Յուստինեայ կուսին, և անուանէին զանուն տեղւոյն այնորիկ Դարբնաց քար։ Հասեալ սուրբ առաքեալն Աստուծոյ անդ՝ հալածեաց զդարբինսն զգործօնեայս չարին, և զկուռսն փշրեաց որ յանուն Անահտայ էր։ Յոր ժողովեալ բազմութիւն դիւացն ի վերայ լերինն բարձու ի հիւսիսոյ կողմանէ, քարաձիգս առնելով անթիւ բազմութեամբ յոյժ ձայնս ճիչս և գոչիւն սաստիկ արձակէին։ Իսկ սուրբ առաքեալն տեառնագրեաց խաչ մի փոքրիկ, և կանգնեաց ի վերայ

քարի լերինն, և անդէն գւքն չիք լինէին»: Հոս կը յաւելու հեղինակն իբրև նոր տեղեկութիւն. «Զոր յետոյ սուրբ հայրապետն Գրիգորիոս գխաչն առաքելական ընդ իւր շրջեցուցանէր մինչև ի թօղուլ նորա զաշխարհս: Իսկ յետ ժամանակի եդաւ ի վերայ գերեզմանին Տրդատայ արքային Հայոց»: Ապա կը տանի յառաջ իւր պատմութիւնը. «Եւ է տեղին այն, յորում գւքն էին՝ լեռնամէջ վիմաց, ի վերայ գետոյն մեծի որ կոչի Տիգրիս, հուպ ի բերդն ամուր որ կոչի Կանգուառ, և միւսոյն՝ Ագաւաց քար, ուստի ջուրք բաղումք հոսեն ի լերանց ամրոյին ըստ գարնանային մասանցն, գան անցանեն ընդ հիմունս տաճարի Տիրուհւոյն և խառնեալ օժանդակեն զգետն մեծ Տիգրիս: Անդ հիմնարկեալ սուրբ առաքեալն ըղհիմն տաճարի սրբուհւոյն իւրովք իսկ ձեռօքն, շինեաց եկեղեցի փոքրագոյն, և անուանեաց զնա Սուրբ Աստուածածին, և եդ ի նմա զպատկեր Տիրուհւոյն, և տայ զնա Սուրբ կանոնց... շինէ խրճիթս վանիցն, և տեսուչս հրամայէ լինել հաւատացելոցն, և քահանայ կացուցանէ անդ յիւրոց աշակերտացն, անուանէ զտեղին Հոգեաց վանս յանուն Տիրամօրն և սուրբ Կուսին»: Դարձեալ կը յաւելու իբրև պատմական տեղեկութիւն. «Զոր եկեալ յետոյ սրբոյն Գրիգորի վանս հաստատեաց զտեղին, շինեալ եկեղեցիս, բայց զտաճար սըրբուհւոյն ոչ քակեաց, զի ձեռագործ առաքելական էր»:

Այս առասպելական գրուած, առհասարակ ծանօթ իբրև թուղթ Խորենացւոյ առ Սահակ Արծրունի՝ է գործ անվաւեր, ոչ հին քան զԺ. դար, ինչպէս պիտի տեսնենք յետոյ: Թէ ով էր այս Սահակ Արծրունի՝ չէ յայտ, նա հաւանական է մանաւանդ, թէ է պիտակ անուն, քանզի Սահակ անուամբ իշխան Արծրունի չկայ յիշուած ի Ե. դարու ո՛չ առ Խորենացւոյն և ոչ առ Եղիշէի և Փարպեցւոյն: Կայ Սահակ Արծրունի վկայեալ (մարտիրոսացեալ), ըստ աւանդութեան, հանդերձ եղբարբ իւրով Համազասպաւ, զորս կը տօնէ Հայաստանեայց եկեղեցին, որպէս և հօրեղբայր սոցա միւս ևս Սահակ Արծրունի, անկեալ ի պատերազմի ուրեք ընդդէմ Հագարացւոց. բայց սոքա իբր երեքհարիւր ամօք յետոյ են քան զկարծեցեալ ժամանակ Խորենացւոյն: Զխարդ և իցէ՝ անծանօթ ոմն Սահակ Արծրունի, որպէս թէ կարդալով Խորենացւոյն պատմութիւնը, զոր կ'անուանէ «Գիրք Բագրատունեաց»՝ ըստ օրինակի համանուան իւրոյ Սահակայ Բագրատունւոյ կը գրէ առ Խորենացին թուղթ, ուր յետ կոչելոյ զնա «Հրեշտակ և սպասաւոր մեծութեանցն Քրիստոսի, յերկրի երկնային ցուցեալ այր երկնակենցաղ, լուսաւորիչ խաւարելոց» ա. հ., գալով բուն խնդրոյն, որ էր պատմութիւն պատկերի իւիք Կուսին ի Հոգեաց վանս յերկրին Անձևացեաց՝ ասէ. «Կամիմք

ուսանել ի քէն զսքանչելագործութիւն պատկերին որ յանուն Տիրամօրն կայ ի Հոգեաց վանս, եթէ ուստի՞ կամ յումմէ բերաւ յայն տեղի, զի բազում ինչ այլք այլապէս պատմեն իրս ոչ նման միմեանց, և ոչ հաւատացաք ումեք զատոյգն գիտել։ Այլ իմ ընկալեալ ի ձեռաց սուրբ մատանցդ գիր՝ առաւել յուսով ընկալայց քան զգիրս Բագրատունեաց ի ձեռս իմ»։

Այս թղթոյն որպէս թէ պատասխանն է թուղթն կոչեցեալ առ Սահակ Արծրունի, ուր հեղինակն յետ խօսելոյ զշինութենէ Բեթղեհեմի և զազգահամարէն Մատթէի և Ղուկասու—խնդիրք զորոց չասէ ինչ անուանեալ թուղթն Սահակայ—կ'սկսի զպատմութիւն պատկերի Տիրամօրն և շինութեան Հոգեաց վանուց հանդերձ մանր մասամբք, ինչպէս արդէն տեսանք։ Թուղթն այն, կարծեցեալ պատասխանի Խորենացւոյն՝ կ'սկսի այսպէս. «Զյորդութիւն առատութեան աստուածային Հոգւոյն շնորհաց որ ի վերայ քո անդուլ մտացդ... յառաջ քան զտեսութիւն ի ձեռն համբաւոյ լուեալ իմ՝ զխոհականութիւն մեծի հզօրիդ ծանեայ, և այժմ ի ձեռն արժանափայլ խնդրոյս, յառաջ քան զնկարագիր պատկերիդ և զտիպ մարմնոյդ, տեսեալ ի վրէժխնդրութիւն հոգւոյդ՝ գիտացի որ ի վերին շնորհացն է այս։ Վասնորոյ ինքն բանն Աստուած ի ստեղծանելն զմարդն բանիւ զարդարեաց... Վասնորոյ զբանին վառ և բորբոք պահելով զկայծակն՝ անմահանամ... Յայսմանէ գիտացի լեալ զքեզ, մեծ իշխանդ Վասպուրականի, որ թէպէտև ի նախարարս ես թուեալ, սակայն ի տանէ թագաւորազուն, և ազգաւ ես քաջ և նախնական, և արդասաւոր սերունդ և զարմ, ոչ բանիւ միայն ուսուցեալ, այլ և ի գործ պատերազմաց ընդ առաջինն թուեալ։.. Այլ զխնդիր աստուածասէր իշխանիդ որ վասն պատուական պատկերի Տիրամօրն, անմահ քոյին ազգի թողում յիշատակ»։ Շատ տարբեր չէ յայսմանէ թուղթ Խորենացւոյն առ Սահակ Բագրատունի.—«Զանսպառ խաղացմունս աստուածայնոցն ի քեզ շնորհացն, և զանդուլ Հոգւոյն ի վերայ քո իմացուածոցդ շարժմունս ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, յառաջ քան զմարմնոյդ զհոդւոյդ ընկալեալ զծանօթութիւն... Զի եթէ վասն բանին մեք, որպէս ասի, պատկեր Աստուծոյ, և դարձեալ՝ առաքինութիւն բանականին է խոհականութիւն, և քո յայտնի անհատ ցանկութիւն՝ ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ զխոհականութեանդ քո վառ և բորբոք պահելով զկայծակն՝ զարդարես զբանն։... Յաղագս որոյ հեշտաբար ընկալեալ զքո խնդիրդ՝ աշխատասիրեցայց ածել ի կատարումն, անմահ ի յիշատակ թողուլ քեզ և որ զկնի քոյինքն են գալոց ազգք։ Զի և ազգի ես նախնականի, և քաջ և արդասաւոր,

ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խոհականութիւնս, այլ և ի մեծամեծ և ի բազում գործս արժանափառս»:

Որպէս զի յայտնի ևս տեսնուի նմանութիւնն՝ հոս գլխաւոր մասերն համեմատելով դնենք:

| ԹՈՒՂԹ ԱՌ ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ | ԹՈՒՂԹ ԱՌ ՍԱՀԱԿ ԱՐԾՐՈՒՆԻ |
| --- | --- |
| Զանսպառ խաղացմունս աստուածայնոցն ի քեզ շնորհացն, և զանդուլ Հոգւոյն ի վերայ քո իմացուածոցդ շարժմունս ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս: | Զյորդութիւն առատութեան աստուածային Հոգւոյն շնորհաց որ ի վերայ քո անդուլ մտացդ՝ ծանեայ ի ձեռն արժանափայլ խնդրոյս: |
| Յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութիւն: | Յառաջ քան զնկարագիր պատկերիդ և զտիպ մարմնոյդ՝ տեսեալ ի վրէժխնդրութիւն հոգւոյդ: |
| Զի եթէ վասն բանին մեք... պատկեր Աստուծոյ... ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ զխոհականութեանդ̊ քո վառ և բոլբոք պահելովզկ այծակն՝ զարդարես զբանն:... | Վասնորոյ և ինքն բանն Աստուած ի ստեղծանելն զմարդն բանիւ զարդարեաց: Վասնորոյ զբանին վառ և բոլբոք պահելով զկայծակն՝ անմահանամ: |
| Հեշտաբար ընկալեալ զքո խընդիրդ՝ աշխատասիրեցայց ածել ի կատարումն, անմահ ի յիշատակ թողուլ զայս քեզ և որ զկնի քոյինքն են զալոց ազգք:... | Այլ զխնդիր աստուածասէր իշխանիդ որ վասն պատուական պատկերի Տիրամօրն, անմահ քոյին ազգի թողում յիշատակ: |
| Ազգի ևս նախնականի, և քաջ և արգասաւոր, ոչ միայն ի բանս, այլև ի մեծամեծ և ի բազում գործս արժանափառս: | Ազգաւ ևս քաջ և նախնական, և արգասաւոր սերունդ և զարմ, ոչ բանիւ միայն ուռճացեալ, այլ և ի գործ պատերազմի: |

Նմանութիւնս այս եղած է թերևս գլխաւորապէս առիթ ընծայելոյ Խորենացւոյ՝ զթուղթն առ Սահակ Արծրունի: Բայց թող զի անվայել էր հարուստ մտաց Խորենացւոյն գրել երկու թուղթ առ երկու իշխանս, զերկոսին ևս ոչ իմաստիւ միայն, այլև բառիւք գրեթէ նոյն, թող ասեմք զայս՝ նմանութիւնն է ինքնին ալիտակ, ստորին և անյաջող, օտար ի մտաց, բայց կիրթ հելլենաբանութենէ թղթոյն առ Սահակ Բագրատունի, յետին զարու ճաշակաւ, որոյ ապացոյց են անճահ բանք, որպիսի են «յորդութիւն առատութեան», որ է աւելաբանութիւն, «արժանափայլ», նմանութիւն «արժանափառ» ածականի Խորենացւոյն, բայց խորթ և ան-

յարմար գոյականին—արժանափայլ չխնդիր. Նոյնպէս անյարմար է մնաց ածականն «անգուլ», որ առ Խորենացւոյն է վերագիր շարժման. Նոյնպիսի է «վրէժխնդրութիւն» հոգւոյ, իբր եռանդն կամ նախանձաւորութիւն, և ի վեր քան զամենայն՝ ռամկական շաղկապն որ—ստորին դարուց նշանակ: Բայց քան զլեզուն աւելի յայտնի ապացոյց կու տայ թուղթն՝ թէ է գործ հարիւրաւոր ամօք յետոյ քան զԽորենացին: Հեղինակն յետ կոչելոյ զԱրծրունիս «ազգաւ քաջ և նախնական, և արգասաւոր սերունդ»՝ կը յարէ. «Որպէս երկուց մարդոց լինելութեամբ երկիրս հաստատեցաւ՝ այսպէս ի ձեռն երկուց տանցդ, Արծրունեաց և Բագրատունեաց, այս (Հայոց) աշխարհիս սերունդք բնակեն: Եւ որպէս երկու աչք զբոլոր մարմինն զարդարեն՝ այսպէս երկու կողմանքդ, արևելից և հիւսիսոյ, լուսաւորին. և որպէս երկու ձեռք միացեալ ի գործ պիտոյանան՝ այսպէս և երկիրս Հայոց ի ձէնջ գոյանայ: Եւ որպէս ի վերայ երկուց ոտից բոլոր մարմինն հաստատի՝ այսպէս և ի ձեռն երկուց տանց (Բագրատունեաց և Արծրունեաց) ամենայն ազգք Հայոց հնազանդ լինելով՝ ի մի մարդ կատարեալ ի Քրիստոս լինին: Եւ դուք երկոքին ցեղք ընդ միմեանս միացեալ անշարժ կայք»: Եւ խկոյն կը յաւելու. «Քեզ ասեմ, իշխանդ Արծրունեաց. եցոյց ինձ Տէր, զի յորդւոց քոց երեք եղբարք վասն Քրիստոսի ի մահ մատնեալք՝ երկուքն արեամբ վկայք լինին Քրիստոսի, և մինն վրիպեալ ի նոցանէ և ոչ յայսմ վայելէ: Վասն նոցա Աստուած գթացն թագաւորին Սենեքերիմայ յորդիս քո դարձուցեալ յերկարաձգէ յերկրի»: Հեղինակն մոռանալով, թէ թուղթն է առ Սահակ Արծրունի, և ոչ առ Սահակ Բագրատունի՝ յանկարծ կը դարձունէ իւր կարծեցեալ մարգարէութիւնն առ Բագրատունին ասելով. «Եւ Բագրատունեացդ ասեմ. յիշէ Տէր զբանն իւր, եթէ Թագաւորք ի քէն ելցեն, և թագաւորէք ի Դուին»: Ոմանք յայտնի մարգարէութիւն կը տեսնեն յայսմ: Արդարև, ըստ աւանդութեան, որ կը թուի լինել ստոյգ՝ երեք իշխանազուն եղբարք Արծրունիք, Սահակ, Համազասպ և Մերուժան, ստիպուելով յուրացութիւն հագարացի ոստիկանէն (786)՝ առաջին երկուքն նահատակեցան, իսկ երրորդն, Մերուժան, ուրացաւ, այլ յետոյ սպանաւ ի Դաւթէ ումեմնէ Մամիկոնենէ: Բայց առողջ քննադատութիւնն զայս կարծեցեալ մարգարէութիւն, ինչպէս նաև զառաւելութիւնն զոր կու տայ թուղթըն երկուց ցեղից, Բագրատունեաց և Արծրունեաց, իբրև երկուց տիրող իշխանութեանց՝ ապացոյց միայն կրնայ համարել, թէ հեղինակ թղթոյն չէ ոչ յառաջ և ոչ յետոյ քան զԺ. դար, այսինքն այնպիսի ժամանակ, մինչդեռ կանգուն էր թագաւորութիւնն Ար-

ծրունեաց (908—1021)։ Զայս կը ցուցնէ ասելն. «Աստուած զթագն թագաւորին Սենեքերիմայ յորդիս քո դարձուցեալ՝ յերկրաձգէ յերկրի»։ Անուն ասորեստանցի թագաւորին կրնայ տալ կարծել, թէ հեղինակ թղթոյն էր առ Սենեքերիմաւ Արծրունւով (1003—1021)։

Գալով թղթոյն այն մասին, որ կը թուի լինել իբր պատմական՝ ասեմք. Ո՞րչափ հակառակ է առողջ քննադատութեան ընդունել, թէ բազուկ մի հրաշիւք զատուելով յարմկանէ՝ դարձեալ միացաւ հրաշիւք, կամ թէ մարդ բռնելով պատկեր ընդդէմ արեգական՝ կարաց վեց ժամ արգելուլ արեգական լոյսը, կամ թէ դուրսէն տան մը կրակ տուողներն այրեցան, և տունը մնաց անկէզ. որչափ հակառակ է, ասեմք, այս ամենայն առողջ մտաց՝ նոյնչափ հակառակ է ընդունել, թէ Յովհաննէս աւետարանիչ էր քաջ պատկերահան, նկարեց զպատկեր Կուսին ի փայտի և ստիպեց զԿոյսն տալ հրաշագործ զօրութիւն այն պատկերին. թէ Կոյսը զիջաւ աղաչանաց նորա. թէ առաքեալք երկիր պագին այն պատկերին, յորոյ վերայ իջած էր լոյս յերկնից. թէ Բարթողիմէոս առաքեալ կը շըրջեցունէր այն պատկերն ընդ իւր, շինեց եկեղեցի ի պատիւ պատկերին, հաստատեց վանս, կարգեց կուսանս ի սպասաւորութիւն եկեղեցւոյն, նաև եպիսկոպոս և քահանայս ի հովուել զհաւատացեալս, այլովքն հանդերձ, գործք՝ որ հակառակ են ոգւոյ քրիստոնէութեան և առաքելական պաշտաման, մանաւանդ առաքելոց դարուն, որչափ գիտենք ի պատմութենէ նախնի քրիստոնէութեան (Յովհ. Դ. 24, Գործ. Զ. 3, 4)։ Վանականութիւնը չէ հին քան զԴ. դար, իսկ պատկերներու յարգ և պաշտօն՝ ևս աւելի նոր։ Գաղտնիք թղթոյն առ Սահակ Արծրունի, որչափ կը տեսնուի՝ սա է. Բարեպաշտ խաբէութիւնն, որ սովորական էր հին եկեղեցական մատենագրութեան՝ կը թելադրէ անանուն ումեմն գրել Ժ. դարուն, թերևս վկայաբանութենէ (վէպ) ուստեք կամ ասորական առասպելէ առնլով՝ զպատմութիւն պատկերին Հոգեաց վանուց։ Հեղինակն, որպէս զի յորդի երևցունէ գործը՝ կարևոր կը համարի հրատարակել զայն յանուն հին և համբաւաւոր հեղինակի ուրուք. և ով կար այնպէս երևելի յազգին հնութեամբ և համբաւով, ոչ միայն իբրև մատենագիր, այլև իբրև պատմաբան—ըստ աւանդութեան ասեմք—ինչպէս Խորենացին. ուստի գործը կը հրատարակուի յանուն Խորենացւոյն. և որպէս զի վերնայ ամէն կասկած խաբէութեան՝ գործը կը ցուցուի գրուած ճիշդ այն պարագաներու ազդեցութեամբ՝ որովք ասի գրուած բուն Պատմութիւն Խորենացւոյն։ Աստ ևս, որպէս անդ՝ անուն իշխանին որ կը խնդրէ ըզպատմութիւն պատկերին ի Խորենացւոյն՝ է Սահակ. սա ևս, իբրև

զառաջին Սահակն՝ անձամբ անծանօթ է Խորենացւոյն. առ սա ևս, որպէս առ առաջինն՝ կը գրուի Թուղթ գրեթէ միևնոյն իմաստիւ և բառերով. պարագաներ՝ որ կը յաւելուն մանաւանդ քան կը բառնան կասկածը: Բայց զիարդ և իցէ՝ Թուղթն առ Սահակ Արծրունի, իւր բոլոր առասպելներով և անվաւերութեան յայտնի նըշաններով՝ կ'ընդունուի ազգէն իբրև գործ Խորենացւոյն, և որ զարմանալին է՝ իբրև այնպիսի կ'ընդունուի նաև «Հայկական Հնախօսութեան գիտութեամբ պատկառելի» գլուխներէ, որպիսի էին. Չամչեան և Ինճիճեան:

Թէ ի լերինս Անձևացեաց, ի Դարբնաց քար կամ Դարբնաքար կոչեցեալ տեղւոջ կար մեհեան կամ կուռք Անահտայ, զոր որպէս թէ կործանեց Բարթողիմէոս, և թէ պաշտօնեայք չաստուածոյն կու-տային կախարդական ծրարներ կամ դեղեր ի ժամանակս հեթանոսութեան՝ չէ անհաւանական: Սակայն չէր մարթ հեղինակի թըղթոյն, եղեալ ևս թէ էր Խորենացին, գիտել զայս: Իսկ թէ ի կործանել Բարթողիմէոսի զմեհեանն, դևք կ'արձակէին քարեր, հանելով ճիչ և գոչիւն սաստիկ, ա. հ.՝ է նմանութիւն Ագաթանգեղոսի, ուր յաճախ կը պատմուին, ի կործանել Գրիգորի զմեհեանս կռոց՝ դիւաց երևել կերպակերպ նմանութեամբք, դնել մարտ պէսպէս զինուք ըստ օրինակի հեծեալ և հետևակ զօրաց, նետս և քարինս տեղալ ի վերայ մարդկան, և ի փախճանի անհետանալ ճչիւք և աղաղակօք (Ագաթ. ՃԸ, ՃԹ, ՃԺԵ):

Զիք սակայն տարակոյս, թէ Դարբնաց քարն, ինչպէս նաև Կանգուառ և Ագռաւուց քար, էին տեղիք ի լերինս Անձևացեաց, վերջին երկուքն՝ իբրև բերդք, իսկ առաջինն՝ իբրև վէմ մեծ, հաւանականապէս նման սալի դարբնաց, յորմէ առած էր թերևս անունը. սակայն չէ ամենևին բանաւոր ընդունել, թէ կռանահարութեան ձայներէ, որ կը լսուէին անդ ի խարէութենէ դիւաց՝ կոչուած էր այնպէս. բայց եթէ հարկ է ասել՝ թէ—եթէ արդարև կը լսուէին այնպիսի ձայնք—տեղին էր բերան հին ինչ հրաբխոյ, զոր ագիտութիւնն և սնոտիապաշտութիւն կ'ընծայէին դիւական ինչ զօրութեան, համարելով զտեղին, ծուխէն և ձայներէն որ կը լսուէին ի ներքուստ ի խորոց անտի՝ իբրև դարբնոց դիւաց, և այս պատճառաւ կոչուած էր Դարբնաց քար: Սակայն այն զոր ասացաք յառաջագոյն՝ կը թուի հաւանականագոյն ըստ մեզ:

Ինչ որ ըսինք զպատմութենէ պատկերին՝ զնոյն պարտ է ասել Հռիփսիմեանց պատմութեան համար, որ է նոյնպէս առասպելական և գործ ագէտ խաբեբայի: Թէպէտ ամէն ողջամիտ ընթերցող կարդալով առաջին էջը միայն, կը տեսնէ գործին բնութիւնը՝

գնենք նախ համառօտութիւնը մեր արդի լեզուաւ, ապա բնագիրը քաղելով։ Ըստ բանից հեղինակին՝ որպէս թէ Դաւիթ ումն (որ հասարակաց անուն է պիտակ անձանց) գրած էր Հռիփսիմեանց պատմութիւնն առանձին մատենիւ Եկղեսիաստէս անուն, զոր որպէս թէ չկրնալով թարգմանել Հայ հեղինակն, կամ անուանել Խորենացին, ծերութեան և հիւանդութեանն աղագաւ՝ համառօտիւ միայն առաւ՝ ինչ որ Ագաթանգեղոս թողած էր։ Ըստ պատմութեան այս Դաւթի՝ Հռիփսիմէ էր Օգոստոս կայսեր ցեղէն, ինչպէս նաև Գայիանէ սնուցիչ նորա, որ էր մայր վանաց յանուն սրբոյն Պօղոսի ի Հռոմ, և նուիրած էր գՀռիփսիմէ կուսան չքնաղագեղ՝ Աստուածածնին, կախելով զպարանոցէն նորա խաչափայտէն մաս մը, որ թաթաւեալ էր արեամբն Քրիստոսի, և զոր Յակոբոս առաքեալ եղբայր Տեառն կտրած հանած էր Խաչէն ըստ խնդրոյ Պատրոնիկեայ տիկնոջ։ Երբ կայսերական տունէն կը խորհէին առնուլ գՀռիփսիմէ ի տիկնութիւն վասն սքանչելի գեղոյն, Գայիանէ իմանալով զայս Հոգւով սրբով՝ կը փախցունէ զկոյսն յԱղեքսանդրիա, անտի կ՚երթայ յԵրուսաղէմ յերկրպագութիւն Ս. տեղերուն, նախ այրին ուր ծնաւ Քրիստոս, ապա ի գերեզման Աստուածածնին ի Գեթսեմանի, և կը մնայ հոն ամիս մի, մինչև կ՚առնու հրաման ի տեսլեան՝ երթալ ի Հայս յերկիրն Արարատայ, ի բաժին սրբոյն Թադէոսի։ Մարիամ կը հրամայէ նոցա առնուլ ի միասին փայտեղէն պատկերը, որ փոխման օրը գրուած էր նորա երեսաց վրայ։ (Պարագայ մը՝ որ կը ցուցնէ, թէ պատկերամարտից դարէն ետքը գըրուած է պատմութիւնը)։ Անտի (Երուսաղեմէ) կու գան յԵգեսիա երկրպագել փրկչական պատկերին։ Ոմանք յընկերաց նոցա կը մնան յԵգեսիա ի մեծ եկեղեցւոջն Աբգարու, հիմնեալ ի Թադէոսէ. այլք կու գան ի Դարանաղիս և կը բնակին Սեպուհ լերան Մանեայ այրք կոչուած տեղը։ Էին աւելի քան եօթանասուն որ ելան ի Հռոմէ (այսինքն բանակ մի կանանց). այլք մնալով ի Հռոմ՝ կատարեցան հրամանաւ Դիոկղետիանոսի։ Դարանաղեաց գաւառէն ելլելով՝ Հռիփսիմեանք կու գան բազմութեամբք քահանայից ի Բգնունիս, կը բնակին ի քաղաքին Խլաթ, ապա կ՚երթան ի Մոկս ի տեղի մի կոչեցեալ Ս. Խաչ։ Հոն կը թողու Գայիանէ խաչը Կճաւ կոչուած տեղ մի, ուր յետոյ սուրբն Գրիգոր հաստատեց վանս։ Անտի երթալով գագաթ Բերկրի անուանեալ գաւառ մի, ուր կը տիրէր աչացաւ՝ հալածեցին ախտը, բղխեցուցին երկու աղբիւր, կարմիր և սպիտակ ջրով, որ մինչև ցարդ, ասէ, կ՚օգնէ աչացաւի։ Այն լերան վրայ կը պատմեն, ասէ, Ասորիք, թէ հանգեաւ տապանն։ Սղոցաձուկն մի պատահելով կեցուց հոն տապանը, և տեղին կոչուած է Թմնիս,

որ կը նշանակէ *Ուլթ Կոզիք*, որ էր թիւ եղելոց ի պատանին: Հոն սուրբքն շինեցին խրճիթներ, ապա երթալով բնակեցան ի Տմորիս, ծառաւէտ ընկուզուտ տեղեր: Անտի եկան ի բուն Հայս, ի խորշ մի Մշկունեաց լերին, ուր կային մշկապորտ այծեմունք, և բորոտներ՝ զորս բժշկեցին քահանայք, ուր և բղխեցաւ աղբիւր հրաշիւք. և ծերագոյնք ի կուսանաց մնացին հոն մինչև ի վախճան իւրեանց: Անտի գնացին յեզր Բժունեաց, ուր մնացին ոմանք, կոչելով զտեղին Ս. Տիկին: Ապա եկան Ագռաւաքար կոչուած տեղ մի, ուր գտան հաւատացեալներ և պատկեր մի Տիրամօրն: Անտի գացին Պաղատոյ անուն լերան գլուխը, ուր էր տուն Արամազդայ և Աստղկան. անտի ուրիշ լեռ մի, անուանեալ Տուն կրակի: Հոն որջացեալ էին երկու վիշապք, որոց կը զոհէին բնակիչքն աղջկունս և պատանիս: Դեւք կը գործէին հոն ահագին թնդումներ և կայթումներ, և խոռոչներու մէջ կային անհնարին թունաւոր օձեր և կարիճներ: Հոն հասնելով կուսանք՝ հալածեցին դեւերը, որ վայ վայ կարդալով փախան, իսկ օձք քարացեալ մնացին մինչև ցայսօր, ասէ մեծանուն պատմիչն: Դեւք փախան յերկիրն Մարաց, իսկ պատկերք կռոց փըշրեցան զօրութեամբ Խաչին, մինչև հաւատալ բոլոր բնակչաց: Անտի երթալով դէպ ի հիւսիս՝ եկան Կորիթ կոչուած գիւղ մի, փըշրեցին զկուռս, սատակեցին թունաւոր օձեր նշանաւ Խաչին, դիւաց աղբիւրը ցամաքեցուցին, ուր յետոյ Ս. Գրիգոր շինեց երկու եկեղեցի, և կանգնելով սեղան՝ թողուց հոն զիւր գօտին և զգաւազան: Ապա գալով ի Տոսբ՝ հանդէպ Վան քաղաքին շինեցին խըրճիթ, և հոն պահելով Խաչը՝ ապաւինեցան ի Վարագայ, քանզի լսեցին թէ ի խնդիր էին բռնել զնոսա: Այն տեղն է Ուրբաթայրք, որ այսպէս կոչուած է՝ վասն զի երկու քահանայք, որ էին Հռիփսիմեանց հետ, ուրբաթէ ուրբաթ մատուցանելով պատարագ՝ «բաշխէին արժանաւորապէս սուրբ կանանցն զմարմին և զարիւն Տեառըն»: Մեր սքանչելի պատմիչն ինչպէս կը տեսնուի, իւր առասպելաց շղթայն հիւսելու այլ ևս անկարող՝ իւր արքայազուն կուսանաց մնացեալ պատմութեան համար կը ղրկէ ընթերցողն առ Ագաթանգեղոս.—«Վասն կատարման և չարչարանաց և նահատակութեան երանելեաց յԱյրարատեան գաւառ ի Վաղարշապատ քաղաքի՝ ուսցիս յԱգաթանգեղեայ պատմութեանցն»: Ահա և բնագիրն, զոր ինչպէս ըսինք՝ կը գտնենք քաղելով.—

«Յաղագս զանազան տեղեաց և գնացից և վարուց սրբոց Հռիփսիմեանց ի բազմաց մատենագրաց Յունաց արարեալ քննութիւն, և իմացեալ որ (ինչ) հեռի էր ի ստութենէ և լի ճշմարտութեամբ՝ կարգեցի քեզ (ի) գրոցն որ կոչի Դուռթի Հռոմայեցւոյ, գիրս եկղե-

սխաստէս, զոր կամեցեալ էի թարգմանել՝ և ոչ ժամանեցի. մնայ այլում տեղւոյ և իմաստնոյ: Չի ես մահկանացու գոլով, ծեր և հիւանդոտ,... սակաւ մի երկրորդեցի ի նոյն գրոց, յորմէ քաջ քարտուղարն թողեալ (էր) Ագաթանգեղոս:... Եւ արդ ի նոյն գիրս (Դաւթի) պատմի, ի թագաւորական տոհմէ գոլով սրբոյն՝ Աւգոստոս կայսեր՝ լինի և Գայիանէ ի նոյն ցեղէ, առաքինի և զարմանալի հօր և մօր դուստր:... Արքն որպէս թէ առաքեալք, լաւութեան նախանձ ունէին, և կանայքն զգաստանայլն, նախանձ ունելով Աստուածածնին:... Յայտնանէ գոլով և ծնողքն սրբոյն Հռիփսիմեայ, սան յաւազանէն լեալ սրբոյն Գայիանեայ, որ էր մայր կուսից վանականաց ի Հռովմ ի վանս սրբոյ առաքելոյն Պաւղոսի... ուր և այլք յետ նորա աշակերտեցան, լինելով անձինս երեք հարիւր, պահելով զհրամանս առաքելոյն: Եւ այսմ տեղւոջ տեսուչ գոլով Գայիանեայ՝ սնուցանէ առ ինքեան զՀռիփսիմէ ի մէջ զգաստացելոց կուսանացն, որ և յորբունս հասեալ, տեսեալ ի նմա զհոգւոյն մեծանձնութիւնն՝ անուանէ զնա ազախին գոլ սրբոյ Աստուածածնին, և տայ զնա ուխտիւք և աղօթիւք ծառայել Աստուածածնին: Արկանէ և ի նմին պարանոցն խաչ զսրբոյն Յակովբայ, զմածեալն տէրունական արեամբն, ի կենաց փայտէն հատեալ վասն խնդրոյն Պատրոնիկեայ տիկնոջ, որ և ինքեան գոլ պահապան ի ձեռն նմին եղբօր Տեառն, տուեալ փափաքմամբ և երկիւղիւ առեալ արկանէր ի պարանոց սրբոյ մեծին Հռիփսիմեայ, որպէս և յայնժամ յականջսն Ռեբեկայ զգինդսն՝ հարսնանալ հօրն հաւատոց Աբրահամու, թէպէտև ոչ նման, այլ երկոքին ի խորհուրդ եկեղեցւոյ. և այս այսչափ:

«Այլ ի հասանել յուզման ժամանակին, վասն ազնուական ազգին և սքանչելատեսիլ գեղոյն, որ և յաշխարհի փայլէր հոգւով խորհէին առնուլ ի պատիւ տանն Հռոմայեցւոց ի թագուհութիւն տիեզերապետութեան: Եւ Գայիանեայ իմացեալ հոգւոյ ակամբ՝ առեալ զնա փախչի յԵգիպտոս յԱղեքսանդրիա, և անտի ելանէ յԵրուսաղէմ երկրպագեալ սրբոց տեղեացն որ անդ: Եւ երթեալք ի յայրն՝ աղօթս և պաղատանս մատուցանէին առաջի սրբուհւոյն՝ օգնել կուսին վտանգելոյ և փախուցելոյ, որ եղև նորա ազախին ի մանկութենէ: Եւ գնացեալ անտի ի Գեթսեմանի ի գերեզման Աստուածածնին, և անդ աղօթելով ասէր. Մայր լուսոյ կոյս անարատ, որ կուսութեանց ես վերակացու և սրբութեան օգնական, ընկալ զաղաչանաց աղօթս յանարժան ազախնոյս, և զորդի հոգւոյ իմոյ զոր սնուցի քեզ տուեալ ազախին՝ զգաստացեալ արդարացն արժանաւորապէս, և մի տար փորձել օտարին, և մի տացես աղտեղա-

նալ անձամբ ի ձեռն պիղծ թագաւորացն, զի մի ուխտս մեր որ առ քեզ է՝ խափանեսցի։ Այլ յիշեա զպանդխտութիւն իմ և զծուփս ի կենցաղս մեր որ վասն քո, յիշեա և զչարչարանս որդւոյ քո և Աստուծոյ մերոյ, և ողորմեա մեզ, վասնորոյ զքեզ օրհնեմք։ Եւ երկրպագելով Աստուածածնին և բազում արտասուս հեղեալ, մնալով անդ ամսօրեայ ժամանակաւ։ Ապա տեսիլ երևեալ սրբոցն, և հրաման առեալ գնալ ի Հայք յերկիրն Արարատեան ի բաժին Թադէոսի առաքելոյն։ Եւ զպատկերն փայտեղէն, որ եդեալ է յերես իմ յաւուր փոխման իմոյ՝ զնա խնդրեսջիք, կատարեալ զընթացս ձեր արեամբ։

«Եւ դարձեալ անտի խնդութեամբ եկին յԵդեսիա քաղաք, և երկրպագեալ փրկչական պատկերին և լցան ուրախութեամբ, համարեցան տեսեալ զԲանն մարմին եղեալ։ Դարձեալ սքանչելի տեսիլ երևեալ յորդորէին ի ճգունս։ Եւ այլ կանայք ի նոցանէ մեկնեալք մնացին ի նմին քաղաքի ի մեծ եկեղեցւոջն Աբգարու, ի հիման սրբոյն Թադէոսի կրօնաւորեալք։ Սալէս և անտի ի Դարանաղեաց գաւառին կացեալ ի խորշ լերինն Սեպուհ կոչեցեալ, որ անուանեցաւ Մանեայ այրք։

«Աւելի քան զեօթանասուն հոգի զսրբոցն առէ պատմագիրս եկեալ ընդ նոսա ի Հռոմայեցւոց քաղաքէն, որք բնակեցան ի տեղիս տեղիս։ Իսկ զտեղին կալեալ այլոց քերցն, և քոյր Գայիանեայ Նուզոյի անուն, միաբանեալ քերբքն կատարեցան բարի վկայութեամբ ի Դիոկղետիանոսէ ամբարշտէ, զթոյնս չարութեանն ի նոսա թափելով, որք եղեն վկայք Քրիստոսի, յաղագս ոչ ըմբռնելոյ ի վարկս մահու զմեծ առաքելուհին։ Եւ բազում տառապանօք գնացեալ եկին ի Բզնունեաց գաւառ, ի քաղաքն Խլաթ, երեկօթս արարեալ։ Եւ անտի փախին, և գնացեալ ի գաւառն Մոկաց, Սուրբ Խաչ կոչեցեալ տեղի, որ և մեծ սքանչելիս կատարեաց Աստուած ի ձեռն նոցա պատուական սուրբ Խաչին Եսայեայ և Դանիելի, որում ես և դու հասու, և մեզ երկրորդել զի՞ է։ Կճաւն կոչեցեալ տեղի՝ դիւաց լցեալ պաշտմամբ, հասեալ անդ առաքելանման քահանայիցն և սրբոց կուսանացն՝ զընդդիմամարտն արգելուին զձիոցն, յորում դայլադնեալ դիւացն՝ դիմեալ ի վերայ խեղէին, ծաէին, պնչատէին զպաշտօնեայս իւրեանց, որ և անդ առաքելանշան քահանայքն հալածեալ զնոսա, և քանդեալ զպաշտամունս նոցա՝ բժշկէին զխեղեալսն. վասնորոյ տեղին կոչեցաւ Կճաւ, յորում թողու զխաչն իւր սուրբն Գայիանէ ախոյեան դիւաց որ էր աւազակին, որ և զտեղին լեառն հաստատէ վանս սուրբն Գրիգոր։

«Եւ վասն յայտնի անուանն նոքա զաղտ գնացեալ ընդ մէջ

Կորդուաց ընդ լեառն Սողոփ, ի Բերկրացւոց գաւառին, և ախտ աչացաւութեան գնոսա տագնապեալ. և կացեալ յաղօթս՝ երկու աղբերք բղխեցան, որ է ժանգ ջրոյն կարմիր և սպիտակ, և մինչև ցայսօր օգնէ աչացաւաց յանուն սրբուհեացն։ Բայց այս լերին առի յԱսորւոց, թէ ի նուազել ջուրցն հեղեղաց՝ եհաս տապանն ի գլուխ լերինն, որ է Սարարադայ, և ընդ մէջ անցեալ սղոցաձուկնն արգելու գնաւն. և անուն քաղաքագեղջն կոչեցաւ Թըմնիս, այսինքն թէ ութ ոգիք ելին ի տապանէն։

«Իսկ սրբոցն յապահովացեալք՝ խրճիթս շինեալ բնակեցան։ Եւ անտի գնացեալ և օթևանս արարեալ ի փտակս գետոյն մօտ ի կամուրջն ի կողմն Տմորեաց, ի ծառաւէտ ընկուզուտ տեղիս։ Եւ անտի փոխեալ եկանեն ի Հայաստան գաւառ, ի խորին խորշ լերին Մըշկունեաց։ Ի սմա առի այծեմունս մշկապորտս լինել, ուր և բազում ուրուկս հալածականս գտեալ՝ բժշկեն գնոսա սուրբ Խաչիւն ընտրեալ քահանայքն, ուր և ի Տեառնէ աղբիւր շնորհեալ նոցա. և յայսմ տեղւոջ կային ծեր կանայքն մինչև ցօր կատարման իւրեանց։ Եւ չուեալ անտի և կացեալ յեզր Բժունեաց՝ կային անդ բազում աւուրս. և անտի փոխեալ բնակեցան յայնկոյս գետոյն մօտ ի յակն յորդաբուխ, յորդորեալք ի շնորհաց Ս. Հոգւոյն, բազում աւուրք անցուցանելով, զուարճացեալք ի տեղւոյն բարեհամբաւութիւնն։ Եւ ապա աստ այլք ի նոցանէ կացեալք, որ անուանի տեղին Սուրբ Տիկին։

«Եւ անտի յառաջ անցեալ, ուստի հոսի գետն բովանդակ, որ փոքրագոյն չար ջուրքն հոսեալ ի լերանց Կանգուառայ, որ կոչի Ագուաւաքար. և գարնանային ուղխքն գետացեալ գան յօժընդակութիւն գետոյն մեծի որ կոչի Տիգրիս, հասին ի տեղի մի և գտին սակաւ ինչ քրիստոնեայս, ձևանշան ունելով զպատկեր Տիրամօրն, որում երկրպագեցին ուրախացեալք, և տային գոհութիւն սրբուհւոյն։ Եւ սակաւ աւուրս կացեալ, ոչ կամեցեալ հաւատացեալքն, երկուցեալք ի կասկածանացն, և նոքա գնացին ի գլուխ լերինն Պաղատոյ, զոր առէին սաստիկ յոյժ ի նմա լեալ դիւացն, տուն Արամազդայ և Աստղկան մեծարէին։ Եւ յաճախ պաշտամամբք տօն կարդային որ է Պաղատ։ Եւ անտի գնացեալ ի խորաձոր զառ ի ի վայր լեռնէն յարեգակնն կոյս, սակաւ մի առ ի կողմն Հարաւոյ, ի կատար լերինն որ ի վայր իջանէ, տուն կրակի, անյագ հրոյ, անդադար այրման աստուածոցն. և քարինս հոսեալ յակն յորդաբուղխ աղբերն, որ բղխէ յոտն լերինն, որ է յառաջս խորավիմին, որ կոչի տեղին Բութ։ Քանզի վառէին զկրակն քօյրն, և զաղբիւրն եղբայրն։

«Եւ յայրս քարին որջացեալ կային վիշապք երկու, դիւացեալք և սևացեալք, որոց աչքն կոյս և պատանիս անմեղս զենուին։ Այնոցիկ արեամբն զուարճացեալ դեւքն և բագնօքն, հրովն և աղբերըն՝ ահագին իմն տեսիլ և փայլումն և թնդմունս և կայծմունս գործէին։ Եւ ի մէջ խորաձորոցն օձք և կարիճք լի թունաւոր մահաբերին լցեալք։ Անդ հասեալ սուրբ կանանցն, և աղօթիւք և արտասուօք ի յերկինս հայեցեալք, առեալ զսուրբ նշանն և ի վերայ կացեալ աղբերն՝ և փախստական եղեալ դիւացն ի բագինն անկանէին, վայ զվայիւ աղաղակեալ։ Եւ ի լեռնէ ի լեառն ոչ այլ ինչ լսիւր, բայց վայ զվայիւ ճիչեալ։ Եւ նոքա ընդ մէջ ձորոյն անցեալ, օձք մարմնաւորք քարացեալք կան մինչև ցայսօր։ Եւ ի բագնացն փախուցեալ դեւքն անկանէին յերկիրն Մարաց։ Եւ զպատկերն փըշրեալ զօրութեամբ սուրբ Խաչին. զոր տեսեալ գեղջն՝ հաւատացին ի Քրիստոս ի ձեռն սուրբ երանելեացն։

«Եւ անտի ելեալ և ընդ հիւսիսով իջեալ՝ եկին ի գիւղն որ կոչի Կորիթ։ Զկուռսն փշրեցին, և զօձն թունաւորս սպանին նշանաւ սուրբ Խաչիւն, և զաղբիւր դիւացն ցամաքեցուցին, զոր և յետոյ զտեղին սուրբն Գրիգոր շինեաց եկեղեցիս երկուս։ Եւ ի Կորիթ փայտեղէն սեղան կազմէ, և նշան թողու անդ զգօտին և զգաւազանն իւր։ Իսկ սրբոցն ի Տոսբ գաւառ ելեալ՝ զսուրբ նշանն թողուն հանդէպ Վանի, ի հարաւակուսէ լերինն, փոքրագոյն խրճիթս շինեալ վանաց. և եդին անդ վասն կասկածի հալածանաց ի վերայ կացելոց։ Եւ անդ ի լեառն Վարագ ամրացեալք, զի լուան խնդիր լինել ինքեանց, ցան և ցիր ի խորշ լերինն բնակեցան, արարեալ իւրեանց գետնափոր դադարս։ Այսպէս երկուք ոմանք ի քահանայիցն սրբոց բնակեցան ի նմին տեղւոջ մինչև ցօր կոչման և կատարման իւրեանց առ Քրիստոս։ Եւ տեղիք նոցա կոչին Ուրբաթայրք. քանզի ի յուրբաթէ յուրբաթ մատուցանէին զսրբութեան պատարագն և բաշխէին արժանաւորապէս սուրբ կանանցն զմարմին և զարիւնն Տեառն։... Վասն կատարման և չարչարանաց և նահատակութեան երանելեացն յԱյրարատեան գաւառ ի Վաղարշապատ քաղաքի՝ ուսցիս ի յԱգաթանգեղեայ պատմութեանցն»։

Այս է Հռիփսիմեանց համբաւեալ պատմութիւնն, որ ի հին և արդի գիտնոց ազգին կ'ընծայուի Խորենացւոյն իբրև «ստոյգ պատմութիւն ճանապարհորդութեան նոցա», թերևս նաև իբրև արժանի գործ հանճարոյն և հմտութեան քերթողահօրն։ («Պտմ. Հռիփս. Պատմութիւն գալստեան Հռիփսիմեանց՝ ի Հայս՝ ստուգագրութեամբ (*) ճանապարհորդութեան նոցա»։ Հայկ. Բառ. Նախագրութիւնք, էջ 13)։

Ոչինչ ընդհատ քան զսոսա անհարազատ և անվայել են Խորենացւոյն լեզուին, հմտութեան և ճաշակին՝ ճառքն Հռիփսիմեանց և Վարդավառին, յետին և համբակի գրուածներ, ցուրտ, անիմաստ և անհեդեդ, անարժան յընթեռնուլ ո՛չ ըստ լեզուին միայն, այլև ըստ իմաստին։ Առնունք յօրինակ երկու հատուած, մին՝ ի ճառէն Հռիփսիմեանց, և միւսն ի ճառէն յաղագս Վարդավառին։

*Հռիփսիմեանց ճառէն.* «Այսօր ցնծութիւն երկնի և երկրի, և աւետիք մեծ երկնաւոր շնորհաց պայծառ լուսով շրջափայլեալ ի տան Թորգոմայ ի հաւատացելոց ազգէ ի հոգիս ցնծութիւն երկնի, զի լոյսն կենդանի, որ փայլատակէր յերկնից ի Հռիփսիմեանց՝ ի սմա փայլակնաբորբոք ճառագայթիւք բացափայլեաց, զանիծից պարաբառնայ զփուշ, և վկայական արեամբ նորոգեալ զերկնայինն ի սմա ծաղկեցուցեալ արդարութեան բողբոջս բանաւոր բուսոց բուրեալ զանուշահոտութիւն սաղմոսաց. ի սմա հնչեն փառք թագաւորին անմահի. զի յերկրի ընկալաւ հարսն աստուածազգեաց զվայելչականն եդեալ պսակ, զգեցեալ զլոյս և զանմահութիւն, և օրիորդք խաչազգեացք ընդ նմա ծիրանազարդեալք կուսական արեամբն, ընդ երկնագումարն անցանելոց պարս սրովբէիցն մտեալ ի սրբութիւն սրբոցն յառագաստն լուսոյ առ Բանն փեսայացեալ, կալ ընդ աջմէ նորա դշխոյն սուրբ յոսկեհուռն պսակեալ, և զօրք հրեշտակաց փափաքեալ իջանեն ի հոտ անոյշ ծաղկաձև վարդագոյն արեան վկայիցն, և հողեղէնն ի հրեղէնն միացեալ, որ զվկայիցն յաւէտ հրաշացուցանէ հանդէս»։

*Վարդավառի ճառէն.* «Աստանօր ցուցաւ թէ արդ աւար է տօնս... առաքինութեան ի սմա լուսերանդ և յուսահոտ բոցատեբև վարդիւք հարսնազգեստ պսակեալ և հրճուեալ։ Սա առաջին յեկեղեցւոջ օրինադրեցաւ յառաքելոցն տօն աւետաբեր, որ ոչ մտանէ ի շրջանս ընթերցուածոցն ընդ այլսն, յորս աստուածային տնօրէնութեանն վերաձայնաբար տօնի խորհուրդ մարգարէիւք նախապատմեալ, զի ոչ զանցելոցն որպէս զնոսա, այլ զհանդերձեալ յաւիտենին յինքն բարձեալ ունի մշտապայծառ փառաց զերակայութիւն յարազուարճ ցնծութեամբ, որ և ոչ մարգարէքն ծանեան զայնս, զոր անդն պատրաստեաց Աստուած սիրողաց ինքեան. զի սա ըստ ութերեակ աւուրն որպէս առաջինն այն և վերջին մշտընջենահաս լուսով անթառամ պսակեալ տօն յաւետահրաշ և ճառագայթաւէտ, սկիզբն առեալ ի դատողական ատենէն, և տևէ մինչև յանսպառ մշտանորոգ յաւիտեանսն, զտօնասիրացն բացախմբից միացեալ պար յիւրն լուսաթաղանթ առագաստեալ ծոց, զանզրաւական ուրախութեանցն տրոհելով աստ մաքրեցելոցն յարատևողութիւն

ընդ Նին աստուածացեալ եղելոց»: Հայերէն լեզուի ո՞ր յետին աշակերտն է, որ կարդալով այս երկու հատուածներն՝ չհամարիր զնոսա ծնունդ խակ մտաց տգէտ իմաստակի մանաւանդ՝ քան Խորենացւոյ հասուն գրչին, թէև գնենք, ինչպէս ոմանք կը գնեն կարծելով արդարացունել, թէ ի պատանեկութեան գրած է Խորենացին այս ճառերն: Բայց այս ճառք, որ Երզնկացւոյն դարը կը հոտին՝ ոչ պատանեկի գործ են, այլ տգէտ վարդապետի քարոզ, խօսուած ռամիկ ունկնդրաց, որոց մին հարցուելով երբեմն, թէ ինչպէս էր քարոզն որում ունկնդիր եղած էր՝ պատասխանեց. Չհասկցայ, բայց շատ գեղեցիկ էր:

Գիրք Պիտոյից, որ մեր յետին դարերու տգէտ պատմիչներէ և արդի գիտուն բանասէրներէ այնպէս մեծ նախանձաւորութեամբ կ'ընծայուի Խորենացւոյն, այն է համբաւեալ հեղինակին Հայոց Պատմութեան՝ է բոլորովին օտար այն պատմութեան ընտիր մասերուն լեզուէն և ոճէն: Պէտք է գիտնալ, որ յետ անկման հին յունական ճարտարխօսութեան ելաւ նոր դպրոցական կամ ակադեմական ճարտարխօսութիւն իբրև հռետորական արուեստ, որոյ ուսման համար յօրինեցան առանձին մատեանք: Այսպիսի մատեան մի յօրինեց ի սկզբան Դ. դարուն կամ ի վերջ կոյս Գ-ին Ափթոնիոս Անտիոքացի, հռետոր յոյն, «Կանուխ Հրահանգ» (Προγυμνάσματα) անուն, որ երկար ժամանակ գործածուեցաւ ի դպրոցս: Ափթոնիոսի նախանձորդ, կամ թերևս նորին դպրոցէն էր Լիբանիոս, նոյնպէս Անտիոքացի, որ իբրև հռետոր՝ մեծ համբաւով կ'ուսուցանէր Կոստանդնուպոլիս, Անտիոք և այլուր: Թէպէտ այս ճարտարխօսութիւնն չունէր հին յունականին յարգը, կը համարուէր մանաւանդ ապականիչ ճշմարիտ ճարտարխօսութեան, և հռետորք կը կոչուէին սոփեստէս (իմաստակ) մանաւանդ քան հռետոր՝ բայց և այնպէս բանիբունք ոմանք ի յոյն հարց, ինչպէս Բարսեղ, Ոսկեբերան, Նազիանզացին, ելան այն դպրոցներէն: Ափթոնիոսի մատենին, կամ ուրիշ նմին նման յունարէն գործոյ մը թարգմանութիւն կամ նմանութիւնն է մեր Պիտոյից գիրքը, որ թէպէտ սոփեստական գրուած՝ կարէր լինել մեծապէս օգտակար լեզուին՝ եթէ տրուէր ազգին իւր հարազատ լեզուաւ և ոչ այն խժական բարբառով: Պիտոյից լեզուն ամենայն հաւանականութեամբ ունի Է. կամ Ը. դարուն Սիւնեաց դպրոցին մթին և անպիտան հելլենաբանութիւնը, ուստի եթէ հարկ է ընծայել զայն, ըստ անուանն, Մովսէսի ումեմն՝ աւելի բանաւոր է ընծայել Սիւնեցւոյն Մովսէսի, վարդապետին Ստեփանոսի Սիւնեցւոյ, քան կարծեցեալ հեղինակին Հայոց Պատմութեան, այն է Խորենացի կոչուած Մովսէսի: Չամչեան, յետ յիշելոյ զՄով-

սէս Սիւնի, թէ «էր յաւուրս սորա (այսինքն Թէոդորոսի Քռթենաւորի) Մովսէս եպիսկոպոս Սիւնեաց, վարժ յիմաստս Հելլենական դպրութեանց և առաւել ևս ի քերթուածս Հռետորական Հանդիսից Հայկական լեզուի, մինչև կոչել նմա քերթող քաջ, և յոմանց անուանել քերթողահայր, իբր երկրորդ զկնի երանելւոյն Մովսիսի Խորենացւոյ»՝—կը յաւելու. «Սա յօրինեաց զքերականութիւն և զճարտասանական գիրս. գրեաց և բազում ճառս Հռետորականս ճոխութեամբ, մինչև ի կարծիս լինել ոմանց յայժմու ժամանակիս, թէ սորա իցէ արարեալ և զայն իմաստալից գիրքն Պիտոյից, բանիւ Թէոդորոսի Քռթենաւորի. բայց այս չերևի հաւանական»։ Այլ թէ ընդէր՝ չտար պատճառը. անշուշտ վասն զի ոչ այլ ոք բայց ի Խորենացւոյն էր կարող թարգմանել կամ յօրինել այնպիսի «իմաստալից» մատեան։ Այս դատաստան ներելի է Չամչեանի ժամանակին։ Հեղինակն «Պատմութեան հայերէն դպրութեանց», որ գիտէ, թէ Ելլադա Պիտոյից պէս գրուածներ «աւերիչ և խանգարիչ կը սեպէր բուն և հարազատ ճարտասանութեան, և ընդհանրապէս սոփեստէս կամ իմաստակ անունը կու տար անոնց», կը խոստովանի ևս «ոճոյ զանազանութիւնը որ յայտնապէս կը տեսնուի Պիտոյից գրոց և պատմագրութեան մէջ»՝ կը խղճէ սակայն համարել զայն անհարազատ գործ Խորենացւոյն, վասն զի «ազգային ընդհանուր աւանդութիւն մը, ասէ, դէմ կ՚ելլէ այս կարծեաց, որ (ընթերցիր՝ այս կարծեաց դէմ կ՚ելլէ ընդհանուր ազգային աւանդութիւն մը, որ) Պիտոյքը Մովսիսի հարազատ կը համարի»։ Ո՞ր աւանդութիւնն է այս։ Չենք գտներ ամենևին յիշատակութիւն ո՛չ ժամանակակից և ոչ մերձաւոր ժամանակաւ՝ որ զՊիտոյիցն ընծայէ Խորենացւոյն՝ իբրև ծերագունից ծանօթ և առհասարակ ընկալեալ աւանդութիւն. այն զոր հեղինակ մեր կը կոչէ «ընդհանուր ազգային աւանդութիւն»՝ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ կարծիք քան զՄովսէս հինգ կամ վեց հարիւր տարի յետոյ ապրող տգէտ հեղինակի։ Պիտոյից վերջաբանին մէջ միայն ի վերնագրին կը գտնենք Մովսէս անուն ոմն, յիշուած երկրորդէ մը, թերևս յետին օրինակողէ, իբրև «քերթող», ոչ իբրև Խորենացի.—«Մովսիսի քերթողի, արարողի Պիտոյիցս տառի, խրատաբանութիւն յորդորական առ Թէոդորոս ոմն աշակերտ իւր, նախակրթիւ քաջուշիմն վարժիւք յիմաստս ճարտասանականս արհեստիս»։ և ի ստորև բուն հեղինակէն ունինք մութ իմն ակնարկութիւն յանուն իւր և աշակերտին Թէոդորոսի.—«Այս է նախադուռն կրթարանիս և ասպարէզ ենթակայս իրի հռետորական հանդիսաւորաց, համանդամայն ուշեղագոյն պարմանեացն։ Ի յայս ներակրթեալ երկասիրաբար՝ հետևելով վարժա-

պետոս քովին Մովսիսի՝ բոլորեսցես քեզ պսակ հոգեծաղիկ վարսագեղ, ունել ի ներ անձինդ, ով Թէոդորէ։ Զայս առադրելով գաղափար, յօրինեալս առասպելականս կրթարանիս ճարտարագոյնս՝ Մովսէս քեզ Թէոդորի սաղապելով ի սոյն մէտ երանեսցիս»։ Եթէ հոս յիշուած Մովսէսն, վարժապետ Թէոդորոսի, է պատմական անձն և մատենագիրն՝ մեծ հաւանականութիւն կայ թէ է Մովսէս Սիւնի, քան Մովսէս Խորենացի, և Թէոդորոսն մեծ հաւանականութեամբ է Քռթենաւորն, որում. թող զանունն՝ կը յարմարի նաև ժամանակն. և Քռթենաւորի լեզուն և ոճն չեն աննման լեզուին և ոճոյ Պիտոյից։ Բայց հեղինակն Պատմութեան հայերէն դպրութեանց ունի աւելի զօրաւոր պատճառ ընծայելու Պիտոյից գիրքը Խորենացւոյն, այն է «ժամանակաւ կրտսեր պատմչի մը, Կիրակոս Գանձակեցւոյն վկայութիւնը, որ յայտնապէս կը գրուցէ. «Սքանչելին Մովսէս (շարագրեաց) զհայոց պատմութիւնն ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ... և զՊէտքն ի խնդրոյ Թէոդորոսի ումեմն» (ընթերցիր՝ ուրումն)։ «Իրեն ձայնակից է—կը յաւելու հեղինակն մեր—Ասողիկ. —Ի ժամանակս (Գիւտայ կաթողիկոսին) էր մեծ փիլիսոփոսն Հայոց Մովսէս, որ զճարտասանական արուեստ ի գործ առնու ի Հայս։ Նոյնպէս ալ, թէպէտ աւելի անորոշ խօսքերով՝ Արծրունին, Գրիգոր սարկաւագապետ և այլք, որք միաբան անուանի փիլիսոփոս և քաջ հռետոր կը կոչեն զինքը, և քերթող և քերթողահայր»։

Եթէ վկայութիւն ագիտի ուրուք, որպիսի է Գանձակեցին, բաւական է հաստատել ինչ որ հինգ կամ վեց դար յառաջ է, ընդէր բաւական չհամարինք զվկայութիւն նոյնչափ ագէտ, թէպէտ սակաւ ինչ աւելի նոր հեղինակի, այն է Առաքել վարդապետի, որ ևս աւելի իրաւամբ «Անյաղթին կ'ընծայէ Պիտոյից գիրքը.—Դաւիթ Անյաղթ հինգ գիրք գրեաց. զՍահմանքն, զԲարձրացուցէքն, զՊէտքն, զՄեկնութիւն քերականին և Արիստոտելի»։ Առաքել կու տայ այս վկայութիւնն անտարակոյս մեր դպրութեան այն երկու փառաւոր յիշատակարանաց, Պիտոյից և Դաւթի լեզուներուն, որ ոչ այլով իւիք կը տարբերին իրարմէ՝ եթէ ոչ աւելի կամ նուազ այլանդակութեամբ։ Որովհետև օրինակն զօրաւորագոյն է քան զբան՝ հոս դնենք մէն մի հատուած իւրաքանչիւրէն, այն է Խորենացւոյն Պատմութենէն և ի Պիտոյից, ընթերցողաց թողլով զընտրութիւնն, թէ հնա՞ր է արդեօք երկու այսչափ տարբեր ոճեր ընծայել միևնոյն հեղինակի. քանզի լեզուն, եթէ միայն ընթերցողն խելամուտ է տարբերութեան էական կէտերուն՝ է մին յէական պայմանաց զատելոյ և որոշելոյ մատենագրութեանց ժամանակն, ուստի և հեղինակը։

Հատուած ի Խորենացւոյն. «Բայց անցցուք այսուհետև յա-

զագս Տիգրանայ և որ ինչ ի նմանէ գործք։...Զի՞ ո՞ք ի ճշմարիտ արանց և որոց ի բարս արութեան և իմաստութեան սիրելութիւն կայցէ, սորա յիշատակօքն ոչ զուարճասցի, և յորդորեսցի այսպիսի այր լինել։ Արանց կացեալ գլուխ և արութիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց, և զընդ լծով կացեալսս՝ լծագիրս և հարկապահանջս կացոյց բազմաց. մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէսպէս գունոց և անկուածոց, արանց հաւասար և կանանց միանգամայն բազմացոյց, որով տգեղագոյնքն իբրև զգեղեցիս երևէին սքանչելիք, և գեղեցիքն ըստ ժամանակին առհասարակ դիւցազնացեալք։ Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առհասարակ դիպաղեզունք, և չերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք, մերկքն վահանօք և զգեստուք երկաթոյ պարածածկեալք. որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք՝ զթշնամիսն արտահալածել։ Խաղաղութեան և շինութեան բերող, իւղով և մեղու զհասարակս ամենեցուն պարարեալ» (Խոր. Ա., ԻԴ.)։ Ահա Խորենացւոյն լեզուն, որ իւր առանձին ձևովն և սակաւ ինչ մթութեամբն՝ է տակաւին հայերէն, յայտնի և դիւրիմաց։

Բերենք նմին նման հատուած մի և ի Պիտոյից. տեսնենք թէ ունի՞ նմանութիւն առաջնոյն ոճին և պարզութեան։

«Զմեծ հանդէս քաջարութեանցն գովել, և մանաւանդ իմաստասիրագոյն և անմախասէր գիտաւորութեամբ, սուղապէս որպէս ինձ և ամենեցուն թուի՝ յոյժ գերազանցեալ ահա դեր զընաւ ընդ արեգակամբս ի մարդկայինս ազգէ արութեամբ միայն լակոնականս անցեալ գոցի ազն»։ Բան մը իմացա՞ւ արդեօք ընթերցողն. թող կարդայ երկիցս, երիցս և առաւել եթէ կամի։ Երթանք յառաջ։ «Զոյց ուրումն գլայնագոյն և զանպարտելի կալուածս նոցա տեսանելով վայրացն՝ զարմանալով հանդերձ մատուցեալ հայցէր պատասխանիս, թէ ո՞ւր իցեն կէտահարութիւնքն սահմանաց մայրաքաղաքին նոցա Սպարտայ։ Եւ նորա զնիզակն ցցեալ՝ բայ. Ցայս վայրի։ Եւ կարի քաջ լի իմաստութեամբ ընձեռեալ բան. վասն զի ո՞ առասցէ ոչ գիտել, զի որք ի զէնս են հրահանգեալ, և միշտ նաքիմբք ի դէմս թշնամեաց յառաջանան նահատակութեամբ, սոյգ աճեցունս օրըստօրէ գործելով զբարեփառութեանց իշխանութիւն՝ այլև ընդարձակս ևս և անոլորտս զիւրեանցն լիրեցուցանեն սահմանս կոչեցեալ։ Ըստ որում ապա և տիրել վայրացն, թերևս բոլորեցուն իցէ ծանօթագոյն. զի ոչ հաստատեալ ինչ բերեալ լինին նշանօք, ոչ փոսիւք ինչ փորելովք, կամ հողաբլուրս ինչ յերկրէ

յարուցանելով, և ոչ արձանս ի քարանց կանգնելով, և ոչ ընաւ այլով ինչ սովին օրինակաւ. բայց ճշմարտապէս ասել, թէ մենամարտիկ նահատակացն արգասիւք զանխալագոյնս մանաւանդ ունել հաստատութիւն։ Տինա այնպիսիքն ոչ միայն զիւրեանցն վիճակեալ կալուածս բաւական կարծեն հզօր ունել ձեռամբ, այլ և յոլովս անգամ զհակառակամարտ թշնամեացն զցանկալիս բուրաստանացն և զարգաւանդահողն վտարեն զերկիր։ Եւ համանգամայն իսկ զկապուտ ազգաց և զաւար ոսկւոյ և արծաթոյ և պատուական քարանց յինքեանս հաւաքելով, ամենավայելուչ բարեբախտութեամբ զկենցաղոյս անցուցանեն յաւիտեան»։

Կարծենք բաւական է այս՝ ցուցնել ամբաւ խոխը, որ կայ ի մէջ լեզուին և ոճոյ Խորենացւոյն և սորա։ Բայց որպէս զի լաւ ևս հասկցուի այս «իմաստալից» մատենին պատուականութիւնը՝ դնենք միւս ևս օրինակ, ուրոյ պարզ իմաստն է այս, յստակ հայերէնով. «Յանչափ բազմութեան փիլիսոփայից ապաքէն արժանի մեծի գովութեան է Հեսիոդոս վասն առաւել հմտութեանն, մինչև իշխել նմա ասել ուրեք յերգս իւր զանձնէ՝ թէ քան զՀոմերոս իսկ իցէ գեր ի վերոյ։ Արդարև սա է, որ զգեղեցիկ յօրինուածոյ երկնից և երկրի և զվայելուչն խառնուածոյ տարերաց առ միմեանս խօսեցաւ զառաջինն բազում հմտութեամբ։ Հանդերձ այսու և հանդամանաց մշակութեան էր նա տեղեակ, և այլոց ևս իրաց իրաց, որ շահաւորքն են կենաց մարդկան։ Խօսեցաւ և բազում բանս խրատուց, յորոց նշանաւոր է այն՝ զորմէ ճառել առաջի կայ մեզ։ Յիմար է, ասէ, որ ընդ ուժգնագոյնս քան զինքն ի վէճ գալ մտաբերիցէ»։ Մեր իմաստալից մատեանն սապէս կու տայ մեզ այս պարզ իմաստը. «Հռչակելումն յոյժ ծայրագոյն պատուականութեամբ Եսիոդեայ՝ յամենավայելուչն քերթողաց պարս, արժանաւոր է առաւել միշտ զհրաշափառագոյն նազարանութիւն նմա հատուցանել վարկ։ Որ գեղեցկատարփելի իմն և յարդարուն հմտութեամբքն յառաջեալ՝ զբոլորիւքն գերազանցեալ քերթուածովք, այնքան մինչ զի արձանակեալ ուրեմն յիւր դիւցազնական տաղսն՝ գեր ի վերոյ զինքն ասաց լինել գեր զհռչակելին և զվեհն ամենայն քերթողաց Հոմերոս։ Եւ մանաւանդ ըստ այնմ ևս, զի զերկնի բնութիւն և զերկրի, միանգամայն զբովանդակ տարերցդ առ իրեարս յարդարեալ յարմարագոյն խառնումն՝ քննութեամբ պարատեսեալ ղեկոյց բոլորեցուն։ Այլ ընդ նմին և մշակականն հանգամանաց տեղեկութիւն, և զյոլով այլ ևս զկենցաղօգտակարագոյնս ախորժակացն։ Յորոց ի մի ի նորա գիտնական վերաբերեալ խրատուց՝ առաջիկայս իսկ մեզ հարցաքննեալ յայտնեսցի, զոր ասէս, բայ. Տամ-

բուշ է՝ որ ընդ վեհագունին քան զինքն բերէ հակառակութեան վէճ»։ Թէ յունարէնէ թարգմանութիւն է այս հատուած՝ յայտնի է և՛ կարգէն և բառերէն։

Կը մնայ մեզ խօսել զԱշխարհացուցէն։ Աշխարհացոյց կը նշանակէ հոս տիեզերագրութիւն, այսինքն արդի աշխարհագրական (երկրագրական) ուսման աստեղագիտական մասը, որոյ առաջին յօրինիչ եղաւ Կղաւդիոս Պտղոմէոս աստեղագէտ յոյն, որ ծաղկեցաւ յԱղեքսանդրիա ի սկզբան Բ. դարուն, և թողուց այլևայլ աշխարհագրական գործեր։ Այս այն Պտղոմէոս է, յորոյ անուն կը կոչուի հին արեգակնային դրութիւնն, զոր փոխանակեց Կոպեռնիկեանն։ Իբրև երկու դար յետոյ, դէպ ի վախճան Դ. դարուն՝ Պապ կամ Պապպոս աղեքսանդրացի առնլով Պտղոմէոսէ յօրինեց աշխարհագրութիւն, որոյ լատիներէն համառօտութիւնը միայն ունինք, բնագիրն է կորուսեալ։ Խորենացւոյն Պատմութեան մէջ կայ Պտղոմեայ յիշատակութիւնն.—«Որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պտղոմեայ ասպարիսօք զբնակութիւն մարդկան չափեցին» (Խոր. Ա. Լ.)։ Այս յիշատակութիւն, որ կը թուի եկամուտ, քանզի չունի բնաւ յարմարութիւն տեղւոյն՝ առիթ տուած է կարծել Խորենացւոյն Պատմութեան հեղինակն յօրինիչ Աշխարհացուցին։ Բայց այս գործն է, որպէս ինքն իսկ հեղինակն ասէ՝ թարգմանութիւն քաղուածոյ, ոչ ուղղակի ի Պտղոմեայ (թէպէտ հեղինակն ուրեք ուրեք կը յիշէ զՊտղոմէոս), այլ ի Պապայ. քանզի ի Պտղոմեայ առնուած հատուածք են յայլմէ աղբերէ, համառօտուած և փոխուած, հաւանականապէս ի Պապայ, ինչպէս կու տայ կարծել ինքն իսկ հեղինակ աշխարհացուցին. «Յայրեալ գօտւոյ, ասէ, ի հարաւակոյս... չէ ուրուք գեղը երկրի տեսեալ կամ գիտացեալ, որպէս ասէ Պտղոմէոս... յորոյ ինքնագիր (ըստ այլոց՝ երկնագիր, կամ երկրագիր, կամ երկրագիր, որ լաւագոյն ընթերցուածն է) բոլորակին տիեզերագրութեանցն առեալ (է) Պապայ աղեքսանդրացւոյ համառօտաբար, յորմէ մեր ծայրաքաղ արարեալ գրեցաք զմեծամեծսն և զնըշանաւորսն միայն»։ Այլուր դարձեալ. «Սկսցուք ըստ Պապայ Աղեքսանդրացւոյ երկրագրութեանն, որ (է) ըստ երկրագիր բոլորակին Կղաւդեայ Պտղոմէոսի տիեզերագրութեանցն», և այլն։ Հեղինակին միտքն է այս. Պտղոմէոս յօրինած էր իւր տիեզերագրութիւնն (cosmographie) ի հարթ բոլորակի, ուր կը նշանակէր իւր աստեղագիտական տեղեկութիւններն զկիսոյ երկրիս՝ որ յայնժամ ծանօթ էր։ Պապ այս տիեզերագրական բոլորակին համեմատ յօրինեց զիւր երկրագրութիւն, յորմէ մենք քաղեցինք համառօտիւ։ Իսկ թարգմանչին և ժամանակին կամ դարուն համար չէ դժուարին որոշել,

թէ Աշխարհացոյցն ունի արդարև միջին իմն ոճ, և չէ նման ըստ լեզուին ո՛չ Պիտոյից և ոչ միւս գործոց ընծայելոց Խորենացւոյն. ուրեք ուրեք, մանաւանդ ի սկզբան ցուցնելով նմանութիւն ինչ ոճոյ Պատմութեան Խորենացւոյն՝ կ'առնու տակաւ Ւ-էն մինչև Թ. դարու թարգմանութեանց անհարթութիւնը և մթութիւնը, մինչև լինել բազում ուրեք անոճ և անիմաստ: Թէպէտ ի նմին հեղինակէ՝ սակայն աւելի պարզ և ընտելական հայերէն է քաղաքական մասն, ուր ըստ բաժանման Պապայ կը խօսի երկրիս գլխաւոր մասանց վրայ, այն է՝ Եւրոպայ, Լիբիայ (Աֆրիկէ) և ընդհանուր Ասիոյ, հանդերձ իւրաքանչիւր բաժանմամբք, ոչ աննման ոճոյ արդի բնական և քաղաքական աշխարհագրութեանց, թէպէտ համառօտ յոյժ, յաւելլով ևս յանձնէ համառօտ աշխարհագրական տեղեկութիւններ, մանաւանդ Հայոց, Վրաց և Աղուանից վրայ ըստ քաղաքական հանգամանաց՝ զոր ունէին այս երկիրներն Ե. դարէն մինչև Ը. դար: «Եւ արդ՝—ասէ հեղինակն ի վախճանի աստղագիտական մասին—որովհետև բովանդակեցաք զհասարակախօսութիւնն (այսինքն ընդհանուր ուսումնական մասը), այսուհետև ըսկսցուք պատմել աշխարհ աշխարհ առանձինն ըստ գրեցն տեղագրութեանց Պապայ աղեքսանդրացւոյ, սկիզբն արարեալ յարևմտեայ յՈվկիանոսէ (այն է ի Միջերկրականէն) ի ծայրէն Սպանիոյ աշխարհին» (իմա ի ծայրէն, ուր է Սպանիացւոց աշխարհն):

Այս քաղաքական կամ պատմական մասն է մանաւանդ, որ կը ցուցնէ թէ հեղինակն չկարէ լինել յառաջ քան զԷ. դար, քանզի կու տայ երկրագրական (աշխարհագրական) և պատմական տեղեկութիւններ՝ որ կ'ակնարկեն Յուստինիանոսի (527—565) և Արաբացւոց սկզբան ժամանակներն: Զորօրինակ յիշելն զՌաւեննա իբրև քաղաք «Հոյակապ» յԻտալիա հաւասար Հռոմայ՝ կ'ակնարկէ զխոխարքայութիւնն (exarchat) որ սկսաւ 568-ին Ռաւեննա ի ձեռն Նարսեսի (472—568) առ Յուստինիանոսիւ: Ե. դարու մէջ ապրող հեղինակ մը չէր կրնար գիտնալ զՓրանկս իբրև «հզօր ազգ» ի Գաղղիա. Փրանկք հազիւ սկսան գտնել մուտ ի Գաղղիա ի վախճանի Ե. դարուն, նա մանաւանդ յետ սկզբան Զ-ին, և չեղան հզօր և անուանի՝ բայց ի սկզբան Է-ին: Նաև գիտելն զՔերսոն (Քրիմէ) ընդ ձեռամբ քրիստոնէից՝ կ'ակնարկէ զժամանակն Յուստինիանոսի. քանզի Յուստինիանոս եղաւ առաջին որ նուաճեց զՔերսոն, որ և մնաց այնպէս մինչև 679: Ե. դարու հեղինակ մը չէր կրնար գիտնալ զՊասրա՝ «ամենալից վաճառօք, և եկք նաւաց (ի նա) ի Հնդկաց և յամենայն կողմանց արևելից»: Պասրա շինուեցաւ Ոմար ամիրապետէն 636-ին, և այնուհետև եղաւ արդարև քաղաք վա-

ճառաշահ: Արաբացւոց ժամանակի անուններ են Տփղիս, Շամշողդէ, Պարտաւ, Նփրկերտ, Սասուն, Անարզաբա: Յետոյ քան զԵ. են նաև Թուրք և Եթիլ անուանք, մին՝ ազգի, և միւսն՝ գետոյ. Կնշրիմ (ըստ Արաբ. Գենեսրին), Կոզա (Քուֆա), և այլք: Արաբական է նաև՝ զՓառան կոչել տուն Աբրահամու: Կան օրինակներ, յորս կը գտնուին ուրիշ ակնարկութիւններ նոյնպէս յետոյ քան զԵ. դար, որպիսի են Նարսէս, զօրավար Յուստինիանոսի, «իշխանացեալ երից քաղաքաց յԱփրիկէ», իբրև Ներսեհ Կամսարական պատրիկ Շիրակայ և Արշարունեաց. Բուլղարաց Քուվրաթ իշխանին որդին Ասպարուք, հիմնիչ նոր բուլղար հարստութեան (667) ըստ բուզանդեան պատմագրաց՝ Աշխարհացուցէն, այսինքն օրինակէ մը՝ յիշուած իբրև «Ասպար-Հրուկ, որդի Խաբրատթայ»: Թուրքաստան անունն, անծանօթ Ե. դարուն մէջ, ինչպէս նաև «Խազուն», յետին բառ արաբերէն փոխանակ գլխոյի, և մանաւանդ անունն Ռուսաց որ կ'սկսին ծանօթանալ Թ. դարուն մէջ: Այս ամենայն բաւական է ցուցնել, թէ Աշխարհացոյցն ոչ միայն չէ գործ Ե. դարուն մէջ ապրող մատենագրի, որպիսի պարտի լինել Խորենացին Հեղինակ Հայոց Պատմութեան՝ այլև է ժամանակ ժամանակ յաւելեալ և խանգարեալ յետին տգէտ գրիչներէ, ինչպէս արդէն դիտած են եւրոպացի քննիչք, յորս երևելի է Սէն Մարթէն հայերէնագէտ գաղղիացին († 1832):

**28.** Գանք միւս երկու նշանաւոր պատմագրաց, Եղիշէի և Փարպեցւոյն: Այս երկու մատենագրաց լեզուն ևս չէ արդարև առաջին կիսոյ Ե. դարուն, բայց չունինք նաև բաւական պատճառ գտնելոյ զնոսա յետոյ քան զերկրորդ կէս այն դարուն: Որովհետև այս պատմութեանց նիւթը կը վերաբերի երկրորդ կիսոյ Ե. դարուն՝ կըհետևի, թէ այս երկու պատմիչք եթէ չեն ականատեսք՝ են գէթ ժամանակակիցք ականատեսներու. այս պարագան ապաքէն կուտայ մեծ հաւանականութիւն ստուգութեան պատմութեան նոցա: Փարպեցւոյն համար կայ յիշուելու արժանի ուրիշ կէտ: Առանց երկբայութեան է, թէ Պատմութիւն Փարպեցւոյն գրուեցաւ ի խնդրոյ Վահանայ Մամիկոնենի, որ էր ժամանակակից և պաշտօնակից Սահակայ Բագրատունւոյ. առանց երկբայութեան է նաև, թէ Փարպեցին առաւ բազում ինչ ականատեսներէ, զորօրինակ Վարդանանց պատմութեան համար ի Վահանայ Ամատունւոյ, որ էր մին ի նախարարաց Վարդանանց դարձելոց ի Հայս առ Պերոզիւ, և Վահանեանց պատմութեան համար՝ ի նմին իսկ Վահանայ և յայլոց՝ որ էին գործակից և միջամուխ Վահանայ գործերուն: Արդարև զայս գիտենք միայն ի վկայութենէ նորին իսկ Փարպեցւոյն. սակայն չէ

բանաւոր խորհել, թէ Փարպեցին կը ստէ ասելով, թէ գրեց ի
խնդրոյ Վահանայ, և առաւ այս կամ այն ականատեսէ։ Ահա բանք
Փարպեցւոյն. «Մտաւոր և քաջ այրն Վահան, տէրն Մամիկոնէից,
զօրավարն Հայոց և մարզպանն, որ բազում և անհամար ուղղու-
թեանց աշխարհիս Հայոց ի ժամանակս իշխանութեան իւրոյ եղև
արարող անձամբ և զայլս յորդորելով զբազումս. որպէս այլ ամե-
նայն բարւոյ հոգացեալ զՀայաստան աշխարհի իբր՝ առաւել ևս
զայս ի դէպ և պատշաճ համարեցաւ, ի մնացեալ տեղւոյ պատմու-
թեան երկրորդ գրոցն (այն է Բուզանդայ) աճեցուցանել յառաջ և
գրել յայնմհետէ զեղեալս յաշխարհիս Հայոց։ Բազում զգուշու-
թեամբ գրել և կարգել մի ըստ միոջէ զամենայն զհոգևորացն զա-
ռաքինութիւնս և զարանց քաջաց զլաւութիւնն»։ Եւ ի ստորև ա-
ւելի յայտնի. «Ըստ այսմ օրինակի զգուշացուցեալ ստիպեցուցանէ
զմեզ տէրն Մամիկոնէից Վահան, զօրավարն Հայոց և մարզպան,
որոյ հասեալ հրաման առ իս Ղազար Փարպեցի, որ և սնեալ և
ուսեալ առ ոտս առաքինակրօն երանելւոյն Աղանայ Արծրունւոյ…
Եւ արդ այսպէս հարկաւորեալ բանադատեաց զտկարութիւնս մեր
տէրն Մամիկոնէից Վահան, սպարապետն Հայոց և մարզպան, ձեռ-
նարկել ի գործ որ ի վեր քան զկար գիտութեան մերոյ էր։ Զի ոչ
փոքր ինչ կասկած է աներկիւղ այսպէս ումեք տալ զանձն յայսպի-
սի վտանգս, ուր պիտոյ են յարմարութիւնք բանից, որոշեալ կար-
գադրութիւնք ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն, բերել պատ-
կառելով ստուգագրութիւն անպարսաւ յականջս իմաստասէր լսողաց,
չյաւելուլ զանեղեալսն յընդունայն աճմունս բանից, չնուազեցուցա-
նել զեղեալսն և կարճակտուր պատմել բանիւք անփութութեամբ.
այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն։ Եւ վասն
զի են աստ պէտք բազում երկիւղածիր պատրաստութեան՝ արդ նպաս-
տեալ իմում տկար խորհրդոյս աղաչեմ սատարեցէք առ Աստուած
խնդրուածովք, որովք արդարապատումն ճշմարտաբանեալ զեղեալ
վեր քան զիս գործոյս հարկաւորութիւն, ընդ յորձանս մեծապա-
տում ծաւալեալս նաւեալ մտաւոր ստուգաբանութեամբ հասից
յանալէկոծ և յապահով նաւահանգիստն» (Փարպ. Գ. Ե.). Չէ բա-
նաւոր մանաւանդ խորհել, թէ այս բանք չեն Փարպեցւոյն, այլ
այլոյ ուրուք եկամուտ։ Համառօտիւ՝ պատմութիւն Փարպեցւոյն
ունի՝ ինչ որ կը պահանջուի ընդունելու համար պատմութիւն մը
հարազատ և ժամանակակից։ Փարպեցին կը թուի մեռած առ կեն-
դանութեամբ Վահանայ, քանզի չգիտեր նորա մահը. այս յայտնի
է նաև ի թղթոյն, որ ուղղեալ է առ Վահան և է ստուգիւ Փար-
պեցւոյն։

Եղիշէի համար չունինք նոյն ստուգութիւնը։ Դաւիթ երէց Մամիկոնեան, յորոյ խնդրոյ գրեց Եղիշէ զպատմութիւն իւր ըստ վերնագրի մատենին—«Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Դաւթի երիցու Մամիկոնի հայցեալ»—չէ ծանօթ ոք, ուստի և չկրնար պատմագրութեան ժամանակին վրայ տալ մեզ լոյս։ Եղիշէ իւր յառաջաբանին մէջ, որ է ինկած հայերէն, և ոչ ինչպէս կը պահանջուէր թարգմանչաց աշակերտէ՝ չտար զանուն անձին, որ որպէս թէ հրամայեց նմա գրել զայն պատմութիւն. կը կոչէ զնա միայն «քաջ» - «Բանն վասն որոյ պատուիրեցեր՝ արարի, ո՛վ քաջ»։ Սակաւ մի յետոյ կը գովէ զնա իբրև մեծ ի գիտութեանն Աստուծոյ - «Այլ դու, ո՛վ մեծ ի գիտութեանն Աստուծոյ»։ Այս տողերուն նայելով՝ հարկ է դնել, թէ այս անծանօթ Մեկենասն, թէպէտ լոկ երէց ըստ վերնագրին՝ էր նշանաւոր ոք։ Այսչափ ըստ ճակատուն և յառաջաբանին. բայց կայ ուրիշ կէտ որ բաւական ապացոյց է, թէ պատմութիւնն Եղիշէի գրուեցաւ ոչ շատ յետոյ քան զպատերազմն Վարդանանց, այսինքն սակաւ ամօք յետոյ քան զմահն Յազկերտի Բ. (458 կամ 460). առ որով եղաւ այն պատերազմն, երբ տէրութիւնը կործանման մօտ էր յերեսաց թագաւորին Քուշանաց, որմէ չարաչար յաղթուեցաւ Յազկերտ։ Ասելն Եղիշէի - «Բանզի և արքք օրհասականք ի վախճանել շնչոյն հզօրագոյնս կռուին»՝ ըստ ոմանց կ'ակնարկէ զայս։ Եւ արդարև Պատմութիւն Եղիշէի կը հասնի մինչև հինգերորդ տարին Պերոզի (466)։ Եղիշէ չգիտեր նախարարաց դարձը։ Պատմութիւնն Եղիշէի թէպէտ ժամանակակից՝ ունի պատմական հիման վրայ վիպասանական ձև, որ պատմութիւնը գէթ ըստ պարագայից կը փոխէ ի վէպ։ Եղիշէի անձին վրայ չէ մարթ ասել ստոյգ ինչ. ինչ որ կը պատմեն զնմանէ յետին պատմիչք, մերթ դնելով զնա ատենադպիր Վարդանայ և ի բանակի նորա, մերթ եպիսկոպոս, և մերթ առանձնացեալ յանապատ՝ չէ արժանի հաւատարմութեան։ Ստոյգ է սակայն, թէ պատմութիւնն յանուն Եղիշէի է գործ ոչ գոյզն մատենագրի երկրորդ կիսուն Ե. դարուն։ Լեզուն, ազատ հելլենաբանութենէ՝ չունի թարգմանչաց լեզուին նկարագիրը, ուրեք ուրեք ձանձրալի միակերպութեամբ հակառակ ընտիր ճաշակի, իսկ ըստ պատմութեանն՝ ոչ առանց ընտրութեան ընդունելի։ Պատմութիւն Եղիշէի, հանդերձ հմտութեամբն դենին Պարսից, որոց բառերն իսկ շատ անգամ կը գործածէ՝ է պատմական վէպ, որոյ նպատակն է բարձրացունել յաչս ժողովրդեան, ժամանակին բառով ուխտապահութիւնը, և աղարտել ուխտադանցութիւնը, զմին՝ յանձին Վարդանայ, և զմիւսն՝ յանձին Վասակայ, որ են երկու անձինք այն վի-

պատասխանութեան։ Ուստի և զգուշաւոր պատմիչ մը չկրնար առանց անաչառ դատաստանի առնուլ բան առ բան ինչ որ կը պատմէ Եղիշէ։ Փարպեցին, ըստ լեզուին այնպէս ինկած ինչպէս Եղիշէ՝ չունի արդարև Եղիշէի պատմագրական արուեստը, բայց և ոչ այն բանի միակերպութիւնը և վիպասանական ձևն, որ պատմութիւնը կը փոխէ ի վէպ (րոման), այլ է ըստ ոճոյն բնական և զանազան, և հանդերձ անպաճոյճ և անողորկ պարզութեամբն ունի ժամանակին ժողովրդեան լեզուին գուարթութիւնը։ Որպէս Եղիշէ՝ նոյնպէս Փարպեցին ըստ ոգւոյն է կղերական, ուստի և կը ջանայ միշտ դիպաց այն կողմերն երևցունել, որ կը նպաստեն Վարդանեան դատին, սակայն ըստ պարագայից չէ ստեղծող, այլ միշտ այնպէս բնական՝ որ կրնանք թեթև դատաստանաւ հետևել պատմութեան նորա իբրև աղբեր։ Մեծ տարբերութեան, որ կայ ի մէջ պատմութեան Եղիշէի և պատմութեան Փարպեցւոյն՝ իբրև օրինակ բերենք յերկոցունց եւս Վասակայ մահուան կամ վախճանին նկարագիրը, ցուցնելու համար թէ որչափ բնական, և եթէ ոչ բոլորովին ճըշմարիտ՝ գէթ հաւանական է մին, և անբնական և սեթևեթեալ միւսն։ «Եւ նենգաւորն Վասակ կացեալ ի դրանն ամս ինչ-կարի վշտագին և նեղութեամբ բազմաւ՝ մաշէր զաւուրս իւր հառաչելով և յոգւոց հանելով զամենայն օր և զժամ, մինչև թշնամակերպ ձաղանօք սփռեալ զթաթս ձեռաց իւրոց՝ ինքնին զիւրոյին ծեծէր զդէմսն ասելով. Ահա ընկալ զայս ձաղս, ասէր, զոր ես բերել քեզ ուխտանենգութիւն սրբոյ Աւետարանին և արեան նահատակութեան սրբոյն Վարդանայ Մամիկոնէի և այլոցն ցանկալի հաղորդելոյն ընդ նմա, որոց ժառանգեալ զյաւիտենից կեանսն՝ ընկալան զանուն բարի յերկրի և անանց յազգաց յազգս իւրեանց։ Իսկ դու, ասէ, մեղաւոր անձն իմ, կեաս խղճիւ և ցաւօք մտաց զսակաւաթիւ զաւուրս կենցաղոյս, և պատրաստեալ պահիս մշտնջենաւոր և անանց գեհենին։ Եւ զայսպիսի բանս հառաչանաց նորա և լալոյ մինչև յօր մահուան իւրոյ՝ խօսէին ընդ մեզ զայս արդարապատումն սպասաւորք նորին իշխանին Վասակայ։ Որոյ և վախճանն իւր անդէն յերկրին Պարսից վճարէր, ըստ բանի առն Աստուծոյ սրբոյն Ղևոնդի» (Փարպ. ԽԶ.)։ Այսպէս Փարպեցին։ Լսենք և Եղիշէի. «Իսկ ուրացեալն Վասակ հայէր ի միաբանութիւն սուրբ կապելոցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանսն, և զուարթագոյն և պայծառք երևէին, որպէս յառաջագոյն յարքունիսն. Հայէր և կարօտէր, և ոչ ոք խառնեաց զնա ի նոսա, այլ ուրոյն նովին կապանօք պահէին։ Եւ որ ըստ օրէ բերէին իբրև զգէշ ընկենուին ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին, և

տեսիլ զնա ամենայն կարաւանին առնէին: Կողոպտեցին հանին և ոչ ինչ թողին զոր ընդ իւրն ունէր. այնպէս ձաղեցին աղքատութեամբ՝ մինչ հաց մուրանային և բերէին նմա իւր ծառայքն: Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա՝ որ մինչև զհարց և զհաւուց և զիւր արարս և զզարդս կանանց եւս եդ ի վերայ և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի: Եւ յայն տեղի հասուցին՝ մինչև հարցանել նմա, եթէ կայցէ ինչ գանձ ի գերեզմանս նախնեացն մերոց: Եւ եթէ գտեալ էր նորա՝ հանէր և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս, որպէս զի բազում մարդիկ խսկ չոգան ի տուժի: Եւ իբրև այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ՝ անկաւ յախտս դժնդակս անդէն ի կալանսն: Ձեռաւ փոր նորա, և հարան և տորեցան գոգք նորա, և քամեալ մզեցաւ թանձրամսութիւն նորա. խցան լսելիք նորա, և ծակոտեցան չորաչոր շրթունք նորա. լուծան ջիղք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա: Բղխեաց ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա: Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա: Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ: Ոտնհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա: Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեղօք Հայոց աշխարհին՝ ոչ երևեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրև զշուն մեռաւ, և իբրև զգէշ քարշեցաւ: Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ սրբոց, և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն: Ոչինչ եթող չարիս զոր ոչ գործեաց ի կեանս իւր, և ոչինչ մնաց ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա: Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա, զի ամենայն որ զայս լուեալ գիտասցէ՝ նզովս ի հետ արկցէ, և մի լիցի ցանկացող գործոց նորա» (Եղիշ. էջ 248): Ո՛րչափ ինչ հարկ է թողուլ Եղիշէի նկարագրէն, և ո՛րչափ ի նկարագրէն Փարպեցւոյն՝ որպէս զի հասնինք բուն պատմութեան. ի վերջնոյն՝ սակաւ ինչ, յառաջնոյն՝ գրեթէ ամէնը:

**29.** Մեծագոյն տարակոյսն է Մամբրէի և Դաւթի Անյաղթի վրայ: ԶՄամբրէ յիշող հնագոյն հեղինակն է Ասողիկ, որ իբրև երրորդ ի հայ փիլիսոփայս գիտէ զՄամբրէ, և այս տեղեկութիւնը կը թուի առած այն անանուն գրուածէն, որմէ առինք Դաւթի և Մովսիսի վրայ պատմուած պանծալի գործերն յԱթէնս և ի Կոստանդնուպոլիս Թէոդոսի և Մարկիանոսի ժամանակ: Գրուածն է, ինչպէս

տեսանք՝ առասպելական։ Այս գրուածին մէջ կը յիշուի Դաւթի հետ վիճող Մամբրէ ոմն յոյն եպիսկոպոս Կորնթոսի, որ էր մին ի փիլիսոփայից Մարկիանոս կայսեր։ Մի գուցէ այս Մամբրէ տուած է առիթ ստեղծել հայ փիլիսոփայ մը նոյն անուամբ։ Զարմանալի է, որ Մամբրէ կը նշանակէ թուղթ կամ մագաղաթ, և ինքն կը կոչուի Վերծանող, այսինքն ընթերցող։ Չէ սակայն անհաւանական, թէ յառաջ քան գծ. դար եղած է վարդապետ ոմն հայ Մամբրէ անուն, զոր կը յիշէ վերոյիշեալ գրուածն իբրև ընկեր՝ պանծալի, թէև առասպելական վէճերուն Դաւթի և Մովսէսի առաջի Մարկիանու։ Յանուն Մամբրէի կան ճառք չորք, զորս ի լոյս ընծայեցին Մխիթարեանք ընդ Պատմութեան Կորեան և գործոց Դաւթի Անյաղթի։ Այս ճառերէն երկուքն են ի յարութիւնն Ղազարու, և երկուք՝ ի գալուստն Տեառն յԵրուսաղէմ։ Մամբրէ ոմն յետին դարու վարդապետ, և կամ թերևս այլևայլք, կը թուին քաղած Ղազարու յարութեան ճառերն յոյն հարց ոմանց Յովհաննու Աւետարանին մեկնութեան հին հայ թարգմանութենէն, փոխելով լեզուն ըստ ոճոյ իւրեանց ժամանակին, քանզի թարգմանչաց լեզուին նըշմարանք կ'երևին ի սոսա ուրեք ուրեք։ Եւ արդարև ձեռագիր օրինակներէն ոմանք, ըստ վկայութեան հրատարակչին, ունին զանուն Յովհաննու Ոսկեբերանի։ Նոյնպէս իմա միւս երկուց համար, որ առնուած կ'երևին հին հարց ոմանց Աւետարանի մեկնութեան թերևս աւելի յետին հայ թարգմանութենէ մը, քանզի ոճ սոցա է աւելի ստորին։ Զիարդ և իցէ՝ այս ճառք, ոյր ուրուք և իցեն՝ ըստ այժմու կերպարանացն չեն գործ աշակերտի թարգմանչաց, այլ հայերէն դպրութեան միջին դարուց խանգարեալ ճաշակի արդիւնք։

**30.** Թողլով Դաւթի Անյաղթի վրայ յօդուած առասպելներն, և դատելով ըստ կանոնաց անաչառ քննութեան՝ չենք կարող ասել հաւաստեաւ, թէ Դաւիթ էր ազգաւ յոյն թէ հայ, ուստի և գործն է բնագի՞ր թէ թարգմանութիւն Ը. դարու բիրտ Հելլենաբանութեամբ, մանաւանդ որ Դաւթի գործերին յունարէնն ևս կայ (Պատմ. Հայ դպր. Ա., էջ 213)։ Գործերին այլևայլ մասերուն ճակատը կը գտնենք գրուած. «Դաւթի եռամեծի և անյաղթ փիլիսոփայի», «Նորին Դաւթի փիլիսոփայի», «Դաւթի անյաղթ փիլիսոփայի»։ Բուն հեղինակը չէր կրնար տալ ինքեան այս տիտղոսները—«եռամեծ», «փիլիսոփայ», «անյաղթ»․ յայտնի է թէ այս տիտղոսք են թարգմանչէ կամ օրինակողէ․ հաւանականագոյն է սակայն, թէ են թարգմանչէ, քանզի գործն է թարգմանութիւն։ Հաւանականագոյն է ուրեմն, թէ յոյն ոմն Դաւիթ անուն գրած է զայս մատեան, զոր

այլ ոք հայ թարգմանած է հայերէն: Յետին մատենագիրք համարելով գործը բնագիր և ոչ թարգմանութիւն՝ զԴաւիթ կարծած են հայ, որոյ վրայ հնարուած են այն առասպելներն՝ զորս վերագոյնն յիշեցաք: Թէ այլք ևս ունեցած են յառաջ քան զմեզ զայս կարծիս՝ կը վկայէ հեղինակն Պատմութեան հայ դպրութեանց (Ա, էջ 214): Գործք Դաւթի Անյաղթի կը բովանդակեն ութ գլխաւոր մասն. եօթն առաջինք են համառօտ քաղուածք և մեկնութիւնք փիլիսոփայական գործոց Պիւռոնի, որ էր գլուխ Սկեպտիկեանց, Պորփիւրի, որ էր Նոր-պղատոնեան փիլիսոփայ Գ. դարու, և մանաւանդ դպրոցական գործոց Արիստոտելի. ութերորդն է թուղթ առ Աղեքսանդրոս յաղագս աշխարհի և առաքինութեան: Գործն է բաւական ընդարձակ, և կը մատուցանէր ամբաւ օգուտ ազգին, և լինէր հայ լեզուին մեծութիւններէն մին՝ եթէ էր հարազատ հայերէն ըստ լեզուի Ե. դարու: Ի զուր է կարծել, թէ թարգմանչաց լեզուն չէր կարող տալ այնպիսի փիլիսոփայական գործ: Չենք կըրնար հաւատալ, թէ Եզնկայ գրիչն, համակ փիլիսոփայական, չէր կարող տալ մեզ Արիստոտէլ մը, Պորփիւր մը, ինչպէս Ագաթանգեղեայն, որ այնպէս բանաստեղծական է՝ Հոմերոս մը կամ Պինդարոս մը:

Խաչի ճառին վրայ, որ կ'ընծայուի Դաւթի Անյաղթի՝ արդէն խօսուեցաւ:

# ԳԼՈՒԽ Բ.

## ԱՌԱՋԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ. ԳՈՐԾՔ ՎԱՐԴԱՆԱՑ:

*1. Սատանեանք հալածիչ քրիստոնէութեան: 2. Կասկած Պարսից զՀայոց: 3. Պատճառք կասկածանաց. Հաւատակցութիւն ընդ Յոյնս: Կէս անկախութիւն երկրին: 4. Սկիզբն հալածանաց ընդդէմ Հայոց: 5. Կը ղրկուի զունդ ի Հայս. կը կոչուի այրուձին: 6. Նոր կարգք. Երկպառակութիւն ազգին: 7. Պատմութիւն պատերազմին Վարդանանց: 8. Խտիր ի մէջ Փարպեցւոյն եւ Եղիշէի: 9. Խորագէտ քաղաքականութիւն Յազկերտի: 10. Երթեւեկ նամակաց երկուստեք ըստ Եղիշէի: 11. Փարպեցին չէ միաբան յայսմ ընդ Եղիշէի: 12. Ցասումն Յազկերտի. Նախարարք կը կոչուին եւ կ'արձակուին: 13. Անհաւանութիւնք Եղիշէի: 14. Բուն նպատակ Յազկերտի: 15. Ողորմ՛ տեսարան ի դարձին նախարարաց մոգերով. Անհաւանութիւնք Եղիշէի: 16. Վարդան մեկնի տամբն եւ կոչի յետս: 17. Պատրաստութիւն ի պատերազմ: 18. Հակառակութիւն Վահանայ Ամատունւոյ ընդ Վասակայ մարզպանի: 19. Անիրաւ կասկած զՎասակայ: 20. Վարդան կ'երթայ զօրօք յԱղուանս: 21. Թուղթք առ այլեւայլս վասն օգնութեան: 22. Յոյնք կը հրաժարին օգնել: 23. Պատերազմ՛ եւ յաղթութիւն Վարդանանց յԱղուանս: 24. Վասակ կը բաժնուի: 25. Ջանք Վասակայ արգելուլ զապստամբութիւնն: 26. Պատերազմը կ'սկսի. Պարտութիւն Հայոց: 27. Պատճառք պարտութեան Հայոց: 28. Պատճառ բաժնուելուն Վասակայ: 29. Թէ յորո՛ւմ կը տարբերի պատմութիւն Եղիշէի ի պատմութենէ Փարպեցւոյն: 30. Աւերմունք եւ կոտորած ի ձեռն Վարդանանց. Վասակ կը բռնուի եւ կ'ապաշխարէ ըստ Եղիշէի: 31. Սքանչելիք ի նպաստ Վարդանանց ըստ Եղիշէի: 32. Այլ տարբերութիւն Եղիշէի ի Փարպեցւոյն: 33. Նամակն Հայոց առ Թէոդոս ըստ Եղիշէի: 34. Հայոց խնդիրը կը մերժուի: 35. Թէ ե՞րբ բաժնուեցաւ Վասակ. Վկայութիւն զնմանէ: 36. Վասակ կ'աւերէ զերկիրն ըստ Եղիշէի: 37. Վարդան ասպատակ կը հանէ ի Սիւնիս ըստ Եղիշէի: 38. Այս աւերմանց համար երկուստեք զուժկան առ թագաւորն, որ կ'ապաշաւէ, ըստ*

*Եղիշէի: 39. Վասակ ուրացի ժողովուրդներ կը գրգռէ ընդդէմ Վարդանանց, ըստ Եղիշէի: 40. Թէ հրովարտակք նորին էի՞ն ստուգիւ Յազկերտէ: 41. Միաբանութիւն Փարպեցւոյն եւ Եղիշէի զհանգամանաց պատերազմին: 42. Ատենաբանութիւնք առ զօրականն. Նկարագիր ճակատուն: 43. Թիւ Վարդանանց:*

**1**. Քրիստոնէութիւնն, որ, թո՛ղ մանր մանր ազգերն յայսկոյս Տիգրիսի (Հայաստան, Ուռհայաստան, Միջագետք, որ էին ընդ իշխանութեամբ կամ գէթ ընդ ազդեցութեամբ Պարսից), չկարաց գտնել մուտ ի բուն յարևելս անդր քան զՏիգրիս՝ էր գոնէ թոյլ տուեալ երկրիս այն մասին մէջ, ոչ առ Պարթևօք միայն, այլ և առ Սասանեամբք, որ էին աւելի ջերմ մոգակրօն: Յետ որոյ քրիստոնէութիւնն ընդհանրացաւ ի հռոմէական պետութեան, և Հայաստան և Միջագետք քրիստոնէացան՝ հալածմունք սկսան ի Պարսս քրիստոնէութեան դէմ, առ երկիւղի՝ թէ գուցէ ազդեցութիւնն քրիստոնէութեան միտեցունէր արևելեան ժողովուրդներ ի Հռոմայեցիս: Արդէն 228-էն հետէ փոխանակ ազատամիտ հարստութեանն Պարթևաց եկած էր Սասանեանն, խիստ և մոլեռանդ: Լինելն քրիստոնեայ՝ սկսաւ առ սակաւ սակաւ համարուիլ այս վերջիններէն քաղաքական յանցանք, իբրև ապստամբութիւն ընդդէմ մոգակրօն տէրութեանն Սասանեանց: Շապուհ Բ. (309—381) իւր տէրութեան քսաներորդ տարիէն, այն է Կոստանդիանոսի դարձէն սկսեալ գրեթէ մինչև ի վախճան իւր երկար իշխանութեանն՝ էր ի հալածել զքրիստոնեայս իւր երկրին մէջ: Առ յաջորդօք նորա մեղմացաւ արդարև հալածումն, մանաւանդ առ Յազկերտիւ Ա. (400—421), որ ներողագոյնն էր քան զամենայն թագաւորս Սասանեանց, բայց ի վերջ կոյս թագաւորութեան նորա (418) բորբոքեցաւ միւսանգամ հալածումն սաստկութեամբ, ի պատճառս յանդգնութեան ոմանց ի քրիստոնէից, մանաւանդ Աբդա անուն եպիսկոպոսի, որ համարձակեցաւ այրել ատրուշան, գործ՝ որ քրէական յանցանք էր առ Սասանեանս: Ուստի գլխաւոր ջանք Պարսից եղաւ այնուհետև ածել հպատակ ազգեր, մանաւանդ զՀայս, ի մոգակրօնութիւն: Այսպէս խրատ կու տար Միհրներսեհ Յազկերտի ըստ Փարպեցւոյն. «Եթէ մերոց օրինաց ընտանեցուցանէք զնոսա (զՀայս) և ընդելնուն՝... այնուհետև զձեզ սիրեն և զԱրեաց աշխարհս, և ի կայսերէ և յօրինաց նորա և յաշխարհէն մերժին և հեռանան ի բաց. և լինի այնուհետև աշխարհն ընդ մեզ սերտ սիրով և միաբանութեամբ: Եւ յորժամ Հայք սերտիւ մեր լինին՝ Վիրք և Աղուանք այնուհետև մեր իսկ են» (Փարպ. ԻԱ.): Ոչինչ այնպէս կաս-

կանձելի էր Սասանեանց ի բնէ՝ ինչպէս հաւատակցութիւնն ընդ
Յոյնս։ Վռամ Ե. (421—442), յաջորդն Յազկերտի Ա., այս պատ-
ճառաւ կոչէց յարքունիս զԱրտաշիր և զՍահակ, այսինքն իբրև
հաւատակից—«զՅունովք գլեալ խորհրդով», և հակառակ բողոքոյն
Սահակայ, թէ «Ես զնորա ապստամբութեան ինչ խորհուրդ ոչ գի-
տեմ»՝ ընկէց զԱրտաշիր թագաւորութենէն, և զՍահակ կաթողիկո-
սութենէն.—«Հրամայեաց Վռամ առնուլ զթագաւորութիւնն յԱր-
տաշրէ, և անդէն արգելուլ զնա, և զամենայն ինչս ազգի նորա
ունել յարքունիս. նոյնպէս և զմեծն Սահակ, և զտունն կաթողի-
կոսական ունել յարքունիս, և տալ փոխանակ նորա յաթոռ եպիս-
կոպոսութեանն Հայոց զՍուրմակն» (Խոր. Գ. ԿԴ.)։ Եւ յետոյ երբ
խնդրուեցաւ Սահակ նախարարաց միոյ մասնէն՝ հաստատեց զնա,
տալով նմա հակառակաթոռ զՇմուէլ, ոչ այնչափ իբրև գործակից՝
որչափ քաղաքական լրտես.—«Հաւանեալ Վռամայ՝ զերկաքանչիւ-
րոցն կատարեաց զխնդիր (նախարարացն), տուեալ յաթոռ եպիսկո-
պոսապետութեանն զայլ ոմն ասորի Շմուէլ անուն, զի լիցի ընդ-
դիմաթոռ (հակառակակարծիք) մեծին Սահակայ և հակառակա-
թոռ, և գործ նմա զատուցեալ՝ զընկերել մարզպանին, կալ ի վե-
րայ բաշխից հարկաց խնդրեցելոց և դատաստանաց և աշխարհա-
կան կարգաց» (Խոր. Գ. ԿԵ.)։ Դիտելու արժանի է սպառնալիքն
Վռամայ յարձակելն զՍահակ յատենէն. «Բայց յարձակելն (զՍա-
հակ) յանդիման իւր արարեալ ի բազմակոյտ ատենին՝ ասէ. Երդ-
մնեցուցանեմ զքեզ ի քոյին հաւատ՝ միամիտ կալ ի ծառայութեան
մերում, և ոչ խորհել իրս ապստամբութեան, պատրեալ ի մոլար
հաւատակցութիւնն Յունաց, և լինել կորստեան պատճառ Հայոց
աշխարհին ի մէնջ, փոխել զբարերար անուն մեր ի չարարար» (Խոր.
Գ. ԿԵ.)։ Այսպէս երկիւղ մեծ էր Սասանեանց՝ Յունաց հաւատակ-
ցութենէն, իբրև առաջին և գլխաւոր առթէ միտելոյ Հայոց ի
Յոյնս։

**2**. Չէր սակայն բոլորովին անհիմն Պարսից կասկածն զՀայոց։
Նշանաւոր է Սահակայ պատասխանն առ նախարարս, որ կ'ամբաս-
տանէին զԱրտաշիր. «Պարտ է, ասէ, փոքր մի տանել թերութեան
առնն, մինչև զեւս իրացն խորհել մարթասցուք կայսերբն Յունաց
Թէոդոսիւ» (Խոր. Գ. ԿԳ.)։ Ի՞նչ կրնար խորհել Սահակ Թէոդոսի
հետ, որ չունէր ամենևին ազդեցութիւն Պարսից բաժնին մէջ և
Պարսից կողմանէ նստող թագաւորի մը վրայ՝ եթէ չունէր Սահակ
ակնկալութիւն ի մօտոյ մտնելու Հայոց միւսանգամ ընդ իշխա-
նութեամբ կայսեր։ Սահակ ունէր այս յոյսը՝ երբ ըստ Սոկրատայ,
Սոզոմենայ և Թէոդորետայ, մատենագրաց Ե. դարու՝ Թէոդոս էր

ի պատերազմի ընդ Վռամայ անդստին յամէն 421, և Յոյնք յաղթելով զօրավարին Վռամայ Ներսեհի, Պարսից Արզազենէ նահանգին մէջ՝ անցան ի Միջագետս պաշարել զՄծբին, բայց չյաջողեցան, և կնքուեցաւ հարիւրամեայ խաղաղութիւն սա պայմանաւ, որ Վռամ դադրեցունէր հալածումը։ Ոչինչ ընդհատ նշանաւոր է միւս երկդիմի պատասխանն Սահակայ յատենի Վռամայ (431)։ Երբ Վռամ, ինչպէս պատմեցինք ի վերոյ, կ'զգուշացունէր զՍահակ միամիտ կալ ի ծառայութեան և ոչ խորհել իւր ապստամբութեան՝ Սահակ առանց յիշելու ապստամբութեան կէտը՝ «սկսաւ, ասէ Խորենացին, ճառել զերախտիս ծառայութեանն, և զապերախտն ի նոցանէ լինել». որպէս թէ ասէր. Միթէ զարմանալի՞ է խորհել մեզ ապստամբել, մեզ՝ որ փոխանակ այնչափ ծառայութեան ոչ այլ ինչ տեսած ենք՝ եթէ ոչ ապերախտութիւն։

**3.** Հաւատակցութեան վրայ, իբրև պատճառ կասկածանաց՝ հարկ է յաւելուլ նաև երկրին կէս անկախութիւնն, որ կու տար դիւրութիւն մեծ ապստամբութեան գործին։ Յետ անկման Արտաշրի, վերջին թագաւորին Հայոց, աթոռէն, թելադրութեամբ միոյ մասին նախարարաց, Հայք թէպէտև կորուսին թագաւորութիւնը՝ կը պահէին տակաւին ինքնօրէնութեան գլխաւոր տարրներն։ Հազարապետութիւնն, որ էր ներքին գործոց պաշտօնէութիւն, և սպարապետութիւնն էին ի ձեռս Հայ նախարարաց։ Հազարապետ էր, հաւանականապէս թագաւորութեան ժամանակէն, Վահան Ամատունի, այր «զօրաւոր հաւատով և ճոխութեամբ (ազդեցութեամբ) մարմնաւորաւ» (Խոր. Գ. ԿԷ.), «իբրև զհայր վերակացու համարեալ» (Եղիշ. էջ 39). և զսպարապետութիւնն ունէր Մամիկոնեան ցեղէն Վարդան մեծ, թոռն Սահակայ, ի վաղուց (յառաջ քան զբարձումն թագաւորութեանն) կարգեալ ստրատելատ ի Թէոդոսէ (ի սկզբան Յունաց բաժնին Հայ զօրաց համար միայն հաւանականապէս.—Խոր. Գ. ԾԷ.), և ապա տանուտէր Մամիկոնեան տոհմին, միանգամայն սպարապետ՝ ի Վռամայ (Խոր. Գ. ԿԵ.)։ Յետոյ ապա, երբ հաստատուեցաւ մարզպանութիւնն յետ բարձման թագաւորութեանն (Խոր. Գ. ԿԴ.)՝ այս պաշտօն ևս յանձնուեցաւ Հայոց, այնպէս որ իբր 10 ամօք յառաջ քան զմահն Սահակայ (430) կը գտնենք զՎասակ մարզպան զկնի Վեհմիհրշապհոյ (Խոր. Գ. ԿԴ.), «ամենայն նախարարացն Հայոց աւագ» (Եղիշ. էջ 105)։ Թող նախարարեանն, որոց իւրաքանչիւրն ունէր զիւր գունդ՝ ազգն ևս ունէր զիւր առանձին զօրս, արքունի անուամբ, որպէս կ'երևի՝ համակ այրուձի, ընդ ձեռամբ սպարապետին։ Հարկերն՝ Հայոց ձեռօք կը հաւաքուէին և կը տրուէին յարքունիս. կրակապաշտութիւնն

չունէր կռուան ի Հայս, և օրէնքն էր համակ եկեղեցական։ Ունենալով անկախութեան այս ամէն տարրներն՝ շատ դիւրին էր ազգին ձեռս տալ ի Յոյնս, եթէ տեսնէր փոքր ինչ յոյս ձեռնտուութեան այն կողմէն։

**Դ.** Զիարդ և իցէ՝ մինչև Վռամայ մահը (442), որ դիպեցաւ յետ երկուց ամաց մահուն Սահակայ՝ չեղաւ Պարսից կողմանէ հալածման փորձ Հայոց դէմ, ո՛չ իբրև ստիպումն, և ո՛չ իբրև հրաւէր։ Այս փորձ կ՚սկսի առ Յազկերտիւ Բ. (442—460), յաջորդաւ Վռամայ։ Ամբարտաւան թագաւորն, հակառակ դաշանց նախորդին իւրոյ, յարձակեցաւ ի Միջագետս. Հռոմայեցիք պարտեցան. եղան աւերմունք, մինչև փախստական քրիստոնեայք յանձնուեցան, և խաղաղութիւնն հաստատուեցաւ միւսանգամ, ըստ պատմութեան Թէոդորետայ ժամանակակցի, և Պրոկոպիոսի որ չէ հեռի ժամանակաւ, ընդ որս միաբան է և Եղիշէ.—(«Իբրև զգացան մի կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. եհար մինչ ի քաղաքն Մծբին, և զբազում գաւառս Հռոմոց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին։ Իսկ երանելին Թէոդոս կայսր (Թէոդոս փոքր), քանզի խաղաղասէր էր ի Քրիստոս՝ ոչ կամեցաւ ելանել ընդ առաջ պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն, որ էր նորա սպարապետ արևելից՝ առաքեաց առ նա բազում գանձիւք. և արք պարսիկք որ փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքին կայսեր՝ կալաւ և ետ ի ձեռս նորա, և զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա և արգել զնա ի բազում բարկութենէն». —Եղիշ. էջ 13, 14)։ Պարտութեամբ Թէոդոսի հատաւ Հայոց յոյսը. զայս կը թուի ակնարկել Եղիշէ յասելն. «Իբրև բեկեալ տեսին (Հայք) զզօրութիւնն Յունաց առաջի նորա՝ յոյժ հարան խոցեցան ի խորհուրդս իւրեանց» (Եղիշ. էջ 20)։ Յետ երկեցուցանելոյ զերկչոտն Թէոդոս՝ Յազկերտ սկսաւ կամ մանաւանդ նորոգեց զպատերազմն ընդ Քուշանս։ Եթէ հաւատանք Եղիշէի, ինչպէս հաւանական է՝ Յազկերտ վերջին ճակատը տուաւ իւր տէրութեան երկոտասաներորդ տարին (453), և տարաւ կատարեալ յաղթութիւն ի գլուխ.—«Ի սկզբան երկոտասան ամի թագաւորութեանն իւրոյ գունդ կազմէր անհամար բազմութեամբ... զայս տեսեալ թագաւորին Քուշանաց ոչ հանդուրժէր ելանել ընդ առաջ նորա պատերազմաւ... իսկ սա ասպատակ արձակէր գաւառաց, տեղեաց, վայրաց. առնոյր զբազում բերդս և զքաղաքս, կուտէր զգերին, զառ և զապուռ և զաւար, ածէր հասուցանէր յերկիրն իւրոյ տէրութեանն» (Եղիշ. էջ 82)։

**5.** Յետ յաղթութեանն ընդդէմ Յունաց՝ Յազկերտ ղրկած էր գունդ ստուար Ատրպատականէ ի Հայս, ի Բագաւան, որ կեդրոն համարուած էր երկրին. —«Զքսան և զմի ամ թագաւորեալ Պարսից Վռամ երկրորդ (Ե.) մեռանի, թողլով զտէրութիւնն որդւոյ իւրում Յազկերտի. որոյ մնացեալ զհաշտութիւնն՝ իսկ և իսկ ընդ թագաւորելն դիմէ ի վերայ զօրացն Յունաց որք առ Մծբին, հրամայեալ գնդին Ատրպատականի ի մեր աշխարհս եկանել. որք եկեալ անկարգապէս բանակեցան հուպ առ Բագնացն աւանի» (Խոր. Գ. ԿԵ.), թերևս ի Տահապխլան, «ի բուն բանակի տեղոն Արշակունեացն» (Բուզ. Գ. ԺԵ.): Յետ ամաց ինչ, ըստ Եղիշէի, Յազկերտ Քուշանաց պատերազմին պատճառաւ կոչեց (444) զայրուձին, ինչպէս ուրիշ հպատակ ազգաց՝ նոյնպէս և զՀայոց. «Մեք— ասէ Յազկերտ ի հրովարտակէն առ Եղիշէի— ի մտի եդաք անվրէպ խորհրդով խաղալ գնալ յաշխարհն արևելից... դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց. դուք իբրև զհրովարտակս զայս տեսանէք՝ անխափան վաղվաղակի այրուձի գումարեցէք առաջի քան զիս, յանդիման լերուք ինձ յԱպար աշխարհին:... Խաղացին գնացին յիւրաքանչիւր աշխարհաց լրջմտութեամբ և անտրտում խնդութեամբ և տիրասէր խորհրդովք, կատարեալ զպաս զինուորութեան աներկբայ վաստակովք» (Եղիշ. էջ 18, 19): Այսպէս յետ ունելոյ զմիջնաշխարհն (Բագաւան յԱյրարատ) զօրօք, և հեռացուցանելոյ զայրուձին (եթէ ճշմարիտ է պատմութիւն Եղիշէի) բովանդակ կամ զընտիր մասն նորա՝ համարեցաւ պատեհ ժամանակ քաղաքականապէս կապել զերկիրն ընդ տէրութեան, իբր թէ կեդրոնացուցանել, հպատակելով Պարսից օրինաց նոր կարգօք:

**6.** Յազկերտի նոր կարգերն ի Հայս չէին անիրաւ. տիրող տէրութեան իրաւունքն էր իւր օրէնքը զօրել տալ հպատակ երկրի մէջ. թէպէտ չիք տարակոյս, թէ կար ներքին և գաղտնի նպատակ՝ ընդելացուցանելոյ զժողովուրդն տակաւ ի մոգակրօնութիւն. ուստի դժուարին էր, մանաւանդ եկեղեցական մարմնոյն որ կրօնական տեսութեամբ վտանգ կը նշմարէր՝ չխռովել: Այսպէս յուզումն սկսաւ ի կողմանէ Հայոց, որոց պարտ էր մանաւանդ իմաստութեամբ և հանդարտութեամբ առնուլ զառաջս վտանգին: Յուզումն ծնաւ երկպառակութիւն: Մինչ ազգին կէսն հարկ կը համարէր խոհեմութեամբ վարուիլ՝ միւս կէսն ընտրելով խստութիւնը՝ պարզեց ապստամբութեան դրօշը:

**7.** Այս է մեր Վարդանանց կոչուած պատերազմին, կամ Հայոց առաջին ապստամբութեան պատմութիւնը, զոր երկու իրարմէ անկախ պատմիչք, Եղիշէ և Փարպեցին, կը դնեն մեր առջև տար-

բեր պարագաներով։ Այս պատմութեան մէջ կ'ընծայանայ մեզ Վարդան, տէր Մամիկոնեանց և սպարապետ Հայոց՝ իբրև գլուխ Ուխտապահաց, (այս անունը տրուեցաւ ըստ երկու պատմչաց այն կուսակցութեան՝ որ լաւ կը համարէր բռնութիւնը բռնութեամբ վանել, և ունէր գրեթէ զբովանդակ կղերն յիւր կողմն), և Վասակ, Սիւնեաց տէր, մարզպան՝ իբրև գլուխ Ուրացողաց, (այս անունը կու տան դէթ յիշեալ պատմիչք միւս կուսակցութեան, որ բռնութեամբ զդէմ ունել կը մերժէր իբրև վնասակար)։ Նայելով, աստի՝ ազգին տկարութեան, և ապիկարութեան Յունաց, յորս կը յուսար կուսակցութիւնն, և անտի՝ Սասանեանց ահեղ և վայրագ զօրութեան՝ էր արդարև իմաստնագոյն վերջիններուն խորհուրդը։ Զիարդ և իցէ՝ անուրանալի է դէթ, թէ առանց ունենալու ողջոյն ազգն համամիտ՝ յանդգնութիւն մեծ էր մտաբերել յապստամբութիւն։ Դժբախտութեամբ ինչ որ գրուած է այս նշանաւոր դիպաց վրայ՝ է եկեղեցական կամ ուխտապահաց կողմանէ. հակառակ կուսէ գըրուած ամենևին չունինք։

Յ. Նշան․ թէ պատմութիւնը մեզ հաւատարմութեամբ տըրուած չէ՝ երկու պատմչաց անհամաձայնութիւնն է ըստ պարագայից․ ուստի կը մնայ մեզ գուշակելով գտնել ճշմարտութիւնը։ Յայտնի կը տեսնուի սակայն, թէ Փարպեցին է աւելի պատմական, քանզի դիպաց կապակցութիւնն ի նմա է աւելի բնական և պարզ, մինչ առ Եղիշէի կը տեսնուի դիտումն՝ հանել պատմութիւնը բնականէն դուրս, բարձրացունելու համար զիւր դիւցազնն Վարդան, և խոնարհեցունելու, մանաւանդ թէ խորտակելու զհակառակորդ նորա Վասակ։ Բայց Փարպեցին ևս ունի թերի։ Սա առանց տալու մեզ ապստամբութեան պատճառներն՝ կու գայ յանկարծ գործին, ուստի և պատմութեան սկիզբն առ Փարպեցւոյն է յապաւեալ իմն և կրճատ։ Եղիշէ կը դնէ գեղեցիկ յառաջաբան մը իբրև մուտ ի պատմութիւնն, զոր Սասանեանց նախընթաց և իբր աւանդական քաղաքականութեան հետ կապելով՝ կը գտնենք զբուն պատճառ գործոյն։

Յասացելոց անտի վերագոյնն ի Խորենացւոյն, յԵղիշէէ և յայլոց՝ յայտնի է, թէ հալածումն Յազկերտի էր ի վաղուց պատրաստուած և հասած, և պատճառն էր հաւատակցութիւնն Հայոց ընդ Յունաց, և այսր աղագաւ միտումն ազգին յապստամբութիւն, այսինքն ընկենուլ զլուծն պարսկական։ Այս տեսութեամբ հալածումն Յազկերտի էր արդիւնք հին Սասանեան քաղաքականութեան։ Կարծել թէ հալածման խորհուրդն էր ծնունդ Յազկերտի և առանց ամենևին նախընթաց պատճառի՝ չէ պատմական։

Եղիշէ յետ յիշելու համառօտիւ Յազկերտի նախորդներուն հալածիչ քաղաքականութիւնը (էջ 11, 12), և աւելի երկար՝ զխորագէտ հնարս և զբռնութիւնսն Յազկերտի աւելաբանութեամբ, ինչպէս նաև զպատերազմունս նորա և զյաղթութիւնսն ընդդէմ Յունաց և Քուշանաց՝ կու գայ ի սկիզբն հալածման Հայոց, կամ Վարդանանց պատերազմին, որ է գլխաւոր նիւթ նորա:

**Գ.** Յազկերտ, ըստ Եղիշէի, յետ յաղթելու Յունաց և Քուշանաց՝ կը դարձունէ զուշադրութիւն իւր ի Հայս: Դենշապուհ ումն, հաւատարիմ թագաւորին, կը ղրկուի ի Հայս (450) առանձին պաշտօնիւ.—«Զմի ումն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում անուն էր Դենշապուհ, որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի, զողջոյն բերեալ զմեծ թագաւորին» (Եղիշ. էջ. 38): Խորամանկ Պարսիկն «խաղաղասէր կեղծաւորութեամբ» կը շահի զոմանս ի գլխաւոր նախարարաց ի կողմն թագաւորին: Զայս կը թուի ակնարկել Եղիշէ յասելն. «բանսարկութեամբ զնախարարեանն արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն»: Առաջին գործ պաշտօնէին էր առնել ընդհանուր աշխարհագիր, պատճառանօք թեթևցունելու հարկերն և զզօրաբաժինն (այրուձին զոր սովոր էին տալ Հայք) արդար և հաւասար բաժանմամբ ըստ թուոյ բնակչաց երկրին.—«Աշխարհագիր առնել ամենայն երկրին Հայոց ի թողութիւն հարկաց և ի թեթևութիւն այրուձիոյ». քանզի, որպէս այլուր ասէ՝ «Այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»: Այս առթիւ փոխեց զհազարապետն, յորոյ ձեռս էր ել և մուտ աշխարհին, և փոխանակ Վահանայ Ամատունւոյ, զորմէ, ինչպէս արդէն տեսանք, գովութեամբ կը խօսին Խորենացին և Եղիշէ՝ դրաւ պարսիկ.—«Որ հազարապետն էր աշխարհին՝ իբրև զհայր վերակացու համարեալ էր. դրգուեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն» (էջ 40): Բայց, ըստ Եղիշէի, ոչ թէ թեթևցան հարկերն, այլ աւելի ծանրացան.—«Նաև ով իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և ստկից, բաժից և հասից՝ լերանց և դաշտաց և մայրեաց: Ուստի արժանն էր առնուլ հարկս դահեկանաւ չափ՝ կրկին առնուին, ոչ ըստ արքունի արժանաւորութեան, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ, զի մարդ չէն կացէ աշխարհն» (Անդ): Ընդ աշխարհագրաւ մտան նաև եկեղեցիք և վանորայք. զայս կ'ակնարկէ ասելն, «Զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ընդ ծառայութեամբ». զմիայնակեացս «որ բնակեալ էին ի վանորայս՝ ընդ նովին աշխարհագրաւ արկա-

նէր»: Եթէ պարտ է հաւատալ Եղիշէի՝ գլխահարկ ևս կար եպիսկոպոսաց և երիցանց անգամ: «Գնէին հարկս, կը յաւելու Եղիշէ, ոչ միայն շինաց, այլ և աւերակաց»: Եղիշէի այս նկարագրին մէջ կայ արդարև աւելաբանութիւն: Դարձեալ դատերը որ կը տեսնուէին ըստ կանոնական իրաւանց եկեղեցականաց առջև՝ պիտի տեսնուէին ըստ Պարսից օրինաց յատենի պարսիկ դատաւորի որ էր մոգ.—«Ած միւս ևս մոգպետ՝ դատաւոր աշխարհին». և այս էր մանաւանդ որ ծանր կը թուէր առաւելապէս կղերին, իբրև թէ դիտմամբ եդած ի խանգարումն եկեղեցւոյն—«զի զեկեղեցւոյն զփառսն աղաւաղեսցեն», ասէ Եղիշէ ցաւով:

**10.** Այս ամենայն բռնութեանց նպատակն էր, ըստ Եղիշէի, նեղել զհայս, որ ձանձրանալով դառնային յօրէնս մոգութեան յուսով գտանելոյ դիւրութիւն. բայց երբ նոքա մնացին, ասէ, անյողդողդ՝ գրուեցաւ հրովարտակ.—«Իբրև տեսին, թէ այսու ամենայնիւ չկարացաք ձանձրացուցանել՝ յայնժամ յայտնապէս հրաման ետուն մոգաց և մոգպետաց նամակ մի գրել ըստ ձախողակի դենին իւրեանց: Նամակը, զոր Եղիշէ միայն կը բերէ՝ է գրուած իբր թէ Միհրներսեհէ, բայց արդեամբ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ համառօտութիւն գրելոցն յԵզնկայ Պարսից քէշին դէմ: Ոչ սպառնալիք կայ ի նամակին և ոչ պատուէր ընդունելոյ զմոգութիւն, այլ լոկ մեղադրութիւն.—«Եթէ աշխարհն Հոռոմոց, ասէ, առ յոյժ յիմարութեան տգիտաբար մոլորեալ են և զրկեալ ի կատարեալ դենէս մերմէ, դուք ևս ընդէր զհետ նոցա մոլորութեանն ցնորիք»: Ի վախճանի, ըստ Եղիշէի, կը պատուիրէ Հազարապետն (առաջին պաշտօնեայն Միհրներսեհ) առնել բան առ բան պատասխանի նամակին, և կամ անձամբ գալ ի դուռն.—«Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարէք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք ի դուռն եկայք, և յանդիման լերուք մեծի հրապարակին»: Հայք, եթէ հաւատանք Եղիշէի՝ արարին ըստ առաջին հրամանին. առնելով յԱշտիշատ ժողով մեծ եպիսկոպոսաց և նախարարաց՝ գրեցին պատասխանի, ուր երկայն աստուածաբանութեամբ կը պաշտպանեն քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւններն, խառնելով ուրեք ուրեք թշնամանս առ թագաւորն: Այսպէս թշնամանք էին թագաւորին ասել այնպիսի ծանր գրուածոյ մէջ. «Սակաւիկ մի եթէ ի բաց թողացուցանէիր զփքումն տէրութեանդ և ընկերաբար գայիր ի պայքար՝ ոչ աւելաբանութիւն համարէիր», ևն. դարձեալ. «Եթէ դու ի տգիտութեան վրիպեալ ես, ես որ հաստատունս գիտեմ՝ ոչ կարեմ գալ զկնի քո մոլորութեանդ. եթէ աշակերտիմ անուսումնութեանդ՝ երկոքին յանդիւտ կորուստ մատնիմք». դարձեալ. «Այն է ճշմարիտ

Աստուած բոլորեցունց մեր արարիչ. զոր դու աներասանակ արձակ բերանով անահ աներկիւղ համարձակ հայհոյես. թողեալ զՅիսուս Քրիստոս զփրկական անունն՝ Փանդուրակայ որդի անուանես, և մարդ մոլորեցուցիչ կարծես, և զերկնաւոր փրկութիւնն աղաւաղես և անարգես ի կորուստ անձին և աշխարհիս. զոր տալոց և հատուցանելոց ես զանանցական վրէժ տանջանացն յանշէջ հուրն ըսպառանացեալ գեհենին, հանդերձ ամենայն գործակցովք քոյովք, առաջնովք և միջնովք և վերջնովք»։ Զարմանալի է արդարև, որ Միհրներսեհի նամակին մէջ զոր կը դնէ Եղիշէ՝ չկան այն բանք, «Փանդուրակայ (ըստ Թալմուտական ինչ աւանդութեան ապօրինաւոր հայր Յիսուսի) որդի», «մարդ մոլորեցուցիչ», այլ ասէ լոկ վասն Յիսուսի, թէ «ծնաւ ի կնոջէ ումեմնէ որում անուն էր Մարիամ, և առն նորա Յովսէփ»։ (Անձևացեաց օրինակին յաւելուածն է եկամուտ)։ Ապաքէն անվայել էր քրիստոնէական ոգւոյ, և ոչ արժանի ողջոյն ազգն ընծայեցուցող ժողովի իմաստութեան՝ նախատանօք լուանալ այնպիսի գոռոզ թագաւոր։ Եթէ ժողովը պատշաճ դատեցաւ քրիստոնէական հաւատոյ վարդապետութիւնը գրով յուղարկել առ Յազկերտ՝ կարէր գրել ինչ որ արժան էր, առանց թշնամանաց։ Ուստի շատ հաւանական կը թուի մեզ, թէ երկու նամակներն ևս առ Եղիշէի գիւտ են նորա կամ այն պատմութեան հեղինակին, ո՛ ոք և է։

**11.** Մանաւանդ որ Փարպեցին յայտնապէս ասէ, թէ Հայք այն գիրը որ կը բովանդակէր Պարսից դենին վարդապետութիւնը՝ չկարդացին անգամ, և ոչ իրենց հաւատոյն դաւանութիւնը զոր կը խնդրէր Յազկերտ՝ յանձն առին գրով յուղարկել առ նա, ինչպէս յայտնի է ի պատասխանւոյն, զոր ըստ Փարպեցւոյն գրեցին Հայք առ Յազկերտ. «Ընկալեալ, ասէ, զայսպիսի հրովարտակ (այսինքն զհրովարտակ հրաւէրին ի մոգութիւն) ամենայն Հայոց աւագանւոյն, և ընթերցեալ զամենայն գրեալսն ի հրովարտակին, և զայն ևս իմացեալ, թէ զօրէնս անօրէնութեան իւրեանց գրով տուաքէ առ Նոսա՝... ժողովեցան... և գրեցին պատասխանի առ թագաւորն Յազկերտ։... Անհնար է (մեզ), ասեն, որ ի բնէ ուսեալ եմք և հաստատեալ յօրէնս յայս (քրիստոնէութեան), անսալ այդպիսի հրամանի հաւանել։... Այլ վասն օրինաց ձերոց զոր գրեալ էր և տուեալ բերել առ մեզ,... յառաւել պատուելոյ զթագաւորութիւնդ ձեր բանալ անգամ և տեսանել զգրեալսդ ոչ կամեցաք... վասն զի ընդ կարդալն հարկիմք ծաղր առնել. և ոչ զմեր օրէնս գրել և տալ բերել առ ձեզ ըստ հրամանին ձերոյ ի դէպ և պատշաճ համարեցաք։ Այս պատասխանւոյն մէջ ևս կան արդարև կծու բանք, ինչ-

պէս կոչել զկրօնն Պարսից «սուտ», «ծաղու արժանի», «անմիտ մարդոց բարբանջմունք», բայց այս բանք արհամարհանաց գէթ դէնին դէմ են և ոչ թագաւորին անձին։

**12.** Յազկերտ զայրանալով այս պատասխանւոյն վրայ, որում չունէր ակն, քանզի գիտէր նախարարաց գոնէ զմի մասն հաւան իւր նամակին՝ կը հարցունէ մոգերուն և աւագանւոյն, որք Հայոց այս համարձակութիւնն, ըստ Փարպեցւոյն, կ՚ընծայէն արտաքին թելադրութեան.—«Լուեալ զբանս նամակին թագաւորն՝ հարցանէր ցմոգսն և ցամենայն Արեաց աւագանին... որ առաւել ևս գրգռէին զթագաւորն ասելով. Եթէ ոչ ուստեք ունէին նոքա յայլուստ օգնականութեան յոյս՝ զայդպիսի բանս ի միտս իսկ իւրեանց նկատել չիշխէին, թող թէ նամակաւ առ ձեր թագաւորութիւնդ առաքել» (Փարպ. ԻԵ.)։ բայց Յազկերտ, որ ունէր յիւր կողմն Մարկիանոսի (450—457), յաջորդի Թէոդոսի փոքու, երևելի պաշտօնեաներն (զԱրդաբուրիոս սպարապետ արևելից և զՖլորենտիոս պատրիկ, վերակացու արևելից. Գաթըրճ. Տիեզ. պատմ. Հտ. Բ, 541, Ծան. 1, 2)՝ գիտէր թէ Հայոց չկար յոյս օգնութեան ի Յունաց, և զխիզախելն Հայոց այնպէս՝ կ՚ընծայէր մանաւանդ ազդեցութեան կղերին. ուստի կը կոչէ առանձին հրովարտակաւ զնախարարս Հայոց ի դուռն։ Այսպէս Յազկերտ հեռացունելով նախարարներն կղերին ազդեցութերէն՝ կը յաջողի. կրակապաշտութիւնը կ՚ընդունուի նախարարներէն, որ կ՚արձակուին ի Հայս։

Սպառնալիք, զորս Փարպեցին կը դնէ ի բերան Յազկերտի առ նախարարս, և սոցա պատասխանին առ նա, ինչպէս նաև ինչ որ անցաւ ի խորհրդեան նախարարաց ընդ միմեանս և ընդ Վարդանայ և սորա ընդ նոսա, վերջապէս ինչ որ նախարարք ի միասին, և առանձինն Վարդան իբրև ի շնորհակալութիւն խօսեցան առ Յազկերտ ի մեկնելն իւրեանց, և այլ սոյին նման բանք որ կան առ Փարպեցւոյն և առ Եղիշէի՝ չեն վաւերական, այլ են ըստ ոճոյ հին պատմագրաց իբրև հռետորական յաւելուածք ի կողմանէ պատմչին, և ըստ իմաստին միայն աւելի կամ նուազ հաւանական։ Եւ այս անտի յայտնի է մանաւանդ, որ ոչ միևնոյն բանք են զորս կը դնեն Եղիշէ և Փարպեցին ի բերան Յազկերտի, նախարարաց և այլոց, երբ կու տան նոցա խօսել, այլ բոլորովին տարբեր, շատ անգամ նաև հակառակ։ Ըստ Եղիշէի՝ նախարարք ընդ հասանելն ի դուռն ոչ թէ ըստ սովորութեան կ՚ընդունուին պատուով, այլ անարգանօք կը հանուին արտաքս. ըստ Փարպեցւոյն, որ աւելի հաւանական է՝ նախարարք ընդ հակառակն կ՚ընդունուին մեծամեծներէն և թագաւորէն, և ի վաղւին կը կազմուի ատեան։ Ըստ Ե-

ղիշէի՝ Թագաւորին մտերիմներէն մին, «որ ի ծածուկ ունէր զանքակ սէրն ի Քրիստոս, քանզի մկրտեալ իսկ էր յաւազանն կենդանի», խրատ կու տայ նախարարաց՝ առ ժամն ուրանալ զքրիստոնէութիւն և զերծանել, և նախարարք կ՚անսան նմա։ Առ Փարպեցւոյն չիք այսպիսի բարեպաշտ քրիստոնէի յիշատակութիւն, այլ նախարարք ինքնին կը խնդրեն Թագաւորէն ժամանակ, և յետ երկար խորհելոյ կ՚որոշեն ընդունել կրակապաշտութիւնը. Վարդան իսկ, որ ի սկզբան կ՚ընդդիմանար այս որոշման՝ կը միաբանի ընդ նոսա։ Այս պատմութիւնն է արդարև հաւանական։ Դարձեալ ըստ Փարպեցւոյն՝ նախարարք երթալով «ի տուն մոխրանոցին»՝ ոմանք պատճառանօք (կեղծեօք) և ոչ ճշմարտութեամբ կը խոնարհեցունեն իրենց գլուխներն «անոտի պաշտաման», այլք ճշմարտապէս կ՚ուրանան։ Առ Եղիշէի չկայ ո՛չ կրակատուն երթալ և ոչ գլուխ խոնարհեցունել, այլ նախարարք յիշեալ խրատուին բերնով կ՚իմացունեն Թագաւորին, թէ պիտի կատարեն հրամանը։ Ըստ Փարպեցւոյն՝ Յազկերտ կասկածելով նախարարաց անկեղծութեան վրայ՝ կը պահէ առ իւր իբրև պատանդ զԲդեշխն Վրաց զԱշուշա և զերկուսին որդիս Վասակայ, զԲաբիկ և զԱտրներսեհ։ Եղիշէ չգիտեր զայս, սակայն կը թուի ճշմարիտ։ Թէ ըստ Փարպեցւոյն և թէ ըստ Եղիշէի՝ Յազկերտ մեծ ուրախութեամբ կ՚արձակէ զնախարարսն բազմութեամբ մոգուց, որոց թիւը կը հանէ Եղիշէ մինչև եօթնհարիւր։ Որովհետև մոգ անուամբ կ՚իմացուէին նաև Թովիչք, օձահմայք և սոցին նման խաբեբաներ՝ մեր միամիտ Փարպեցին համարելով Պարսից մոգերն ևս այնպիսի կախարդներ՝ կը կարծէ թէ մոգքն որ ղըրկուեցան նախարարաց հետ՝ պիտի ուսուցանէին Հայոց նոյնգունակ կախարդանաց արուեստներ.—«Զորս (զնախարարս) հասանել փութացուցանէին յիւրաքանչիւր աշխարհ, տուեալ ընդ նոսա բազմութիւն սուտ վարդապետաց, զորս և մոգ անուանեն՝ յորդորէին ուսանել զուսմունս ծաղրելի շնչմանց և ընդունչարկու քարթընջմանց խոսսն, որպէս զօձակոչսն և զորովայնախօսս» (Փարպ. ԻԲ.)։ Նախարարք, որ «զիւրեանց միտս և զբանս և զխորհուրդս միջնորդութեամբ սրբոյ Աւետարանին անքակ և աներկեան առ միմեանս հաստատեալ», և «այնպէս միաբանեալք ուխտիւք և երդմամբ» եկած էին ի դուռն՝ առաջին հարցափորձիւ կը թուլնան։ Այս արդարև զարմանալի է։ Եւս աւելի զարմանալի է Յազկերտի պէս խորագէտ Թագաւորի հաւատալ, թէ նախարարաց ոմանց պատճառանօք գլուխ խոնարհեցունելովն կրակի՝ բոլոր Հայք ընդունած եղան մոգութիւնը. դժուարին և դժուարին է հաւատալ, թէ Յազկերտ, բոլոր Պարսից աւագանին և մոգերն այնչափ անմիտ էին՝ մինչև

*այն կեղծաւորեալ դարձէն խաբուելով՝ «նուէրս ազգի ազգի բազում խնդութեամբ» մատուցանել աստուածոց իւրեանց։ «Խրախ մեծ առնէին յաւուր յայնմիկ, հաշուելով այն օր լինել անշարժ հաստատութիւն թագաւորութեան իւրեանց, կեալ խաղաղութեամբ աներկիւղ այնուհետև յամենայն թշնամեաց»* (Փարպ. ԻԸ.)։

**13.** *Եղիշէ ուրիշ երազներ կու տայ տեսնել մոգուց. գործինակ վիճակաւ որոշել, թէ ո՛ր ազգ ո՛ր խումբին պիտի ելլէր ի բաժին. մինչև վեցերորդ ամիսը փութալ հասանել իւրաքանչիւր յիւր սահմանեալ տեղին. կը յուսային տարեգլխէն մինչև յաջորդ տարեգլուխ բառնալ զկարգս եկեղեցւոյ, տաճարաց դուռները կնքել, կողոպտել եկեղեցիներ, նուիրական սպասներն առնուլ յարքունիս, դադարեցուցանել զերգս և զսաղմոսս, տալ փոխել զհանդերձս միանձանց և կուսանաց ի ձև աշխարհական, կրթել յօրէնս մոգութեան կին և այր, ազատ և շինական, խախտել զօրէնս քրիստոնէական ամուսնութեան, թոյլ տալ բազմակնութեան և ազգապիղծ խառնակութեանց, մինչև առնուլ հարց զդստերս և եղբարց զքորս. ուտելի և զենլի անասնոց վրայ կատարել Պարսից խտրութիւններն, այլովքն հանդերձ։ Ահա բանք Եղիշէի. «Գումարէր ընդ նոսա (ընդ նախարարս Հայոց) ի մոգացն ոչ սակաւս, աւելի քան զեւթն հարիւր վարդապետս յղէր ընդ նոսա, և զմեծ ումն իշխան մոգպետ կացուցանէր ի վերայ նոցա։... Իսկ խոհերականքն այնուհետև յարուցեալ յիւրաքանչիւր խուարային դարանաց՝ իղձք լինէին վաղվաղակի զհրամանն կատարել։... Եւ մինչչև հասեալ էին յերկիրն Հայոց՝ փայտ ընկենուին և վիճակս արկանէին, թէ ո՛ր լեզու որո՛ւմ դասու հասցէ յաշակերտութիւն։... Յանդգնայ յարձակմամբ յաւարի առնուլ փութային զգանձս սուրբ եկեղեցեացն... կէտ եդեալ զժամանակն զամիսն վեցերորդ՝ տագնապէին և ստիպէին արքունի հրամանաւ։ Մինչև ի նաւասարդէ ի նաւասարդ յամենայն տեղիս որ իցեն ընդ իշխանութեամբ թագաւորին մեծի՝ բարձցին կարգք եկեղեցւոյ, փակեսցին և կնքեսցին դրունք սուրբ տաճարացն, գրով համարով առցին նուիրեալ սպասքն յարքունիս, լռեսցեն ձայնք սաղմոսացն և դադարեսցեն ընթերցուածք անսուտ մարգարէիցն։ Քահանայք մի՛ իշխեսցեն ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդըս, և հաւատացեալքն ի Քրիստոս արք և կանայք որ ընակեալ են յիւրաքանչիւր մենանոցս՝ փոխեսցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց։ Դարձեալ և կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոգացն։ Ուստերք և դստերք ազատաց և շինականաց կրթեսցին ի հրապարակս նոցուն մոգաց։ Կարճեսցին և արգելցին օրէնք սուրբ ամուսնութեան, զոր ունէին ի նախ-*

նեաց ըստ կարգի քրիստոնէութեան, այլ փոխանակ ընդ կնոջ միոյ բազում կանայս արասցեն, զի աճեցեալ բազմասցին ազգք Հայոց։ Դստերք հարանց լինիցին, և քորք՝ եղբարց. մարք եղցեն յանկողինս որդւոց, այլև թոռունք եղցեն յանկողինս հաւուց։ Պատրուճակք մի մեացին անյազ, եթէ յօդեաց իցէ և եթէ յայծեաց և եթէ յարջառոց և եթէ ի հաւուց և եթէ ի խոզաց։ Հայոք առանց փանդամի մի զանգցին, ծիւղք և քակորք ի կրակ մի եկեսցեն, ձեռք առանց գմիզոյ մի լուասցին... Զայս ամենայն որ ասացաք՝ առ ժամանակ մի մինչև ի գլուխ տարւոյն կատարեսցեն ամենեքեան, և զայլն ամենայն առ յապայ պատրաստեսցեն։ Իսկ զայս ամենայն հրաման պատուիրանաց առեալ մոգաց և մոգպետաց՝ զոխ և զգիջեր փութային հասանել յաշխարհն Հայոց. և առ յօժ խնդութեանն ոչ երբէք յագէին երկայնութեամբ ճանապարհին» (Եղիշ. 85—89).

Եթէ մոգուց այս երազներն էին Յազկերտի նպատակն՝ և ոչ մին այն երազոց կատարեցաւ, ո՛չ միայն յայնժամ, մինչ Հայք ունէին բաւական զօրութիւն ընդդիմանալոյ, այլ և ոչ յետ պատերազմին Վարդանանց, մինչ Հայք յաղթուեցան իսպառ, և կղերէն երևելիներ հանդերձ կաթողիկոսաւ տարուեցան ի Պարս, դատապարտեցան ի մահ իբրև ապրուշանաւերք, և պատերազմէն ապրող նախարարաց մեծ մասը տարուեցաւ կապանօք յաքսոր։ Ո՞ր եկեղեցի փոխուեցաւ ի կրակատուն կամ առնուեցաւ յաւարի. ո՞ր տաճարաց դրունք փակեցան և կնքեցան. եկեղեցւոյ ո՞ր կարգք բարձան կամ սպասք առան յարքունիս։ Այսպիսի ինչ կատարուած չենք գտներ ի պատմութեան Փարպեցւոյն և ոչ Եղիշէի։ (Սաչափ միայն ասէ Եղիշէ, թէ «Յետ աւուրց քանի և հնգից գալստեան մոգուց ի Հայս՝ մոգպետն ինքնին հասանէր քակել զդրունս եկեղեցւոյն. իսկ սուրբն Ղևոնդ երէց ոչ ետ թոյլ». և Փարպեցին ասէ, թէ նոյնպէս ի սկզբան դարձին նախարարաց Յազկերտէ՝ «մոգուցն գունդք բռնադատէին տանել զկրակս ի տաճար սրբութեանց Տեառն»։ Թերևս այսպիսի ինչ փորձ եղաւ ի սկզբան մոգպետին կողմանէ, բայց այս չէ հաւանական թէ էր տևական և արձակ, հրամանաւ Յազկերտի)։ Չէ լսուած ուրեք, թէ Պարսիկք լսեցուցին սաղմոսներ, կամ դպրեցուցին ընթերցուածներ։ Չէ լսուած, թէ միայնակեացք և կանայք, բռնի աշխարհականացան, թէ կանայք նախարարաց, կամ ուստերք և դստերք ազատաց բռնադատեցան ուսանել մոգերուն վարդապետութիւնը, կամ թէ արգելուեցան ամուսնութեան օրէնք, որք բռնադատեցան առնուլ բազում կանայս, դստերք լինել հարց և քորք եղբարց, մարք որդւոց, և թոռունք

Հաւուց յանկողինս ելանել, կամ թէ Պարսից խորութիւններն գըտան մուտ ի Հայս։ Չէ ամենևին ճշմարիտ, թէ այս բռնութիւններն ընել էր նպատակն Յազկերտի, կամ թէ մոգերը գացին այնպիսի հրամանաւ և խորհրդով։ Կաթողիկոսութիւնը կեցաւ կանգուն ինչպէս յառաջ՝ նոյնպէս յետոյ. քրիստոնէութիւնը մնաց միշտ կրօնք Հայոց. այնչափ գաւառներէն և ոչ մին ընդունեցաւ կրակապաշտութիւնը, թէպէտ հաւանական է թէ մոգութիւնը քարոզուեցաւ և ատրուշաններ շինուեցան, որպէս ասէ Փարպեցին, «յականաւոր և ի գեղեցիկ տեղիս»։ Սիւնիք անգամ, աւելի բամբասեալն ի գաւառս Հայոց իբրև երկիր իշխանութեան Վասակայ, և յետ նորա, ըստ Փարպեցւոյն (ԽԶ), Վարազվաղանայ, ուրացելոց՝ էր և եղաւ միշտ բարեպաշտագոյնն ի գաւառս Հայոց։ Բակուր և ըստ Փարպեցւոյն «լաւն» Բաբգէն, Սիւնիք՝ էին ընդ կալեալ նախարարս, վերջինն յետոյ, երկրորդ ապստամբութեան ժամանակ՝ նիզակակից Վահանայ, և որ կարգեցաւ ի Հայոց իշխան տէրութեանն Սիւնեաց (Փարպ. ԿԸ.)։

**14.** Ի՞նչ էր ուրեմն Յազկերտի նպատակը։ Յազկերտի նպատակն էր արդարև ածել զՀայս ի մոգութիւն, բայց ոչ այնպէս ինչպէս կը ցուցնէ մեզ Փարպեցւոյն և մանաւանդ Եղիշէի պատմութիւնն, այսինքն յանկարծ և բռնաբար, այլ մեղմով և հնարիւք։ Հայոց մի մասն, մանաւանդ կղերն, գուշակելով Յազկերտի խորհուրդը՝ յանկարծ ուրիշ գոյն տուաւ գործին, և երկոքին պատմիչք մեր, մանաւանդ Եղիշէ՝ այս գունով կը նկարեն մեզ պատմութիւնը։ Յազկերտի քաղաքականութիւնն էր՝ տալ նախարարաց ընդունել գէթ առ երեսս, իբրև քաղաքական հարկ կամ իբրև տէրութեան կրօնք՝ մոգութիւնը, այսինքն տալ մուտ կրակապաշտութեան իւրաքանչիւր իւր երկրին մէջ, թոյլ տալով շինել ատրուշաններ, հաստատել մոգութեան դպրոցներ, Պարսից քաղաքական օրինաց հպատակեցունել երկիրը, և այնպէս ընդելացունելով ժողովուրդը մեղմով պարսկական քաղաքականութեան և դենին՝ հեռացունել ազգն ի Յունաց։ Յայս միտս էր և Յազկերտ Ա., որ յետ Վռամշապհոյ թագաւորեցուց Հայոց զորդին իւր այս նպատակաւ, ինչպէս կը դիտէ Խորենացին. «Յետ որոյ Յազկերտ (Ա.) ոչ ևս ի նոցանէ, այլ զՇապուհ զորդի իւր թագաւորեցուցեալ Հայոց, հնարս գտանութեան խորհելով՝ իբր թէ հանապազ առ նմա նախարարքն յանդգնիցին խօսիլ, տուրևառիւք, խրախճանութեամբ. զի մարթ լիցի զնոսա և ի դէն մազդեզանց սողոպեցուցանել, որով ամենևիմբ զատչիցին ի Յունաց» (Խոր. Գ. ԾԵ.)։ Նոյն խորհրդով սոյն Յազկերտ (Բ.), ինչպէս արդէն տեսանք՝ ղրկեց զԴենշապուհ, որոյ գլխաւոր պաշտօնն

էր շահել նախարարներն ի կողմն թագաւորին, և յաջողեցաւ խիստ գէթ ըստ մասին, որպէս ակնարկէ Եղիշէ, թէ «բանսարկութեամբ արկ զնախարարեանն ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն»։ Պատմութեան մէջ շատ պարագաներ կը ցուցնեն, թէ Յազկերտի դիտումն էր նախարարներն որսալ և տալ նոցա շնորհել մուտ կրակապաշտութեան իւրաքանչիւր իւր երկրին մէջ իբրև տէրութեան կրօնք հաւասար քրիստոնէութեան։ Ի պատմութենէ Փարպեցւոյն կը տեսնենք, թէ Յազկերտի նամակը կ'ուղղուի իւրաքանչիւր նախարարի, և ոչ ընդհանուր ազգին.—«Արարեալ հրովարտակս առ ամենայն Հայոց աւագանին՝ գրէր այսպէս»։ Նախարարք կը կոչուին ի դուռն. առ երեսս անգամ զիջանելն նոցա կամաց թագաւորին՝ կը համարուի բաւական, և կ'արձակուին մոգերով։ Անտեղի է քան զայս աւելի դիտաւորութիւններ ընծայել Յազկերտի, այսինքն խլել քրիստոնէութիւնն արմատէն բռնութեամբ, տալով քանդել եկեղեցիներ, ամէն օրէնք և կարգ քրիստոնէական յանկարծ և միանգամայն տապալել, և այս ոչ ի Հայս միայն, այլ և ի Վիրս և յԱղուանս, գործ՝ որ ոչ ի Միջագետս և ուրիշ քրիստոնեայ երկիրներ որ էին ընդ իշխանութեամբ Պարսից, և ոչ իսկ ի Պարսկաստան եղաւ երբէք, սաստիկ հալածանաց ժամանակներ անգամ։ Քրիստոնէութիւնը թոյլ տուեալ էր Սասանեանց երկիրներուն մէջ, թէև ընդ հալածանօք։ Ինքն իսկ Եղիշէ կը վկայէ, թէ քրիստոնեայք ի Պարսկաստան Շապհոյ Բ-ի ժամանակէն այնչափ բազմացած էին՝ «մինչև յամենայն քաղաքս աշխարհին եկեղեցի շինեցին, որ զանցուցանէր պայծառութեամբ զթագաւորաբնակ արքունեօքն։ Շինէին և վկայարանս իմն անուանեալս, և զնոյն զարդ եկեղեցեաց զարդարէին, և յամենայն տեղիս, յապատս և յանապատս միայնանոցս շինէին։ Եւ իբրև ոչինչ երևէր յայտնի օգնութիւն ուստեք՝ աճելով աճէին և բազմանալով բազմանային, և մարմնաւոր մեծութեամբք մեծանային» (Եղիշ. էջ 102)։

**15.** Յազկերտի դիտաւորութեան վրայ բաւական համարելով այսչափ՝ գանք ի կարգ անդր պատմութեան։ Նախարարք մոգերով հանդերձ յետ երկար ճանապարհորդութեան կը հասնին ի Հայս։ Փարպեցին տխուր, բայց բնական կերպով կը նկարագրէ զընդունելութիւնն որ եղաւ նախարարաց յազգէն.—«Եկեալ հասանէին տանուտեարքն Հայոց հանդերձ սեպհօքն և որ ընդ ինքեանս՝ յաշխարհս Հայոց, ողջք և ոչ ողջք, կենդանի կիսամեռք։... Ելանէին ընդ առաջ նոցա դասք պաշտօնէիցն Քրիստոսի, բերելով ընդ ինքեանս զնշան կենսատու Խաչին և զնշխարս սրբոյ առաքելանման նահատակին Գրիգորի։... Անդ էր լսել զձայն լալոյ և զձայն գու-

ժի, գուչիւնս ողբոց և բարբառ ճչոյ. տղայք անձկոտք ի գրկաց հարց իւրեանց պակուցեալք փախչէին, կարծելով այլափոխեալս իմն, և ոչ զնոյնս նկատելով կերպարանս զարհուրէին. ստէպ հայելով յերեսս մարցն, զորս տեսանէին կողկողագին միշտ և արտօսրաբուխս, յաղագս որոյ և ինքեանք յարտասուս հարեալ տղայքն՝ ոչ ոք կարէր լռեցուցանել ի դայեկացն կամ ի դաստիարակացն։ Ընդ որ հայեցեալ այնոցիկ, որք պատճառանօք և ոչ ճշմարտութեամբ ուրացողքն էին՝ փութանակի և առժամայն կամէին յառնել և ընդ ինքեանց սուրն ելանել, որոց ոչ պիտէր առ վայր մի կեալն, քան թէ զայնպիսի տեսանել զաղէտս և ժուժկալել... քանզի ոչ ոք հաւանէր ընդ նոսա կամակից լինել սեղանոյ, ոչ կին, ոչ որդի, ոչ ազատ, ոչ ծառայ ոք և ոչ սպասաւորք։ Եւ էր այնուհետև տեսանել զամենեսեան քակտեալս ի միմեանց և պատառեալս։... Վասն ամենայնի այսորիկ սուգ առեալ կոծէին կանայք ուստ ազատացն և այրիք ի հրապարակս, մանկամարդ առնականայք, օրիորդք ի սրահս զռնափակեալս, հարսունք ի սենեակս։ Սուրբ եպիսկոպոսք պատուական քահանայիւք և եկեղեցական ուխտիւ, ծերովք և տղայովք և ամենայն ժողովրդովն բազմութեամբ՝ կառաչ բարձեալ լային ի տանն Աստուծոյ։ Եւ էր տեսանել ծեփեալ արեանց հոսմամբք զամենայն դէմս ուղղափառ մարդոց» (Փարպ. ԻԹ.)։

Եղիշէ, ըստ իւրում սովորութեան, երկայն և անհամ կրկնումներով ըստ քմաց կ'ընդլայնէ նախարարաց «յանձնառութեան», այսինքն զիջման ազդեցութիւնը ո՛չ Հայոց վրայ միայն, այլ և ուրիշ դրացի քրիստոնեայ ազգաց, ո՛չ միայն ի Հայս, այլ և անդէն ի բանակին, այսինքն ի Պարսս. «Անդէն ի մեծ բանակին Պարսից՝ յազգաց ազգաց որք են հաւատացեալ ի սուրբ Աւետարանն Քրիստոսի, իբրև տեսին զչար յանձնառութիւնն Հայոց՝ յոյժ հարան ի միտս իւրեանց, և կործանեցան անկան ի վերայ դիմաց իւրեանց։ Բազումք ի նոցանէ թախծեալք ի սուգ ծանրութեան, հարեալ յոգիս և դառնացեալ յարտասուս՝ եկին և յանդիմանեցին զնախարարեանն և յոյժ դարովեցին զուխտ քահանայութեանն։ Զգուէին զամենեսեան և ասէին. Զի՞ առնիցէք զսուրբ կտակարանսդ, և կամ յո՞ տանիցէք զսպաս տէրունեան սեղանոյն. մոռանայցէ՞ք արդեօք զհոգևոր օրհնութիւնսդ, և կամ լռեալ դադարիցէ՞ք ի մարգարէական ձայնիցդ։ Կափուցէք զաչս յընթերցուածոց, և խցէք զականջս ի լսելոյ. միթէ զմտացդ անմոռացութիւն ո՞չ յիշիցէք. զի՞նչ առնիցէք զպատուիրեալսն ի Տեառնէ. Որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ յուրաստ եղէց և ես առաջի Հօր իմոյ որ յերկինս է և հրեշտակաց սրբոց։ Վարդապետք էիք առաքելական քարոզութեանցն, արդ աշակերտք լի-

նիցիք մոլար խաբէութեանն: Ուսուցիչք էիք ճշմարտութեանն, արդ ուսուցանէք զպատիր խաբէութիւն մոգաց: Քարոզք էիք արարչական զօրութեանցն, արդ զտարերս աստուածս խոստովանիք: Յանդիմանիչք էիք ստութեան, արդ և քան զսուտն ստագոյնք լինիցիք: Ի Հօր և ի Հոգի էիք մկրտեալք, արդ ի մոխիր և յաճիւն թաթաւիցիք: Կենդանի մարմնով և անմահ արեամբ էիք սնեալ, արդ ի ճենճեր զոհից և ի շարաւս աղտեղիս մրճոտիցիք: Տաճար էիք Հոգւոյն սրբոյ, արդ զոհարան դիւաց լինիցիք: Քրիստոսազգեացք էիք ի մանկութենէ, արդ մերկացեալք ի փառացն՝ դիւաբար արբգական կաքաւիցէք: Ժառանգ էիք արքայութեանն, արդ անձամբ զանձինս արկէք ի ժառանգ գեհենին: Նոցա է պատրաստեալ հուրն անշէջ, ընդէ՞ր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորեցայք: Նոցա պարարի որդն անմահ, իսկ արդ դուք պարարիցէք զմարմինս ձեր նմա ի կերակուր: Խաւարն արտաքին նոցա թանձրացեալ պահի, դուք լուսազգեստք ընդէ՞ր յաղարկեցայք ընդ նոսա ի նոյն խաւար: Նոքա ի վաղնջուց հետէ էին իսկ կուրացեալք, դուք զկնի կուրացն կուրացարուք: Նոցա էր փորեալ զխորխորատն, դուք ընդէ՞ր լցէք յառաջագոյն: Ե՞րբ ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոցն նոցա, այն որ չիք ուրեք ի միջի և ոչ մի: Թեթևացեալք ի ծանր բեռանց՝ անձին անձամբ առէք զբեռն ծանրութեան. ազատեալք ի մանկութենէ՝ չարաչար մտէք յանազատելի ծառայութիւնն: Եթէ գիտէիք և երևէր ձեզ յայտնի՝ սուգ առին երկինք ի վերայ ձեր, և թախծեցաւ երկիրս ի ներքոյ ոտից ձերոց: Հրեշտակք ի վերուստ են ձեզ բարկացեալք, և ի յերկրէս մարտիրոսքն են ձեզ ցասուցեալք: Ողորմիմ, ողորմիմ սիրելեաց ձերոց, և բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց: Զի թէ մարդոյ փրկեալ էր զձեզ ի ծառայութենէ, և դուք անձամբ զանձինս այլում ի ծառայութիւն արկանէիք՝ ի մեծ բարկութիւն բրդէիք զառաջին տէրն ձեր: Իսկ արդ զե՞նչ առնիցէք զաստուածաստաստ հրամանն. Ես եմ Աստուած և չիք այլ ոք բայց յինէն, և ոչ զկնի իմ այլ ոք լիցի Աստուած:... Դուք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի. յորժամ աստի վտանգ հասանէր՝ առ ձեզ յանդորր ելանէաք. արդ մեծ ամուրդ այդ հիմն ի վեր տապալեցաւ: Դուք էիք մեր պարծանս առ թշնամիսն ճշմարտութեան, արդ դուք էք մեր նախատինք առ նոյն թշնամիս: Յայժմ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոյն և ի մեզ փոքր ի շատէ խնայէին, և արդ ի պատճառս ձեր և զմեզ անողորմ դատին: Ոչ միայն զանձանց դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին Աստուծոյ, այլ և բազմաց ամենեցուն որ ի ձեր պատճառս և զնոսա ևս չարչարեսցեն» (Եղիշ. էջ 91—96): Զիք տարակոյս, թէ օտար-

ազգի բարեպաշտ քրիստոնեայք, Վիր, Աղուան, եթէ կային ի բանակին՝ չհաճեցան նախարարաց գիջման. սակայն յայտնի է, թէ այն երկայն գանգատ, զոր Եղիշէ կը դնէ ի բերան նոցա՝ գիւտ է Եղիշէի։

Ըստ Եղիշէի՝ Հայ կղերն նոքա, որ նախարարաց հետ էին՝ խռովեցան յոյժ. իսկոյն գուժկան հասաւ ի Հայս, թէ նախարարք յանձն առին կրակապաշտութիւնը։ Անդէն սփռեցան եպիսկոպոսունք բոլոր երկրին մէջ վառել կազմել զժողովուրդն.—«Յայնմ ժամանակի քահանայքն որ էին անդէն ի զօրուն, առ չժուժել սրտից բարկութեան՝ քակեալ որոշեցան ի նախարարացն և յամենայն բազմութենէն, և զմի ումն դեսպան ձիով առաքեցին փութապէս յաշխարհն Հայոց։ Գոյժ ի բերան առեալ և զօձիս պատառեալ, հասեալ ի ժողովս եպիսկոպոսացն, մեծապէս յարտասուս հարեալ, կայր և պատմէր զամենայն անցս չարեացն, այլ ոչ յայտնէր նոցա զծածկութիւն խորհրդոցն։ Յայնմ ժամանակի սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին զքորեպիսկոպոսս ի գիւղս և յագարակս և ի բազում ամուրս լեռնային գաւառացն։ Դրդեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց. խրատ եդին, պնդեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի» (Եղիշ. անդ)։ Եթէ պարտ է հաւատալ Եղիշէի՝ յայն աստիճան հասաւ ժողովրդեան մոլեռանդութիւնը, մինչև ուխտ դնել, թէ Հայր չխնայէ որդւոյ, և որդի՝ հօր, կին ելլէ ամուսնոյն դէմ, և ծառայ՝ տեառն.—«Յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. Ձեռն եղբօր հարազատ ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի խնայեսցէ հայր յորդի, և մի ակն առնուցու որդի հօր պատուոյն։ Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ։ Օրէնք աստուածային կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան։ Եւ իբրև այս այսպէս հաստատեցաւ կազմեցաւ՝ երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին, ո՛չ միայն արանց քաջաց, այլև կանանց առնականաց» (Անդ)։ Չէ պարտ բան առ բան առնուլ Եղիշէի պատմութեան այս մասն ևս։

Տեղին, ուր եկած էին նախարարք ի դարձին ի Պարսից հանդերձ մոգօք՝ էր ըստ Եղիշէի Անգղ, զոր կ'անուանէ գիւղաքաղաք, ի Ծաղկոտն գաւառի յարևմտից Բագրևանդայ.—«Իսկ գունդն Հայոց ամենայն օգնականօքն և մոգացն բազմութեամբ եկին հասին յաշխարհն Հայոց, ի գիւղաքաղաք մի մեծ, որում անուն էր Անգղ»

*(Անդ)։ Ըստ Փարպեցւոյն՝ եկան ի Բագրեւանդ, մօտ ի Զարեհաւան, ուր և եղաւ յետոյ մոգուց սպանումը (Փարպ. ԼԲ.)։ Փարպեցին ևս կը յիշէ զԱնգղ իբրև բերդ, ի խօսելն զդարձէն Վարդանայ յետս կէս ճանապարհէն, մինչ կ'երթար ընտանեօք հանդերձ փախչելու ի Յոյնս։ Աշխարհագրութիւն Փարպեցւոյն է ուղղագոյն և զիպող պատմութեան։ Արդարև բնակն էր Վարդանայ, որ կու գար յԱրամանայ, այն է ի հիւսիսոյ արևմտից, Բասենոյ սահմանէն՝ գալ դէպ ուղիղ յԱնգղ, որ էր ի գաւառին Ծաղկէոյ, քան նախարարաց որ կու գային Պարսկաստանէ, այն է ի հարաւոյ արևելից, և որոց մօտագոյն էր Բագրեւանդ ուր էր Զարեհաւան։*

**16.** *Զիարդ և իցէ՝ մենք զանք միւսանգամ առ Փարպեցին։ Վարդան տեսնելով ժողովրդեան ողբը նախարարաց զիջման համար, որ իբրև ուրացութիւն հաշուած էր՝ իւր եղբարբն Համայեկաւ և բոլոր ընտանեօք կը մեկնի երթալ ի Յոյնս, բայց պատգամաւորներ հասնելով ի Հայոց՝ կը հաւանեցունեն զնա դառնալ յետս. —«Տեսեալ զայս ամենայն չարիս տեառն Մամիկոնէից և սպարապետին Վարդանայ... արհամարհեալ զամենայն մեծութիւն անտի կենցաղոյս՝... հանդերձ զրամբ և ընտանեօք դէմ եդեալ ի կողմանս իշխանութեանն Յունաց ճեպէին։... Յանկարծակի իրազգած եղեալ այսպիսի խորհրդոյ և գնացից յաշխարհէս Հայոց զմեծէ սպարապետէն Հայոց... իշխանին Սիւնեաց Վասակայ որ և մարզպան էր Հայոց ի ժամանակին, և ամենայն տանուտերացն Հայոց և սեպհացըն՝ խորտակեալ սրտիւ զարհուրէին... քանզի տեղեկացեալ ճանաչէին ամենեքեան, թէ առանց առաջնորդութեան ազգին այնորիկ և ոչ մի ինչ իրք և գործք աշխարհիս երթեալ էին ի գլուխ։ Խորհուրդ ի մէջ առեալ... իշխանին Սիւնեաց Վասակայ և արարեալ նամակ իւրով մատանեաւ՝ հրամայէր նամականի առնել և այլ ամենայն աւագ տանուտերացն Հայոց. տալ բերել և զկնքեալ Աւետարանն ուխտին, և արս պատուականս յայտ արարեալ, ի քահանայից՝ զՂեւոնդ երէց և զերանելի երէցն Երեմիա և զերանելի երէցն Խորէն Մրենայ, և արս աւագս ի տանուտերացն Հայոց— զիշխանն Արշարունեաց Արշաւիր, զիշխանն Դիմաքսենից զՀմայեակ, և զիշխանն Աբեղենից զԳագրիկ, և տուեալ ցնոսա զամենայն նամականին և զԱւետարանն երդման՝ գեսպանս արձակէր զկնի նորա, որ հասեալ գտանէին զնա և որք ընդ նմայն էին ի գեւղն Արամանայ ի նահանգին Բագրեւանդայ, մերձակայ սահմանակից Բասենոյ և Տուարածատափայ։ Եւ ազդ արարեալ՝ մտանէին զառաջեաւ, պատմէին զպատճառս իւրեանց փութանակի հասանելոյն առ նոսա։... Զայս ամենայն բանս լուեալ ի քահանայիցն և ի նախարար պատ-*

*գամաւորացն սուրբ սպարապետին Հայոց Վարդանայ հանդերձ երանելի եղբարբքն իւրովք, և զսուրբ Աւետարանն ուխտին տեսեալ և զնամականին կարդացեալ՝... դարձան անդրէն առ ընկերսն իւրեանց ի բանակն Հայոց»* (Փարպ. Լ, ԼԱ.)։

**17.** Ըստ Փարպեցւոյն՝ Վարդան կ'անցունէ ամբողջ գարունն սպասելով զօրաց ժողովելուն, և այնպէս ի սկզբան ամարայնոյն կու գայ ի Ծաղկոտն գաւառ, սահմանակից Բագրևանդայ ուր էին Պարսիկք, և կը դադարի տօթոյ ժամանակ.—«Ձգեալ բանի զաւուրս գարնայնոյն յերկար, մինչև յաւուրս տօթոյն մտանելոյ, և հասեալ ամիսք տօթոյն ջերմութեան՝ չու արարեալ ամենայն բազմութիւնն Հայոց ի տեղիս հովոց, գային հասանէին ի գաւառն որ կոչի Ծաղկոտն, մերձ ի բերդն ամուր զոր Անգղն անուանեն. զայն տեղօք արարեալ բանակետեղս արանց՝ դադարէին անդ զաւուրս տօթոյն» (Փարպ. անդ)։ Վարդան այսպէս կը դանդաղէր պատանդներուն պատճառաւ, որոց կեանքն ի վտանգի էր՝ եթէ ապստամբութիւնն յայտնուէր.—«Կամաւ արգելեալ համբերէր (Վարդան) իրացն, հոգալով... յաղագս Աշուշայի Վրաց բդեշխի և որդւոց իշխանին Սիւնեաց Վասակայ, զորս արգելեալ պահեաց անդէն ի դրան թագաւորն Պարսից Յազկերտ... և զայս խորհէր իբրև զբարեսէր, թէ մի գուցէ դժուար ինչ արանցն ի թագաւորէն դիպի, և վնասեսցին» (Անդ. ԼԱ.)։

**18.** Հոս միամիտ Փարպեցին կը յայտնէ գաղտնութիւն մի, որ պատիւ չբերեր հաւատոյ համար կռուող նահատակի, որպիսի էր Վահան Ամատունի։ Այս Վահան կը փութացունէր զՎարդան աճապարել ի վեր հանել ապստամբութեան խորհուրդը, ոչ թէ բարեպաշտ մտօք, այլ առ ատելութեանն զոր ունէր ընդ Վասակայ. վասնզի կը խորհէր, թէ եթէ Վասակ չհաւանէր ապստամբութեանն՝ թերևս սպանուէր ապստամբ կուսակցութենէն. իսկ եթէ հաւանէր՝ երկու որդիք նորա որ պատանդ էին առ թագաւորին՝ սպանուէին հաւանականապէս, կամ մատնուէին բանտից և կապանաց.—«Բայց իշխանն Ամատունեաց Վահան ոչ տայր դուլ և դադար զօրավարին Հայոց Վարդանայ. այլ մերթ ինքեամբ և մերթ այլովք ստիպէր վաղվաղակի յայտնել զիրս ապստամբութեանն, կարծեցուցանելով՝ որպէս հոգւոյն եւեթ հոգալ զգութ փրկութեան. բայց ոչ հոգալով ինչ յայն միտս, այլ վասն մթերից առաջին ոխութեանն, զոր ունէին առ միմեանս իշխանն Սիւնեաց Վասակ և տէրն Ամատունեաց Վահան։ Հայեցեալ նկատէր (սա), թէ կամ չհաւանեալ ապստամբել իշխանն Սիւնեաց Վասակ մեռանի յիւրոցն ընկերաց անարժան մահուամբ, կամ թէ հաւանեալ առ վտանգին

ապստամբել՝ արգելեալ անդէն ի դրանն որդւքն երկոքեան չարաչար կենօք վտանգեալ պատահեն մահու, և կամ բազմաժամանակեայ կարևոր կապանաց և բանտից դիպեալք՝ տանջին անխնայ» (Անդ)։

**19.** Փարպեցւոյն այս պատմութիւնն ևս կը ցուցնէ, թէ Վասակ չէր ի սկզբանէ անտի համամիտ ընդ թագաւորին, ապա թէ ոչ չէր ունենար երկիւղ իւր որդւոցն սպանման համար, մանաւանդ թէ և ոչ Յազկերտ կ'արգելուր զորդիս նորա իբրև պատանդ։ Սուտ է և զրպարտութիւն, ինչպէս յայտնի է յընթացից և ի գործոց Վասակայ, ըստ վաւերականագոյն պատմութեան Փարպեցւոյն, թէ այս «խորհրդական, հանճարեղ և յառաջիմաց» անձն—(Կորիւն)—էր հակառակ քրիստոնէութեան և թշնամի ազգին, ինչպէս բամբասուած է յանիրաւի։ Դարձեալ, եթէ Վասակ վաղուց էր ուրացեալ և գաղտ ի բանի ընդ Յազկերտի, միթէ կը խռովէր ընդ մեկնել Վարդանայ իւրովքն երթալ ի Յոյնս, և կը դարձունէր զնա յետս նամականւով և դեսպաններով. ո՞չ ապաքէն կ'ուրախանար մանաւանդ, ինչպէս նաև կուսակիցք նորա, որ այնպիսի նշանաւոր անձ մը, որպիսի էր Վարդան, պակսեցաւ հանդերձ իւրովքն ապստամբութեան (ուխտապահաց) խումբէն։ Այնչափ խռովելն և յուզել Վասակայ և իւրոցն՝ կը ցուցնէ, թէ չէին նոքա միտեալ յուրացութիւն, ուստի և զատչելն նոցա յետոյ ի Վարդանեանց ունէր այլ պատճառ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։ Անհնար էր Հայոց ընդունել կրակապաշտութիւնն ազգովին, իսկ զինուք ընդդիմանալ Յազկերտի՝ էր վտանգաւոր. ուստի լաւագոյն հնարքն էր՝ թողուլ մոգուց կատարել զիւրեանց պաշտօնն, այն է քարոզել մոգութիւնն ի Հայս, հաստատել կրակի պաշտօնը՝ շինելով ատրուշաններ։ Անտարակոյս մոգքն արհամարհուելով ժողովուրդէն՝ կամ յուսահատեալ պիտի մեկնէին, և կամ գործը պիտի չգտնէր յաջողութիւն։ Եւ եղաւ իսկ այնպէս, ինչպէս կը վկայէ Փարպեցին.—«Իսկ մոգքն, զորս ի դրանէն նախարարքն Հայոց ուսուցիչս ածեալ էին ընդ ինքեանս, իբրև տեսին, թէ արհամարհեալ են յաչս նոցա ինքեանք և օրէնք նոցա, քանզի կանայք նախարարացն, զորս կարծէին մոգքն աշակերտել՝ այնք և տեսանել անգամ զարշէին զնոսա, այլև զորդիս իւրեանց և զդստերս պատուիրէին ստէպ դաստիարակացն չանցուցանել երբէք առ նոքօք մօտ. իսկ արքն որք պատճառանօք կարծեցուցանէին զինքեանս ուրացողս՝ սուտ վարդապետացն և հաց ուտել չտային թոյլ առաջի իւրեանց, և շրջէին (մոգքն) ողորմելի սովամահք. գնալ ի բաց և փախչել չիշխէին, և կալն առ նոսա՝ զմահ ծանուցանէր նոցա և զկորուստ, և գրել գաղտ ի դուռն զիրս ապը-

տամբութեանն փութանալին» (Փարպ. ԼԲ.)։ Կղերին պարտքն էր փոխանակ գաւառ գաւառ շրջելով յապստամբութիւն գրգռելոյ ժողովուրդը՝ վառել զնոսա Հոգեւորապէս ընդդէմ մօտալուտ վտանգին։ Իսկ նախարարք, յետ զիջանելոյ կամաց Թագաւորին—տալոյ մուտ մոգուց իւրաքանչիւր յերկիր իւր՝ կրնային Հաստատուն մնալ յուխտին իւրեանց յԱւետարանն, ինչպէս արարին իսկ. բայց այս պարտէր լինել ի նպաստ Հաստատութեան նոցա յԱւետարանն, և ոչ ի նպաստ ապստամբութեան, որ, բմբէ, արդէն որոշեալ էր ի միտս Վարդանայ և նորայոց։ Ուստի տեսեալ Վարդանայ, թէ այս խորհուրդը կը Հռչակուէր, և մեծ վնաս պիտի Հասնէր դանդաղելէն, առնելով ժողով եպիսկոպոսաց և նախարարաց՝ որոշեց յայտնել զիրսն պարզպանին Վասակայ, որ տակաւին չէր գիտեր։ Ապա յանկարծ մտնելով նա և ընկերք նորա բազմութեամբ առ Վասակ՝ յայտնեցին նմա խորհուրդը և կ'ստիպէին զնա միաբանել ընդ նոսա։ Վասակ ընդդիմացաւ զառաջինն, կամ, որպէս ասէ Փարպեցին՝ ցուցուց դանդաղութիւն։ Յիրաւի կը դանդաղէր Վասակ, նախ՝ վասն զի իբրև մարզպան ինքն կը կրէր պատասխանատուութեան բոլոր ծանրութիւնը, և ունէր երկիւղ իւր որդւոց Համար. երկրորդ՝ Հաւանական է թէ անխորհուրդ եռանդեան արդիւնք կը գտնէր գործը, ինչպէս կը վկայէ ինքն իսկ Փարպեցին, թէ Վարդան ոչ այնչափ յաղթութեան յուսով, որչափ մարտիրոսութեան փափաքով մղուած էր յայն խորհուրդ.—«Չխորհէր (Վարդան) զյաղթութեան ինչ անուն գտանել, այլ զՀեղումն արեան անձինն ի վերայ չինութեան ուխտի եկեղեցւոյ տենչայր ըմբռնել». Թէպէտ Փարպեցին Վասակայ յապաղումը կ'ընծայէ մանաւանդ չարամտութեան նորա. —«Զանայր յապաղել նա (Վասակ), մի՛ վասն որդւոցն իւրոց որք ի դրանն էին, և դարձեալ՝ զի և կեանքն իւր իսկ ի խնամս չարին միտէին Հանապազ»։ Զիարդ և իցէ՝ Վասակ, ըստ Փարպեցւոյն, «թէպէտ ոչ կամաւ՝ սակայն ի Հարկէ յանձն առեալ միաբանէր ընդ նոսա»։ Ապա եպիսկոպոսունք և երիցունք բերել տուին կնքեալ Աւետարանը, և տալով երդնուլ բոլոր զօրաց, «ազատաց և անազատաց», «ամենայն տանուտեարք Հանդերձ Վասակաւ երդուան միանգամ, և կնքելով իւրաքանչիւր մատանեաւ», «ետուն ցպատուական եպիսկոպոսն», այն է ցկաթողիկոսն, ինչպէս Հաւանական է, «և ցաւագ քահանայութիւնն որ էին անդ»։ Յետ այնորիկ գացին յեկեղեցին, և յետ աղօթիցն զօրոյ օրինակը կը դնէ Փարպեցին, ռամիկ զօրաց բազմութիւնն «չմնալով աւագացն Հրամանի»՝ մոլեգնաբար «դիմեցին ի տուն մոխրանոցին, և առեալ զկրակարանն վարեցին ի ջուրսն զկրակսն»... «Բայց զմոգուցն բազմութիւն, ասէ,

պահել առ օրն հրամայեցին զգուշութեամբ. և ի վաղիւն ի ծագել արևուն արս ի նոցանէ թուով սպանին սրով ի գիւղն որ կոչի Զարեհաւան»։

**20.** Յետոյ կ'իջնեն Վարդանեանք յԱյրարատ գաւառ, ուր կը լսեն, թէ Միհրներսեհ գալով ի Փայտակարան՝ կը պատրաստուէր Աղուանից կողմանէ յարձակել ի Հայս։ Վասակ կ'ստիպէ զՎարդան երթալ պատահել նոցա գնդաւ, մինչ ինքն կը մնար մնացեալ զօրօք ի Հայս։ Թէ Վասակ ուղիղ մտօք ղրկեց զՎարդան յԱղուանս, թէ հեռացուց զնա երկրէն, յուսալով թէ ի չյաջողել Վարդանայ այն պատերազմին մէջ, կը խափանուէր ապստամբութեան խորհուրդը՝ չէ յայտնի. Փարպեցին զայս ևս կը մեկնէ ձախողակի, որպէս թէ Վասակ կամակից ունենալով ինքեան աստուածանենգ իշխաններ՝ խաբէութեամբ հեռացուց զՎարդան.—«Այլ ինքն Վասակ զխաբէութեան ճանապարհն կազմեալ նիւթէր ի սրտի իւրում, ունելով կամակիցս և այլ աստուածանենգ արս խորհրդոցն իւրոց յազատացն Հայոց» (Փարպ. ԼԳ.)։

**21.** Վարդան յառաջ քան զմեկնելն յԱղուանս կ'ստիպէ զՎասակ՝ գրելով նամակ առ կայսր և առ հայ իշխանս բաժնին Յունաց՝ խնդրել օգնութիւն. և այս կատարուեցաւ իսկոյն։ Վահան Ամատունի, Հմայեակ եղբայր Վարդանայ և Մերուժան Արծրունի կը ղրկուին հանդերձ թղթովք.—«Սպարապետն Հայոց, տէրն Մամիկոնենից Վարդան տէր ցիշխանն Սիւնեաց Վասակ, թէ որպէս ածաք զմտաւ՝ պարտ է մեզ նախ զորս առաքեմքն առ կայսր՝ արձակել։... Եւ վաղվաղակի նամականի արարեալ առ կայսրն և առ ամենայն աւագանի դրանն Յունաց և առ այլ իշխանս և կողմնակալս, առ բդեշխն Աղձնեաց և առ իշխանն Անգեղ տան, ի Ծոփս և ի Հաշտեանս և յԵկեղեաց, և այլ իշխանաց իւրաքանչիւր տեղեաց, և առ մեծ սպարապետն Անտիոքայ (Անատոլիս)։ Եւ զայս ամենայն թղթեան կնքէր նախ ինքն իշխանն Սիւնեաց Վասակ իւրով մատանեաւ, և ապա ամենայն տանուտեարքն Հայոց։ Եւ պատրաստեալ ճանապարհին Յունաց կազմէին զիշխանն տանն Ամատունեաց Վահան, որպէս զայր մտացի և խորհրդական, և զսուրբ սեպուհն զՀմայեակ, զեղբայրն Վարդանայ ի Մամիկոնէից տոհմէն, և զերանելի Մեհրուժան, զեղբայր սրբոյն Աղանայ ի տոհմէն Արծրունեաց» (Անդ)։

**22.** Ըստ Փարպեցւոյն, ընդ որում միաբան է և Եղիշէ՝ Թէոդոս կայսր Բ. († 450) կը հաճի օգնել Հայոց. յաջորդ նորա Մարկիանոս ըստ խորհրդոյ Անատոլիոսի զօրավարին, Փլորենտեայ ուրումն ասորւոյ (ըստ Եղիշէի՝ Եգփարխոսի, զոր Գաթըրճեան կը հա-

մարի նոյն ընդ Արդաբուրիոսի, որ էր ալան ազգաւ և սպարապետ արևելից առ Մարկիանոսիւ) և այլոց աւագաց՝ կը մերժէ խնդիրը, և պատգամաւորք կը դառնան ունայն։ Եթէ պարտ է հաւատալ Եղիշէի՝ զնոյն Եղփարիոս ղրկեց Մարկիանոս առ Յազկերտ իմացունել, թէ ձեռնթափ էր ի Հայոց։ Զիարդ և իցէ՝ «պատգամաւորքն երթեալք յանդիման եղեն թագաւորին Թէոդոսի. որոյ լուեալ զպատճառ նոցա երթիցն՝ սիրով լսէր ի նոցանէ և յանձն առնոյր օգնել նոցա գնդիւ։ Եւ մինչդեռ պատրաստէր զիրս խոստմանն՝ հասեալ վախճան սրբոյն վճարէր ի կենցաղոյս։ Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս, որոյ և տեղեկացեալ զպէտս խնդրոյն իրացն Հայոց՝ հարցանէր զաւագս դրանն, թէ Որպիսի՞ թուի ձեզ պատասխանի առնել արանցդ եկելոց յաշխարհէն Հայոց։ Պատասխանի տուեալ Անատոլեայ, որ ի ժամուն սպարապետ էր Անտիոքայ, և Փլորենտի ուրումն առն, ասորի ազգաւ, որ էր աւագ դրանն թագաւորին, և ասեն. Մեզ ոչ թուի հաճոյ արհամարհել զուխտ և զհաստատութիւն, զոր ի բազում ժամանակաց գրեալ և կնքեալ է առաջին թագաւորացն, գրգռել պատերազմաւ իրս մի խաղաղացեալս, և ի բաց հանել զաշխարհ մի ի ծառայութենէ թագաւորին իւրեանց։ Այլ և զելս անկալ իրացդ պարտ է ածել զմտաւ, զոր ոչ ոք կարէ գիտել, թէ որպէս, դիւրեա՞ւ և կամ սաստիկ պղտորմամբ պատերազմդ եղեալ վճարեսցի։ Եւ զայս այսպէս ասացեալ՝ կասեցուցին զմիտս թագաւորին, և վնասեցաւ ակնկալութիւնն Հայոց որում ուշ եղեալ մնային, և ոչ պատահեցաւ։ Եւ մինչդեռ յապաղեալ էր զրոյց պատասխանւոյն այսպէս՝ հասեալ գործ պատերազմին Հայոց և Պարսից կատարէր» (Փարպ. ԽԱ.)։

**23.** Յետ մեկնելոյ պատգամաւորացն ի Յոյնս՝ Վարդան հանդերձ երևելի նախարարօք և բազմութեամբ զօրաց երթալով յԱղուանս՝ կը կատարեն յաղթութիւն մեծ, զոր մանր կը նկարագրէ Փարպեցին.—«Եւ սպարապետն Հայոց տէրն Մամիկոնէից երանելին Վարդան առեալ ընդ իւր ի տանուտերացն Հայոց որ ջերմեռանդ սիրով ճեպէին մարտիրոսութեան ժամուն պատահել, որք էին այսոքիկ. Խորէն Խորխոռունի, Արշաւիր Կամսարական, և Թաթուլ Դիմաքսեան, և Արտակ Պալունի, և Գիւտ Վահեւունեաց, և Համայեակ Դիմաքսեան, և այլ տանուտեարք և սեպուհք, և բազումք ի զօրացն Հայոց, որք ինքնայօժար փութով փափաքէին լինել վրէժխնդիր ուխտի սուրբ եկեղեցւոյ, և տալ զանձինս ի մահ ի վերայ սուրբ ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի. և այլ գունդք ի զօրացն Մարդպետական այրուձիոյ, փոյթք ի գործ պատերազմին տաքինութեան։... Եւ հասեալ յԱղուանս երանելւոյ զօրավարին Հայոց

Վարդանայ՝ ազդ եղև զօրագլխացն Պարսից եկն Հայոց։ Եւ լուեալ նոցա փութացան անցանել ընդ գետն մեծ զոր Կուր գետն կոչեն, և ընդ առաջ եկին նոցա մինչև ի գեւղն որ կոչի Խաղխաղ, յերկրին Աղուանից։... Եւ հասեալք ի ժամ մարտին՝ հայեցեալ տեսանէին ըստ օրինի կարգման զգունդն Պարսից։ Կարգէր և զիւր գունդն երանելի զօրավարն Հայոց Վարդան, ըստ բաւականին այրուձիոյն իւրոյ ընդդէմ նոցա. յերիս առաջս բաժանեալ՝ տայր ի ձեռս իւրաքանչիւր զօրագլխի։ Աջոյ կողմանն կացուցանէր զօրագլուխ զիշխանն Արշարունեաց զԱրշաւիր Կամսարականն, որ էր և փեսայ զօրավարին Հայոց սրբոյն Վարդանայ, ունելով զդուստր նորա ի կնութեան. և նիզակակից տայր նմա զՄուշ զաւագ սեպուհն յազգէն Դիմաքսենից. և զահեակ կողմն տայր ի ձեռն Խորենայ Խոռխոռունւոյ, և զօրավիգն ընդ նմա կացուցանէր զՀմայեակ Դիմաքսեանն. և ինքն սուրբ զօրավարն Հայոց Վարդան պատրաստէր զինքն միջոյ տեղւոյն յարձակման։ Եւ այսպէս յօրինեալ զճակատն և յԱստուծոյ խնամսն ապաւինեալք՝ յարձակեցան ի վերայ թշնամեացն։ Կանխագոյն յառաջեալ ի տեղի մարտին Կամսարականն Արշաւիր և Մուշ սեպուհն Դիմաքսենից, որք յանգիտութենէ տեղեացն դիպեցան թանձրախոր սաստիկ մօրից. Կամսարականն Արշաւիր և Մուշ յառաւելապէս դիմեցմանէն երիվարացն անկեալք ի տիղմն հանդերձ երիվարօքն խրէին. անդ կատարեալ պսակէր երանելի սեպուհն Դիմաքսենից Մուշն։ Իսկ Կամսարականն Արշաւիր իջեալ յերիվարէն ի հետիոտս՝ սպանանէր զՎուրկն, զեղբայր Թագաւորին Լփնաց, և ի բաց ձգեալ զերիվարն ի սաստիկ խոր տղմոյն, ուր և մօյկ մի զերծեալ յոտանէն՝ թողեալ մնայր անդէն ի մօրին. և ինքն Կամսարականն միամոյկ տղմաթաթաւ հանդերձ ամենայն զինուն հանեալ զերիվարն ի ցամաք՝ անվեհեր քաջաբար նման թռչնոյ յերիվարն հեծանէր, և զարհուրեցուցեալ զթև իւրոյ կողման թշնամեացն՝ փախստական առնէր։ Եւ հայեցեալ տեսանէր զերանելի սպարապետն Հայոց զտէրն Մամիկոնէից Վարդան հանդերձ ընկերակցօքն իւրովք և ամենայն Հայոց գնդաւն, զի արարեալ փախստական և նոցա՝ ածէին առաջի իւրեանց զբազմութիւն զօրացն Պարսից. յորոց զկէսն սրովք իւրեանց դիաթաւալս յերկիր կործանէին, և զկէսն գետավէժս արարեալ հեղձամղձուկ առնէին. զայլսն ի նոցանէ դաշտացն և անտառախիտ մայրեացն ցրուեալս վարէին։ Իսկ ոմանք յաւագորերոյ Պարսիցն ելեալք ի նաւս՝ յայնկոյս գետոյն մեծի փախըստեալք լինել ճեպէին։ ԶԿամսարականն Արշաւիր զիշխանն Արշարունեաց ստիպով փութացուցանէր երանելի զօրավարն Հայոց Վարդան՝ զկնի փախստէից նաւացն նետաձիգ լինել, ի հաստաձգութիւն և

յանվրէպ դիպողութիւն առնն վտանգել։ Իսկ Կամսարականն Արշաւիր, որպէս և միշտ կամակատար էր բանի սրբոյ զօրավարին, վաղվաղակի հաւանեալ առ ի նմանէ հրամանին՝ զկնի նաւավարացն և փախստէիցն նետաձիգ լինէր։ Եւ խոցեալ զնաւավարսն և զայլս բազումս ի նաւսն՝ կարեվէրս առնէր, որոց ընդ տապալել վիրաւորացն կործանէին նաւքն. և բազումք ի նաւավարացն և գլխաւորացն Պարսից գետասոյզ եղեալ կորնչէին։ Եւ այսպէս շնորհեալ նոցա զյաղթութիւն վերին օգնութեանն՝ դառնային ի բանակս իւրեանց։ Եւ դադարեալք անդէն ի տեղւոջն զօրն զայն՝ ի վաղիւն չուեալք անցանէին ընդ գետն մեծ, անուանեալն Կուր գետ, հասանէին ի պահակ որմոյն, որ է ընդ մէջ իշխանութեանն Աղուանից և Հոնաց. և գտեալ անդ զպահապանս պահակին և այլ զօրականս պարսիկս բազումս, յորոց սուր ի վերայ եդեալ կոտորէին, և զպահակն յանձն առնէին Թագաւորազնի միում Աղուանի, որում անուն էր Վահան. և զնոյն արձակէին դեսպան ի Հոնս և առ այլ ամրականս տեղեացն, զորս հաւանեցուցէ միաբանել նոցա գնդաւ. որոց կամաւ և յօժարութեամբ զօգնելն յանձն առեալ հաստատէին երդմամբ»։

**24**. Այն ինչ վճարած էր պատերազմն յԱղուանս՝ գուժկան հասաւ, թէ Վասակ և միւս նախարարք որ մնացած էին ի Հայս՝ հասաւ, թէ Վասակ և միւս նախարարք որ մնացած էին ի Հայս՝ միացան ընդ Պարսից, բռնեցին ամուր տեղեր, և ըզզատուելով Մամիկոնենից և Կամսարականաց ղրկեցին պատանդ առ Թագաւորն.—«Մինչդեռ այս ամենայն կատարէր այսպէս՝ յանկարծակի դեսպան հասանէր առ երանելի զօրավարն Հայոց Վարդան և առ ամենայն գունդն որ ընդ նմա էին, թէ ստեաց Վասակ ուխտին Աստուծոյ և յետս կացեալ ապստամբեաց ի միաբանութենէ ճշմարտութեանն. նոյնպէս մնացեալքն անդէն առ նմա աւագանին Հայոց... դեսպան արձակեցին ի Պարս և նամակօք ուխտադրեցին ընդ նոսա, և զբերդեան ամրոցացն Հայոց ի բաց կալան, և զիւրեանցն բերդակալս արարեալ՝ զգուշացուցին։ Եւ զորդիս տոհմին Մամիկոնէից և Կամսարականաց և զայլոց տանուտերացն ժողովեալ յիւրաքանչիւր դայեկաց՝ յամուրս բերդից իշխանութեանն Սիւնեաց ետ անցուցանել, և հրամայեաց պահել զամուրսն զգուշութեամբ, և ապա տալ տանել զաղայսն առ Թագաւորն Պարսից։ Եւ որք խոտորեցան զկնի ուխտանենգին Վասակայ՝ են այսոքիկ. իշխանն Բագրատունեաց Տիրոց, իշխանն Խորխոռունեաց Գադիշոյ, իշխանն Ապահունեաց Մանէճ, իշխանն Վահեւունեաց Գիւտ, իշխանն Պալունեաց Վարազշապուհն, իշխանն Աբեղենից Արտէն, իշխանն Ուրծայ Ներսեհ, և այլք յոստանկաց և սեպուհք ոմանք յիւրաքանչիւր

տոհմէ» (Փարպ. ԼԶ.)։ Վարդան և իւրքն առնելով զայս լուր՝ կ'աճապարեն դառնալ ի Հայս.—«Լուեալ զայս ամենայն երանելւոյ սպարապետին Հայոց տեառն Մամիկոնէից Վարդանայ հանդերձ նախարարօքն և զօրուն որ ընդ նմայն էին՝... չուեցին միաբան ամենեքեան յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց ի գաւառն Այրարատայ, և անդ զաւուրս դառնաշունչ օդոյ ձմերայնոյն ըստ սովորութեան իւրեանց դադարեալք՝ փութային առ հասարակ անձկով զաւուրս գարնանային ամսոյն տեսանել, և յոր իւրեանց նահատակութեան պսակին հասանել։ Քանզի ոչ ևս ինչ այլ ընաւ ածէր զմտաւ ոք զյաղթութիւն և կամ զպարտումն, այլ ցանկացեալ էին որպէս ծարաւիք բաժակին փրկութեան՝ իւրեանց կատարմանն պատահել» (Անդ)։

**25.** Միւս կողմանէ Վասակ նամակներ և քահանաներ հանելով կը յորդորէր ժողովուրդը՝ չանսալ Վարդանայ, այլ յետ կենալ ապստամբութենէ, խոստանալով թէ թագաւորն պատրաստ էր շնորհել ազատութիւն պաշտելոյ զքրիստոնէութիւն, ներել մոգերուն կոտրածը և ուրիշ վնասներ. իսկ զապստամբութիւնն ամենևին չյիշել. —«Իսկ Վասակ ոչ երբէք դադարէր գրել նամականի առ իշխանս և շինականս և քահանայս աշխարհիս Հայոց. ցուցանէր իմն բերեալս ի դրանէ ուխտս սուտս և վկայութիւնս ընդունայնս, թէ արքայից արքայ զքրիստոնէութիւն շնորհեաց աշխարհին, և զվնաս կոտորածի մոգուցն չխնդրէ, իսկ զապստամբութենէն ասէ, թէ ընաւ և յիշեմ իսկ ոչ, միայն թէ ի բաց դառնայք ի խրատուէ և ի բանից Վարդանայ և մի կորնչիք ընդ դմա։ Եւ զինքենէ գրէր, թէ Ես լինիմ միջնորդ այսմ ամենայնի և անվնաս պահեմ զաշխարհս Հայոց։ Եւ տուեալ զգրեալս ի ձեռս սուտ քահանայից, որոց անուանքն են Զանդակ մի ոմն, Սահակ Զայնող և միւս ոմն Պետրոս Երկաթի։ Եւ էին Սահակն և Պետրոսն ի գաւառէն Սիւնեաց, յորոց ձեռս տայր զգրեալսն շրջեցուցանել ընդ աշխարհս Հայոց. զոր լուեալ թուլացելոցն ի հաւատս և անյուսիցն՝ հաւատացեալ բանից նենգաւորին կորնչէին. իսկ պնդոքն և մարտիրոսութեան տենչօղքն իբրև լսէին զայս ամենայն բանս ցնորից՝ ևս առաւել պնդեալ զօրանային և աւուր աւետաբեր փրկութեանց սպասէին յուսով» (Անդ)։ Ըստ Փարպեցւոյն՝ թողութեան հրովարտակներն, զորս կը տարածէր Վասակ յետս կասեցուցանելու համար զազգն ապստամբութենէն՝ էին սուտ, և Վասակ կը գործէր զայս ամենայն նենգութեամբ և դաւով։ Չիք տարակոյս, թէ ազգին այն մասը որ միտեալ էր յապստամբութիւնն, կամ մանաւանդ «մարտիրոսութեան տենչօղք» ըստ Փարպեցւոյն՝ Վասակայ ջանքը կը մեկնէին թիւր և չէին վստահ ի

նա իբրև յուրացեալ: Բայց թէ արդարև այնպէս էր, Վասակ սուտ հրովարտակնե՞ր հանեց յանուն թագաւորին, և նպատակն էր ստուգիւ խաբե՞լ նենգութեամբ, թէ ընդ հակառակն ազգասէր խնամով վերջին հնարքն ի գործ արկ ազատել զազգն մոլեռանդ երկիւղէն և խափանել պատերազմին և պարտութեան, որ անհրաժեշտ էր՝ չարաչար հետևանքը: Այս վերջինն հաւանականագոյն է ըստ մեզ քան առաջինը: Ո՜րչափ ցաւալի է անխորհուրդ կրօնասիրութեան կուրութիւնը:

**26.** Զիարդ և իցէ՝ ջանք Վասակայ և իւրոցն օգտեցին գրեթէ ոչինչ: Մարտիրոսութեան տենչը զօրաւոր էր ուխտապահ կոչուած մասին մէջ, մանաւանդ որ կղերին մեծ և երևելի մասն էր քաջալերիչ և խրատտու: Ուստի Յազկերտ որոշեց զինու զօրութեամբ նուաճել զապստամբութիւնն: Զօրքն Պարսից կը հասնին ի Հեր և ի Զարեւանդ, արևելեան հարաւային նահանգ Հայոց, սահմանագլուխ Պարսից: Առանձար անուն սեպուհ մի կը ղրկուի Վարդանանց կողմանէ լրտեսել պարսկական գունդը, և փոքր յաղթութիւն մի ևս կը կատարուի Պարսից վերջապահ թևին վրայ: Առանձար կը դառնայ իւր գնդով և կու տայ տեղեկութիւն պարսիկ գնդին և մանաւանդ զօրագլուխներուն վրայ: Վարդանանք կը փութան երթալ ընդ առաջ Պարսից և չտալ նոցա մուտ ի ներքին Հայս. բայց Պարսիկք աճապարելով կը հասնին յԱրտազ գաւառ Այրարատայ, ուր մօտ էր բանակն Վարդանայ.—«Եւ կատարեալ զաւուրս ձմերային ցրտաշունչ օդոյն, և հասեալ ի տօն մեծ զատկին՝... լուան եթէ զօր եհաս բազում ի Հեր և ի Զարեւանդ գաւառ:... Առաքէր երանելի սպարապետն Հայոց Վարդան միաբանութեամբ աւագանւոյն որ ընդ նմա էին՝ սեպուհ մի յազգէն Ամատունեաց որում անուն էր Առանձար, իբրև երեքհարիւր հեծելովք, երթալ լրտեսել զբազմութիւն զօրացն Պարսից, և տալ զգիրս եթէ հնար իցէ, առ ի փութալէս, ասէ, գալ բերել մեզ զպսակս արքայութեան, զոր ի ձեռն նոցա պարգևէ մեզ Փրկիչն Քրիստոս, յաւիտենից բարութեանցն տուիչ: Երթեալ Առանձար և գունդն որ ընդ նմա՝ տեսին զբանակն Պարսից, և զհզօր վերջապահ թևով միով անկեալ՝ զբազումս հանէին ընդ սուր, և զայլս փախստական արկանէին ի զօրսն Պարսից. և ինքեանք դարձեալ ողջանդամ հասանէին ի գունդն Հայոց, և պատմէին նոցա զԱստուծոյ զօրութիւնն զոր յաջողեաց նոցա Փրկիչն: Պատմէին և վասն զօրագլխացն, թէ Մուշկան Նիւսալաւուրտ և Դողվրճն են. տային գիտել և զայս ևս, թէ կամէին սթափութեամբ հասանել ի միջոյ կողմն աշխարհիս: Զօր լուեալ երանելւոյ սպարապետին Հայոց և որոց ընդ նմայն

էին՝ ևս առաւել ճեպէին երթալ ընդդէմ նոցա. նախ՝ վասն վաղվաղակի պատահելոյ նոցա ժամու մարտիրոսութեան, քանզի անձանձրոյթ աղօթէին հանապազ ի տուէ և ի գիշերի՝ լինել արժանի այնպիսի մասին երկնաւորի. և երկրորդ՝ ասէին, թերևս անդէն ի տեղւոջն ի Հեր և ի Զարևանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին, և լինէր արգել զօրուն Պարսից հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ և գերելով յարձակել և վնասել։ Եւ սոցա թէպէտև ածեալ զայնպիսի ինչ զմտաւ կամէին փութալ՝ սակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին գունդն Պարսից ի գաւառն Արտազ հուպ ի գեւղն որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի մի Տղմուտ դաշտին, զոր ընտրեցին յաղագս երկիւղի զօրացն Հայոց. ամուր ապաստանի անձանց համարէին պատշաճ, և ի միջի նորա ածեալ ղակիչ՝ բանակէին» (Փարպ. ԼԵ.)։

Պենտեկոստէի ուրբաթ օրն Հայոց զօրքը եկան այն տեղ, ուր էր բանակն Պարսից, զոր անպատրաստ գտնելով՝ կրնային յարձակել հարկանել. բայց թոյլ տուին. քանզի, կը կրկնէ Փարպեցին, դիտաւորութիւն նոցա ոչ յաղթել էր, այլ հասնել մարտիրոսութեան։ Արդարև զարմանք. մարտիրոսութեան հասնելու, այսինքն յաղթուելու և մեռնելու նպատակաւ՝ պատերազմ յարուցանել, և կամաւ կորուսանել թշնամին ընկճելու պատեհութիւնը նոյն նպատակին համար.—«Իսկ յաւուր ուրբաթու մեծի տօնին պենտեկոստէին դիմեալ հասանէին մերձ ի նոյն տեղիս զօրքն Հայոց. գտեալ անպատրաստագոյն զզօրսն Պարսից՝ թէ կամէին կարող էին վնասել երամակարձակ ծուլացելոցն. բայց թոյլ տուեալ դադարեցին յայնմ աւուր։ Քանզի ոչ էր եդեալ ի մտի նահատակութեան փափաքողաց այնուհետև յաղթել, այլ միշտ և հանապազ ի կէտ կոչման և տենչալի մարտիրոսութեանն փութային հասանել։ Եւ ժողովեալք այնուհետև՝ մօտ առ զօրսն Պարսից բանակէին, մինչ սահմանն ընթացից տուընջեանն կատարէր» (Փարպ. ԼԲ.)։ Կղերէն բազումք հանդերձ կաթողիկոսաւ որ էին ի բանակին՝ բոլոր գիշերն անցուցին սաղմոսերգութեամբ, և քաջալերելով զզօրն հոգևոր խրատներով, մանաւանդ Ղևոնդ երէց, այր արդարև բանիբուն և հմուտ գրոց սրբոց.—«Եւ հասեալք ի ժամ երեկոյին... զցայգն ամենայն դասք քահանայիցն մերթ սաղմոսարանին զբաղեալք, մերթ վարդապետական բանիւք քաջալերէին զբազմութիւն զօրացն՝ վայր մի քաջանալ և անսպառ բարեացն լինել ժառանգաւոր։ Իսկ սուրբ երէցն Յովսէփ, որ և զկաթողիկոսութեանն ունէր զաթոռ, հրաման տայր երանելոյ առն Աստուծոյ Ղևոնդի խրատել զժողովուրդն և քաջալերել։ Եւ սուրբ երէցն Ղևոնդ զամենայն զգիշերն անձանձ-

ձրոյթ առաքելական վարդապետութեամբ զօրացուցեալ ուսուցանէր զամենեսեան յորդաբուղխ իմաստութեամբ» (Անգ)։ Առաւօտուն կանուխ ճակատեցան երկուստեք, և սկսաւ պատերազմն, զոր այսպէս կը նկարագրէ Փարպեցին. «Վասն զի մերձեալ էր այնուհետեւ ժամ ելից արեգական, և գունդն Պարսից ճակատել ի պատերազմն պատրաստէին և վառէին։ Եւ սուրբն Վարդան տէրն Մամիկոնէից բաժանեալ զիւր գունդն յերիս առաջս՝ միջոցի գնդին կարգէր զխաւր զտէրն Արծրունեաց և զմարդպետն Միհրշապուհ, հանդերձ իշխանաւն Արշարունեաց Արշաւրաւ և երանելի արամբն Արտակաւ իշխանաւն Մոկաց և այլ աւագ նախարարօքն. և կողմանն աջոյ կարգէր աւագ զերանելին Մախազ Խորէն, հանդերձ երանելեաւն Թաթլաւ տերամբն Վանանդայ և սուրբ արամբն Ներսեհիւ Քաջբերունւով և այլ աւագ նախարարօք. և ընդ ահեկէն կողմանէ պատրաստէր զինքն իւրով գնդովն և իշխանաւն Առաւեղենից Փափագաւ և այլ իշխան նախարարօքն Հայոց. քանզի յայնմ կողմանէ առաւելապէս երևէր զակիշ գնդին սևնի զօրուն և այլ զօրաւոր արանց նշանք դրօշից։ Եւ զՀամազասպեան զիւր եղբայրն Թողոյր վերջապահ, և պատուիրէր նմա՝ մի՛ զօք բանադատել, այլ յորդորել միայն բանիւք յաղագս իւրեանց փրկութեան։ Եւ այսպէս բաժանեալ յերիս առաջս զզօրսն Հայոց սրբոյն Վարդանայ, և օրհնեալք ի բերանոյ սուրբն քահանայիցն՝ յարձակէին ի վերայ միմեանց երկոքին կողմանքն, Հայոց և Պարսից։ Եւ ելեալս արարեալ այնուհետեւ՝ յառաջէին որք ցանկացօղք մարտիրոսութեան պսակին, և զզօրսն Պարսից ի փախուստ դարձուցանէին զառաջինն։ Իսկ այլ բազմութիւն զօրացն Հայոց, որք առ հարկի և ոչ կամաւ եկեալ էին, մանաւանդ զի և յօժարք էին զայլս դարձուցանելոյ յետս որք երկնից բարութեանցն ցանկացեալք էին՝ անդէն ի փախուստ դարձեալ կորնչէին զյաւիտենից կորուստն։ Եւ տեսեալ զօրացն Պարսից զգունդն Հայոց լքեալս և պարտասեալս առ ի կոտորել զազգն իւրեանց, հայեցեալ և յայն ևս, զի փախուցեալ երթային զօրքն Հայոց՝ ի մէջ առեալ շուրջ զնոքօք պատեալ ծովանայինն։ Ստիպելով այնուհետեւ զհետ փախստէիցն Հայոց անցանէին զօրքն Պարսից. որոց հասեալ զոմանս կոտորէին, և զայլ ոմանս արգելեալ ի տեղի ինչ ամրոց արգելուին. որոց ոմանք հատեալ զնիզակափակ զիշերոյն պահապանացն, և զբազումս ի նոցանէ կոտորեալ՝ գնացին ողջանդամք։ Եւ այգուն ի փախստէիցն Հայոց ձերբակալ արարեալ ածին ի բանակն և կոտորեցին սրով, և զայլս բազումս արկեալ զփղօք սպանանէին. և մնացորդք փախստէիցն յայլևայլ տեղիս Հայաստան աշխարհիս ցրուեցան։ Բայց որք ի ժամուն երանելի և եր-

կնաւոր կոչմանն եղեն արժանաւորք ընդ սրբոյն Վարդանայ և նահատակեցան՝ են այսոքիկ. յազգէն Խոռխոռունեաց երանելին Խորէն. յազգէն Պալունեաց երանելի սեպուհն Արտակ. յազգէն Գընթունեաց երանելին Տաճատ. յազգէն Դիմաքսենից երանելին Հմայեակ. յազգէն Քաջբերունեաց երանելին Ներսէհ. յազգէն Գնունեաց երանելին Վահան. յազգէն Ընծայնւոյ երանելին Արսէն. յազգէն Սրուանձտայ երանելին Գարեգին: Եւ որպէս շատ խուզել և բազում քննութեամբ հարցեալ և ուսաք զնահատակացն թիւս, որք ի տեղւոջ պատերազմին պսակեցան ընդ աւագ նախարարսն՝ էին երկերիւր եօթանասուն և վեց այր: Եւ զորս յամբոցացն իջուցեալ սպանին սրով և կամ փղօք կոխեցին՝ եօթնհարիւր և յիսուն այր, որք լինին միահամուռ՝ հազար երեսուն և վեց այր: Իսկ ի զօրացն Պարսից որք անկան ի պատերազմին յաւուրն յայնմիկ, և զոր ստուգիւ համարեալ պատմեցին մեզ տեղեկացեալք ի զօրագըլխացն Պարսից՝ երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորս այր» (Փարպ. ԼԹ.):

**27**. Փարպեցին պարզութեամբ կը պատմէ, թէ ինչպէս ի սկզբան զօրացան Հայք, բայց զօրաց այն մասն որ ակամայ եկած էին՝ դարձան ի փախուստ. զայս տեսնելով Պարսիկք՝ յարձակեցան պնդութեամբ, և յաղթեցան Հայք: Առ Եղիշէի չիք այսպիսի խոստովանութիւն, այլ երկու կողմն ևս կը մրցի քաջութեամբ, մինչև մահուամբն Վարդանայ կը ցրուի զօրն.—«Ոչ թէ կողմ էր որ յաղթեաց, և կողմ էր որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան: Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին՝ ոչ ոք գոյր այնուհետև ի մէջ գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին զունդն մնացելոցն» (Եղիշ. էջ 209): Բայց ճշդագոյն է Փարպեցին:

Արդարև Հայոց այս պարտութեան պատճառն էր սակաւութիւն նոցա և զօրաց մեծ մասին ցրտութիւնը, որք եկած էին ակամայ, նա մանաւանդ, որպէս ասէ Փարպեցին՝ «զայլս յերկուացուցանելոյ և յետս դարձուցանելոյ» նպատակաւ: Մեծ յարգութեամբ հանդերձ, զոր ունինք առ Վարդանեանս, իբրև արդարև վկայս պարտիմք խոստովանել, թէ չէր բնաւ իմաստութիւն միով մասամբ միայն ազգին, ամենևին զուրկ արտաքին օգնութենէ՝ խիզախել Սասանեան պէս խրոխտ զօրութեան դէմ, զոր հռոմէական պետութիւնն անգամ չիշխեց գրգռել: Սոյն այս կէտն է որ կ՚արդարացունէ հակառակ կողմը: Եթէ Վասակ, որ արդէն հակառակ էր ապստամբութեան խորհրդոյն, տեսնելով ևս Յունաց և գրեթէ բոլոր քրիստոնեայ աշխարհին հրաժարելն օգնելէ Հայոց, և իբրև

ապստամբութիւն՝ աղարտելն Հայոց շարժումը, բաժնուեցաւ երե-
ւելի մասով մը միաբանութենէն, ինչպէս կը ցուցնէ Փարպեցին,
այս դիպաց հաւատարմագոյն պատմիչը՝ չէր ամենեւին դատապար-
տելի. մանաւանդ որ Վասակ ամէն ջան ի գործ դրաւ, իբրև միջ-
նորդ ի կողմանէ թագաւորին՝ յետս կացուցանել զազգն ապստամ-
բութենէն, թէպէտ ամէն ջան Վասակայ մեկնուեցաւ իբրև խա-
բէութիւն։ Եթէ ընդունինք, թէ Վարդան, իբրև նախանձաւոր
քրիստոնեայ, ունէր պատճառ ընտրելու անյոյս պատերազմ մը,
տեսնելով հաւատոյ աչօք մարտիրոսութեան պսակ՝ պարտինք ըն-
դունել, թէ Վասակ, իբրև իմաստուն քաղաքագէտ՝ ունէր գոնէ
նոյնչափ պատճառ ջանալու խափանել այն պատերազմն, իբրև յան-
դուգն ձեռնարկութիւն։ Կուսակցութեան կամ չափազանց եռան-
դեան ոգւով գրուած պատմութեան բոլոր վճիռներն կ'ունայնանան
խոհեմութեան կանոնին առջև։ Հալածանաց դէմ բարոյական զէնքն
է օրինաւոր. բայց երբ հարկը կ'ստիպէ բռնութիւնը բռնութեամբ
վանել՝ խոհեմութեան կանոնը կը մտնէ մէջ։ «Ո՞ր թագաւոր եր-
թեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի, և ոչ նստեալ
նախ խորհիցի, եթէ կարո՞ղ իցէ տասն հազարաւ զդէմ ունել զայ-
նորիկ որ գայցէ ի վերայ նորա քսան հազարաւ. ապա թէ ոչ՝
մինչդեռ հեռագոյն իցէ, հրեշտակութիւն առաքեալ աղաչեսցէ ի
խաղաղութիւն» (Ղուկ. ԺԴ. 32)։ Մեր գանգատը չէ այն դիւցազն
խմբին դէմ, որ իբրև բոյլ մի՝ համարուած է և պիտի համարուի
միշտ հայ երկնին զարդ, այլ է այն միականիներուն դէմ, որ մի
կողման եռանդը դիտելով մանր՝ չեն նայիր անգամ միւսոյ կողման
իմաստութեան։ Վարդանանց պատմութիւնն է ըստ մեզ երկու
կուսակցութեանց պատմութիւն. մին հոգևոր, աստուածային, որ
զերկնաւորն միայն ունի ինքեան նպատակ (թէպէտ ոչ առանց գո-
նէ ծածուկ ինչ քաղաքական դիտման՝ ազատելու պարսկական բռ-
նութենէն, ընդ որով ինկած էին նախարարք մեր, հակառակ խրա-
տուն երկուց իմաստուն հայրապետաց, Ներսիսի և Սահակայ). միւ-
սըն՝ մարմնաւոր և աշխարհական, որ ըստ մարդկային մթնոլորտն
անդր չանցնիր։ Որովհետև ազգին վստահութիւնը գրաւող երկու
պատմիչք, Փարպեցին և Եղիշէ, մանաւանդ վերջինն, ի բարձրա-
ցուցանելն զմին, զմիւսն կ'իջեցունեն չարաչար՝ անիրաւ դատում
մը տիրած է յազգին ընդդէմ Վասակայ։ Մեր ջանքն եղաւ այս
պատմութեան մէջ ուղիղ դատման առաջնորդել մեր ընթերցող-
ները, բուն լուսով իւրեանց ցուցնելով երկու կողմը։

**28.** Մինչև ցարդ պատմեցինք կարգաւ, առնլով ի Փարպե-
ցւոյն, ինչ անցք որ անցան ի Հայս յետ դարձին նախարարաց Յազ-

կերտէ հանդերձ մոգօք, մինչև այն օրհասական ժամն, յորում այնչափ քաջեր անկան զոհ ջերմ եռանդան, որ թէև դիւցազնական՝ ունի, տնաչառ խօսելով, մեղադրելի կողմեր։ Այս, այսինքն Փարպեցւոյն պատմութեան մէջ, ինչպէս կը տեսնուի՝ Վասակ է միաբան ընդ այլ նախարարս, ընդ Վարդանայ անգամ. կը տրտմի նորա մեկնելուն վրայ, կը դարձունէ զնա յետս նամակօք ի ձեռն պատգամաւորաց. չունի ուրոյն և գաղտնի միաբանութիւն ընդ մոգպետին, թէպէտ չթուիր կամակից ապստամբութեան խորհրդոյն, որում մանաւանդ անտեղեակ էր, և ակամայ կը միաբանի յայն երբ կը յայտնուի նմա խորհուրդն։ Ի մեկնելն Վարդանայ յԱղուանս՝ Վասակ է տակաւին միաբան ընդ Վարդանայ, մինչև յղել նամակ առ կայսր և առ Հայ իշխանս բաժնին Յունաց օգնութեան համար ըստ խնդրոյ Վարդանայ։ Վասակայ զատուիլն հանդերձ համամիտ նախարարօք, «որք էին երևելագոյնք» ըստ Փարպեցւոյն, կազմել ուրոյն կուսակցութիւն հակառակ ապստամբութեան՝ եղաւ յետ մեկնելոյն Վարդանայ յԱղուանս, երբ Վասակ և իւրքն տեսան, թէ չկար նոցա օգնութիւն ոչ կայսերէ և ոչ այլուստ։ Վարդան և իւրքն առնլով Վասակեանց բաժնուելուն լուրն՝ իսկոյն դարձան ի Հայս, և հակառակ ջանից Վասակայ խափանելու ապստամբութիւնը՝ կատարեցաւ պատերազմն։

**29.** Այս ամենուն մէջ գործող, ըստ Փարպեցւոյն, են նախարարք։ Եղիշէ ընդ հակառակն ամէն գործ կ'ընծայէ եպիսկոպոսաց։ Այնպէս որ ըստ Եղիշէի՝ Վարդանանց պատերազմն է կղերական պատերազմ, ըստ Փարպեցւոյն՝ ազգային, թէպէտ ոչ ազատ կղերական ազդեցութենէ։ Ըստ Եղիշէի, ինչպէս արդէն յիշուեցաւ, երբ նախարարաց ուրացութեան լուրը կը հասնի ի Հայս՝ եպիսկոպոսունք կը ցրուին իսկոյն ի գաւառս գաւառս և կը գրգռեն զժողովուրդն յապստամբութիւն։ Այր և կին կը դնեն ուխտ՝ չխնայել իւրեանց սիրելիներուն. ամենքին կը վառին զինու իբրև զինուոր։ —«Յայնմ ժամանակի (ի հասանել գուժի ուրացութեան նախարարաց) սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին զքորեպիսկոպոսս ի գեղս և յագարակս և ի բազում ամուրս լեռնային գաւառացն։ Գրգռեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց. խրատ ետուն, պնդեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի։ Եւ յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. Ձեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի՝ որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի խնայեսցէ հայր յորդի, և մի ակն առնուցու որդի հօր պատուոյն։ Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ

և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ։... Եւ իբրև այս այսպէս հաստատեցաւ կազմեցաւ՝ երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին, ոչ միայն արանց քաջաց, այլև կանանց առնականաց». (Եղիշ. էջ 97, 98)։ Այսպիսի մոլեռանդութեան յիշատակ չկայ առ Փարպեցւոյն։ Ըստ Փարպեցւոյն՝ ժողովուրդը կ'զգայ մեծ ցաւ ի գալ նախարարացն մոգերով հանդերձ։ Այնպէս սրտառուչ է տեսիլը՝ մինչև Վարդան չհանդուրժելով կը մեկնի իւրովքն երթալ ի Յոյնս, թէպէտ յետոյ կը դառնայ, կոչուելով յետս ի Վասակայ, ինչպէս տեսանք։ Եղիշէ չգիտեր, կամ մանաւանդ չյիշեր զայս։ Ըստ Եղիշէի՝ յետ դարձին նախարարաց Յազկերտէ իբրև քսան և հինգ օր յետոյ՝ մոգպետը կը փորձէ քակել եկեղեցւոյն դռները, բայց Ղևոնդ երէց կ'ընդդիմանայ մեծ զօրութեամբ։ Բազմութիւնը կը յարձակի քարերով և կը հասցունէ անհնարին տագնապ մոգերուն և մոգպետին, որ կ'աղաչէ թողուլ զնա ողջ. - «Եւ եղև յետ աւուրց քսան և հնգից (դարձին նախարարաց) մոգպետն ինքնին հասանէր մեծաւ զօրութեամբ քակել զդրունս եկեղեցւոյն. իսկ սուրբն Ղևոնդ... ոչ ետ թոյլ... այլ բազում ամբոխ աղաղակի զօրացն և մոգացն հասուցանէր։ Վերցս ի ձեռին առեալ՝ զկառափունս մոգացն և մոգպետին ջարդեցին։ Եւ այսպէս շատ տագնապի ի վերայ մոգպետին հասուցանէին։ Բազում անգամ աղաչէր զօգնականսն իւր, զի ի մահուանէ կարասցեն զնա ապրեցուցանել և ողջանդամ յարքունիս հասուցանել» (Անդ)։ Առ Փարպեցւոյն ևս տեսանք մոգերու կոտորած, բայց յետ վեց կամ աւելի ամսոց, այսինքն Վարդան կը դառնայ յետս, ապստամբութիւնը կը պատրաստուի գաղտ և կը յայտնուի, և ապա կրակատուններ կը քանդուին, և մոգերէն ոմանք կ'սպանուին։ Ըստ Փարպեցւոյն՝ Վասակ կը միաբանի ընդ Վարդանայ յապստամբութիւնն, թէպէտ ակամայ. յետ մեկնելոյն Վարդանայ ի Վիրս, ինչպէս տեսանք՝ կը զատուի ի Վարդանանց ուխտէ համամիտ նախարարներով։ Ըստ Եղիշէի՝ Վասակ ի սկզբանէ համամիտ է ընդ մոգպետին, նա մանաւանդ քան զնա աւելի նախանձաւոր կրակապաշտութեան տարածման ի Հայս, այնպէս որ մոգպետը կ'առաջարկէ գրել թագաւորին՝ յետ կենալ զՀայս ի մոգութիւն դարձունելու խորհուրդէն, բայց Վասակ կ'ընդդիմանայ.—«Եթէ ինքեանք աստուածքըն եկեսցեն, ասէր մոգպետն, յօգնութիւն՝ չէ հնար օրինացս մոգութեան ի Հայս առնուլ հաստատութիւն»։ Հոս Եղիշէ մոգպետին բերանը կը դնէ ի նպաստ քրիստոնէութեան փառաւոր գովեստ մը, որ ջերմագոյն քրիստոնէէ հազիւ կրնայ սպասուիլ, ոչ թէ մոգպետէ. «Լուեալ իսկ իմ էր ի նախնեաց մերոց, եթէ յաւուրս Շապ-

հոյ արքայից արքայի, երբեւ սկսաւ ուսումնդ այդ աճել և բազմանալ և լնուլ զամենայն երկիրն Պարսից, և ևս անդր յարևելս հասանել, որ վարդապետքն էին օրինացն մերոց՝ յորդորեցին զթագաւորն, զի մի՛ բնաւ ամենևին բարձցին օրէնք մոգութեան յաշխարհէն՝ տալ հրաման սաստիկ, զի լռեալ դադարեսցէ քրիստոնէութիւնն։ Եւ որչափ նա կամեցաւ արգելուլ՝ ևս քան զևս աճեցին և բազմացան, և հասին մինչև յաշխարհն Քուշանաց, և անտի ի հարաւակողմն մինչև ի Հնդիկս տարածեցաւ։ Եւ այնպէս աներկիւղ և համարձակ էին յաշխարհին Պարսից՝ մինչև յամենայն քաղաքս աշխարհին եկեղեցի շինեցին, որ զանցուցանէր պայծառութեամբ զթագաւորաբնակ արքունեօք։ Շինէին և վկայարանս իմն անուանեալս, և զնոյն զարդ եկեղեցեաց զարդարէին, և յամենայն տեղիս, յապատս և յանապատս միայնանոցս շինէին։ Եւ երբեւ ոչինչ երևէր յայտնի օգնութիւն ուստեք՝ աճելով աճէին և բազմանալով բազմանային, և մարմնաւոր մեծութեամբք մեծանային։... Թէև արկ է նոսա թագաւորն զձեռն իւր խստութեամբ և զբազումս կալաւ և չարչարեաց ի նոցանէ, և զևս բազումս մահուամբ սատակեաց՝ դառնացաւ և ձանձրացաւ յանձն իւր, և զնոսա ոչ կարաց նուազեցուցանել ի բազմութենէն։ Դարձեալ թէպէտ փակեաց և կնքեաց զդրունս եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն Պարսից՝ նոքա զամենայն տուն եկեղեցի արարին, և յամենայն տեղւոջ զիւրեանց օրէնսն կատարէին։ Եւ զանձինս վկայարանս համարէին, և լաւագոյն զշինուածս մարդկեղէնս քան զհողեղէնս համարէին։ Սուրբ սպանողացն բթեցան, և նոցա պարանոցքն ոչ ձանձրացան։ Սրտմրտեալ էր թագաւորն, և յոյժ դառնացեալ դահիճք բարկութեանն. իսկ նոքա արթունք և զուարթունք և խնդալից ընդունէին զամենայն հարուածս տանջանացն, և սիրով տանէին զամենայն յափըշտակութիւն ընչից իւրեանց։ Իբրև ետես թագաւորն, եթէ զոհ տուեալ դիմեցին ի մահ իբրև խաշինք սուրբք յաղն երկնաւոր՝ արգել և կարճեաց ի նոցանէ զհարուածս տանջանացն, և հրաման ետ մոգաց և մոպետացն, զի մի՛ ամենևին ոք խուեսցէ զնոսա, այլ հաստատեալ կայցեն աներկիւղութեամբ յիւրաքանչիւր ուսմունս։... Զա՛ ահա ի լսելոյ գիտեմք. բայց այս զոր ես ինձէն աչօք տեսի՝ թուի ինձ թէ մեծագոյն ևս լինի քան զառաջինն։.. Ես անտեղեակ էի անքակ ուխտի եկեղեցւոյդ ի միմեանց։.. Դու որ ի մանկութենէ յայդմ օրէնս սնեալ էիր և ճշմարտեալ գիտէիր զպնդութիւն մարդկա.... ընդէ՞ր ոչ զայդ ամենայն հաւատեաւ յանդիման չասացեր ցթագաւորն. քանզի ամենայն նախարարացն աւագ դու էիր, և զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր մարզպանութեամբ....

ապա թէ ոչ՝ և դու ի նոյա բանի ես, և քոյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս և ընդ զօրս։ Եթէ այդպէս է, և քեզ կամք չէ ունել զմոգութիւն՝ մի ինչ պատկառեր դու երկիւղիւ յարքայէ․ ես գրեմ ցուցանեմ ի դուռն մովպետան մովպետի և մեծ հազարապետին, զի ածցեն զարքայ ի հաւանութիւն, որպէս զի ի բաց թողացուսցէ ըստ առաջին հրամանին» (Եղիշ․ էջ 101—106)։

Ըստ Եղիշէի՝ որպէս թէ Վասակ չհաւանելով բանից մոգպետին, այն է մեղմով զիջանելու խորհրդեան՝ կը խրատէ զնա չվհատել, այլ բռնի յառաջ տանել գործը, և իսկոյն բերել կու տայ զօրք ի Սիւնեաց.—«Ետ պատասխանի մարզպանն մոգպետին և ասէ․ Ամենայն բանք խրատուդ զոր ասացեր՝ ճշմարիտ են, բայց սակաւիկ մի երկայնամիտ լեր... մինչև ես ինձ ույժ ժողովեցից զօր ի թիկունս ածելոյ, և զուխտ եկեղեցւոյդ թերևս կարացից երկփեղկել։ Եւ եթէ զայդ այդպէս արարից՝ գիտեմ ապա թէ և զհրամանն արքունի կարող եմ կատարել։ Եւ անդէն հրոս հանեալ ի Սիւնեաց աշխարհէն՝ զիւր զունդն ստուարացոյց ի թիկունս օգնականութեան մոգաց և մոգպետին։ Եւ ապա սակաւ ասել․ Ա՛ղէ, դու անգամ մի հրովարտակ ի դուռն տուր վասն այրուձիոյն որ յԱղուանսն է տասն հազար, զի ի ձմերոց ի Հայս եկեսցեն. և յորժամ զնոսա ի ձեռին ունիցիմք՝ չիք ոք որ եղծանել կարէ զհրաման արքունի» (Անդ)։ Մոգպետը չհամարիր զայս օգտակար․ «Այդ խորհուրդ դարձեալ խմոց բանիցս ընդդէմ է, ասէ․ քանզի մեք յորժամ բռնութեամբ կռուեսցուք ընդ աշխարհիս՝ աշխարհս ի բաց քանդի, և մեք ի պատուհասէ չապրիմք․ անձանց վնաս, և արքունի մեծապէս զեան»։ Բայց Վասակ չանսար մոգպետին, «զի սրտի մտօք կալեալ էր զպարսկական օրէնսն», և կ'սկսի կաշառօք և անառակ զբօսանօք ջանալ յինքն կորզել ժողովուրդը․—«Սկսաւ այնուհետև պատրել զոմանս կարասւով և զոմանս ողոքական բանիւք․ զռամիկն ամենայն ահեղ բանիւք սպառնալեաց սրտաթափ առնէր։ Հանապազորդ առատացոյց զռոճիկսն տաճարին (սեղանոյ), և յերկարէր զնուագսն ուրախութեան, մաշելով զերկարութիւն գիշերաց յերգս արբեցութեան և ի կաքաւս լկտութեան․ քաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժշտական և զերգս հեթանոսականս։ Բերեալ էր և յարքունուստ բազմութիւն կարասւոյ․ և բազում նենգութեամբ զանմեղ մարդիկ հրապուրէր և յինքն արկանէր։... Այնչափ յիմարեցոյց և ապշեցոյց զմիտս մոգպետին՝ մինչև չէտ նմա իմանալ զելս իրացն։ Սկսաւ բաշխել մոգս ի տունս նախարարացն և մեծամեծ ռոճիկս կարգել, զօհել պատրուճակս, և բռնաբար կնքաւոր մարդկանն տալ ուտել միս յազածոյ և երկիր պագանել արեգականն։

Իբրև սկսաւ բազմանալ ընդ ամենայն աշխարհն այնպիսի պղծագործ խառնակութիւն՝ յանդգնեցան ևս կանայք փշտիպանացն յաւուր կիւրակէի անցուցանել զճրագունս եկեղեցւոյն և պատառել ըզհանդերձս հաւատաւոր կանանցն» (Եղիշ․ էջ 108—110)։ Եղիշէ կը թուի ասել, թէ Վասակ այնչափ չարեաց վրայ յաւել նաև համարձակութիւն տալ փուշտիպանաց (մոգաց օգնականներուն) կանանց՝ կիրակի օր մարելով եկեղեցւոյն ճրագներն՝ սպասաւոր կուսաններ մտնել յանառակ խառնակութիւն։ Արդարև անամօթ զրպարտութիւն։

Յայտնի է անաչառ ընթերցողաց, թէ այս մասն պատմութեան Եղիշէի, կամ այս անուան տակ ծածկուած անձին, ո՛ ոք և է՝ չէ ամենևին ճշմարիտ։ Այն փառաւոր գովեստն զքրիստոնէութենէ և զքրիստոնէից չկրնար ընծայուիլ մոգպետի մը․ մոգպետ մը չէր կրնար ըսել, առանց լինելոյ հակառական իւր դենին և պաշտօնին, թէ քրիստոնեայք «դուռն տուեալ կը դիմէին ի մահ իբրև խաշինք սուրբք յաղն երկնաւոր», և ոչ իբրև պատմութիւն ճշմարիտ է, թէ քրիստոնեայք յառաջ քան զՇապուհ և առ Շապհով այնչափ բազմացան և մեծացան ի Պարսկաստան՝ մինչև «զամենայն տուն եկեղեցի արարին», թէ եկեղեցիք նոցա «զանցուցանէին պայծառութեամբ զթագաւորաբնակ արքունեօք», և թէ՝ այնպէս սաստիկ էր կոտորածն, մինչև «սուրբք սպանողացն բթեցան, և նոցա պարանոցք ոչ ձանձրացան»։ Կար արդարև հալածումն առ Շապհով, բայց ոչ այնչափ որչափ կամի մոգպետն Եղիշէի, սուտ գովաբան քրիստոնէութեան։ Չէ դարձեալ ճշմարիտ խրատն, զոր կը դնէ Եղիշէ ի բերան Վասակայ, որպէս թէ կը յորդորէր նա զմոգպետն չմեղմացունել ամենևին հալածումը, այլ յառաջ տանել բռնութիւնը զինու զօրութեամբ։ Նւս աւելի սուտ և զրպարտութիւն են հնարքն՝ առ որս որպէս թէ կը դիմէ Վասակ, այսինքն շուայտութեամբ և ըկտի զբօսանօք, նաև կաշառօք պատրել ժողովրդեան ռամիկ մասը։ Այս բաներուն նշմարանքն անգամ չկան առ Փարպեցւոյն։ Բայց երթանք յառաջ։

**30.** Այս ամէն չարեաց, այսինքն Վասակայ անզգամութիւններուն, դարմանը կը խորհին դարձեալ եպիսկոպոսունք ըստ Եղիշէի։ Նախ բանակը կը բաժնեն երկու․ յետոյ Աւետարան ի ձեռին կը մտնեն սպարապետին տունը, կը խրատեն զՎարդան և կը քաջալերեն, կը վառեն զօրաց եռանդը, կը բանեն զՎասակ, որ կեղծաւորութեամբ կ'ելնայ յոտս եպիսկոպոսաց, և կ'ազատի ի մահուանէ։ Կ'առնուլին և կը քանդուլին բերդեր, զորս գրաւած էին Վասակեանք, արք և կանայք կը վարին ի գերութիւն.—«Զայս

ամենայն—այսինքն Վասակայ անօրէնութիւններն—իբրև տեսին սուրբ եպիսկոպոսունքն՝ եւ քաջ դրդեալ յորդորեցան ի նոյն միաբանութիւն, և հնարագէտ իմաստութեամբ ընդ երկուս բաժանեցին զբանակն:.. ԶԱւետարանն ի ձեռն առեալ հասին և անկան առանց հարցանելոյ ի վանս սպարապետին, ուր ժողովեալ էին զօրքն Հայոց: Համբարձին զձայնս իւրեանց և ասեն. Աղաչեմք զձեզ զամենեսեան սուրբ Աւետարանաւս, եթէ ձերով խորհրդով գործէ զայն անօրէնութեան չարիս մարզպանն և մոգպետն՝ նախ զմեր պարանոցս հատէք, և ապա յեկեղեցին ձեռնարկեցէք: Ապա թէ առանց ձեր կամաց նոքա զայն չարն գործեն՝ այսօր խնդրեսցի վրէժդ այդ ի նոցանէ:... Յայնժամ ամենեքեան ի նախանձ բարկութեան բրդեցան, մինչև ամենայն տեսողացն երիկամունքն դողային:... Ընթացան վաղվաղակի ի զէնս իւրեանց, վառեցան կազմեցան զգիշերն ամենայն, և ընդ ծագել արեգականն զգունդն յերիս մասունս բաժանեալ ի բանակն (Պարսից) արկանէին: Գունդն առաջին յարևելից կուսէ, և գունդն երկրորդ յարևմտից կողմանէ, և գունդն երրորդ ի հիւսիսոյ կողմանէ՝ շուրջանակի ի մէջ առեալ փակեցին զբազմութիւն բանակին (Պարսից), և զբազումս կոտորեցին, և զևս բազմագոյնս կապեցին զերևելի մարդիկ և արկին ի բերդս ամուրս ընդ իւրեանց իշխանութեամբ:... Իսկ զմարզպանն ձերբակալ արարին: Միաբանէր նա ընդ նոսա երդմամբ՝ հաստատուն կալ յուխտին, զղջանայր զառաջին քակումն ի նոցանէ: Անկանէր ապաշխարութեամբ յոտս սուրբ եպիսկոպոսացն, և աղաչէր խաղաղատելով, զի մի մերժեալ ընկեսցի առ ի նոցանէ: Կրկնէր և երեքկնէր զանսուտ երդումն առաջի բազմութեանն ի սուրբ Աւետարանն, գնէր և կնքէր զերդումն և կապէր զԱւետարանէն, և աղաչէր զի յԱստուծոյ խնդրեսցի վրէժխնդրութիւնն, և մի՛ նոքա մարդկաբար սատակեսցեն զնա: Իսկ նոքա թէպէտև հաստատեալ գիտէին զնենգաւոր կեղծաւորութիւն նորա, և թէ խաբէութեամբ դառնալ անդրէն ի հին մոլորութիւնն՝ ոչինչ փոյթ առնէին ձեռն արկանել ի նա վասն առաջին յանցանացն, այլ սուրբ Աւետարանին թողին ի դատապարտութիւն:... Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց յամրոցս աշխարհին զոր ունէին Պարսիկքն. տապալէին քանդէին զբնակութիւնս նոցա: Առաջին՝ զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք. և առնուին զանմատոյց ամուրս - զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս և զաւանս իւրեանց, զԵրկայնորդան և զԱրհնին և զաւանս իւրեանց. զԲարձրաբուղն, զԽորանիստն, զԾախանիստն, զանկասկածելի Ողականն, և ընդ նոսա զաւանս իւրեանց. զԱրփանեալն, զՎանն աւան,

ընդ նմին և զաւանս իւր, զԴռեալն և զԿապոյտն, զՈրոտն և զՎաստկաշատն։ Զամենեսին զայս իւրաքանչիւր գեղիւք և ագարակօք, զօրօք և զօրագլխօք ի նմին ամի առեալ տապալեցին, և ի գերութիւն վարեցին զարս և զկանայս ընչիւք և ստացուածովք, հանդերձ պատուական գանձիւք և նոյին սպասուք։ Տապալէին քանդէին զշինուածս պաշտօնարկի և պաշտաման կրակի» (Եղիշ. էջ 108—118)։

Այս ամենայն տեղիք—Արտաշատ, Գառնի, Անի, Արտագերք, Ողական, Վան, այլովքն հանդերձ, զորոց ասէ Եղիշէ, թէ Վարդանանք քանդեցին, տապալեցին, այրեցին հանդերձ գեղիւք և ագարակօք, և գերի վարեցին բնակիչներն, արս և կանայս, ընչիւք և ստացուածովք՝ ապաքէն էին Հայոց քաղաքներ, բնակիչներն Հայ քրիստոնեաներ, քանզի չէ հաւանական թէ այնպէս կարճ ժամանակի մէջ, այսինքն յետ դարձին նախարարաց իբր քսան և հինգ կամ երեսուն աւուր մէջ (ըստ Եղիշէի) եղան կրակապաշտ։ Ի՞նչ հաւանականութիւն կայ ուրեմն, թէ հաւատոյ պաշտպան զօրք մը, որպիսի էին Վարդան և իւրքն՝ հասուցին այնչափ չարիս այն անմեղ Հայ բնակչաց։ Ըստ մեզ՝ ինչպէս վերի բոլոր նկարագիրն՝ նոյնպէս այս աւերմանց և գերութեան պատմութիւնն գիւտ է Եղիշէի, իբր թէ Վարդանանց քրիստոնէական եռանդը ցուցնելու համար։ Փարպեցին չունի այս պարագաներէն և ոչ մին։ Եղիշէի բուռն միտումն ջախջախելու զՎասակ՝ կու տայ նմա փոխել ըզպատմութիւնն յանհամ վէպ։

**31**. Զարմանալի է, որ մինչ Վարդանանք կը գործեն այն բռնութիւններն այնչափ քաղաքաց անմեղ բնակիչներուն վրայ ըստ Եղիշէի՝ միւս կողմանէ կը գործուին մեծամեծ սքանչելիք ի նպաստ այն հրոսակային զօրուն։ Ամուր բերդեր կը կործանին ինքնին, զարմանալի տեսիլներ կ'երևան շատերուն, աստեղք անգամ քան զսովորականն աւելի պայծառացեալ կ'երևին, աղայք իսկ կ'առնուն զէնք.—«Մինչդեռ յայսմ մեծի առաքինութեան կատարեալ գործէին զգործ նահատակութեանն՝ երևէր իմն ի վերայ ամենեցուն աստուածային շնորհք. քանզի առանց հրամանի ի զօրացն Հայոց յարևելից կողմանէ աշխարհին յարձակեցան ոմանք յԱտրպատական աշխարհն, և ի տեղիս տեղիս բազում վնասս արարին, առնլով և աւերելով և քանդելով բազում ատրուշանս։ Իսկ որ ի մեծ ամուրսն անկանէին՝ խաչանշան արարեալ ի վերայ զօրուն անկանէին. որ և երկու մեծամեծ բերդաց պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ անկեալ կործանեցան. մինչև ամենայն բնակչաց երկրին զահի հարեալ ի մեծ նշանէն՝ ինքեանք իւրեանց ձեռօք զկրակատունսն այրէին, ուրանալով զօրէնս մոգութեանն՝ խոստովանէին ի

սուրբ Աւետարանն։ Եւ այլ մեծամեծ աջողութիւնք կատարէին ի ձեռն զօրականին. քանզի ուր ոչ էր ակնկալութիւն, եթէ զանուն Աստուծոյ ոք յիշեսցէ՝ արհաւիրք մեծ անկանէին ի վերայ նոցա. և ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում տեսիլս նորս և զարմանալիս։ Սոյնպէս և աստեղք յերկինս երևէին յոյժ լուսալիր պայծառացեալ, զոր ոչ ունէին յառաջին բնութեանն։ Եւ ամենայն տղայք աշխարհին իբրև զարս պատերազմողս խիզախէին» (Եղիշ. էջ 118, 119)։

**32**. Եղիշէ գիտէ զերթն Վարդանայ յԱղուանս հանդերձ զօրու և յաղթութիւնը որ անդ, ինչպէս նաև զառաքումն պատգամաւորութեան առ կայսր ըստ օրինակի Փարպեցւոյն, սա տարբերութեամբ միայն, որ մինչ առ Փարպեցւոյն պատգամաւորք են Վահան Ամատունի, Հմայեակ եղբայր Վարդանայ և Մերուժան եղբայր Աղանայ Արծրունւոյ, արք անուանիք, որպէս և վայել իսկ էր պատգամաւորութեան՝ ըստ Եղիշէի՝ մի միայն է պատգամաւորն, Ատոմ ոմն Գնունի.—«Յայնմ ժամանակի զմի ոմն ի մեծ նախարարացն, ի տոհմէ Գնունեաց Ատոմ, ճեպով առաքեցին յերկիրն արևմտից, ցուցանել զայս ամենայն խորհուրդ գչարիմաց թագաւորին արևելից, խնդրել ի նմանէ (Թէոդոսէ) օգնականութիւն սատարութեան, և եթէ նա կամեսցի՝ նմա իսկ մտանել ի ծառայութիւն» (Եղիշ. էջ 121)։ Եղիշէ համաձայն է Փարպեցւոյն յայնմ ևս, թէ մինչ Թէոդոս պատրաստ էր օգնել Հայոց՝ կը վախճանի, և թէ յաջորդ նորա Մարկիանոս կը մերժէ Հայոց խնդիրն. այլ թէ պատգամաւոր ևս ղրկելով զԵղփարիոս ոմն առ Յազկերտ, «եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց զինու և զօրու և ամենայն օգնականութեամբ»՝ այս չէ ճշմարիտ. այսպիսի ուխտ կամ դաշն Մարկիանոսի ընդ Յազկերտի յիշուած չէ ի պատմութեան, և ոչ Եղփարիոս անուն ոք կայ յիշուած։ Կայ Արդաբուրիոս ոմն սպարապետ Թէոդոսի Բ.։ Գաթըրճեան կը կարծէ, թէ այս Արդաբուրեայ թոռն էր Եղիշէի Եղփարիոսն (Արդաբուրիոս), սպարապետ Մարկիանոսի, բայց այս Արդաբուրիոս կրտսերն էր ամօք ինչ յետոյ քան զպատերազմն Վարդանանց։ Ուխտ դաշանց հրաժարելոյ յօգնելոյ Հայոց՝ եղած էր ի ձեռն Անատոլեայ սպարապետի առ Թէոդոսիւ Բ. զայս ուխտ կը շփոթէ Եղիշէ, կամ կը համարի կրկին հաստատուած հակառակ Հայոց ի նախատինս Մարկիանու, զոր և կը կոչէ անարի։

**33**. Զթուիր նոյնպէս վաւերական Եղիշէէ բերուած առ կայսր նամակին պատճէնն, ուր հանդերձ այլովք ասի, թէ Տրդատ, ինչպէս զթագաւորութիւնն առաւ ի Հռոմայեցւոց՝ նոյնպէս «զհաւատոն

որ ի Քրիստոս՝ ընկալաւ յեպիսկոպոսապետէն Հռոմայ». ակնարկութիւն՝ որ հակառակ է ոչ ազգային եկեղեցական աւանդութեան միայն, այլև ընդհանուր եկեղեցական պատմութեան և եկեղեցւոյ ոգւոյն։ Ուստի հարկ է ասել, թէ կամ առ Եղիշէիւ կար ուրիշ ազգային աւանդութիւն, որ Տրդատայ դարձին ծագումը կը դնէր ի թելադրութենէ եպիսկոպոսապետին Հռոմայ, կամ, որ աւելի հաւանական է՝ Թուղթն առ Թէոդոս առ Եղիշէի՝ է գիւտ նորին իսկ Եղիշէի, և չունի ամենևին պատմական հիմն։

Փարպեցին ևս կը պատմէ, թէ նամակ գրուեցաւ առ կայսր, բայց ի Վասակայ և ի նախարարաց, ո՛չ ի կղերէն, և չտար օրինակը։ Ըստ Եղիշէի՝ Յովսէփ եպիսկոպոս կը գրէ Թուղթը հանդերձ եպիսկոպոսակցօք և նախարարօք։ Ահա պատճէն նամակին Հայոց առ Թէոդոս ըստ Եղիշէի. «Յովսէփ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իմովք և ամենայն զօրք Հայոց, Վասակ մարզպան և Ներշապուհ Ռմբոսեան հանդերձ սպարապետաւս և ամենայն մեծամեծ նախարարօքս առ մեծանունդ Թէոդոս կայսր. Բազմասցի ողջոյն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յերկրաւորաց՝ որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայցէ։ Որպէս մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանսն զառաքինի նախնեացն ձերոց. ունելով զԵւրոպէ՝ անցին և տիրեցին և Ասիացւոց կողմանցն, և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ելեալ ըստ ձեռն նոցա։ Եւ յայնչափ մեծ իշխանութեան դաստակերտ մեծ և սիրելի՝ զՀայոց աշխարհս անուանէին։ Վասնորոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ սնաւ յերկրին Յունաց, և ի ձէնջ թագաւորեալ տիրէր հայրենի աշխարհիս. սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռոմայ, որ լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին ի մէնջ կորզել հանել խաւարասէր որդիքն արևելից։ Եւ մեք ի ձեր քաջութիւն արութեանդ խիզախեալ՝ էր ինչ որ ընդդէմ դարձաք նորա հրամանացն, և բազում այն է որ արդ առաջի պատրաստեալ եմք։ Ընտրեցաք զմահ աստուածպաշտութեամբ՝ քան զկեանս ուրացութեամբ. եթէ դուք ևս ի ձեռն տուջիք զմեզ՝ ահա կրկին կենաց դիպեցաք և ոչ միանգամ մահու։ Եւ եթէ սակաւիկ մի հեղգայք՝ գուցէ բազում և այլ աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա» (Եղիշ. անդ)։ Զարմանալի է, թէ ինչպէս Տրդատ, որ ըստ աւանդութեան դեռ մանուկ տղայ էր ի փախչելն՝ կարէր յիշել զառաջին սէրն Հռոմայեցւոց և ապաւինել առ նոսա։

**34.** Չէ հաւանական նաև այն զոր կը պատմէ Եղիշէ, թէ «Երբեւ յանդիման եղեն մեծի թագաւորին (Թէոդոսի), և ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին՝ բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին»։ Աւելորդ էր Թէոդոսի, ինչպէս արդէն ըսուեցաւ, մատեաններ ի մէջ բերել Հայոց հետ հին ուխտ մը յիշելու համար, միթէ չէր գիտեր Թէոդոս, թէ ի վաղուց ի նախնեաց անտի դաստակերտ (աւատ) Հռոմայեցւոց էր Հայաստան. չէր յիշեր այն երկար և արիւնահեղ պատերազմներն, որ այն երկրին համար եղան իւր հօրը, հաւուն և իւր իսկ ժամանակ, բայց ստիպեալ ի դիպաց՝ հրաժարած էին նորա մեծ մասէն։ Բան այն հին ուխտն՝ աւելի մօտ և կենդանի էին ի միտս Թէոդոսի կրկին դաշինքն ընդ Պարսից։ Գիտենք ի Սոկրատայ, Սոզոմենոսէ և Թէոդորետոսէ, երեքին ևս ժամանակակից, թէ ինչպէս առ Վռամաւ Ե, հօրըն Յազկերտի Բ. (421) եղաւ պատերազմ յԱրզանենէ (Արզն) նահանգին Հայոց զոր ունէին Պարսիկք, և ապա ի Միջագետս, և յաղթութիւնն մնաց անորոշ, բայց Թէոդոս ստիպուեցաւ կռել դաշն հարիւրամեայ խաղաղութեան։ Այն դաշանց հակառակ՝ այս Յազկերտ նորոգեց պատերազմը (440, 441), յաղթուեցան Հռոմայեցիք, և Անատոլիոս սպարապետ արևելից ղրկուեցաւ մեծամեծ ընծայիւք առ Յազկերտ. փախստեայ պարսիկ քրիստոնեաներ, զորս կը պաշտպանէր Անատոլիոս հայրապետ՝ յանձնուեցան Պարսից ըստ խնդրոյ թագաւորին, և նորոգեցաւ խաղաղութիւնն։ Այս դէպք ելած չէին յիշողութենէն Թէոդոսի, և դժուարին էր Յունաց միւսանգամ բանալ պատերազմը՝ որմէ հազիւ ազատած էին իբր ութ կամ ինն ամօք յառաջ։ Ուստի չկար ամենևին հարկ մատեաններ մէջ բերելու, և ոչ ճշմարիտ է այն, թէ Մարկիանոս ի ձեռն դեսպանաց նոր ուխտ հաստատեց ընդ Յազկերտի չօգնել Հայոց—«Փութացաւ արձակեաց դեսպանս առ թագաւորն Պարսից, և եմուտ յուխտ հաստատութեան ձեռընթափ լինել ի Հայոց»։ Այս ուխտն արդէն կար։ Հաւանականագոյն է այն՝ զոր կը պատմէ Փարպեցին, թէ Անատոլիոս սպարապետ Անտիոքայ և Փլորենտիոս անուանի պատրիկ, վերակացու արևելից առ Թէոդոսիւ (428—449), և յետոյ առ Մարկիանոսիւ (450—455), խորհուրդ տուին Մարկիանոսի, յաջորդին Թէոդոսի՝ հրաժարել օգնելէ Հայոց.—«Պատասխանի տուեալ Անատոլեայ, որ ի ժամուն սպարապետ էր Անտիոքայ, և Փլորենտի ուրումն, որ էր աւագ դրանն թագաւորին, և ասեն. Մեզ ոչ թուի հաճոյ արհամարհել զուխտ և զհաստատութիւն՝ զոր ի բազում ժամանակաց գրեալ և կնքեալ է առաջին թագաւորացն, և գրգռել պատերազմաւ իբրև մի

խաղաղացեալս, և ի բաց հանել զաշխարհ մի ի ծառայութենէ թագաւորին իւրեանց։ Այլև զելս անյայտ իրացդ պարտ է ածել զմտաւ, զոր ոչ ոք կարէ գիտել, թէ որպէս, զիւրեա՞ և կամ սաստիկ պղտորմամբ պատերազմդ եղեալ վճարեսցի։ Եւ զայս այսպէս ասացեալ՝ կասեցուցին զմիտս թագաւորին, և վնասեցաւ ակնկալութիւնն Հայոց որում ուշ եդեալ մնային, և ոչ պատահեցաւ» (Փարպ. ԽԱ.)։

**35.** Պատգամաւորք մեկնած էին առ կայսր, և Վարդան կը գտնուէր զօրօք յԱղուանս՝ երբ Վասակ ուրիշ երևելի նախարարօք զատուեցաւ ապստամբութեան կուսակցութենէն։ Արդարև չունինք ստոյգ վկայութիւն, թէ Վասակ և իւրքն առ ատելութեան արդեօք ընդդէմ քրիստոնէութեան, թէ վնասակար տեսնելով ապստամբութիւնը, զատուեցան ի Վարդանանց։ Եղիշէ և Փարպեցին են յառաջին կարծիս։ Սակայն շատ հաւանական է, թէ Վասակ որ չէր մէտ յապստամբութիւնն՝ կը յուսար օգնութիւն ի Յունաց և յայլոց, մանաւանդ Յունաց բաժնին Հայ նախարարներէն. երբ այս յոյսն ելաւ ի դերև՝ զատուեցաւ ապստամբ կուսակցութենէն երևելի նախարարօք, աղետալի գտնելով ապստամբութեան վախճանը։ Բաց աստի ունինք ի գովութիւն Վասակայ երկու վկայութիւն, մին ժամանակակից, երկրորդն ևս ըստ բաւականին հզօր, որում միտ չէ դրուած ցարդ։ Խորենացւոյն պատմութիւնը գովութեամբ կը յիշէ զՎասակ՝ իբրև նպաստամատոյց Մեսրոպայ ի քարոզութեան նորա յԱղուանս. «Կոչեալ (Մեսրոպայ) զԲենիամին ոմն շնորհատուր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ» (Խոր. Գ. ԾԴ.)։ Աւելի մեծ գովեստիւ կը խօսի Կորիւն. «Յորում ժամանակի, ասէ (այն է ի քարոզութեանն Մեսրոպայ, 423—30), պարգևեալ յԱստուծոյ հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիսակեանն Վասակ, այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ։ Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրև որդւոյ առ հայր հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ Աւետարանին վայելչութեան. մինչև ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր» (Կորիւն)։ Չենք կրնար յառաջ քան 441 գրուած դնել Կորեան պատմութիւնը, քանզի կը յիշէ նա Սահակայ և Մեսրոպայ մահը, որ եղաւ 440-ին. ապա գէթ այն թուականին (441) Վասակ արժանի էր ըստ Կորեան կոչուելու «այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց ըստ շնորհատուր իմաստութեանն Աստուծոյ»։ Արդարև զարմանալի է, որ մինչ ըստ Կորեան Վասակ, իբրև «քաջ սիսական», «պարգևեալ յԱստուծոյ հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց»՝ ըստ Եղիշէի՝

«ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենգութեամբ և քսութեամբ ետ սպանանել զհօրեղբայր իւր զՎաղինակ, և ինքն տիրէ զտէրութիւնն»։ Մինչ ըստ Կորեան Վասակ «բազում նպաստութիւն» կը մատուցանէր Մեսրոպայ «յաւետարանագործ վարդապետութեան», «իբրև որդի առ հայր հպատակութիւն» կը ցուցնէր Մեսրոպայ «ըստ Աւետարանին վայելչութեան», և «մինչև ի վախճան զհրամայեալսն ի նմանէ ի գործ բերէր»՝ ըստ Եղիշէի՝ էր նա անհնարին չար ի մանկութենէ.—«Ոչինչ եթող չարիս զոր ոչ գործեաց ի կեանս իւր»։ Արդարև փառաւոր է գովեստն Կորեան զՎասակայ. բայց արդարացունելու համար առ վայր մի զԵղիշէ՝ դնենք թէ Վասակ մինչև 441, այսինքն մինչև կարծեցեալ թուականն մատենագրութեան Կորեան, էր արժանի այն գովեստից, այլ յետ այնորիկ, այն է 441-էն մինչև 451, որ է Վարդանանց պատերազմին հաւանական տարին՝ փոխուեցաւ։ Սակայն գիտենք այլուստ, թէ Կորիւն գրած է ոչ թէ 441-ին, այն է իսկ և իսկ զկնի մահուն Սահակայ և Մեսրոպայ, այլ յետ 451-ին, կամ յետ պատերազմին Վարդանանց, քանզի գիտէ Յովսեփայ և ընկերաց նորա, յանուանէ Յովհաննու ուրումն աշակերտակցի նորա և ապա պաշտօնակցի (որ կը թուի լինել Յոհան Մանդակունի) հալածումը և նեղութիւններն ի Տիզբոն.—«Գլխաւորս վերակացուս տեղապահս յայտ արարեալ հարցն կատարելոց. որոց առաջինն Յովսէփ գլխաւոր ժողովոյն, և երկրորդն այլ աշակերտ Յովհան անուն, այր իսկ սուրբ վարդապետասէր և ճշմարտապատում։ Որում դէպ լինէր յետ վախճանի սրբոյն բազում և ազգի ազգի փորձութեանց և կապանաւոր վշտաց, մենամարտիկ երկպատական բանութեանն ի Տիզբոն քաղաքի վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վասնորոյ և զխոստովանողական անուն ժառանգեաց. ի նոյն վերակացութիւնն (կաթողիկոսութիւն) դառնալը յերկիրն Հայոց» (Կոր.)։ Այսպիսի հալածանք, ինչպէս գիտենք՝ եղան յետ պատերազմին Վարդանանց, և ոչ յառաջ։ Նա մանաւանդ Կորիւն գիտէ և զմահն Վահանայ Ամատունւոյ, որ էր ի համարի կալեալ նախարարաց որ տարուեցան յետ պատերազմին Վարդանանց ի դուռն (Եղիշ. էջ 443. Փարպ. ԽԷ.), և կը թուի մեռած ի Պարսկաստան, քանզի յետ դարձին նախարարաց ի Հայս՝ չյիշուիր Վահան.—«Իսկ բարեացապարտին Վահանայ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր. որ աշխարհածնիւն հայրենեացն սեպհական ոգի դտեալ՝ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ մերձաւոր կենակից վայելէր»։ Այսպէս Կորեան, թէև մթին՝ ապաքէն կ'ակնարկէն Վահանայ մահը։ Եթէ Կորիւն, ինչպէս հաւանական է, գրեց յետ 451-ին, այն է

յետ պատերազմին Վարդանանց՝ չէր կրնար լինել անտեղեակ գործոց Վասակայ։ Ի՞նչ կը նշանակէ ուրեմն Կորեան գովեստն զնմանէ։ Նոյն բան է զպատմութենէ Խորենացւոյն, որ, որչափ և կանուխ դնենք՝ չկրնար լինել գրուած յառաջ քան զպատերազմն Վարդանանց, մանաւանդ եթէ ընդունենք թէ այն պատմութիւնը գրուեցաւ ի խնդրոյ Սահակայ մարզպանի։

**36.** Ըստ Եղիշէի՝ մինչ Վարդանանք են յԱղուանս՝ Վասակ ոչ միայն կը զատուի ուխտէն՝ այլև մեծամեծ աւերումներ կը գործէ. —«Գուժկան հասանէր (առ Վարդան) յաշխարհէն Հայոց, զճակատ հարեալ և զօձիս պատառեալ, վասն ապստամբին Վասակայ, եթէ յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի որ կայեանք զօրացն էին, զԳառնին և զԵրամաւնս, զԴրսհանակերտն, զմեծ դաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն Օշական, զՓառախոտն, զԱրգեանսն, զԶողկերտն աւան և զբերդն Արմաւրի, զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն տուն Արագածու, և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գեւղս և զաւանս որ շուրջ զնովաւ էին, առեալ աւերեալ և հրձիգ արարեալ... և ինքն սփռեալ տարածեալ ասպատակաւ աւերէր զերկիրն ամենայն» (Եղիշ. էջ 135)։ Այս պատմութիւն ևս չթուիր ճըշմարիտ. Նախ՝ Վասակ չէր համարձակեր աւեր և ամայի դարձունել երկիր մը՝ որոյ համար պատասխանատու էր իբրև մարզպան, ինչպէս վաղուց իսկ ազդ արար նմա մոգպետն ըստ Եղիշէի, թէ «մարզ է աշխարհս», այսինքն նահանգ Պարսից. «յորժամ աշխարհս թափուր լինիցի՝ յայնժամ և քեզ գլխովին մեծապէս վնաս հասանէ յարքունուստ»։ Դարձեալ՝ քաղաքներէն ոմանք, ինչպէս Գառնի, Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք, զորոց ասէ Եղիշէ թէ աւերեցան ի Վասակայ՝ արդէն աւերեալ էին ի Վարդանայ ըստ պատմութեան նորին իսկ Եղիշէի, ինչպէս տեսանք վերագոյնն. այնպէս կարճ ժամանակի մէջ երբ շինուեցան մինչև կրկին աւերել։ Այսպիսի աւերմանց ևս յիշատակութիւն չկայ առ Փարպեցւոյն։ Փարպեցին այսչափ միայն կ'ըսէ, թէ «Վասակ... նոյնպէս և մնացեալքն առ նմա աւագանին Հայոց... դեսպան արձակեցին ի Պարսս, և նամակօք ուխտադրեցին ընդ նոսա, և զբերդեան ամրոցացն Հայոց ի բաց կալան (ոչ թէ աւերեցին), և զիւրեանցն բերդակալս արարեալ՝ զգուշացուցին, և զորդիս տոհմին Մամիկոնէից և Կամսարականաց և զայլոց տանուտերացն ժողովեալ յիւրաքանչիւր դայեկաց յամուրս բերդից իշխանութեանն Սիւնեաց ետ անցուցանել, և հրամայեաց պահել զամուրսն զգուշութեամբ... և ապա տայ տանել

զօղայսն առ Թագաւորն Պարսից». և այս՝ մինչ Վարդան էր յԱղուանս. մինչև ի մեկնելն Վարդանայ յԱղուանս՝ Վասակ ըստ Փարպեցւոյն, ինչպէս տեսանք՝ է միաբան ընդ Վարդանայ։

Փարպեցին չունի նաև սա պատմութիւնը, թէ երբ Վասակ լսեց Վարդանայ դարձն յԱղուանից՝ սարսափեցաւ, մինչև թողուլ գերին և աւարը զոր առած էր Այրարատ գաւառէն և փախչել.— «Ազդ եղև ուրացեալն Վասակայ և իշխանացն որ ընդ նմա էին՝ քաջութիւն նահատակութեան գնդին Վարդանայ յաշխարհին Աղուանից… մինչչև յանդիման եղեալ էին միմեանց՝ զգիշեր մի օգնական գտեալ նորա՝ փախստեայ անկանէր յամուրս խրոյ աշխարհին, և այնպէս տագնապաւ մերժեցաւ, զգերի և զաւարն զոր առեալ էր յԱյրարատ գաւառէ, ակամայ զիւրն ևս ի վերայ եթող և փախեաւ» (Եղիշ. էջ 138)։

**37**. Բայց Վարդան, կը յաւելու Եղիշէ, ասպատակ կը հանէ Սիւնեաց երկիրը, կ'աւերէ շատ գաւառներ, կը նեղէ բնակիչներն անհնարին սովով, մինչև ուտել նոցա անասնոց դիակներ. գերի կը վարէ այր և կին, մանր տղայք կը զարնուին զքարի, այլովքն հանդերձ.--«Վարդան գունդս գունդս արձակէր յաշխարհին Սիւնեաց, առնոյր և աւերէր զբազում գաւառս, և այնպէս ի նեղ արկանէր զնա (զՎասակ) և զամենայն զօրսն որ ընդ նմա էր՝ զի զէշս և զձիս մեռելոտիս առ սովոյն վտանգի անխտիր ուտէին։ Եւ բազում հարուածս հասուցանէին ի վերայ ուրացելոյն, մինչև ժողով սուրբ եպիսկոպոսացն և ամենայն ուխտ քահանայութեանն դառնապէս արտասուս իջուցանէին ի վերայ չարաչար վշտացելոցն, որ բոկ և հետի վարէին զարս և զկանայս փափկասունս, և բազում տղայք զքարի հարեալ ընկեցան յանցս ճանապարհաց» (Անդ)։ Զարմանալին այն է, որ եպիսկոպոսունք և երիցունք, ըստ Եղիշէի, յաջողութիւն համարելով այն բարբարոսութիւններն՝ ամբողջ ամիս մը կը սահմանեն աղօթից և շնորհակալութեան.—«Իբրև այս ամենայն աջողութիւն լինէր երկիւղածացն Աստուծոյ՝ ամենայն եպիսկոպոսունք և երիցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամիսն քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուածս առ Աստուած, և զտօն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ տօն յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին» (Անդ)։ Եւ ոչ այսչափ միայն. ըստ պատմութեան Եղիշէի՝ եպիսկոպոսունք գրով իմացուցին ի Կոստանդնուպոլիս եկեղեցւոյն Յունաց՝ Աստուծոյ այցելութիւնն.—«Եւ զսոյն զայս ամենայն այցելութիւնս Աստուծոյ որ ի վերայ աշխարհին Հայոց երևեցաւ՝ գրեցին սուրբ եպիսկոպոսունքն և ետուն տա-

նել յաշխարհն Յունաց ի մեծ քաղաքն առ սուրբ ուխտ եկեղեցւոյն, զի և նոքա աղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ, որպէս սկսաք ի նմին և կատարեսցուք» (Եղիշ. էջ 139)։

**38**. Դարձեալ ըստ նմին Եղիշէի՝ Վարդանանք պարսիկ կալանաւորներէն նշանաւոր զոմն կ'արձակեն առ թագաւորն՝ պատմել Վասակայ անօրէնութիւններն և այն պատճառաւ կատարուած աւերումներն.—«Զոմն յառաջին կալելոց Պարսկաց լուծեալ և արձակեալ զառաջեաւ նախարարացն՝ խօսէին և ցուցանէին զամենայն վնասս... և զխաբէութիւն ապստամբին Վասակայ, որպէս Հայոց բանիւ խաբեաց զթագաւորն՝ յանձն առնուլ զմոգութիւնն. իբրև չէր ուրուք ընդ նմա բանս եդեալ՝ նա յանձնէ սուտակապաս լինէր։ Իբրև լիով զայս ամենայն իմացուցին՝ արձակեցին զնա յաղերս ապաբանութեան և ի հնարս հայթայթանաց, թերևս կարասցեն զեղբարս իւրեանց ի նեղութենէն գողանալ» (Եղիշ. էջ 140)։ Բայց յառաջ քան զնոսա Վասակ ղրկած էր մարդ, և իբրև չարեաց պատճառ կ'ամբաստանէր կղերը.—«Այլ առ նա անօրէնն Վասակայ գուժկանքն յառաջագոյն հասեալ էին պատմել զաղէտս տարակուսանացն... և զամենայն ամբաստանութիւնն ի սուրբ ուխտ եկեղեցւոյն կրթեալ էր» (Անդ)։ Պատգամաւորը կ'երթայ կը պատմէ թագաւորին, որ կ'ապշի, կը դողայ, և խոնարհելով իւր ամբարտաւան յամառութենէն՝ հրովարտակաւ կը շնորհէ Հայոց և ուրիշ քրիստոնեայ հպատակաց կատարեալ ազատութիւն քրիստոնէութեան. կը գովէ մանաւանդ զքրիստոնեայս և զքրիստոնէութիւնն։ Այսպէս խրատ կու տան նմա նաև աւագանին, զարմանալով նորա այս յեղյեղուկ մտաց վրայ.—«Երթեալ այրն ի տեղի ձմերոցին՝ պատմեաց զայս ամենայն յականջս թագաւորին... որ իբրև ստուգեալ հաստատեաց՝... խոնարհեցաւ ի բարձր հպարտութենէն։... Ո՞չ ահա բազում ուսմունք (կրօնք) են յաշխարհիս Արեաց... մանաւանդ վասն օրինաց քրիստոնէութեան... առ մեզ. լաւագոյն քան զամենայն կեշտս երևեալ են մեզ, և բիծ իսկ ոչ կարէ ոք դնել ընտրեալ օրինաց նոցա, այլ զոյգ և հաւասար համարիմ, որպէս և յարգեալ իսկ էին նոքա առ նախնեօքն մերովք. զոր ես ինձէն իսկ յիշեմ առ հարբն իմով։... Մեծացեալ և պատուեալք շրջէին ի դրան արքունի։... Դուք զմի զայն երբէք ոչ յիշեցէք, այլ հանապազօր ձանձրացուցէք զլսելիս իմ, խօսելով զնոցանէ զամենայն չարութիւնս. տեսէք զի ետուք գործել ինձ՝ զոր ինչ ոչ կամէի։... Զայս ամենայ և առաւել քան զսոյն խօսէր ընդ ամենայն աւագանւոյն, և զվնասս յանցանացն արկանէր զմոգպետաւն և զմոգօքն. և ամենայն վզրուկքն և պատուական նախարարքն, որ նստէին յատենին

և ունկն դնէին յեղյեղուկ լեզուի նորա՝ ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պշնուին, և գլուխ ի վեր ոչ կարէին համբառնալ։ Բայց սակաւք ի նոցանէ զմիտս հաճելով ասէին. Այո՛, արքայ քաջ, այդպէս է որպէս ասացերդ։... Մի՛ նեղեալ տագնապիր յանձն քո... Թողացո՛ մարդկանդ զքրիստոնէութիւն, և դոքօք զապստամբսն ածցես ի հաւանութիւն։ Հաճոյ թուեցան բանքն առաջի թագաւորին, և անդէն վաղվաղակի կոչէր զառաջնորդս յամենայն ազգացն որ ունէին զքրիստոնէութիւնն ի զօրու նորա... և հրամայէր անդրէն համարձակութեամբ ըստ առաջին կարգին կալ յօրէնս քրիստոնէութեանն։ Իսկ որ յանցաւորքն էին և ոչ կամէին վաղվաղակի առանց մեծի ապաշխարութեան գալ խառնել ի կարգ քրիստոնէութեան՝ հրամայէր թագաւորն զի բռնի կալցին և տարցեն յեկեղեցին իւրեանց։... Եւ իբրև զայս ամենայն արար՝ թողութեան հրովարտակս առաքէր ընդ ամենայն երկիր իշխանութեան տէրութեան իւրոյ վասն քրիստոնէից։... Զայս ամենայն գրէր և ցուցանէր յերկիրն Հայոց և ի բազում այլ աշխարհս՝ որ ունէին զօրէնս քրիստոնէութեան» (Եղիշ. էջ 141—148)։ Բայց ինքն, ասէ Եղիշէ, պատգամաւոր ղրկելով առ Մարկիանոս, երբ տեղեկացաւ, թէ Հռոմայեցիք չէին մէտ օգնելու քրիստոնէից՝ դարձաւ յիւր առաջին կարծիս.—«Ինքն գաղտ խորամանկեալ փութացեալ դեսպանս առաքէր առ Մարկիանոս կայսր։ Եւ իբրև ստուգեալ ճշմարտեաց, եթէ Հռոմք ի բաց կացին ձեռնտու լինել քրիստոնէութեանն ո՛չ զօրու օգնականութեան և ոչ այլ իրօք՝ դարձեալ անդրէն ի նոյն յառաջին կարծիս մոլորութեանն շրջեցաւ» (Անդ)։ Սակայն Հայք չհաւատացին հրամանին.—«Իսկ Հայք թէպէտ և ընկալան զգիրն խաբեբայ ողոքանաց թագաւորին՝... ասէին ցմիմեանս. Քանի՛ լիրբ է խորամանկ խաբէութիւն նորա, զի երկիցս և երիցս զփորձ առեալ կշտամբեցաւ, և ոչ ամաչէ։... Ոչ այդմ հաւատամք, և ոչ զսուտ հրամանդ յանձն առնումք» (Եղիշ. անդ)։ Դարձեալ ի՞նչ հարկ կար Յազկերտի ղրկելով դեսպան առ Մարկիանոս տեղեկանալ, թէ Հռոմայեցիք չէին օգնական քրիստոնէից. նոյն Մարկիանոս, ըստ Եղիշէի, ինչպէս արդէն տեսանք՝ սակաւ մի յառաջ ի ձեռն դեսպանաց մտած էր ուխտ հաստատութեան» ընդ Յազկերտի՝ «ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց զօրու և զինու և ամենայն օգնականութեամբ» (Եղիշ. էջ 125)։

Վերջին դէպք, զորս ի բաժանմանէն Վասակայ և այսր իբրև պատմութիւն մէջ կը բերէ Եղիշէ՝ ըստ մեզ չունին ամենևին պատմական նկարագիր, ոչ միայն վասն զի ամենևին չեն նշմարուիր անգամ առ Փարպեցւոյն, այլ և մանաւանդ վասն զի են գործուածք

հակառակ հանգամանաց անձանց որոց կ'ընծայուին։ Այսպէս հակառակ էր պարտուց և պաշտաման ոչ Վարդանայ միայն, այլ և Վասակայ, աւերել, քանդել, հրով և սրով և գերութեամբ կորուսանել երկիր մի անմեղ բնակիչներով, զորս՝ պաշտպանել մանաւանդ պարտէին, մին՝ իբրև սպարապետ, և միւսն՝ իբրև մարզպան։ Զանմեղ տղայս գքարի հարկանել որչափ հակառակ էր բարուց Վարդանայ և զօրաց նորա։ Եթէ հաւատանք այս պատմութեանց Եղիշէի՝ հարկ է ասել, թէ պատերազմն Վարդանանց աշխարհաւերութեան կռիւ էր մանաւանդ քան հաւատոյ պաշտպանութեան։ Երկոքին կողմանք իբր թէ կը մրցէին կործանել զիւրեանց հայրենի երկիրն։ Յազկերտի պէս խիստ և ամբարտաւան թագաւորի ջանալ անմիտ փոփոխամտութեամբ իբրև ցնորեալ, մերթ կործանել և մերթ բարձրացունել, մերթ անարգել և մերթ գովել, մերթ հալածել և մերթ շնորհել ազատութիւն՝ չեն բնական կարգի դէպք։ Եղիշէ, որ ունի սաստիկ միտումն հրաշալի իմն և ի վեր քան զբնութիւն, կամ իբրև գաղտնիս նախախնամութեան երևցունել պատմութիւնը՝ կու տայ Վարդանայ աւերումներ գործել հրաշիւք, իսկ Վասակայ նոյն աւերումներն գործել առ չարութեան, և Յազկերտի կու տայ Փարաւոնի պէս խստանալ արձակել զԻսրայէլ, և ապա խստանալ. -«Ես խստացուցի զսիրտն Փարաւոնի, զի ցուցից ի նա զզօրութիւն իմ»։

**39.** Ըստ Եղիշէի՝ Վասակ յաւել և այլ չարիս։ Թող զիւր կուսակից երէցներն, Զանգակ և Պետրոս, և սարկաւագ մի Սահակ անուն, որոց ձեռամբ հրովարտակներով, որպէս թէ ի կողմանէ թագաւորին, կը խաբէր ժողովուրդը, թէ թագաւորը շնորհած է քրիստոնէութիւնն, ուստի և աւելորդ էր ապստամբել և կամել ընդդիմանալ զինու՝—Նամականեօք ևս և այլովք հնարիւք ցրտացուց և հեռացուց նաև Հայոց բարեկամներն, Վրաց, Աղուանից, ևս և Աղձնեաց, որ յայնժամ ուրոյն իշխանութիւն էին։ Գտեալ ինքեան համամիտ զանուանակից իւր Վասակ, որ Յունաց բաժնին Մամիկոնեանց իշխան էր և սիրելի կայսեր՝ ի ձեռն նորա սուտ նամակներով խաբեց զՅոյնս, որք առ ատելութեան զոր ունէին ընդ Հայս ինչպէս կամի ակնարկել Եղիշէ՝ ախորժելով անսացին թելադրութեանց նորա. Նոյնպէս իմա սահմանակից երկիրներուն համար Տմորեաց, Կորդեաց, Արցախու և Խաղտեաց. զՀոնս միայն որ խոստացած էին օգնել Հայոց (Փարպ. ԼԵ, Եղիշ. էջ 134)՝ չկարաց շահել՝ է այլ զնոսա ևս արգելեց, արքունի զօրօք բռնել տալով պահակներն, այսինքն Կովկասու գօտւոյն կիրճերն, ընդ որ միայն հնար էր անցանել Հոնաց յայսկոյս։ Վասակ հալածեց նաև ըստ Եղիշէի

իւր երկու եղբօրորդիներն։ Եղիշէ չյիշեր, թէ ով էին այս եղբօրորդիք Վասակայ, սակայն կը թուի թէ էին Բաբգէն և Բակուր Սիւնիք, որ գտնուեցան ընդ կալեալ նախարարս յետ պատերազմին (Եղիշ. էջ 343, և Փարպ. ԽԷ.)։ Երէցն, Բաբգէն, յետ դարձին նախարարաց, կը յիշուի ստէպ ի Փարպեցւոյն իբրև գործակից Վահանայ ի պատերազմունս նորա (Փարպ. ԿԸ. և այլուր).—«Բովանդակ զիւր աշխարհն ապստամբեցոյց յուրացութեանն... մանաւանդ սուտ երիցամբքն որովք գործէր զչարիսն. երէց մի Զանգակ անուն, երէց մի Պետրոս անուն (ըստ Փարպեցւոյն՝ աւելի անուամբ Երկաթի), սարկաւագ մի Սահակ անուն (ըստ Փարպեցւոյն՝ աւելի անուամբ Զայնող), զորս յղէր առ անմեղ մարդիկ, խաբէր և պատրէր. սուրբ Աւետարանաւն երդնուին և ասէին, եթէ ի թագաւորէն շնորհեսցի ամենեցունց քրիստոնէութիւնդ։ Եւ այսպէս խորամանկութեամբ հանէին զբազումս ի սուրբ միաբանութենէն, ածէին և խառնէին ի գունդս ուրացողացն։... Եւ իբրև այս ամենայն չարիք յաջողեցան նմա՝ քակեաց և զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց, և Աղուանից ոչ ետ յառաջ խաղալ. և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին օրինակի յետս կալաւ։ Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոյ ստութեամբ առ այր մի որոյ Վասակ անուանէր, յայնց Մամիկոնենից որ կան ի ծառայութեան Յունաց։ Եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն սպարապետ էր ստորին Հայոց, և հաւատարիմ զօրացն Հոռոմոց ի սահմանին Պարսից. և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք։ Եգիտ այս Վասակ զայն Վասակ իւր գործակից ի մեծամեծ չարիսն, զոր միաբանեցին երկոքեանն։ Գրէր և ցուցանէր հանապազորդ նա, իբր թէ ամենայն Հայք զկնի իւր միաբանեցին, և զնոյն գիր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն տայր տանել ի թագաւորանիստ քաղաքն կայսեր, մինչև զսուրբ եպիսկոպոսացն զմիտս ևս ուծացոյց ի նոցանէ, և զամենայն զօրսն Յունաց յերկբայս արար յուխտէն։... Այն էին և կամք Յունաց աշխարհին, լսել զայն առխորժակութեամբ. այլ ի ձեռն նորա առաւել ևս ի նոյն յեղեալ տապալեցան»։ Դարձեալ հակառակութիւն ի բանս Եղիշէի։ Սակաւ մի յառաջ զՅոյնս յիշեց իբրև բարեկամս Հայոց, մինչև գրել առ նոսա խնդակցութեան թուղթ վասն յաջողութեանցն Վարդանայ (Եղիշ. էջ 139). հոս կ՚ընէ զՅոյնս ատեցողս և չարակամս Հայոց։ «Սոյնպէս առնէր, կ՚ըսէ, և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանս, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց, յղէր պնդէր զի ասպնջականութեան ոք արժանի մի արասցէ։ Եւ ըստ մեծի չարութեան նորա՝ առաւել ևս ժա-

մանակն եբեր նմա զյաջողութիւն իրացն. զի ամենեւին տրտաքուստ օգնական ոք ոչ գտաւ գնդին Հայոց, բաց յայնց Հոնաց որոց բանս եդեալ էր: Սակայն և վասն նոցա կոտեաց զբազում այրուձին Արեաց, արգել և փակեաց զդրունս ելին նոցա... Եւ այսպէս շարժեաց և շփոթեաց զաշխարհն Հայոց՝ մինչև զբազում եղբարս հարազատս քակեաց ի միմեանց, ոչ եթող միաբան զհայր և զորդի, և ի մէջ խաղաղութեան արար խռովութիւն: Եւ անդէն իսկ յիւրում աշխարհին եղբօրորդիք երկու էին նորա ի սուրբ ուխտին առաքինութեան. գրեաց և եցոյց վասն նոցա յարքունիս, և էառ իշխանութիւն ի վերայ կենաց նոցա, մերժեաց և եհան զնոսա յաշխարհէն, զի մի այլ դարձցին անդրէն» (Եղիշ. էջ 162—166):

**40.** Թէ Վասակ երէցներու ձեռօք հրովարտակներ կը տարածէր ժողովուրդն հաւանեցունելու, թէ թագաւորը կը շնորհէր քրիստոնէութիւնը՝ զայս կը պատմէ և Փարպեցին, և է հաւանական: Չէ սակայն հաւանական, ինչպէս արդէն դիտեցինք՝ թէ այն հրովարտակներն յանուն թագաւորին՝ էին սուտ, ձուլուած ողջ բովանդակ Վասակայ հալոցէն. անհնար էր Վասակայ մինչև յայն աստիճան յանդգնել: Անտարակոյս Յազկերտ լսելով Հայոց միոյ մասին կասկածն և աղմուկը, թէ Յազկերտ կամէր ի սպառ ջնջել քրիստոնէութիւնը իւր երկիրներէն և ածել զքրիստոնեայս բռնի ի կրակապաշտութիւն՝ ջանաց հանդարտեցունել կասկածոտներն հրովարտակօք՝ թէ այն չէր նպատակ իւր: Եղիշէ այս պարագան կ'ընծայէ փոփոխմտութեան Յազկերտի, որպէս թէ Յազկերտ պատգամաւորէ լսելով աւերումներն որ լինէին ի Հայս՝ յանկարծ կը փոխուի, անհնարին հալածչութենէ կը դառնայ ի բարեկամութիւն, կը շնորհէ ազատութիւն անպայման. բայց իմանալով ի ձեռն դեսպանաց իւրոց զչէզոքութիւնն Մարկիանոսի՝ կը դառնայ անդրէն յիւր առաջին փոխածն: Բայց գիտենք արտաքին պատմութենէ, թէ այնպիսի դեսպանագնացութիւն եղաւ յառաջագոյն առ Թէոդոսիւ. ուստի Յազկերտ գիտէր ի վաղուց, թէ Յոյնք չունէին կամք և ոչ կարողութիւն միջամտելու ընդդէմ իւր ի նպաստ արևելեան քրիստոնէից ըստ նորին իսկ Եղիշէի (էջ 125), որ Մարկիանոսի ևս կուռայ կանխել մտանել ի դաշն՝ չլինել օգնական Հայոց զինու և զօրու, ինչպէս արդէն յիշուեցաւ: Ապա դնել նոր դեսպանութիւն ի կողմանէ Յազկերտի, ստուգելու համար Մարկիանոսի միտումը՝ չունի ամենևին տեղի, և հակառակ է նմին իսկ Եղիշէի: Նոյնպէս թէ Յունաց բաժնին Հայք և ուրիշ դրացի քրիստոնեայ ժողովուրդք, որ էին ուրոյն իշխանութիւններ, բարեկամ կամ ազգակից Հայոց, նաև Յոյնք հրաժարեցան օգնելէ Հայոց՝ այս ևս ճշմարիտ

է. բայց չէ ճշմարիտ և ոչ հաւանական, թէ այս եղաւ ազդեցութեամբ կամ թելադրութեամբ Վասակայ, այլ վասն զի Յոյնք, ինչպէս տեսանք ի Փարպեցւոյն՝ վնասակար գտան ի նպաստ միոյ մասին Հայոց զինու զօրութեամբ միջամտելու վտանգը: Նոյնպէս իմա ուրիշ դրացի իշխանութեանց համար: Օգնութեան համար հրաւէրներ առ կայսր և առ այլս, ինչպէս տեսանք ի Փարպեցւոյն՝ գրուեցան յառաջագոյն իսկ ի կողմանէ Հայոց, և չընդունուեցան: Իսկ զՎասակայ Մամիկոնենէ, ըստ Եղիշէի սպարապետէ Յունաց բաժնին Հայոց, իբրև կամակցէ Վասակայ՝ չենք գտներ ամենևին ակնարկութիւն առ Փարպեցւոյն: Ինչ որ ունի Եղիշէ միայն, և կամ ունի էապէս տարբեր ի Փարպեցւոյն՝ զգուշալի է ըստ մեզ ընդունել իբրև ստուգիւ պատմական: Եղիշէ, որոյ դիտումն է յամենայնի զՎասակ առնել յանցաւոր՝ ամենայն վնաս կամ չաջողութիւն կ՚ընծայէ Վասակայ թելադրութեանց և հնարից: Տեսնելով Եղիշէի այս միտումը և նորա պատմութեան վիպական ձևը՝ չենք կրնար առանց զգուշաւոր ընտրութեան առնուլ զնա իբրև պատմական աղբիւր, առանց գէթ հեռաւոր վկայութեան Փարպեցւոյն, առանց որոյ անհնար էր մեզ հանել Վարդանանց նշանաւոր անցից վրայ ճշմարիտ կամ գոնէ ճըշմարտութեան մօտ պատմութիւն:

Եղիշէ կը յաւելու միւս ևս կէտ, ոչինչ ընդհատ անհաւատալի քան զառաջինն, այսինքն թէ Միհրներսեհ հազարապետ Արեաց տեսնելով Վասակայ հնարողութիւններն, Եղիշէի բառով՝ «զՎասակայ խաբեբայ պատրանսն հայթայթանացն», թէպէտ ներքուստ կը պարսաւէր զնա՝ այլ արտաքուստ մեծարելով՝ պատերազմին գործը կը յանձնէ Մշկան Նիւսալաւուրտ անուն զօրավարին, և ինքն կ՚երթայ պատմել թագաւորին զանօրէնութիւնսն Վասակայ: Թագաւորը լսելով կը զայրանայ, մինչև երդնուլ՝ տալ չարաչար սպանանել զնա յետ պատերազմին.—«Զայս ամենայն չարիս իբրև ետես ի նմա Միհրներսեհ՝ թէպէտև ի ներքոյ յոյժ գարշէր զնա, այլ արտաքին դիմօք մեծարեաց զնա... և զամենայն զօրսն զօրագլխօքն հանդերձ յանձն առնէր առն միում յաւագացն որում անուն էր Մուշկան Նիւսալաւուրտ, և ինքն խաղայր գնայր յերկիրն արևելից, և յանդիման եղեալ մեծի թագաւորին՝ պատմէր զամենայն անցս իրացն, զիւր հնարաւոր իմաստութիւնն և զՎասակայ խաբեբայ պատրանսն հայթայթանացն. որպէս զառաջինն զիւր զամբարշտութիւնն կամեցաւ ծածկել այնու՝ զի քակեալ երկպառակեաց զգունդն Հայոց: Իբրև լուաւ թագաւորն զայս ամենայն ի բերանոյ մեծ հազարապետին՝ զառնացաւ յանձն իւր, և ասէ անսուտ երդմամբ. Եթէ

ապրեսցի անօրէնն այն ի մեծ պատերազմէն՝ մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու» (Եղիշ. էջ 168)։

**41.** Պատերազմին հանգամանաց վրայ միաբան են Եղիշէ և Փարպեցին. երկու կողման նախարարաց, ինչպէս նաև անկելոց անուններուն և թւոյն վրայ անգամ տարբերութիւնը դոյզն է։ Ըստ Փարպեցւոյն՝ Վասակայ կողման նախարարք էին եօթն. «Իշխանն Բագրատունեաց Տիրոց, իշխանն Խոռխոռունեաց Գադիշոյ, իշխանն Ապահունեաց Մանէճ, իշխանն Վահեւունեաց Գիւտ, իշխանն Պալունեաց Վարազշապուհ, իշխանն Աբեղենից (ըստ Եղիշէի՝ Գաբեղենից) Արտէն, իշխանն Ուրծայ Ներսեհ, և—կը յաւելու—այլք յոստանկաց, և սեպուհք ոմանք յիւրաքանչիւր տոհմէ»։ Եղիշէ կը դնէ երկու իշխան աւելի ի կողման Վասակայ. «Իշխանն Ռշտունեաց Արտակ», և «իշխանն Ակեաց Ընջուղ, և սեպուհ մի Ամատունեաց՝ Մանէն, և բազում և այլ ազատ մարդիկ զոր ստանիկսն անուանեն, յարքունի տանէ», այն է ի ցեղէն Արշակունեաց։ Զիշխանս կողման Վարդանայ չյիշեր Փարպեցին։ Ըստ Եղիշէի՝ էին տասն և մի. Ներշապուհ Արծրունի, և Խորէն Խոռխոռունի, և ինքն սպարապետն, և Արտակ Պալունի, և Վահան Ամատունի, և գունդն Վահեւունեաց, և Թաթուլ Դիմաքսեան, և Արշաւիր Արշարունի, և Շմաւոն Անձեւացի, և Տաճատ Գնթունի, և Ատոմ Գնունի, և Խորով Գաբեղեան, և Կարէն Սահառունի, և Համայեակ Դիմաքսեան, և միւս ևս այլ Գազրիկ Դիմաքսեան, և Ներսեհ Քաջբերունի, և Փարսման Մանդակունի, և Արսէն Ընձայացի, և Այրուկ Սղկունի, և Վրէն Տաշրացի, և Ապրսամ Արծրունեացն, և Շահ ախոռապետն արքունի, և Խուրս Սրուանձտեանց». և կը յաւելու, «և Բողեանք (ցեղ անծանօթ), և Ակէացիքն, և Տրպատունիք (նոյնպէս անյայտ), և զօրքն Ռշտունեաց և ամենայն գործակալքն արքունի (պաշտօնեայք տէրութեան), իւրաքանչիւր զօրօքն հանդերձ»։ Այսպէս իշխանք կողմանն Վարդանայ, ըստ Եղիշէի, երեքպատիկ աւելի էին քան զՎասակայն։

Երկու կողման իշխանաց ցեղերուն անուններէն կը տեսնուի թէ նոյն իսկ ցեղք բաժանեալ էին յինքեանս. զորօրինակ Խոռխոռունիներէն և Պալունիներէն երկու կողման հետ ևս կը յիշուին իշխաններ, ինչպէս Գադիշոյ Խոռխոռունի ի կողման Վասակայ, և Խորէն նոյն ցեղէն՝ ի կողման Վարդանայ. Վարազշապուհ Պալունի ընդ Վասակայ, և Արտակ նոյն ցեղէն՝ ընդ Վարդանայ։ Դարձեալ մի և նոյն ցեղէն կը յիշուին երկու կամ երեք իշխան ի նմին կողման. զորօրինակ Արծրունիներէն Ներշապուհ և Ապրսամ ի կողման Վարդանայ, Դիմաքսեաններէն երեք—Թաթուլ, Համայեակ և

Գազրիկ՝ դարձեալ ի կողման Վարդանայ. Թերևս սոքա նոյն ցեղէ այլևայլ ընտանեաց կամ գաւառի գլխաւորներ էին: Դարձեալ կը յիշուին գունդք կամ զօրք առանց իշխանի. այսպէս կը յիշուին Եղիշէէ գունդն Վահևունեաց և զօրքն Ռշտունեաց ի կողման Վարդանայ, մինչ այս ցեղերուն իշխաններն, Գիւտ Վահևունի և Արտակ Ռշտունի, էին ի կողման Վասակայ. Թերևս այս ցեղերուն զօրքը կամ մի մասն նոցա զատուելով իրենց իշխանէն յարած էին հակառակ կողմը: Նոյնպէս չէ յայտ, թէ ինչ կը նշանակէ «գործակալ (այսինքն պաշտօնեայ) արքունի», մինչ Թագաւորութիւնը դադրած էր, ուստի և չկային արքունիք. այսու կ'իմացուին թերևս Պարսից կողմանէ դրուած կամ հաստատուած հայ պաշտօնատարք, այսինքն վարչութեան այլևայլ ճիւղերուն վերակացուներ: Իսկ ոստանիկ անուամբ հաւանականապէս կ'իմացուին Արշակունիք:

Իսկ անկեալք պատերազմին մէջ, ըստ Փարպեցւոյն՝ իշխաններէն էին, հանդերձ Վարդանաւ իննն.—«Որք ի ժամուն երանելի և երկնաւոր կոչմանն (մարտիրոսութեան) եղեն արժանաւորք ընդ սրբոյն Վարդանայ և նահատակեցան՝ են այսոքիկ. յազգէն Խորխոռունեաց երանելին Խորէն, յազգէն Պալունեաց երանելի սեպուհն Արտակ, յազգէն Գնունեաց երանելին Տաճատ, յազգէն Դիմաքսենից երանելին Համայեակ, յազգէն Քաջբերունեաց երանելին Ներսեհ, յազգէն Գնունեաց երանելին Վահան, յազգէն Ընծայնւոյ երանելին Արսէն, յազգէն Սրուանձտայ երանելին Գարեգին»: Նոյնչափ կը դնէ և Եղիշէ, յիշելով իւրաքանչիւրին հետ անկելոց թիւը.—«Եւ այս անուանք են քաջ նահատակացն որ անդէն ի տեղւոջն կատարեցան. յազգէն Մամիկոնէից քաջն Վարդան հարիւր երեսուն և երեք արամբք, յազգէն Խորխոռունեաց Խորէնն կորովի իննևտասն արամբք, յազգէն Պալունեաց արին Արտակ յխուն և եւթն արամբք, յազգէն Գնթունեաց զարմանալին Տաճատ իւն և տասն արամբք, յազգէն Դիմաքսենից իմաստունն Համայեակ քսան և երկու արամբք, յազգէն Քաջբերունեաց հրաշակերտն Ներսեհ եւթն արամբք, յազգէն Գնունեաց մանուկն Վահան երիւք արամբք, յազգէն Ընծայնոց արդարն Արսէն եւթն արամբք, յազգէն Սրուանձտայ յառաջադէմն Գարեգին երկու հարազատօքն և ութուտասն արամբք:

Գալով նահատակելոց թուոյն՝ երկու պատմիչք ևս չեն անմիաբան: Եղիշէ կը դնէ 287 այր անկեալ ի ճակատու հանդերձ 9 նախարարօք, և այլ ևս 740 այր սպանեալ նոյն օրը, առանց յայտնելու թէ զիարդ.—«Այս երկերիւր ութսուն և եւթն նահատակք, ընդ նմին և մեծամեծ նախարարքն անդէն ի տեղւոջն կատարեցան:... Թող զայս երկերիւր ութսուն և եւթնս՝ այլ ևս եւթն

հարիւր և քառասուն այր... և միահամուռ լինի ամենայն հազար և երեսուն և վեց» (Եղիշ. էջ 211)։ Փարպեցին կը դնէ պատերազմին մէջ ինկած 276 այր հանդերձ նախարարօք, և 750 այր՝ զոր ամրոցներէն իջեցունելով սպանին.—«Շատ խուզիւ և բազում քըննութեամբ հարցեալ և ուսաք զնահատակելոցն թիւս, որք ի տեղւոջ պատերազմին պսակեցան ընդ աւագ նախարարսն՝ երկերիւր եօթանասուն և վեց այր։ Եւ զորս յամրոցացն իջուցեալ սպանին սրով և կամ փղօք կոխեցին՝ եօթն հարիւր և յիսուն այր. որք լինին միահամուռ հազար երեսուն և վեց այր» (Փարպ. ԼԹ.)։ Եղիշէի թիւերն հաշուելով, 287+9+740՝ կը գտնենք արդարև 1036. Փարպեցւոյն է միով պակաս, 276+9+750=1035, տարբերութիւն՝ որ է արդարև չնչին։ Իսկ հակառակ կողման կորուստն էր ըստ Փարպեցւոյն 3544.—«Իսկ ի զօրացն Պարսից որք անկան ի պատերազմին յաւուրն յայնմիկ՝ զոր ստուգիւ համարեալ պատմեցին մեզ տեղեկացեալք ի զօրագլխացն Պարսից, երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորս այր»։ Այսպէս ունի և Եղիշէ. «Իսկ ի կողմանէ ուրացելոցն (իմա Վասակեանց, զՊարսիկսն ևս ի միասին հաշուելով) անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր»։ «Ինն այր, կը յաւելու Եղիշէ, ի մեծ պատուաւորացն էր, և կարի յոյժ ի խոր խոցեցաւ Մուշկան Նիւսալաւուրտ»։

Երկոքին պատմիչք միաբան կը թուեն նաև պատերազմին տեղւոյն վրայ, որ էր Արտազ, հին անուամբ Շաւարշան (Խոր. Բ. ԼԴ.), գաւառ Վասպուրականի, ուր առաջին անգամ և այս պատերազմին առթիւ կը յիշուին ի Փարպեցւոյն և յԵղիշէէ Աւարայր և Տըղմուտ, առաջինն գիւղ, որոյ մօտ ընտրած էին Պարսիկք իրենց բանակատեղին, վասն զի տեղին էր ամուր և ապահով, շուրջ փակեալ—«շրջափակ»—թերևս Երասխ և Տղմուտ գետերէն (վերջինն՝ աջակողմեան վտակ Երասխայ), ըստ ակնարկելոյ Փարպեցւոյն.— «Եկեալ հասանէին գունդն Պարսից ի գաւառն Արտազ, հուպ ի գեւղն որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց (զօրավարն Պարսից) յաղագս երկիւղի զօրացն Հայոց, ամուր ապաստանի անձանց համարէին պատշաճ, և ի միջի նորա ածեալ զակիշ բանակէին» (Փարպ. ԼԸ.)։ Դաշտը զոր Փարպեցին հոս կ՚անուանէ Տղմուտ՝ Եղիշէ կը կոչէ Աւարայրի. «Նաև դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձրևաբեր ամպոց, այլ ի սուրբ և յարիւնաբուխ վկայից»։ Սակայն հաւանական է, թէ Տղմուտ էր գետ, և Աւարայր՝ գիւղ նոյն դաշտին մէջ, ուստի և դաշտը կրնար կոչուիլ թէ միոյն և թէ միւսոյն անուամբ։

Փարպեցին որոշ կը դնէ պատերազմին նախընթաց օրն, այն է Պենտեկոստէի ուրբաթը: Հայոց զօրքն, ըստ Փարպեցւոյն, գալով կը բանակին այն աւուր երեկոյն Պարսից զօրուն մօտ, առ եզերբ Տղմուտ գետոյն ըստ Եղիշէի: Յետ կատարելոյ երեկոյեան պաշտօնը՝ կ'ընթրեն: Ողջոյն գիշերը կ'անցնի աղօթիւք և սաղմոսերգութեամբ, և այգուն մօտ կը հաղորդուի զօրքը:

**42.** Հին պատմչաց սովորութիւն էր յորդորանաց երկայն ճառեր դնել ի բերան զօրապետաց. զնոյն կը գտնենք առ Փարպեցւոյն և առ Եղիշէի: Ոչ Վարդան միայն, այլ և Յովսէփ կաթողիկոս և մանաւանդ Ղեւոնդ երէց կը խօսին խրատ առ զօրն: Փարպեցին կ'անցնի համառօտիւ միայն, առանց յաւելլոյ բազում ինչ իւր կողմանէ, ասելով միայն, թէ «Ղեւոնդ երէց հանդերձ երանելեաւն Յովսեփաւ բազում բանիւք հոգեղինօք քաջալերէր զիւրաքանչիւր ոք ի մեծամեծ աւագանւոյն Հայոց զամենայն գիշերն»: Փարպեցին այս առթիւ կը պատմէ սքանչելիս իմն զՂեւոնդայ, որպէս թէ անգամ մը, մինչ սուրբն ի քուն էր՝ Մեսրոպ և երկու աշակերտք նորա Կորիւն և Արձան տեսին լոյս փայլատակեալ զնովաւ, և իմացան թէ վախճան նորա լինելոց էր մարտիրոսութեամբ. — «Յառաջագոյն ժամանակաւ կալով ի քուն սրբոյն՝ այրն Աստուծոյ Մաշթոց վարդապետն նորին հանդերձ աշակերտօք իւրովք երանելեաւն Կորեամբ և Արձանաւ տեսանէին արթնութեամբ՝ ճառագայթեալ շուրջ զնովաւ լոյս սաստիկ, որք անդէն և անդ ծանեան երանելի արքն սուրբք հոգւով զվախճան սրբոյն, թէ նահատակութեամբ կատարի. զոր թէպէտև նմա ոչ յայտնեցին սքանչելագործութեան զտեսութիւնն, կը յաւելու Փարպեցին, սակայն ի բազում շշնջելն պատմեալ հռչակեցաւ բան երևմանս այսորիկ» (Փարպ. ԼԸ.):

Եղիշէ կը դնէ Վարդանայ և Ղեւոնդայ բերնէն երկայն ճառեր, յորս գան ի մէջ Նոյ, Աբրահամ, Մովսէս, Յեսու, Գեդէոն, Յեփթայէ, Դաւիթ. Մակաբայեցւոց ամբողջ պատմութիւնը կը համառօտուի, իսկ Լուսաւորչին յիշատակութիւնը չիք ամենևին. մինչ ըստ Փարպեցւոյն՝ Ղեւոնդ կը յիշեցունէր մանաւանդ «զանպատումն զհամբերութիւն սրբոյն Գրիգորի»: Չիք տարակոյս թէ այս ճառք, մանաւանդ Եղիշէին, չեն հարազատ բանք նոցա՝ որոց կ'ընծայուին, այլ մատենագրին կողմանէ ըստ պատշաճի նիւթոյն յօրինեալ քարոզներ:

Նոյն բան է պատերազմին երկայն նկարագրին համար, զոր կը յօրինէ Եղիշէ իւր կողմանէ, և զոր բերած ենք այլուր: Ոմանք բուն և հարազատ համարելով այն նկարագիրը՝ կարծեցին թէ Եղիշէ էր ատենադպիր Վարդանայ և ականատես այն պատերազմին:

*Փարպեցին առանց ջանալու նկարագրել կռիւը՝ կը պատմէ միայն, թէ ինչպէս յարդարեց Վարդան ճակատը, որ ընդհանրապէս կը բաժնուէր երեք թեւ կամ առաջ, և ովք էին իւրաքանչիւր թեւի զօրագլուխք, ինչպէս արդէն տեսանք։*

**43.** *Եղիշէ Վարդանանց թիւը կը հանէ մինչև վաթսուն հազար և աւելի ևս, առանց յիշելու թշնամւոյն թիւը, որ հարկաւ էր, եթէ ոչ կրկին՝ գէթ ոչ կարի պակաս։ Առ Փարպեցւոյն չիք ամենևին յիշատակութիւն թուոյ։ Ստոյգ է, թէ Հայք ոչ առ թագաւորութեամբ միայն, այլև յետոյ ունէին պատրաստ բանակ արքունի անուամբ ընդ ձեռամբ սպարապետին, ընդհանրապէս քառասուն հազար, որ նախարարաց առանձին զօրօք թերևս կը հասնէր մինչև յիսուն, վաթսուն, դուն ուրեք մինչև ութսուն հազար։ Բայց յայսմ մասին ստոյգ ինչ ասել հնար չէ։ Մեզ չափազանց կը թուի Եղիշէի թիւն, գէթ այն ժամանակին և պարագայից համար, մինչ երկու բաժնուած էր ազգը։*

*Այսչափ ինչ Վարդանանց վրայ, որոց պատմութիւնն համառօտեցինք երկու պատմիչներէն, ի Փարպեցւոյն և Եղիշէէ, ինչպէս կարծենք՝ չթողլով ինչ պակաս, նախամեծար առնլով միշտ զառաջինն քան զերկրորդն, որոյ վիպասանական գոյնը և ձիպաց, զորս յառաջ կը բերէ, անսովոր բնութիւնը՝ չեն տար թոյլ ընդունել զնա իբրև պատմական աղբիւր։ Գանք այժմ պատմութեան յաջորդ մասին։*

## ԳԼՈՒԽ Գ.

### ԱՆՑՔ ՈՐ ԶԿՆԻ:

*1. Ատրորմիզդ մարզպան: 2. Հմայեակ եղբայր Վարդանայ եւ որք ընդ նմա: 3. Ձերբակալութիւն եւ առաքումն նախարարաց ի դուռն: 4. Զարտուղութիւն մի ի պատմութեան Փարպեցւոյն: 5. Վասակ ի դրան: 6. Հարցափորձ քահանայից: 7. Ատեան առաջի թագաւորին. Արշաւիր Կամսարական. Ամբաստանութիւն զՎասակայ: 8. Փարպեցւոյն այս պատմութեան վրայ դիտողութիւն: 9. Տարբերութիւնք պատմութեան Փարպեցւոյն եւ Եղիշէի: 10. Վարդանանց պատմութեան բուն պատմական մասն ըստ անաչառ քննութեան: 11. Նահատակութիւն Ղեւոնդեանց. Աքսոր նախարարաց: 12. Պատմութիւն Ղեւոնդեանց է զէթ ըստ ձեւոյն վէպ (վկայաբանութիւն): 13. Աքսորեալ նախարարք: 14. Ղեւոնդեանք: 15. Սպանումն քահանայից: 16. Կարծեցեալ աղբիւր պատմութեան Ղեւոնդեանց. Խուժիկ (անուն պիտակ): 17. Նոյն պատմութիւն ըստ Եղիշէի: 18. Դիտողութիւն Ղեւոնդեանց վկայաբանութեան վրայ: 19. Կէս վկայաբանական պատմութիւն Աբրահամու եւ Խորենայ: 20. Տարբերութիւն Եղիշէի ի Փարպեցւոյն դայմ՞ եւս:*

**1.** Յետ պատերազմին, դարձեալ ըստ Փարպեցւոյն, որ յայսմ մասին և է պարզ՝ զօրավարն Պարսից Մուշկան զեկս պատերազմին կ'իմացունէ Յազկերտի. Մուշկան կը կոչուի յետս, և կը կարգի մարզպան Ատրորմիզդ ոմն, որ Թողութեան հրովարտակներ հանելով առ փախստեայս՝ կը հրաւիրէ զիւրաքանչիւր յիւր տուն և յորարս, և վարել անխափան զքրիստոնէութիւնն.—«Յետ վճարելոյ այսպէս գործոյ պատերազմին՝ հրովարտակ առնէր Մուշկան Նիւսալաւուրտ առ թագաւորն Արեաց Յազկերտ, և զեկս գործոյ պատերազմին գիտել տայր, գրեալ զյաղթութեանն աւետիս, և յանուանէ զհամար անկելոցն յերկոցունց կողմանց:... Զոր լուեալ արքային Յազկերտի՝ պատասխանի առնել հրամայէր հրովարտակին, և զՄուշկան Նիւսալաւուրտ հանդերձ գնդաւն ի դուռն կոչէր: Եւ զԱտրորմիզդ ոմն անուն մարզպան հրամայէր թողուլ, որում յանձն

առնէր հրովարտակով զմարդիկն Հայոց չընդոստուցանել, այլ սիրով նուաճել, և զպաշտօն քրիստոնէութեանն համարձակապէս առնել ամենեցուն» (Փարպ. Խ.)։ Զայնու ժամանակաւ եղբայրն Վարդանայ Հմայեակ դառնալով ի Յունաց ձեռնունայն՝ կը գտնուէր Հայաստանի հիւսիսային արեւմտեան կողմը մօտ ի Տայս, և բազումք ի փախստէից ժողոված էին առ նմա, թիկունք ունենալով ինքեանց Պարխար լեռը։ Պարսիկք որ հետամուտ էին փախստէից, գալով Հմայեկայ վրայ՝ կու տան պատերազմ. Հմայեակ կ'սպանուի, և որ ընդ նմա էին՝ կը ցրուին։ Ատրորմիզդ սուտ խոստումներով կ'որսայ փախստականներն որ ամուր տեղեր ապաւինած էին, և կը ղրկէ երևելիներն, որ մասնակից գտնուած էին ապստամբութեան՝ ի դուռն, նոյնպէս կղերէն երևելիներ, զնոսա մանաւանդ որ ատրուշան այրած էին՝ իբրև յանցաւոր, քանզի քրէական յանցանք համարուած էր այս ըստ օրինաց Պարսից։ Կ'երթայ նաև Վասակ ինքնակամ։

2. «Սա (Ատրորմիզդ) և ի վերայ ժողովելոցն առ երանելին Հմայեակ յամուրս Տայոց գունդ կազմէր այրընտիր բազմութեամբ ի Պարսից և ի Սիւնեաց. և յերկուս բաժանեալ զգունդն՝ կարգէր նոցա զօրագլուխս զԱրտէն Գաբեղեան և զՎարազշապուհ Պալունի։ Քանզի բազմութիւն փախստէիցն Հայոց, նախարարք և սեպուհք, ոստանիկք և ռամիկք, դիմեալք յերկիրն Տայոց՝ ժողովէին առ Հմայեակ եղբայր սրբոյ զօրավարին Վարդանայ։... Տանուտեարքն Հայոց և նախարարք որ երթեալն էին յաշխարհն Յունաց խնդրել զօրս ի թագաւորէն... իբրև տեսին թէ ոչինչ օգտեցան յաղագս որոյ աշխատ եղեն՝ դարձան,... և ոչ ժամանեալ ի գործ ժամու պատերազմին՝ առ փոքր մի առ լերամբն որ կոչի Պարխար, մերձ առ սահմանակցութիւնն Խաղտեաց, ամրագոյն տեղի մի գտեալ դադարեցին։ Յորոց վերայ տեղեակ առաջնորդօք եկեալ (Պարսից) զցայգն՝ անկանէին ի վերայ Հմայեկայ Մամիկոնէի, ի գեւղն որ անուանի Որջնհաղ, ի գաւառին Տայոց, քանզի ի ժամուն երթեալ էին յամրոցաց լերինն Պարխարայ։... Անդ զկատարելութեան պսակին ընդունէր երանելի սեպուհն Հմայեակ։... Իսկ զօրն ուխտապահացն (կուսակցութեանն Վարդանայ) որք առ սրբոյն Հմայեկի ժողովեալ էին՝... զարհուրեալք անդէն ի վեր ի լեառնն դառնային ի Պարխար։

3. «Խորհուրդ ի մէջ առեալ (Ատրորմզդի մարզպանին), թէ որպէս հնարեսցին որսալ զարսն փախստականս առանց Արեաց կրուելոյ՝... առաքէր առ նոսա ի բանէն արքային Յազկերտի, և երդնոյր նոցա գաւով, թէ ոչ զոք սպանանեմք ի ձէնջ, և ոչ զտէրութիւնդ և զպատիւ հանեմք յումեքէ։ Եւ այսպէս նենգով նուա-

ճեալ զմարզիկն՝ կալաւ զամենեսեան և տայր խաղացուցանել ի դուռն Արեաց. զիշխանն մեծ Արծրունեաց զՆերշապուհ, և զիշխանն տանն Վանանդայ, և զիշխանն տանն Արշարունեաց զԱրշաւիր, և զիշխանն տանն Անձևացեաց զՇմաւոն, և զիշխանն տանն Ամատունեաց զՎահանն, և զիշխանն Գնթունեաց, և զիշխանն Աշոցայ, և զիշխանն Առաւեղենից զՓափաք, և զիշխանն Տաշրայ զՎրէն, և զիշխանն Արծրունեաց զԱպրսամ, և զայլսն ի տանուտերացն և յաւագ սեպհացն, խաղացուցանէին ի դուռն թագաւորին Յազկերտի:... Իսկ ի սուրբ քահանայիցն Հայոց, զորս կալեալ էր նախադոյն և եդեալ ի տեղիս տեղիս յամուրս բերդիցն Սիւնեաց՝ զսուրբ երիցն Յովսէփ որ զկաթողիկոսութեանն ունէր զաթոռ ի ժամուն, և զտէր Ղեւոնդն, և զքահանայսն Արածայ զտէր Սամուէլ և զտէր Աբրահամ, ընդ որս կալեալ տանէին և զսուրբ եպիսկոպոսն Ռշտունեաց զտէր Սահակ, և զդրան երէցն իշխանին Արծրունեաց Ներշապհոյ զտէր Մուշէ, և զսուրբ երէցն Արշէն, և զսուրբ սարկաւագն զՔաջաջ: Բայց զսուրբ եպիսկոպոսն Բասենոյ զտէր Թաթիկ՝ էր յառաջագոյն տուեալ տանել զօրագլխացն Պարսից ի Խուժաստան» (Անդ): Ըստ Փարպեցւոյն՝ վերջինս այս Թաթիկ տարուած էր ի Խուժաստան «ըստ քսելոյ իշխանին Սիւնեաց, և անդ խիստ կապանօք պահէր»: Չյայտներ սակայն Փարպեցին, թէ ինչ էր պատճառ Վասակայ այս մասնաւոր վրիժուն յիշեալ եպիսկոպոսին դէմ, մինչև տալ աքսորել զնա ի Խուժաստան: Եթէ պարտ է հաւատալ Փարպեցւոյն՝ Վասակ «տայր խաղացուցանել և զողայսն զոր կալեալ էր իւր ի տոհմէն Մամիկոնէից և Կամսարականաց, և յայլ տոհմէ իշխանացն Հայոց, կարծեցեալ առնել մեծամեծս սպաս թագաւորին Յազկերտի և ամենայն աշխարհին Արեաց, և առնուլ զպատիւ թագաւորութեան և զպարգևս»: Քանի մը տխեղծ մանուկներ ղրկել առ Յազկերտ չենք գիտեր ինչ մեծ ծառայութիւն էր նմա և Արեաց աշխարհին, մինչև յուսալ Վասակայ ընդունել ընդ այնր վարձ Հայոց թագաւորութիւնը, որ այնպէս հակառակ էր Սասանեանց քաղաքականութեան, և զոր մեծամեծ պատերազմներով հազիւ կարող եղած էին ջնջել: Փարպեցին կը կրկնէ Վասակայ թագաւորելու ակնկալութիւնն ի ստորև. «Եւ ինքն, ասէ, չու արարեալ սաստիկ կազմութեամբ և ուժգին աղխիւք երթայր առ թագաւորն Պարսից, և զկարծեցեալ խաբէական զիւր միամտութիւնն ծանուցեալ թագաւորին և աւագանւոյն Արեաց՝ առնուլ վարձս ըստ մոլեկան խորհելոյն իւրոյ զթագաւորութիւնն իսկ Հայոց. ապա թէ յայնմանէ վրիպեալ ինչ, ասէ, գտանիմ՝ համայն զայլն ամենայն զպատիւ և զգահս առանց ամենայն երկբայութեան և յերկուանալոյ գտանեմ,

և իմ են»: Ուստի՞ գիտէր արդեօք Փարպեցին Վասակայ այս խորհուրդը. զարմանալին այն է, որ ըստ նմին իսկ Փարպեցւոյն՝ Վասակ բաց ի Թագաւորի տիտղոսէն ունէր արդէն ամէն պատիւ.— «բաց ի պատուոյ Թագաւորացն այլ ոչինչ ի պատուոյ արքունի պիտոյ էր զոր ոչ ունէր»:

4. Փարպեցին ի պատմելն զչուն քահանայից կապելոց և Վասակայ, զարտուղելով իւր պատմութեան կարգէն՝ կը պատմէ, թէ ինչպէս Վասակ կը հանդիպի ի ճանապարհին կապեալ քահանայից, կ՚ողջունէ զնոսա, կը խօսի քաղցրութեամբ, կը հրաւիրէ զնոսա ի միասին ճաշել յօթևանին: Նոքա կը հարցունեն նմա, թէ ո՞ւր կ՚երթայ և ինչ նպատակաւ, և նա կը պատասխանէ, թէ առ Թագաւորն առնուլ վարձ մեծ փոխարէն իւր վաստակոց. բայց կը յանդիմանուի ի Ս. Ղևոնդէ, որ և կը մարգարէանայ նմա, թէ ողջ գլխով պիտի չդառնար ի Հայս.—«Զմիջոցաւ ճանապարհին ուր զսուրբ քահանայսն տանէին կապեալս, նստուցեալս ի վերայ ջորւոց՝ բազմութիւն չուելոցն հասին նահատակացն Քրիստոսի: Եւ նոցա հարցեալ թէ ո՞յր է բազմութիւնս՝ լուան ի մարդկանէ, թէ Սիւնեաց տեառն է:... Այն ինչ կատարեալ նոցա զհարցուածսն՝ եկեալ հասանէր առ նոսա Վասակ Սիւնեաց տէր, և տեղեկացեալ ի նոցանէ՝ վաղվաղակի իջանէր յերիվարէն և ողջունէր զսուրբսն: Որոց ոչինչ բնաւ կարծեցուցեալ թշնամութիւն ընդ նմա՝ յոյժ խնդալից սիրով տեսանէին զնա, մանաւանդ սուրբն Ղևոնդ լրջմտութեամբ խօսէր երկարս ընդ Վասակայ Սիւնեաց իշխանին: Յետ կատարման խօսիցն՝ Սիւնեաց տէրն աղաչեաց զսուրբսն ճաշել ընդ նմա յօթեւանին: Եւ յառաջեալ սակաւ մի Վասակայ ի նոցանէ՝ ձայն զկնի եդեալ սրբոյն Ղևոնդի կոչէր զնա պատուոյն անուամբ մեծաձայն. Սիւնեա՛ց տէր, Սիւնեա՛ց տէր: Եւ նորա յօժարապէս պատասխանի արարեալ, Տեա՛րք, զի՞նչ ասէք: Եւ սրբոյն ասացեալ. Զամենայն ինչ մեր ասացեալ ընդ քեզ՝ զպիտոյսն և զառաւել օգտակարսն մոռացաք հարցանել, թէ ո՞ւր երթաս: Եւ նենգաւորին Վասակայ լուեալ զայս և ի մեծ տրտմութիւն ընկղմեալ՝ ասէր զարմացմամբ. Առ տէրն իմ երթամ, գտանել ի նմանէ ըստ արժանի մեծ վաստակոցն զհատուցումն մեծ: Եւ սրբոյն Ղևոնդի պատասխանի տուեալ ասէ. Կարծեցուցանէ՞ զքեզ դևդ, որ պատրեալ սադրեաց զքեզ նենգել սուրբ Աւետարանին ուխտի, թէ արդ միայն թագաւորութեամբ աշխարհին Հայոց կարէ՞ն Արիք տալ քեզ ըստ արժանի վաստակոց քոց հատուցումն. այլ և ոչ մի ինչ է որ կարէն տալ քեզ փոխարէնս. բայց թէ արդարև դու կենդանութեամբ զգլուխդ ի վերայ ուսոցդ ի Հայս տանիս՝ ապա ընդ իս Տեառն Աստուծոյ չէ խօսե-

ցեալ։ Եւ զայս լուեալ նենգաւոր իշխանին Վասակայ՝ վհատեալ խզեցաւ ամենայն սնոտի յոյսն իւր, և անդէն ծանեաւ զբեկումն անձին իւրոյ, որ մերձ ընդ մերձ հասանելոցն էր ի վերայ նորա։ Քանզի ոչ վրիպէր բան սրբոյն, մինչև կատարէր ամենայն» (Փարպ. ԽԲ.)։ Չէ անհաւանական, թէ կապեալ քահանայք և Վասակ հանդիպեցան միմեանց ի ճանապարհին, թերևս խօսեցան ևս, մանաւանդ քահանայք, «ոչինչ բնաւ կարծեցուցեալ թշնամութիւն ընդ նմա», որպէս ասէ ինքն իսկ Փարպեցին. սակայն Վասակայ հրաւիրելն ի ճաշ զնոսա, որ իբրև յանցաւոր կը տարուէին կապեալ, անշուշտ պարսիկ ոստիկանօք. Ղևոնդի նախ «լրջմտութեամբ և երկարօ» խօսելն ընդ Վասակայ, և ապա, որպէս թէ մոռացած էր, գոչելն զկնի, թէ «Ո՞ւր երթաս», և յանդիմանելն զնա իբրև դիւամոլ. Վասակայ տրտմութիւնն և երկիւղն այս հարցման վրայ, և անմիտ պատասխանը, թէ «Երթամ գտանել *հատուցումն մեծ* ըստ արժանի *մեծ վաստակոցս*», և մանաւանդ Ղևոնդի գուշակելն Վասակայ գլխատումն, մարգարէական խրոխտ ոճով—«Եթէ դու կենդանութեամբ զգլուխդ ի վերայ ուսոցդ ի Հայս տանիս, *ապա Տէրն Աստուծոյ ընդ իս չէ խօսեցեալ*»՝ -կը թուին առեղծուած ըստ յարմարութեան, քան ճշմարտիւ եղած։ Դիտելու արժանի է, որ Եղիշէ չգիտեր ո՛չ զայս հանդիպումն զճանապարհայն, և ոչ զառաքումն տղայոց։

**5.** Զիարդ և իցէ՝ Վասակ կը հասնի ի դուռն, կ՚երթայ երևել մեծամեծաց և թագաւորին, որ կ՚ընդունին զնա պատուով ի վերին երեսս, որպէս ասէ Փարպեցին, քանզի գիտէին զնա պատճառ այնչափ չարեաց.—«Հասեալ ի դուռն նենգաւոր իշխանն Սիւնեաց, և տեսեալ նախ զաւագանի դրանն արքունի՝ մտանէր և առաջի թագաւորին Յազկերտի։ Ընդունէին զնա թագաւորն և ամենայն մեծամեծքն արքունի առ վայր մի մեծարանօք և շքեղութեամբ։ Թէպէտև գիտէին զվնաս նորա՝ սակայն ոչինչ զգացուցեալ տային գիտել նմա, այլ լռութեամբ որպէս զանգէտս պատուէին զնա՝ որպէս զհայր հաւատարիմ և բարեգործ»։

**6.** Ըստ Փարպեցւոյն՝ յետոյ ուրեմն զկնի Վասակայ կը հասնին կապեալ քահանայք և նախարարք։ Միհրներսեհ հազարապետ կը կոչէ ի հարցափորձ զքահանայս, որ զկրակ սպանած, այսինքն մարած, և ատրուշան աւերած էին, գործ՝ որ ըստ օրինաց Պարսից գլխապարտութեան արժանի էր. և լսելով ի նոցանէ խրոխտ պատասխաններ, նա մանաւանդ թշնամանք ևս առ թագաւորն՝ հրամայեց, ասէ Փարպեցին, երկաթով ծեծել զբերանս նոցա.—«Անօրէն հազարապետն Արեաց հրամայէր նախ զքահանայսն ածել զառա-

ջեաւ, և հարցանէր զսուրբ՝ երէցն Արածայ զՍամուէլ և զնորին զհոգւոյ որդին զսուրբ սարկաւագն զԱբրահամ, որոյ զկրակն անցուցեալ էր զԱրտաշատու: Որպիսի՞ համարձակութեամբ և ո՞յր հրամանաւ իշխեցէք գործել զայդպիսի մահապարտութեան գործ, և ոչ ածէք զմտաւ զահ թագաւորաց և զերկիւղ իշխանաց, և այնպիսի մեծ կրակի իշխեցէք ձգել զձեռս ձեր:... Եւ լուեալ զայս սրբոցն երկոցունց, տեառն Սամուէլի և Աբրահամու՝ ետուն պատասխանի միաբանութեամբ, էր ինչ որ սուգախօսութեամբ, և էր որ եպերանօք:... Ըստ սմին օրինակի պատուհասեալ հարցանէին և զայլ սուրբ քահանայսն Աստուծոյ, զսուրբն Յովսէփ զկաթողիկոսն Հայոց, և զսուրբ եպիսկոպոսն Ռշտունեաց զտէր Սահակ, և զամենասուրբ երէցն զտէր Ղեւոնդ, և զայլ սուրբ քահանայսն, որք էին ընդ նոսա ի հարցմանն—զսուրբն Մուշէ Աղբակացի, որ էր դրան երէց իշխանին Արծրունեաց Ներշապհոյ, և զսուրբն զԱրշէն երէցն, որ էր ի գաւառէն Բագրեւանդայ ի գեղջէն որ կոչի Եղէգեակ, և զսուրբ սարկաւագն զՔաջաջ, որ էր և նա ի գաւառէն Ռշտունեաց, աշակերտ սրբոյ եպիսկոպոսին Սահակայ, թէ Որպիսի՛ աներկիւղ համարձակութեամբ ի վերայ անձանց ձերոց զայդչափ բազում մահապարտութիւն դիզեալ կուտեցէք. աւերեցէք զատրուշանսն, սպանէք զայնպիսի ճոխ կրականի... սպանէք զմոգեանն, կորուսէք ձերով կախարդութեամբ զայնպիսի քաջ այր զՎարդան:... Եւ լուեալ զայս ամենայն խօսս սպառնալեացս և զբանս պատուհասալեացս զչարաթոյն հազարապետին Արեաց Միհրներսեհի, և զամենայն դրան աւագանւոյն՝ յառաջ կացեալ այրն Աստուծոյ Ղեւոնդ ետ պատասխանի»: Ղեւոնդ երէց յետ ծանօթացուցանելոյ Միհրներսեհի զՅովսէփ, զՍահակ եպիսկոպոս և իւր եկեղեցական աստիճանը՝ երկայն բանիւք ցուցուց, ըստ Փարպեցւոյն, թէ ուրիշ տարերաց պէս հասարակ նիւթ են կրակ և ջուր, զորս ինքեանք իսկ շատ անգամ կ'անպատուէին՝ վարելով զնոսա յայլեայլ պէտս: «Հրով, ասէ, զարջառս և զոչխարս խորովէք և եփէք, և ջրով պղաշտանս և զթարախս և զաղբս լուանայք, և առանձինն և կամ խառնեալ ընդ գինի՝ ըմպէք, և ոչ զարհուրիք և սոսկայք»: Եւ որովհետև օրէնք էին Պարսից խօսել տալ իւրաքանչիւր ամբաստանեալ և ապա դատապարտել՝ Միհրներսեհ և այլք հարցուցին նաև զՅովսէփ կաթողիկոս և զՍահակ եպիսկոպոս, որ հաստատեցին զբանս Ղեւոնդայ.— «Անօրէն Միհրներսեհի և այլ աւագանւոյն Արեաց ի ցասումն բարկութեան եղեալ՝ ասեն ցնոսա (ցընկերսն Ղեւոնդայ). Ոչ հրամայեն մեզ օրէնքն մեր ցասնուլ ումեք՝ մինչև լուեալ ի բերանոյ նորա... Արդ դուք գիտել տուք մեզ, թէ և ձեր նոյն բանք են զոր մա-

Հապարտ այդ իշխեաց աներկիւղ համարձակութեամբ յանդգնել և խօսել առաջի մեր։ Եւ սուրբն Յովսէփ և սուրբն Իսահակ ետուն պատասխանի և ասեն. Զամենայն բանսդ և զպատասխանիսդ զոր խօսեցաւ ընդ ձեզ տէրդ Ղեւոնդ՝ խորհեալ էր մեր և խօսեալ. ի դոյն միտս և ի դոյն կամս ամենեքեան կամակիցք եմք։ Իսկ դու ախտիւ դառնութեան առ զայրացմանդ թշնամանեցեր. երանի՜ այնոցիկ որ մտաց աչօք սրատեսք իցեն և արդարահայեացք. այլ մարմնական ախտիւ մեծամեծք ըմբռնեալ տկարանան, է զի և կրտսերք, և դուք այդպիսի ախտիւ մի զայրագնեալ թշնամանէք»։ Բանք Փարպեցւոյն հոս մութ են։ Կը թուի թէ Միհրներսեհ թըշնամանած էր զՂեւոնդ՝ վասն զի էր միականի։ Յովսէփ և Սահակ կամին ասել, թէ զայս մարմնաւոր թերութիւն ունին ոչ կրտսերք միայն, այլև մեծամեծք, ինչպէս Յազկերտ, որ նոյնպէս միականի էր. բայց երանի՜ նոցա որ մտաց աչօք սրատես են։ «Զայրագնեալ ի վերայ սրբոցն անօրէն իշխանն յաղագս թշնամանացն, որպէս թէ ի Թագաւոր կողմն դարձուցին սուրբքն զբրքանսն՝ հրաման ետ դահճացն հարկանել խստապէս շղթայիւք զբերանս երանելեացն, մինչև լցեալ բերանք նոցա արեամբ՝ հոսէր արտաքս։ Եւ այսպէս վճարեալ արձակեաց զատեանն»։

**7.** Միհրներսեհ յաջորդ օրը կը պատմէ քահանայից պատասխաններն Թագաւորին, որ զայրանալով՝ ի վաղիւն կը կազմէ ատեան, ուր կը հրաւիրուին աւագանին և ուրիշ պատուաւոր մարդիկ. կը բերուին կապեալ նախարարք. Վասակ ևս կու գայ իւր բոլոր պատուոյ նշաններով։ Թագաւորը կը հարցունէ նախարարաց, թէ ինչ համարձակութեամբ գործեցին այն ահաւոր ապստամբութիւնը.— «Եւ մտեալ ի վաղիւն անօրէնն Միհրներսեհ առաջի Թագաւորին Յազկերտի՝ տայր նմա գիտել զամենայն հարցուածս իւր և զպատասխանիս քահանայիցն։ Եւ սրտմտեալ Թագաւորն՝ հրամայեաց ի վաղիւն ատեան մեծ լինել առաջի իւր, և այր արի և անարի և զոր ինչ և ունէր ոք զպատիւ Թագաւորին՝ կազմ առաջի իւր եկեսցեն, և զկապեալսն զամենեսեան ածել զառաջեաւ։... Եւ լուեալ զայս ամենայն զինուորքն, որ ոք ունէր զպատիւ Թագաւորին՝ վաղ անդր հասանէին յատեանն։ Իսկ ուխտանենգ իշխանն Սիւնեաց Վասակ արկեալ զիւրեաւ զամենայն զոր ունէր ի Թագաւորէն՝ գայր մտանէր ի խորանսն արքունի մեծաւ շքեղութեամբ. քանզի բաց ի պատուոյ Թագաւորացն որ նուազէր նմա՝ այլ ոչ ինչ ի պատուոյ արքունի պակաս էր զոր ոչ ունէր, և կարծէր այնուհետև առնուլ զԹագաւորութիւնն մեծ աշխարհին Հայոց։... Եւ լցեալ արեօք ամենայն խորանն՝ հրաման տայր Թագաւորն զապստամբսն Հայոց

կապանօք ածել զառաջեաւ: Եւ ածեալ կացուցանէին զնոսա առաջի թագաւորին: Եւ հարցեալ թագաւորին՝ ասէ ցնոսա. Որպիսի՞ համարձակութեամբ և կամ զի՞նչ զմտաւ ածեալ և կամ զի՞նչ ույժ օգնականութեան տեսեալ դիմեցէք յայնպիսի ահաւոր գործ, յորում տեսանէիք զկորուստ անձանց ձերոց և զաշխարհին, որպէս եղև իսկ և տեսէք»: Ըստ Փարպեցւոյն՝ նախարարք լռեցին, և երբ թագաւորն երկրորդեց հարցումը՝ ի խնդրոյ նախարարաց Արշաւիր Կամսարական պատմեց համառօտիւ ի սկզբանէ՝ ինչ որ եղած էր, և ի մէջ բերեց մի ըստ միոջէ Վասակայ գործերն, թէ ինչպէս միացեալ նորա ի սկզբան ընդ Վարդանայ դարձուց զնա յետս, մինչ կ'երթար նա ընտանեօք ի Յոյնս, խոստացաւ նմա կոչել յօգնականութիւն զՅոյնս և զՀոնս, գրեց նամակ առ կայսր և առ այլ դրացի իշխանս, ղրկեց զՎարդան ի Վիրս ի վերայ Պարսից, և յետոյ բաժնուելով թողուց զնոսա, և այսպէս եղաւ պատճառ այնչափ արեան և աւերածոյ, ա. հ.: Ըստ Փարպեցւոյն՝ ի հանդէս այս ամբաստանութեանց բերուեցան ի մէջ վաւերական թուղթեր, կնքով նորին իսկ Վասակայ: Աւելորդ կը համարինք դնել Արշաւրի ատենախօսութիւնն որ յիշուած է այլուր: Արշաւիր ի վախճանի երկայն ամբաստանութեանն ասէ. «Բայց դուք զնամականին զամենայն զոր գրեալ և կնքեալ է (Վասակ) առ կայսր և առ ամենայն աշխարհն Հոռոմոց և կամ առ այլս բազումս, տեսանել հրամայեցէք զայն, և որպէս ձեզ Արեաց կամ է՝ հրաման տուեալ կատարեցէք ի վերայ մեր: Զի ուր գրեալք և կնքեալք ի միջի են, որպէս ձեր արդարութիւնդ, աւելորդ բանից և ջատախօսութեան պէտք անդ ոչ են: Եւ լուեալ զայս ամենայն կարգաւ ի Կամսարականէն Արշաւրայ արքային Պարսից և ամենայն աւագանւոյն դրանն, տեսեալ զնամականին զոր գրեալ էր Վասակայ Սիւնեաց տեառն, և ի վերայ հասեալ՝ մեծապէս հիացեալ թագաւորն Յազկերտ և ամենայն իշխանք դրանն զարմացան» (Փարպ. ԽԵ.): Արշաւիր կրնար յայտնել Յազկերտի և աւագանւոյն Պարսից, թէ Վասակ գրած էր նամակներ առ կայսր և այլ օտար իշխանս օգնութեան համար. բայց թէ այն նամակներն հանդերձ կնքով Վասակայ իբրև ապացոյց բերուեցան ի մէջ՝ այս չէր հնար, ուստի և չէ հաւատալի: Հոս կը մատնուի հաւատարմութիւն Փարպեցւոյն:

Յազկերտ, ըստ Փարպեցւոյն, յետ սաստկութեամբ յանդիմանելոյ զՎասակ, ամենևին առանց առնելոյ զնա արժանի պատասխանւոյ, որ չէ հաւանական՝ կը հրամայէ մերկացուցանել զնա յիւրմէ պատուոյն: Ըստ Փարպեցւոյն՝ կը կարգի իշխան Սիւնեաց փեսայ

Նորա ուրացեալն Վարազվաղան, որ երկար ժամանակ տանջուելով դիւահարութեամբ՝ կը մեռնի։ Առ Եղիշէի չիք ամենևին յիշատակութիւն Վարազվաղանայ, որում բաւական մեծ դեր խաղալ կու տայ Փարպեցին։ Իսկ Վասակ կը մնայ ի դրան մինչև ի վախճան իւր, հանապազօր ձաղելով զանձն իւր ուրացութեան համար բանիւք յուսահատութեան, զորս լսած էր Փարպեցին, որպէս ասէ՝ նորին իսկ Վասակայ հաւատարիմ ծառաներուն բերնէն. —«Յայնժամ յառաջ կոչեցեալ թագաւորին զիշխանն Սիւնեաց Վասակ՝ սկսաւ սաստիկ և առաւելապէս զայրացեալ սրտիւ խօսել ընդ նմա և ասել. Է՛ արդարև լուեալ մեր զայդ ամենայն նենգաւոր իրս քո և զարարուածս. բայց արդ, ա՛ղէ, ասա, զի՞նչ խորհելով և կամ որպիսի՞ ինչ զմտաւ ածեալ զայդպիսի իրս վնասից իշխեցեր ձեռնարկել և գործել. քանզի դու էիր իշխան և գլուխ աշխարհին Հայոց. նախ քաջալերել բանիւ զմարդիկն, զոր ի նամակացն գրելոց ի քէն զոր տուեալ մեր կարդալ՝ ստուգութեամբ տեղեկացաք։...Բայց զայս գիտեա, զի յայսմհետէ Սիւնեաց տէր չես։... Իսկ ողորմելի ուխտադրուժն Վասակ թէպէտև կամէր խօսել ինչ և տալ պատասխանի՝ չգնէր օք ունկն բանիցն և կամ ախորժէր։... Հրաման տայր թագաւորն Յազկերտ անդէն զառաջեաւ կողոպտել ի նմանէ թշնամանօք զամենայն պատիւն զոր ունէր. և ձաղեալ զնա պայկացն՝ մերկացուցին զնա. մերկացուցեալ ի նմանէ զզարդարանս պատուոյ տէրութեանն՝ հանին զնա խայտառակնօք արտաքս քան զհրապարակն արքունի։ Եւ ի նմին աւուր զթշնամին նորա զնեպուհն սիւնի, զուրացողն Վարազվաղան տէր ի վերայ աշխարհին Սիւնեաց կացուցանէին, որոյ որքան ժամանակս կալեալ զիշխանութիւնն Սիւնեաց՝ բազում արարեալ անիրաւութիւնս, և բազում տունս մոխրանոցս շինեալ յաշխարհին Սիւնեաց ի գայթակղութիւն տանն իւրոյ՝ բազմաժամանակեայ տանջեալ ի դիւէ դառն մահուամբ սատակեցաւ չարաչար։ Եւ նենգաւորն Վասակ կացեալ ի դրանն ամս ինչ կարի վշտագին և նեղութեամբ բազմաւ, մաշէր զաւուրս իւր հառաչելով և յոգւոց հանելով զամենայն օր և զժամ, մինչև թշնամանակերպ ձաղանօք սփռեալ զթաթս ձեռաց իւրոց՝ ինքնին զիւրոյին ծեծէր զդէմսն ասելով. Ահա ընկալ զայս ձաղս, զոր եբեր քեզ ուխտանենգութիւն սրբոյ Աւետարանին և արիւն նահատակութեան սրբոյն Վարդանայ Մամիկոնէի և այլոցն ցանկալի հաղորդելոցն ընդ նմա, որոց ժառանգեալ զյաւիտենից կեանսն՝ ընկալան զանուն բարի յերկրի և անանց յազգաց յազգս իւրեանց։ Իսկ դու, ասէ, մեղաւոր անձն իմ, կեաս խղճիւ ցաւօք մտաց զսակաւաթիւ զաւուրս կենցաղոյս, և պատրաստեալ պահիս մշտնջենաւոր և

անանց գեհենին։ Զայսպիսի՝ բանս հառաչանաց նորա և լալոյ մինչև յօր մահուան իւրոյ՝ խօսէին ընդ մեզ գայս արդարապատումն սպասաւորք նորին իշխանին Վասակայ, որոյ և փախճանն իւր անդէն յերկրին Պարսից վճարէր» (Փարպ. ԽԶ.)։

Տ. Այս է ըստ Փարպեցւոյն պատմութիւնն անցից յետ պատերազմին, արդարև բնական, բայց կան ըստ մեզ ինչ ինչ արժանի դիտելոյ։ Նախ՝ եթէ ճշմարիտ է Վասակայ սպասաւորաց վկայութիւնն առ Փարպեցին՝ Վասակ էր ոչ բանտարկեալ իբրև մահապարտ, այլ մնաց պատուով յարքունիս հանդերձ սպասաւորօք, և մեռաւ մեծ զղջմամբ իբրև ապաշխարող, թէպէտ զհակառակն ունինք առ Եղիշէի, ինչպէս պիտի տեսնենք։ Երկրորդ և մանաւանդ, եթէ որպէս պատմէ Փարպեցին, բոլոր աւագանին Պարսից և Յազկերտ գլխովին հաւանեցան, թէ Վասակ էր պատճառ այն ամենայն չարեաց՝ պարտ էր դատապարտել զնա ի մահ, որպէս կամի ուրեք Եղիշէ, և զհակառակ կողմն իբրև ի նմանէ թելադրեալ արձակել։ Զարմանալի է սակայն, որ Վասակ կը մնայ անպատիժ ի դրան, և հակառակ կողմը կը պատժուի չարաչար. քահանայք, ըստ պատմութեան նորին իսկ Փարպեցւոյն և Եղիշէի, կ՚սպանուին տանջանօք, և նախարարք մնալով շատ տարիներ յոտարութեան անհնարին նեղութեամբ՝ հազիւ կը դառնան ի Հայս։

Գ. Ի լրումն պատմութեան Վարդանանց՝ գտնենք հոս տարբերութիւններն որ կան առ Եղիշէի, տարբերութիւններ՝ որ դժուարին կը գործեն մեզ կատարեալ ստուգութեան հասնել այս պատմութեան վրայ գէթ ըստ պարագայից, թէպէտ հաւանականութիւնը կը մնայ մեծաւ մասամբ ի կողման Փարպեցւոյն։

Թէ յետ պատերազմին Վարդանանց Ատրորմիզդ ոմն պարսիկ դրուեցաւ մարզպան, Մուշկան Նիւսալաւուրտ հանուեցաւ, և կղերէն երեւելիներ, յանուանէ Յովսէփ կաթողիկոս, Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց և Ղևոնդ երէց հանդերձ Վասակաւ կոչուեցան յարքունիս՝ յայսմ միաբան է Եղիշէ ընդ Փարպեցւոյն.—«Յայնժամ զմի ոմն յաւագ նախարարացն, Ատրորմիզդ անուն... դրէր և յանձն առնէր նմա (Յազկերտ) զաշխարհն Հայոց մարզպանութեամբ, և զՄուշկան Նիւսալաւուրտ հանդերձ զօրուն դումարէր յաշխարհն Աղուանից... իսկ զՎասակ հանդերձ գլխաւոր քրիստոնէիւք ի դուռն հրամայեաց կոչել» (Եղիշ. էջ 227, 228)։ Թէ նախարարք ևս «սաստ երդմամբ և սնոտի խոստմամբ» բռնուելով տարուեցան ի Պարս՝ յայսմ ևս միաբան է Եղիշէ ընդ Փարպեցւոյն. միայն ըստ Եղիշէի՝ նախարարք գնացին կամաւ և ոչ բռնի կապանօք.—«Արդ եկն եմուտ մարզպանն Ատրորմիզդ յաշխարհն Հայոց սիրով խաղաղու-

թեամբ... և ինքն իսկ շրջէր և ժողովէր ուխտիւ հաստատութեան։... Զամենայն կարգս աստուածպաշտութեանն..., ասէ, կալցին։... Իսկ նախարարքն որ էին յամուրս աշխարհին և կամ ի հեռաւոր օտարութեան, իբրև տեսին զշինութիւն երկրին՝... քաջալերեցան համարձակեցան յանդիման լինել արքային։... Եւ զայս լուեալ թագաւորին՝ ոչ կապանօք, այլ արձակ ոտիւք և արձակ ձեռօք հրամայեաց առ ինքն կոչել։ Ածին (նոքա) փողփողակի զկին և զորդիս և զինչս իւրաքանչիւր ի տուն մարզպանին, և ինքեանք փութանակի գնացին ի ձմերոցն արքունի (ի Տիզբոն)։... Իսկ սուրբ քահանայքն, վասն զի կապանօք տանէին՝ յետ երկուց ամսոց և քսան աւուր հասանէին ի ձմերոցն արքունի» (Եղիշ. էջ 228, 231, 234, 230)։ Իսկ որ ինչ պատահեցան յետ գալստեան քահանայից, նախարարաց և Վասակայ ի Պարսս՝ բազմօք կը տարբերին ի պատմութեան Փարպեցւոյն և Եղիշէի։ Ըստ Փարպեցւոյն, ինչպէս տեսանք՝ Վասակ «մեծարանօք և շքեղութեամբ» ընդունուեցաւ թագաւորէն, թէպէտ «առ վայր մի», «որպէս յանդէտս», այսինքն լըռելով առ ժամն, թէպէտ գիտէր թէ յանցաւոր էր։ Ըստ Եղիշէի՝ Վասակ արհամարհանօք կ'ընդունուի թագաւորէն. թէպէտ կը ջանայ արդարացունել զանձն՝ բայց կ'ընդունի պատասխան, թէ «Յորժամ քրիստոնեայքն ևս եկեսցեն՝ հասարակ լուայց յատենի»։ «Քրիստոնեայ» բառն ի բերան Յազկերտի, քահանայից և նախարարաց համար, որպէս թէ նոքա էին քրիստոնեայ, և Վասակ չէր վասն ուրացութեանն՝ չթուիր բնական։ Ըստ Փարպեցւոյն՝ քահանայք, այսինքն Յովսէփ կաթողիկոս, Սահակ, Ղևոնդ և այլք, հասնելով ի դուռն՝ կը դատուին Հազարապետէն Արեաց Միհրներսեհէ, և խիստ պատասխաններ տալով՝ կ'ընդունին երկաթի շղթայիւք հարուած ի բերանս, ինչպէս տեսանք ի վերոյ։ Ըստ Եղիշէի՝ քահանայից հարցափորձը կատարուեցաւ ոչ ի Պարսս ի Միհրներսեհէ, այլ յԱտրորմզդէ ի Հայս.—«Եկն եմուտ մարզպանն Ատրորմիզդ յաշխարհն Հայոց... Հրամանաւ արքունի կոչեաց առ ինքն զՍահակ եպիսկոպոսն Ռշտունեաց... դարձեալ և ի տանէն Արծրունեաց բարեպաշտօն երէց մի Մուշէ անուն... և երկու ևս այլ քահանայս, որոց անուանք են Սամուէլ և Աբրահամ... և ժողովեցին ևս ի նոյն տեղի զմեծն Յովսէփ, զՂևոնդ և զՔաջաջ և զԱրշէն։ Եւ իբրև ուսաւ և տեղեկացաւ յամենեցունց մարզպանն՝ գրեաց և եցոյց յարքունիս» (Եղիշ. էջ 228, 229)։ Դարձեալ ըստ Փարպեցւոյն, ինչպէս տեսանք՝ նախարարք կապանօք բերուեցան առաջի Յազկերտի. եղաւ հարցափորձ. Արշաւիր Կամսարական հրամանաւ թագաւորին յանուն նախարարաց խօսեցաւ իբրև ամբաստանող ընդդէմ Վասա-

կայ, զոր յանդիմանեց Թագաւորն իբրև յանցաւոր, տուաւ պահակաց մերկացունել զնա ի պատուոյն, և հանելով զնա Սիւնեաց իշխանութենէն՝ արտաքսեց ատենէն. և այս՝ երկու կամ երեք աւուր մէջ։ Ըստ Եղիշէի՝ Հարցափորձն եղաւ ոչ Յազկերտի, այլ Միհրներսեհի Հազարապետին և աւագանւոյն առջև, տևեց շատ օրեր. ամբաստանողք էին ոչ մի, այլ բազումք — Մուշկան Նիւսալաւուրտ, պարսիկ զօրականէն շատք, ուրացեալ ընկերք Վասակայ, մոգք և օգնականք նոցա, ազգականք իսկ Վասակայ, և կալեալ քահանաներէն Սահակ եպիսկոպոս։ Արշաւրի Կամսարականի և երկայն ատենախօսութեան նորա յիշատակութիւն ամենևին չկայ. այս դատին մէջ Վասակ և կուսակիցք նորա կը դատապարտուին, մանաւանդ Վասակ, որ կը դատուի մահապարտ. — «Եւ մինչդեռ անդէն ի ձմերոցին էր Թագաւորն՝ ատեան հարցափորձի ի մէջ նոցա հրամայէր լինել։ Եւ նստաւ Հազարապետն զի լուիցէ կողմանցն երկոցունց։ Եւ իբրև յերկարեցաւ ամբաստանութիւնն զաւուրս բազումս՝ պարտաւորեցաւ կողմն ուրացելոցն։ Մուշկան Նիւսալաւուրտ յայտ առնէր պատերազմակից ընկերօքն իւրովք, թէ յետ վճարելոյ պատերազմին բազում արիւն եղ հեղուլ Վասակ… Նաև յուրացեալ ընկերացն նորա բազումք էին որ յայտ արարին զչարիս նորա, զոր գործեալ էր ընդ աշխարհն Հայոց։ Եւ ի մնացեալ մոգացն և ի փշտիպանացն որք ի կապանսն տարեալ էին, և ապա ածին յարքունիս՝ հարցին և ցնոսա վասն նորա և ասեն. Դուք էք ինչ տեղեակ վասն չարութեան սորա։ Ետուն պատասխանի և ասեն. Ամենայն անցք չարչարանաց որ անցին ընդ մեզ, և բազում հարուածք որ եղեն ի զօրսն արքունի, և աւեր և գերութիւն աշխարհին Հայոց՝ սկիզբն և առաջնորդ չարեաց այրդ այդ եղև։ Եւ մինչդեռ այս ամենայն ամբաստանութիւն զնմանէ էր զայնչափ աւուրս բազումս՝ յառաջ մատեան և իւր ազգականքն, որ ևս յառաջագոյն դատախազ լեալ էին զնմանէ առաջի արքային, սկսան կարգաւ ցուցանել և յայտ առնել… զբազում խարդախութիւնս նորա ոչ միայն առ ընկերս, այլ և առ Թագաւորն։ Յայնժամ հրաման ետ Հազարապետն. Ածէք այսր և ի կապելոցն որք են ի բանտի անդ։ Լուծին և ածին յերանելեացն զՍահակ եպիսկոպոս Ռշտունեաց և զսուրբն Յովսէփ և զՂևոնդ երէց» (Եղիշ. 236—238)։ Հոս Եղիշէ խօսել կու տայ զՍահակ եպիսկոպոս, որ դառն բանիւք կ՚ամբաստանէ ըզՎասակ։ «Զարմացաւ, կը յարէ Եղիշէ, մեծ Հազարապետն ընդ միտս իւր, և ի խորհուրդս իւր քննէր զամենայն բանս ատենին։ Քանզի հասեալ էր ի վերայ, եթէ յիրաւի դատապարտեցաւ այրն ըստ անարժան գործոցն իւրոց։ Եմուտ և եցոյց զամենայն բանս

տեննին յարքունիս։ Եւ իբրև լուաւ թագաւորն և ստուգեաց ի Հազարապետէն զառնն պարտաւորութիւն՝ բարկացաւ յոյժ և ի խոր խոցեցաւ, բայց միայն երկայնմտութեամբ կամեցաւ հաստուցանել զնա ի մեծ անարգութիւն։ Լուռ եկաց աւուրս երկոտասան, մինչ ի գլուխ չոգաւ փուրսիշ ամբաստանութեանն։ Եւ եղև յաւուր միոջ մեծի զամենայն երևելի և զպատուականսն հրամայէր յընթրիս կոչել. կոչեցին և զուրացեալն։ Եւ նա ըստ առաջին կարգի օրինացն... զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ երթայր յարքունիս... եհաս և նստաւ ի ներքոյ գահլիճին, որ էր հրապարակ մեծամեծացն։ Արդ եկն եւ սենեկապանն յարքունուստ, հարցանէր զնա և ասէր. Արքայ յղեաց առ քեզ. յորմէ գտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւդ. ասա ինձ վաղվաղակի, վասն որոյ արդար վաստակոց։ Եւ յուշ առնէր նմա զամենայն բանս ատենին յորում դատապարտեցաւն. նա և որ ոչ ևս անդ խօսեցան՝ զայն ևս յայտնէր նմա։... Պապանձեցաւ ամենևին, և ոչ գտաւ բան ճշմարիտ ի բերան նորա։ Իբրև կրկնեցին և երեքկնեցին, ցուցանելով ի ներքս յարքունիսն՝ հատաւ վճիռ մահու ի վերայ նորա։ Եկն եւ դահճապետն, և մատեաւ առաջի ամենայն մեծամեծացն մերկեաց ի նմանէ զպատիւն զոր ունէր յարքունուստ, և զգեցոյց նմա հանդերձ մահապարտի։ Կապեցին զոտս և զձեռս, և կանանցաբար նստուցին ի ձի մատակ. տարան և եդուն յայնմ զնդան ուր կային մահապարտք ամենայն» (Եղիշ. էջ 234—243)։

Բոլոր այս պատմութեան մէջ, որ ամենևին այլակերպ է ի պատմութենէ Փարպեցւոյն՝ յայտնի կը տեսնուի Եղիշէի կողմանէ բռնի ճիգն՝ երևցունելու զՎասակ չար և ատելի, ստուարացունելով կամ ծեքելով միշտ պարագաներն հակառակ այս նշանաւոր անձին։ Եղիշէի չափազանցութիւնը կը տեսնուի մանաւանդ հեռեւեալ պատմութեան մէջ, ուր այս անխիղճ թշնամին իբր թէ կը նկարագրէ Վասակայ կենաց վախճանն իբրև դատապարտեալ ոգւոյ, որ աստէն իսկ յառաջ քան զմահն կ՚սկսի առնուլ իւր յաւիտենական պատժոյն առհաւատչեայն. «Իսկ ուրացեալն Վասակ հայէր ի միաբանութիւն սուրբ կապելոցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանսն և զուարթագոյն և պայծառք երևէին որպէս յառաջագոյն յարքունիսն. հայէր և կարօտէր»։ Վասակ ինչպէս կրնար տեսնել կապեալ նախարարներն, քանզի ինքն Եղիշէ կը յաւելու, թէ «Ոչ ոք խառնեաց զնա ի նոսա, այլ ուրոյն նովին կապանօք պահէին»։ Բայց կը յաւելու. «Օր ըստ օրէ բերէին իբրև զգէշ ընկենուին ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին, և տեսիլ ամենայն կարաւանին զնա առնէին։ Կոզոպտեցին հանին և

ոչինչ թողին զոր ընդ իւրն ունէր. այնպէս ձաղեցին աղքատութեամբ՝ մինչ հաց մուրանային և բերէին նմա իւր ծառայքն։ Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա՝ որ մինչև զհարց և զհաւուց և զիւր տրարս և զզարդս կանանց ևս ետ ի վերայ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի։ Եւ յայն տեղի հասուցին՝ մինչև հարցանել նմա, եթէ կայցէ ինչ գանձ ի գերեզմանս նախնեացն մերոց։ Եւ եթէ գտեալ էր նորա՝ հանէր և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս. որպէս զի բազում մարդիկ իսկ չոգան ի տուժի։ Եւ իբրև այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարեցաւ՝ անկաւ յախտս դժնդակս անդէն ի կապանսն։ Ձեռաւ փոր նորա, և հարան և տրորեցան գոգք նորա, և քամեալ մզեցաւ թանձրամսութիւն նորա։ Եռացին որդունք ընդ աչս նորա, և ի վայր սորեցին ընդ ունգունս նորա. խցան լսելիք նորա, և ծակոտեցան չարաչար շրթունք նորա. լուծան ջիլք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա։ Բղխեաց ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա։ Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա» (Եղիշ. էջ 245—247)։ Փարպեցին, որ շատ ընական օրինակաւ և մեղմով կը պատմէ Վասակայ կենաց այս վերջին մասը՝ գոնէ ապաշխարութեան նշան կը յիշէ ի նմա ասելով, թէ «Զաղէր զանձն, լայր և հառաչէր մինչև ցօր մահուան իւրոյ»։ Եղիշէ այս շնորհը ևս զլանայ նմա.—«Ոչ գտաւ, ասէ, խոստովանութիւն ի շրթունս նորա։ Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ։ Ոտնհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա։ Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեզօք Հայոց աշխարհին՝ ոչ երևեցաւ տեղի գերեզմանի նորա, քանզի իբրև զշուն մեռաւ, և իբրև զգէշ քարշեցաւ։ Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ սրբոց, և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն։ Ոչինչ եթող չարիս զոր ոչ գործեաց ի կեանս՝ և ոչինչ մնաց ի մեծամեծ չարեաց որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա։ Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա, զի ամենայն որ զայս լուեալ գիտասցէ՝ նզովս ի հետ արկցէ, և մի լիցի ցանկացող գործոց նորա» (Եղիշէ 247, 248)։ Զարմանալի է որ Վասակ չսպանուեցաւ, քանզի ըստ Եղիշէի «հատաւ վճիռ մահու ի վերայ նորա», և ըստ Փարպեցւոյն՝ սուրբն Ղևոնդ երէց մարգարէական ոգւով ըսած էր, «Եթէ դու կենդանութեամբ զգուխդ ի վերայ ուսոցդ ի Հայս տանիս՝ տեառն Աստուծոյ ընդ իս չէ խօսեցեալ»։

**10.** Եթէ ի պատմութենէ Փարպեցւոյն և մանաւանդ Եղիշէի,
որ են մի միայն աղբիւրք, բառնանք ինչ որ վկայաբանական է
կամ անմասն հաւանականութենէ՝ կը հասնինք սա պարզ պատ-
մութեան։ Սասանեանք որ գքրիստոնեայ Հայաստան հանելու համար
հռոմէական ազդեցութենէ մեծամեծ պատերազմներ տուած էին,
և ի փոխճանի ջնջելով թագաւորութիւնը կապած էին զմեծ մասն
երկրին սասանեան պետութեան հետ գրեթէ իբրև նահանգ, տես-
նելով տակաւին յազգին հզօր միտումն ի Յոյնս անդր հաւատա-
կցութեան պատճառաւ՝ խորհեցան քայքայել այս կապը։ Յազկերտ
Բ. ի վերայ հնարից նախորդաց իւրոց—Շապհոյ Բ-ի, Վռամայ Դ-ի,
Յազկերտի Ա-ոյ, Վռամայ Ե-ի, յաւել նոր հնարս շահելու նախա-
րարներն իւր նպատակին, որ էր բառնալ մուտ կրակապաշութեան
ի Հայս. և տեսնելով թէ իւր դիտաւորութեան խափանարար մեծ
էր արթնութիւն կղերին՝ կոչեց հայ նախարարներն ի դուռն, և
առաւ նոցա հաճութիւնը մուծանելու կրակապաշտութիւնն իբրև
տէրութեան կրօնք իրենց երկիրներուն մէջ, հաւասար քրիստոնէու-
թեան։ Երբ այսպէս խաբուեցաւ արթնութիւն կղերին թագաւորին
հնարողութենէն, և կրակապաշտութիւնն ըստ սկզբան գտաւ մուտ
ի Հայս՝ ուրիշ հնար չմնաց կղերին՝ բայց միայն յարուցանել զազգն
ընդդէմ նոր կարգադրութեան, որպէս թէ քրիստոնէութեան ջնջումն
էր զոր կը պահանջէր Յազկերտ, մինչ հաւասարութիւն էր որ կը
պահանջուէր, և ոչ ջնջումն առաջնոյն ի նպաստ երկրորդին գէթ
առ ժամն։ Ողջոյն ազգն վառեցաւ ի սկզբան իբրև մի այր, վստահ
յօգնութիւն քրիստոնեայ աշխարհին, որ չտեսաւ վտանգն այնպէս
մօտալուտ՝ ինչպէս կը կարծէին Հայք։ Սուտ և զրպարտութիւն
է, թէ Վասակայ սիրտն էր կանխաւ թիւրեալ ի կրակապաշտու-
թիւն աշխարհային յուսով, և ի նոյն միտեցոյց զայլս։ Սակայն
ստոյգ է, թէ միութեան ոգին արդէն առած էր հաստոյր հարուա-
ծը։ Թէ առանց արտաքին ձեռնտուութեան, մանաւանդ Յունաց, ի
զուր էր յուսալ յաղթութիւն՝ յայտնի էր ամենուն. մարտիրոսական
պսակի փառքը, որ կը թուէր լինել բարեպաշտագոյն մասին վերջին
ակնկալութիւնը՝ չէր բաւական պատճառ Վասակայ պէս «յառաջի-
մաց» մարդոց բառնալ դուռն անխորհուրդ ապստամբութեան, որոյ
փախճանն կ՚սպառնար աղէտ։ Վասակ յետ կեցաւ ապստամբութենէն՝
երբ եղան ի գերև ամէն հնարք կասեցուցանելոյ հակառակ կողմը, երկ-
պառակութիւնը զօրացաւ, և պատերազմն եղաւ ներքին և արտա-
քին միանգամայն։ Մեծ եղաւ կորուստը. սասանեան վրէժխնդրու-
թիւնն յագեցոյց զիւր ցասումնն, նախարարաց և կղերին պատուա-

կանագոյն մասը ձգուեցաւ յատեան անգութ և մոլեռանդ իշխանութեան. ելքն էր աքսոր և մահ, որպէս՝ և եղաւ իսկ։

Վասակայ վախճանին վրայ գրուածներէն սաչափ միայն կը թուի հաւանական, թէ Վասակ զրկուեցաւ իւր իշխանութենէն և պատուէն և մնաց յարքունիս. զայս կը պահանջէր Յազկերտի քաղաքականութիւնը. թերևս նաև Վասակայ նախկին միութիւնն չթուեցաւ հաճոյ թագաւորին և աւագանւոյն Արեաց։ Ահա՛ Վարդանանց պատմութեան համառօտութիւնը։

**11**. Փարպեցին և Եղիշէ կը կցեն այս պատմութեան երկայն յաւելուած մը, ուր կը պատմուի նախարարաց աքսորն հանդերձ քահանայիւք, և այս վերջիններուն նահատակութիւնն այնպիսի պարագաներով՝ որ կը փոխեն պատմութիւնն ի վկայաբանութիւն կամ ի հոգևոր վէպ, ուր սաչափ միայն կրնայ ընդունուիլ իբրև պատմական, թէ Յազկերտ, յետ աքսորելոյ ապստամբ նախարարներն և զՂևոնդեանս ի Վրկանս (452), (նահանգ Պարսից առ հարաւային ափամբ Կասպից ծովուն) եկաւ անձամբ հոն (454), երբ կ'երթար ի պատերազմ ընդդէմ Քուշանաց, և տանելով զնոսա ընդ իւր յԱպար աշխարհ՝ դնել տուաւ Նիւշապուհ քաղաքին բերդը։ Ապար աշխարհ էր յարևելից հիւսիսոյ Վրկանից, և կը թուի լեալ մասն Աւարաց, հզօր ցեղ սկիւթացի, որոյ մի մասն վեցերորդ դարուն գաղթելով եկաւ յարևելեան Եւրոպա. իսկ Նիւշապուհ, հաւանականապէս Հեկատոմփիւղոսն (Հարիւրդռնեան) նախնեաց՝ էր քաղաք մեծ և ամուր, զոր շահաստան կ'անուանէ Փարպեցին, այսինքն վաճառաշահ։ Յազկերտ յետ պարտելոյն ի Քուշանաց, հրամայեց զքահանայս իբրև մահապարտս ըստ օրինաց Պարսից—վասն զի աւերած էին ատրուշաններ—սպանանել, հաւանականապէս գըլխատմամբ, իւր տէրութեան վեշտասաներորդ տարին, այն է իբր 457 ըստ հաշուոյ Փարպեցւոյն, եօթնևտասն ամօք յետոյ քան զմահն Սահակայ և Մեսրոպայ. իսկ նախարարք, իբրև լոկ մասնակիցք ապստամբութեան, յետ մնալոյ յաքսորս՝ արձակուեցան առ Պերոզիւ, յաջորդաւ Յազկերտի, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։

**12**. Թէ պատմութիւն նահատակութեանն Ղևոնդեանց է լոկ վկայաբանութիւն, յօրինեալ անծանօթէ ումեքէ, յորմէ առած կը թուին Փարպեցին և Եղիշէ՝ յայտնի է անմիաբանութենէն այս երկուց. վերջինը, Եղիշէ, կ'սկսի մոգպետի մը հրաշալի դարձէն, որ յայտնի նմանութիւն է դարձի բանտապետին Գործոց առաքելոց, հաւանականապէս մուծեալ յիւրմէ։

**13**. Ըստ պատմութեան Փարպեցւոյն՝ նախարարք էին թուով երեսուն և մի. «Ի տոհմէն Սիւնեաց երկու եղբարք Բաբկէն և Բա-

կուր. ի տոհմէն Արծրունեաց Ներշապուհ և Շաւասպ և Տնգին և Մեհրուժան և Պարգև և Տաճատ. ի տոհմէն Մամիկոնէից Համազասպեան և Համազասպ և Արտաւազդ և Մուշեղ. ի տոհմէն Կամսարականաց Արշաւիր և Թաթ և Վարձայ. ի տոհմէն Ամատունեաց Վահան և Առանձար և Առնակ. ի տոհմէն Գնունեաց Ատոմ. ի տոհմէն Դիմաքսենից Թաթուլ և Սատոյ, երկու եւս այլովք տոհմակցօք. ի տոհմէն Անձևացեաց Շմաւոն և Առաւան. ի տոհմէն առաջին Առաւեղենից Փափակ և Վարազդեն և Դատ. ի տոհմէն Արծրունեաց Ապրսամ. ի տոհմէն Մանդակունեաց Սահակ և Փարսման. ի տոհմէն Տաշրացեաց Վրէն. ի տոհմէն Ռոփսենից Բաբիկ և Յոհան»։

**14.** Իսկ քահանայք—այսպէս կ'անուանեն Փարպեցին և Եղիշէ զՂևոնդեանս—էին ութ անձինք. «Տէր Յովսէփ կաթողիկոս, Տէր Սահակ Ռշտունեաց եպիսկոպոս, երանելի երէցն Տէր Ղևոնդ, Տէր Մուշէ դրան երէցն Ներշապհոյ Արծրունեաց տեառն, Տէր Սամուէլ երէցն Արծայ, Տէր Աբրահամ սարկաւագ, Տէր Արշէն երէց Եղեգեկի և Տէր Քաջաջ սարկաւագ»։ Մին միայն էր եպիսկոպոս, այն է Սահակ, երկուքն սարկաւագ, Աբրահամ և Քաջաջ. մնացեալքն էին երիցունք, այն է լոկ քահանայ, բաց ի Յովսեփայ, որ թէպէտ տակաւին երէց՝ ընտրուած էր յաթոռակալութիւն յետ Մեսրոպայ. այսպէս կը թուի թէ ըստ պաշտաման մեծի մասին նոցա Փարպեցին և Եղիշէ կը կոչեն զնոսա քահանայս.—«Զսոսա ութ քահանայս, ասէ Փարպեցին, և զքրիստոսասէր կալեալ նախարարսն Հայոց... Հրաման տայր թագաւորն Յազկերտ խիստ կալանօք պահել ի Վրկանի մինչև յամն վեշտասաներորդ թագաւորութեան իւրոյ։ Եւ յամին վեշտասաներորդի թագաւորութեան իւրոյ (456) (ըստ ստուգագոյն հաշուոյ՝ երկու ամօք յառաջ, 454) Յազկերտ չու արարեալ ամենայն բազմութեամբ իւրով խաղայր ի պատերազմ ի վերայ Քուշանաց. հրամայէր և զկապեալս Հայոց, զքահանայսն և զնախարարսն, խաղացուցանել ընդ իւր ի Վրկանէ։ Եւ ելեալ յԱպար աշխարհ, և եկեալ ի Շահաստանն որ անուանեալ կոչի Նիւշապուհ՝ հրամայէր պահել անդ զկապեալսն Հայոց, զքահանայսն և զնախարարսն ի գդեակ շահաստանին Նիւշապուհ»։ Այսչափ զգուշութեան պատճառ կը թուի լինել երկիւղն զոր ունէր Յազկերտ, թէ գուցէ նախարարք փախչելով ի Հայս՝ նորոգէին ապստամբութիւնը, մինչ ինքն զբաղեալ էր պատերազմաւ։ Ըստ Փարպեցւոյն՝ Յազկերտ չարաչար յաղթուելով կը դառնայ ամօթով.—«Նկուն եղեալ դառնայր ամօթալից, կորուսեալ ի զօրաց իւրոց արս ընտիրս և ականաւորս». և մոգերն համարելով զայս պատեհ առիթ

կը գրգուեն զԹագաւորն տալ սպանանել զքահանայսն, որպէս թէ ի պատճառս նոցա եղաւ այն պարտութիւն, վասն զի մնացին նոքա անպատիժ.— «Եւ թագաւորին Յազկերտի տեսեալ զայնպիսի թեթեւութիւն ծանականաց իւրոց՝ յանհնարին տրտմութիւնս ընկղմեալ մաշէր... Եւ մոգուց իմացեալ զսրտմտութիւն թագաւորին՝... սկսան խօսել ընդ թագաւորին և ասեն. Արեաց քաջ, մի յածեսցին միտք քո յայլ խորհուրդ վասն վատ պատահմանց որ դիպեցաւ մեզ ի թշնամեաց, այլ ի ցասմանէ աստուածոցն, որ կարի խիստ զայրացեալ են մեզ յաղագս աստուածասպան քահանայիցն Հայոց, որ վաղ արժանի էին մահու, և ձեր անփոյթ արարեալ՝ կան կենդանի մինչև ցայսօր»: Յազկերտ չէր այնչափ անմիտ՝ մինչև ընծայել զիւր պարտութիւնն այնպիսի չնչին պատճառի, և չթուիր թէ կուտար սպանանել զքահանայսն. բայց ստիպուեցաւ յերկիւղէ մոգուց, քանզի ըստ օրինաց քէշին Պարսից մահապարտ էին քահանայք, իբրև աւերիչք ատրուշանաց: Զկրակ սպանանել և զատրուշան աւերել տեղ կը գտնենք յիշուած ի հարցափորձս քահանայից իբրև մահապարտութեան յանցանք: Այսպէս Միհրներսեհ յառաջնում հարցափորձին ասէր ցՍամուէլ երէց և ցԱբրահամ սարկաւագ, «որոց, ասէ Փարպեցին, զկրակն անցուցեալ էր զԱրտաշատու». «Որպիսի՞ համարձակութեամբ իշխեցէք գործել զայդպիսի մահապարտութեան գործ, և այնպիսի մեծ կրակի իշխեցէք ձգել զձեռս ձեր»: Դարձեալ նոյն Միհրներսեհ ի յանդիմանելն զՅովսէփ կաթողիկոս և զընկերսըն իբրև նոյն յանցանաց տէր՝ ասէր. «Որպիսի՞ աներկիւղ համարձակութեամբ զայդչափ բազում մահապարտութիւն դիզեալ կուտեցէք, աւերելով զատրուշանս և սպանանելով զայնպիսի ճոխ կրականի»: Յազկերտ վճռեց քահանայից գլխատումը, բայց անպատ տեղ, հեռու քաղաքէն, հաւանականապէս չկամելով կամ թերևս չիշխելով առաջի աչաց նախարարաց տալ կատարել զայն ողբալի տեսարան. թէպէտ, ըստ Փարպեցւոյն՝ Յազկերտի այս զգուշութեան պատճառն էր ծածկել քրիստոնեաներէն սպանման տեղը, զուցէ գալով նոքա առնուլն սպանելոց նշխարներն, իբրև անգին մնացորդներ ընդդէմ պատահարաց: Նաև հրամայուեցաւ յետ սպանման նոցա դնել պահապաններ տասն օր և աւելի ևս, «որպէս զի զիշատեալ ի թռչնոց ընկեցի այսր անդր ոսկրոտին ի գլուխ լեռանց և կամ ի խորաձոր տեղիս քարանձաւաց»: Ինչպէս կ'երևի՝ վկայաբանն, ո՛ ոք և էր՝ հնարեց այս պարագան, որպէս զի յետոյ տար ցրուել պահապանաց ս.քանչելեօք, և հասուցանել ոսկրոտին ի ձեռս քրիստոնէից: Ըստ պատմութեանն՝ Յազկերտ գաղտնի պահելու համար նախարարներէն քահանայից սպանումը՝ հանեց համ-

քաւ, թէ պէտ արձակուէին նոքա ի Հայս. բայց Ղեւոնդեանք որպէս թէ աստուածային յայտնութեամբ իմանալով Թագաւորին նըպատակը՝ յայտնեցին նախարարաց, մարգարէանալով նաեւ նոցա մօտալուտ արձակումը.—«Յազկերտ տայր հրաման Վեհգենշապհոյ ամբարապետի առնուլ ընդ իւր երկուս եւս այլ օգնականս յաւագանւոյն, զՁնիկան մայպետն արքունի, և զՄովան անդերձապետ, երթալ փութով յառաջ քան զինքն, և հանել զսուրբ քահանայսն ի բանտէն, ուր էին կապեալք նոքա և նախարարքն Հայոց, և տանել հեռի ի քաղաքէն յանկոխ և յանապատ տեղի, և բառնալ զնոսա ի կենաց։ Բայց յոյժ պատուիրանաւ զգուշացուցանէր Թագաւորն Վեհգենշապհոյ՝ ոչ տալ ումեք գիտել զճանապարհն ընդ որ տանիցին, և ոչ զտեղի մահուանն ուր սպանանիցեն զնոսա։ Քանզի լուեալ է մեր, ասէ, ստուգութեամբ, թէ որք ի մոլար աղանդն են քրիստոնէից՝ խնդան, զի եթէ ոք յոսկերաց անտի այնոցիկ որ յաղագս Աստուծոյն իւրեանց մեռանին, յիւրում տանն ունիցի փոքր խրխոր ինչ՝ վասն ինչ և խորամանկ ի նա և ի նորա տունս և ի սիրելիս ոչ մերձենայ... և զինչ եւս այլ աւելի տամ, և զհարց և զմարց զարդս զոր արարեալ է մեծաւ աշխատութեամբ, ճիտակս և կամ զոտակս ինչ մարգարտոյ կարի մեծագնոյ՝ կանայք քրիստոնէիցդ չհամարին ինչ հանել յանձանց և տալ գնել փխրանս ինչ յոսկերաց այնպիսեացն»։ Այս բանք, զորս վկայաբանն կը դնէ ի բերան Յազկերտի՝ են հաւատացողի զօրութեան նշխարաց սրբոց, ապա թէ ոչ, զի՞ փոյթ էր Յազկերտի չթողուլ որ այն նշխարներէն հասանէին ի ձեռս քրիստոնէից։ «Զայս ամենայն բանս լուեալ ի Թագաւորէն ամբարապետին Վեհգենշապհոյ յԱպար աշխարհին, մտեալ ի դղեկ շահաստանի Նիւշապհոյ՝ խօսէր բանս սուտս և տայր աւետիս նենգութեամբ, թէ արքայից արքայ հրաման ետ ինձ զհայ երիցունդ որ աստ ի կապանս են՝ արձակել յաշխարհն իւրեանց, և վասն այլ ազատանոյն որ ի Հայոց են՝ պայման արար, թէ ես յորժամ գամ՝ արձակեմ ի կապանաց։ Բայց սուրբ քահանայքն իբրև լուան՝ իսկոյն գիտացին ազդեցութեամբ սուրբ Հոգւոյն, և ասեն ցնախարարսն, թէպէտև կամէր արդեօք Վեհգենշապուհ թաքուցանել զճշմարտութեան բանն... Դուք ողորմութեամբն Քրիստոսի արձակելոց էք ի կապանացդ, և մեք զօրութեամբ սուրբ Հոգւոյն կատարեալ զաղտուկ աւուրս կենցաղոյս պանդխտանոցիս՝ գնալոց եմք ի բնիկ աշխարհն մեր»։

**15.** Հրաման սպանման քահանայից կատարուեցաւ այսպէս։ Սամուէլ երէց և Աբրահամ սարկաւագ էին Թագաւորին հետ ի քանակին, և նախ գլխատուեցան սոքա.—«Հրաման տայր Յազկերտ

նախ զնոսա որ ընդ իւր քահանայքն էին, զսուրբ երէցն Սամուէլ և զսուրբ սարկաւագն Աբրահամ, յանհրևոյթ տեղի ինչ տանել զատ ի կարաւանէն հեռի և անդ գլխատել, յաղագս չգտանելոյ ուրուք ի քրիստոնէից և պատուելոյ զոսկերս նոցա»։ «Բայց յառաջ քան զսպանանելն զնոսա, կը յաւելու վկայաբանն, հրաման տայր զաջ ձեռն կտրել զսրբոյն Սամուէլի, և դնել ի ձեռին տեառն Աբրահամու. նոյնպէս հրամայեաց և զսրբոյն Աբրահամու կտրել զաջ ձեռնն, և դնել ի ձեռին տեառն Սամուէլի. փոխանակ, ասէ, զի իշխեցին ձգել զձեռս իւրեանց ի պատուական կրակն և սպանանել. և ապա սրով կտրել զգլուխս նոցա»։ Նոյն հրաման տրուեցաւ, ասէ վկայաբանն, վասն եպիսկոպոսին Բասենոյ Թաթկայ.—«Յետ այսորիկ դեսպանս հրամայէր առնել թագաւորն Յազկերտ յաղագս երանելւոյ եպիսկոպոսին Բասենոյ Թաթկայ, որ կայր ի կապանս յԱսորեստանի... հրամայէր սպանանել անդէն և անհետ առնել զմարմին սրբոյն, յաղագս չգտանելոյ ուրուք ի քրիստոնէից ի պատիւ տանելոյ զոսկերս նոցա... Բայց յառաջ քան զվախճան սրբոյն քերեցին նախ տանջանօք զաւուրս բազումս զմարմին սրբոյն յոսկերացն, և ապա ըստ հրամանի թագաւորին հատեալ սուսերաւ զգլուխն սպանին»։ Իսկ մնացեալ քահանայքն, որ էին ի Նիւշապուհ ընդ նախարարսն՝ յանձնուեցան Վեհդենշապհոյ, որ երկու ընկերօքն որ յիշուեցան վերագոյնն, տանելով զնոսա հարուստ ժամս հեռու ի քաղաքէն՝ կատարեց զհրամանն։ Առանց համարելու հարկ յիշել մանր ինչ որ կը պատմէ վկայաբանութիւնն՝ համառօտենք պատմութիւնը։ Քահանայք, ինչպէս յիշուեցաւ՝ աստուածային յայտնութեամբ իմանալով, թէ կը տարուէին ի մահ՝ ծանուցին նախարարաց, և յետ անցուցանելոյ ամբողջ գիշեր մի աղօթիւք և խրատներով՝ առին հրաժեշտ, զոր կարի սրտառուչ կը նկարագրէ վկայաբանն, և ածան դահճօք, որ մեծ դժուարութեամբ խորտակեցին յոտից և ի ձեռաց սրբոցն ահագին շղթաներն, որովք կապեալ կը դնէ զնոսա վկայաբանն, ի սահմանեալ տեղին.—«Եւ լուեալ զայնպիսի հրաման ի սուրբ քահանայից ամենայն նախարարացն... մինչդեռ ուրախացեալ ցնծային... գային հասանէին բազմութիւնք դահճացն յամբարապետէն ջահիւք բազմօք սաստկապէս լուցելովք, քանզի ժամ էր հաւուն խօսելոյ, ունելով ընդ ինքեանս բազմութիւն զարբնաց գործովք արուեստաւորութեան իւրեանց, սալիւք և ուռամբք, կռանօք և խարտոցօվք, խարտել և կտրել և ի բաց հանել զերկաթսն ի ձեռաց և յոտից և ի պարանոցէ սրբոցն. և զոր ոչն կարասցեն կտրել խարտոցօվքն՝ ուռամբք ջարդեալ զբևեռ երկաթոյն, դնելով ի վերայ սալիցն բեկեալ հանցեն ի բաց։ Քանզի ստուարք

էին և ծանունք քան զընութիւն ամենայն երկաթոյ, որով.գայլ նա-
հատակսն կայէին... և մանաւանդ շղթայք սրբոյ կաթողիկոսին
Յովսեփայ, զոր ևս առաւել ստուարագոյնս ասէին և անհեդեդս:...
Արդ մատուցեալ դարբինքն և ի բազում ժամս ջանացեալ, և ոչ
կարացին. յետոյ ապա եդեալ ի վերայ սալիցն և ուռամբք ջարդեալ՝
հազիւ զերծուցեալ հանէին զերկաթսն ի մարմնոյ սրբոցն, չարա-
չար կոտորելով և վիրաւորելով զմարմինս նոցա:... Եւ կատարեալ
դահճացն զգործն ըստ հրամանին՝ խաղացուցանել այնուհետև ի
շահաստանէն զսուրբսն փութային:... Զուէր այնուհետև ամբարա-
պետն Վեհդենշապուհ հանդերձ քահանայիւքն ի Նիւշապհոյ... և
առեալ զսուրբսն դահճացն՝ գնացին զբովանդակ գիշերն ընդ ան-
կոխ անապատն, հեռի ի գեղջէն որպէս պարսիկ հրասախաւ միով,
և թէ աւելագոյն. և ընդ ծագել առաւօտուն հասանէին ի տեղի
մի քարուտ, առապարաձոր, աւազուտ. ի տեղի յոր ոչ հասանէր
արօտական, և ոչ ընաւ անցանէր ընդ նա ուղևոր, վասն ոչ գիտե-
լոյ երբէք ի նմա ճանապարհ»: Ըստ Փարպեցւոյն՝ ոմանք ի սպա-
սաւորաց քահանայիցն և երէցք երկու կը պատրաստուէին երթալ
ընդ նոսա լինել պաշտօնեայ, թերևս և պսակակից նոցա, բայց ար-
գելուեցան անդերձապետէն.—«Ոմանք ի սպասաւորաց երանելեացն,
որք եկեալ էին ընդ նոսա ինքնակամ յօժարութեամբ յաշխարհէն
Հայոց, աղբանեկել նոցա և սպասաւորել ի կապանսն, որք և վի-
ճակի բարւոյ մասինն լինել արժանիք տենչային, և մանաւանդ ա-
ռաւել Խորէն երէց, որ էր ի գաւառէն Այրարատու, ի գեղջէն
որում անուն էր Որկովի, և երանելին Աբրահամ երէց, որ
էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն որում անուն էր Զենակս: Զոր
տեսեալ Վեհդենշապհոյ և որք ընդ նմայն էին, և հարցեալ, թէ
Դուք յո՞ կազմիք, և լուեալ ի նոցանէ, թէ Ուր զհօգևոր տէարսդ
մեր և զվարդապետս տանիք, ընդ դոսա պատրաստ եմք երթալ ի
կեանս և ի մահ՝ սրտմտեալ Վեհդենշապհոյ հրաման տայր բռնա-
բար ունել զնոսա և պահել անդէն ի շահաստանին»: Կը նստին
երեքին իշխանքն: Բայց ի դահճաց և Խուժիկ անուն ումեքէ, որ է
մի միայն աղբիւր այս պատմութեան, ինչպէս պիտի տեսնենք յե-
տոյ՝ ոչ ոք էր մօտ—«Եւ արկեալ աթոռս երեցունց իշխանացն՝ նըս-
տէին, ամբարապետն Վեհդենշապուհ, և Ջնիկան մայպետն արքունի
և Մովան անդերձապետն, ոչինչ զգացուցեալ ումեք ի գեղջէն, և
ոչ ամենեցունց զորս ընդ ինքեանս, բայց միայն երանելի Խուժկաւն
և անօրէն դահճօքն որովք սպանանելոց էին զսուրբսն. և կացու-
ցին զսուրբ նահատակսն յատենի»: Սկսաւ հարցափորձն, զոր երկայն
կը յօրինէ Վկայաբանն, թէպէտ այս եղած էր կանխաւ «ի դրան

առաջի Հազարապետին Արեաց Միհրներսեհի»։ Յովսէփ կաթողիկոս, երբեւ գլխաւոր քահանայից՝ տուաւ այն հարցափորձին պատասխան, բերանով Սահակայ եպիսկոպոսի, քանզի նա միայն գիտէր պարսկերէն։ Առաջարկուեցաւ, ասէ վկայաբանութիւնն, նախ Յովսեփայ կաթողիկոսին, ապա Ղեւոնդայ, ապա Մուշէի եւ Արշենայ երիցանց, եւ ապա Քաջաջայ, եւ հուսկ յետոյ Սահակայ եպիսկոպոսի՝ հնազանդել հրամանաց Թագաւորին.—«Ի վերայ ձերոց այնչափ յանցանաց եւ մահապարտութեան, արքայից արքայ առ ձեզ կարի բարերարութիւն արար, զի հրաման ետ եւ ասէ, Թէ հաւանին արեգական եւ կրակի երկիր պագանել եւ զմեր օրէնս յանձն առնուն պաշտել՝ նոցա զմահապարտութիւնն թողում, եւ զազատորեարն որ կապեալ է՝ արձակեմ ի Հայս, եւ զիւրաքանչիւր ուրուք զտէրութիւնն տամ եւ զգահ եւ զպատիւ։... Զայս ամենայն բանս խօսեցաւ Վեհդենշապուհ հանդերձ ընկերօքն իւրովք առ սուրբսն։ Հրաման տային երանելոյն Սահակայ եպիսկոպոսին թարգմանել սրբոյն Յովսեփայ եւ սրբոյն Ղեւոնդի եւ այլոց ընկերացն, քանզի սուրբ եպիսկոպոսն միայն գիտէր պարսկերէն, եւ այլ ոք ի սրբոցն ոչ գիտէր։... Պատասխանի տուեալ սրբոյ կաթողիկոսին Յովսեփայ ասէ, Թէ Եղեւ հարցմունք այդ առենաւ ի դրան առաջի Հազարապետին Արեաց Միհրներսեհի. եւ լուեալ ի մէնջ զբանս մեր եւ զկամս, զոր եւ Թագաւորին գիտել ետ. նոյն են մեր ամենեցուն կամք եւ բանք՝ եւ ոչ փոխեմք զբանս մեր»։ Եւ որովհետեւ ամենեքին մերժեցին խրատը, նա մանաւանդ Թշնամանս ես խառնեցին ի բանսն, — ըստ ոճոյ նախնի վկայից, որ կը տեսնուին ի հին՝ վկայաբանութիւնս,— կոչելով ոչ զիշխանսն միայն, այլ եւ զԹագաւորն «անմիտ», «կորուսեալ», «ողորմելի քան զամենայն Թշուառացեալս ի մարդկանէ», «ապշեալ», «բանդագուշեալ», «պակշոտեալ բանիւք», այլովքն հանդերձ՝—համբարակապետն չհանդուրժելով այլ եւս՝ ելաւ անձամբ ճեղքեց եպիսկոպոսին ուսը մինչեւ գօտին. այլ նա, ասէ վկայաբանն, ոչ միայն չանկաւ ի գետին, այլ եւ յենլով միւս բազկաւն ի քար մի՝ կ'աղօթէր, Թէպէտ արիւնը կը հոսէր գունդագունդ.— «Եւ սրտմտեալ անօրէն երեցունց իշխանացն, ոչ եւս առ ի յերկարմն հանդուրժել կարացեալ սրբոցն, որպէս շնորհ առնելով Թագաւորին ընդ այնչափ Թշնամանելոյ զնա, յարուցեալ ինքնին Վեհդենշապուհ առաջի գործակցացն իւրոց՝ հարկանէր սուսերաւ զուս սրբոյ եպիսկոպոսին Սահակայ, եւ հուպ ի գօտին մերձեցուցանէր զվէրսն, եւ սրբոյ եպիսկոպոսին ի սաստիկ հարմանէն դրդուեալ՝ ոչ գլորեալ անկանէր յերկիր, այլ ի քարի մի յեցեալ հաստատէր, եւ որպէս ի բերանոյ ամենայն սրբոցն սկսաւ ասել. Գոհանամք զքէն, Քրիս-

տոս... ընկալ զամենեսեան արժանաւորապէս զպատրաստեալսն ի հոտ անուշից: Թէպէտև յորդեալ հոսէին վտակք արեանն ի վերէ սրբոյն՝ սակայն կայր զօրացեալ ուժով շնորհօք հզօրին, որպէս զի չիցէ բնաւ վիրաւորեալ»: Յետոյ հրամայեցաւ գլխատել զկաթողիկոսն. ապա հրաման տրուեցաւ դահճաց քարշել զՂևոնդ ընդ քարուտն ընդ երկար, մինչև քերեցաւ բոլոր մարմինն. և մինչ կը քարշէին զնա՝ միւս մասն դահճաց գլխատեցին զՄուշէ և զԱրշէն երիցունս և զԲաջաջ սարկաւագ: Ղևոնդ բերուեցաւ կիսամեռ և գլխատուեցաւ, նոյնպէս Սահակ եպիսկոպոս, որոյ շունչը մօտ էր ի սպառել.—«Ապա հրամայէին և զսուրբ կաթողիկոսն Յովսէփ գըլխատել սրով... Իսկ յաղագս սրբոյն Ղևոնդի հրաման ետուն դահճացն անօրէն իշխանքն՝ մերկացուցանել զսուրբն և քարշել ուժգին ընդ քարաժեռ կոպճուտ տեղիս լանջակողմանցն, և այնպէս քարշեցին յերկար ժամս՝ մինչև զամենայն մարմինս սրբոյն զլանջացն և զթիկանցն քանցեալ քերեցին ի մորթոյն, մինչև ոսկերացն մերկանալ ի մորթոյն:... Եւ մինչդեռ կէսք ի դահճացն քարշէին զերանելին Ղևոնդ՝ այլք կտրեցին զգլուխ սրբոյ երիցուն Մուշէի և զսուրբ երիցուն Արշենայ և զսրբոյ սարկաւագին Բաջաջայ:... Եւ ապա աշխատեալ դահիճքն որ քարշէին զսուրբն Ղևոնդ՝ ածին ի նոյն տեղիս սուղ ինչ ոգւով ուր և այլ սուրբքն կատարեցան, և անդ հատին զգլուխ սրբոյն սուսերաւ:... Եւ սուրբ եպիսկոպոսն Սահակ կայր ևս սակաւ ոգւով, զորոյ յետ վախճանելոյն ամենեցուն՝ կտրեցին զգլուխն սուսերաւ»: Յետ այնորիկ մեկնեցաւ համբարակապետն ընկերօքն, թողլով ինն զինուոր պահապան, ընդ որս էր և Խուժիկն.—«Եւ գնացեալ ի բաց ի տեղւոջէն Վեհդենշապհոյ և այլ իշխանացն որ ընդ նմա էին՝ ընտրեալ արս ինն թուով թողին ի տեղւոջն կազմ զինու, ընդ որս նախ առաջին ըստ Աստուծոյ ազդեցութեանն զերանելի Խուժիկն ընտրէր Վեհդենշապուհ և թողոյր աղաչելով, որպէս զկարի սեպհականագոյն և պիտոյ իւրում հրամանին: Որոց հրաման տուեալ ասէին ցպահապանսն, թէ մինչև ցաւուրս տասն և կամ ևս աւելի պահեսցեն զգուշութեամբ զդիակունսն, որպէս զի գիշատեալք ի թռչնոց ընկեսցի այսր անդր ոսկրոտին ի գլուխս լերանց և կամ ի խորաձոր տեղիս քարանձաւաց, մինչև եկեալ անցցէ ի բաց կարաւանն արքունի. գուցէ, ասէ, եկեալք քրիստոնէիցն իրազգած յումեքէ եղեալ գտանիցեն զոսկերս նոցա, և առեալ սփռիցեն յամենայն քրիստոնեայս»:

**16.** Հաս հարկ է ցուցնել, թէ ով էր Խուժիկն, որոյ վկայութենէն որպէս թէ առնուած է այս պատմութիւն: Խուժիկս այս, ըստ աւանդելոյ Փարպեցւոյն՝ էր անծանօթ ոք ճանապարհորդ, որ

դիպուածով, կամ մանաւանդ աստուածային խմն տեսչութեամբ, ընտանենալով Վեհդենշապհոյ՝ լինի ականատես նահատակութեան Ղեւոնդեանց։ Բայց էր նա, իբրև բարեպաշտ քրիստոնեայ վաճառական, կանխաւ ծանօթ նախարարաց և քահանայից, որոց լեզուն ևս գիտէր քաջ։ Սա գտնուելով ըստ պատահման ի Վրկանս, երբ իմացաւ, թէ Վեհդենշապուհ կը տանէր քահանաներն ի Նիւշապուհ նահատակել զնոսա հրամանաւ թագաւորին, ցուցնելով զանձն ջերմ կրակապաշտ՝ յարեցաւ ի նա, և լինելով նմա սիրելի ի ճանապարհին՝ մնաց առ նմա, և լինելով ականատես մարտիրոսութեան վկայից՝ պատմեց յետոյ այն մարտիրոսութեան պատմութիւնը, պահելով աստուածային խմն ազդեցութեամբ ի մտի, ինչ որ տեսաւ և լսեց, նաև սքանչելեօք գողանալով նոցա ոսկրոտին բերաւ առ քրիստոնեայս։ Ահա պատմութիւն Փարպեցւոյն. «Զուէր այնուհետև ամբարապետն Վեհդենշապուհ հանդերձ քահանայիւքն ի Նիւշապհոյ ի վեցերորդ ժամու աւուրն ընդ ճանապարհն որ ելանէ ի Վրկանն։ Եւ լուեալ զայս առն միոյ վաճառականի որ էր ազգաւ Խուժիկ, որոյ ըստ օրինի վաճառականութեան շատ անգամ ճանապարհորդեալ էր ի Հայս, որ և զլեզու հայերէն խօսից քաջ տեղեկաբար գիտէր, և էր ինքն այր ի մանկութենէ իւրմէ կեցեալ առաքինի վարուք, եղեալ որդի քրիստոսասէր և հաւատացեալ ծնողաց, որ և զերանելի քահանայսն Աստուծոյ և զնախարարսն Հայոց որ ի կապանսն էին՝ յոյժ ընտանութեամբ գիտէր, առ որս և բազում ծախս յընչից և սպասաւորութիւն արարեալ էր մինչ ի Վրըկանին էին, ուշադրելով զամենայն օր և ակն ունելով մասին նախարաց սրբոցն ի կատարումն նոցա լինել արժանի։ Սորա լուեալ զհրաման թագաւորին՝ ճեպով և անյապաղ, ոչինչ զգացուցեալ ումեք, թողոյր զկարասին ի մանկունս իւր և յընկերս, և իւր առեալ ի գրաստուց իւրոց գրաստս տոկունս և ուժեղս, և նմանեալ առն կարաւանի գնայր ընդ ճանապարհ որ երթայր յԱպար աշխարհ, և ուղեկցեալ ճանապարհորդէր ընդ ամբարակապետին ընդ Վեհդենշապհոյ, ցուցանելով նմա զճանապարհայնն և յօթևանս ուր հանգչէին՝ բազում արթնութեամբ շուտութիւնս, և հաճոյ եղեալ Վեհդենշապհոյ ամենայն գործ հպատակութեան Խուժկին՝ սիրէր զնա յոյժ և խնամարկելով ողջունէր, վասն զի Աստուած էր որ յաջողէր զիրն։ Եւ եղեալ համարձակապէս յընդունելութեան մեծի իշխանին ընդ Խուժկին՝ հարցանէր զնա յաղագս գեղջն նորա և ծնողացն, թէ որպիսիք էին և ուստի։ Եւ Խուժիկն խօսէր ընդ նմա այլաբանութիւնս, սուտ պատճառս և դիպողս ըստ առաջարկելոյ իրաց գործոյն։ Որդի եղեալ եմ ես, ասէ, ծնողաց օրինաւորաց, որք ի

նախնեաց իւրեանց կրակի և արեգական հաւատարմապէս եղեալ են ծառայք, որոց զիս ի նոսա յանձնեալ է ի մանկութենէ իմմէ, և նոցա պահպանութեամբն կացեալ եմ ի միջի մինչև ցայսօր և կամ, ճանաչելով յայտնապէս յանձին իմում զաստուածոցն օգնականութիւն»։ Այսպէս բարեպաշտն Խուժիկ, որպէս զի ստանար սրբոց նշխարներն՝ կը խաբէ զՎեհդենշապուհ, կեղծաւորելով կրակապաշտ և նախանձաւոր պարսիկ, և միամիտ Փարպեցին կը ջանայ արդարացունել զնա օրինակաւ Պօղոսի. «Յիշելով, ասէ, երանելոյ Խուժկին զպատճառագրութիւնսն վարդապետին հեթանոսաց Պօղոսի, որ երբեմն հաւատովքն փարիսեցի լինէր, և դարձեալ այլուր հռոմայեցի, որ ոչ էր յայսցանէ ի ժամուն և ոչ մի, այլ հաւատովք՝ Աւետարանին քարոզ էր և վարդապետ, և քաղաքաւ՝ ի Կիլիկեցւոց գաւառէն էր Տարսոնացի. բայց զմիտս լսողացն առ վայր մի սայթաքեցուցանէր այսր անդր, զի զճշմարտութիւն աճեցուցեալ հաստատեսցէ։ Այսպէս և երանելի Խուժիկն պա· րողական բանիւք զմիտսն Վեհդենշապհոյ խնդացուցանէր ի ժամուն, որպէս զի զիւր տենչանս տարեալ ի գլուխ կատարեսցէ ըստ կամի։ Իսկ ամբարշտապետն Վեհդենշապուհ որպէս թէ յաստուածոց համարէր զպատահումն նմա Խուժկին, տեսանելով զայրն յամենայնի յաջողակ, և առաւել վարկանէր հաւատարիմ և ըմբռն գործոց իւրացն յոր երթայր. վասն որոյ և չտայր թոյլ առնն և ոչ ժամ մի հեռանալ յիւրմէ, այլ ի տուէ և ի գիշերի մօտ ունէր առ իւր բազում յորդանօք և սիրով, և հաւատայր նմա զխորհուրդ թագաւորին և զպէտս գործոյն յոր երթայր. վասն զի ըստ յառաջագոյն ասացելոցն՝ Աստուած էր որ տնտեսէր զիրսն ըստ իւրոց կամացն ի քակտումն և յամօթ անօրինացն, և յօգուտ և ի փառս եկեղեցւոյ իւրոյ սրբոյ։... Ապա պատճառէր երանելի Խուժիկն պէտս ինչ զիւր տեսանել այլուր, և խնդրէր աղաչելով հրաժեշտ ի Վեհդենշապհոյ. որով յամենայն կարծեաց հեռացուցեալ զմիտս ամբարշտապետին՝ առաւել հաւատարմագոյն ցուցանէր նմա զինքն, գիտելով յազդեցութենէ սուրբ հոգւոյն, եթէ չտայ թոյլ Աստուած արձակել զնա նմա։ Իսկ Վեհդենշապուհ և ընաւ իսկ ոչ առնոյր յանձն լսել բանից Խուժկին, այլ ասէր ցնա գաղտ, եթէ Դու որ օրինօք սնեալ ես և կեաս ի ի փառս կրակաց, ո՞չ կաս առ իս յօժարութեամբ և տեսանես զկորուստ անօրէն կրակապաշտ մահապարտացն և ուրախանաս։ Եւ երանելոյ Խուժկին լուեալ զայնպիսի բանս յամբարշտապետէն՝ մեծաւ երկրպագութեամբ շնորհ ունէր սիրոյն Վեհդենշապհոյ և... խնդրէր ի Բարձրելոյն շնորհել նմա ուշ և լայնութիւն սրտի, որով արժանի լիցի գրել հաւաստեաւ ի տախտակս մտաց իւրոց որպէս

յորձանագրի զամենայն հարցմունս բռնաւորացն, և զպատասխանիսն և զաղօթսն զոր իւրաքանչիւր ոք սրբոցն ի ժամ կատարման մատուցանէր Աստուծոյ, որպէս զի պատմել ճշմարտապէս կարասցէ ի կարգի առ ի յիշումն ամենայն հաւատացելոց լսողաց յազգս յաւիտենից:... Իսկ Վեհդենշապուհ ի սկզբանն ոչ համարէր արժանի պատմել Խուժկին զսուրբ քահանայիցն, զոր ինչ գործելոց էր ընդ նոսա, այլ ասէր թէ ի Վրկան տանիմք և անդ արձակեմք»: (Թէպէտ ըստ նոյն Փարպեցւոյն՝ արդէն յայտնած էր նա Խուժկին, թէ պիտի սպանուէին քահանայքն, քանզի, ինչպէս տեսանք՝ կը յորդորէր զնա մնալ և «տեսանել զկործուստ անօրէն կրակապաշտ մահապարտացն»): Բայց փոխանակ երթալու ի Վրկան՝ կ'երթան անծանօթ և անապատ տեղեր հանդերձ դահճօք, և Խուժիկ որ իբրև վաճառական հմուտ էր այն տեղերուն՝ չիմանար դաւը.— «Եւ երթային այն օր ի գիւղ մի որում անուն էր Ռևան, հեռի ի Նիւշապհոյ որպէս հրասախօք վեցիւք. դադարէին անդ մինչև ցառաւօտուն պահն: Յարուցեալ ապա փութով գաղտ, երանելի Խուժկաւն և անօրէն դահճօքն գնային ընդ անկոխ անապատն հեռի ի գեղջէն... ի տեղի մի քարուտ, առապարաձոր, աւազուտ, ի տեղի յոր ոչ հասանէր արտական, և ոչ բնաւ անցանէր ընդ նա ուղևոր՝ վասն ոչ գիտելոյ երբէք ի նմա ճանապարհ»: Բայց Եղիշէ կ'ազատէ զմեզ այս դժուարութենէն ասելով, թէ Խուժիկ ոչ թէ վաճառական էր մտերմացեալ Վեհդենշապհոյ, այլ էր «ի զօրացն արքունի, վիճակեալ ի դասս դահճացն, և կայր ի սպասու օրապահացն հանդերձ գործիական տանջանարանօքն», այսինքն վերակացու դահճաց և պահապան տանջանաց գործիներուն: Յայսմ կը միաբանի ինք և Փարպեցին, քանզի ասէ, թէ յետ նահատակութեան քահանայիցն, երբ Վեհդենշապուհ կը մեկնէր ընկերներովն՝ և դիակունք սրբոցն յանձնուեցան պահապանաց՝ Խուժիկն, իբրև հաւատարիմ, կարգեցաւ վերակացու պահապանաց.—«Եւ գնացեալ ի բաց ի տեղւոջէն Վեհդենշապհոյ և այլ իշխանացն որ ընդ նմա էին, ընտրեալ արս ինն թուով՝ թողին ի տեղւոջն կազմ զինու, ընդ որս նախ առաջին ըստ Աստուծոյ ազդեցութեանն զերանելի Խուժիկն ընտրէր Վեհդենշապուհ և թողոյր աղաչելով, որպէս կարի սեպհականագոյն և պիտոյ իւրում հրամանին: Որոց հրաման տուեալ ասէին ցպահապանսն, թէ մինչև ցաւուրս տասն և կամ ևս աւելի պահեսցեն զգուշութեամբ զդիակունսդ»: Մինչ կը խորհէր Խուժիկ, թէ ինչպէս գողանար սրբոց մարմիններն՝ սքանչելի իմն դիպուած, նման այնմ որ պատահեցաւ ի յարութեան Փրկչին, ցրուեց պահապանները, և Խուժիկ կրցաւ դիւրաւ և աներկիւղ

բառնալ մարմիններն ըստ իւրում ցանկութեան.—«Եւ մնացեալ անդ պահապանացն ըստ հրամանին Վեհգենշապհոյ և Մովան անդերձապետի և Զնիկանայ մայպետի, և կացեալք զայն աւուրս՝ խորհէր ի միտս իւր երանելի Խուժիկն, եթէ զինչպիսի հնարիւք ցուցանիցէ Աստուած ճանապարհ առնն, որով արժանի լիցի գողանալոյ զնշխարս սրբոցն յայլոց պահապանացն։ Եւ մինչդեռ երանելին յայնպիսի վտանգի կայր՝ յանկարծակի ի նմին աւուր յերեկորեայ գիշերոյն լինէր շարժումն մեծ ի տեղւոջն. բոմբիւնք սաստիկք և ձայնք ահագինք յանդնդոց հնչէին, կուտեալք բազմութիւնք ամպոց զերկինս ծածկէին, ձայնք որոտմանց և փայլատակունք զլերինս դողացուցանէին, և սեւն լուսոյ ըստ օրինակի ծիածանի իջեալ յերկնից շուրջ պարուրեալ զնահատակաց զմարմինս ծրափակէր, և կործանեալ յերկիր պահապանքն կիսամեռք լինէին, չգիտելով այր զընկեր բնաւ որդեօք թէ ո՞ւր իցէ. որք և գլորեալք յերկիր՝ ոչ կարէին կալ հաստատուն, քանզի դողումն մեծի շարժմանն ի վեր ոստուցեալ զնոսա ընկենոյր յերկիր, և այսպէս կքեալ ոտիւք և կարկեալ խօսիւք լինէին խորտակեալք ամենեքեան։ Իսկ զերանելի Խուժիկն աջ հզօրին պահէր անհոգս. ուրախալից մտօք փառաւորէր զԱստուած, իմացեալ այնուհետեւ, թէ արդ հաստատ կատարին բազմաժամանակեայ կամաց իւրոց խնդիրք։ Եւ կատարեալ միապէս երկիւղիւ զգիշերն ողջոյն և զտիւն բովանդակ և զերկրորդ ևս գիշերն մինչև ի ժամ արեգական ծագման՝ և ապա լռէին ձայնք անդնդոցն հնչմանց, և որոտմունք ամպոցն փարատեալ ցածնուին, և դադարէր երկիրն ի շարժելոյ, և ցայտմունք փայլատակմանցն ամփոփէին յերեւելոյ, և լինէր այս լոկ շուրջ զտեղեաւն իբրև ասպարիսօք երկուք։ Իսկ պահապանքն յահագին ապշութենէ թմրութեանն սակաւիկ մի ոգի առեալ՝ աչս ածէին փախչելոյ ի տեղւոջէն. այլ ի յոյժ բեկմանէ սրտիցն յերկիւղէ՝ ոչ կարէին կանգնել յերկրէն, լոկ հայէին և եթ ընդ միմեանց դէմ, և խօսել ինչ ոչ կարէին։ Բայց զինն ժամու աւուրն երրորդի յարուցեալ երանելի Խուժիկն, որպէս թէ կամաւ կաղս ի կաղս, հայելով զկնի իւր՝ փախչէր ի տեղւոջէն, զի զնոսա զօրացուսցէ ի կանգնել և զկնի իւր հեռացուցանել ի վայրացն։ Որոց տեսեալ զերանելի Խուժիկն, զի երթայր խեկբեկս յընթացի՝ ուշաբերեալք առ վտանգին զկնի նորա սրանային ի տեղւոյն, չիշխեցեալք բնաւ դառնալ և հայել ի տեղիսն առ երկիւղի. և պնդեալք զհետ Վեհգենշապհոյ և գործակցացն նորա փութային. բայց երանելի Խուժիկն ընդ այլ ճանապարհ որոշէր ի նոցանէն։ Եւ հասեալ պահապանացն առ իշխանն յաւուրն վեցերորդի, պատմէին զամենայն անցս աղետիցն որ ան-

ցին ընդ նոսա զտիւ մի և զգիշերս երկուս. զորոց զգօյն երեսացն տեսեալ Դենշապհոյ և ընկերացն նորա, և զանցս ահագին իրացն մի ըստ միոջէ լուեալ՝ զարհուրէին, և ապշեալք ի բազում ժամս հիանային։ Խորհուրդ ի մէջ առեալ ոչինչ կարէին իմանալ հնարս, բայց զպահապանսն ևեթ լռեցուցանել ջանային՝ չյայտնել ումեք ամենևին, և ոչ բնաւ յիշել ումեք զմահ քահանայիցն և կամ զայնպիսի նշանաց երևմունս»։ Եւ ոչ այսչափ միայն. ըստ վկայաբանին զարմանալով քրիստոնէութեան մեծ զօրութեան վրայ՝ կը համարէին զանձինս մոլորեալ և կորուսեալ.– «Բայց ինքեանք միայն խոճոճելով առանձինն զարմացմամբ որպէս յանդգայութիւնն ընկղմէին, ասելով Դենշապուհ և Ջնիկան ցմիմեանս, եթէ Ոչ են իրք քրիստոնէից թեթև իմն և դուզնաքեայ. այլ հաստատ մեծ է զօրութիւն օրինաց նոցա և հաւատոց, և մեք յանդիտութեան մնացեալ կորնչիմք և չզգամք։ Իսկ երանելի Խուժիկն գիտացեալ, թէ ցածոյց Աստուած զամենայն կասկած յամենայն կողմանց, այլ և զպատասխանիսն իշխանացն լուաւ զոր ինչ պահապանացն արարին, և թէ ոչ ոք առնէ փոյթ ոսկերացն սրբոց՝ առեալ ընդ իւր տասն ևս այլ ընկեր, զորոց կարի քաջ գիտէր զհաւատս քրիստոնէութեանն՝ առնուին ընդ ինքեանս և զրաստս, և ըստ իւրաքանչիւր անձին սրբոցն ստապատս չորեքկուսիս։ Գնացին լռելեայն ի գիշերի, և մերձեալք ի վայրն՝ վրիպէին ի տեղւոյն ուր մարմինք սրբոցն կային, քանզի յոյժ աղջամղջին էր գիշերն. և աշխատեալք առ վայր մի՝ տրտմէին, անարժանս կարծեցեալ զանձինս գիւտի երկնաւոր գանձուն»։ Վկայաբանն անտարակոյս գիտմամբ կու տայ Խուժկին երթալ ի մթան առանց լապտերաց և ջահերու, որպէս զի մուծանէ նոր սքանչելիս։ «Եւ մինչդեռ, ասէ, նոքա խռովեալք յածէին ընդ տեղիսն՝ և ահա յանկարծակի նմանութիւն լուսաւոր արծուոյ սլացեալ հասանէր յերկնից, և իջեալ նստէր ի վերայ մարմնոյ սրբոյ տռն Աստուծոյ Ղևոնդի. և լուսաւորեալ տեղիքն առաւել ևս քան ի տուէ՝ երևէին յայտնապէս մարմինք իւրաքանչիւր սրբոցն։ Եւ նոցա ուրախալից սրտիւք զուարճացեալք երկիր պագանէին Տեառն Աստուծոյ, և ձեռն ի գործ արկեալ ժողովեցին զիւրաքանչիւր ոք յականէ ի մի մի ստապատ, որպէս նշմարեալ երևէր իբրև գրով երանելի Խուժկին. յորոց բուրեալ հոտ անոյշ ի մարմնոց սրբոցն՝ լցեալ զուարթացուցանէր զամենեցուն զգայութիւն խելացն։ Եւ բարձեալ փոփոխակի զրաստուց՝ փոխէին յայլ տեղի յանապատին, հեռի ի տեղւոյն իբրև երիւք պարսիկ հրասախօք, և դադարեալ աւուրս եօթն վասն քաջ ցածնլոյ իրաց երկիւղին՝ ապա մաքրեցին զոսկերս սրբոցն յանուշահոտ մարմնոցն,

զոր և պատեալ արժանաւորապէս Թաղէին պատուով անդէն յանապատին զգուշութեամբ, և զոսկերսն առեալ բերէին ի շահաստանն, և աւուրս բազումս ունէին առ ինքեանս ի ծածուկ»։

Ըստ Փարպեցւոյն՝ Խուժիկ այն ոսկրներէն կը բաժնէ Հաւատացելոց, բայց նախ իբրև երախայրէ կը բերէ կապեալ նախարարաց, որ ուրախութեամբ կ'ընդունին, համարելով զայն նշան իւրեանց արձակման և դարձին ի Հայս.—«Ապա լուեալ սկսանէին (Խուժիկ և ընկերք նորա) տալ ոմանց առաքինի քրիստոնէից որք ի կարաւանին էին, որք ընդունէին հաշուելով գին փրկութեան ոգւոց և մարմնոց. և ստիպով յիւրաքանչիւր աշխարհս տային հասուցանել վաղվաղակի։ Բայց զառաջին պտուղ աստուածաշնորհ մեծի գանձուն բերեալ նախ երանելոյ Խուժկին մատուցանէր կապելոց նախարարաց Հայոց. որք իբրև արժանի եղեալք ընդունէին զայնպիսի փրկութեան զիւրեանց զգիւտն, անդէն և անդ ճանաչէին, թէ այցելութեամբ այց առնէ նոցա Աստուած, և երբ և է արձակին ի կապանացն, բարեխօսութեամբ ոսկերաց սրբոցն, ըստ բանի առն Աստուծոյ Ղևոնդի»։

Այս Խուժիկ, զոր Փարպեցին չհամարիր արժան կոչել այս անուամբ, որ կը նշանակէ Խուժաստանցի—քանզի բուն անունն էր անծանօթ—պատմեց կապեալ նախարարաց, թէ ինչպէս աստուածային խնամով լեալ սիրելի Վեհդենշապհոյ՝ արժանացաւ լինել ականջալուր հարցափորձի սրբոցն և ականատես նահատակութեան նոցա, մինչև ի վախճանի ամփոփել զպատուական նշխարսն.—«Սկսեալ այնուհետև մի ըստ միոջէ պատմել կապելոց նախարարացն Հայոց երանելի այրն Աստուծոյ Խուժիկն, (զոր անուանել յայսմ հետէ Խուժիկ ծանրանամ, և զանուն սքանչելւոյն ոչ ոք հոգացեալ պատմեաց մեզ, այլ ամենագէտն գրեալ պահէ յօր մեծ այցելութեանն, և պարգևէ առատապէս զվարձս վաստակոց նորա ըստ հաճոյս անուան իւրոյ) ասէր և ոչ լռէր զխնամս մեծամեծս և զօգնութիւն Հզօրին զոր արարեալ էր նմա, և եթէ որպէս ի Վարդգէս յայտնեալ Քրիստոսի զխորհուրդ Թագաւորին ծանոյց նմա, և ուղեկցեալ առաջնորդեաց նմա յուսով։ Մեծարոյ, ասէր, և հաւատարիմ առաջի Դենշապհոյ համբարակապետի երևեցայց գիս, մինչ զի աղաչելով գիս բռնի տանել անօրինին ի ձեռն Հզօրին Աստուծոյ ի տեղի տենչալի նահատակութեան սրբոցն, որում կամաց հընարաւոր է ամենայն, որ եղէ արժանի տեսանել զամենայն՝ զոր ոչ կարծէի լսել, և տեսանել մի ըստ միոջէ՝ որում ոչ արժանի լըսելոյ համարէի զանձն իմ. զհարցումն բռնաւորացն և զպատասխանիսն միոյ միոյ սրբոցն, զաղօթս և զկատարումն զիւրաքանչիւր

անձին տեսի կարգաւ և յուայ. աՀա արդ և մեծի մասին ձերոյ անձանձրոյթ խնդրելով՝ զիս անարժանս արժանի արար շնորՀ սուրբ Երրորդութեանն, մինչև երկնաւոր զանձու նշխարացն սրբոցն գտայ լինել բերող. փախոյց ամօթով զպաՀապանսն տագնապեալս, զորՀուրեցոյց զանՀաւատ զվերակացուացն զսիրտս, ցրուեաց զանմիտ թագաւորին զխորՀուրդս և բարձրացոյց զանուն եկեղեցւոյ իւրոյ սրբոյ»: Այս Համառօտութիւնն էր, զոր Խուժիկ, ըստ Փարպեցւոյն, կը պատմէր Հաւատացելոց. զնոյն կը յիշէին ստէպ և կապեալ նախարարք, մանաւանդ Արշաւիր Կամսարական, որմէ իբր թէ առնըլով գրած է Փարպեցին.—«Նոյն խօսք և մխիթարութիւն էր յաւէտ կապելոց նախարարացն Հայոց յելս և ի մուտս իւրեանց, ի նստել ի տան և յառնել, ի տօնս և յամսագլուխս. զոր և պատմեալ անյագ ցնծութեամբ զուարճացուցանէին նորոգելով զամենայն մեղկեալ միտս լսողացն, և Հաստատէին ի Հաւատս արդարութեան. և մանաւանդ տէրն Արշարունեաց Կամսարականն Արշաւիր... պատմէր անձանձրոյթ Հանապազ: Զոր և մեր յոլովագոյն լուեալ ի Հրաշալի Կամսարականէն գրեցաք յօժարապէս Հոգալով. զոր թէպէտ ըստ տկարութեան մերոյ ոչ եղեաք բաւական յիշել զբովանդակն ի կարգի՝ այլ և ոչ բնաւ գտեալ անյուշք յապաղեալ մոռացաք ինչ ծուլանալով»:

**17**. Մինչև ցայս վայր Փարպեցին: Գանք այժմ Եղիշէի, որոյ գլխաւոր տարբերութիւնները միայն խոստացանք յիշել: Ինչպէս Փարպեցին, նոյնպէս Եղիշէ, որպէս ասէ՝ առաւ Ղեւոնդեանց նաՀատակութեան պատմութիւնն ի Խուժկէն, իբրև ականատես վկայէ, սա տարբերութեամբ, որ Փարպեցին առաւ որպէս թէ լսելով ի բերանոյ Արշաւրի Կամսարականի, իսկ Եղիշէ նոյն իսկ Խուժկէն.—«Այս երանելի Խուժիկս որ արժանի եղև ի ծածուկ սպասաւոր լինել սրբոցն, որ ինչ ի մաՀուանէն և այսր ասացաւ զատակնիք վճռիս ասորիկ՝ սա երկրորդեաց մեզ զամենայն կարգաւ—զչարաչար քարշումն, և զՀարց և զփորձ դատաւորացն, և զիւրաքանչիւր անձանց սրբոցն զպատասխանիսն, և զկատարումն մաՀուան նոցա, և զաՀագին արՀաւիրսն որ ի վերայ պաՀապանացն անկաւ, և զՀեծեծումն քննութեան նախարարացն երեցունց, և զամփոփումն սուրբ ոսկերացն նոցա»: Գալով Խուժկին անձին և պաշտաման՝ Եղիշէ բոլորովին կը տարբերի ի Փարպեցւոյն: Ըստ Եղիշէի, ինչպէս յիշեցինք՝ Խուժիկ ոչ թէ վաճառական էր, ըստ դիպաց իմն մտերմացեալ ԴենշապՀոյ, որպէս պատմէ Փարպեցին, այլ էր արքունի զինուոր դաՀճաց դասէն, և իբրև այսպիսի՝ եկած էր երեք իշխանաց Հետ.—«Այր մի Խուժիկ անուն ի զօրացն արքունի, որ ի ծածուկ

ունէր զքրիստոնէութիւնն և վիճակեալ էր ի դասս դահճացն, և կայր ի սպասու օրապահացն հանդերձ գործիական տանջանարանօքն, եկն եմուտ ի մէջ գիշերին և խառնեցաւ ի դասս նոցա... և ոչ ոք ի նոցանէ եհարց, եթէ Դու ո՞վ ես ընդ մեզ, ոչ ի տերանցն և ոչ ի սպասաւորացն»։ Եթէ Խուժիկ, որպէս ասէ Եղիշէ, «էր վիճակեալ ի դասս դահճաց»՝ աւելորդ էր նոցա հարցանել, թէ «Դու ո՞վ ես ընդ մեզ»։

Ոչ սակաւ կը տարբերին առ երկոսին և հարցափորձք թէ ըստ կարգին և թէ մանաւանդ ըստ նիւթոյն։ Առ Փարպեցւոյն, ինչպէս տեսանք՝ Վեհդենշապուհ և ընկերք նորա ի կողմանէ Թագաւորին կը հրաւիրեն զքահանայս ի կրակապաշտութիւն, խոստանալով ներել նոցա և արձակել։ Առ այս կը պատասխանէ Յովսէփ կաթողիկոս, ցուցնելով թէ անհնար էր նոցա ընդունել այն հրաւէրը։ Յետոյ Վեհդենշապուհ կը մատուցանէ նոյն յորդորն առանձինն Ղեւոնդայ, որ նոյնպէս կը մերժէ համառօտիւ, ասելով թէ չէ արժան երկրաւոր դիւրութեան և փառաց համար տալ յաւիտենականը, և թէ պատրաստ են մանաւանդ մեռանել և ազատել այս անցաւոր աշխարհէս։ Յետոյ երբ Վեհդենշապուհ դարձեալ կը ջանայ յորդորել զնոսա բերանով Սահակայ, որ էր Թարգման՝ Սահակ յանձն չառնուր խօսել, նա մանաւանդ կը յաւելու թշնամանս ևս իշխանաց և Թագաւորին, ուստի և Վեհդենշապուհ բարկանալով կը կտրէ սրով Սահակայ բազուկը մինչև գոտին։

Առ Եղիշէի ևս նոյն հրաւէր կը մատուցուի քահանայից յանուն Թագաւորին, այսինքն ընդունել կրակի պաշտօնը և արձակուիլ պատուով. բայց պատասխան տուողն է ոչ Յովսէփ կաթողիկոս, ըստ Փարպեցւոյն, այլ Ղեւոնդ երէց, որ կը խօսի երկայն բանիւք, բոլորովին աննման բանից՝ զոր Փարպեցին կը դնէ ի բերան Յովսեփայ։ Յետ Ղեւոնդայ կը խօսի Սահակ արեգական և կրակի վրայ, փիլիսոփայելով երկար և յանդիմանելով կրակապաշտից կուրութիւնն հեգնութեամբ և թշնամանօք, մինչ առ Փարպեցւոյն այս իմաստով խօսք ամենևին չկայ Սահակայ բերանը դրուած։ Յետոյ Եղիշէ կը դնէ ի բերան Դենշապհոյ՝ Սահակայ եպիսկոպոսի և Յովսեփայ վրայ գովեստ, և Ղեւոնդայ դէմ պարսաւ։ Առ այս կը պատասխանեն երկայն բանիւք նախ Յովսէփ և ապա մանաւանդ Ղեւոնդ հոգևոր բժշկութեան օրինակաւ։ Փարպեցին չգիտեր ո՛չ այս գովեստն և պարսաւը, և ոչ Յովսեփայ և Ղեւոնդի պատասխաններն. չգիտեր նաև ո՛չ Սահակայ դէմ վերջին խիստ հարցափորձը, որով որպէս թէ կամէր Դենշապուհ ստուգել, թէ արդարև Սահա՛կ աւերեց ատրուշանն ի Ռշտունիս, և ոչ Սահակայ երկայն և հեգ-

նուկան պատասխանն, ընդ որ զայրանալով Դենշապուհ կտրեց սրով Սահակայ աջը թիկամբն հանդերձ։ Համառօտիւ, ինչ որ քահանայից հարցափորձին և պատասխաններուն վրայ գրուած է առ Փարպեցւոյն և առ Եղիշէի՝ չէ ամենևին միաբան։

Յայտնի անմիաբանութիւն կայ ի մէջ Փարպեցւոյն և Եղիշէի նաև տանջանաց և սպանման եղանակին վրայ։ Ըստ Եղիշէի՝ նախ վեց վկայք միանգամայն պարանօք կը քարշուին չարաչար, մինչև չմնալ խայծ ի մարմինս նոցա.—«Նախարարքն երեքեան հրամայեցին դահճացն իւրեանց կապել զոտս և զձեռս նոցա. և արկին պարանս երկայնս յոտս նոցա, և երկու երկու լծեցան և առին ի քարշ։ Եւ այնպէս ձգեցին և ճողքեցին ընդ ապառաժ տեղիսն քարշելով, զի ամենևին խայծ ոչ մնաց ի մարմինս երանելեացն». ուր ըստ Փարպեցւոյն՝ Ղևոնդ միայն կը քարշուի, և Ղևոնդայ միայն և ոչ այլոց քարշուելուն պատճառը կու տայ Փարպեցին, վասն զի «զերանելի այրն Աստուծոյ զՂևոնդ առաւելագոյն առէին ամենայն Պարսիկք խրատտու և պատճառ լինել ամենայն իրացն Վարդանայ և գործոցն՝ որ ի ժամանակին յայնմիկ գործեցան յաշխարհիս Հայոց»։ Ըստ Եղիշէի՝ մին ի քահանայից, Արշէն, կը պրկուի այնպէս պրնգով՝ մինչև կը ճարճատին ոսկերքն.—«Հրամայեաց զմի ոմն ի կրօնաւորացունիցն յառաջ մատուցանել, երէց մի Արշէն անուն. կապեցին զոտսն և զձեռսն, և մեծաւ ուժով պրկեցին, մինչև ճարճատիւն հատաւ ամենայն ջղացն, և այնպէս կայր մեծ ժամս յանհնարին պրկոցսն». առ Փարպեցւոյն չիք այսպիսի ինչ յիշուած։ Ըստ Եղիշէի՝ երբ Դենշապուհ և ընկերքն կը լսեն նշանները, որ որպէս թէ կատարուեցան յետ մահուան սրբոցն՝ կը խօսին այսպէս. «Զինչ գործեսցուք, զինչ արասցուք վասն անքնին աղանդոյն քրիստոնէիցն. քանզի մինչդեռ կենդանի էին՝ զարմանալի էր կեանք նոցա. ընչատեացք էին իբրև զանկարօտս, սրբասէրք էին իբրև զանմարմինս, անաչառք էին իբրև զարդարադատս, աներկիւղք էին իբրև զանմահս։ Եթէ զայս ամենայն ասեմք իբրև զոգիոց և իբրև զյանդգնելոց, իսկ զայն զի՞ առնիցեմք, զի ցաւոտք ամենայն ի կարաւանի աստ նոքօք առողջանան. և կամ որ մեծս է քան զամենայն՝ ո՞յր ուրուք դի կանգնեալ երևեցաւ ի կենդանեաց, կամ բարբառ բանից ո՞վ լուաւ ի նմանէ։ Զի սուտ չեն մեր սպասաւորքն. մեր մեզէն իսկ հասեալ է ի վերայ ստուգութեան սոցա։ Եւ եթէ կամեցեալ էր սոցա մարմնաւոր ինչ ագահութիւն ի ներքս խառնել՝ սակաւ մի ակնարկէին քրիստոնէից ի կարաւանիս, զկշիռ իւրաքանչիւր մարմնոյ նոցա ոսկի առնուին։ Դարձեալ և արքդ որ ի դիւէ չարչարեցան, զի յայնժամ ցաւոտք չէին և մեք գիտեմք. յայտ է

եթէ այսօր նշան մեծ երևեցաւ։ Եթէ լուռ լինիմք՝ այսպէս մեզ և անձանց մերոց կամակ իսկ է, և եթէ տանիմք զդոսա առաջի Թագաւորին, լսելով նորա ի զոցանէ զայդ ամենայն մեծամեծ սքանչելիս՝ զուցէ և օրինացս մերոց քակտումն ինչ հասանիցէ»։ Այս բանք, որ կը ցուցնեն զարմացումն մեծ ի նպաստ քրիստոնէութեան՝ անտարակոյս գիւտ են Եղիշէի, որ սովոր է այս ոճով տալ խօսել մէշնամեաց քրիստոնէութեան։ Մոգպետն տեսնելով իշխանաց այս երկմիտ տարակոյսը՝ կը պատասխանէ։ «Ետ պատասխանի մոգպետն և ասէ ցնոսա. Ո՞չ գիտ ոստիկան արարին ի վերայ ձեր երկոցունցդ. զի՞ այդպէս նեղեալ տագնապիք յանձինս ձեր. դուք զգործ ձեր կատարեցէք, և զհրամանն արքունի ի գլուխ տարայք։ Արդ եթէ համբաւդ այդ յայտնեսցի, և հարցափորձ ինչ լինիցի առաջի արքայի՝ այդ խնդիր մեր մոգաց է. դուք անհոգ լերուք, և մի ինչ ածէք զմտաւ»։ Յայսմ ևս չէ միաբան Փարպեցին. առաջին մասն, իշխանաց խօսելն ընդ միմեանս համբաւեալ նշանագործութեան վրայ՝ է տարբեր պատմուած. իսկ վերջին մասն, այն է քաջալերել մոգպետին զիշխանսն, փարատելու համար զերկիւղ և զտարակոյս նոցա՝ բոլորովին կը պակսէ առ Փարպեցւոյն։ Այսչափ տարբերութիւն բաւական է կասկածելի ընել պատմութեան աղբիւրը. մինթէ Խուժիկ մյլազգ պատմեց Արշաւրի Կամսարականի, որմէ որպէս թէ առած է Փարպեցին, և մյլազգ Եղիշէի, որ կը կարծեցունէ թէ առաւ ուղղակի Խուժիկէն։

Մեծագոյն տարբերութիւն ի մէջ Փարպեցւոյն և Եղիշէի՝ է մոգպետին գործը, որ է նմանութիւն գործի բանտապետին Գործոց առաքելոց (Գործ. ԺԶ. 25 — 34), և զոր չգիտեր Փարպեցին։ Այս մեծ տարբերութիւնը բաւական է տալ կարծել, թէ երկու պատմիչք, Փարպեցին և Եղիշէ, տեսած չեն զիրար։ Ըստ Եղիշէի՝ նախարարք Հայոց և քահանայք տարուելով ի Նիւշապուհ՝ կը յանձնուին քաղաքին մոգպետին, անուանի մոգութեամբ, որ սաստիկ կը տանջէ զկալեալսն, մանաւանդ զքահանայս, զատելով զնոսա նախարարներէն և դնելով ի խոնաւ և ի մութ բանտի, տալով նոցա սակաւ մի հաց և ջուր։ Յետ նեղելոյ զնոսա այսպէս երբեմն քառասուն օր, տեսնելով նոցա պնդութիւնը՝ կը կարծէ, թէ սպասաւորներէն մին կու տար նոցա գաղտ ուտել, ուստի կ'երթայ կընքել անձամբ զդուռն բանտին, և հաւատարիմ մարդոց ձեռօք կու տայ նոցա ռոճիկ։ Սակայն պահապանք տեսնելով զնոսա տակաւին առողջ և զուարթ՝ զարմանօք կը պատմեն մոգպետին, որ անձամբ երթալով գիշերի և նայելով բանտին պատուհանէն՝ կը տեսնէ զնոսա լուսոյ մէջ. կը հիանայ և իսկոյն կը հրամայէ հանել սուր-

քերն ի բանտէն և պաՀել զնոսա ցամաք վերնատուն մի. յետոյ ինքն անձամբ երթալով յայցելութիւն նոցա՝ կ'սկսի աղօթել ընդ նոսա։ Յետ աղօթիցն կը ննջեն, բայց մոգպետն որ արթուն էր՝ կը տեսնէ յանկարծ բոլոր տունը լուսաւորուած, և լուսեղէն սանդուղներ, ընդ որս կ'ելլէին յերկինս գունդ գունդ զինուորներ, որոց մէջ տեսաւ յանուանէ զՎարդան ուրիշ ընկերներով, որ կը բերէին ինն պսակ։ Ի վաղիւն մոգպետը կը տանի սուրբերն Հանդերձ նախարարօք ի տուն իւր, ուր կ'ուղղուի աւազան, և մոգպետը կը մկրտուի Հանդերձ ընտանեօք։ Յետոյ կը Հաղորդուին կենարար խորՀրդոյն, և կը բազմին ի սեղան մեծ ուրախութեամբ։ Ի ժամ ճաշոյն սուրբն Յովսէփ իբրև երկնաւոր ազդեցութեամբ կ'իմացունէ, թէ վաղիւ նոյն ժամուն պիտի ընդունէին մարտիրոսութեան պսակը։ Բոլոր գիշերը կ'անցունեն աղօթիւք, և ի ծագել առաւօտուն դաՀիճներն Հասնելով բանտին դուռը՝ կը մտնեն ներս և կը գտնեն զմոգպետն ընդ նոսա։ Զարմանք է որ քաՀանայք, որ տարուած էին Հանդերձ նախարարօք մոգպետին տունը երեկոյին՝ առաւօտուն, ի գալ դաՀճաց, կը գտնուին բանտին մէջ մոգպետին Հետ իբրև կապեալ։ Զիարդ և իցէ՝ այս լուրը կը Հասնի բերանով ԴենշապՀոյ յունկն Թագաւորին, որ կը Հրամայէ նմա կոչել զմոգպետն ի Հարցափորձ, և եթէ գտնէ զնա յամառեալ՝ տալ սպանանել գաղտ, նոյնպէս կորուսանել զքաՀանայսն։ Ըստ Հրամանին կը կատարուի գործն։ ԱՀա բանք Եղիշէի. «Մոգպետն (ՆիւշապուՀ քաղաքին) որում յանձն արարեալ էր զնոսա (Թագաւորն)՝ բազում անգամ առաւել քան զՀրամանն արքունի չարչարեալ էր զնոսա, քանզի իշխան դենպետ էր Ապր աշխարՀին, և առաւել ջերմագոյն էր ի մոգութեան։... Եդ սնոտի կարծիս ի մտի՝ անդադար չարչարել զնոսա, զի թերևս առ չժուժալ մարմնոյն նեղութեանց՝ լուայց ի նոցանէ բանս ինչ ողոքանաց։ Վասն որոյ գատ և որոշեաց ի նախարարացն զքաՀանայսն, և Հեռացոյց ի նոցանէ բացագոյն, և արկ զնոսա ի ներքնատուն մի գէճ խաւարչտին։ Եւ Հրամայէր վեցառն երկու քաշկէնս ժամէ ի ժամ, և գորակ և կէս ջուր, և ամենևին ոչ զոք թողոյր մօտ երթալ ի դուրս բանտին։ Եւ իբրև աւուրս քառասունս այսու նեղէր զնոսա, և ոչ լուաւ ի նոցանէ բանս թուլութեան՝ այլ իմն ած զմտաւ, եթէ ոք յիւրոց ծառայիցն գաղտ եգիտ ինչ ի նոցանէ, և ի ծածուկ տացէ նոցա կերակուր։ Ինքն երթեալ կնքէր զերդ և զդուռն բանտին, և զկարգեալ ռոճիկն տայր յիւր Հաւատարիմն տանել նոցա. և արար զայս աւուրս Հնգետասան։ Սակայն և այնպէս երանելիքն ոչինչ շտապեալ տագնապեցան, այլ մեծաւ Համբերութեամբ տանէին զճգնութիւնն, և ան-

դադար սաղմոսիւք կային ի հանապազորդ պաշտամանն, և ի կա-
տարել աղօթիցն զուարթագին գոհանալով՝ սակաւիկ մի հանգչէին
ի գետնախշտի յանկողինսն։ Իսկ պահապանքն որ ի վերայ կապե-
լոցն կային՝ յոյժ էին զարմացեալ ընդ առողջութիւն անհիւանդու-
թեան նոցա, իբրև լսէին զանդադար հնչումն ձայնիցն։ Վասն այ-
նորիկ պատմեցին յականջս մոգպետին և ասեն. Ոչ են արքն այն
լոկ առանց մեծի զօրութեան. զի եթէ պղնձի մարմինս ունէին
նոքա՝ արդ լուծեալ էր ի դէճ խոնաւոյ անտի։ Բազում ժամա-
նակք են մեր, զի յանձն է մեզ պահպանութիւն բանտիս. ոչ
յիշեմք եթէ ի կապելոց ոք ամսօրեայ ժամանակ կեցեալ է ի
տանդ յայդմիկ։... Զահի հարեալ եմք և յոյժ երկնչիմք, յորժամ
տեսանեմք զայնպիսի անհնարին նեղութիւնս։ Եւ իբրև զայս լուաւ
մոգպետն՝ յարուցեալ ինքնին երթայր ի մէջ գիշերին յերդ բան-
տին։ Եւ հայեցեալ ի ներքս ընդ մուլթ գիշերոյն, այն ինչ լի-
նէր նոցա ի պաշտամանէն հանգչել՝ տեսանէր զանձն իւրաքան-
չիւր կապելոցն, զի իբրև զկանթեղ անշիջանելի վառեալ բորբո-
քէր։ Զահի մեծի հարաւ, և ասէր ընդ միտս իւր. Զի՞նչ է այս
մեծ սքանչելիքս. աստուածք մեր ուրեմն եկեալ իջեալ են ի բանտս,
և նոցա փառաւորութիւնն լուցեալ բորբոքի։ Եւ եթէ նոքա առ
սոսա ոչ մերձենան՝ մարդոյ լոկոյ անհնարին է զայսպիսի պայծա-
ռութիւն լուսոյ զգենուլ։ Իմ այսպէս լուեալ էր վասն կեշտիս
այսորիկ, եթէ առ յոյժ յիմարութեանն մոլորեալ են, և ստութեամբ
կերպարանին յաչս ագէտ մարդկան. Թերևս և այս տեսիլ այնպիսի
ինչ է։ Եւ ոչ կարէր համօրէն կալ ի վերայ իրացն երևմանն։ Եւ
մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էր՝ դարձեալ սուրբքն յիւրաքան-
չիւր խշտեկացն կանգնեցան կացին ի սովորական պաշտամանն։
Յայնժամ ճշմարտեալ գիտաց մոգպետն, եթէ ոչ այլ ընդ այլոյ
տեսանէր որ երևեցաւն նմա, այլ ի նոցունց յանձանց փայլէր լու-
սաւորութիւնն։ Յայնժամ կրկին անգամ զահի հարաւ և ասէ. Ո՞ւմ
ի կապելոցն եղև այսպիսի յայտնութիւն. ես և ոչ զմի ոք ոչ գի-
տեմ, և ոչ լուեալ է իմ ի հարցն յառաջնոց։ Եւ քանզի անհնա-
րին շարժեցաւ ի մեծ սքանչելեացն, և դողային ամենայն մար-
մինքն՝ և թմբրեալ կիսամեռ լինէր ի վերայ տանեացն մինչև յա-
ռաւօտն. և ի ծագել լուսոյն իբրև զբազմօրեայ հիւանդ յարու-
ցեալ երթայր ի վանս իւր, այլ և ոչ ումեք իշխեաց ամենևին
պատմել զոր ինչ ետես։ Կոչեաց առ իւր զպահապանսն և ասէ
ցնոսա. Երթայք հանէք զկապեալսն ի վերնատուն մի ցամաքա-
գոյն, և անդ պահեցէք զնոսա զգուշութեամբ, որպէս և ասացէքն։
Մի ումն ի դահճաց անտի, իբրև լուաւ զհրամանս մոգպետին՝

փութով ընթացեալ երթայր, իբրեւ մեծ իմն աւետիս տանէր նոցա:
Հրամայեաց ձեզ, ասէ, ելանել ի ցամաք վերնատուն մի. արէք
վաղվաղակի և մի հեղգայք, քանզի և մեք իսկ պաղատեցաք վասն
ձերոյ տառապանացդ: Իսկ սուրբն Յովսէփ հեզաբար սկսաւ խօսել
ընդ դաշճապետին և ասէ. Երթ և ասա ցկիմար առաջնորդն ձեր.
Չէ լուեալ քո վասն հանդերձեալ գալստեան Տեառն մերոյ և կամ
վասն մերոյ հրաշակերտ շինուածոցն, որք մեզ կան պահին ի սկզբ
բանէ պատրաստութիւնքն, վասն որոյ դիւրաւ համբերեմք մեծի
նեղութեանս առ սէր այնր յուսոյ զոր տեսանեմք:... Իբրեւ լուաւ
զայս ամենայն բանս մոգպետն ի դաշճապետէ անտի՝ խռովեցաւ
պղտորեցաւ ի միտս իւր, և հատաւ քուն յաչաց նորա զբազում
գիշերս: Իսկ յաւուր միոջ յերիկուն պահուն յարուցեալ երթայր առ
նոսա միայնիկ լռիկ, և ոչ զոք առնոյր ընդ իւր ի սպասաւորացն:
Եւ իբրեւ եհաս ի դուրս տանն՝ հայէր ընդ ծակ մի ի ներքս և
տեսանէր ըստ առաջին տեսլեանն. բայց նոքա ի քուն կային խա
ղաղիկ: Հեզաբար կարդաց յանուանէ զեպիսկոպոսն, քանզի քաջ իսկ
գիտէր պարսկերէն: Եկն ի դուրս և հարցանէր. Ո՞վ ես դու: Ես
ինքն իսկ եմ, ասէ, կամիմ ի ներքս մտանել և տեսանել զձեզ: Եւ
իբրեւ եմուտ ի մէջ սրբոցն՝ ոչ եւս երեւէր նմա այն նշանն. և
պատմեաց նոցա զերիցս երեւումն սքանչելեացն: Ետ պատասխանի
Ղեւոնդ երէցն և ասէ. Աստուած որ ասաց ի խաւարի լոյս ծագել՝
այսօր ծագեաց ի խաւարեալ միտս քո, և բացան աչք կուրացեալ
ոգւոյդ... փութա, մի հեղգար, զուցէ դարձեալ կուրացեալ ընդ
խաւար գնայցես: Եւ զայս իբրեւ ասաց՝ յոտն կացին ամենեքեան
ասելով զքառասներորդ երկրորդ սաղմոսն. Առաքեա, Տէր, զլոյս քո
և զճշմարտութիւն քո, զի նոքա առաջնորդեսցեն և ածցեն զմեզ
ի լեառն սուրբ և ի յարկս քո:... Իսկ որ ձրին եգիտ զաստուածա-
տուր շնորհսն՝ սկսաւ և նա առանձինն ասել. Տէր լոյս իմ և կեանք
իմ, ես յումէ՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումէ՞ դո-
ղացայց:... Դու Տէր ամենայնի... մի որոշեր զիս ի սուրբ գառանցդ
յորս խառնեցայ:... Եւ զայս իբրեւ ասացին՝ նմին իսկ ետուն կա-
տարել զաղօթսն, և այնպէս խաղաղացեալ կացին ի քուն ամենե-
քեան մինչև ի ժամ առաւօտուն: Իսկ նորա յոտն կացեալ և ի
քուն ոչ մտանէր. այլ զձեռս իւր ի վեր ամբարձեալ կայր յաղօթս:
Եւ մինչդեռ ընդ երդ պշուցեալ հայէր՝ յերկինս՝ յանկարծակի տունն
լի եղև ի լուսոյն. և երևեցան նմա սանդուղք լուսեղէնք, որ
կանգնեալ էր (էին) յերկինս յերկրէ, և զունդք զունդք զօրաց ե
լանէին ի վեր. և էր ամենեցուն տեսիլն նոր և չքնաղ և ահաւոր
և սքանչելի իբրեւ զտեսիլ հրեշտակի: Ունէր և զթիւ համարոյ

միտս իւր զիւրաքանչիւր գնդիցն զօր տեսանէր, էր որ զՀագարի, էր որ զերեսուն եւ զերից, էր որ զերկերիւրոց եւ զերեքտասանից։ Եւ այնպէս մօտագոյնս մերձենայր՝ մինչեւ ճանաչել նմա զերիս ի ...ոցանէ—զՎարդան եւ զԱրտակ եւ զԽորէն. եւ ունէին ինն պսակ ի ձեռսն, խօսէին ընդ միմեանս եւ ասէին. Ահա եկն եհաս ժամ. զի եւ սոքա խառնեսցին ի գունդս մեր։... Եւ որում ոչ ես մնայաք՝ եկն ...րեւեցաւ եւ խառնեցաւ, եւ եղեւ իբրեւ զմի ի զինուորաց Քրիստոսի։ Այս ...րիցս անգամ երեւեցաւ չքնաղ տեսիլս առնն երանելւոյ։ Զարթոյց ...ուրբսն ի քնոյ անտի եւ պատմեաց նոցա զամենայն տեսիլն կար-գաւ։ Իսկ նոքա յարուցեալ կացին յաղօթս... զուլթ ողոքանաց ար-կանէին առաջի բարերարին, զի լսելի լիցի ձայն պաղատանաց նո-ցա, եւ համատարուն կացցեն ի վիշտս ճգանցն, զի մի զրկեսցին ի ...անկալի պսակացն զոր ունէին սուրբքն ի ձեռս իւրեանց, որպէս եւ ազդեցաւ նոցա ի ձեռն Հոգւոյն սրբոյ, զի մերձեալ էր ժամա-նակ կոչման նոցա։... Եւ քանզի ինքն իսկ մոգպետն իշխան էր ...աշխարհին, եւ նմա յանձն արարեալ էր զկապեալս քաղաքին՝ վասն ...անորիկ եւ համարձակութեամբ ընդ առաւօտն հանեալ տանէր ...ալարանսն իւր։ Լուանայր եւ սրբէր զնոսա ի չարչարանաց բան-տին, առնոյր զջուր լուացման սրբոցն եւ արկանէր զիւր մարմնովն։ ...ուղէր ի տան իւրում աւազան, եւ ընդունէր ի նոցանէ զսուրբ մկրտութիւնն. հաղորդէր ի կենդանարար մարմինն եւ ի քաւիչ ...րիւնն Տեառն։... Գնէր եւ ըստ մարմնոյ առաջի նոցա սեղան ...երակրոյ, եւ մխիթարութեան բաժակ մատուցանէր նոցա, եւ միա-անէր ընդ նոսա հացին օրհնութեան։...Զգիշերն ամենայն սաղմոսիւք ...դլուխ տանէին. իսկ ի ժամ առաւօտուն ասէին ամենեքեան. Ծա-նեա, Տէր, զողորմութիւնս քո՝ ոյք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ ուղիղ են սրտիւք։ Եւ անդէն փղփղակի հասին դահիճքն ի ...ուռն բանտին. մտին ի ներքս եւ տեսին, զի որ յառաջ մոգպետն ...ր. եւ նմա իսկ յանձն արարեալ էր պահել զնոսա՝ նստէր ի մէջ նոցա եւ լսէր ի նոցանէ, նա եւ քաջալերէր զնոսա չերկնչել ի ...ահուանէ։ Իբրեւ տեսին զմեծ սքանչելիսն դահիճքն՝ յոյժ զարմա-ցան ընդ իրսն, այլ ոչինչ իշխէին հարցանել զնա. բայց չոքան եւ ...պատմեցին Դենշապհոյ, որում յանձն արարեալ էր զչարչարանս ...սրբոցն։ Իսկ նա իբրեւ լուաւ ի դահճացն արքունի՝ զահի մեծի ...հարաւ ի միտս իւր։... Ի ծածուկ խօսէր ընդ մոգպետին... եւ իբ-րեւ ստուգեաց, եթէ ոչ քակտի ի սրբոցն հաւանութենէ՝... փութա-ցաւ, եւ ինքն երթեալ պատմէր թագաւորին զամենայն որպէս ...որդ լուաւ ի նմանէ։ Եւ պատասխանի թագաւորն եւ ասէ ցԴեն-շապուհ. Մի ոք ամենեւին լուիցէ զայդ ի քէն, մանաւանդ վասն

տեսլեանն մեծի որ երևեալ է նմա։... Եւ այժմ իմ է քեզ երդումն տուեալ յանմահ գիսն. Նախ զդառնացեալ ծերն կոչեա առաջի քո: Եթէ հաւանեսցի սիրով և զղջացեալ ապաշաւեսցէ՝ մեծարեսջիր զնա պատուով ըստ առաջին կարգին. ապա թէ ոչ հաւանեսցի և ոչ կամեսցի անսալ բանից իմոց՝ յարուսջիր ի վերայ նորա բազում ամբաստանս յաշխարհէ անտի, զի վնասակար գտցի յիւս արքունի... և ընկալցի զմահ թշուառութեան։... Եւ նստաւ Դենշապուհ արտաքոյ բանակին յատենի, հեռի երկոտասան հրասախաւ։ Հարցանէր զմոգպետն և ասէր. Իշխանութիւն առի վասն քո, ոչ միայն բանիւ հարցանել, այլ և ամենայն հարուածովք տանջանաց։ Մինչև ձեռն արկեալ է իմ ի քեզ՝ ընկալ զմեծարանս, խնայեա ի պատուական ալիսդ. Թող անդր ի բաց զքրիստոնէութիւնդ, զոր ոչ ունէիր ի բնէ, և դարձիր անդէն ի մոգութիւնն։ Եւ պատասխանի երանելին և ասէ. Աղաչեմ զքեզ, տէր, որ յառաջ իբրև զհարազատ եղբայր հաստատեալ էիր յաչս իմ, և այսօր թշնամի կատարեալ. մի ըստ առաջին սիրոյն զթար դու յիս, այլ կատարեա ի վերայ իմ զկամս չարութեան թագաւորին ձերոյ. և որպէս առեր իշխանութիւն ի վերայ իմ՝ դատեա զիս։ Յայնժամ իբրև ետես Դենշապուհ, եթէ առ ոչինչ զսպառնալիսն արքունի համարեցաւ, և ոչ ողոքանաց երբեք ինչ արար, և քան ի ծածուկ՝ յայտնի ևս կամէր զի խօսեսցի՝ կատարեաց ի վերայ նորա ըստ հրամանի արքունի. գաղտագողի ընկեցաւ նա ի հեռաւոր օտարութիւն»։

**18.** Որչափ և ջանան Փարպեցին և Եղիշէ հաւատացուցանել մեզ,՝ թէ վկայաբանութիւնն Ղևոնդեանց իւր բոլոր մասերովն, երկայն հարցումներով, մանր մանր պատասխաններով, լի մանաւանդ ի վեր քան զբնութիւն նշանօք, է արդեամբ կատարուած, և ակնատես, ականջալուր վկայէ, որպիսի էր անծանօթն Խուժիկ, աւանդուած՝ գործն ինքնին բաւական է ցուցնել, թէ վկայաբանութիւնն այն է բարեպաշտ քրիստոնէէ յօրինեալ հոգևոր վէպ, ուր Խուժիկն ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ վիպասանական անձն։ Զայս կը թուի ակնարկել ակամայ Փարպեցին յասելն, թէ «զանուն նորա ոչ ոք հոգացեալ պատմեաց մեզ, այլ ամենագէտն գրեալ պահէ յօր մեծ այցելութեան». ապա էր նա անծանօթ ոք, և Խուժիկն է լոկ պիտակ անուն։ Աւելի մեծ տարակոյս գոյութեան Խուժիկին այն է մանաւանդ, որ այն վկայաբանութենէն դուրս յիշատակութիւն չունինք ուրեք այս անձին վրայ։ Եղիշէի սա վկայութեան մէջ.—«Այս երանելի Խուժիկս երկրորդեաց մեզ ամենայն կարգաւ», եթէ մեկ առնունք Եղիշէի վրայ այնպէս, որպէս թէ Եղիշէ ուղղակի Խուժկէն լսելով գրեց՝ ապացոյցն չհամարուիր դարձեալ վաւեր, այն

նի Եղիշէ, ո՛ ոք և է—ատենադպիր Վարդանայ, միայնակեաց, եպիսկոպոս կամ թերևս պիտակ անուն՝ կասկածելի է անաչառ քննադատութեան առջև իր Պատմութեան կարկատուն բնութեան համար։

**19.** Փարպեցին և Եղիշէ նոր յաւելուածով, դարձեալ մեծ տարբերութեամբ, կը պատմեն Աբրահամու և Խորենայ խոստովանողական կեանքն յետ նահատակութեան Ղևոնդեանց։ Այս երկու երիցունք, որոց, ինչպէս պատմեցինք, չտրուեցաւ թոյլ երթալ զհետ վարդապետաց իւրեանց՝ մնացած էին ի Նիւշապուհ։ Ըստ Փարպեցւոյն՝ յետ դարձին Յազկերտի ի Վրկանս զկնի ձախող պատերազմին, երբ թոյլ տրուեցաւ սպասաւորաց նախարարաց և այլոց որ էին ընդ նոսա երթալ յ՛ն և կամէին՝ Աբրահամ և Խորէն երթալով ի Վրկանս, ուր էր յայնժամ Դենշապուհ՝ կը խնդրեն ի նմանէ տալ նահատակել և զնոսա ըստ օրինակին վարդապետաց իւրեանց. և Յազկերտ կը հրամայէ պաշտօնէին՝ ստիպել զնոսա յուրացութիւն, և եթէ չանսան՝ խեղելով ղրկել զնոսա յԱսորեստան ի մշակութիւն արքունի։ Դենշապուհ յետ կարճ հարցափորձի գտնելով զնոսա յամառ՝ կը ղրկէ յԱսորեստան ականջատ։ Խորէն կը մեռնի յետ ամաց ինչ, իսկ Աբրահամու թոյլ կը տրուի Ասորեստանի քրիստոնեաներէն ողորմութիւն ժողովելով տանել նախարարաց, և ի վախճանի կ'ընդունի հրաման դառնալ ի Հայս, ուր իբրև արդարև խոստովանող ընդունուելով պատուով՝ կը ձեռնադրուի եպիսկոպոս Բզնունեաց, և կը վախճանի ի բարւոք ծերութեան.—«Մտեալ թագաւորին Յազկերտի (ի դարձին ի պատերազմէն)... յոստանն Վրկան՝ համարձակութիւն տայր նախարարացն Հայոց որք ի դղեկին էին ի կապանս (ի Նիւշապուհ)՝ արձակել զմանկունս իւրեանց և կամ զայլ ոք որ ընդ նոսա էին՝ ի պէտս արբանեկութեան յ՛ն և կամիցին։ Զոր լուեալ երանելի երիցունքն Խորէն և Աբրահամ՝ փութով ի Վրկան հասանէին, և անկեալ հրապարակաւ առաջի ամբարպետին Դենշապհոյ՝ բողոք բարձեալ ասէին... Դու բռնաբար հրամայեցեր արգելուլ զմեզ ի Նիւշապուհ... և սպանէք զվարդապետս մեր. կամեցարո՛ւք և ի վերայ մեր տալ զնոյն հրաման։... Մտեալ ի ներքս (Դենշապուհ) պատմէր թագաւորին Յազկերտի զամենայն զբանս և զխնդիրս երանելի երիցանցն. և թագաւորն հրաման տուեալ ասէ... Երկիր պագցեն արեգական, և պատուեալ զկրակն՝... արձակեսցին յաշխարհն իւրեանց. ապա թէ չհաւանեսցին՝ պատուհաս կրեսցեն խեղութեամբ, և երթեալ յԱսորեստան մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակսն։... Եկեալ Դենշապուհ ասաց ցերանելի երիցունսն... զհրաման թագաւորին... և լուեալ պատասխանի աներկիւղ... կատարեաց զհրամայեալսն ի թագաւորէն. կտրեալ զեր-

կուսանց ականջսն՝ եւ տանել յԱսորեստան ի գաւառն որ անուանեալ կոչի Տաբուլ (Տաճուղ՝ ըստ Եղիշէի), կալ անդ նոցա ի հարկի, և առնել մշակութիւն արքունի։… Եւ լուեալ զայս հաւատացելոց աշխարհին՝… ընդ առաջ ելին նոցա խնդութեամբ… նա և գկորասի ևւրաքանչիւր ուրուք բերեալ դնէին առ ոտս երանելեացն։… Երանելի երիցանցն ընկալեալ յընծայիցն հաւատացելոց… տալին տանել կապելոց նախարարացն Հայոց։… Իբր զի երանելի երէցն Աբրահամ առեալ զռուրս հարաւային կողմանցն Ասորեստանեացն տարեալ մատակարարէր կապելոց նահատակացն։… Կեցեալ ամս երանելոյ երիցոյն Խորենայ՝ անդէն յԱսորեստանի վախճանէր։ Իսկ երանելի երէցն Աբրահամ երաշխաւորութեամբ հաւատացելոց աշխարհին, որք զուռնս ևւրեանց և զարարս փոխանակ ընդ հարկի նորա գրեցին յարքունիս, արձակեալ ի Հայս… և ձեռնադրեալ յաթոռ եպիսկոպոսութեան աշխարհին Բզնունեաց՝… վախճանէր ի նմին կարգի ի բարւոք ծերութեան»։

**20.** Յայսմ ևս կը տարբերի ի Փարպեցւոյն Եղիշէ։ Ինչպէս տեսանք առ Փարպեցւոյն՝ Աբրահամ և Խորէն երթալով անձամբ առ Դենշապուհ ի Վրկանս, ուր կը գտնուէր նա յետ դարձի թագաւորին ի պատերազմէն Քուշանաց՝ խնդրեցին նահատակել զնոսա ևս, և Դենշապուհ հրամանաւ թագաւորին կտրելով զականջս նոցա՝ ղրկեց ի գործ արքունի մշակութեան յԱսորեստան, ուր մնացին նոքա շատ տարիներ, մինչև մեռաւ Խորէն. իսկ Աբրահամ երկրին քրիստոնեաներուն փրկանօք արձակուեցաւ ի Հայս, և եղաւ եպիսկոպոս Բզնունեաց։ Առ Եղիշէի չիք յիշատակութիւն Դենշապհոյ. դահճապետ ոմն գալով ի Նիւշապուհ յետ նահատակութեան Ղևոնդեանց՝ կը տանջէ շատ քրիստոնեաներ, կը կտրէ ոմանց քիթը, ոմանց ականջներն, և կը ղրկէ յԱսորեստան ի մշակութիւն արքունի։ Գալով առ Խորէն և Աբրահամ՝ կը հարցունէ, թէ ով են, և իմանալով թէ էին յաշակերտաց Ղևոնդեանց՝ կը գտնէ զնոսա յանցաւոր իբրև ապստամբներու աշակերտներ, և լսելով ի նոցանէ խիստ պատասխաններ, զորօրինակ «շուն անպիտան», «ընդ վայր հաչող», «որդի սատանայի», այլովքն հանդերձ կը բարկանայ, և տալով քարշել զնոսա և ապա գան հարկանելով սաստիկ՝ կը թողու կիսամեռ. ի վախճանի կտրելով զականջս նոցա կը ղրկէ զնոսա յԱսորեստան ի գործ բանի մշակութեան, յօրինակ այնոցիկ որ կը հակառակին կամաց թագաւորին։ Բայց զարմանալին այն է, որ Եղիշէ յետ պատմելոյ զայս՝ կը յաւելու, թէ դահճապետն պատուիրեց զինուորներուն՝ Ասորեստան հասնելով թողուլ զնոսա երթալ յո և կամին։ Այս ևս զարմանալի է, որ ըստ Եղիշէի Աբրա-

համ և Խորէն ունենալով այս ազատութիւնը՝ փոխանակ երթալու
ի Հայս՝ կը մնան յԱսորեստան շատ տարիներ, մինչև Խորէն կը
մեռնի օդոյն սաստիկ ջերմութենէն. իսկ Աբրահամ ի թախանձելոյ
կալեալ նախարարաց կը դառնայ ի Հայս ի մխիթարութիւն ըն-
տանեաց և ազգականաց նոցա։ Եթէ Աբրահամ և Խորէն ընտրեցին
մնալ յԱսորեստան, երկրին քրիստոնէից կողմէն ընծաներ ղրկելու
կամ անձամբ տանելու համար կալեալ նախարարաց՝ նոյն բանը
կրնային ընել նաև երթալով ի Հայս. և նախարարք եթէ թոյլ-
տուութիւն ունէին դուրսէն նպաստ ընդունելու՝ կրնային ընդունել
նաև իրենց երկրէն։ Դարձեալ՝ կալեալ նախարարք ինչպէս կրնայ-
ին բանի աշխատութեան դատապարտեալ գերի մը ստիպել երթալ
իւր երկիրն առանց հրամանի տէրութեան։ Փարպեցւոյն պատմու-
թիւնն աւելի բանաւոր է։ Ըստ Փարպեցւոյն՝ Խորէն և Աբրահամ
ստիպեալ էին իբրև գերի մնալ յԱսորեստան. երկրին հաւատացեալ-
ներէն ոմանք կամաւոր ընծաներ միայն կը ղրկէին, էր զի Աբրա-
համ անձամբ կը տանէր. այսչափ արտօնութիւն կրնար ունենալ
Աբրահամ. իսկ Աբրահամու դարձն ի Հայս՝ ըստ Փարպեցւոյն եղաւ
հրամանաւ տէրութեան, այսինքն քրիստոնեայք երկրին փրկանք
տալով ազատեցին զնա։ Նաև Աբրահամու եպիսկոպոսութենէն
Բզնունեաց չունի տեղեկութիւն Եղիշէ. ըստ պատմութեան սորա՝
Աբրահամ յետ դարձին ի Հայս ոչ միայն չվարեց հրապարակական
պաշտօն, որպիսի էր այնպիսի մեծ նահանգի մը եպիսկոպոսու-
թիւնն, այլ մանաւանդ երեք ընկերներով առանձնանալով անապատ
տեղ՝ մեռաւ ճգնութեամբ։ Ահա բուն իսկ Եղիշէի բանք, զորս հա-
մառօտելով կը դնենք. «Իսկ աշակերտք երանելեացն ի կապանս
կային ի քաղաքին։ Եկն դահճապետ մի արքունի և եհան ի նմին
քաղաքէ ասորեստանեայս քրիստոնեայս արս հինգ... չարչարեաց
զնոսա դանիւ... կորեաց զնոցա ունչս և զականջս և ետ տանել
յԱսորեստան, զի կայցեն ի մշակութեան արքունի։... Եկն դարձեալ
նոյն դահճապետն առ աշակերտս սուրբ սպանելոցն, ընտրեաց եր-
կուս ի նոցանէ մեկուսի յայլոցն և ասէ ցնոսա. Զի՞նչ անուանք են
ձեր։ Ետ պատասխանի մինն և ասէ. Առ ի ծնողաց՝ ինձ Խորէն, և
դմա Աբրահամ. իսկ ըստ շնորհատուր կարգիս՝ ծառայք Քրիստոսի
եմք և աշակերտք երանելեացն զորս սպանէք։ Ետ պատասխանի
դահճապետն և ասէ ցնոսա. Իսկ արդ զի՞նչ գործ է ձեր, և կամ
ընաւ ո՞յր իսկ ածեալ է զձեզ այսր։ Առ այս ետ պատասխանի Ա-
բրահամ և ասէ. Զայդ ձեզ ի վարդապետաց մերոց արժան էր ու-
սանել... ընդ նոսա եմք եկեալ, քանզի և պատուէր իսկ ունիմք
յաստուածատուր օրինացն մերոց սիրել զնոսա իբրև զսուրբ ծնողս

և սպաս տանել նոցա իբրև հոգևոր տերանց։ Յասեաւ դահճապետն և ասէ… Մինչդեռ ի խաղաղութեան և յաշխարհի էիք՝ բարւոք էր. յորժամ մահապարտ գտան նոքա ըստ գործոց իւրեանց՝ ձեզ չէր արժանի ամենևին մօտ երթալ առ նոսա։… Առ այս ետ պատասխանի Խորէն և ասէ… Մեր վարդապետքն եթէ առ Աստուած յանցուցեալ էին, և կամ առ թագաւորն մեղուցեալ ինչ էին՝ ոչ յաշխարհի մօտ երթայաք առ նոսա, և ոչ ի տար աշխարհ այսր զհետ նոցա գնայաք։ Արդ քանզի առ երկոսին կողմանսն արդարութեամբ կեցեալ են, և դուք զուր տարապարտուց սպանէք զնոսա՝ մեք արդ ևս առաւել սպասաւորեմք սուրբ ոսկերաց նոցա։ Ասէ ցնոսա դահճապետն. Ես յառաջագոյն իսկ ասացի, եթէ կարի ստամբակ ոմն ես դու. ահա յայտ եղև ստուգիւ, եթէ յամենայն վնաս նոցա խառն էք դուք։ Աբրահամ ասէ. Ցո՞ր վնաս։ Դահճապետն ասէ. Առաջին՝ ի մահ մոգուցն, ապա և յայլսն ամենայն։ Աբրահամ ասէ. Այդ ոչ միայն ի մէնջ է, այլ ըստ կարգի և ձերոց օրինացդ. թագաւորք ձեզ տան հրաման, և դուք ի ձեռն ձերոց սպասաւորացդ գործէք։ Դահճապետն ասէ. Ի Միհր աստուած երդուեալ է իմ, խստագոյն ևս խօսիս քան զվարդապետսն քո. յայտ է եթէ վնասակարագոյնք ևս էք դուք։ Արդ ոչ է հնար ձեզ ապրել ի մահուանէ՝ բայց եթէ երկիր պագանիցէք արեգական, և կատարիցէք զկամս օրինաց մերոց։ Խորէն ասէ. Յայժմ իբրև զմարդ չարախօսէիր, և արդ իբրև զշուն անպիտան ընդ վայր հաչես։ Եթէ գոյր արեգական ականջք՝ դու տայիր նմա թշնամանս դնել. արդ նա բնութեամբ անզգայ է, և դու չարութեամբ անզգայագոյն քան զնա։ Միթէ բանիւք զփորձ առնուլ կամիս զմեր. այլ հանդէս արա քում չարութեանդ և մերում բարութեանս, և ամաչեցեալ գտանի հայրն քո սատանայ, ոչ միայն ի մէնջ որ կատարելագոյնքս եմք, այլ և որ կարի փոքրիկն թուի քեզ՝ նա դիցէ վէրս սաստիկս յոգիս և ի մարմինս քո։ Զայս իբրև լուաւ դահճապետն՝ սրտմտեալ բարկացաւ ի վերայ նոցա։ Ետ քարշել խստագոյն քան զառաջինն. և այնչափ սաստիկ քարշեցին՝ մինչև բազմաց կարծիք եղեն թէ մեռան։ Իսկ իբրև ժամք երեք ի վերայ անցին՝ դարձեալ խօսել սկսան երկոքեանն և ասեն. Փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զցաւս մարմնոյս առ մեծ սէրն Աստուծոյ, որով կատարեցան հարքն մեր հոգևորք։ Հապա, մի դլար և մի դադարեր, այլ զոր ինչ առ նոսայն արարեր՝ զնոյն և առ մեզ կատարեա. եթէ չարագոյն թուին քեզ գործքն նոցա՝ կրկին և զմերս համարեսջիր. զի նոքա բանիւք հրամայէին, և մեք գործովք զարգիւնսն կատարէաք։ Յայնժամ ևս առաւել զայրագնեցաւ ի վերայ նոցա,

և հրամայեաց զմահու գան հարկանել։ Եւ տա մի մի ի նոցանէ փոխեցաւ վեց վեց այր ի դահճացն։ Եւ մինչդեռ կիսամեռք յերկիր անկեալ դնէին՝ Հրամայեաց զերկոցունց ականջս մօտ կտրել։ Եւ այնպէս բրեցին՝ որպէս թէ չիցէ լեալ ի տեղւոջն։ Զարթեան որպէս ի քնոյ ի սաստիկ հարուածոցն, սկսան աղաչելով պաղատանս մատուցանել և ասեն. Աղաչեմք զքեզ, քաջ զինուոր Թագաւորին, կամ կատարեա զմեզ իբրև զհարսն մեր մահուամբ, և կամ արա զպատուհասդ ըստ օրինակի վերջնոցս։ Զի ահա լսելիք մեր առողջացան զանախտաւորութիւն երկնաւոր, իսկ հոտոտելիքս դեռ ևս աստէն ի տեղւոջ կան. մի՛ կիսապարգև առներ զմեզ յերկնից բարութենէն։ Սրբեցեր զմարմինս մեր քարշելով և զլսելիս մեր կըտրելով, սրբեա և զռնգունս մեր հատանելով։... Նա պատասխանի հեգնութեամբ դահճապետն և ասէ. Եթէ և այլ յամեմ ես առ ձեզ մօտ կալով՝ կարծեմ եթէ և աշակերտէք զիս ի ձեր յամառութիւնդ։ Զի ահա արդ և զխորհուրդս արքունի ի վեր հանեմ ձեզ։ Յայդ վայր եղև հրաման պատուհասիդ ձերոյ, և ի վերայ դորին պատուհասի երթալ ձեզ յԱսորեստան, և լինել ձեզ մշակ յարքունիս, զի որ ընդ ձեզ հայեսցի՝ մի ի դմին յամառութեան պնդեսցի ընդդէմ հրամանաց Թագաւորին։ Ասեն ցնա երանելիքն. Դու զմեր երկիրս կիսագործ թողեր, մեք յարքունի երկիրն կէս մարմնովք մերովք ոչ վաստակեմք։ Իբրև զայս լուաւ դահճապետն՝ աղաչեաց զզինուորսն որ տանէին զնոսա, և ասէ. Միայն աստի դուք առէք գնացէք, և հասեալ յԱսորեստան՝ ուր կամ իւրեանց է՝ և շրջեսցին։... Իբրև տարան հասուցին զնոսա յերկիրն Բաբելացւոց ի գաւառ մի զոր Շահուղն անուանեն, թէպէտև էին յարքունի պատուհասի՝ սակայն և՛ յայտ և՛ գաղտ մեծապէս ընկալեալ եղեն ի բնակչաց աշխարհին։... Եւ անդէն թևակոխէին տեսանել զսուրբ կապանսն նախարարացն, լինել սպասաւոր մարմնաւոր պիտոյից նոցա։ Իմացուցին զայս մեծամեծաց աշխարհին որք էին ի նմին սուրբ ուխտի քրիստոնէութեանն... Եւ հաւանեցան ամենեքին կցորդ լինել սուրբ կապելոցն ի հեռաւոր օտարութեանն։ Եւ այսպէս ժողովէին ամ յամէ ոմն սակաւ և ոմն շատ, ոյր զինչ և ի ձեռս պատրաստութիւն լինէր, եթէ դրամոց և եթէ գահեկանաց, տային երանելիսն տանել նոցա։ Եւ այսպէս յարբանեկութեան կային մինչև տասն ամն լցաւ սպասաւորութեանն։ Եւ վասն զի յոյժ խստագոյնս պահէին ի ջերմոջ աշխարհին, և անդ դար էին ի ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ, ընդ Մեշովն և ընդ Բաշկար և ընդ ամենայն Խորասան և Խուժաստան՝ սաստիկ տապով հարեալ ի խորշակէ՝ մեռանէր սուրբն Խորէն։ Իսկ երանելին Աբրահամ կայր

ի Նմին առաքինութեան անդադար, և զամենայն տուրս Հաւատացելոցն շրջէր ժողովէր և տանէր ի մեծ Հեռաստանն, և ինքն մատակարարէր ըստ իւրաքանչիւր կարօտութեան։ Եւ այնպէս յերկարեցաւ մինչև յերկոտասաներորդ ամն պատժաւորացն, մինչև աղաչել զնա միաբան ամենեցուն, զի Հաւանեսցի երթալ յաշխարհն Հայոց՝ զի ընդ մտանել նորա առ նոսա՝ ի նմա տեսցեն և զքաջ նահատակն որք կատարեցան սրով, ի նմա տեսցեն և զսուրբ կապանս չարչարանացն։... Զայս խորհուրդ խորհելով աստուածաշնորհ նախարարացն՝ մեծաւ թախանձանօք ածէին զխոստովանողն ի Հաւանութիւն։ Եւ վասն զի ոչ էր սովորութիւն երբէք բարւոյն ընդդէմ դառնալ՝ փութացաւ վաղվաղակի կատարել զհրամանն։... Եկն եմուտ յաշխարհն Հայոց։ Փութացան և ելին ընդ առաջ նորա վաղվաղակի արք և կանայք, մեծամեծք և փոքունք, և ամենայն բազմութիւն ազատաց և շինականաց... Բայց երանելի խոստովանողն, թէպէտև այսպէս սիրով ընկալեալ եղև յամենայն աշխարհէն՝ ոչինչ կամեցաւ ամենևին մերձենալ առ ոք ըստ մարմնոյ կարօտութեան. այլ ընտրեաց իւր տեղի մի զատ յամենայն բազմամբոխ ժողովրդոց, և առաքինի եղբարբք երիւք կատարեաց զկեանս իւր մեծաւ ճգնութեամբ» (Եղ. էջ 325—340)։

## ԳԼՈՒԽ Դ.

### ԵՐԿՐՈՐԴ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ. ՔԱՋՈՒԹԻՒՆՔ ՎԱՀԱՆԱՅ։

*1. Երրորդ դրուագ պատմութեան Փարպեցւոյն։* 2. *Արձակումն նախարարաց. Ցրզատվշնասպ։* 3. *Նախարարք կ'երթան ի պատերազմ։* 4. *Տարբերութիւն Եղիշէի ի Փարպեցւոյն։* 5. *Ազատութիւն որդւոց Հմայեկայ։* 6. *Դարձ նախարարաց։* 7. *Կաթողիկոսունք զկնի Յովսեփայ. Գիւտ։* 8. *Բարոյական հանգամանք ժամանակին։* 9. *Վահան, երէց որդի Հմայեկայ։* 10. *Ոգի ազատութեան։* 11. *Գիւտ կը կոչուի ի դուռն։* 12. *Խորհուրդ ապստամբութեան. Առաքինութիւնք Վահանայ։* 13։ *Գադիշոյ Խոռխոռունի։* 14. *Ամբաստանութիւն զՎահանայ. Երթ նորա ի դուռն եւ դարձ։* 15. *Վահան կը վարանի անսալ ապստամբութեան խորհրդոյն, ապա կը հաւանի։* 16. *Մատնութիւնք։* 17. *Սահակ Բագրատունի՝ մարզպան, Վահան՝ սպարապետ ի կողմանէ Հայոց. Առաջին ճակատ յԱկոռի։* 18. *Սուտ համբաւ։* 19. *Հրաւէր առ Վիրս եւ առ Հայ նախարարս վասն օգնութեան։* 20. *Երկրորդ ճակատ ի Ներսեհապատ։* 21. *Ազատութիւն Վարդայ, եղբօր Վահանայ։* 22. *Վահան կ'երթայ զօրօք յօգնութիւն Վրաց. Պատերազմ ի Վիրս. Պարտութիւն Հայոց. Սահակ Բագրատունի մարզպան եւ Վասակ եղբայր Վահանայ կ'սպանուին։* 23. *Վահան գայ ի կողմանս Տայոց. Բանագնացութիւն ընդ Միհրանայ զօրագլխին Պարսից։* 24. *Միհրան կը կոչուի ի դուռն. Հրահատ եւ Յազդ։* 25. *Վահան կու գայ ի Վաղարշապատ։* 26. *Սուտ համբաւ զՍահակայ մարզպանէն եւ զՎասակայ։* 27. *Զարմիհր Հազարաւուխտ զկնի Միհրանայ։* 28. *Վահան կ'երթայ ի կողմանս Տայոց յերեսաց Հազարաւուխտայ. Կանայք կամսարականաց կը բռնուին։* 29. *Ճապուհ Միհրան փոխանակ Հազարաւուխտայ։* 30. *Հնարք Վահանայ. Փոքր ճակատ եւ յաղթութիւն առանց Վահանայ։* 31. *Ճապուհ հետամուտ Վահանայ. Յաղթութիւն Վահանայ քառասուն արամբ. Գդիհոն կ'սպանուի։* 32. *Դեսպան ի Պարսից առ Ճապուհ. Պարտութիւն Պերոզի ի Հեփթաղս եւ մահ։* 33. *Ճապուհ եւ Հազարաւուխտ կը մեկնին ի Պարս։* 34. *Վաղարշ կը թագաւորէ։* 35. *Նիխոր կը ղրկուի ի*

*Հայս: 36. Վահան կ'երթայ առ Նիխոր: 37. Բանք Վահանայ ընդ Նիխորայ: 38. Վահան եւ Նիխոր կը մեկնին ի միմեանց. Սքանչելիք ըստ Փարպեցւոյն. Այրուձին Հայոց կը ղրկուի ի դուռն: 39. Վահան կ'երթայ առ Վաղարշ: 40. Կարգի նահապետ Մամիկոնեան ցեղին եւ սպարապետ Հայոց, եւ դառնայ ի Հայս: 41. Անդեկան ոմն գայ մարզպան, որոյ միջնորդութեամբ կ'առնու Վահան մարզպանութիւնը: 42. Ցովհան Մանդակունի եւ ճառ նորա ըստ Փարպեցւոյն: 43. Դիտողութիւն Փարպեցւոյն Պատմութեան վրայ:*

**1.** Երրորդ դրուագ պատմութեան Փարպեցւոյն, որ է մի միայն ժամանակակից պատմիչ՝ կու տայ մեզ քսանևչորեքամեայ պատմութիւն մի, այն է նախարարաց արձակմանէն մինչև ցամին մարզպանութեան Վահանայ, կամ յամէ թագաւորութեանն Պերոզի (460) մինչև ցերկրորդ ամ թագաւորութեանն Վաղարշու (484)։

**2.** Յետ նահատակութեանն Ղևոնդեանց (454), այն է վեշտասաներորդ ամ թագաւորութեանն Յազկերտի Բ. (439—458), նախարարք էին տակաւին ի կապանս ի Նիւշապուհ, բայց կ'ընդունէին նպաստ Ասորեստանի հաւատացեալներէն, ինչպէս տեսանք՝ ըստ Եղիշէի՝ նաև յազգականաց իւրեանց, մանաւանդ ի կանանց՝ որ իւրեանց ոսկէն հանելով մասն՝ կը ղրկէին կապելոց.—«Իսկ կանայք կապելոցն . եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն... մատամբ իւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն» (Եղիշ. էջ 360)։ Ի բանից աստի Եղիշէի կը տեսնուի, թէ վաղուց կարգեալ էր ռոճիկ կանանց նախարարաց յարքունուստ, մինչ նախարարաց յետոյ ուրեմն եղան այս շնորհք՝ այն է յետ մահուն Յազկերտի, յառաջին ամս թագաւորութեան յաջորդի նորա Պերոզի (460), թէպէտ ըստ Փարպեցւոյն ևս կանանց համար ռոճիկ կարգեցաւ՝ բայց ոչ այնպէս կանուխ, և այս է արդարև հաւանականագոյն։ Փարպեցին կը դնէ զայս յետ արձակման նախարարաց ի կապանաց։ Ըստ պատմութեան սորա՝ յետ մահուն Յազկերտի (458), և իբր երկամեայ քաղաքական պատերազմին, որ դրաւ յաթոռ թագաւորութեան զկրտսեր որդին Յազկերտի զՊերոզ մահուամբ երիցուն Որմզդանայ (460)՝ եղաւ հրաման արձակման նախարարաց ձեռամբ Յրզատվշնասպայ սիրելւոյն Պերոզի, ըստ Եղիշէի՝ միջնորդութեամբ հազարապետին Միհրներսեհի, թէպէտ այս հակառակ կու գայ պատմութեան նորին իսկ Եղիշէի, որ զՄիհրներսեհ արդէն իսկ առ Յազկերտիւ վտարանդի (յանցաւոր) գտնուած և հազարապետութենէն հանուած կը դնէ

(Եղիշ. 347)։ Ուստի յայսմ ևս ընտրելի է պատմութիւն Փարպեցւոյն, որ կը պատմէ մանր, թէ ինչպէս տարուեցան նախարարք ի Հրև, որ կը թուի լինել Հաւգաւն Գրոց, կարգեցաւ ռոճիկ նոցա և կանանց նոցա, այլովքն հանդերձ. - «Եւ կեցեալ Յազկերտի թագաւորքն Պարսից զչափ ժամանակի կենաց իւրոց՝ վախճանէր։ Եւ թագաւորեցին նորա երկու որդիքն, հակառակելով ընդ միմեանս, և դիմեալք ի վերայ միմեանց պատերազմաւ՝ յաղթահարեալ սպան կրտսերն զաւագն և ինքն թագաւորեաց, որում անուն էր Պերոզ։ Եւ ի նմին ամի թագաւորութեանն իւրոյ առաքեաց զՅըզատվշնասպ զիւր դայեկորդին զոր կարի յոյժ սիրէր, և հրաման ետ արձակել զնախարարսն Հայոց ի կապանաց, և կարգել նոցա ռոճիկ ի Հրև. Կայցեն, ասէ, անդէն այրուձիով, և կատարեսցեն զգործ որ ինչ և դիցէ նոցա Աշտատ հայրն Յըզատվշնասպայ։ (Այս անուանք — Աշտատ, Յըզատվշնասպ, ինչպէս նաև Հրև՝ անծանօթ են Եղիշէի)։ Եւ եկեալ Յըզատվշնասպն ետ նոցա աւետիս ասելով, եթէ Արքայից արքայ զմահապարտութիւնն եթող ձեզ, և ի կապանացդ արձակել. և կարգեաց ձեզ ռոճիկ ի Հրև, և կանանց ձերոց յաշխարհին իւրեանց։ Եւ ձեզ հրաման ետ կալ ի գործ արքունի, և լսել ամենայն բանի և կատարել՝ զոր հայր իմ Աշտատ հրամայէ ձեզ» (Փարպ. Կ)։

**Յ.** Ըստ Փարպեցւոյն՝ նախարարք գացին ի պատերազմ (ընդդէմ որոյ՝ չէ յայտ) ընդ հրամանատարութեամբ Աշտատայ, Յըզատվշնասպայ հօր, որ մեծապէս կը յարգէր զնոսա։ Սիրելի էին նոքա բոլոր բնակչաց երկրին, առանձինն իշխանին Հրևայ Շնոմշապհոյ։ Իսկ Յըզատվշնասպ կապեալ էր սիրով ընդ Արշաւրի Կամսարականի, ինչպէս Յովնաթան ընդ Դաւթի.—«Ի տեսանել զնախարարսն Հայոց Յըզատվշնասպայ և առ սակաւ սակաւ ընդելնուլ ընդ նոսա՝ շնորհեցաւ որպէս յաստուածային ակնարկութենէն խնամարկել. սիրեաց զԿամսարականն Արշաւիր ըստ սիրոյն Յովնաթանայ զԴաւիթ. յաղագս և այլոց նախարարացն Հայոց հոգայր բարեխօսութեամբ հանապազ։ Տարեալ այնուհետև զնախարարսն Հայոց ի Հրև և կարգեալ իւրաքանչիւր ումեք ռոճիկ՝ գումարէին զնոսա ի ձեռն Աշտատայ ունել զնոսա ի գործ պատերազմի. զորս մեծարեալ յարգեաց առաջի զօրագլխի գնդին, յաջողելով նոցա քաջութիւն երեւելապէս, այլև առաջի ամենայն քաղաքացեացն Հրևայ և գաւառին։... Եւ իշխանն Հրևայ Հրևշնոմշապուհ սիրէր զկապեալսն Հայոց յոյժ յոյժ, և զքաջութիւն նոցա և զլաւ բարս և զմարթչութիւնն բազում անգամ գրով ծանուցանէր մեծամեծացն ի դուռն, և իւրոց սիրելեացն որ ի հրապարակին էին» (Փարպ. Կ)։ Եղիշէ կը

գնէ զայս ամենայն, այն է զարձակումն նախարարաց, այլովքն հանդերձ՝ եղած առ Յազկերտիւ։

4. Ըստ Եղիշէի՝ Յազկերտ իւր հազարապետին Միհրներսեհի բերանով կը հրաւիրէ դարձեալ զնախարարս յուրացութիւն. և մինչ նոքա կը մերժեն՝ հազարապետը գովելով նոցա մտաց հաստատութիւնը՝ լինի միջնորդ արձակման նոցա առ Յազկերտի. նաև Հաւր-Ոդոմշապուհ գթալով ի նոսա՝ կը հաւանեցունէ զթագաւորն արձակել զնոսա ի կապանաց, կարգել ռոճիկ, այլովքն հանդերձ.— «Մինչդեռ էին նոքա յայնպիսի նեղութեան՝ կարծիք եղեն ի միտս թագաւորին, թէ առ յոյժ վշտին ձանձրացեալ են դառնութեան կենօքն իւրեանց։ Յղեաց առ նոսա զմեծ հազարապետն և ասէ. Յայսմհետէ զգաստացայք յանձինս ձեր, և մի կայք ի նոյն յամառութեան. երկիր պագէք արեգական, և արձակիք ի չարաչար կապանացդ, և ունիք անդրէն զիւրաքանչիւր հայրենի կեանս ձեր։ Ետուն պատասխանի երանելիքն և ասեն. Առ փո՞րձ ինչ եկեալ հարցանես զմեզ, եթէ արդարև թագաւորն իսկ յղեաց զքեզ։ Երդուաւ հազարապետն և ասէ. Չիք այդր բան աւելի կամ պակաս՝ որ ոչ ի բերանոյ նորա ելեալ է։ Ասեն ցնա անդրէն. Որք միանգամ աշակերտեալ են ճշմարտութեան՝ ոչ երբէք փոխին ի նմանէ, այլ որ ենն՝ նոյն կան... Բայց արդ աղաչեմք զքեզ և քև զթագաւորն ձեզ, մի այլ վասն այդպիսի իրաց հարցանէք զմեզ, այլ զինչ եդեալ է ի մտի ձերում վասն մեր՝ կատարեցէք։ Իբրև լուաւ զայս մեծ հազարապետն՝ յոյժ գովեաց ի միտս իւր զպնդութիւն հաստատութեան նոցա, և յայնմ հետէ սկսաւ արկանել սէր ընդ նոսա՝ իբրև ընդ սիրելիս Աստուծոյ։ Եւ բազում բանիւք ողոքանօք ածէր զթագաւորն ի հաւանութիւն, զի թողութիւն արասցէ նոցա ի կապանացն իւրեանց։ Զի թէպէտև փոխեցաւ նա ի գործոյ հազարապետութեանն արքունի, և ի բազում իրս դատւ վնասակար ինքն իսկ յանձն իւր կրթէր զաւեր աշխարհին Հայոց, վասն որոյ և մեծաւ անարգանօք յուղարկեցաւ ի տունն իւր՝ սակայն զկապելոցն ոչ երբէք չարախօս կամէր լինել մինչև ցօր վախճանի կենաց իւրոց» (Եղիշ. էջ 345—347)։ Այս է պատմութիւն Եղիշէի. բայց պատմութիւն Փարպեցւոյն, որպէս ասացաք՝ է հաւանականագոյն, և միաբան ժամանակագրութեան նորին իսկ Եղիշէի, ինչպէս կը գիտէ Գաթըրճեան.—«Եղիշէ զայս ամենայն դնէ առ Յազկերտիւ լեալ, սակայն ժամանակագրութիւն նորա որ հակառակ է ըստ պատմութեան իւրում՝ է միաբան պատմութեանն և ժամանակագրութեան Փարպեցւոյն, քանզի ինքն Եղիշէ 9 ամս և ամիսս 6 ասէ լինել նախարարաց ի կապանս, որ է 452—460, ուր, ըստ

նորին իսկ Եղիշէի՝ մեռաւ Յազկերտ յամի 458» (Գաթըրճ. Տիեզ. պատմ. Հտ. Բ. էջ 549, Ծան. 2)։

**5.** Ըստ Փարպեցւոյն՝ յառաջ քան զարձակումն նախարարաց, արդէն իսկ առ Յազկերտիւ (455) եղաւ, միջնորդութեամբ Աշուշայի բդեշխին Վրաց, ազատութիւն որդւոց Հմայեկայ, եղբօր Վարդանայ. —«Իսկ յամին եօթնևտասներորդի (455) Յազկերտի արքայի, իշխանն Վրաց Աշուշայ ազաչէր զաւագս դրանն արքունի, բազում և անհամար կարասի ծախեալ իւրաքանչիւր ումեք, և մանաւանդ հազարապետին Միհրներսեհի, զոր մեծաւ ջանիւ և սաստիկ աշխատութեամբ հաւանեցուցեալ տալ ասել ցթագաւորն Յազկերտ, զի շնորհեսցեն նմա զորդիս երանելոյ նահատակին Հմայեկայ ի տաճկէն Մամիկոնէից... որք էին յոյժ տղայք... և հաւանեցուցեալ զմիտս թագաւորին՝ պարգևեաց Աշուշայի որպէս կարի առն սիրելւոյ և վաստակաւորի՝ զանհաւատալի ամենեցուն զմեծ նորա խնդիրն։ Եւ Աշուշայի տեսեալ զայն և ընկալեալ ի թագաւորէն զմեծ պարգևն՝ յարուցեալ ի խորանին առաջի ամենեցուն անկեալ յերկիր հոլովէր այսր և անդր, և ապա հարկանէր զգլուխ ի գետինն. այսպէս կատարէր զերկրպագութիւնն։ Եւ տեսեալ զայս թագաւորին և ամենեցուն որ ի խորանին էին, և զարմացեալք մեծապէս, թէ զինչ արար այրն՝ հարցանէր ցնա թագաւորն, թէ Վրաց բդեշխ, զի՞նչ է այդ նոր իմն գործ զոր ցուցեր դու մեզ այսօր։ Եւ պատասխանի տուեալ Աշուշայի ասաց, թէ Բարերար արքայ, դուք ինձ նոր պարգև շնորհեցէք, զոր այլ ումն ընկերաց ծառայից ի մէնջ չէր տուեալ. և ինձ արժան է նոր երկրպագութեամբ երկիր պագանել ձեզ՝ զոր ձեր յայլ ծառայէ զայնպիսի երկրպագութիւն երբէք չէր տեսեալ։ Եւ լուեալ զայնպիսի բանս թագաւորին յԱշուշայէ և ամենայն բազմութեան աւագանւոյն՝ յոյժ գովեցին զայրն և մեծապէս զարմացան» (Պարպ. ԾԹ.)։

**6.** Փարպեցին յետ դնելոյ համառօտ զգովեստ զկենաց և զվարուց կապեալ նախարարաց և կանանց նոցա՝ կը յիշէ զդարձ նոցա ի Հայս յամին վեցերորդի Պերոզի. —«Ոմանք ի կապելոց նախարարացն որոց ականատես իսկ եղաք, արդարև յերկրի երկնաւորք էին և ի մարմնի հրեշտակք երևէին. որոց կարգեալ անձամբ անձանց դըպրոց, և ուսեալք զկտակարանս եկեղեցւոյ, հոգևոր կրօնիւք զանապատական առաքինեաց զվարս տպաւորեալ յանձինս իւրեանց... յամենայն կուռոյ օգնականութեամբ հզօրին ողջանդամք, յաղթողք և առաքինիք դառնային։ Եւ որք յաղագս ծերութեան կամ ծանրամտութեան ըստ մարմնոյ բնութեան ուսանել ոչ զօրէին՝ յերկարաղօթիւք և անվաստակ յոտն կալով տուաւել ևս կամաւոր յօժա-

րութեամբ անքուն և անհանգիստք լինէին. և էր տեսանել զամենեսեան որպէս լուսոյ և մանկունս արքայութեան։ Նոյնպէս և կանայք, որոց նահատակեալ մարտիրոսացան արքն, և որոց էին ի կապանս արքն ի Հրէ՝ բազում պարկեշտասէր առաքինութեամբ մի զմիով ելեալս առնէին, զօր ամենայն մեռանելով ամենայն ախտից… և զընական տկարութիւն մարմնոյ կանանց զօրացուցեալ առաւել քան զարանց՝ քաջայաղթողք եղեն։ Կանայք փափուկք դստերք նախարարացն և կանայք աւագաց՝ փոխանակ նաշհոյ կորեակ ուտէին, և փոխանակ պարզ գինւոյ ջուր չափով ըմպէին. փոխանակ կերպասեայ ոսկեհուռ զգեստուցն՝ խոշոր բրդեայս զգենուին, և փոխանակ բազմադիմի անկողնոցն՝ ի վերայ երկրի գետնատարածք լինէին, և որք յառաջագոյն յամրանային ի քուն՝ նմանեալք վերնոցն անքունք եղեն։ Չօծան իւղով, չյարմարեցին սանդրով զհեր գլխոյ իւրեանց, և որում անհնար է յաղթել կանանց՝ շատախօսութեանն և ստէպ ընդ քօղով այսր անդր հայեցողութեան զաչս ածելոյ ի ստէպ՝ և ցածուցին զլեզուս իւրեանց յաւելորդ խօսից։ Յորոց ի խնդրուածս և ի վաստակս ի միասին արանց և կանանց ամենազօրն Աստուած հայեցեալ... շնորհեալ պարգևեաց դառնալ կապելոցն յաշխարհ Հայոց։ Որք եկեալ ի տունս իւրաքանչիւր յամի վեցերորդի թագաւորութեանն Պերոզի (464), և կեցեալք իւրաքանչիւրոց ըստ սահմանելոյ ի Տեառնէ, վախճանեալք թաղեցան ի դիրս հարց իւրեանց խաղաղութեամբ ըստ Աստուծոյ հաճոյից, օրհնեալք ամենեքեան ի բերանոյ սուրբ կաթողիկոսին Գիւտայ»։ Եղիշէ ևս, (էջ 355—362) ունի նախարարաց կանանց վրայ ըստ իւրում ոճոյ երկայն և սեթևեթեալ գովեստ, զոր աւելորդ կը համարինք դնել հոս, բաւական համարելով ինչ որ Փարպեցին կ'աւանդէ արդարև կարճ, բայց ազդու։

**7**. Փարպեցին յետ յիշելոյ համառօտիւ զկաթողիկոսունս որ նստան զկնի Յովսեփայ, այն է զՄելիտէ (452—457), և զՄովսէս Ա. ի Մանազկերտէ (457—464)՝ կու գայ առ Գիւտ (465—475), զորմէ կը խօսի մեծ գովեստիւ։ Առ սովաւ որդիք Հմայեկայ, եղբօր Վարդանայ—Վահան, Վասակ, Արտաշէս և Վարդ, կը կրթուէին ընդ խնամով մօրն իւրեանց Ձըւկայ, քենւոյն Աշուշայի։ Ընկեր և սննդակից սոցա էին մանկունք Կամսարականաց և այլոց տոհմից, որ արդարև բարեպաշտագոյն էին և որոց վրայ կը հսկէր փութով և նախանձու արթունն Գիւտ։

**8**. Այս առթիւ կու տայ մեզ Փարպեցին համառօտ բայց ազդու նկարագիր բարոյական հանգամանաց ժամանակին, սրտառուչ բանիւք գանգատելով, թէ ինչպէս անարժան մարդիկ կեղծաւորու-

թեամբ առնլով տանուտէրութիւնն՝ անպիտանացուցին զազգն, մին-
չև Պերոզի հրապարակաւ նախատել զՀայս իբրև անպիտան և յե-
տին քան զԱսորիս.—«Յետ կատարման սուրբ կաթողիկոսին Յովսե-
փայ յաջորդեաց զկաթողիկոսութիւնն յաշխարհիս Հայոց տէր Մելի-
տէ, որ էր յազգէն Մանազկերտեցեացն, և զհետ նորա տէր Մով-
սէս, որ էր և նա ի նոյն ազգէ։ Եւ ապա ըստ Աստուծոյ տեսչու-
թեան յաջորդեաց զկաթողիկոսութիւն աշխարհիս Հայոց տէր Գիւտ,
որ էր ի գաւառէն Տայոց և ի գեղջէն Արահեզայ, այր լի գիտու-
թեամբ Հայովս և առաւելեալ յունիւն, յորդասաց բանիւ և առա-
տաբուխ վարդապետութեամբ... որոյ բանք իւր նման յորդառատ
անձրևի զամենայն լսողի ծաղկեցուցեալ պտղաբերէր զոգիս։... Իսկ
զորդիս նահատակելոցն որ ի տոհմէ Մամիկոնէիցն էին՝ և կամ որք
ի տոհմէ Կամսարականացն և կամ յայլ ազգաց (ցեղից), կանայք նա-
հատակելոցն և արանցն կապելոց ի դրանն, թէպէտև ի նեղու-
թեան էին՝ ուսուցեալ և խրատեալ, ոչ իբրև զանփոյթ և զանպի-
տան կանայս, այլ իբրև զքաջայրս զառաջիկայ զօգտաբեր հրահանգս
մանկանցն հոգացեալ լինէին։ Եւ մանաւանդ կին նահատակին Հմայե-
կայ Մամիկոնէի, եղբօր սրբոյն Վարդանայ, որ եղև կին անուանի
և առաւելեալ ամենայն լաւ և մտաւոր մասամբք յամենայն կանայս
ի Հայաստան աշխարհիս, որ սնոյց և խրատեաց զորդիսն իւր յաշ-
խարհին Վրաց ի տան Աշուշայի Վրաց բդեշխի, որ խնդրեաց զնոսա
պարգևս յարքայէն Պարսից Յազկերտէ, և ածեալ ետ ցմայր իւ-
րեանց որում անուն էր Զուիկ. վասն զի զքոյրն Զըւկայ ունէր ի
կնութեան բդեշխն Վրաց Աշուշայ, որում անուն էր (կնոջն) Անուշ-
վռամ։ Եւ սնուցեալ անդ մանկունքն և ուսեալ՝ յառաջադէմք էին
յամենայնի և հռչակաւորք. որք մինչ դեռ ևս ի տիս մանկութեան
էին՝ տեսանող մտաց երևէին աջողակք և զարմանալիք. որում ա-
նունն էր առաջնոյն Վահան, և երկրորդին Վասակ, և երրորդին
Արտաշէս։ Բայց էր նոցա միւս ևս եղբայր կրսեր անուն Վարդ,
որ էր մնացեալ տղայ ի դայեակս իւր ի Տայս։... Ի ժամանակին
յայնմիկ ի Պարսկաց զտանուտէրութիւնն գնեալ էին ուրացութեամբ
ըստ անարժանութեանն, և ոչ տիրացեալք աստուածպաշտութեամբ
իբրև զարժանաւորս, արք անմիտք և վնասակարք, անպիտանք և
ոչ պիտանիք, վատք և ոչ քաջք։... Եւ էր տեսանել այնուհետև
յաշխարհիս Հայոց զլաւութիւն հեռացեալ, զիմաստութիւն կորու-
սեալ, զքաջութիւն հեռացեալ և մեռեալ, զքրիստոնէութիւն թա-
գուցեալ։ Եւ որ երբեմն քաջանուն զօրքն Հայոց ի մէջ այլ զօրացն
ամենայնի երևէին, և զօրագլուխք անուանիք և յաղթողք՝ ապա
ծաղր էին ամենեցուն և կատականք. մինչև ինքն իսկ թագաւորն

Պերող յայտնապէս նախատելով երբեմն առաջի ամենայն ատենին ասէր, թէ Այր անպիտան և գունդ յետին որ գամ մի յիմ իշխանութիւնն է՝ Ասորոց է, բայց քան զԱսորի՝ Հայն է այր յետին և անպիտան։ Եւ էր լուրն այն արժանի լալոյ և ողբալոյ» (Փարպ. ԿԴ.)։ Որչափ և կուսակցութեան ոգւով ներկեալ համարինք Փարպեցւոյն այս նկարագիրը՝ չէ անհաւանական, թէ խիստ որթոգոքս մասին այնչափ դիւցազնական ջանից և գոհերուն ունայնանալը չմնաց առանց յոռի ազդեցութեան ազգին ոչ փոքր մասին վրայ։ Անձին շահ և փառաց տենչ տուած էին տեղի գէթ առ երեւս ուրացութեան ոմանց ի նախարարաց, յանհնարին վիշտ այլոց, որ թէեւ խիստ էին ողջամիտ յիրաւի, և որոց ոգին և կրթութիւնն էր տարբեր։ Այնպիսի հակառակ ոգւով գգածելոց մէջ անհնար էր չգտնել մուտ ատելութեան և թշնամութեան։

Գ. Փարպեցին, իբրև կուսակից վերջնոց, այն է ողջամիտ մասին՝ առաջիններուն, այն է թուլացելոց ատելութեանը նշաւակ կը դնէ զորդիս Հմայեկայ, որք օրըստօրէ կը զարգանային յիմաստութեան և յարուեստի զինուորութեան, յարեցուցանելով յինքեանս նաև զազգակիցս իւրեանց զորդիս Կամսարականաց։ Մանաւանդ երէց որդին Հմայեկայ Վահան, որ արդէն սկսած էր համարուիլ գլուխ նորոգ կազմուելու կուսակցութեան, և որ կանուխ կամ անագան պիտի պարգէր երկրորդ ապստամբութեան մը դրօշն, իբրև արդարև ժառանգ ոգւոյն և քաջութեան հօրեղբօր իւրոյ Վարդանայ՝ կը կորգէր յինքն երկու կողման ևս հայեցուածն։ Վահան, հակառակ բամբասանաց և զրպարտութեանց ընդդիմակաց մասին՝ էր սիրելի Պարսկաց անգամ, մինչև գովել զնա առաջի թագաւորին, որ կը մեծարէր զնա յոյժ, թէպէտև կ՚ակնածէր ի նմանէ, յիշելով այն ցեղին քաջութիւնը. «Այնպիսի անպիտան իշխանք ժամանակին տեսանէին օրըստօրէ զաճումն յառաջադիմութեան յորդիս ազգի նահատակելոց Մամիկոնէիցն, զոր ոչ ի տուչութենէ մարդոյ վստահեալ ունէին յանձինս, այլ օգնութեամբ վերին խնամակալութեան, ի բարեխօսութենէ սուրբ արեան նախնեացն իւրեանց, զոր ի վերայ սուրբ եկեղեցւոյս Հայոց հեղին յօժարութեամբ, կային աներկիւղապէս ի մէջ անուանեալ իշխանացն Հայոց որպէս ի մէջ թշնամեաց։ Թէպէտև արհամարհեալք էին առ նախանձու՝ սակայն լաւագոյնք էին և երեւէին յամենայնի և ականաւորք ի խորհրդի, մտաւորք և իմաստնագիւտք, ի նետաձգութեանն գեղեցկաձիգք և դիպեցուցողք, յորթեթևաշարժք և նախասպանք, յերկոցունց ձեռաց յաջողակք, և յամենայն կողմանս ուղղակիք և շնորհալիցք. զորոց ձանձրացուցանէին բազմածառայքն զանծառայիցն զգուրսն, խնդրելով հան-

պագ զմիս այլևայլ որսոց և կամ այլ պատուական և մեծագին գիտից խնդրովք ըստ իւրաքանչիւր աշխարհաց»։ Փարպեցւոյն միտքն է այս․ որովհետև Վահան և իւրքն էին քաջ և յաջողակ յորսորդութեան, և՞ միս երէոց և ամիճ կը գտնուէր միշտ առ նոսա առատ, որ պատուականագոյն համարուած էր առ հինսն Հայոց, և որովհետև ուրիշ երկիրներէ ևս կ'ընդունէին նոքա չքնաղ և պատուական բաներ՝ մինչ նախարարաց ծառայք որ բազում էին թուով՝ կը մաշեցունէին զդրունս սոցա, որ չունէին իբրև զնոսա բազմութիւն սպասաւորաց՝ խնդրել այն չքնաղագիւտ բաներէն։ «Նոքօք շքեղանային ընթրիք ամենայն տանուտերանց Հայոց, նոքօք զարդարէին յամենայն տունս օտարք և ընտանիք։ Նմանեցուցեալ ինքեանց ի յառաջանալ փութային և զորգիս երանելոյն Կամսարականին Արշաւրայ տեառն Արշարունեաց, որք և ազգախառն իւրեանց էին ծնունդք դստեր մարտիրոսին Վարդանայ, խրատել և հրահանգել ըստ իւրեանց իմաստութեան և արուեստի ջանային։ Եւ յայսպիսի ինչ բարւոյ մասունս առաւել ևս կամաւոր յօժարութեամբ յորդագոյն էր աւագ որդին սրբոյն Հմայեկայ, Վահան, քանզի էր այր մտացի, առողջախորհուրդ և բարեսէր, յոր գործ և ձեռն արկանէր գործել՝ տէր յաջողէր ի ձեռս նորա և զօրանայր։ Նաև գործակալք պարսիկք որ գային ի դրանէ, թէպէտև ոչ կամաւ՝ այլ ըստ Աստուծոյ սադրելոյ սիրէին զնա և պատուէին։ Որք և առաջի թագաւորին Պարսից գովէին զլաւութիւն առնն և անմոռաց լինէին․ մինչև ինքն իսկ թագաւորն Պերոզ գլխովին ծանեաւ զնա և առ լաւս ունէր, և յանդիման ամենեցուն գովէր և արժանի պատուոյ հաշուէր։ Բայց արժանի ըստ նորա իմաստութեանն և քաջութեանն թէպէտև ածէր զմտաւ պատուել զնա, այլ յիշելով զհարցն և զնախնեացն նորա զիրս և զգործս, և ո՛րպէս հանապազ ընդդիմութեամբ և պատերազմաւ աշխատ կալեալ էր զնոսա՝ յապաղեալ կասէր, մանաւանդ իբրև հապստէպ լսէր զնախանձորդացն զբանսարկութիւն... կասկածէր երկիւղիւ» (Փարպ. ԿԳ.)։

**10.** Ընտիր և առաքինի մարդիկ իբրև զՎահան, որպիսի էին Բաբիկ Սիւնի և Առնակ Ամատունի և այլք ըստ Փարպեցւոյն՝ կ'ապրէին գրեթէ առանձնացեալ, ընդ հովանեաւ և խրատու սքանչելւոյն Գիւտայ։ Թէպէտև «կարեւոր համարէին սոքա, որպէս ասէ Փարպեցին, համբերութեամբ ի քրիստոնէական կարգի վախճանել» էին սակայն ի ծածուկ ի խնդիր ազատութեան, փախստեամբ և կամ օգնականութեամբ Յունաց, ուր աղագաւ քանիցս անգամ եղան փորձեր դիմել առ Լևոն Ա․ կայսր (457—474), բայց չյաջողեցան։ Սակայն Գիւտ ոխութեամբ էր, որպէս ասէ Փարպեցին, հակառակ կող-

ման հետ, որ ինչպէս կ'երեւի՝ աշխարհային յուսով կ'ողոքէին զՊարսիկս. մանաւանդ Մաղխազն (Խոսխոռունին) Գադիշոյ, որ և կամբաստանէր չարաչար զԳիւտ, իբրև հակառակորդ պարսկական տէրութեան և դենին։

**11.** Գիւտ կը կոչուի ի դուռն, կ'երթայ, կ'ընդունուի տեղւոյն քրիստոնեաներէն, կու տայ պատասխանի իրեն դէմ եղած ամբաստանութեանց Յըզատվշնասպայ, որ կարգուած էր Թագաւորին կողմանէ. և թէպէտև կ'արդարացունէ զանձն՝ բայց որովհետև, ըստ Փարպեցւոյն, Պերոզ կը պահանջէր ի նմանէ ընդունել զմոգութիւնն, ապա թէ ոչ կ'սպառնար ընկենուլ զնա եպիսկոպոսութենէն՝ Գիւտ, առանց ուրանալոյ զիւր հպատակութիւնն հրամանաց Թագաւորին իբրև պաշտօնեայ՝ իմացուց թէ զեպիսկոպոսութիւնն, իբրև աստուածուստ տրուած կարգ կամ ձեռնադրութիւն՝ առնուլ չէր ձեռնհաս ո՛չ նա և ոչ այլ ոք ի մարդկանէ։ Այս համարձակութիւն Գիւտայ զայրացուց զԹագաւորն՝ մինչև ընկենուլ զնա կաթողիկոսութենէն, որ կը թուի թէ իբրև քաղաքական պաշտօն եւս կը համարուէր, այժմու պատրիարքութեան պէս։ Գիւտ ուրախ էր, վասն զի ազատեցաւ կաթողիկոսութեան ծանր հոգէն, և իւրով կամօք մնալով ժամանակ մի եւս ի դրան՝ դարձաւ ի Հայս, և մեռաւ իւր գաւառին մէջ Ոդմսու անուանեալ գիւղը։ Փարպեցին կու տայ նմա նաև բժշկութիւններ կատարել ի Պարսս.—«Իսկ լաւ ոք այր յանկարծ և կամ արժանաւոր թէպէտև էր ի ժամանակին, որպէս լաւ այր Բաբիկ Սիւնի և կամ սքանչելին Առնակն Ամատունի և կամ այլ ոք նման նոցին, ի հոգեսպանութենէ մոլեկան Թագաւորին և ի կատաղութենէ ամբարշտեալ ժամանակի իշխանացն որպէս նապաստակք ի սլացմանէ գիշակեր արծուեաց ի ծերպս վիմաց և ի մացառուտ տեղիս մայրեաց զօղեալ թագչէին. կարևոր համարէին համբերութեամբ ի քրիստոնէական կարգի վախճանել, քան թէ փառախնդիր յածմամբ պատահել ուրացութեան և կորնչել։ Լաւ համարէին ըստ բանի Գրոյն զնախատինս վասն Քրիստոսի, քան առ ժամանակ մի թաթաւել ընդ սնոտի փառս աշխարհիս։.. Ժողովեալք նստէին առ սուրբ քահանայապետին Հայոց Գիւտայ, որ ոչ երբէք լռէր յարտասուելոյ զմոլորասիրացն զմոլորութիւնս, որ խնդրէր լռելեայն պաճարանս հայթայթանաց հանդերձ նոքօք. երբեմն փախչել յօտարութիւն, և երբեմն ի խնդիր լինել օգնականութեան և ապստամբել։ Առաքէին գաղտ և պատգամաւորս միանգամ և երկիցս առ Թագաւորն Յունաց Լևոն, որոյ թէպէտև յանձն առեալ կամէր օգնել՝ յերկարէր ժամն և խափանէին։ Սկսանէր այնուհետև սուրբ կաթողիկոսն Հայոց Գիւտ առ ի չժուժալ սրտին յայտնա-

պէս ախութեամբ զրգռել ընդ անօրէն ուրացելոցն, և սիրել և պատուել զկողմն տառապեալ հաւատացելոցն։ Եւ մանաւանդ առ վատթարս ունէր և արհամարհէր զՄաղխազն Գադիշոյ, որ զօրագլուխն և քաջալերիչն էր ամենայն ամբարշտելոցն դասու։ Որոյ չկարացեալ տանել արհամարհանաց սրբոյ կաթողիկոսին՝ զօդեալ բիւր բանս թշնամութեան ամբաստան լինէր զնմանէ առ թագաւորն Պարսից Պերոզ ասելով, եթէ Զմարդիկ որ զկամաց քոց զհրաման կամին կատարել և զքո օրէնս խորհել յանձն առնուլ՝ կոչէ առ ինքն, և է որ ինչ տալով, և է զորս քաղցր բանիւք պատրէ և յերացն ի բաց դարձուցանէ։ Վասն զի բազումք եկեալ են առ իս և յանձն առեալ ունել զօրէնս քո, և նորա կոչեալ առ ինքն՝ պատրանօք ի բաց տարեալ է թողուլ զկրսն և արհամարհել. այլ և ըզմեզ որ զքեզ սիրեմք և արեգական և կրակի երկիր պագանեմք և կամաց քոց ծառայեմք՝ ատեայ և թշնամանէ։ Եւ ինքն ընդ կայսեր խօսի և պատուական ընծայիւք հպատակէ նմա և մեծամեծաց որ ի դրան նորա են։ Եւ այլ բազում բանիւք ըստ օրինի թըշնամւոյ խօսէր ըստ կամի։ Եւ լուեալ զայսպիսի բանս ամբաստանութեան թագաւորին Պերոզի ի Մաղխազէն Գադիշոյէ՝ զայրացեալ սրտմտութեամբ հրաման տայ սրբոյ կաթողիկոսին Հայոց ի դուռն հասանել, և անդ պատասխանի առնել բանից դատախազին։ Իսկ երանելի կաթողիկոսն Հայոց Գիւտ կամաւ և յօժարութեամբ ի դուռն երթայր և յանդիման լինէր աւագաց դրանն։... Հեթանոսք մեծ զգուշութեամբ խորշեալ պատկառէին ի նմանէ, և քրիստոնեայքն և եպիսկոպոսն Տիզբոնի և Խուժաստանի և Հրեայ և ամենայն կողմանցն այնոցիկ երիցունք և սարկաւագունք երկուցեալ դողային ի սրբոյն, որպէս ի մարգարէէ Տեառն Աստուծոյ։ Եւ լուեալ թագաւորին Պերոզի զերթալ սրբոյն Գիւտեայ՝ յղէր առ նա մի ըստ միոջէ ըստ ամենայն բանից ամբաստանութեան Մաղխազու զՅըզդատվշնասպն, զորդի Աշտատայ ի Միհրան տանէ։ Եւ սրբոյ կաթողիկոսին Գիւտայ պատասխանի արարեալ բանից թագաւորին՝ ասէր. Ոչ են ամենայն ասացեալքդ Մախազու զինէն առ ձեզ՝ սուտ, այլ են որ արդար են, և են որ ոչ են ստոյգ արդար։ Սիրել ըզքրիստոնէութիւն և որ ոք քրիստոնեայ է՝ զայդ ոչ այսօր ընտրեալ պահեմ յանձին իմում, այլ ի մանկութենէ իմմէ։... Այլ որ ասենդ թէ երթեւեկք նորա ի Հոռոմս՝ ոչ ըստ դորա կարծեաց և խօսիցն այդպէս են իրքն. այլ վասն զի զդպր⋯թիւն գիտութեանս մերոյ յաշխարհին Հոռոմոց ուսեալ եմ, և են իմ անդ ծանօթք բազում և ուսումնակիցք, այլ և զկերպարան հանդերձիցս զոր ունիմքս՝ անտի գնեմք, վասն զի և ոչ յայլ աշխարհի գտանի սա

ուրեք. այլ զհնազանդութիւն ծառայութեան օրէնք իսկ մեր պա-
տուիրեն հատուցանել տերանց զգիպողսն և զարժանաւորս։ Եւ տա-
րեալ զայս ամենայն բանս պատգամաւորին առ Թագաւորն՝ իսկոյն
ծանեաւ Թագաւորն, թէ ստոյգ են խօսք սորոյն, և սուտ և առ-
քինաւորութեանն խօսի Մախազ զնմանէն զոր ինչ և ասէ։... Բայց
յղէր առ երանելի կաթողիկոսն, թէ Մինչև ցայժմ քո իշխանու-
թիւնդ առանց իմ հրամանի կալեալ է, և ծառայ մարդիկ են որոց
քեզ զայդպիսի մեծ գործ տուեալ է, և ոչ ինչ յինէն ունիս։ Բայց
այժմ եթէ զիմ կամս առնես և զիմ օրէնս ունիս՝ զգործ զայդ քեզ
և քում ազգի և որում դու կամիս՝ տամ մինչև յաւիտեանս, և
զքեզ պատուով այնպէս արձակեմ ի Հայս՝ զի Հայոց ուրուք ի մեր
դրացս պատիւ և շքեղութիւն այնպիսի չիցէ գտեալ որպէս դու
գտանես։ Ապա թէ յամառեալ չհաւանիս կատարել զկամս իմ՝ զե-
պիսկոպոսութիւնդ ի բաց առնեմ ի քէն, և ի գործոցդ ի բաց հա-
նեմ, և դու անարգանօք և թեթևութեամբ երթաս ի տուն քո և
յաշխարհն։ Երանելի այրն Աստուծոյ լցեալ զօրութեամբ սուրբ հո-
գւոյն՝ ասաց ցպատգամաբերն արքունի. Կամէի թէ այդպիսի բանից
պատասխանիս ես ինձէն առնէի առաջի Թագաւորին. քանզի ոչ է
հնար քեզ և ոչ իշխես համարձակապէս պատմել Թագաւորին լիով
զամենայն լուեալսն ի բերանոյ իմմէ։ Եւ պատգամաւորին պատա-
խանի տուեալ ասէ ցսուրբն. Համարձակութիւն տուեալ է Թագա-
ւորաց՝ ասել զարդար լուրն ի մէջ երկուց կողմանց, և լսեն պատ-
գամաւորք, և չիշխեն եթէ չասեն։ Եւ սուրբ այրն Աստուծոյ ետ
պատասխանի և ասէ. Ասա՛ ցԹագաւորն, թէ յաղագս գործոյս զոր
ասես, թէ ցայժմ քո ի ծառայից և ոչ յինէն կալեալ է՝ թէ դու
կամ ոք ի ծառայիցն քոց որ ետուն և առնուք յինէն՝ ուրախ եմ
և կամիմ... Իսկ վասն եպիսկոպոսութեան ձեռնադրութեանս որ
ասես, թէ ի բաց առնում ի քէն՝ զայս երկնաւոր ձեռնադրութեան
պատիւ առնուլ յինէն ոչ Թագաւորք և ոչ յիշխանաց ոք ոչ իշխէ՝
քանզի և կարէ իսկ ոչ, այլ մահ. և ոչ բնաւ երկնչիմ ի մահկա-
նացու մարդոյ տալ զպատիւս զայս ինձ և կամ առնուլ յինէն։
Բայց վասն օրինացն քոց որ ինձ ունել հրամայես, յաղագս որոյ և
պատիւս և պարգևս խոստանաս տալ ինձ՝ ոչ ուրուք է յերկրաւո-
րացս պատիւ մեծ և իշխանութիւն հզօր տուեալ քան զքոյդ որ
ունիս. բայց վասն անպիտան և գարշելի օրինացդ քոց զոր ու-
նիսդ՝ դու ինքնին զլխովին որ Թագաւորդ ես և ամենեքեան որ
զայս օրէնս ունիք՝ մեռեալ համարեալ էք յաչս իմ և ոչ կենդա-
նիք, և զպատիւս քո և զփառս անարգանս համարիմ և մանկտւոյ
ծաղր և կատականս։ Եւ լուեալ զայսպիսի բանս պատգամաւորին ի

սրբոյ կաթողիկոսէն Հայոց Գիւտայ՝ ասէ ցերանելին. Թէ արդարև ի վերայ գործն բանից պնդեալ կաս՝ ապա արդար ասէիր, թէ չիշխես տանել զասացեալս իմ առ Թագաւորն, և իրաւ ասէիր. զի ոչ ուրուք երբէք այդպիսի բանս ստամբակութեամբ յղեալ է առ Թագաւոր: Բայց տես, թէ հնար է փոխել զխօսսդ, ուշիմ լեր: Եւ սրբոյն պատասխանի արարեալ ասէր... Դու ասացեր թէ Թագաւորաց օրէնք են՝ չիշխել պատգամաւորի նուազեցուցանել բան մի ի բանից առաքողին կամ առաւելուլ: Արդ երթ ասա՝ զոր լուար յինէն. քանզի ինձ ոչ է հնար խորհել այլ ինչ կամ ասել: Եւ երթեալ պատգամաւորն առաջի Թագաւորին՝ ասէ ցԹագաւորն. Ոչ իշխեմ ես զխօսեցեալս առն յանդգնաբար երկրորդել առաջի ձեր՝ բայց եթէ ի ձէնջ հրաման առնում: Եւ հրամայեալ Թագաւորին ասել համարձակապէս զամենայն լուեալսն առանց երկիւղի՝ և պատմէր այնուհետև մի ըստ միոջէ զամենայն բանս առն Աստուծոյ Գիւտայ: Եւ լուեալ Թագաւորն զամենայն աներկիւղապէս խօսեցեալսն Գիւտոյ, ի զայրացումն սրտմտութեան գրգռեալ՝ կամեցաւ տալ հրաման խստութեամբ. և յանկարծակի դադարեցուցեալ զինքն առ վայր մի լռեաց, և ապա սկսաւ խօսել և ասէ. Զէ հնար եթէ կատարին կամք խնդրոյ նորա զոր նայն կամի, և ոչ տամ համբուրել քրիստոնէից զկապանս նորա և ոչ երկիր պագանել ոսկերաց նորա:... Բայց ասա ցնա, թէ այդմ պատուոյ չտամ քեզ պատահել, զոր դու ցասուցանելով զիս գտանել կամիս յինէն. կաց ուր և կամիս, բայց ի գործոյ կաթողիկոսութեան հեռի ես, և չէ քո»: Կացեալ այնուհետև ի դրան ըստ իւրում կամելոյ սուրբ կաթողիկոսն Հայոց Գիւտ, բազում համարձակութեամբ պատուեալ, ոչ միայն ի քահանայից և ի քրիստոնէից, այլ և առաւել ի հեթանոսացն, որ իւրաքանչիւր ախտից գտանէին բժշկութիւն յաղօթից սըրբոյն:... Եւ այսպէս պատուեալ յամենեցունց՝ ուրախալից շքեղութեամբ հրաժարէր գնալ յաշխարհն Հայոց... ուր կեցեալ առաւելապէս պատուով քան զառաջինն՝ հանգչէր երկայն ծերութեամբ» (Փարպ. ԿԴ.):

**12.** Ցասացելոց մինչև ցարդ յայտնի է, թէ Վարդանանց կըռուով, և պարտութեամբ, Փարպեցւոյն բանիւ, ուխտապահաց կողման՝ չեղաւ անհետ ոգին ազատութեան, յոր կը դիմէր այս կուսակցութիւնն, մէտ ի Յոյնս և ակնկալու օգնութեան նոցա: Նոր ապստամբութեան մը խորհուրդը կը գործէր գաղտ, հաւանութեամբ, թերևս և յորդորելով կղերին, և փոքր առթի կ'սպասէր գալու յերևան: Բայց ոչ առթի միայն, այլ և առաջնորդի կարօտ էր գործն, և այս կանուխ սկիզբէն կը տեսնուէր յանձին Վահա-

նայ, որ զառաքինութիւն և գքաջութիւն հօրեղբօր իւրոյ կը ցուցնէր յանձին։

Յառաջ քան զպատմել մեր առիթը, որ ընծայեցաւ պարզելու ապստամբութեան դրօշը՝ չէ անդէպ խօսել համառօտիւ այս անձին գլխաւոր հանգամանաց վրայ, զոր ընդարձակ ևս պիտի տեսնենք յետոյ առ Փարպեցւոյն։ Վահան էր ըստ ոգւոյն անվեհեր, յառաջատես, ուսեալ և զգուշաւոր, բայց ժիր։ Զինուոր քաջ ի բնէ, անհնարին պատերազմող, ի զօրավարութեան հնարագէտ, ճարտար իւր ձեւովն և արութեամբ ազդել պատկառանս և ահ թշնամւոյն սակաւուք անգամ, զորս գիտէր քաջ ընտրել։ Ըստ բարուցն՝ Վահան էր քաղցր, ծանր և հանդարտ, մտաց և հանճարոյ անհնարին առաւելութեամբքն հանդերձ՝ նաև հլու։ Քաջ խօսող, մանաւանդ թշնամւոյն հետ, զոր յաղթահարելու ամէն հնար ունէր իւր պարզ բայց ազդու ճարտարխօսութեամբն։ Բանակցութեանց մէջ, թէ անձամբ և թէ դեսպանօք, էր ազատ և համարձակ, առանց խոտորելու արդարութեան և հպատակութեան սահմանէն։ Երկու թագաւորի հետ ունեցաւ Վահան խօսք, Պերոզի և Վաղարշու՝ յարդարացումն անձին և ազգին, յերկոսին ևս եղաւ յաղթող, ամբաստանելով հակառակ կողմը, մինչև խոստովանել աւագանւոյն և թագաւորին միանգամայն, թէ արդար էր Վահան, և արձակուիլ պատուով։ Զայսոսիկ գիտելով կարճ՝ յառաջ տանինք զպատմութիւն մեր։

**13.** Ըստ Փարպեցւոյն՝ Գադիշոյ Խորխոռունի, որ է գլխաւոր կողման, դարձեալ Փարպեցւոյն բանիւ, ուրացողաց—թէպէտ մենք չենք համարձակիր տալ այս անունն այն կուսակցութեան, գէթ այն ընդարձակութեամբ որով կու տայ Փարպեցին,—կասկածանօք կը նայէր ի Վահան, թերևս առ նախանձու, բայց մանաւանդ առ երկիւղի, թէ Վահան մտաբերէր յառաջ տանել իւր հօրեղբօր գործը, ուստի և կ'ամբաստանէ զնա իւրովքն առ թագաւորն։ Վահան կ'ստիպուի երթալ առ Պերոզ, և արդարացեալ կը դառնայ յիւրսն, բայց տկարացեալ ի հաւատս.—«Եկեալ ի դրանէ և Մաղխազն Գադիշոյ, ժողովեալք առ նա դասք ուրացողացն... իբրև տեսանէին զՄամիկոնեանն Վահան այնպէս երևելի... ներկեալք խամրէին և ծնկեալք թարշամէին։ Խնդրէին ի վերայ նորա հնարս պատճառանաց, որով զնա և զեղբարս նորա կորուսանել կարասցեն. տային գիտել մեծամեծաց դրանն, այլ և էր ինչ որ թագաւորին, թէ ոչ է հնար սմա առանց ապստամբութեան կեալ ի Հայս։ Յիշեցուցանէին Արեաց և զնախնեացն նորա զմիոյ միոյ, թէ ո՛վ ի նոցանէ ոչ խռովեցոյց զԱրեաց աշխարհ և ոչ արար մեծամեծ վնասս և մահուն-

արդ՝ երբ և է՛ ասեն, առ զնոյն խռովութիւնս յարուցանելոց է ի վերայ ձեր:… Տեսեալ այնուհետև Վահանայ զայնչափ յարուցմունս նախանձաւորացն ի վերայ նորա, թէ ոչ երբեք կասեալ լռեն ի չար նախանձալից խօսից, չկարացեալ տանել հանապազօրեայ բանսարկութեանն՝ երթեալ ի դուռն տկարանայր ի հաւատն. և եկեալ ի Հայս, սակայն և այնպէս խնուլ զբերանս չարախօսացն ոչ կարէր» (Փարպ. ԿԵ.): Թէ ինչ կը նշանակէ «տկարանալ ի հաւատս»՝ չէ ստուգիւ յայտ. թերևս տալ դաւանութիւն ըստ վարդապետութեան մոգուց, կամ թերևս պաշտօն ինչ մատուցանել արեգական և կրակի: Այս ուրացութիւնք էին մանաւանդ հաճեցունելու համար մոլեռանդ թագաւորն, և իբրև արտաքին նշան հաւատարմութեան, ուստի և քաղաքական, քան ճշմարիտ կրօնական դարձ: Բայց և այնպէս Վահան, յետ դարձին այսրէն ի Հայս, չկրցաւ կարկել իւր հակառակորդներուն բերանը: «Որ ոք, ասէ Փարպեցին, բան ուղիղ ի հրապարակի առաջի իշխանի չգիտէր խօսել՝ զնա ատեայր. և որ ոք յորս կամ ի թիւրախ նետ չգիտէր ձգել՝ զնա պարտաւորէր: Նստի, ասէին, և ամենեցուն ունչս առնէ: Եւ որ ոք անմտութեամբ զգործս արքունի չմարթէր գործել՝ ի նա բերէր զպատճառն: Նա, ասէին, յառաջէ յամենայն ի գործս, և չտայ ումեք գործել կամ օգտել» (Անդ):

**14.** Եւ որովհետև, ինչպէս կը գուշակուի պատմութենէն, Վահանայ յանձնուած էին ոսկւոյ հանք, հակառակորդք, և մանաւանդ Վրիւ ումն ասորի որ գործակից էր նորա՝ սկսան ամբաստանել զնա, թէ Վահան ինքնագլուխ կը գործէր, և թէ կը խորհէր ոսկին առնլով փախչել յօտար երկիր: Այս պատճառաւ Վահան դարձեալ կ'երթայ առ թագաւորն, տանելով ընդ իւր ոսկին, և արդարանալով կը դառնայ ի Հայս.—«Վասն զի էր նորա գործակից որում անուն էր Վրիւ, անանուն ըստ ազգի և անփորձ իրի, որդի առն աւորւոյ, բայց շատախօսութեամբ և ընդվայրաբանութեամբ առաւելեալ նմանէր ազգի Ասորոց. որոյ չմարթացեալ գործել ըզգործ արքունի՝ երթեալ լինէր ամբաստան զՎահանայ առաջի թագաւորին Պերոզի ասելով, թէ Ինձ ի գործ ոսկեհատին չետ ինչ մօտ երթալ, և իւր ժողովեալ զամենայն ոսկի աշխարհին՝ խորհի երթալ առ կայսր և կամ յաշխարհն Հոնաց, և տուեալ զոսկին կամի խնդրել զունդ և ապստամբել: Եւ լուեալ զայս ամենայն բան ամբաստանութեան զինքենէ Վահանայ՝ առեալ փութանակի զբազմութիւն ոսկւոյն հասանէր ի դուռն: Եւ լուեալ թագաւորին Պերոզի զճեպով երթալն Վահանայ՝ զարմացեալ ասէր. Եկդ Վահանայ այդպէս երագ՝ շատ ընդդէմ է բանիցն Վրուայ, մանաւանդ եթէ

բերեալ ես ինչ է։ Եւ եղեալ յանդիման Թագաւորին՝ տեղեկանայր ի նմանէ Թագաւորն Պերոզ, թէ արդարև բերեալ ինչ է. և լուեալ ի Վահանայ զքանիօնութիւն բազմութեան ոսկւոյն զոր բերեալ էր՝ ուրախ լինէր յոյժ։ Ապա և յանդիման Վահանայ տայր ասել Վրուայ զբանսն՝ զոր ասէր զնմանէ յառաջագոյն։ Եւ լուեալ Վահանայ զամենայն ասացեալսն Վրուայ՝ ետ պատասխանի առաջի Թագաւորին և ասէ. Գիտեմ և ես զանիմաստութիւն անձին իմոյ, ըստ ցուցանելոյ զիս ձեզ Վրուայ. բայց սակայն այնքան կոյր չեմ, թէ զԱրեաց ոյժ և տեսանել անգամ չգիտեմ. որոյ ուժոյ զբազում ազգս ապստամբաց հարեալ է սաստիկ երկիւղիւ, և հնազանդեցուցեալ ընդ իւրեանց ձեռամբ ունին։ Իսկ ես որ ապստամբելս կամիմ ըստ դորա ասելոյդ՝ դոյն իսկ ինքն գիտէ, զի մի ծառայ չգտանի իմ, որ ինձ խոհակերութիւն առնէ, և ոչ երկուց կամ երից պատանեաց իշխեմ տիրաբար, որ ինձ երկիւղիւ սպաս ունին. գնդի իմ ոյժ այդ է։ Բայց եթէ նեղ ինչ էր ինձ ի ձէնջ, և ուրեք յօտար երկիր գնալ և կորնչել կամէի, զայդչափ ոսկի այսր զի՞ բերէի, որ մինչև ցմահ իմ, թէև կարի շատ կէի՝ իմում անձինս, այլ և տասանց ևս ընդ իս թոշակ շատ էր և բաւական. և զայլ ոք ոստիկան ձեր յիմ վերայ չէր կացուցեալ, որ հարկէ տայր բերել այսր զայդչափ բազմութիւն ոսկւոյ։ Բայց թէ փաստակել գիտեմ ձեզ՝ դուք կարող էք զիս, թէ կամիք՝ կեցուցանել փաղփաղակի և առժամայն մեծացուցանել, որպէս և կամիք։ Եւ լուեալ զայս Թագաւորին Պերոզի և աւագանւոյն՝ ամենեքին իրաւացուցին զխօսս Վահանայ քան զխօսս Վրուայ։ Եւ ելանէր Վահան արդարացեալ յատենէն, և որդի ասորւոյն Վրիւ ելանէր ամաչեցեալ և արհամարհեալ։ Եւ հրաժարեալ Վահանայ ի դրանէ՝ մեծարանօք և բազում շքեղութեամբ եկեալ հասանէր յաշխարհս Հայոց» (Անդ)։

**15.** Վահան ունէր խայթ խղճի վասն ուրացութեանն, և կը խնդրէր առիթ սրբելոյ զայն աղտ. ուստի մինչ նա այս խորհրդով կը տագնապէր՝ յարեաւ խռովութիւն ի Վիրս։ Բուն Վրաց Թագաւորն Վախթանգ սպան զուրացեալ բդեշխն Գուգարաց Վազգէն։ Հայք որ էին զինուորութեամբ յԱղուանս և էին դժգոհ ուրացեալ հայ իշխաններէն մանաւանդ քան Պարսից զօրագլուխներէն, լսելով Վրաց ապստամբութիւնը՝ կ'ուրախանային, բայց կը կասկածէին թէ տարուէին Պարսկաստան. իսկ երբ զերծան այս երկիւղէն և եկան ի Հայս՝ խորհեցան ապստամբել, և զայս խորհուրդ յայտնեցին Վահանայ, որ գիտէին թէ խղճիւ էր ուրացութեան համար։ Վահան ի սկզբան կ'ընդդիմանայ նոցա, ցուցնելով նոցա զզօրութիւնն Պարսից, զթուլութիւն և զխաբէութիւն Յունաց, զտկարութիւն Վրաց

յորս յուսացեալ էին, զանստուգութիւն օգնութեան Հոնաց, և մանաւանդ զիւրեանց անհաստատութիւն. բայց յետոյ կը հաւանի, և բերել տալով զԱւետարանն՝ կ'երդնուն ամենեքին մինչև ի մահ հաստատուն մնալ.—«Եւ քանզի չէր խաղաղութիւն մտաց նորա (Վահանայ) զամենայն օր վասն վատ անուան ուրացութեանն՝... հնարս հայցէր և անդադար խնդրէր ի Փրկչէն Քրիստոսէ շնորհել նմա ժամ բարի... Եւ մինչդեռ Վահան յայսպիսի յուզմունս մտաց կայր տարակուսեալ՝ լինէր յանկարծակի խռովութիւն յուզմանց յաշխարհին Վրաց: Վախթանգ սպանանէր զբդեշխն զանօրէնն Վազգէն յամի քսաներորդի հինգերորդի Պերոզի արքայի: Զայս լուեալ Հայոց աշխարհիս մարդկան, յորոց բազումք այն ամ յԱգուանս էին յապըստամբ ամրականացն կուռի, որոց զօրագլուխ էր Զարմիհր հազարապետ, և Հայոց աշխարհիս Ատրվշնասպն Յոզմանդեան էր մարզպան,... ցնծային ուրախալից սրտիւ, վասն զի գայր առ նոսա համբաւ, թէ Վրաց արքայ ասէ, թէ Ես միում ումեք զկռիւ չտամ տեսանել, այլ այնչափ հանեմ Հոնս՝ որում ոչ կարիցեն հարկանել ի դիմի զօրքն Պարսից: Զօրացեալք յայնպիսի համբաւոյ՝ ակն ունէին օգտի... բայց երկնչէին թէ մի գուցէ առեալ զգունդն Հայոց զօրագլխացն Պարսից՝ ի դուռն գումարիցեն: Այլ յայնպիսի կարծեաց զերծեալ գային ի Հայս, և եկեալք ի գաւառն Շիրակայ, ի դաշտն ուր բնակէր մարզպանն Հայոց Ատրվշնասպ Յազմանդեան, և առնմին հազարապետն Հայոց Վեհվեհնամ, խորհուրդ ի մէջ առեալ ոմանց նախարարացն Հայոց, որ զորտմեղն և զտարակուսեալն ի բազում ժամանակաց գիտէին զՄամիկոնէին Վահանայ յաղագս մոգութեանն անուան, և ասէին, թէ Կարի պատեհ է և մեզ և նմա ժամս այս փրկութեան, նմա՝ ապրել ի խղճէ մտացն իւրոց, և մեզ՝ զերծանել ի հանապազօրեայ կասկածանացս և յարաժամ հարանացս, որոց ծառայեմքս ի հարկէ հեղձամղձուկս նախանձու: Եւ արքայդ Վրաց Վախթանգ արեացի է, օգնեսցէ մեզ, և հանդերձ Վրօք թերևս կարող լինէաք առ սակաւ մի աշխատ առնել զՊարսիկս:... Յայտնէին այնուհետև համարձակեալք ի գիշերի միում զբանս մրտածութեանն իւրեանց Մամիկոնէին Վահանայ, որոյ լուեալ ասէր ցամենեսեան. Գիտեն ոմանք որ էք ի խորհրդիս յայս, թէ որպէս վտանգեալ տագնապիմ յամենայն ժամու վասն սուտ անուանս զոր ատելութեամբ կրեմ յանձին իմում... կամէի գտանել հնարս և զերծանել ինձ ի խղճէս որ նեղէն զիս... բայց միաբանել խորհրդոյդ և ասել ձեզ, թէ լաւ է իմաստ և արարէք՝ ոչ կարեմ ասել և չիշխեմ. վասն զի զԱրեաց ույժն և սատարակութիւն քաջ գիտեմ, և զՀոնոմոց զթուլութիւնն և զխաբէութիւնն, և զձեր ծանուցեալ

է փորձիւ իմ, թէ որպէս հարանց մերոց ուխտեցին երդմամբ և ստեցին. և վասն Վրաց արքայի և Հոնացդ զորս ասէք՝ Վիրք առանձին թեթև ինչ աշխարհ են և այրուձիով սակաւաւորք. բայց վասն Հոնաց՝ ո՞ գիտաց, հաւանի՞ն գալ թէ ոչ, որք չենն ի մէջի և չերևին: Բայց քան զամենայն ես առաւել յանձանց երկերուք, վասն զի մարդիկ սուտք էք և անվստահք... Ցընդունայն և յանպիտան խորհուրդս ձեր զիս մի աշխատ առնէք: Եւ լուեալ զայս ամենայն բանս նախարարացն Հայոց ի Մամիկոնենէն Վահանայ՝ ետուն պատասխանի միաբանութեամբ և ասեն. Զամենայն զոր ասացերդ՝ լի ասացեր, որպէս վայելէ քում իմաստութեանդ, ճշմարիտ ասացեր և արդար. բայց զյոյս մեր ոչ ի Հոռոմս եդեալ է և ոչ ի Հոնս, բայց նախ յողորմութիւնն Աստուծոյ... և ապա ի մահ անձանց մերոց:... Եւ լուեալ զանուն մահուան Մամիկոնէին Վահանայ և քաջի եղբօր նորա Վասակայ՝ քաջալերեալք զօրացան:... Սկսաւ խօսել Մամիկոնեանն Վահան և ասէ. Դուք գիտէք, զի Վարդ, իմ եղբայր, ի գրանն է. և գիտեմ եթէ լուեալ զխորհուրդս մեր Պարսկաց՝ կապեն զնա և վշտացուցանեն. բայց ի մահ յօժար եմ քան այսպէս կեալ ուրացութեամբ... և ամենագիտին հայեցեալ ի դարձս իմ՝ արասցէ յիս նշան բարի և դարձուսցէ առ իս զանձկալի եղբայրն իմ զՎարդ ողջ... և զայս ասացեալ յառնեն ամենեքեան... և մատուցեալ յառաջ սրբոյ քահանային որում անուն Աթիկ, այր բանիբուն բանիւ և խորհրդապահ սրտիւ, յերևելի գեղջէն որ կոչի Բճնի, և բերեալ սուրբ Աւետարան՝ ողջունէին ամենեքեան... և երդուեալք ի գիշերին և հաստատեալ ի հաւատն Քրիստոսի և հրաժարեալք ի միմեանց՝ յիւրաքանչիւր վանս գնացին հանգչել» (Փարպ. ԿԵ, ԿԶ.):

**16.** Միաբանեալ նախարարներէն մին, Վարազ-Շապուհ Ամատունի, կը յայտնէ ապստամբութեան խորհուրդը մարզպանին, որ գիշերայն կը փախչի Արտաշատու բերդն, և անտի Ատրպատականի կողմը.—«Մի ոմն ի նախարարացն Հայոց, որում անուն էր Վարազ-Շապուհ, ի տոհմէն Ամատունեաց, ելեալ ի խորհրդենէ միաբանութեանն՝ գնաց ի նմին գիշերի և պատմեաց մարզպանին և այլոցն ամենեցուն զխորհուրդ միաբանութեանն և զերդումն Աւետարանին և զխօսս ամենայն նախարարացն Հայոց: Զոր իբրև լսէր մարզպանն Ատրվշնասպն և այլ պարսիկ մարդիկն և ջոկք ուրացողացն Հայոց՝ սրտաբեկեալք զարհուրէին և անքունք լինէին զմնացեալ մասն գիշերոյ յերկիւղէ: Հասեալք ի ժամ առաւօտուն՝ չուէին ի տեղւոյն և երթեալ բանակէին մօտ ի պարիսպ բերդին որ անուանեալ կոչի Անի:... Եւ ի նմին գիշերի հեծեալք յիւրաքանչիւր երիվարս մարզպանն և հազարապետն և որք ընդ նոսա

միաբանք էին՝ փախստականք լինէին: Զոր զգացեալ նախարարացն Հայոց՝ հետամուտ լինէին զկնի փախստէիցն. և վասն զի տեղեակ առաջնորդօք փախչէին մարզպանն և հազարապետն, ոչ ընդ ուղղորդ տեղիս ճանապարհացն, այլ ընդ այլ և այլ տեղիս՝ զերծեալք անկանէին ի բերդն Արտաշատու, որոց ոչ կարէին հասանել նախարարքն Հայոց. բայց զգրաստ ամենայն պարսկացն կալեալ ըմբռնէին ի ճանապարհին, և զՄախազն Գադիշոյ ձերբակալ արարին, ածէին ընդ ինքեանս, և հասեալք ի Դուին, երթեալ պաշարէին զբերդն Արտաշատու: Իսկ մարզպանն և հազարապետն գաղտ ի գիշերի ելեալ ի բերդէն փախստեայ գնային ի կողմանս Ատրպատականի» (Կէ.):

Հոս Փարպեցին կը յիշէ ուրիշ մատնիչ Վարազ-Ներսեհ անուն, Ուրծայ իշխանին որդին, որ կողոպտելով երևելի քաղաքը, Բռնավիժի շահաստան, կ'ապաւինի Սագրայ բերդը: Բռնավիժի շահաստան, ինչպէս նաև Ուրծ և Սագրայ բերդ՝ են անծանօթ անուանք. վերջին երկուքը կը թուի թէ էին ի Սիւնիս.—«Սեպուհ մի Ուրծացի, որում անուն էր Վարազ-Ներսեհ, որդի Կողթեկայ իշխանին Ուրծայ, որ էր յերդմանն ընդ նախարարսն Հայոց, նենգեալ ուխտին սրբոյ՝ երթեալ աւերէր զշահաստանն Բռնավիժի, և առեալ զամենայն կարասի շահաստանին՝ դիմեալ ամրանայր ի բերդն որ անուանեալ կոչի Սագրայ բերդ, որ էր բերդ ամուր իշխանութեանն իւրեանց» (Անդ):

**17.** Հայ նախարարներէն ոմանք որ էին ընդ Ատրվշնասպայ՝ խորհուրդ կու տան նմա փութալ հասնել Հայոց վրայ, որ դեռ անպատրաստ էին և անօգնական, և մարզպանն անսալով նոցա կը դառնայ ի Հայս մինչ ի Նախճաւան: Սահակ Բագրատունի և Վահան, զորոց առաջինը կացուցին Հայք մարզպան, և զերկրորդն սպարապետ, խորհելով նախարարաց հետ՝ կը դրկեն Ատրվշնասպայ վրայ չորս հարիւր զօրօք և երևելի իշխանօք ոմամբք զՎասակ, զեղբայր Վահանայ, որ կը փութայ առաջն առնուլ Պարսից, առ ի չտալ նոցա անցանել զԵրասխ, բայց հասնելով ի Վարազկերտ՝ (տեղի մօտ ի Նախճաւան) կը լսէ, թէ Պարսիկք անցած են գետը, ուստի գնելով բանակը հոն՝ կ'երթայ իւր գնդով յառաջ մինչև ի գիւղն Կռուակ սակաւուք: Ատրվշնասպ կը հասնի հոն իւր եօթն հազարօք. Վասակ հնարիւք արձակելով զիւր մարդիկն ի Վարազկերտ, ինքն ևս խաբելով զԱտրվշնասպ, թէ իբրև պատգամաւոր եկած է՝ քաջութեամբ կը մեկնի, և գալով առ իւրսն կու տայ լուր, թէ անպիտան է Պարսից գունդը: Խորհուրդ կ'ընեն դէմ գնել նոցա, եթէ յարձակին, բայց գալով լեռնակողմը՝ կը բանակին յԱկոռի: Հոն

*լինի խառնուրդ, ուր Հայք կը յաղթեն, Ատրվշնասպ և ուրիշ երեւելիներ, ըստ Փարպեցւոյն, կ'սպանուին, և մնացեալք կը ցրուին։ —«Իսկ ոմանք ի Հայ նախարարացն խրատ տուեալ մարզպանին Հայոց Ատրվշնասպայ ասէին, թէ Թագաւորն Վրաց ապստամբեալ է և Հոն կամի հանել, բայց հանեալ չև ևս է. և դարձեալ՝ Հայոց առ կայսր զգունդ յղեալ է, և դեռ չև ևս երեւի ի միջի. և ինքեանք չև ևս քաջ կազմեալ են որպէս արժան է. և դու թէ այժըմ փութով հասանես ի վերայ նոցա՝ դիւրով և թեթեւով վճարես զգործ մի կարի մեծ, և լաւ անուն յանձն առեալ՝ պատիւս և շատ պարգևս գտանեմք յարքայից արքայէ և դու և մեք։... Եւ հաճոյ թուեցաւ բանն մարզպանին և ամենեցուն որ ընդ նմայն էին, և վաղվաղակի յԱտրպատականէ գունդ առեալ և ի Կոլբեայ մարզպանէն, և զգունդն Կոտշաց՝ գայր հասանէր յաշխարհն Հայոց ի գետեզրն Երասխայ, կամեցան անցանել ի գեւղն որ կոչի Նախճաւան, ի սահմանակցութեան Սիւնեաց։ Ազգ եղև առ տէրն Բագրատունեաց Սահակ և առ Վահան,... որք ի Հայոց ընկալան զգործակալութիւնն (առաջինն՝ զմարզպանութեան, և երկրորդն՝ զսպարապետութեան), եկն Պարսից գնդին, և տեսեալ դեռ ևս անկազմագոյն զպատրաստութիւն զօրուն իւրեանց՝ խորհէին առ վայր մի յամուր տեղիս գաւառին Տայոց չուել. այլ յիշելով, թէ ոչ է յաղթութիւն ի բազումս և ի սակաւս՝ խորհեցան սախպով ընդդէմ նոցա գնալ. խորհէին և զայս — մնալ մարզպանին Սահակայ և սպարապետին Հայոց Վահանայ և ոմանց յայլ նախարարացն անդէն յոստանին։ Եւ որք ի պատերազմն կազմեցան՝ էին Սիւնին Բաբգէն, զոր անուանեցին ի ժամուն իշխան տէրութեան Սիւնեաց, և ամենայաւ քաջ սեպուհն Մամիկոնէից Վասակ, եղբայր սպարապետին, և Գարջոյլն Մաղխազ, և երկոքեան որդիքն երանելոյ Կամսարականին Արշաւրայ, Ներսեհ տէր Շիրակայ և Հրահատ նորին եղբայր, և երկու արք ի Գնունեաց տոհմէն, Ատոմ իշխանն Գնունեաց, և եղբայր նորին Առաստոմ, և գունդ ընդ նոսա, որ էին թուով ընդ բնաւ չորեքհարիւր այր։... Երկիր պագանէին նախարարքն և ամենայն արք զօրուն որք ընդ նոսայն էին հրեշտակակրօն սրբոյ կաթողիկոսին Յոհանու... և ապա հրաժարէին յասպետէն ի Սահակայ, մարզպանէն, և ի զօրավարէն Հայոց Վահանայ Մամիկոնենէ և յայլ ընկերակցաց իւրեանց որ անդէն յոստանին առ նոսա մնալոց էին, և գնացին սախպով խնդալից յօժարութեամբ։ Եդեալ ի մտի ասէին, Ո՛վ գիտէ, կարեմք հասանել ի հունն ուր գունդք Պարսից անցանել կամին, և դարձեալք յանդրեւոյթ տեղւոջ ուրեք սպասեմք. և յորժամ գիտեմք, եթէ կէս գնդին անցեալ է ընդ*

գետն՝ անկանիմք ի վերայ անցելոցն, և թերևս վնասել ինչ կարեմք. նոյնպէս և մնացելոցն ի նոցանէ դարձեալ դիւրով կարեմք լինել գամագիտ։ Եւ եկեալք ի գեւղն որ անուանի Վարազկերտ, լուան եթէ գունդն Պարսից անցին ընդ գետն ամենեքեան, և են թուով եօթն հազար։ Եւ քաջ սեպուհն Մամիկոնէից Վասակ, քանզի առաջապահ էր այն օր՝ գնայր յառաջ ի գեօղն որ անուանի Կուռակք։ Թերևս լիցի ինչ հնար, ասէ, ջանամ առնուլ զգնդին Պարսից զհանգամանս, թէ են ինչ և թէ ոչ։ Եւ երթեալ ի Կռուակս յօթ՝ յանկարծակի յառաւօտուն ծագել հասեալ ի նոյն գեւղ և մարզպանն պարսիկ Ատրվշնասպ՝ լսէր զՄամիկոնենէն Վասակայ, թէ անդ է։ Եւ քաջ սեպհին Մամիկոնէից Վասակայ գիտացեալ զԱտրվշնասպայ և զնոցանէն որ անդ էին՝ հնար փրկութեան քաջութեամբ խորհեցաւ, որով զգունդն իւր ապրեցուցանել կարասցէ ի ժամուն։ Հրաման տայր երկուց երկուց զոյգ, և կամ երից և կամ ևս յոլովից, ընդ այլ և այլ անյայտ տեղիս և ընդ փողոցս ելանել ի շինէն, և զատ ի միմեանց փութալ հասանել ի գեւղն Վարազկերտ, ուր նախարարք և այրուձին Հայոց էին, և տայր գիտել նոցա։ Եւ ինքն քաջ սեպուհն պատրողական բանիւք բանդագուշացուցանէր պատգամաւորօք զԱտրվշնասպ ասելով, թէ Ես պատգամ ունիմ առ քեզ զ՚Հայոց, զորս լուեալ քո և որք ընդ քեզ են՝ հաստատ հաճոյ համարիք և օգուտ զայնպիսի լուր և՛ Արեաց տեառն, և՛ Հայոց աշխարհիս։ Եւ Ատրվշնասպայ լուեալ թէպէտ և գաղտ ի միտս ուրախանայր, կարծեցեալ թէ հաստատ ի նուաճումն զան՝ այլ սակայն առ նա խստագոյնս յղեալ ասէր, թէ Աշխարհ մի ապըստամ առ իս զինչ պատգամ յղեն։ Եւ քաջի սեպհին Մամիկոնէից Վասակայ գիտացեալ զիւր այրուձին զերծեալ անվնաս, և թէ չիք ինչ կասկած այնուհետև՝ պատասխանի տարեալ եկելոցն յԱտրվըշնասպայ ասաց, թէ Մեր ցայժմ ոչ վատ ինչ գործեալ է և արքունի իրաց վնաս արարեալ. բայց դու ինձ հրամայեա ասել զպատգամն, և ձեր լուեալ՝ ապա հայեցարուք յարժանն, և ծաներուք զոր ինչ պարտ է առնել։ Եւ արձակեալ զպատգամաւորն և ինքն հեծեալ յերիվարն՝ ասաց ցայլ Պարսիկսն որ կային անդ, թէ Ես ծաղր առնելով ընդ ձեզ խօսեցայ զբանսն առ պատգամաւորսն. այլ զիս ուրուք առ ձեզ պատգամ չէ յղեալ. բայց ես տեսանել զձեզ եկի, թէ որպիսի ինչ էք. այլ դուք էք մարդիկ վատք և անպիտանք, և եկեալ էք ի վատի խնդիր, և պատահէք չարի և կորնչիք։ Ասացեալ այսպէս քաջի առն՝ գնաց ինքն ի բաց անհոգութեամբ և աներկիւղ։ Եւ եկեալ քաջն ի գունդն Հայոց՝ պատմեաց նոցա, թէ գունդ բազում է, բայց յոլովք ի նոցանէ անպի-

տանք են: Եւ լուեալ զայսպիսի բանս ի քաջ Մամիկոնեան սեպհէն միաբանութեամբ արք զօրուն Հայոց՝ խորհուրդ ի մէջ առին, թէ պարտ է ի դաշտէն ի լեռնակողմն փոխել. զի եթէ հարեալք ասեն, ի դիմի զօրեմք՝ այն աջող իսկ է և բարի, և եթէ այլազգ ինչ դիպի՝ պահպանութիւն է մեր ամրութիւն լեռնակողմանն և օգուտ մեզ: Եւ եկեալք չուեալք բանակեցան ի գեւղն Մասեաց, որում անուն էր Ակոռի:

«Եւ լուեալ թէ առ վաղիւ գունդն Պարսից գայ ի վերայ նոցա ի պատերազմ... կազմէին և նքա որ անդ էին ընդդէմ նոցա ի պատերազմ: Եւ բաժանեալ զչորեքհարիւրսն ի չորս առաջս՝ միջին վայրին կարգէին զօրագլուխս ի ժամուն զիշխանն Սիւնեաց Բաբգէն և զքաջ սեպուհն Մամիկոնէից Վասակ, և ահեակ կողմանն զԳարջոյլն Մաղխազ, և կողմանն աջոյ զԳնունիսն երկոսին, զիշխանն Գնունեաց Ատոմ և զնորուն զեղբայրն զԱռաստոմ. և ընդ մէջ երկոցունց մասանցն զքաջն և զընտիրն զիշխանն Տիրակայ զՆերսեհն Կամսարական և զնորուն եղբայրն զՀրահատն պատրաստական յօրինէին. զի որ կողմն տկարասցի՝ ասեն, նոցա հասեալ փութով զօրացուցեալ օգնեսցեն, և յամենայն կողմանց ոյժ լինիցին. քանզի ամենեքեան վստահ էին յարսն՝ որպէս ի լաւն և յարգարսն յուխտապահսն: Եւ այսպէս յօրինեալ զչորեքհարիւր արսն՝... ելեալ կային ճակատեալք ի վերայ բարձրաւանդակի լանջակողմանցն: Զորոց զսակաւութիւնն տեսեալ զօրացն Պարսից՝ ոչինչ այլ կարծեցին՝ բայց եթէ կամաւ խելացնորեալ ի խնդիր մահու են եկեալք: Եւ քաջ ի հեռաստանէ այլընտիր ի զօրացն Պարսից յարձակեալք ի վերայ զօրացն Հայոց՝ բազումք յետսէին վատաձիցն Պարսից, և քաջաձիքն յառաջեալ հասանէին ի տեղի պատերազմին: Յորս և ի ժամուն Մաղխազն Գարջոյլ առեալ զիւրև զհարիւրսն, նենգեալ ուխտի Աւետարանին՝ ի գունդն Պարսից անկանէր, և մնային երեքհարիւրքն Հայոց, որք դիմեալք ի վերայ զօրացն Պարսից՝ զընտիր արս պատերազմին անդէն և անդ ի տեղւոջն դիաթաւալ յերկիր կործանէին, և զայլ բազմութիւն գնդին Պարսից ձորոց և առապար տեղեացն ցրուեալ վարէին: Անդ ի կողմանն քաջին Վասակայ սեպհին Մամիկոնէից և Սիւնոյն Բաբգենայ անկեալ սատակէր Ատրվշնասպն մարզպանն և այլ արք աւագք և նախարարք յուրացօղացն Հայոց, և այլ բազում Պարսիկք. նոյնպէս և ի կողմանն Ատոմայ և Առաստոմայ բազումք մեռանէին ի քաջ արանց: Եւ տէրն Սիւնեաց (Բաբգէն) զԳդիհոն պահելով միւսում ևս չար ժամու՝ զերծեալ ապրեցուցանէր զթշնամին արդարութեան մազապուրծ ի ձեռացն Ատոմայ և Առաստոմայ:... Եւ մինչդեռ նոքա այսպէս քա-

ջլերեալք էին՝ առեալ Գարջուլայն Մախազու զգունդն Կատշաց
հանդերձ և այլ ապստամբօք հայ որերոյ և այնու ևս գնդաւ որ
ընդ իւրն էին, և յայլ կողմն կարթեալ՝ ըստ աներևոյթ ձորոցն խո-
րութեան հասեալ կայր զկնի ուխտապահ զօրացն Հայոց ի կող-
մանէ, կամէր ի թիկանց կուսէ անկանել ի վերայ (Հայոց) և տա-
նել զյաղթութիւնն խաբէութեամբ, և անուն մեծ ժառանգել: Իսկ
ուրումն յանկարծակի զձայն խողխողման զհայ սպանելոյ ի Կատ-
շացն լուեալ՝ բողոք արկանէր առ արս Կամսարականս. որոց ցա-
սուցեալ առնն կամէին սպանանել զնա, թէ Գունդ մեր է, և դու
խաբէութեամբ զմեծ իրս կորուսանես: Եւ ապա հաստատեալ Ներ-
սեհի ի լրտեսելն եղբօր իւրոյ Հրահատայ, եթէ գունդն թշնամեաց
է՝ դիմեալ յարձակէին ի վերայ այնչափ բազմութեան երկոքին եղ-
բարքն սակաւ արամբք: Անդ հասեալ հայրանման Կամսարականն
Ներսեհ՝ զզօրագլուխն Կատշաց, զայր հզօր և զմարտիկ, հարեալ
նիզակաւ անդէն ի տեղւոջն սատակէր, և զայլ ամենայն գունդն
արկեալ առաջի՝ բազում արանց դիակունս առաւել քան զայլ մե-
ռեալս պատերազմին կործան յերկիր վարէին: Եւ լինէր օրն այն
օր նշանաւոր ուրախութեան» (ԿԷ—ԿԹ.): Փարպեցին Հայոց կող-
մանէ անկեալ զոք չյիշեր, և այս արդարև է զարմանալի: Ապաքէն
փոքր էր կռիւն, բայց յաղթութիւնն մեծ—չորս հարիւր մարդ
եօթն հազարի դէմ, արդարև անհաւատալի, մանաւանդ զի Գար-
ջոյլ հարիւր մարդով պատերազմին ժամանակ անցաւ Պարսից կող-
մը. բայց Փարպեցին կը պատմէ այնպիսի պարզութեամբ և մանր՝
որ, ըստ մեզ, չթողուր տեղի տարակուսանաց: Եթէ խորհինք Պար-
սից խառնաղանճ զօրուն, թէպէտ բազում, անտեղեկութիւնը պա-
տերազմական արուեստի և տեղւոյն, և մերոց հմտութիւնն յերկա-
րին ևս՝ զարմանալի չեն թուիր այսպիսի յաղթութիւններ, որոց
նմանները պիտի տեսնենք յետոյ: Սա ևս գիտելի է, զի նախարարք
մեր, որ էին ի բնէ զինուոր և քաջ զօրապետ՝ ուշ ունէին միշտ
թշնամի զօրաց գլխաւորներն սպաննել, այսու դիւրաւ կը ցրուէր
անկիրթ բազմութիւնն: Զայս դնելով իբրև ընդհանուր դիտողու-
թիւն՝ մատչինք յառաջ:

**18.** Ոմանք ի չարամիտ մարդոց կը բերեն սուտ համբաւ
մարզպանին Սահակայ և սպարապետին, թէ Հայք պարտեցան, Վա-
հան և ընկերք նորա մեռան: Բայց իսկոյն հասնելով Առաստոմ
Գնունի՝ կու տայ յաղթութեան լուրն յուրախութիւն ամենեցուն.
յետոյ կու գայ նաև զօրն.—«Եւ տեսեալ այնպիսի փառաւորապէս
կատարումն գործոյ թշնամւոյն արդարութեան Սատանայի և ի կոր
կործանեալ, խորհեալ թէ կարի անհնարին ամենայն ինչ ընդդէմ

իմոց կամացս գործեցան, և արդ յայլ ինչ չեղէ ձեռնհաս և նկուն գտայ, գոնէ առ վայր մի տրտմեցուցանեմ զսիրտս քաջացն, որք դեռևս ոչ գիտեն զանցս աղետիցս իմոց և զկործանման։ Եւ գտեալ իւր արս երկուս արքանեկեալս, զմին ի տոհմէն Գնթունեաց որում անուն էր Վաղգոշ, և միւսն ի տոհմէն Սահառունեաց որում անուն էր Վասակ, ի վաղիւն ճեպով ընդ ծագել առաւօտուն գոյժ աղաղակի լսելի առնէին յականջս հայրապետին սրբոյ Յովհաննու և երկոցունց աւագ իշխանացն Հայոց, մարզպանին Սահակայ և Վահանայ Մամիկոնենի. Խառնեցան, ասեն, սաստկապէս կողմանք երկոքեան ի պատերազմ, և զօրացաւ կողմն Պարսից, և ի պարտութիւն մատնեցաւ գունդն Հայոց, ի փախուստ դարձան անկեալ զօրաւորքն ի սուր թշնամեացն, մեռան քաջն Մամիկոնեան Վասակ և լաւ Սիւնին Բաբգէն, և երկոքեան արքն անուանիք տէրն Շիրակայ Ներսեհ սիրելի եղբարբն իւրով հանդերձ Հրահատաւ։ Եւ արքն Գնունիք Ատոմ և Առաստոմ, և այլ ամենայն զօրքն Հայոց ի լանջակողմանս Ակոռայ տապաստ անկեալ դիակնացան, և մեք միայն մնացաք գալ պատմել ձեզ։ Եւ չև ևս սփռեալ տարածանէր համբաւս այս ի Դուին՝ գայր հասանէր վաղվաղակի հրեշտակ աւետաւոր ի տոհմէն Գնունեաց, որում անուն էր Առաստոմ, ձայն բարձեալ գոչելով տայր զրոյց զչարաչար բեկումն և զամօթ թշնամեացն:... Եկեալ հասանէին և զօրքն ի պատերազմէն, պատմելով զմեծ յաղթութեանն անուն, և զթշնամեացն զխորտակմանն և զամօթոյ զվիճակն։ Համբուրէին զմիմեանս ողջունիւ ուրախութեան և անհոգ խաղաղութեամբ ի հանգիստ ձմերայնոյն մտանէին. Հագային առ գարունն զպատրաստութիւն պատերազմին» (Կթ, Հ.)։

**19.** Հայք կը խնդրեն Հոնս յօգնութիւն ի Վախթանգայ ըստ խոստման նորա, և նա կուղարկէ նոցա երեքհարիւր Հոն, բայց յետոյ կը կոչէ յետս. այսպէս Հայք կը մնան անօգնական։ Վահան մտնելով ի նեղ՝ կը ղրկէ պատգամ յԱրծրունիս, յԱնձևացիս, ի Մոկս և ի Ռշտունիս. ոմանք անսալով կու գան, շատք կը մերժեն հրաւէրը։ Դիտելու արժանի է Վահանայ սրտառուչ հրաւէրը. —«Եւ դեպան ստիպով առ թագաւորն Վրաց Վախթանգ առնէին՝ տալ նոցա Հոն ըստ բանի խոստմանց իւրոց։ Եւ նա ժամավաճառ բանիւք երկայնէր զասացեալսն իւր. և ապա ուստեք ժողովէր Հոնս երեքհարիւր և առաքէր ի Հայս. և չև ևս անցեալ ամիս մի ի ձմերայնոյն՝ անդրէն առ ինքն կոչէր։ Եւ մնայր աշխարհիս Հայոց զօրութիւն օգնութեան Քրիստոս, յոր ապաւինեալն էին և յուսային, այլ ի մարդկանէ ոչ ոք էր որ օգնէր նոցա։ Առաքէր զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան յերևելի և յականաւոր ազգն

Ծրծրունեաց, յազգս գաւառին Անձևացեաց և Մոկաց և առ ազատորեարն Ռշտունեաց. տայր գիտել թէ որպէս յառաջնումն օգնեաց Աստուած յուսացելոց իւրոց, և աստ, թէ Ճշմարիտ և զարդար օրինացս մերոց զհաւատ և զքարոզութիւն իւրաքանչիւր ոք ի ձէնջ քաջ գիտէք, և ոչ էք կարօտ յումեքէ ուսանել, այլև զտոչորումն իբրև հնոց մոլորութեան մոգուցն, տեսէք թէ որպէս առեալ այրեաց զամենեցուն ոգիս բաց ի սակաւուց: Արդ ուսանիկ եհաս ժամ արդար մշակին Քրիստոսի, որոյ առեալ զհեծանոց սրբել զկալ իւր, և զցորեանն մաքրեալ յերկնից շտեմարանս ժողովել, և զյարդն անհէջ յաւիտենից հրոյն մատնէ յայրումն: Եւ արդ որ ոք կամի լինել ցորենահատ՝ ընծայեսցէ զինքն Աստուծոյ և կեցցէ. և որ ոք յետս ընկրկեալ յարդեսցի՝ յաւիտենից և անանց գեհենին եղեալ լուցկի՝ այրեսցի և մի շիջցի: Եւ ես ոչ զոք բռնաբարելով քարշեմ յօգուտ իւրաքանչիւր անձին, այլ յորդորելով յիշեցուցանեմ ամենեցուն ըզփրկութիւն և զկորուստ, որ դիպի յայցելութեան աւուրն»: Արդարև ժամանակին դիպաց հանդոյն և վայելուչ հրաւէր, ուր այնչափ զարմանալի և բարձր է որչափ ոգին՝ նոյնչափ ճարտարխօսութիւնն: «Եւ լուեալ զայս պատգամ չորեցունց գաւառաց նախարարացն՝ յարէ Փարպեցին, կէսքն փափաքեալ աջոյ կողմանն՝ գրոհ տուեալ ընթանային ի հօտ ոչխարացն ժամանել, և այլք ընդ դասակս այծեաց ձախակողման հաղորդեալք՝ գնային անդարձութեամբ ի խաւարն արտաքին» (Փարպ. Հ.):

Հոս հաւատարիմն Փարպեցի կը մուծանէ միջին ինչ դիպուած (épisode), որ կը ցուցնէ, թէ յոր աստիճան հասած էր երկպառակութիւնն յայնժամ ի մէջ Հայոց: Յովհան ումն իշխան, սեպուհ Անձևացի, և միւս ևս սեպուհ Ներսեհ անուն, Երուանդունի, հանդերձ այլովք ոմամբք կ'երթային յօգնութիւն Վահանայ: Սևուկ ումն իշխան Անձևացեաց և Յովհան իշխան Մոկաց իմանալով կը յարձակին ի վերայ բազմութեամբ այրուձիոյ՝ արգելել զնոսա, կը գրգռի պատերազմ երկու կողման մէջ, կ'սպանուի Յովհան իշխանն Մոկաց ի Յովհանայ Անձևացւոյ, զոր նախատած էր նա երբեմն, կոչելով զնա կով, արժանի կրելոյ զանուր.—«Ոմն յԱնձևացի նախարարացն, սեպուհ մի որում անուն էր Յոհան, և միւս ևս Երուանդունի, Ներսեհ անուն, միաբանեալ ի խնդիր բարի ցանկութեան, ընդ որս և հաւանեալ և այլ արք ճշմարտութեան նուիրեալք՝ գնային խառնել ի գունդն զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի: Եւ մինչդեռ ժողովեալ գնային ի ճանապարհի, մերձեալք ի քաղաքագիւղն որ կոչի Առեստ, ի ժամանակի քառասնորդացն պահոց, ի մեծին շաբաթու զատկին՝ յանկարծակի յանզգաստից ե-

կեալ հասանէին ի վերայ նոցա իշխանն Անձևացեաց Սևուկ անուն, և իշխանն Մոկաց Յոհան անուն բազում այրուձիով, ընդ առաւօտուն ծագել։ Եւ սոցա զգացեալ՝ կէսքն զինեալք և կէսքն թէպէտ անպատրաստք էին՝ հարկանէին ի դիմի աներկիւղապէս. և նախ Ներսեհ Երուանդունի յարձակէր ի վերայ իշխանին Մոկաց Յովհանայ, և հարեալ նիզակաւ, օգնելով նմա և Անձևացւոց սեպհին Յովհանայ, յերկիր կործանէին։ Որոյ ասացեալ էր երբեմն հպարտաբար պարծելով զԱնձևացի սեպհէն Յոհանայ, թէ Նմա որպէս կովու՝ բայց թէ անուր եևեթ պիտի արկանել. այլ նա ումպիտոյ է յայլ իրս յօգուտ կամ ի վնաս։ Եւ լուեալ պատասխանի յազգակցէն Յոհանայ, յիշխանէն Անձևացեաց Սևկոյ, թէ Զանուրն ես բերեմ, բայց արկջիր դու ի պարանոցն։ Որ յաղագս ամբարտաւանութեան բանիցն հարեալ կովուն եղջերբն չարաչար՝ ընկեաց յերկիր յերիվարէն և կոխեաց։ Եւ զայն տեսեալ զօրացն բազմութեան՝ ի փախուստ դառնային. զորոց զհետ եղեալ՝ զոմանս սպանանէին և զմնացեալսն փախստականս արարեալ ցրուէին այսր և անդր» (Անդ)։

**20**. Առաջին կռիւն, որ ոչ այնչափ պատերազմ էր որչափ փոքր խառնուրդ՝ չէր բաւական վհատեցունել զՊարսիկս, որ պիտի գային անշուշտ մեծագոյն զօրութեամբ, և արդարև եղաւ այնպէս։ Ի սկզբան գարնան լսեցին Հայք, թէ զօրք մեծ հասած էր ի Հեր և ի Զարևանդ գաւառ ընդ հրամանատարութեամբ Ատրներսեհի, որ փուշտիպանաց (թիկնապահաց) գնդի սաղար էր, և որում օգնական էին այլ նշանաւոր Պարսիկք և Գդիհոն Սիւնեաց տէր։ Պատրաստեցաւ Վահան և եկաւ հանդերձ կաթողիկոսիւ որ էր Յոհան Մանդակունի՝ յԱրտազ և բանակեցաւ մօտ ի գիւղն Ներսեհապատ։ Վահան կը կազմէ զճակատն ըստ օրինի, պատերազմը կ'սկսի։ Հայք կը տկարանան ի սկզբան, յետոյ կը զօրանան քաջութեամբ Վահանայ և երկուց Կամսարականաց. Պարսից զօրավարներէն երկուքը կ'սպանուին, և այս նուագ ևս յաղթութիւնն լինի Հայոց.— «Եւ անցուցեալ զաւուրս դառնաշունչ ձմերայնոյ ցրտոյն՝ հասանէին գարնանային ժամանակի օդոյն բարեխառնութեան. լսէին թէ զօր բազում խաղացեալ գայ ի Պարսից, եկեալ հասեալ են ի սահմանս Հերայ և Զարաւանդ գաւառի բազում զօրագլուխք, որք էին այսոքիկ. Սուրէն Պահլաւ, Ատրներսեհ փուշտիպանացն սաղար, և Վին Խոռեան և Ատրվշնասպ Իոսպեան և Գդիհոն Սիւնեաց տէր. և ի սոսա թէպէտ և ըստ գահոյից էր ոք ի վեր՝ այլ հրամանատու և աւագ զօրուն՝ փուշտիպան սաղար էր։ Փութացաւ և զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, առեալ ընդ իւր և զսուրբ հայրապետն Հայոց զտէր Յոհան, յուսալով յաղօթս առնն, և զումարեալ

զզօրսն ճեպէր հարկանել ի դիմի, և անդէն զայն տեղեօք. թերևս
ոչ լիցի, ասէր, տնցանել բազմութեան Պարսից ի միջոց կողմն աշ-
խարհիս Հայոց։ Եւ առեալ ընդ իւր զնախարարսն և զազատ և
զայլ ամենայն ռամիկն, որ կամաւոր խնդութեամբ երթային ի գործ
պատերազմին, և չուեալք ի Դունայ զօրքն Հայոց՝ երթեալ հասա-
նէին ի գաւառն յԱրտազ, և մօտեալք ի գունդն Պարսից՝ բանա-
կէին ի գիւղ մի որում անուն էր Ներսեհապատ։... Եւ այնպէս
զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի, սքանչելի ասպետաւն
Սահակաւ մարզպանաւ... հասեալ ի լոյս առաւօտուն՝ սուրբ կաթո-
ղիկոսն Հայոց Յոհան օրհնէր զամենեսեան։... Սկսանէր այնուհետև
զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան յօրինել ըստ պատշաճի զիւ-
րաքանչիւր կողմն ճակատուն։ Զմիջոց կողմն բազում այրուձիովն
տայր ի ձեռն լաւի առն Սահակայ մարզպանին ասպետի. և ի կող-
մանն աջոյ թևին կարգէր զԲաշղ Վահևունի և զԲաբգէն Սիւնի և
զԱտոմն Գնունի և զՓափակն Պալունի, իւրաքանչիւր այրուձիով
և այլ ևս յաւելուածով. և յահեկէ կողմանէ հանդերձ ուխտասէր
Կամսարականաւն և իւր սիրելի եղբարբքն Վահանաւ (իմա՝ Վասա-
կաւ), Ներսեհիւ և Հրահատաւ. և ընդ աջմէ իւրաքանչիւր այրու-
ձիով գնդացն կազմէր զինքն։ Կազմէր և զայլ արս աւագս ընտիրս
այրուձիով հանդերձ և Վրէնաւ Վանանդացւով, առ որս և առա-
քէր զՊապ Արտակունեաց, զայր ոստանիկ, զորդի Բաբգէի, ասել
ցիւրաքանչիւր աւագս. թէ Զնշանս հզօրագոյն արանց զոր յառա-
ջագոյն տեղեակ եմք, զարանցն Պարսկաց և զԿատշաց և զգնդին
Սիւնեաց՝ տեսանեմ զի դէպ ի մեզ դիմեալ գան. արդ դուք մեզ-
մով երթայք, և ուշադրեալ հայեցարուք ի մեզ. թող մեզ նախ լի-
նի յարձակել, և եթէ մեք զմեր կողմն շարժեալ փախուցանեմք՝
ապա այլ կողմանքն՝ մեր և ձեր առաջի ոչ կարեն կալ։ Եւ Պապայ
տարեալ զպատգամն սպարապետին Հայոց Վահանայ առ իւրաքան-
չիւր աւագս կողմանցն, թէպէտև կամէին ըստ հրամանի զօրավա-
րին առնել, այլ ստիպով հասեալ գունդն Պարսից յիւրաքանչիւր
թև կողմանցն՝ ոչ տային պարապել, այլ դղրդեալ զկողմն աջոյ,
ուր Բաշղն Վահևունի էր՝ փախուցանէին։ Եւ տէր Սահակ ասպետ
յարձակեալ նիզակաւ ի վերայ փուշտիպանացն սաղարի՝ վրիպեցին
ի միմեանց զնիզակսն երկոքեան. և մօտեալ առ միմեանս երիվա-
րացն՝ բուռն հարեալ զմիմեանց հերաց և կռուէին։ Եւ տեսեալ
զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի, թէ աղմկեցան զօրքն
Հայոց և տկարացան առաջի թշնամեաց՝ ձայն արարեալ առ Վրէն
Վանանդացի՝ Յառաջեա, ասէ, ի վերայ թշնամեացն, և ձեռն ի
գործ արա պատերազմել. և նորա զարհուրեալ ասաց, եթէ Ոչ եմ

կարող, չիս ինչ ապաստան յայսմ ժամու դու մի լինիր։ Եւ զօրավարին Հայոց Վահանայ զօրացեալ սրտիւ, հանդերձ Կամսարականօքն երկոքումբք, յարձակէին ի վերայ հասելոց սոցա թշնամեացն. և ոչինչ բնաւ տւեալ կալ առաջի, այլ շարժեալ սաստկապէս զկողմըն իւրեանց ի փախուստ դարձուցանէին. և առեալ զթեւն զայն արկանէին զմիւս ևս թեւովն զմիջոցի կողմանն. և արկեալ առաջի զկողմանցն երկոցունց զգունդսն՝ անթիւ բազմութիւն արանց քաջաց ի փոքր լանջակողմանն դիաթաւալ յերկիր կործանէին, և սաստիկ արեանց հանէին ճապաղիս։ Բայց միայն Վինն Խոռեան երկուոյլ նիզակակցօք զօրու դարձեալ ընդդէմ խիզախէր. զոր անդէն առ նմին քաջ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան սատակէր հզօրեղապէս. և զԱրտվշնասպն Տապեան՝ տէրն Շիրակայ ՆերսեՀն Կամսարական, և այլքն ամենեքեան իւրաքանչիւր զբազում արս քաջս ընկեցեալ յերկիր կործանէին։ Եւ հայեցեալ յայն գունդն Բարշլի և այլ փախստէիցն Հայոց, և տեսեալ թէ բեկաւ ույժ զօրու գնդին Պարսից և երթան փախստական առաջի գնդին զօրավարին Հայոց Վահանայ՝ ոգի առեալ զօրանային. և դարձեալք անդրէն և զկնի հալածչացն եղեալք՝ զբազումս սպանանէին, և զբազումս արկեալ առաջի՝ հալածականս ածէին։ Եւ լինէր առաւելագոյն թիւ կոտորելոցն ի գնդէն Պարսից, քան թէ զերծելոցն փախստէից։... Եւ դարձաւ գունդն Հայոց բարի անուամբ և բազում փառօք, լաւաբար և սաստիկ ընչիւք առ պատուական կաթողիկոսն Հայոց Յոհան ի բանակն» (Փարպ. ՀԱ.)։

Փարպեցին այս պատերազմին մէջ ևս չյիշեր յանուանէ Հայոց կողմէն մեռած. սակայն Հայոց վայր մի տկարանալը և փախուստը յիշելէն յայտնի է, թէ ոչ սակաւ կորուստ ունեցան նաև Հայք, ևս և մեծամեծներէն, քանզի պատերազմին մէջ յիշուած երևելիներէն ոմանք այլ ևս չեն յիշուիր ի պատմութեան։

**21.** Փարպեցին կը պատմէ հոս դէպ մի անակընկալ, այն է Վահանայ կրտսեր եղբօր Վարդայ, որ արգելեալ էր ի դրան Պարսից՝ արձակուելով գալը։ Ըստ բարեպաշտ հաւատոյ Փարպեցւոյն՝ սքանչելեօք եղաւ Վարդայ ազատութիւնն, բայց թէ ինչպէս՝ չյիշեր. միայն կ՚ընծայէ Աստուծոյ սքանչելագործ ձեռին, որ ցօղ դարձուց Բաբելոնի հնոցին բոցերը, Կարմիր ծովուն և Յորդանանու ջրերն յետս ընկրկեց և զՊետրոս արձակեց բանտէն դրօքն փակելովք։ Փարպեցին կը համարի զայն ազատութիւն նաև իբրև կատարումն ուխտին Վահանայ, որ իբրև փոխարէն իւր դարձին՝ կ՚սպասէր տեսնել զիւր սիրելի եղբայրն Վարդ, ինչպէս արդէն յիշուեցաւ, նաև իբրև լրումն փափաքանաց միւս եղբօրն, Վասակայ, որ

մարգարէական ոգւով տեսնելով զեւր մօտաւոր պսակումն՝ ունեցած էր նոյն փափաքը տեսանելոյ զեւր կրտսեր եղբայրն։ Չէ առանց գովութեան բարեպաշտութիւն Փարպեցւոյն, որ կ'ընծայէ աստուածային խնամոց զազատութիւնն Վարդայ. այլ ըստ մեզ լաւագոյն եւս առնէր՝ եթէ պատմէր, թէ երբ և ինչպէս անկաւ Վարդ Պարսից ձեռքը, և ինչ ճանապարհաւ եղաւ ազատութիւն նորա, որ ունէր անտարակոյս բնական պատճառ.—«Եւ մինչդեռ զօրացեալք ցնծալից սրտիւք գային 'ի գործոյ պատերազմին՝... երկրորդ ուրախութիւն մեծ և լուր յանկարծակի աւետեաց տարածեալ քարոզէր ընդ ամենայն բանակն Հայոց, թէ եկն Վարդ ողջ զերծեալ ի կապանացն, եղբայր Վահանայ Մամիկոնենի։ Եւ լցեալ այսպիսի աւետաւոր համբաւով ընդհանուր աշխարհս Հայոց՝ զրոհ տուեալ փութայր ամենայն ոք, յորոց բազումք առ խնդին իբրև տեսանէին զանհաւատալի տեսիլն՝ յերկուացեալք՝ կերպարան և ոչ ճշմարտութիւն զիրսն կարծէին. բայց յիշելով զԱստուծոյ զօրութեանն զանընդդիմակաց սքանչելիս՝ փառս մատուցանէին ամենահնարին, որոյ հրամանի ամենայն դժուարինք և անհնարինք դիւրին են և հնարաւորք։ Յիշելով զցօղադարձութիւն հնոցին ի Բաբելոնի, և զսառնաշէն պարիսպն եգիպտական Կարմիր ծովուն, զդառնալն ընդ կրունկն Յորդանանու, և զանկմունս Երիքովի պարսպացն՝ աղաղակաւ... որ առաւելագոյնս քան առ սուրբ առաքեալն Պետրոս արար զզօրութիւնսն։ Վասն զի զնա անձամբ միայն հանեալ հրեշտակին՝ արձակեաց զերծանել յաճումն քարոզութեան կենաց. իսկ զայրն Մամիկոնեան զՎարդ ոչ միայն լոկ անձամբ, այլ և ծառայիւք, զրամբ և կազմածով յամուր տեղեաց շահաստանին և ի բարձրաբերձ պարսպացն և յասպարափակ բազմութենէ պահապանացն ընկալեալ իբրև զարծուի ի թեւս իւր և ընդ բազում անցուցեալ օթեւանս՝ ածեալ հասուցանէր խաղաղութեամբ յերկիրս Հայոց։ Յայնժամ ծանուցեալ յիշէին ուխտակիցք, արք աստուածասէրք զերդումն Մամիկոնէին Վահանայ—զընդունելութիւն Աստուծոյ դարձին նորա և վկայութեան և հաւատոց—զոր տայց յաւուր միաբանութեան առաջի սրբոյ Աւետարանին. «Թէ արդարև, ասէ, ծանուցեալ Աստուծոյ զբազմաժամանակեայ զթախանձ և զփղձկումըն սրտի իմոյ, զոր հառաչէի յոգւոց հանելով ի մոլորութեանն, և ընկալաւ զպտուղ շրթանց խոստովանութեան իմոյ, և հաճոյ եղև ամենագիտին խորհուրդս իմ և ուխտ՝ ապա ըստ իւրում զօրեղ տէրութեանն արարեալ յիս նշան բարի՝ տացէ ինձ մերձ ընդ մերձ տեսանել զեղբայր իմ զՎարդ»։... Իսկ յետ աւուրց ինչ բազմաց անցելոց տեսեալ հանճարեղ անձանց զպսակումն քաջ սեպհին Մամի-

*կոնէից, զսրբոյն Վասակայ, զեղբօր զօրավարին Հայոց Վահանայ՝ անդէն և անդ ծանեան, թէ վասն զի մերձ ուրեմն էր կատարումն սրբոյն. որ և խնդրեաց յԱստուծոյ սուրբն Վասակ տեսանել ի մարմնի զեկս անձկալի եղբօրն իւրոյ Վարդայ, և ամենահզօրն Աստուած եղև փութով կատարիչ խնդրոյ սրբոյն իւրոյ, վաղվաղակի և ճեպով ընկալեալ զխնդիրն, և ածեալ զեղբայրն զՎարդ և ցուցեալ նմա և ամենեցուն»* (Փարպ. ՀԲ, ՀԳ.)։

**22.** *Յետ մեծի ճակատուն որ ի Ներսեհապատ՝ Վահան իւրովքն եկած էր ի Ծաղկէոտն, ինչպէս կը թուի՝ Հայոց բանակատեղին, ժամանակ մի հանգչել, մինչ եկաւ դեսպան ի Վախթանգայ, թէ գունդ մեծ Պարսից եկած էր ընդ զօրավարութեամբ ուրումն Միհրանայ, և ինքն չլինելով կարող զդէմ ունել միայն՝ կ'սպասէր օգնութեան Հայոց Վրաց սահմանին մօտ, և յոյս կուտար, թէ նաև Հոնք պիտի գային յօգնութիւն։ Վահանեանք, զի երդուեալ էին Աւետարանաւ՝ կ'երթան ի Վիրս ի թիկունս Վախթանգայ, և խաբուելով ի Վրաց՝ կ'ստիպուէին տալ ճակատ։ Այս եղաւ Վահանեանց երրորդ պատերազմն, զոր երկար կը նկարագրէ Փարպեցին և որ այնպէս աղետալի եղաւ Հայոց. քանզի ոչ միայն բեկան Հայք, թէպէտ պատերազմեցան մեծ քաջութեամբ, այլ և անկան, ի մէջ այլ նշանաւորաց, Վասակ Մամիկոնեան, եղբայր Վահանայ, և Սահակ ասպետ, և բռնուեցան գերի Հրահատ Կամսարական և սեպուհ մի սիւնի Յազդ անուն.—«Գային հասանէին (Վահան և իւրքն) ի Ծաղկէոտն. և կամեցեալք առ վայր մի հանգչել ի ջերմկին որ կոչի Վարշակի՝ գայր հասանէր դեսպան ի թագաւորէն Վրաց Վախթանգայ, թէ գունդ սաստիկ եհաս յերկիրս Վրաց, և իմ տեսեալ, թէ ոչ եմ կարող կալ առաջի, խոյս տուեալ ի լերինս Հայոց, մօտ ի սահմանակցութեանն Վրաց՝ մնամ ձեզ։ Եւ նամակ ունէր գրեալ ի Վախթանգայ, թէ Հոն գնդի հրաման ետու գալ, և չև ևս հասին, բայց մինչ դուք գայք՝ հասանեն, և այնուհետև դուք և մեք և Հոնք զնոսա կորուսանեմք։ Բայց թուի ինձ, թէ յորժամ Հոն հասանէ՝ մեզ ընաւ և աշխատել ինչ ոչ հասանէ, նոքա իսկ վճարեն զգործն, զի անչափ բազմութեան հրաման ետու գալ։ Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և ամենայն աւագ տանուտերաց և սեպհացն Հայոց, վասն զի երդումն էր Աւետարանաւ և Խաչիւ ընդ թագաւորին Վրաց Վախտանգայ՝ յարուցեալ վաղվաղակի և անյապաղ ամենայն զօրքն Հայոց առ արքայն Վրաց հասանէին, և բանակեալք առ վայր մի ի գաւառին Կանգարաց դադարէին։ Ուր պատրողական բանիւք խաբէութեան թարթափեցուցանէր թագաւորն Վրաց Վախթանգ զմիտս զօրավա-*

րին Վահանայ Մամիկոնենի և զայլ աւագ տանուտերացն Հայոց, մերժ ասելով, թէ Միհրանայ զձեր եկդ լուեալ՝ խոյս ետ ի սահմանաց Վրաց և յԱղուանս փախեաւ առ երկիւղի. և դարձեալ՝ թէ զերկու աւուրս՝ և զունդք Հոնաց հասանեն. և անցեալ երկու աւուրք ժամադիր խաբէութեանն՝ ապա յերրորդ և ի չորրորդ օր ձգէր, և յետ այնորիկ յայլ ի վեց և յեւթն օր: Դարձեալ լրտես տայր արձակել արս ի գնդէն Վրաց և Հայոց, որք իջեալ ի տեղիս ինչ դաշտացն՝ տայր երևեցուցանել լոյս կրակաց բազմաց և կոճեղս ծառոց զինեալս այլանմանս, ըստ խաբէութեան Մակեդոնացւոյն Աղեքսանդրի: Դարձեալ ասէր. Ոչ գայ գունդն Հոնաց առ մեզ ի լեռինս, այլ ասեն թէ աստ ի դաշտիս ած ցոյց մեզ զՀայս, և ամենայն բանից քոց հաւատամք, զոր քո խօսեալ է ընդ մեզ և երդուեալ. և այնուհետև զոր ինչ և հրամայես առնել մեզ՝ զամենայն կատարեմք. ապա թէ ոչ՝ չհաւատամք թէ Հայք ընդ քեզ միաբան են. բայց թէ արդարև զայս տեսանեմք՝ այնուհետև զՊարսիկս ի մեզ թողէք, և ձեզ փոյթ մի լիցի: Արդ թէ դուք ի դաշտըն չիջանէք, և հոն գունդքն, վասն ինձ չհաւատալոյ, ի վեր յաշխարհէն ուրեք չշարժին, և Միհրան դառնայ և զՎիրս աւերէ, ինձ ձեր եկն զի՞նչ օգուտ է: Եւ Հայոց գունդն, վասն զի ուխտադիր էր ընդ թագաւորին Վրաց՝ զոր ինչ ասէր ստոյգ կամ սուտ՝ ջանային վասն Ուխտարանին երկիւղի զամենայն կատարել: Զի թէպէտև տօթ էր ժամանակն՝ հարկաւորեցան իջանել ի դաշտն Ծարմանայնու. և յիշխանացն Հայոց ոմանք ոչ յաջող համարէին զէջս գնդին Հայոց ի Վիրս. զոր թէպէտև բազում անգամ ասացին՝ չհաւատացեալ լռեցին: Եւ իջեալ գունդն Հայոց ի Վիրս, չև ևս անցեալ աւուրց երից կամ չորից՝ գայր հասանէր Միհրան և բանակէր դէմ յանդիման բանակին Հայոց յայնկոյս գետոյն զոր Կուր գետն անուանեն, և բանակն Հայոց չուեալ յայլ տեղի հեռագոյն ի բանակէն Պարսից՝ առնէին զիւրեանց օթևանին տեղին: Եւ բազմաց ի գնդէն Հայոց ի գիշերին յայնմիկ մոռացեալ զերկիւղ ուխտին Աստուծոյ, և զահաւոր երդումն Ուխտարանին առ ոտն հարեալ՝ պատգամագնացութեամբ գաղտ խօսեցան ընդ զօրսն Պարսից:... Եւ հասեալ ի վաղիւն ի տեղի պատերազմին՝ խօսէր յայնժամ արքայն Վրաց ընդ զօրավարին Հայոց Վահանայ և ընդ այլ աւագ տանուտեարս և ընդ սեպուհս Հայոց և ասէ. Լաւ լիցէ մեզ կռուել այսօր ընդ զօրս Պարսից, քանզի մեք իսկ բաւական եմք սոցա, և չկարեն կալ առաջի. բայց թէ այսօր ևս հեղգացեալ էր մեր՝ գալոց էին Հոնք և զանուն յաղթութեանն և զօգուտ աւարիս նոքա տանելոց էին: Եւ մինչև ցայնժամ ևս յերկարեալ խա-

բէր պատիր բանիւք։ Այս սրտմտեալ ընդ սուտ և անպիտան խօսս արքային Վրաց զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, ծանուցեալ և զթուլութիւն գնդին Հայոց, զոր տեսանէր լքեալս և մեղկեալս և ոչինչ ընաւ նմանս այլոց ժամանակաց փութոյն և յօժարութեան, սակայն զգունդն զօրաց կազմէր Մամիկոնեանն Վահան ըստ օրինի ճակատու պատրաստութեան. և տուեալ զկողմն աջոյ Բարշլի Վահևունւոյ և Սասոնի Գաբեղինի, և զկողմն ահեակ տայր Վախտանգայ արքային Վրաց, և ի միջոյ կողման կազմէր զինքն երկոքումբք արամբքն, որդւովք երանելւոյն Արշաւրայ, և երանելեաւ տերամբն Գնունեաց, և զերանելլի ասպետն Սահակ և զՍիւնին Բաբգէն ընդ մէջ իւր և Բարշլի կացուցանէր։... Եւ յարձակեալք ի վերայ միմեանց Հայք և Պարսիկք, Թէպէտև զօրավարն Հայոց Վահան երիւք Կամսարական եղբարբք հարեալ ի դիմի իւրոյ Թշնամւոյն կողմանն, դիր և տար արարեալ դարձուցանէին ի փախուստ, մինչև տարեալ անցուցանէին զբազումս ի զօրացն Պարսից յայնկոյս Կուրն գետոյ, և զբազումս ի զօրացն Պարսից յերևելի արանց զօրուն կոտորէին քաջաբար։ Անդ քաջի սեպհին Մամիկոնէից Վասակայ հարեալ նիզակաւ ուժեղապէս զայր ումն հզօր ի գնդէն Պարսից յերկիր կործանէր. որոյ և բեկանէր նիզակն. և եկեալ ի խնդիր այլում նիզակի և գտեալ՝ դառնայր անդրէն փութանակի։ Եւ պատահեալ նմա Կամսարականին Ներսեհի տեառն Շիրակայ, որոյ և նորա բեկեալ նիզակն՝ ի խնդիր էր այլում նիզակի. և քաջի Մամիկոնենին Վասակայ ձայն ի վերայ եդեալ ասէր. Փութա, Ներսեհ, գտանել նիզակ, և դարձիր եկ արագ... գուցէ վրիպեալ յանուանի և ի փառաւորեալ կատարմանէս՝ անանուն և անպիտան մահուամբ ելանիցեմք յաշխարհէս։ Եւ զայս լուր ի սրբոյ առնէն Վասակայ Մամիկոնենէ հաւաստի երդմամբ պատմէր մեզ բազում անգամ ինքն տէրն Շիրակայ Ներսեհ Կամսարականն։ Եւ մինչդեռ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան այսպէս մըրցէր հանդերձ երանելի եղբարբն Վասակաւ և երկոքումբք որդւովքն Կամսարականին Արշաւրայ՝ յանկարծակի փախուցեալք առհասարակ սրանայլին գունդքն ամենայն Հայոց և Վրաց. որոց բազումք ի նենգաւորացն աղաղակէին առ միմեանս անհանգիստ, թէ Փախեան Հայք, անձնապուրք լերուք։... Քաջի զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և այլոց ընդ նմա ուխտապահ ընկերացն, որ ախորժելով տենչային բաժակին մարտիրոսութեան և չգտան արժանիք՝ դարձուցեալ այնուհետև զերասանակս երիվարացն գնային և նոքա զհետ փախստէիցն Հայոց։ Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի եկեալ պատահէր Բաբգենայ Սիւնւոյ, անկելոյ ի

զօրացն Պարսից կարեւէր, զոր հեծուցեալ ի վերայ իւրոյ նժուգի և հանեալ ի պատերազմէն ապրեցուցանէր։ Բայց որք ընտրութեանն ցանկացողք էին և եղեն արժանիք ընդ սրբոյ ասպետին Սահակայ և ընդ սրբոյ քաջին Վասակայ Մամիկոնենի, կատարեցան յաւուրն։ Իսկ զօրքն ամենայն Հայոց, ընդ որս և անպիտան զօրքն Վրաց, հանդերձ թագաւորաւն իւրեանց Վախթանգաւ՝ վատնեալք ցրուէին. զորոց զկնի հետամուտ եղեալ գունդքն Պարսից՝ զբազումս կոտորէին, և բազումք յայլևայլ տեղիս զերծեալք ապրէին։ Բայց զՀրահատն Կամսարական, սաստկապէս վազս առեալ երիվարին իւրոյ ընկենոյր, և հասեալ Պարսկացն մինչդեռ էր նա հետիոտս՝ կալեալ ածէին առ Միհրան, զոր տեսեալ Միհրանայ մեծապէս ուրախացաւ։ Պատուհասէր զնա բանիւք խստութեան, և կապեալ տայր պահել զգուշութեամբ, և ուր երթայր յաշխարհիս Հայոց՝ ընդ իւր շրջեցուցանէր։ Ընդ որս կալան և սեպուհ մի սիւնի որում անուն էր Յազդ, և զայլս ոմանս ի Վրաց աշխարհէն» (Փարպ. ՀԳ, ՀԴ.)։

**23.** Յետ ձախող ճակատուն ի Վիրս՝ Վահան երկու Կամսարականօք առանձնացաւ ի կողմանս Տայոց, ուր ժողովեցան ոմանք ի նախարարաց և ի փախստէից. եկաւ զհետ նոցա և Միհրան իւրով գնդաւ. բայց այնպէս զարհուրեալ էր, մինչև չհամարձակել յարձակել, թէպէտ երկու կողմանք շատ մօտ էին իրարու։ Պարսից բանակն էր ի Դու, գիւղ ի վերայ սահմանին Պարսից և Յունաց, և Վահան իբրև երկու հրասախօք հեռի ի նմանէ ի գեղն Մկնառինճ, ոչ աւելի քան հարիւր մարդով.—«Իսկ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան երթայր առ վայր մի յամրագոյն տեղիսն Տայոց, ուր և սինլքորք փախստէիցն Հայոց առ նա ժողովէին, և այլք ի նախարարացն Հայոց. այլ Կամսարականքն երկոքեան ընդ նմա իսկ էին միշտ, և անքակ ի նմանէ և միաբան։ Զորոց զհետ եկեալ Միհրան գնդաւն իւրով՝ ջանայր կամ սպանանել պատերազմաւ, և կամ ունել հնարիւք, և կամ հաւանեցուցանել և նուաճել։ Եւ էր բանակ սաստկութեան զօրուն Արեաց ի գեւղն որ անուանի Դու, ի սահմանակցութեան Պարսից և Հոռոմոց, և զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան մերձ ի նա իբրև երկու հրասախօք, ի գիւղ մի որ կոչի Մկնառինճ, արամբք որպէս թէ հարիւրովք, և թերևս սակաւուք և կամ յոլովիւք։ Եւ Միհրան այնչափ հազարօք առ նա բանակեալ էր մօտ, և տեղին ուր զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան էր՝ յիշխանութեանն Պարսից թագաւորին էր. և այնչափ սաստկապէս զեղեալ էր Աստուծոյ զմեծ շնորհ զօրութեան իւրոյ ի վերայ քաջի առն Վահանայ Մամիկոնէի, զի ի մէջ այնչափ բազմութեան գնդի և ի զօրաւոր քաջորերոյ՝ դողացեալ սարսեալ կայր Միհրան

գնդաւն, և չիշխէր դիմել ի վերայ և սպանանել զոր կամէր, և հալածել և կորուսանել զմնացեալ փախստեայսն» (Փարպ. ՀԵ.)։

Միհրան, ըստ Փարպեցւոյն, կը խօսի պատգամաւորութեամբ ընդ Վահանայ, որ ազդու բանիւք կը դանդատի զՊարսից և առանձինն զՊերոզէ, թէ ինչպէս չգիտնալով ընտրել զլաւն ի վատթարէ՝ ապականեցին երկիրը։ Վահան կը խօսի նաև համառօտիւ զանձնէ և կ'արդարացունէ զապստամբութիւն իւր, խրատելով զՄիհրան հաւանեցուցանել զՊերոզ իւր ազդեցութեամբ՝ արդարութեամբ դարման տանել եղած վնասուն։ Վահանայ այս բանագնացութիւնն, որոյ հիմն պատմական է և կարևոր յոյժ, և զոր Փարպեցին իբրև ի բերանոյ Վահանայ կը բերէ ի մէջ ընտանի լեզուաւ ժամանակին՝ կը գնենք հոս բան առ բան։ Չէ անհաւանական թէ բանագնացութիւնն թէ ըստ իմաստին և թէ ըստ լեզուին էր բուն Վահանայ, որ հաղորդեց զօրինակն պատմչին իւրում։ «Բանիւ ողոքանաց պատգամաւորէր ընդ նմա (ընդ Վահանայ Միհրան) հանապազօր ի խաղաղութիւն, ասելով թէ Մի երկնչիր, և յարքայից արքայէ ի ծառայութենէ մի ելաներ, և զաշխարհս Հայոց մի տար ի վատնումն. ի հնազանդութիւն եկ թագաւորին, և ես միջնորդ լինիմ. քանզի վասն իւրոյ բարերարութեան սիրէ զիս, և բանից իմոց լսէ. և ես աղաչեմ զթագաւորն և հաշտեցուցանեմ ընդ քեզ, և ինչ որ արժան է տալ քեզ՝ ջանամ զի տայ։ Եւ սպարապետին Հայոց Վահանայ Մամիկոնէի պատասխանի արարեալ ասէր ցՄիհրան, եթէ Արեաց տէր որ լինի՝ արդար աչօք պիտի նայել յամենայն մարդ իբրև զթագաւոր, և արդարապէս տեսանել և արդարապէս լսել ըստ արժանի թագաւորի։ Բայց այր թագաւոր, որ ուղիղ աչօք չհայի ի ծառայս, և ուղիղ յսողութեամբ չլսէ ուրուք զբանս, այլ համակ ըստ իշխանութեան վարի և ոչ ըստ արժանի իրաւանց քննութեանն. այլ առաւել ևս, որ կարի դժնդակագոյն է և աշխարհի կորստեան պատճառ, կամի տեսանել այլոյ աչօք և լսել այլոյ ականջօք՝ ծանր է ծառայութիւնն այն և դառն, և վտանգ՝ որում ոչ ոք կարէ կալ առաջի։ Վասն զի տէր, որ յիւր ի ծառայից զլաւ և զվատթար չգիտէ ընտրել, և ըստ արժանի իւրաքանչիւր ումեք մատակարարել զպիտոյսն ոչ կամի՝ այնպիսին լաւ ծառայի տէր դժուարաւ կարէ լինել։ Արդ՝ Հայոց աշխարհս որպիսի մեծ և պիտոյի աշխարհ է. և արդ ցոյց ինձ այր մի յայսպիսի աշխարհի, որ արժանաւորապէս եհաս ի տանուտէրութիւն. այլ որեար աւազակ և անպիտան, հացկատակք և վատոհմիկք, որ զայնպիսի մեծ թագաւորութիւն խաբեն և ընդ կրակի փառս գնեն և տէրութիւն, և ի ձէնջ ըստ կողմն ելեալ սակաւ մի՝ միզեն ի կրակն, և յանթեղ զագը իւ-

րեանց արկանեն, և՛ զվաճառականն, և՛ զվաճառն ի միասին թըշնամանեն։ Եւ այլ լաւութիւն, և քաջութիւն, և միտք, և գիտութիւն, որով աշխարհ շինի և միջի լինի՝ այն չխնդրի և արհամարհեալ է. այլ անպիտան և վատոհմակ մարդկան պատրողութիւնն ի մէջ անցեալ յորդի, և դուք առ ճանաչող ունիք զձեզ։ Լուեալ է քո, որ Միհրանդ ես, և ամենայն Պարսից զբանս զայս յԱրեաց տեառնէն ի Պերոզէ առաջի ամենեցունց յատենի, թէ Այր վատ և գունդ անպիտան Ասորի է, բայց քան զԱսորի այր՝ Հայ մարդ շատ վատթար է և անպիտան։ Եւ ո՞չ արդեօք լաւ էր մահ քան զայն լուր յայնպիսի թագաւորէ։ Եւ արդ իմ երկուս կռիւս արարեալ է ընդ Արի մարդկան, և երրորդն այս է որ ընդ քեզ արարաք, և ընդ որս զերկուս կռիւսն արարաք՝ ընդ այնպիսի երևելի և քաջ մարդկան կռուեցաք, զոր ինքն Արեաց տէրն և ամենայն Արիք ճանաչէին թէ որպիսի՛ որեար էին։ Եւ օտար մարդոց մեզ չէր օգնեալ, Հոնի կամ Հոռոմի և այլ ազգի ուստեք մարդոյ, բայց միայն այս Հայոց զոր դուք գիտէք՝ սոցա վճարեալ է զայնպիսի մեծ գործ, զոր դուք ամենայն Արիք լուայք և տեսէք. և ոչ բազում այրուձիոյ, այլ հարիւր արամբ և կամ ևս նուազիւ զհազար և զերկուս հազարս այր փախուցեալ է սոքօք։ Եւ յայսմ կռուի մի՛ զայս զմտաւ ածեալ պարծիս, թէ աւելի ինչ քաջութեամբ յաղթեցէք մեզ, այլ ի մեր երկպառակութենէ և ի նենգելոյ եղև մեզ վնաս։ Զի թէ էր այս Հայ գունդ, յորոյ վերայ ահ և երկիւղ էր, որպէս Արեաց տեառն յիւր ծառայի վերայ, և յիմում ձեռին այսպէս էին որպէս ընդ իմ նախնեացն ձեռամբ, և համարձակապէս իշխէի զվատացեալս ի կռուի տամբ և կենօք հարցանել և գլխով պատիժ առնել, և քաջացելոցն կարէի բարի առնել և պատիւ տալ՝ ցուցանէի Արեաց տեառն և ձեզ ամենեցուն, ո՛ր կարի գունդ յԱրիս անուանի էր և լաւ. բայց եթէ ոչ լաւագոյնք ևս և քաջք երևէին՝ այլ ի խոնարհ սակաւ մի և նուազ չտայի երևել։ Բայց արդ զոր ձեր ի վատ տոհմէ և յանպիտան ի մարդկանէ աշխարհիս Հայոց իշխան կարգեալ էք՝ դոքա ըստ իւրեանց յետնութեան կորուսին յաշխարհիս Հայոց զքաջութիւն և զանուն բարի և զլաւութիւն։ Զի գնդի, որոյ զօրագլուխն վատ է՝ գնդին լաւ լինել չէ հնար. և աշխարհի, որոյ իշխանքն յետին են՝ աշխարհին այնմ անհնար է յառաջադէմ և անուանի լինել։

«Իսկ յաղագս իմ դուք ամենքեան գիտէք, զի ի հարցն իմոց ես տղայ մնացի. ոչ զվաստակս նոցա որ առ Արեաց աշխարհն լեալ է՝ գիտեմ և ոչ յանցման նոցա հաղորդ ինչ էի։ Բայց մինչ ես յանձինս զգացի, և ձեզ Արեաց տեառնն արբանեկութեան ար-

ժանի եղէ՝ ի մտի եդի առաջի Աստուծոյ և մարդկան՝ արդար մտօք տեառն և ձեզ ծառայութիւն առնել և արդար վաստակս վաստակել։ Եւ որչափ ես զլաւն հոգայի և ի լաւ վաստակսն յաւելուի՝ և վատ անարժան իշխանքդ Հայոց զինչպէտ բանսարկութիւնս առնէին, և դուք ինքնին մտօք լսէիք, և ընդ իս չհայէիք ուղիղ. ածի զմտաւ, թէ զինչ արդեօք այլ հնար գոյր, որով ես կարող լինէի զԱրեաց տեառն և զաւագացն զմիտսն ուղղել ընդ իս, և շատ էր ինձ։ Եւ իբրև ի վաստակսն զոր վաստակէի, ըստ իմում գիտելոյ թերութիւն ոչ տեսանէի, և առաւել ինչ յաւելուլ և վաստակել չգտանէի հնարս, և զթշնամեաց բերանս ի բանսարկութենէ խնուլ ոչ կարէի, և տեառն և ձեր ականջք բաց էին ի լսել զստութիւն և չխորհել վասն իմ ուղղակի, և իբրև ոչինչ գտի պատճառանս ծանր տրտմութեանն որ կրէր յանձին իմում ի սպառ, և փախչել յաշխարհէս չկարէի՝—խորհուրդ չար ի մտի արկի, և անձամբ զանձն սպանի. և երանի թէ լոկ զմարմինս էր սպանեալ, այլ ես զհոգիս և զմարմինս ի միասին կորուսի։ Քանզի ուրացայ զճշմարտութիւնն զոր գիտէի, թէ ստոյգ Աստուած է արարիչ և տէր ամենայնի. և երկիր պագի ստութեան և մոլորութեան, զոր այսօր առաջի ձեր և առաջի ամենայն աշխարհիս խոստովանիմ, թէ ստութիւն է և աղտեղի խաբէութիւն։ Եւ յետ կործանման յորում կործանեցայ՝ մաշէի յերկիւղի զամենայն օր, թէ գուցէ մեռանիցիմ սովին մեղօք և կորնչիցիմ զյաւիտենական կորուստն։ Կալեալ ի բռի զոգի իմ՝ ի բաց մերժեցի զերկիւղ թագաւորաց, ընկեցեալ յանձնէ կոխեցի զուրացութեանն խիղճ և լուսաւորեցայ։ Այսուհետև ուրախ եմ և պատրաստ հալածանաց, աղքատութեան, վշտի և մահուան. զի որում և դիպիմ քրիստոնէութեամբ՝ ուրախ եմ և անահ։ Բայց դու զոր խօսիսդ՝ արդարև կարես առնել, և հաւանի թագաւորն. բայց նախ քան զամենայն զքրիստոնէութիւն շնորհէ աշխարհիս Հայոց, և զաղ" եղի վաճառդ հատանէ յաշխարհէս մերմէ, զոր անպիտան և վատ մարդիկ գնեն ի ձէնջ խաբէութեամբ, և ընկալեալ՝ ծաղր առնեն զձեզ և զմոխիրդ. և զմարդ ճանաչէք զլաւն և զանպիտան, և գործ խնդրէք յիւրաքանչիւր ումեքէ, ոչ կատակաբանութիւն, և ի գործ հայիք տալ ըստ վաստակոյ զհատուցումն, և ոչ ի լկտեբանութեան խաբէութիւն. և կարէք գրել և կնքել, թէ ի մերմէ բռնութենէ եղև ձեր յանցումնդ և ոչ ի ձեր ստահակելոյ և յանդգնութենէ, և թողուք. և զտոհմիկն առ տոհմիկս ունիք, և զվատտոհմակսն առ անտոհմակս։ Եւ թէ այդպէս նուաճէք զմեզ՝ մեր բնիկ տեարք էք և հարցն մերոց և նախնեաց, և մեք ծառայութիւն առնեմք և հպատակ լինիմք։ Ապա եթէ նոյնպէս զյետինսն առ

լաւսն ունիք և զլաւսն յետս տանիք, և աղտեղի մեղաց վաճառէք զիշխանութիւն աշխարհիս, և ոչ ըստ իրաւանց հայել յարժանաւորսն և ի պիտանիսն տայք՝ մեք որ ապստամբեցաքն՝ ոչ եթէ գիտէաք եթէ մեք Արեաց առաջի ինչ կարեմք կալ, զի և՛ զմեր տառապանացս ոյժ գիտեմք, և՛ զԱրեաց այնպիսի մեծ և զանհամար գնդի և ուժոյ զստուգութիւն. բայց միայն զմեռանելն եդաք առաջի, և նմին պատրաստ եմք. և առաւել ես ուրախ եմք, զի զանուանի և զլաւ մահ մեռանիմք քրիստոնէութեամբ, քան թէ ուրացութեամբ գնել զանցաւոր փառս և զյաւիտենից կորուստ ժառանգել» (Փարպ. ՀԵ.)։

**24**. Մինչ Միհրան և Վահան կը խօսէին այսպէս պատգամաւորօք՝ դեսպան գալով կը կոչէ ի դուռն զՄիհրան, որ առնլով զՀրահատ և զՅազդ՝ կը մեկնի։ Հրահատ հնարիւք կը պրծնի ի ձեռաց Պարսից, և Յազդ կ՚սպանուի մօտ ի Բագաւան։ Ահա պատմութիւն Փարպեցւոյն, արդարև հետաքրքրական. «Եւ մինչդեռ Միհրան և զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան զայնպիսի բանս ընդ միմեանս խօսէին՝ յանկարծակի դեսպան հասանէր ի դրանէ և ստիպելով զՄիհրան ի դուռն կոչէին։ Եւ նորա չուեալ ամենայն բազմութեամբ ճեպով ի դուռն, առեալ ընդ իւր զկապեալն Հրահատ և զերանելին Յազդ և զայլ կապեալսն։ Զորոց զհետ երթայր տրտմութեամբ և բազում փութով սիրելի եղբայր նորուն, տէրն Շիրակայ Ներսեհ արամբք ընտրելովք. որոց տեսեալ զանհնարին անսպառ ողբումն Ներսեհի, սիրով խանդաղատեալ՝ զբարիս նոցա յիշելով երթային ընդ նմա։ Յօրէ ունելոյ զՀրահատն Պարսկացն՝ ոչ էր եղբօր նորա Ներսեհի տեառն Շիրակայ դադարեալ ի լալոյ, և ոչ էր հանդուցեալ ի վերայ անկողնոյ, և ոչ ճաշակեալ հաց առանց արտասուաց, այլ և զոր ճաշակէրն՝ առ չարի դառնացեալ լինէր բերան նորա։ Եւ երթայր զհետ գնդին Պարսկաց՝ ածելով զմտաւ, թէ ո՛ գիտէ լրտեսեալ ուրեք ի զատագոյն թեւի գնդին՝ անկեալ ի վերայ կարասցէ զնա զերծուցանել. և կամ թէ ոչ՝ գոնեայ ես դիպեալ մահու հանդեայց յանմխիթար տրտմութենէս։ Եւ երթեալ բազում օթս զհետ և ոչինչ կարացեալ գտանել հնարս, և մերձեալք որպէս թէ օթեւանս միով ի սուրբ տեղի տան նահատակին Գրիգորի... ձայն սաստիկ բարբառոյ հանդերձ արտասուօք արձակեալ առ այրն Աստուծոյ... մեծաձայն բարբառով և ողբալով աղաղակեաց Կամսարականն Ներսեհ առ այրն Աստուծոյ Գրիգորիոս... և նորա լուեալ վաղվաղակի ասաց ցՔրիստոս. և Փրկչին Աստուծոյ անդ և անդ հանեալ զկապեալն Հրահատ ի շրջափակ զգուշութենէ պահապանացն՝ արձակէր խաղաղութեամբ առ սիրելի եղբայրն իւր

և յաշխարհ։ Յայնժամ տեսեալ զաներկիւղապէս և զքաջաբար եւս Կամսարականին Հրահատայ զօրագլխին Արեաց Միհրանայ և այլ աւագանւոյն որ ընդ նմա էին՝ հրաման տային ածել զերանելի սեպուհն Սիւնեաց զՑազդ ի նմին աւուր զառաջեաւ իւրեանց։ Եւ սկսան խօսել ընդ նմա և պատուհասել։... Ոչ իւիք, ասեն, կարես գտանել հնարս փրկութեան անձինդ և ապրել՝ բայց թէ ապաւինեալ ի կրակ՝ պագանիցես երկիր արեգական։... Ի սոյն միտս յօժարեցուցեալ գրգռէր բազում անգամ պատգամաւորօք և Թղթովք, էր երբեք և յորժամ ինքն առ աւագսն Պարսից լինէր ի բանակի, անօրէն իշխանն Սիւնի Գդիհոն, ի վերայ երանելի Սիւնւոյն սեպհին Ցազդայ։... Եւ լուեալ զայս ամենայն բանս երանելոյն Ցազդայ ի Միհրանայ և յայլ ամենայն աւագանւոյն Պարսից, ծանուցեալ և զկամս և զխորհուրդս իւրոյ Գդիհոնի՝ ասէ. Ուրախ եմ և խնդամ վախճանել քրիստոնէութեամբ, քան թէ զհազար հազարս ամաց կեալ ուրացութեամբ, և յաւիտենից անվախճան պատուհասին լինել արժանաւոր։ Լուեալ զայսպիսի բանս դատաւորացն ի սրբոյն Ցազդայ՝ սրով կտրել զգլուխ երանելոյն հրամայեցին, մերձ ի տեղի սուրբ մատրանն առաքելանման նահատակին սրբոյն Գրիգորի, ի գիւղն որ կոչի Բագաւան, նահանգին Բագրեւանդայ, ի լանջակողման լերինն որ անուանի Նպատ, մօտ ի սուրբ տեղի մատրանն որպէս երկու քարընկեցօք։ Եւ կատարեալ սրբոյ Սիւնի սեպհին Ցազդայ զընթացս նահատակութեան իւրոյ յամսեանն հոռի, որ օր վեշտասան էր ամսոյն, և ամփոփեալ նշխարք նորա եդան անդէն ի սուրբ մատրանն Գրիգորի» (Փարպ. ՀԶ.)։

Փարպեցին, ինչպէս տեսանք՝ ըստ իւրում բարեպաշտ սովորութեան սքանչելեօք կատարուած կը պատմէ զազատութիւնն Հրահատայ. աւելի շնորհակալութեան արժանի էր արդեօք, եթէ յայտնէր մեզ այն ազատութեան բնական պատճառներն։ Բայց յաջորդ բանք Փարպեցւոյն — «Տեսեալ զաներկիւղապէս և զքաջաբար եւս Կամսարականին Հրահատայ զօրագլխին Արեաց Միհրանայ և այլ աւագանւոյն որ ընդ նմա էին, հրաման տային», այլովքն հանդերձ՝ կը ցուցնեն ըստ բաւականին Հրահատայ ազատութեան բնական պատճառն, այսինքն թէ Հրահատ գտնելով պատեհ ժամ՝ «աներկիւղապէս և քաջաբար» ճողոպրեց զանձն և զիւրսն պահապաններէն, թերեւս և սպանանելով զոմանս ի նոցանէ։

**25.** Յետ մեկնելոյն Միհրանայ՝ Վահան կու գայ ի Վաղարշապատ յուխտ, և անտի մեկնելով կ'երթայ ի Դուին անցուցանել զձմեռն։ Հոն կը պատահի զարմանալի ինչ դէպք, զոր արդարև կ'արժէ պատմել։ Խաբեբայք ոմանք կը տարածեն լուր ժողովրդեան

մէջ, թէ Վասակ, եղբայր Վահանայ, և Սահակ ասպետ ողջ են, կը թափառին յանապատս պաշարեալ ի թշնամեաց, և կը խնդրեն օգնութիւն ազատելոյ և դառնալոյ ի Հայս։ Միամիտ մարդիկ, մանաւանդ կանայք այն սպանելոց, ստիպելով առաքեցին զՄուշեղ Մամիկոնեան գնդաւ, թէպէտ Վահան հակառակ էր և խաբէութիւն կը համարէր այն լուրը, և գնդին առաքումը վնասակար։ Ահա պատմութիւն Փարպեցւոյն։ «Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան չուեալ գայր հասանէր յԱյրարատ գաւառ, և կատարեալ զուխտ պատարագաց ի Վաղարշապատ քաղաքին, հանդերձ ընդ իւր ուխտապահ նախարարօք և այլ զօրօք Հայոց ի տանն Աստուծոյ և ի վկայարանս նահատակեալ կուսանացն, և նախ հոգացեալ զաղքատաց զարմանս՚... երթեալք հանգչէին ի բնական ոստանին Հայոց ի Դուինի, ուր զաւուրս ցրտաշունչ ձմերայնոյն սառնամանեացն անցուցանէին։

**26.** «Եւ մինչդեռ կամէին հանգչել առ սակաւ մի և ոգի առնուլ յաշխատութենէն՝ գային յանկարծակի ի կողմանց Վրաց արք դիւազգեցիկք և խելաշուրջք, խօսելով բանս սուտս և տեսիլս խաբէութեան զոր ոչ էր տեսեալ, ի կործանումն և յերկպառակութիւն զօրացն Հայոց, առ զօրավարին Վահանայ յոստանին, և ասէին, թէ Ողջ են և կենդանի սքանչելի ասպետն Սահակ և քաջ սեպուհն Մամիկոնեան Վասակ, և զմեզ յղեցին առ ձեզ, թէ Ի փախչելն ձեր ի կռուոյն Վրաց՝ մնացաք մեք ի կռուատեղին խոցեալք կարեվէրք, և ի սաստկութենէ և ի կարեւոր վիրացն զօրութեամբ հասաք առ միմեանս, և հոլովեալ անկաք ի խիտ թաշուտ տեղիս դժնկաց, և կացեալ ի վերայ մեր առն միոյ քահանայի Հոգևորի ի տեղեացն անապատէ, և բարձեալ ի մէնջ զմի մի բուռ անձին՝ տարաւ հեռի որպէս պարսկաւ միով հրասախաչափու, չև ևս գիտելով, թէ ո՛վ ոք իցեմք և կամ յորմէ գաւառէ, իբրև զօրս վիրաւորեալս ապրեցուցանել զմեզ կամեցեալ, և կամ դիպեալս վախճանի՝ ամփոփել զոսկերս մեր. և տալ յանկասկած տեղի հեռացուցեալ զմեզ ի տեղւոջէն առն՝ լինէր անհոգացեալ։ Երթեալ այնուհետև ի վանկունս իւր՝ բերէր մեզ կերակուր ինչ դուզնաքեայ և ջուր, ածեալ ընդ իւր և մանուկ մի միւս ևս այլ, և մատուցեալ մեզ աղաչէր ճաշակել. և մեր ընկալեալ ըստ կարի զկերակուրն ի ձեռանէ սրբոյն ջամբեալ՝ զօրացաք սակաւ մի։ Եւ նորա գիտացեալ, թէ սակաւ մի բերեալ ոգի բացաք զաչս՝ սկսաւ նա այնուհետև հարցանել զմեզ, թէ ուստի՞ էք և կամ յորմէ գաւառէ, քանզի ձևս ձեր և կերպարան ազատս կարծեցուցանեն զձեզ։

Եւ մեր զառաքինութիւն զառն տեսեալ՝ զատոյգ իսկ ինչ պատմեալ ասացաք նմա զմէնջ յանուանէ. և նորա լուեալ և թողեալ առ մեզ զմանուկն՝ գնաց ի մէնջ ի վանկունսն իւր։ Եւ ի միւսումն ևս գիշերին ածեալ գրաստ միւս ևս այլ մանկամբ՝ հանէին զմեզ ի գրաստն, և օժանդակելով մեզ երեքեան տանէին յանապատն՝ ուր ինքեանք բնակեալ էին. և թագուցեալ զմեզ առ իւր աւուրս բազումս, բժշկեալ ողջացաք։ Ոմանց աստուածատեաց մարդոյ որսալ զմեզ սկսեալ են անձանձրոյթ և կամին սպանանել, և անձանց փառս գտանել ի Պարսկաց և պատիւս։ Իսկ վանականս ընդ բազում անապատ տեղիս և ընդ բազում խորաձորս քարանձաւաց շրջեցուցանէ զմեզ ի ծածուկ, բայց ածել այդր առ ձեզ երկնչի– գուցէ, ասէ, քննեալ ուրուք զհետս՝ գտանիցէ զմեզ և սպանանիցէ։ Բայց արդ փութացարուք արձակել այտի գունդ սաստիկ և զօրագլուխ հաւատարիմ, տանել զմեզ առ ձեզ, որպէս զի հասեալք առ ձեզ՝ լիցուք ի միասին վրէժխնդիրք հաւատոյն ճշմարտութեան։ Եւ լուեալ զայսպիսի խօսս արանց անմտաց՝ իսկոյն հաւատացեալ ասէին, թէ Արդ փութալ ևեթ պիտի. զի յորժամ նոքա ողջամբ ի Հայս գան, և Պարսիկք զայս լսեն, թէ արդարև նոքա ողջ են՝ խորտակին ամենայն զօրութիւնք նոցա և լքանին։ Այլ մանաւանդ յորժամ յականջս կանանց ևս եհաս բանն, և լուան թէ ողջ են՝ չառնէին այնուհետև դուլ ի տուէ և ի գիշերի, զրգռէին զսիրելիս իւրեանց և զազգականս, զդայեակս նոցա և զծառայս, փութալ ճեպել հասանել վաղվաղակի և ածել զնոսա։ Զայս ամենայն բանս բազում արանցն ի հայ մարդկանէ, ևս առաւել զանդգնութիւն կանանցն և զճեպս և զանժուժկալութիւն — որ նման բոցոյ տոչորէին ի խորհուրդս նոցա և ոչ ոք զօրէր ցածուցանել — լուեալ Մամիկոնեանն Վահանայ զօրավարին Հայոց՝ ասէր. Այդ բանք և խորհուրդք արանց վատախորհրդոց են. քանզի գիտացեալ զեկս պարսիկ գումարտակի գարնանի յերկիրս Հայոց՝ խորհեալ իմացան քայքայել և պառակտել զժողովումն զօրացն Հայոց՝ որ յաստանիս են, և այսր անդր ցրուել։ Եթէ ընդդէմ ոմանց բանքս ոչ թուէին՝ ես աշխարհակորոյս արանցն ողջ ոչ տայի գնալ յաշխարհէս Հայոց, վասն զի զերանելի եղբօրն իմոյ զնահատակութիւն յաւուր կատարման իւրոյ՝ տեսի և ասեմ թէ զնա մի խնդրէք, և վասն ասպետին մի աշխատիք։ Ապա թէ որպէս զորդիս մարգարէիցն կամիք թարթափել յընդունայնս, որք զԵղիայն խնդրէին ապշեալք, որոց բողոքէր Եղիշա չաշխատել և չլսէին՝ դառնայք ամօթով նոյնպէս և դուք, որպէս և նոքա դարձան ամօթալից և ունայնք։ Բայց զի մի երեւեցայց ումեք բարենախանձ՝ առաջի ձեր են արք զօրուդ Հայոց

և նախարարքդ, և որ ոք կամի երթալ՝ չարգելում. բայց գիտասջիք թէ որքան կորուստ յանօգուտ երթիցդ հասանէ աշխարհիս Հայոց։ Յայնժամ հաւանեցուցեալ անխորհուրդ և թեթևամիտ մարդոց և մանաւանդ կանանց նահատակելոցն և նոցունց ընտանեաց և դայեկաց զսեպուհն Մամիկոնէից զՄուշեղ՝ բազում այրընտիր գնդաւ արձակէին ընդ արսն շաղաւաշուրթս և խաբեբայս յերս անօգուտս և ի ճանապարհս զոր ոչ գիտէին։ Որոց տարեալ զնոսա ի սահմանս Վրաց յածեցուցանէին, և բազում պատրողական կարկատելով պատճառս՝ ասէին, փախուցեալք ի սպանողացն ի թաքստոց էին, փոփոխելով յայլևայլ խորաձորս քարանձաւաց և ի ծառախիտ կատարս բարձր լերանց։ Եւ այսպէս ի բազում աւուրս խելացնորեցուցեալ յածեցուցանէին զսեպուհն Մամիկոնէից զՄուշեղ և զգունդն որ ընդ նմա, մինչև ցվախճանել ցրտաշունչ հողմոց ձմերայնոյն սառնամանեաց» (Փարպ. Հէ.)։

**27.** Յետ Միհրանայ կու գայ Զառմիհր ոմն Հազարաւուխտ մեծ բազմութեամբ, և խորհրդով ոմանց Վահանայ հակառակորդներէն, որ իմացուցին նմա, թէ մի մասն Հայոց գնդին էր ի Վիրս և Վահան կը գտնուէր սակաւ արամբք ի Դուին՝ գալով կը պաշարէ քաղաքը։ Վահանեանք տեսնելով այնչափ բազմութիւն և գիտնալով, թէ դէմ առ դէմ ճակատել ընդ նոսա և յաղթել անհնար էր՝ մեծ ուժգնութեամբ յարձակելով միաբան կը ճեղքեն բանակը, և յապշութիւն Պարսից կ'անցնին անվնաս. միայն ոմն Որդի անուն Դիմաքսենից տոհմէն և Քաջաջ ի Սահառունեաց՝ կ'սպանուին. Յոհան կաթողիկոս որ էր ի բանակին՝ մեծ դժուարութեամբ կ'ազատի։ Նոյն օրը Մուշեղ, յետ թափառելոյ լեռներ և ձորեր ի զուր ի խնդիր Սահակայ ասպետի և Վասակայ, կը հասնի ի Դուին և տեսնելով զպատերազմն վճարեալ՝ կ'երթայ ընդ փախստականս առ Վահան.—«Եւ եկեալ ժամանակ ծաղկոցաց գարնանւոյն օդոյն շնչմանց, աւետաւոր ջերմութեանց մերկոցն չքաւորաց, եկեալ հասանէր յանկարծակի յերկիրս Զառմիհր Հազարաւուխտ սաստիկ և բազում այրընտիր զօրօք. դիմեալ անցանէր ստիպով ընդ կամուրջ գետոյն Երասխայ, և ի գիւղաքաղաքին որ կոչի Արտաշատ՝ բանակէր այն օր։ Քանզի զգացուցեալ էր նմա քաջ տեղեկութեամբ ուխտանենգացն յաշխարհէս Հայոց զերթն կիսոյ գնդին Հայոց ի Վիրս, և եթէ սպարապետն Հայոց Վահան Մամիկոնեան լոկ թուով նախարարօք և սակաւ այրուձիով էր յոստանին, յորոյ վերայ հասեալ, ասեն, քո այսչափ ընտիր բազմութեամբ այրուձիոյ՝... երեքնակի և չորեքնակի պատեալ պաշարեալ զնոսա՝ հանես ընդ սուր զամենեսեան, և կատարեալ տանիս ի գլուխ զիրս գործոյս աշխա-

տութեան, և դու պատուեալ փառաւորիս ի Թագաւորէն, և մեք հանգչիմք յերերագին աշխատութենէս յայսմանէ։ Եւ լուեալ զայսպիսի բանս Հազարաւուխտոյ և այլ աւագացն որ ընդ նմայն էին՝ ճեպով ի վաղիւն դիմէին ի վերայ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և զօրացն որ ընդ նմայն էին ի ժամուն։ Եւ հասեալք մօտ ի քաղաքն Դուին՝ յօրինէր Հազարաւուխտ զճակատն ըստ օրինի գործոյ պատերազմին, և կարգեալ զռազմն ի միջոցէ մայրւոյն որում Խոսրովակերտնասեն՝ անցուցանէր ի վերայ դաստակերտին մինչև ի լեռնակողմնն զոր Ջրվէժն կոչեն։ Տեսեալ սպարապետին Հայոց Վահանայ զայսչափ բազմութիւն զօրացն Պարսից, և այլ նախարարացն Հայոց որ ընդ նմա էին, և այլ ռամիկ այրուձիոյն Հայոց, թէպէտ զանընդդիմակաց չափաւորութիւն իւրեանց գիտէին, տեսանելով ծովացեալ գնդաւն Պարսից զամենայն դաշտն առհասարակ՝ այլ սակայն և ոչ կարի զարհուրեալք փախչել փութային, այլ ըստ բաւականի զօրուն իւրեանց բաժանեալ ի մի մի և յերկուս նախարարս՝ յարձակէին ի վերայ։ Եւ առեալ քաջասրտաբար մասն ի գնդէն Պարսից՝ բազում արս ընտիրս դիաթաւալ յերկիր կործանէին, և իւրեանց դարձուցեալ զերասանակս երիվարացն՝ գնացին ի բաց քաջաբար։ Վասն զի և քաջաբար փախուստ առն հզօրի սաստիկ ահ երկիւղի զուշակէ առ միւսանգամ գործ թշնամեացն գնդի, որ եղեալ երևեցաւ բազմաց, և ճաշակեալ առին զհամ և զարմացան, մանաւանդ առաւել քան զայլսն գիտաց քաջագոյն անապարծ իշխանն Սիւնեաց Գդիհոն։ Բայց անդէն ի տեղւոջն ընտրեցին կամաւոր յօժարութեամբ զմահ անձանց և նահատակեցան երկու արք ի նախարարացն Հայոց, կատարեալք լաւաբար և զքաջութիւն գործոյ ցուցեալ, երանելին Որդի ի տոհմէն Դիմաքսենից, և երանելին Բաջաջ ի տոհմէն Սահառունեաց, եդեալ զանձինս ի վերայ ուխտին սրբոյ՝ պսակեցան։ Եւ զսուրբ հայրապետն Հայոց տէր Յոհան ընկեցին ի ձիոյն, թողին կիսամահ. վասն զի այնպէս ճեպով հասուցին սադրիչք անօրէնութեանն զՀազարաւուխտ ի վերայ Հայոց՝ զի և ոչ աւուրբ միով յառաջ ժամանեցին խոյս տալ ի քաղաքէն և անձին հոգալ, և ոչ ինքն կաթողիկոսն Յոհան. այլ ամենազօր գթութիւն Փրկչին ողորմեալ խնայեաց յուխտասէր հօտն իւր, և ածեալ ողջ զհայրն սուրբ՝ եցոյց խաղաղութեամբ ժողովրդեան իւրում։ Եւ ի նմին աւուր յետ վճարելոյ գործոյ պատերազմին՝ գայր հասանէր սեպուհն Մամիկոնէից Մուշեղ հանդերձ այրուձիովն որ էին ընդ նմա, և ոչինչ ժամանեալ յանբոյկ գործոյ պատերազմին պիտոյից՝ դարձեալ ընդ այլ փախստէիցն գնային ի բաց» (Փարպ. ՀԸ.)։

**28.** Վահան և իւրքն յետ քաջութեամբ խոյս տալոյ ի Հազարաւուխտայ՝ կ'երթան ի սահմանս Խաղտեաց. Հազարաւուխտ իւր բոլոր զօրութեամբ հետամուտ լեալ Վահանեանց՝ կը հասնի յՈւքաղ գաւառ Տայոց, և կը բանակի Գիւղիկ և Վարդաշէն անուն գիւղերուն մօտ, և լսելով թէ Վահան էր ի Շաղգոմս ի բաժնին Յունաց, հասնի հոն, բայց չգտնելով զՎահան՝ կը բռնէ զկանայս երկուց Կամսարականաց, և յուսալով ի ձեռն նոցա որսալ զԿամսարականսն որ էին թիկունք Վահանայ՝ կ'երթայ ի Բասեան, ուր կ'ընդունի հրաման թագաւորէն երթալ նուաճել զՎիրս, և փոխանակ իւր թողուլ զՇապուհ ումն Միհրանեան տոհմէն.--«Եւ գնայր զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան ինքն և նախարարքն Հայոց որ ընդ նմա էին, հանդերձ իւրաքանչիւր ուրուք գայեկօք և սիրելի ծառայիւք, ուշ եդեալ երթալ դադարել առ վայր մի յամուր տեղիս սահմանացն Խաղտեաց, ոգի առնուլ և հանգչել առ վայր մի։ Զորոց զկնի հետամտեալ ճեպով անհանգիստն Հազարաւուխտ՝ երթայր դիմեալ ամենայն զօրօք հանդերձ. և զբազում տեղիս ամբոցացն Հայոց ընդ երթալն առեալ հարկանէր, քակէր աւերէր և անցանէր, և զբազումս կոտորեալ հանէր արեանց ճապաղիս. խընդրէր հնարս փքալով մեծամեծս, կամ առնել ձերբակալս զքաջ Մամիկոնեանն Վահան, և կամ սպանանել պատերազմաւ և ապա հանգչել։ Եւ երթեալ յՈւքաղն՝ բնակէր մօտ ի գեւղն որում անուն էր միումն՝ Գեւղիկ, և միւսումն՝ Վարդաշէն, և բանակեալ անդ զօրն գայն՝ լսէր ի վաղւն, թէ Մամիկոնեանն Վահան մօտ էր ի նա ի Հոռոմ տան, ի գաւառին Շաղագոմ։ Եւ կարծեցեալ անդ լինել զիմաստախորհուրդ Մամիկոնեանն յանհոգս, որպէս ի Հոռոմ տան անկեալ՝ պնդեալ յանկասկածս ի տեղին տեղեակ առաջնորդօք՝ հասանէր ընդ առաւօտուն ծագել։ Եւ գտեալ անդ բազմութիւն այլ մարդկան, ընդ որս դիպեցան և կանայք երկուց Կամսարականացն, տեառնն Շիրակայ Ներսեհի և Հրահատայ. յորոց վերայ անկեալ յանզգաստս զօրացն Պարսից՝ զբազումս ի ռամիկ մարդկանէն Հայոց սպանանէին, և զկանայս Կամսարականացն եղբարց, զՆերսեհի և զՀրահատայ, ըմբռնեալ տանէին ի բանակն Պարսից։ Բայց զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի և այլ ումեք ի նախարարացն որք ընդ նմայն էին, ոչ պատահեալ՝ դառնայր. այլ ստուգեալ վասն կանանցն Կամսարականաց, թէ արդարև նոցա կանայքն են՝ զուարճացեալ ուրախանայր ընդ միտս իւր, խորհելով այսպէս, թէ արդ նոքօք հաստատ կարեմ որսալ և ըմբռնեմ զՎահան, քանզի նոքա են նորա սիրտ։... Բայց զկանայս երկուց Կամսարականացն հրամայէր ըստ օրինացն քրիստոնէից պահել սրբութեամբ և ամենայն

զգուշութեամբ։ Եւ ինքն չուեալ յՈքողայ իջանէր ի գաւառն Բասեան, և բանակէր մօտ ի գիւղն որ անուանի Դու, ի դաշտին Աղբերականաց զոր Արծաթաղբերսն կոչեն։ Եւ կացեալ անդ օր մի՝ դեսպան ի դրանէ հասանէր առ նա հրովարտակաւ, յորում գրեալ էր թագաւորին Պերոզի զիւր ամենայն Արեաց ուժով ի վերայ Հեփթաղին զդիմեցումն, և նմա հրամայէր երթալ ի Վիրս, և զթագաւորն Վրաց զՎախտանկ կամ ունել և կամ սպանանել, և կամ ի բաց փախուցանել յաշխարհէն, և զՇապուհն ի Միհրան տոհմէն անդէն յաշխարհին Հայոց թողուլ գնդաւ մարզպան» (Փարպ. ՀԹ.)։

**29.** Հազարաւուխտ ընդունելով թագաւորին հրամանը՝ կը թողու զՇապուհ հանդերձ Գդիհոնիւ և կ'երթայ ի Վիրս, ուր շատեր կը միաբանին ընդ նմա, և Վախթանգ խոյս կու տայ ի կողմանս Եգերացւոց։ Իսկ Շապուհ գնել տալով զկանայս Կամսարականաց Բասենոյ բերդը և հրամայելով պահել զնոսա պատուով՝ կը ջանայ բանիւք հրապուրանաց բաժնել զնոսա ի Վահանայ, սակայն չյաջողիր, որպէս մանր կը պատմէ Փարպեցին.—«Եւ Հազարաւուխտոյ ընկալեալ զհրովարտակն և լուեալ զհրաման թագաւորին՝ թողոյր աստէն զՇապուհն պարսիկ այրուձիով, այրընտիր գնդաւ, զտէրն Սիւնեաց զԳդիհոն առ նմա ամենայն գաւառին Սիւնեաց գնդաւ, և ինքն փութով գնայր ի Վիրս... և միաբանեցուցեալ զշատս յաշխարհէն Վրաց՝ գունդ կազմէր։ Եւ տեսեալ թագաւորին Վախտանգայ, թէ իւրոցն ստեալ թողին զնա և գնացին առ Հազարաւուխտ, և Հայք դեռ ևս անձեռնհաս են և վտանգեալք՝ խոյս տուեալ յաշխարհէն Վրաց՝ ի կողմանս Եգեր աշխարհին հասանէր առ վայր մի։ Իսկ Շապհոյ տարեալ զկանայս Կամսարականացն յամուր բերդն Բասենոյ զոր Բոլբերդն կոչեն՝ անդ թողոյր. և յանձն արարեալ Ցրզատվշնասպայ բերդակալի զկանայս Կամսարականացն՝ պատուիրէր նմա բազում զգուշութեամբ պահել ըստ օրինացն քրիստոնէից զնոսա սրբութեամբ։ Քանզի կանայքն իսկ Կամսարականացն զնոյն ասէին բազում անգամ. Թէ զարսն մեր արդարև կամիք նուաճել՝ զայդ և եթ տուք լսել նոցա, թէ մեք խաղաղութեամբ եմք... քանզի ամենայն Հայոց գիտելով ասեմք զայս, և վկայեն որ աստ առ ձեզ հայ մարդիկ են, զի քան զմեզ զայլ կին նոքա ոչ գիտեն։ Ապա թէ այլ ինչ լսեն վասն մեր, ի նախատանաց իսկ և յամօթոյ, թող ի մեղաց և ի զարշութենէ ըստ մերոց օրինացն՝ առաւել գնեն զանձինս ի մահ։ Քանզի և ինքն իսկ Շապուհ ոչ միայն ի լրոյ և եթ գիտէր զնոցա պնդութիւն յաղագս քրիստոնէութեան, այլ ինքն իսկ որպէս իսկ ձեռասուն տեղեակ էր նոցա ամենայն իրաց։ Համբաւ և պատուէր ստէպ տայր Կամսարա-

կանացն, առ որս յղէր հանապազ, թէ Մի կռնչիք և արքայից արքայի ի ծառայութենէ մի ելանէք. այլ եկայք նուաճեցարուք, և զկանայս ձեր առ ձեզ առէք, և իմով միջնորդութեամբ զվնասդ թողուլ տամ արքայից արքային, և զքրիստոնէութիւնդ զոր սիրէքդ, որպէս յայժմ կալեալ էք համարձակութեամբ՝ ևս առաւել յայսմ հետէ կալջիք և մի երկնչիք... և եթէ կամիք և կարէք ինչ լաւ սպաս ցուցանել արքայից արքային, և հնարէք զՎահան սպանանել՝ գտանիցէք ի թագաւորէն պարգևս և պատիւս՝ զոր ոչ է գտեալ ձեր ուրուք ի նախնեաց ի թագաւորաց։... Եւ լուեալ զայսպիսի պատգամս երկոցունց Կամսարականացն ի զօրագլխէն Պարսից Տապհոյ... տէրն Շիրակայ Ներսեհ և Հրահատ զայս պատասխանի յղէին, թէ Մեր գործ և աշխատութիւն չէ վասն կնոջ և որդւոյ... երկինք և երկիր և ամենայն որ ի նոսա է՝ չէ համեմատ այնմ պատուականութեան որում մեք ցանկամք։ Չէաք այնչափ անզգայք, թէ ոչ կարէաք խաբել զձեզ, որպէս և այլ հացկատակեանդ որ առ ձեզ են, և առնուլ կապիճ մի մոխիր և տալ ցաղախին մի մեր, որպէս նա զայն կամէր՝ պղծել, և մեք սնոտի փառօք ի ձէնջ առ վայր մի վայելէաք և պայծառք երևէաք։ Այլ վասն կանանցդ մերոց տամք ձեզ նշան ինչ, և ձեր փորձեալ քաջ քննեցէք. եթէ արդարև մեք յաղագս հաւատոյն զոր սիրեմք և ունիմք հաստատապէս, և հաճոյ է գործս մեր ճշմարտին Աստուծոյ և ընդունելի՝ զմեզ փրկէ ի նեղութենէ և զկանայսդ մեր պահէ ամենայն սրբութեամբ և տայ ցմեզ. ապա թէ ոչ այդպէս լինի՝ մերում թերահաւատութեան մեղադրեսցուք, և մի ինչ ձերում բռնութեանդ և սաստից։ Եւ զայս բանս այսպէս յղեալ երկոցունց Կամսարական եղբարցն առ Հազարաւուխտ՝ ինքեանք ևս առաւել քան զառաջինն անձամբ և զայլս յորդորելով պատրաստք էին արբանեկութեան զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի՝ զամենայն գործ որ և հրամայէր նոցա» (Փարպ. Գ.)։

**30.** Բայց Տապուհ զհետ էր ունել զՎահան, քաջի կը յուսար նուաճել ապստամբութիւնը՝ եթէ սպանանէր զնա կամ բռնէր։ Իսկ Վահան, թէև սակաւաւոր՝ չէր տար դուլ Պարսից, գիշերային յարձակելով յանկարծ ստէպ ստէպ Պարսից բանակին վերայ, հասուցանելով անհնարին տագնապ։ Բայց որովհետև նուազած էր Վահանայ զօրութիւնը՝ խորհեցաւ գտնել նոր օգնութիւն Մամիկոնեաններէն, ուստի և գնաց ի կողմանս Հաշտենից.—«Եւ զհետ գնացեալն Հազարաւուխտոյ ի Վիրս՝ մնայր Տապուհ յԱքազս, և ջանայր կատարել զհրամանն Հազարաւուխտոյ և որսայր զՄամիկոնեանն Վահան, գտանել զնա ի ձեռն և սպանանել, և ոչինչ լինէր

ձեռնհաս։ Բայց Մամիկոնեանն Վահան զամենայն օր ոչ տայր դուլ առնուլ զօրօք իւրովք Պարսկաց ի ղակչին. այլ զցայգ զամենայն նետաձիգ լինելով ի ներքս՝ էր զոր ինքեանց Հայոցն խոցոտեալ սպանանէին, և էր զոր ինքեանք Պարսիկքն զինքեանս ի վերայ միմեանց կոտորելով հեղձամձուկս առնէին։ Եւ երթեալ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեանն հանդերձ արամբքն որ ընդ նմա էին՝ բանակէր ի գիւղ մի մերձ, որ էր ընդ իշխանութեամբ Մամիկոնէից, որում անուն էր Ծաղիկ, կամեցեալ անցանել ի կողմն սահմանակցութեանն Հաշտենից, յաղագս գտանելոյ ի նոցանէ օգնութիւն» (Փարպ. ԶԱ..),

Տապուհ, որ կը դիտէր Վահանայ շարժումներն՝ կը պնդի ըզհետ։ Փարպեցին կը պատմէ հոս Վահանեանց և Պարսից մէջ փոքր կռիւ մի, ուր չունեցաւ մասն Վահան։ Վահան, ասէ, կ'երթար Կարնոյ ծովուն արևելեան կողմէն, իսկ Պարսիկք կ'երթային զկնի։ Այնպէս դիպեցաւ, որ Ներսէհ Կամսարական և Մուշեղ Մամիկոնեան զատուած էին ի Վահանայ և կ'երթային ի հիւսիսոյ նոյն ծովուն, և գալով ի գիւղ մի Կարնոյ, Արծաթի անուն, ուր հնձողք կ'աշխատէին՝ Պարսիկ գունդ մի որ հետամուտ էր նոցա, չհամարձակելով մօտենալ նոցա՝ կը նեղէին մշակներն։ Խուրս անուն ոմն, դայեկորդի Ներսէհի Կամսարականի, տեսնելով ի հեռուստ պարսիկ մի, որ կամէր սպանանել մշակներէն զմին, որ խոյս կու տար ի նմանէ՝ զայրանալով յարձակեցաւ և սպաննեց նիզակաւ Պարսիկը. զայս տեսնելով Ներսէհ և Մուշեղ, տեսնելով ևս որ հետամուտք չէին բազում՝ յարձակեցան, և կոտորելով բազմութենէն եօթանասուն մարդ՝ դարձան առ Վահան.—«Ազդ եղև Տապհոյ զօրավարին Պարսից, եթէ ահաւասիկ Մամիկոնեանն Վահան բանակեալ է ի գիւղ մի, և արք են ընդ նմա թուով յոյժ սակաւք։ Եւ կանխեալ վաղագոյն ընդ առաւօտն զօրագլուխն Պարսից Տապուհ ամենայն բազմութեամբն որ ընդ նմա՝ յանկարծակի ի վերայ ելանէր գնդին Հայոց։ Եւ գունդն Հայոց իբրև հանապազազգոյշ, վասն ցանգ անծոյլս յօրինելոյ զնոսա զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի, լինելով պատրաստք՝ գնային ի տեղւոյն անվնասք։ Սակայն գունդք զօրացն Պարսից ոչինչ փոյթ առնէին այլոցն, զկնի զօրավարին Հայոց Վահանայ անցանէին. քանզի ասէին, թէ նմա միայն գտանեմք հնարս՝ ամենայն իրք մեր վճարեալ են և յանգ։ Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան երթայր ընդ կողմն արևելից ծովուն Կարնոյ, և գունդք զօրաւորացն Պարսից զկնի նորա երթային։ Եւ Մուշեղ ի տոհմէն Մամիկոնէից և Ներսէհ Կամսարական տէրն Շիրակայ ընդ կողմանն հիւսիսոյ

ծովուն, վրիպեալք առ փոյթ ժամուն ի զօրավարէն Հայոց Վահանայ Մամիկոնենէ՝ սակաւ արամբք երթային խռովեալք: Եւ մերձեալք ի գիւղ մի Կարնոյ, որում անուն էր Արծաթի, և հասեալք ի հեղեղատ մի որ մերձ էր ի գիւղ մի, և կամեցեալք յեզեր հեղեղատին առ վայր մի հանգչել, ուր և հնձողք արտորայոցն շուրջ զտեղեօքն գործէին: Իբրև գիտացին պարսիկքն, թէ ոչ եղեն սոցա հասու՝ կամեցան մշակացն տեղեացն վնասել, թէ ընդէր ընաւ ծառայից արքայից արքայի տայք շրջել յաշխարհի ձերում: Եւ տեսեալ Խուրսայ որ էր ի գաւառէն Արշամունեաց ի գեղջէն Տիրմաց, դայեկորդի տեառն Շիրակայ Կամսարականին, զոմն ի Պարսից զօրացն, զի կամէր սպանանել զայր մի կարնացի ի մշակացն, և մշակն շուրջ գալով զբարդիւ միով խուսափէր ի սպանողէն, զայրացեալ ընդ սեպհին Մամիկոնէից Մուշեղի և ընդ Կամսարականին Ներսեհի՝ ասէ. Ո՞չ ապաքէն զմահ առնս, թէ մեռանի ի պարսկէն՝ ի մէնջ պահանջէ վրէժխնդիրն Աստուած: Եւ յարձակեալ նիզակաւ Խուրսն ի վերայ պարսկին՝ անդէն ի տեղւոջն սատակէր, և զերծուցեալ ապրեցուցանէր զկարնացին ի սպանողէն: Եւ գրգռեալք ընդ բանսն Խուրսայ սեպուհն Մամիկոնէից Մուշեղ և Կամսարականն տէր Շիրակայ Ներսեհ, և ընդ գործն հայեցեալ ընդ Խուրսայ զոր գործեաց քաջաբար, տեսեալ և զհետամուտսն զկնի նոցա, թէ չեն կարի բազումք՝ յարձակեցան ի վերայ Պարսկացն սակաւ արամբք որ ընդ նոսա էին, և զօրացեալ բազում արեանց ճապաղիս ի տեղւոջն հանէին, և զայլսն փախստականս արարեալ դարձուցանէին ընդ կրունկն ամօթով: Եւ եղև թիւ մեռելոցն ի տեղւոջն եւթանասուն և երկուց արանց: Եւ լուեալ զայսպիսի յաջողութեան գործ զօրավարին Հայոց Վահանայ՝ ետ փառս, զի և առանց նորա կորացուցեալ խորտակէր Աստուած զզօրութիւն թշնամւոյն» (Անդ):

**31**. Վահան, ինչպէս արդէն խորհած էր՝ կ՚երթայ իւրովքն յԱրշամունիս, և բնակելով յԵրէզ՝ կամէր հանգչել երկու օր. բայց Տապուհ ըստ խորհրդոյ Գդիհոնի կը հասնի, չտալու համար Վահանայ ժամանակ գտնել օգնութիւն: Վահան իւր զօրուն և երիզացի շինականօք կը յարձակի Տապհոյ բանակատեղւոյն վրայ, կ՚սպանուին շատք ի Պարսից, և ի Հայոց՝ սեպուհ մի Գաբեղեան Գաբաղ անուն: Ապա կը մեկնի Վահան յայլ գիւղ Ողին անուն կամ գիւղ Տաէոյ. դարձեալ կը հասնի Տապուհ ա՛նհնարին ցասմամբ, ինչպէս կը թուէր՝ իբրև չորս հազարաւ: Թէպ' ո քան զնոսա շատ նուազ էր Վահանայ զօրութիւնը՝ խորհեցաւ հարկանելով ի դիմի կամ յաղթել և կամ առնուլ մարտիրոսութեան պսակը, քանզի ըստ մտաց Հայոց յայնժամ, այս պատերազմներուն մէջ մեռնել՝ մարտիրոսանալ

էր։ Կռիւն էր սաստիկ. Հայոց գնդէն մասն մի կերթայ փախստեայ. կը մնան առ Վահանայ իբր քառասուն կամ աւելի նուազ, մինչև գոչել ոմանց առ Վահան՝ զգուշանալ առ ժամուն. բայց նա իւրովքն, մանաւանդ Մուշեղիւ Մամիկոնենիւ և երկու Կամսարականօք այնպէս սարսափեցուց զՇապուհ՝ մինչև կոչել նմա զԳդիհոն յօգնութիւն։ Զայս տեսեալ քաջացն Հայոց՝ համարեցան պատեհ ժամ, պատառեցին Պարսից գունդը, հասին, հարին, կործանեցին յերկիր զԳդիհոն, զահագին վիրագն, ապա ընկրկելով յետս՝ կ'երթային ոչ շատ հեռի ի Պարսից, որ մնացին ապշեալ, մանաւանդ Շապուհ որ ասէր. Եթէ Վահան կատարեց այնչափ սակաւուք այնպիսի մեծ գործ, ինչպէս կարող ենք զդէմ ունել նմա՝ եթէ մօտակայ գաւառներուն հայերէն գոնէ օգնութիւն։ Այս կռուոյն մէջ մեռան ի Վահանեանց չորս անձինք միայն երևելիներէն։ Սիւնեաց զօրքը թափելով իւրեանց իշխանին փորոտին՝ կը տանին մարմինն ի Սիւնիս, և ինքեանք կը ցրուին.—«Եւ ինքն Վահան գնայր ի սահմանս Հաշտենից ըստ յառաջագրեալ խորհրդոյն իւրոյ, և հասեալ բանակէր ի գաւառին Արշամունեաց, ի գեւղն որ կոչի Երէզ. կամեցաւ հանգչել աւուրս երկուս։ Եւ զօրավարն Սիւնեաց Գդիհոն փութացուցանէր առնլով զզօրագլուխն Պարսից գնդին զՇապուհն, ասելով թէ Զառնն Վահանայ Մամիկոնէից զփորձ քաջութեանն և՛ դու առեր, և՛ ամենայն աշխարհն Արեաց, և ես իրաց և գործոց առնն իմանալ ինչ ես ոչ կարեմ։ Եթէ գունդն ամենայն ի Դունի առ նմա միաբանեալ էր՝ նա մեզ անդէն զիւր քաջութեանն գործ ցուցանէր. բայց արքայից արքայի թագն և Արեաց փառքն մեզ այնպէս յաջողեցին, զի նորա իրքն այնպէս դիպեցան որպէս տեսաքն, և մեզ բարի վճարումն եղև։ Եւ արդ տեսաք, այդչափ սակաւ արամբ զինչ գործ գործէ այրն, և որ քան զօր նուազեցուցեալ ըզգունդս մեր վատնէ։ Արդ՝ թէ ուստեք ևս այլուստ կարէ գտանել օգնական՝ տեսջիք զի նա ամօթով զմեզ դարձուսցէ և սակաւաւորս. այլ և դառնալոյ իսկ մեզ անդէն անվստահ եմ շատ։ Բայց փութա, և մի՛ տար առնն հանգիստ առնուլ, գուցէ թէ մեք ծուլանամք՝ և նա առնիցէ զմեզ աշխատ և ամաչիցեմք։ Եւ եթէ յիս միայն թողուք զնա՝ ցուցանեմ ձեզ յաւուրս հինգ իմովս իսկ գընդաւս, թէ որպիսի՛ մատնեալ վատի կորուսանեմ զնա և զորս ընդ նմայն են»։ «Այս պիղծ որ էր ի նմա, յաւելու Փարպեցին, գուշակէր նմին զանձնէ իւրմէ, թէ յետ հինգ աւուր չար մահուամբ սատակելոց ես յորանցն որք են ընդ Մամիկոնենին Վահանայ»։ «Լուեալ զայս ամենայն բանս զօրագլխին Պարսից Շապհոյ՝ ոչ տայր դուլ անձինն և ոչ զօրացն որ ընդ նմայն էին, այլ փութով զհետ

առնն երթայր սրտմտեալ, և հասեալ բանակէր ի տեղիս ուրեք անյայտս գետառուին: Իսկ զօրավարին Հայոց Վահանայ և իւր ևս զօրուն գոնեա զայն գիշեր հանգստիւ յագեալ քնով, և հաւանեցուցեալ զարսն գեղջն Երիզայ, քանզի ամենայն անձն երկիւղիւ և կամաւ լսէր զհրաման նորա իբրև թագաւորի, և առեալ ընդ իւր զարս զօրուն իւրոյ և զշինականսն զերիզացիսն՝ գայր հասանէր ի վերայ զակշին ի գիշերի, և սպարափակ արարեալ երիզացօքն զտեղի կռուոյն իւրեանց՝ ինքեանք ըստ նմանութեան տեղատարափ շառաչման նետաձիգ սաստկութեամբ զգունդս Պարսկացն ահաբեկէին: Խառնէին ընդ միմեանս զամբոխ զօրացն որ ի զակշին էին, ևս առաւել ինքեանք զինքեանս Պարսիկք առաթուր հարեալ կոտորէին, և լինէր ձայն լալոյ և ձայն գուժի ի բանակէ անօրինացն: Բայց ի Հայոց գնդէն Գաբաղ միայն սեպուհն Գաբեղեան կամաւորութեամբ կռուեալ և մեծ արութիւն ցուցեալ՝ խոցեցաւ, յորոց վիրաց կատարելութեան պսակի յետ սակաւ ինչ աւուրց արժանի եղև: Եւ զօրավարն Հայոց Վահան դարձեալ ի կոտորածէ թշնամեացն, երթեալ հանգչէր զմնացեալ մասն գիշերոյն յՈղին գեղջն, զոր Նոեայ անուանեն, մինչև յառաւօտուն ծագել: Եւ կամեցեալ հանգչել առ վայր մի զօրացն Հայոց Վահանայ ի ծանրութենէ գիշերոյն աշխատութեանց՝ զաչս ի վեր առեալ տեսանէին, և ահա հասեալ կայր ի վերայ նոցա զօրագլուխն Պարսից Նապուհ, զայրագնեալ սրտիւ մրմռայր իբրև զգազան, վասն զի առաւել քան զամենայն աւուրց՝ այն գիշերոյն վնասք առաւել թուէին նմա և կարևորք. որ եղև իսկ արդարև այնպէս, այլ ոչինչ նման առաջիկայ մեծ բեկմանն, զոր առժամայն էր տեսանելոց և իսպառ բեկանելոց: Տեսեալ զօրավարին Հայոց Վահանայ զյանկարծահաս դիմեցմունս զօրագլխին Պարսկաց Նապհոյ ամենայն բազմութեամբ զօրուն ի վերայ նոցա, թէպէտ և անպատրաստ տեսանէր զիւր գունդն ի ժամուն և նուազս առ սաստկութեամբ թշնամեաց զօրուն՝ սակայն զանգիտէր և բնաւ իսկ ոչ, այլ հրաման տուեալ փութանակի կազմէր որքան իսկ էին. ձայն բարձեալ գոչէր առիւծաբար... Մեռանել ի վերայ ուխտի սրբոյ՝ վիճակ է մարտիրոսութեան: Յաղթութեան մտսամբ բազում անգամ պայծառացոյց զմեզ Աստուած, և գոհ եմք. իսկ որ առաւել մեծն է և քան զամենայն ի վեր՝ զայն ևս պարգևեալ շնորհեսցէ մեզ Հզօրն և պսակեսցէ: Սուրբ Հոգին է որ ասաց... «մինն զհազարս հալածէ, և երկու զբիւրս շարժէ»:... Եմք մեք թուով սակաւ, հարիւր, թերևս յոլովք կամ նուազք. և եթէ խոստմունս ասացելոցն կատարել ի մեզ կամի Հզօրն՝ ապա ի նոցա յերեք հաբիւր հազարս զօրացն շատ մարդկան բազմութիւնք պիտին, քանզի

ոչ գոյ ի նոսա ըստ կշռելոյ ական աւելի քան զչորս հազարս արանց:... Եւ տեսեալ զայս ամենայն բանս զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի, բաժանեալ որքան իսկ էին արք զօրուն ընդ նմա՝ տայ իւրաքանչիւր զօրագլխացն՝ զորոց կարծէր թէ ի դէպ է և պատշաճ: Եւ մինչդեռ նա կազմ էր յարձակմանն, և զօրքն Պարսից ճակատեալք կարգմամբ գային սաստկապէս ի պատերազմ՝ հայեցեալ (Վահան) տեսանէ, զի գունդն ամենայն Հայոց դարձուցեալ զերեսս յուխտէն երդմանն Աւետարանին և ի խրատուէ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի՝ երթային փախստեայք ամենեքեան: Եւ մնաց ինքն և յուխտապահացն Մուշեղ ի տոհմէն Մամիկոնէից, և երկոքեան Կամսարականքն որդիք երանելոյն Արշաւրայ, ինքեանց երկուք կամ երեք դայեկօք. և այլ թուով արք որք յազատաց և յիւր իսկ ի Մամիկոնէից տանէն, ընդ բնաւ որպէս թէ քառասնիւք կամ նուազիւք ևս: Որոց ևս տեսեալ զփախուստն ամենայն գնդին Հայոց առհասարակ և զարհուրեալք՝ ասէր ոմն ցզօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, թէ Յուշ, տէր, յուշ, այսինքն թէ հնար ինչ է, ի ժամուս տեղի տալ և անձին զգուշանալ: Եւ զօրավարին Հայոց Վահանայ տեառնագրեալ զինքն՝ բարձր ձայնիւ ասէր, թէ Յիս արդ ոք յուշ մի ասէք, զի ինձ յուսալ ի մարդ և կամ պարծել մարդով քաւ լիցի: Եւ քաջաբար ի մէջ ամենայն զօրացն Պարսից յարձակէր հանդերձ ուխտապահ արամբք սակաւուք որ մնային առ նմա: Եւ ապշեալ ընդ ահաւոր աներկիւղած ուժն զօրավարին Հայոց Վահանայ, և ընդ այլ սակաւ արանցն որ ընդ նմա զհետ, զօրագլխին Պարսից Նապհոյ՝ ճեպով ցիշխանն Սիւնեաց առ Գդիհոն յղէր, ասէ. Զեռն տուր յիս կողմն, զի իրս անսպառուսս իմն նորոգս տեսանեմ. զի թէ արդարև զօրութիւն իմն աներևոյթ է որ օգնէ նոցա և մեզ չերևի՝ զայն ես ոչ գիտեմ. բայց եթէ անմտութեամբ ցանկան անձնամահք լինել՝ ապա ի մէջ արարեալ զամենեսեան զնոսա այսօր ձերբակալս առնեմք: Եւ իշխանն Սիւնեաց Գդիհոն խնդալից եղեալ ընդ կոչն Նապհոյ՝ նշկահելով փութանակի ի տեղին արշաւէր. և զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան հանդերձ իւր միասիրտ սակաւ արամբք յարձակեալ հերձանէ զբովանդակ գունդն Պարսից, որպէս յորդահոսանս բազմութեան ջրոց որ հեղեղատեն զերկիր և անցանեն: Ինքն հզօրաբար քաջ ուխտակցօքն նման առիւծու ընդ մէջ ամենեցուն յայնկոյս ելանէր. և սպանեալ իւր և արանցն որ ընդ նմա՝ բազում արս հզօրս պատերազմողս ի զօրացն Պարսից՝ հարեալ խոցէին նիզակաւ ընդ անութ կարեվէր զհպարտ իշխանն Սիւնեաց զԳդիհոն, և զահաւորալոր ամրութիւն զինուն յոր պանծացեալ յուսայր՝

ցելեալ վեր ի վայր, թափ ընդ լեարդն զնիզակատէգն Հասուցանէին։ Որոյ դառնակոծոյ չարալլուկ հեծմամբ յաւուրս սակաւս վըճարեալ զօգին սատակէր. որ պարծէրն ամբարտաւանութեամբ և ասէր, թէ Ես ընդ Վահանայ և այլ հայերդ ոչ եթէ նետիւ կըռուիմ, այլ գգըրկով պոզեալ զբոլորս ցնդեմ, օն և անդր ցիր և ցան արկից ձորոցդ և դաշտացդ։ Եւ եղև բան հպարտութեան նորա բեկումն նմին։... Եւ զօրքն Պարսից զկնի փախստէիցն Հայոց անցեալ երթային, յորոց և արս բազումս սպանին ի թուլացեալ մեղկացելոցն։ Բայց զօրավարին Հայոց Վահանայ հանդերձ իւրովք գործակցօքն զգործ քաջութեան վճարեալ՝ երթայր այնուհետև անհոգս, որպէս թեւակից զօրուն Պարսից. և զունդք ամենայն զօրացն Շապհոյ և հայել ի նոսա լոկ ոչ իշխէին։ Քանզի այնպէս արկեալ էր Աստուծոյ զահ և զերկիւղ զօրավարին Հայոց Վահանայ ի վերայ զօրացն Պարսից՝ զի կարծէին թէ ի հայեցուածէ լոկ առնն Մամիկոնենի և յարանցն որ ընդ նմայն էին՝ չզերծանիցեն առանց վտանգի։ Բայց յուխտապահ զօրացելոց արանցն որք ընդ զօրավարին Հայոց Վահանայ՝ յարձակեալք նահատակեցան ի ժամուն երանելին Քոնթ Առաւենեան, և երանելին Ներս Յովսեփեան, և երանելին Ատգէն սեպուհն Վանանդացի, և երանելին Ղերպարգոս, որ էր ազգաւ յոյն։ Իսկ Սիւնեաց զօրուն թափեալ զփորոտի իշխանին իւրեանց յերկիր, վասն կարի զազրապէս հոտելոյն, և պատեալ եղեգամբ՝ առեալ գնացին ազգականք իւր և ծառայք յաշխարհն Սիւնեաց։ Եւ զայն տեսեալ Սիւնեաց այրուձիոյն՝ քամակակոտոր խորտակմամբ ցրուեալ և քայքայեալք ընդ այլ և այլ ճանապարհս գնացին յիւրաքանչիւր տեղիս» (Փարպ. ՁԲ, ՁԳ.)։

**32.** Այս մեծ հարուածէն ետքը՝ Շապուհ թողլով այլ ես պնդել զկնի Վահանայ՝ կ'երթայ ի Բասեն, և մինչ վարանեալ կը խորհէր, թէ ինչ հնար գտնէ—քանզի Գդիհոնիւ բեկաւ աջ բազուկ նորա—յանկարծ գալով դեսպան՝ կը բերէ զլուր պարտութեանն Պարսից ի Հեփթաղս և Պերոզի մահուան.—«Շապուհ, պարսիկ գնդին զօրագլուխն, իբրև տեսանէր զքակումն Սիւնի գնդին և զահաւոր զօրութիւն հակառակորդին իւրոյ Վահանայ՝ սրտմտեալ զարհուրէր. եթէ զինչ առնիցէ՝ չիմանայր, զի ասէր, Թէ ի կենդանութեանն այնպիսի առնն որպէս Գդիհոն էր, և այրընտիր գընդաւ յաղթեալ գտաւ նա և որ ընդ նմայն էին, յաւելուածով և այսոցիկ ես որ աստ են առ իս, և համարեալ առ ոչինչ Վահանայ՝ երեսուն միայն արամբք ի վերայ երից և չորից հազարաց յարձակեալ խորտակեաց զամենեցունց զսիրտս, և պատառեալ վեր ի վայր զայնչափ զօրաց բազմութիւն զայնպիսի մեծամեծս գործեաց

վնաս. իսկ այժմ որպէս վստահութեամբ կարասցուք զայնպիսի քաջորերոյ ունել զդէմ սակաւացեալքս: Այլ և զայս զմտաւ ածեալ երկնչիմ, մի գուցէ առաքեալ ի մերձակայ սահմանակից տեղեաց առ հայ մարդիկ գաւառին Անձտայ և Ծոփաց և Հաշտենից, և առեալ ի նոցանէ օգնականս որպէս յիւրոց ազգականաց՝ չկարիցեմք և զապրումն անձանց որ մնացեալքս եմք՝ գտանել այնուհետև: Այլ եկայք փութասցուք երթալ յօտանն Հայոց, և ճեպաւ դեսպանօք զգացուսցուք արքայից արքայի: Վասն զի և նորա, եթէ վճարեալ է զիւր գործն՝ ժամ է յօտանն դառնալոյ: Եւ այնուհետև բուռն գնդաւ և կամ ինքն իսկ գլխովն՝ նա իշխէ որպէս և գտանէ առնել զլուխ Հայոց գործոյս... Զայս ամենայն զմտաւ ածեալ այսպէս Շապհոյ՝ չուէր վաղիւն ի գաւառն Բասենոյ, և եկեալ ի գեւղն զոր Ալվարն կոչեն, մինչդեռ տարակուսեալ տանջէին խորհուրդք զնա յերկիւղէ զօրավարին Հայոց Վահանայ՝ եկեալ հասանէր յանկարծակի դեսպան ի Պարսից, ունելով գոյժ չարաչար և նամականի բազում, զորս գրէին առ Շապուհ Պարսից աւագօրեարն, և Հայք իւրաքանչիւր առ իւր ազգականս և սիրելիս, որք յանթիւ սաստիկ կոտորածէ Հեփթաղին զերծեալք էին» (ԶԴ, ԶԵ.)։

Շապուհ առնլով նամակը՝ կը մնայ անզգայ. ապա ուշաբերեալ կը կոչէ դեսպանը, որ կը պատմէ նմա մանր, թէ ինչպէս Պերոզ ամբարտաւանութեամբ յանխորհուրդս երթալով Հեփթաղաց, այն է Սպիտակ Հոնաց վրայ հակառակ դաշանց՝ չարաչար կը յաղթուի և կ՚սպանուի ինքն.—«Ընկալեալ Շապհոյ զնամականին և հասեալ ի վերայ ծանր և կարեւոր չարեացն՝ ի մեծ տրտմութիւնս ապշութեան ընկղմեալ զարհուրէր. և կացեալ ժամանակս ինչ անխօս իբրև թալացեալ՝ ոչինչ բան կարէր հարցանել զայրն թղթաբեր և ոչ անձին զգալ: Եւ զգացեալ յետ բազում ժամուց որպէս յապշութենէ և ի թմրութենէ՝ կոչեցեալ զայրն հարցանէր, թէ ո՛րպէս կամ զիա՛րդ սպառսպուռ եհաս այնպիսի վախճան և կործանումն Արեաց աշխարհին, կամ ո՛ կարացեալ զերծանել եբեր զհամբաւ կոտորածին զայնչափ անթիւ բազմութեան զօրացն, և կամ զիա՛րդ արդեօք մեռաւ աստուածանման տէրն Պերոզ և կամ որպիսի՛ մահու: Եւ դեսպանին պատասխանի արարեալ ասէր, թէ Քո հարցանելդ պատշաճ և ի դէպ է, որպէս ամենայն մարդ, որ կամի լսել ի պատգամաւորաց զիրս պիտոյից և զտեղեկութիւնն. բայց ինձ կարի ծանր է խօսել զվատ բանս և տալ զրոյց զայնպիսի չար աղետից ի զերծելոց փախստէիցն, մանաւանդ յորում ոք այնչափ վնասուց և բեկման չէ պատճառ՝ բայց ինքն աստուածանման տէրն Արեաց Պերոզ... Նախ՝ մինչդեռ այդրէն իսկ էր ի Վրկանի Պերոզ.

և զօրաժողով արարեալ յամենայն կողմանս կամէր խաղալ ի վերայ Հեփթաղին՝ խորհեալ առանձին միայն, ոչ զոք հարցանէր, բայց զայս ևեթ գիտէր ամենայն գնդին մարդ, եթէ ընդ Հեփթաղին կամի կռուել։ Լքեալ և սրտաբեկեալ ամենայն մարդ՝ տեսանել լոկ սիրով չկարէր զայր հեփթաղ, և կամ զանունն լոկ լսել, թող թէ կռուով ընդդէմ երթալ, յիշելով զահ և զպաշարումն որ անցին ընդ տէրն Արեաց և ընդ Պարսիկս։ Յայտնի աղաղակէր ամենայն բերան. Եթէ մահապարտ եմք, և արքայից արքայ զմեզ սպանանել կամի՝ ինքն իսկ աստէն սուր ի վերայ եդեալ հրամայեսցէ սպանանել, քան եթէ սրով Հեփթաղին տայ կորուսանել զԱրիս, որ գործ մինչև ցյաւիտեանս զանձն և զԱրեաց աշխարհ վատանուն առնէ։ Զայն բանս և ամենայն աւագանի դրանն խօսէին առ միմեանս հանապազ, և մանաւանդ սպարապետն Արեաց Վահրամ, որ և համարձակապէս յականջս Պերոզի բազում անգամ հասուցեալ հրապարակաւ բողոքէր։ Եւ նա ոչ լսէր ումեք և ոչ յիշէր բնաւ զառաջին թշնամանս խայտառականաց ելոց, զոր եգիտ անձամբ և ամենայն Արեօք ի Հեփթաղէ։ Դիմեալ ի վերայ այնչափ բազմութեամբ Արեօք և Անարեօք՝ գնաց, որ իբրև զմահապարտ ի մահ, և ոչ իբրև պատերազմողս ի կռուել երթային։ Տային զբոյց ապրեալք անտի և զայն ևս, թէ յորժամ մօտ հասաք անդր՝ առաքեաց առ Պերոզ Հեփթաղն, թէ Քո ընդ իս ուխտ է երդմամբ գրով և կնքով՝ թէ չկռուիմ ընդ քեզ. և սահմանս կարգեցաք, զորովք չիշխեսցուք թշնամութեամբ անցանել առ միմեանս. արդ յիշեա զուխտն և ըզնեղութեան պաշարումնն, յորմէ ողորմեալ իմ արձակեցի զքեզ և ոչ սպանի, և ի բաց դարձիր խաղաղութեամբ և մի մեռանիր։ Ապա թէ ոչ լսես բանից իմոց՝ գիտեա զի կորուսանեմ զքեզ և զամենայն զանսպիտան բազմութիւնդ յոր դու յուսացեալ ես, քանզի ես և արդարութիւն ի միասին կռուիմք, և դու և ուխտազանցութեանն ստութիւն ի միասին էք, և արդ դու ինձ զիա՞րդ կարես յաղթել։ Եւ լուեալ Արեաց զբանս Հեփթաղին՝ ասէին ցՊերոզ, թէ նա արդար է, և մեք սուտ կռուիմք։ Եւ Պերոզի սաստկապէս զայրացեալ Արեաց աւագանոյն՝ պատասխանի արար հպարտութեամբ Հեփթաղին և ասէ, թէ Զայս բազմութիւն գնդին զոր դուք տեսանէք՝ կիսովս ընդ ձեզ կռուիմ և կորուսանեմ, և կիսովս զհող տեղեացդ ուր դու լինիս՝ կրել տամ, ո՛ր ի ծովն, ո՛ր ի փոսն զոր հատին՝ լնում։ Եւ հասեալք առ միմեանս և հարեալք ի գիմի՝ կորեաւ ինքն ամենայն որդւովք և աշխարհաւ։ Եւ զերծեալք ի կործանմանէն արք սակաւ, և հասեալք ի Վրկան՝ պատմեցին ամենեցուն զամենայն անցս չարեացս այսոցիկ, և զամենայն արս աւագս և զայլ մարդիկն որ ի Վրկանին էին՝

փախուցին յԱսորեստան։ Դեսպան արարեալ ի Վիրս առ Հազարաւուխտ, և զիս այսր առ ձեզ արձակեցին, փութալ ժողովել զձեզ առ միմեանս և գտանել զհնարս՝ որով լինիցին ի միջի և՛ ձեր անձինք, և՛ Արեաց աշխարհ» (Փարպ. ԶԵ.)։

**33.** Նապուհ պատասխան տալով դեսպանին, թէ ինքն արդէն կը խորհէր պատճառ հրաժարելու այն գործէն՝ կը պատմէ նմա համառօտիւ Վահանայ և ընկերներուն աներկիւղ քաջութիւնը, թէ ինչպէս իբր երեսուն մարդով շարժեցին երեք հազարէ կազմեալ բանակ մի, և սպանին զհսկայակերպն Գդիհոն, խոստովանելով ևս, թէ Պերոզի անմտութիւնն եղաւ պատճառ սարսուցանելու այնպիսի քաջ մարդիկ և պիտանի երկիր մի որպիսի էին Հայք, և անկանի ի ճանապարհ երթալ ի Պարս, յետ յանձնելոյ զկանայս Կամսարականաց Բողբերդի կուսակալին։ Իսկ Վահան գալով Վաղարշապատ՝ կը կատարէ զուխտ իւր, կը նորոգէ զկաթողիկէն, և ապա կ'երթայ ի Դուին, յայնժամու մայրաքաղաքն Հայոց, սպասել վախճանին.—«Լուեալ զայս ամենայն բանս Նապհոյ ի դեսպանէն՝ պատասխանի տուեալ ասաց, թէ Ես և գունդս զոր այժմ դու ընդ իս տեսանես, թէպէտև այդ լուր չարեաց չէր հասեալ՝ խնդրէաք պատճառս զերծանելոյ ի գործոյս յորում եմք։ Վասն զի այնպէս զարհուրեցուցեալ ապշեցոյց զմեզ ապստամբն Վահան, որոյ իբր և արարածք չեն որպէս զայլր ժամանակի մարդկան զոր մեր տեսեալ և գիտեմք, այլ իբրև զառաջին քաջացն, զոր ի վէպսն պատմեն և լսեմք։ Քանզի թող զայլ ժամանակաց զնորա և զորանցն որ ընդ նմա են յիշել զգործս և զաներկիւղութիւն, զոր իմ և այլ աւագորերոյ տեսեալ է՝ այլ յառաջ քան զաւուրս տասն, թուով երեսուն արամբ ոչ միայն ի վերայ այսր բազմութեան որ այժմ աստ են և տեսանես, յարձակեալ կռուեցաւ, այլ և իշխանն Սիւնեաց Գդիհոն իւր գուարին այրընտիր ձիով աստ էր. և Վահան դէմ յանդիման այն երեսուն արամբ յարձակեալ ի վերայ և նման արծուոյ յորում ժամու ի կաքաւուց երամ սլանայցէ, իցէ զոր սպանանիցէ և զայլ ամենեսեան ընդ ծերպս և ընդ սորս վիմաց ցրուիցէ, ըստ նմին օրինակի այսր անդր զայսչափ բազմութիւն զօրացն արկեալ վեր ի վայր ցրուեցին, սպանին և զսկայանման զայրն զԳդիհոնն, և զայլ բազումս կոտորեալ ի գնդէն՝ գնային ինքեանք անվնասք, չերկուցեալ բնաւ յումեքէ։ Եւ արդ ո՛չ անճանաչող և արհամարհօտ հպարտութեանն Պերոզի հանեալ է զայնպիսի որեար և զայսպիսի մեծ և զօգտակար զաշխարհ յԱրեաց ծառայութենէ։ Եթէ այժմ զայնպիսի այր, որպէս և յառաջագոյն գիտէի և այժմ քաջագոյն ևս գիտացի, և զնորուն զընկերս որ առ նմա են, և մանաւանդ

զերիս եղբարսն որ ի Կամսարականն տոհմէ են, հնարէի նուաճել և մեր առնել՝ որպէս մեծ մասն մխիթարութեան համարէի հասելոյ ծանր բեկման ի վերայ Արեաց աշխարհին: Եւ խօսեցեալ զայս Միհրանեանն Շապհոյ և դեսպանին ընդ միմեանս՝ հրաման տային զօրուն, և ըստ կարի օր ըստ օրէ չուոյն ճեպեալք հասանէին յաշխարհն Պարսից: Բայց զկանայս Կամսարականացն թողեալ Շապհոյ անդէն ի Բողբերդի՝ յանձն առնէր բերդակալին, ստէպ պատուիրելով՝ բազում զգուշութեամբ պահել և առաւելապէս սրբութեամբ ըստ օրինի քրիստոնէից կարգի:... Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան եկեալ հասանէր այնուհետև ի Վաղարշապատ քաղաք, հանդերձ անխենդ ուխտապահ նախարարօքն Հայոց, կատարէր զովորական ուխտս և զպատարագս ի սուրբ եկեղեցւոջն կաթողիկէի, զոր նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ, զհնացեալ գործ նախնեացն իւրոց, և զտեղիս վկայարանացն, նախ հատուցանելով զաղքատաց զպէտս, և ապա ինքեանք ուրախացեալք զուարճանային խնդութեամբ: Եւ անտի չուեալ՝ յոստանն ի Դուին մտանէին, և դադարեալ անդ աւուրս՝ սպասէին և ակն ունէին հրամանի առաջնորդութեանն Քրիստոսի» (Փարպ. ՁՁ.)

Հազարաւուխտ ևս որ էր ի Վիրս, առնլով նոյն լուրը՝ կ'երթայ փութով ի Պարս: Լինի անդ ժողով մեծ, ուր միաբան հաւանութեամբ աւագանւոյն կ'ընտրուի թագաւոր եղբայրն Պերոզի Վաղարշ, իբրև այր բարերար և հեզ: Հազարաւուխտ և ապա Միհրան կը խօսին գովութեամբ զՀայոց, մանաւանդ զՎահանայ, և իսկոյն կ'որոշուի արձակել զՆիխոր Վշնասպդատ՝ քաղցրութեամբ շահել զՎահան և զՀայս.—«Եւ լուեալ Հազարաւուխտոյ յաշխարհին Վրաց զսպանումն Պերոզի և զանթիւ կոտորած բազմութեանն Պարսից՝ զարհուրեալ տարակուսէր յանձն իւր գնալ վաղվաղակի յերկիրն Պարսից: Եւ հասեալ ի դուռն՝ ժողովին առ նմա մնացորդք Արեաց աւագանւոյն:

**34.** «Խորհուրդ ի մէջ առեալ, թէ զի՞ արժանի թագաւորութեան նմանեցուցանել կարասցեն, և խորհեալ զայս ի բազում աւուրս՝ հաստատէին միաբանութեամբ զիրսն ի վերայ Վաղարշու, որ էր եղբայր թագաւորին Պերոզի, որպէս ի վերայ առն բարերարի և հեզոյ... զոր բազմեցուցին ի գահու թագաւորութեանն Պարսից: Խորհուրդ ի մէջ առեալ այնուհետև Հազարաւուխտոյ միաբանութեամբ աւագանւոյն յերկրորդումն աւուր թագաւորութեանն Վաղարշու՝ խօսէր առաջի թագաւորին և ասէր. Պերոզ արքայից արքայ, ձեր եղբայր, որպէս և դուք իսկ գիտէք՝ բուռն էր... բազումք յարհամարհոտ բարուց նորա փախուցեալք յԱրեաց թագաւո-

րութենէ՝ ոչ սակաւ մասամբ վնասեցին Արեաց աշխարհին։ Եւ նախ
առաջին զմեծ աշխարհն Հայոց, որ այսօր ի ձեր ծառայութենէ ի
բաց կացեալ է, և զայրն որ զաշխարհն ի բաց ունի ի ձէնջ՝ Պերոզ
կորուսեալ եհան յԱրեաց ծառայութենէ, և թէ որչափ ինչ
յայնմ առնէ վնաս աշխարհին եղև՝ գիտեն ամենեքեան, բայց թուի
թէ և ձեր լուեալ է զամենայն և տեղեակ էք։ Բայց աւելի Շապուհ
Միհրան զոր դուք կարգեցէք՝ առ զնորա քաջութեան փորձ և ըղ-
խրատու, և թէ հարցանէք և լսել կամիք՝ դոյն իսկ ասէ ձեզ։ Թա-
գաւորն Վաղարշ հարցանէ զՄիհրան Շապուհ զգործոյն Հայոց, թէ
Զինչ կարացեր գործել գործ յաշխարհին Հայոց, և Վահանայ զինչ
միտք են և ոյժ, և որպէս կարաց այսքան ամս զդէմ ունել Արեացս։
Եւ Միհրանայ պատասխանի տուեալ ասաց, թէ Արանց քաջ, զկախ-
զոր Հազարաւուխտ մեօք հանդերձ ընդ Վահանայ արար... և յոր-
ժամ Հազարաւուխտ ի Վիրս գնաց և զիս անդէն զօրագլուխ եթող
գնդին՝ յայնմհետէ զինչ Վահան զմեզ աշխատ կալաւ կարի սակաւ
արամբք, երբեմն թէ հարիւրօք ասեմ՝ չստեմ, և վկայեն ինձ գըն-
դիս մերոյ աւագորեար որ անդ էին և այժմ աստ են՝ կարի ծանր
է ասել. բայց զմիոյ աւուր գործն թէ յիշեմ... երկիւղ գործոյն
չեկանէ ի մտաց. զի և ոչինչ այլ իմիք նման էին այն նորոգ իրք՝
բայց եթէ յորժամ ժիր մշակք քաջ սուր մանգաղաւ և գերանդեաւ
զխոտ հարկանիցեն, և բազում որայս մօտ ի մօտ առ միմեանս
կուտեալ թողուցուն, և ինքեանք անհոգ յիւրաքանչիւր տունս եր-
թայցեն. սոյնպէս ըստ այնմ օրինակի յարձակեալք այնքան արամբք
հերձին վեր ի վայր զբովանդակ գունդն, և շատ լաւ որեար կոտո-
րեցին։ Եւ զահաւոր այրն զԳդիհոն զՍիւնեաց տէրն սպանին։ Ցիմ
միտս այսպէս ասէի. թէ լոկ Գդիհոն միայն ինքն տասն արամբ
յիւր գնդէն պատահէր այնչափ առն՝ այն միայն վճարէր. և զայն-
պիսի այր և զայր ականաւոր և քաջ արս ի պարսիկ մարդկանէ
հանին ընդ սուր, և ինքեանք ոչինչ խոյս տուեալ ի բաց փարե-
ցին զձիանս իւրեանց, այլ մօտ ի մեզ թևակից երթային յանհոգս
ի բազում ժամս։... Վասն որոյ թէպէտև առաջի ձեր յանդգնու-
թիւն են բանքս իմ՝ սակայն յաղագս կարծեաց ժամուս համարձա-
կիմ ասել, զի եթէ այրն Վահան և այլ որեարն որ ընդ նմա են,
այսօր խաղաղութեամբ ի ձեր ծառայութեան էին՝ մեծ մասն բար-
ւոյ և մխիթարութեան կարէր հասելոյ տրտմութեանս մերոյ հա-
մարէի զիրսն։ Զի յորժամ Հայք այնպիսի որերով մեր էին՝ Վիրք
և Աղուանք չիշխէին բնաւ թիւրել զանձինս և այլազգագոյնս ինչ
խորհել։ Եւ լուեալ զայսպիսի բանս թագաւորին Վաղարշու ի Մի-
հրանայ և Հազարաւուխտոյ, և այլ ամենայն Արեաց աւագանւոյն՝

միաբան ամենեքեան զասացեալսն ի Միհրանայ գովէին:... Եւ վաղվաղակի փութով զՆիխոր Վշնասպդատ, զայր հեզ, մտացի և աշխարհաշէն, բազում այլընտիր արամբք ի Հայս արձակէին: Պատուէր նմա ինքն իսկ թագաւորն, այլ և՛ս աւելի հոգաբարձութեամբ Հազարաւուխտ և այլ դրանն աւագանին, թէ Երթ ի Հայս, և որ ինչ օրինակաւ և է՝ ամենայն քաղցրութեամբ և սիրով ըստ կամացն Վահանայ և նորուն ընկերացն նուաճեալ զորեարն՝ յԱրեաց ծառայութիւն ած: Բայց զգոյշ լեր նախ ժողովել առ քեզ զայրուձին Ատրպատականի որ մօտ ի Հայս իցեն, և զայրուձին Հեր և Զարաւանդ գաւառի. մի գուցէ յղեալ քո առ Վահան, և նա պատճառանօք քաղցր խօսելով ընդ քեզ՝ խաբիցէ զքեզ և վնաս ինչ առնիցէ:... Եւ խօսեալ զայս ամենայն բանս տեառն Արեաց Վաղարշու և ամենայն աւագանւոյն ընդ Վշնասպդատայ Նիխորայ և հրաժարեալ զնա՝ արձակեցին ի Հայս» (Փարպ. ՁԷ, ՁԸ.):

**35**. Նիխոր կու գայ, այլ չհամարձակելով մտնել ի Հայս՝ կը մնայ ի Հեր. պատգամաւորօք կ'իմացունէ Վահանայ, թէ եկած է խօսել ընդ նմա իբրև միջնորդ: Վահան խորհրդով իւր հաւատարիմ նախարարաց՝ կ'ընդունի միջնորդութիւնը, և կ'առաջարկէ երեք պայման, և կը խոստանայ դադարեցուցանել ապստամբութիւնը՝ եթէ պայմաններն ընդունուին. կը ղրկէ պատգամաւորներն պատուով առ Նիխոր՝ դնելով իւր կողմանէ ևս հինգ հոգի.—«Եկեալ Նիխոր յաշխարհն Հայոց՝ ոչ իշխեաց մտանել ի Հայոց տեղիսն, այլ դադարեալ ի գաւառին որ կոչէր Հեր, ի գեւղն որում անուն էր Նուարսակ, առաքեաց պատգամաւորս առ Մամիկոնեանն Վահան զՇապուհ խորհրդեան դպիր և զՄիհրվշնասպ Ծուարշացի, հրովարտակ տալ գիտել նմա զիրս գալոյն իւրոյ ի Հայս, և թէ հրովարտակ ունիմ առ ձեզ ի թագաւորէն Վաղարշու՝ նուաճել զձեզ խաղաղութեամբ, և յամենայն աւագորերոյ որ յԱրիս են՝ պատգամ ունիմ առ ձեզ. արդ՝ արիք, եկայք և լուարուք, և որպէս է ձեզ հաճոյ և խորհիք՝ ընտրեցէք որ բարին է: Եւ տեսեալ Վահանայ Մամիկոնէի զպատգամաւորս Նիխորայ, և լուեալ զայս ամենայն բանս պատգամին ի նոցանէն՝ ժողովէր առ ինքն զամենայն հաւատարիմ նախարարս և զազատս և զամենայն զօրավարս այրուձիոյ. հրամայէր եկելոցն ի Նիխորայ՝ ասել առաջի ամենեցուն զբանս թագաւորին Վաղարշու և զբանս ամենայն Արեաց աւագանւոյն: Եւ տուեալ լսել Մամիկոնենին Վահանայ ամենայն հայորերոյն միահամուռ զպատգամն Նիխորայ՝ ասէր ցպատգամաւորսն Պարսից՝ առ վաղիւն առնել նոցա պատասխանի: Ժողովեալ ի վաղիւն ամենայն հայորերոյն առ Մամիկոնեանն Վահան, և խորհեալ նախ ընդ մի-

մեանս զվաղնջուց զպէտս և զխնդիր իրացն, եկեալ և պատգամաւորացն Նիխորոյ յատեանն՝ սկսաւ խօսել Մամիկոնեանն և տանել պատասխանի բանիցն Նիխորոյ։ Վասն մերոյ ապստամբութեան և յայսպիսի կարևոր և մահաբեր գործ տալոյ զանձինս՝ բազում են բանք և կարևոր, և չէ հնար գրով վճարել և կամ պատգամաւ, բայց եթէ յանդիման խօսել ընդ նմա որ Արեաց տէրն է, և ընդ ձեզ որ դրանն աւագանի էք։ Բայց երիս բանս ասեմ ձեզ. եթէ այս երից բանից պատասխանի տանէ ինձ, որպէս ես կամիմ և ամենեքեան սոքա որ աստէն իսկ են, և կարէ զայս երիս խնդիրս տալ մեզ գրով և կնքով՝ զամենայն զոր ինչ ասէք զպատեհն և զարժանն՝ առնեմք, և բանի ձերում լսեմք՝ որպէս և նախնիքն մեր լուան։... Եթէ յանձն առցեն Պարսիկք թողացուցանել մեզ զայս երիս իրս՝ ծառայեսցուք նոցա որպէս զընիկ և զհաւատարիմ ծառայս. եթէ ոչ հաւանին յանձն առնուլ և խոստանան՝ ելցուք ըստ աշխարհ և կորիցուք և խնդութեամբ մեռցուք, այլ պարսկի առն երկիր ոչ պագցուք։ Նախ և առաջին խնդիր կարևոր և պիտանի այս է, եթէ զհայրենի և զընիկ օրէնս մեր ի բաց թողուք, և զհայր մոգ ոչ առնէք, և ումեք յաղագս մոգութեան գահ և պատիւ չտայք, և զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք... և քրիստոնեայ մարդկան և քահանայից զկարգ և զպաշտօն քրիստոնէութեան համարձակութեամբ և աներկիւղ տայք պաշտել ուր և կամին։ Երկրորդ խնդիրն այս է, թէ զմարդ ոչ իշխանաբար ճանաչէք, այլ իրաւաբար գիտել զլաւն և զվատթարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, իմանալ զտոհմիկն և զանտոհմիկն, սիրել ըզվաստակաւորն և ատել զանվաստակն, ունել ի մօտ զիմաստունս և խորհուրդս առնել, և զանմիտն ոչ մօտեցուցանել, այլ և ի հրապարակէ ևս հալածել։ Երրորդ խնդիր մեր այս է. որ տէրն է Արեաց աշխարհի՝ ինքն տեսցէ իւրովք աչօք, և ինքն լուիցէ իւրովք ականջօք, և ինքն գիտասցէ զմարդ լաւ և զանշան, և ոչ այլոյ բերանով խօսեսցի զպէտսն։... Թագաւոր որ իւրովք առողջ աչօքն հայի և աննախանձ լսողութեամբ լսէ և արդար բանիւ խօսի ընդ իւր ծառայս՝ կենդանացեալ ծառայքն չյագին վաստակով, այլ յաւելեալ ի վաստակն՝ որ քան զօր աճեցուցանել ջանան զբարին. այսպէս և՛ աշխարհ շէնի, և՛ տէրն շքեղացեալ պայծառանայ հանապազ։... Այլ բանք որ ինչ են, թէ ինձ լինի գալ՝ ինձէն իսկ խօսիմ ընդ նմա։ Եւ խօսեցեալ զայս ամենայն բանս Մամիկոնենին Վահանայ ընդ Շապհոյ խորհրդեան դպրի և ընդ Միհրվըշնասպայ ծուարշացւոյ՝ ուղարկեաց զնոսա. առաքեաց և ընդ պատգամաւորսն Նիխորոյ յիւր ուխտակցացն զՅաշկուր Արծրունի և զԱ-

հակ Կամսարականն, զերանելոյ զԱրշաւրայ զորդի, և զՎասավուրտ Հորքային և զԱռաւան Աղբերակացի և զՊաճոկ ի Մարդպետական տնէն: Զոգան նոքա ի գաւառն Հեր առ Նիխոր: Որոյ տեսեալ զհայերն որ չոգան առ նա ի Մամիկոնեանն Վահանայ՝ ընկալաւ զնոսա բազում գոհութեամբ. և հրաման տուեալ ընթրեացն՝ յիշէր հանապազ ըստ ամենայն բաժակի զքաջ Մամիկոնեանն Վահան և կատարեալ զընթրիսն գնային յիւրաքանչիւր վանս: Ընդ առաւօտն ժողովեցան ամենայն ատեանն Պարսկաց առաջի Նիխորոյ, և պատգամաւորքն որ ի Նիխորոյ առ Մամիկոնեանն Վահան երթեալ էին, Շապուհ և Միհրվշնասպն, և հայ նախարարքն և այլ արքն որ ի Մամիկոնենէն Վահանայ: Ետուն զպատգամն Մամիկոնեանն Վահանայ Շապուհ և Միհրվշնասպ առաջի ամենայն ատենին յայտնապէս: Եւ լուեալ Նիխորոյ զամենայն զբանսն և զխօսս Մամիկոնենին Վահանայ՝ ասաց առաջի ամենեցուն, թէ Ամենայն բանքդ այդ և պատգամդ զոր յղեալ է Վահանայ՝ են արդարև աստուածոց արժանի... բայց տացեն աստուածքն ինձ տեսանել զօրն, յորում յիմ ձեռն նուաճեալ՝ Արեաց ի ծառայութիւն հնազանդի»:

Այսպէս խօսելով Նիխոր բոլոր ատենին առջև՝ կը ղրկէ միւս անգամ իւր պատգամաւորներն նամակաւ՝ Վահանայ կողմէն ղրկուած նախարարաց հետ, և կը հրաւիրէ զՎահան գալ խօսել անձամբ: Վահան կ'երթայ առ Նիխոր, յառաջագոյն խնդրելով պատանդ յապահովութիւն իւր.—«Խօսեցաւ զայս այսպէս Նիխոր առաջի ամենայն ատենին, և լուեալ նախարարացն Հայոց և այլ արանց որ եկեալ էին ի Վահանայ Մամիկոնենէ՝ տային փառս Աստուծոյ, յորոյ ձեռս են սիրտք իշխանաց, և որպէս ինքն կամի՝ տայ բարբառել նոցա: Կոչէր այնուհետև վաղվաղակի Նիխոր զնոյն պատգամաւորս, զՇապուհ խորհրդեան դպիր և զՄիհրվշնասպ Ձուարշացի, և գրէր նամակ առ Մամիկոնեանն Վահան... նաև զնախարարսն որ եկեալ էին ի Մամիկոնենէն Վահանայ արձակէր ընդ պատգամաւորս իւր, մեծաւ պատուիրելով յանձնեալ նոցա վաղվաղակի և անյապաղ՝ ածել զՄամիկոնեանն Վահան:... Հասեալ պատգամաւորացն Նիխորոյ առ Մամիկոնեանն Վահան՝ մատուցին նմա զնամակն, յորմէ գիտաց թէ լուեալ տեղեկացաւ Նիխոր զամենայն յղեալսն իւր առ նա:... Տեղեկացեալ ծանեաւ և զայն, թէ որպէս խնդութեամբ և սիրով ընկալեալ զնախարարսն մեծարեաց Նիխոր. պատմեցին ևս, թէ կարի և փութով զ-րթս քո խնդրէ փափաքելով. պատգամաւորքն ևս Նիխորոյ ստիպելով հաւանեցուցանէին նմա երթալ: Զուեալ այնուհետև զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի ամենայն ուխտապահ նախարարօք հանդերձ և այլ բա-

զում և կազմ գնդաւ, և եկեալ ի գաւառն որ կոչի Արտազ, ի գեւղն զոր անուանեն Եղինդ՝ դադարէ անդ ինքն և ամենայն գունդքն որ էին ընդ նմա, և առաքէր առ Նիխոր զիւր եկն տալ գիտել նմա, և ասէր ցՆիխոր. Եթէ թուի քեզ գալ իմ և տեսանել զքեզ՝ տուր ածել առ իս արս աւագս Արիս յականաւոր տոհմաց, որ եկեալ կացցեն աստ առ իմ որեար, մինչև եկեալ ես տեսից զքեզ, և խօսեցեալ իմ և քո ընդ միմեանս՝ լուիցուք ի միմեանց զոր ինչ ի դէպն թուի մեզ առնել: Նիխորայ լուեալ զեկն և զկամս խնդրոյն Մամիկոնենին Վահանայ՝ վաղվաղակի տայր տանել ցԿամսարականն տէրն Շիրակայ Ներսեհն՝ զԲագէ զԱտրպայական Շահապ, և զՎեհնամ զՀայոց հազարապետ, և զՆերսշապուհ զՄիհրանայ զեղբայր, և զհինգ ևս այր այլ աւագ պարսիկս: Եւ Մամիկոնենին Վահանայ տեսեալ զաւագօրեարն զոր առաքեալ էր Նիխորայ՝ ընդունէր զնոսա խնդութեամբ, և ի միասին ուրախացեալք զայն օր՝ ի վաղիւն թողոյր զութեսին զնոսա առ իւր հաւատարիմ արս, որոց հրաման տայր պատուել զնոսա արժանաւորապէս և զգուշանալ. և ինքն չուեալ գնդաւ և կազմութեամբ գնայր առ Նիխոր» (Փարպ. Ղ, ՂԱ.):

**36**. Վահան մերձենալով ի գիւղն ուր էր Նիխոր՝ կ՚սկսի հնչեցունել պատերազմի փողերը: Նիխոր կը գանգատի բերանով պատգամաւորի, և ընդունելով պատշաճ պատասխանը՝ կու գայ անձամբ ընդ առաջ Վահանայ: Յետ երկուստեք ողջունի և մեծարանաց՝ կ՚ընդունուին Վահան և իւրքն: Նիխոր կը գովէ զՎահան հրապարակաւ և կ՚արդարացունէ Հայոց ապստամբութիւնը, Պերոզի վրայ դնելով մեղադրութիւնը.—«Մերձեալք ի գեւղն ուր Նիխոր էր՝ հրամայէր Վահան զօրուն որ ընդ նմա էին՝ վառել ըստ օրինի պատրաստութեան պատերազմի. որք ընդ լսել ի Մամիկոնենէն Վահանայ զհրամանն՝ պատրաստեալք յամենայնի կազմ ցուցանէին նմա զանձինս: Տայր հրաման Մամիկոնեանն Վահան հնչեցուցանել զփողս պատերազմականս. և ի սաստկութենէ փողոցն ձայնից հնչեալ երկիրն թնդէր. յորմէ զարհուրեալ արք զօրուն Նիխորայ՝ կարծէին խաբէութեամբ ի վնասել զնոսա եկն Մամիկոնեանն Վահան, և ոչ սիրով ի նուաճումն խաղաղութեան: Նիխոր առաքեալ ընդ առաջ նորա արս աւագս՝ տայր ասել ցնա, եթէ Ոչ ըստ կարգի Արեաց առնես դու զայդ, այլ նորոգ իրօք այլ իմն ձեւանա… յայսմհետէ քեզ կարի զԱրեաց զկարգն պարտ է ունել և հաւանել, քանզի ի չուի՝ փողով յԱրեաց բանակ սպարապետն միայն Արեաց իշխէ մտանել, և այլ ոք զայդ համարձակութիւն ի Պարսիկ… ոչ ոք իշխէ առնել: Եւ Մամիկոնենին Վահանայ պատասխան…

տուեալ Նիխորոյ՝ ասէր. Նախ արա զիս Արեաց տեառն ծառայ, ապա և առանց ի քէն իսկ ուսանելոյ թուի թէ և ես իսկ գիտեմ զԱրեաց աշխարհի զկարգ և զործանն. մի թուեսցի քեզ հաշուել զիս կարի մոլացկոտ, քանզի և ոչ բազում ինչ ամօք գնացեալ եմ ի ձէնջ։ Զայս բանս այսպէս ի ձեռն պատգամաւորի խօսեցեալ Մամիկոնենին Վահանայ ընդ Նիխորոյ՝ ապա ինքն իսկ եկեալ տեսանէր զնա յատենի ժամու, վասն զի ընդ ծագել արեւուն եկն Մամիկոնեանն առ Նիխոր։ Որոյ տեսեալ զնա և զայլ նախարարսն զուխտակիցսն ընդ նմա՝ ցնծալից ուրախութեամբ բազում ժամս ընկալեալ է գիրկս իւր ողջունէր զնա, տայր և զողջոյն զԱրեաց տեառնն Վաղարշու և զամենայն աւագանւոյն. մի ըստ միոջէ յանուանէ ողջունէր և զեկեալ նախարարսն Մամիկոնենին Վահանայ յոյժ սիրով, նոյնպէս և զամենայն արս գնդին, զաւագս և զկրտսերս։ Եւ լուեալ Մամիկոնենին Վահանայ զողջոյն Արեաց տեառնն և զողջոյն ամենեցուն դրանն աւագանւոյն՝ շնորհակալութեամբ գոհանայր երկրպագելով, և խնդալից ուրախութեամբ ընդունէր։ Ապա հրաման տայր Նիխոր զամենայն արս զօրուն Վահանայ ի ներքս թողուլ, նոյնպէս և աւագ պարսիկ որերոյ ի ներքս կալ յատենին հրամայէր։ Իբրև լցեալ էր ամենայն ատեանն արամբք որ ընդ Մամիկոնենին Վահանայ էին, և այլ պարսիկ որերով՝ սկսանէր խօսել Նիխոր ընդ Վահանայ և ասէր. Աշխարհակեցութեան բնութեամբ չես կեցեալ ընդ իս. այլ ի բազում անգամ լսելոյ յաշխարհի մարդկանէ, ի հայոյ և ի պարսկէ, ի լաւ և յիմաստուն որերոյ, փորձիւ ես ի միտ առեալ գիտացաք, զի ի գործ պատերազմի քաջութիւն և իմաստութիւն ունիս։ Զքաջութիւն ցուցեր սակաւ արամբք, և զիմաստութիւն յայտնի արարեր՝ գիտելով զժամ կռուոյն և զտեղի տալոյ, և անվնաս զգունդն ի միջի ունելոյ, և ի միւսում ես ժամու ես գործոյ պատրաստ լինել և չերկնչել։... Զմտաւ ածեալ իմ զքո այդպիսի արարուած՝ կարի քաջ ճանաչեմ զամենայն պատասխանիս զոր առնելոց ես դու մեզ ամենայն բանի զոր լսես ի մէնջ. վասն զի թէ զապստամբութենէդ քումմէ հարցանեմք, թէ զիարդ իշխեցեր խորհել՝ պատասխանի տուեալ ասես, թէ չճանաչողութիւնն Պերոզի բռնադատեաց զիս մեռանել։... Քանզի քաջի առն քան զբազում ժամս հարանօք կեալ՝ շատ լաւ է մի օր ծանուցանել զլաւութիւն անձին և մեռանել։... Քո և արանց որ ընդ քեզ եղեն միաբան, առ ոչինչ համարեալ զմահ անձին՝ գիտացին յերդ քաջաբար։ Որոց մեռան ի ձէնջ՝ ի Պերոզի ամբարտաւանութենէն խնդրեն աստուածք զարիւնն, և որ ապրեցք կարացայք եւ ի միջի լինել՝ անպարտք էք և անվնասք։ Որ այժմ Արեաց տէրն է և ա-

մենայն աւագանին՝ զայդ ևեթ խօսին հանապազ և անմխիթար ողբան և տրտմին, յիշելով զՊերոզի զանհաւան բարսն, զի կորուսզինքն և զամենայն զԱրեաց աշխարհի զոյժ և զզօրութիւն, և ըզթագաւորութիւն մի մեծ և զազատ՝ ի ծառայութիւն ետ Հեփթաղին, յորմէ ի դառն ծառայութենէ Արեաց աշխարհն զերծանել ոչ կարէ։ Բայց դու թէ հաւանեալ նուաճիս և ընիկ քո նախնեաց տեառն ծառայութիւն առնես, և որ ինչ վատթարն եղև ի մէնջ և ի ձէնջ՝ մոռանաս և ի բաց թողուս, զայս թէ առնես իմով միջնորդութեամբ՝ դու աստէն ի Հայս կաս մինչև թագաւորն կնքէ և տայ բերել առ քեզ հրովարտակ, և եկեալ բարեաւ առ տէրն Արեաց՝ զամենայն որ ինչ բարի և արժան է և՛ քում անձինդ և՛ որում դու կամիս՝ տայ սիրով և կամաւ կատարէ» (Փարպ. ՂԱ.)։

Նիխորոյ այս ողոքական բանից Վահան, ինչպէս վայել էր՝ բազում մեծարանօք և ծանրութեամբ կու տայ պատասխանի, զոր կը դնէ Փարպեցին հաւանականապէս առնլով ի նոյն ինքն ի Վահանայ, դէթ ըստ իմաստին։ Վահան կը գովէ նախ զՎաղարշ ըզրկելուն համար Նիխորոյ պէս խաղաղարար անձն, և ապա բերելով ի մէջ ապստամբութեան բուն պատճառներն՝ կը խնդրէ կանխաւ ցուցուած երեք պայմաններուն կատարումը, կ'աղաչէ որ այնուհետև նայուի արժանաւորութեան, և նէրուի ակամայ ապստամբութեան յանցուածն.—«Լուեալ Վահանայ զայս բանս Նիխորոյ յատենին՝ տայր պատասխանի և ասէր. Աստուծոյ հաշտութիւն յայնժամ է ընդ աշխարհի, յորժամ զիշխանս բարեսէրս տայ, լաւածանօթս աշխարհաշէնս, որպէս և այժմս ինձ երևի և ամենեցուն։ Զտէրն Արեաց իմ չև է տեսեալ, բայց կամիմ տեսանել, եթէ տայ ինձ Աստուած միջնորդութեամբ քո... սակայն տեսանեմ զքեզ, զոր խաղաղարար և առիթ բարւոյ այնպիսւոյ աշխարհի առաքեալ է, որպիսի Հայքն են, և մեք որ աշխարհին մարդիկ եմք։... Իսկ վասն Պերոզի արքայից արքայի բարուցն... շատ իսկ և բաւական լիցի քո տեառն բանն և լիով ասացածն։ Եւ ես գոհանամ զԱստուծոյ, զի զիս անաշխատ պահեցէք. թէպէտ իմ էր այդ ամենայն տրտունջ զՊերոզէ, որպէս հանապազ խաբէին զնա և զամենայն Արիս արք անպիտանք, հացկատակք, բանսրօղք. խաբեբայք, շաղակրատք, գայլին անկանէին ի մախիրն. և ձեր տուեալ զխնդիրն՝ խնդալով ուղարկէիք պարգևելով գահ և պատիւ, և այլոց զտունս և զկեանս և զմեծութիւնս։... Վասնորոյ բարձեալ էին յաշխարհէն Հայոց և կորուսեալ վաստակք և միտք, քաջութիւն, տոհմականութիւն և արդարութիւն... և տեառն Արեաց տեսանելով զայն ամենայն... յատենի ևս այպանելով՝ ամենայն վատաց և ի կռուոյ յետնելոց

զՀայս ածէր օրինակ, նախ Ասորոց, ապա լքելոց, ապա լուծելոց, ապա անդամալուծաց. և որ Հացկատակաց ջոկն էր՝ ոչ կորացեալ մտանէր ընդ գետին, նոցա խնդութիւն ևս թուէր այնպիսի լուրն: Այլ որ մարդն էր և ամօթ կայր ի սրտի, և զայնպիսի բանս յԱրեաց տեառնէն լսէր՝ ոչ միայն մի անգամ և երկիցս ևեթ, այլ թէ և տասն անգամ կեայր և Հանապազ զնոյն լսէր՝ տասն անգամ արժանի էր մեռանել: Վասնորոյ և մեք զայնպիսի ձաղանաց բանս զոր ի վերայ աշխարՀիս եդեալ էր Արեաց տեառն՝ լուեալ, թէպէտ ածաք զմտաւ երթալ ընդ աշխարՀ ելանել և կորնչել, քանզի ճանաչէաք զԱրեաց ույժ և զբազմութիւն, և չէաք այնքան յիմարք և խելացնորք, թէ մեք Արեաց առաջի, թուով տառապեալ մարդիկ, կարեմք կալ. այլ ածեալ զմտաւ, թէ եթէ յանգգամաց զարՀուրեալ գնայցեմք, ստուգապէս ժառանգեմք զանուն վատութեանն որ կայր ի վերայ մեր, թէ մարդիկ որ այնպիսի յետին և անպիտան էին, յիրաւի կորեան և անՀետ եղեալ չերևին ուրեք՝—ընտրեցաք նախ ծանուցանել զանձինս, և ապա կամ մեռանել և կամ կորնչել: Եւ եթէ էաք կացեալ միաբանք և չէաք պառակտեալք և քայքայեալք՝ ծանուցանէաք եկելոցն ի վերայ մեր, թէ արդարև որպէս զԱրի այր եմք, և կամ թէ որպէս զԱսորի: Եւ արդ՝ մի՛ բազմաբանութեամբ զբերագալուր ձեր միտս ձանձրացուցից, բայց և լսել զօգուտս բազմաց և չասել անՀնար է, քանզի յաղագս մեծի աշխարՀի են բանքս իմ գիւտի կամ կորստեան, և Հարկ է լիով ասել: Զայն երիս ինչս, զոր ի ձեռն պատգամաւորացն գրեցի առ քեզ՝ շնորՀեցէք մեզ գրով և կնքով ի թագաւորէն, մեզ այն խնդիրք միայն պիտին: Զայլ ինչ պարգևք, շքեղութիւն, որ ոք վաստակել մարթասցէ և տեսանիցէք, Հայեսջիք, և ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան Հատուսջիք. և մեր ընիկ տեարք էք, և մեք ձեր ընիկ ծառայք եմք. ընկալայք զմեզ սիրով, և ծառայեցուցէք խնայելով. և զյանցումն զոր ի բռնութենէ յանցանել ետուք՝ թողութիւն արարեալ շնորՀեցէք մեզ» (Փարպ. ՂԲ.):

**37.** ՎաՀանայ այս պատասխանին վրայ մեծապէս խնդալով և մխիթարուելով Նիխոր՝ Հրամայեց արձակել ատեանը, և յետ անցուցանելոյ այն օրն ի միասին խնջոյիւք և ուրախութեամբ՝ ի վաղիւն կ'առնու զՎաՀան առանձինն՝ խօսել ընդ նմա ուրիշ կարևոր իրաց վրայ, ապա գալով յատեան ուր ժողովեալ էին Պարսից աւագանին և նախարարք Հայոց՝ դուրս Հանել տուաւ, ասէ Փարպեցին, ՎաՀանայ Հակառակորդներն, այն է ուրացողաց դասն, ըստ Փարպեցւոյն: ՎաՀան բոլոր այն բազմութեան առջև կրկնեց երեք պայմաններն, զորս արդէն նամակաւ և բանիւ խնդրած էր: Նիխոր

յետ սիրով ունկն դնելոյ՝ խնդրեց ի Վահանայ զայրուձին Հայոց
Պերոզի որդւոյն Զարեհի դէմ, որ կամելով թագաւորել՝ կ'ընդդիմա-
նար զօրօք։ Վահան յանձն կ'առնու ուրախութեամբ և հրաժեշտ
կու տայ երթալ ի Դուին, որպէս և Նիխոր ի դուռն առ Վաղարշ.—
«Նիխորոյ լուեալ զբանս Մամիկոնենին Վահանայ՝ մեծապէս խըն-
դալից սրտիւ ուրախացեալ ասաց առաջի ատենին. Զարմանութիւն
մեծ բեկման Արեաց աշխարհին որ եհաս, և զթանձրամած խա-
ւարն որ եհաս և մածեալ նստէր ի վերայ սրտիս՝ համարձակապէս
և արդար խօսք Վահանայ փարատեալ ուրախացուցին զիս։ Հրա-
մայեաց արձակել զատեանն. Որ ինչ, ասէ, պէտք են ինձ և Վա-
հանայ այլ ևս բանից՝ խօսիմք օր ըստ օրէ, և յաւուրս քանի մի
ուրախանամք առ միմեանս։ Եւ այն օր հրամայէր Նիխոր Վահա-
նայ առ նմա ուրախանալ ամենայն նախարարօքն և բովանդակ
գնդաւն որ ընդ նմա էին։ Բայց զուխտանենգսն ի Հայոց և զուրա-
ցօղսն հանին արտաքոյ ընթրեացն ամօթալից։ Եւ ուրախացեալք
այն օր ըստ օրինի մեծապէս ընթրեաց, և հրաժարեալք ի Նիխո-
րոյ՝ գնացին հանգչել ի վանս իւրաքանչիւր։ Ի վաղիւ անդր ժողո-
վեալ ամենայն բազմութիւն մարդկան ի հրապարակն՝ հրաման
տայր Նիխոր, մինչդեռ ինքն առանձինն էր՝ զՄամիկոնեանն Վա-
հան տանել ի ներքս ի սենեակ։ Եւ խօսեցեալ ընդ նմա միայն ընդ
միայն ժամս բազումս զպէտս կարևոր իրաց աշխարհին՝ գային եր-
կոքեան ի միասին ի տուն ատենին։ Հրաման տայր Նիխոր ամե-
նայն եկելոցն ընդ Մամիկոնենին Վահանայ, նախարարաց և ռամ-
կաց, մտանել յատեանն առ նոսա, և արանց պարսիկ ազգաց գալ
առ նոսա յատեանն։ Բայց զարսն որ զինքեանս հաւատարիմս Պարս-
կացն կացուցանէին՝ հրաման առեալ նուիրակացն՝ և ոչ ի դուրսն
մտանել տային։ Երկրորդեալ յատենին զնոյն բանս Մամիկոնենին Վա-
հանայ՝ սկսանէր միւսանգամ խօսել ընդ Նիխորոյ և ասէր. Զիւրա-
քանչիւր ուրուք խնդիր և զօգուտ դուք որ այժմ աստ էք, նա-
խարարք և ազատք և այլք յոստանիկ մարդկանէ և յայրուձիոյ,
ճանաչէք, և գիտէք հատուցանել զարժանն. բայց զոր ինչ ես և
որ ընդ իս ուխտապահ նախարարքն են՝ խնդրեցաք ի քէն պատ-
գամաւորօք և գրովք, զոր և երէկ և այսօր դէմ յանդիման խօսե-
ցայ ընդ քեզ, և դու հրամանաւ ամենայն աւագանւոյ դրանն գրով
և կնքով խոստացար տալ մեզ, առանց որոյ անհնար է կեալ մեզ
և ծառայութիւն առնել ձեզ, այն է հաւատոյ քրիստոնէութեան
հաստատութիւն, մոգութեան և ատրուշանաց յաշխարհէս Հայոց
բարձումն, զեկեղեցւոյ ըստ մեր կամաց զպայծառութիւն և զպաշ-
տօն, որ կարևոր են մեզ և հարկաւորապէս պիտոյ՝ կնքով Թագա-

ւորին հաստատեա մեզ. և այլ զոր ինչ գրեալ է ի նամակին՝ գիտես զամենայն և ոչինչ պիտոյ է բազմաբանել առաջի քո։ Բայց յաղագս գահու և պատուոյ և շքեղութեան, հայելով յիւրաքանչիւր ուրուք վաստակս՝ տաջիք անհոգութեամբ և մի՛ զրկիցէք։ Զայս ամենայն խօսեցեալ Մամիկոնենին Վահանայ՝ սիրով լսէր զամենայն Նիխոր և ախորժելով յանձն առնոյր։ Խնդրէր Նիխոր ի Վահանայ զընկ Հայոց զայրուձին. Կազմեա, ասէ, փութով և արձակեա ի դուռն, քանզի Զարեհ որդի Պերոզի ընդդիմացեալ Արեաց արարուածի՝ գունդ գեռ կազմէ ի կորուստ անձին իւրոյ և հաւանելոց ընդ իւր. և դու փութա արձակել զհայ այրուձի, որ նախ քան զքո երթալն ի դուռն՝ սպաս մի մեծ ծանուցանի արարուածքդ առաջի թագաւորին և ամենայն Արեաց։ Վասն զի և ինձ հրաման ետ թագաւորն վաղվաղակի մտանել ի դուռն. վասն զի աստուածք զայս իրս յաջող և բարերարութեամբ վճարեցին, զի ևս առաւել վաղագոյն երթամ անդր։ Եւ ուրախացեալ Նիխորայ և Մամիկոնեանն Վահանայ առ միմեանս ոչ բազում ինչ աւուրս՝ հրաժարեալք ի միմեանց չուէին խաղաղութեամբ, Նիխոր՝ առ թագաւորն ի դուռն, և զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան՝ ի Դուին» (Փարպ. ՂԴ.)։

38. Վահան իւրովք գալով յեզր Երասխայ ընդ որ պարտ էր անցնել երթալու համար ի Դուին՝ կը գտնէ Արտաշատու կամուրջը կործանած։ Հոս Փարպեցին կը մուծանէ դարձեալ հրաշք։ Երբ զօրքը խնդրելով անց և չկրնալով գտնել, կը փորձէ անցնել ծանծաղագոյն կարծուած տեղերէն, և հազիւ ոմանք ընկղմելու վտանգաւ կը յաջողին ելլել յայնկոյս՝ Վահան խաչակնքելով զինքն կը նետուի գետը, կ'անցնի դիւրաւ և անվտանգ, և ապա բոլոր զօրքն զհետ նորա կ'անցնին իբրև ընդ ցամաք, ինչպէս անդ ուրեմն Իսրայելացիք ընդ Յորդանան։ Չիք տարակոյս, թէ Վահան, քաջ և փորձ զօրական, գետոյն հոսանաց նշաններէն գուշակելով, կամ թերևս ըստ պատահման գտնելով հուն մի՝ համարձակ անցաւ և անցոյց զօրքը բնական ճանապարհաւ, զոր բարեպաշտ Փարպեցին, թերևս ինքն իսկ Վահան ընծայեցին սքանչելեաց։ Զիարդ և իցէ՝ Վահան կու գայ ի Դուին, և յետ մատուցանելոյ պատարագ շնորհակալութեան և բաշխելոյ առատ տուրս աղքատաց ըստ սովորութեան՝ կը ղրկէ Հայոց այրուձին ի Դուռն ընդ հրամանատարութեամբ Վրենայ Վանանդացւոյ և իւր եղբօր Վասակայ որդւոյն՝ Գրիգորի։ Հայ գունդը, մանաւանդ Գրիգոր, կը կռուին քաջութեամբ. Զարեհ կը փախչի, այլ բռնուելով կ'սպանուի.—«Հասեալք յեզր գետոյն (Երասխայ), ի ժամանակի իւրոյ պղտորութեանն զկամուրջն Արտաշատու գտին աւերեալ, էր ինչ որ ի տեղեացն բնակչաց, և

էր ինչ որ ի սաստկութենէ ջուրցն հոսանաց. և տարակուսեալ զօրքն խնդրէին տեղիս անցի, և ոչ գտանէին, և փորձելով ոմանց զբազում տեղիս՝ ընկղմեալք ի ջուրսն և հազիւ գտեալ անդրէն ելս՝ ապրէին։ Իսկ քաջ զօրավարն Հայոց Վահան մերձեալ ի տեղի մի յեզր գետոյն, և տեառնագրեալ զինքն նշանաւ Խաչին սրբոյ կենսատուի՝ իջանէր ի գետն, և որպէս ընդ յոյժ տեղի ծանծաղ՝ անցանէր խաղաղութեամբ ընդ ջուրսն, որ և տեղին ամենայն գըն-դին լինէր ճանապարհ անցից։ Եւ լինէր այս նշան մեծ յայտնի. ընդ որ և յոյժ կացացի արանց լինէր անցանել դիւրաւ ըստ կամի, և ամենայն այրուձիոյն, ի ճշմարիտ հիմնացեալ հաւատոյն քաջ զօ-րավարին Հայոց Վահանայ լինէր նշան, որպէս Իսրայելեան ժողո-վրդոցն յանցանելն իւրեանց ընդ Յորդանան։ Եւ ապա մտեալ յոս-տանն ի Դուին, շնորհակալութեան զպատարագն մատուցեալ Աս-տուծոյ, և զաղքատացն ողորմածութեամբ ըստ սովորութեան կատա-րեալ զտուրս՝ ուրախանային և ինքեանք ըստ Աստուծոյ հաճոյից խնդալից սրտիւ։ Ապա կազմեալ Մամիկոնենին Վահանայ զայրուձին Հայոց՝ արձակէր ի Դուռն, կարգեալ զգունդն ի ձեռն Վրենայ Վա-նանդացւոյ, ընդ որս կազմեալ արձակէր և զիւր եղբօրորդի մի, զոր-դի նահատակին Վասակայ, զԳրիգոր։ Որոց հասեալ ի դուռն՝ եր-թային պատրաստութեան գործոյ պատերազմին, և հարեալ ի դիմի միմեանց գունդքն երկոքեան, մատնեալ ի պարտութիւն գունդն Զարեհի՝ փախստական լինէին, և բազում վիրաւորք անկեալ յերկիր կործանէին։ Անդ քաջացեալ հայրանման սեպուհն Մամիկոնէից Գրիգոր, ցուցեալ մեծ քաջութիւն՝ յայտնի լինէր զօրավարին և զօ-րացն ամենեցուն, և հռչակեալ նորա լաւութեան անուն հասանէր մինչև ի թագաւորն Վաղարշ։ Լաւացեալ և սեպուհն վանանդացի Վրէն, գործ երևեցուցեալ քաջանայր։ Իսկ Զարեհն փախուցեալ ի լեռնակողմն տեղիս ամրանայր. զոր ձերբակալ արարին և ածին ի հրապարակն արքունի, և անդ նման անասնոյ փողոտէին յանխնայ» (Փարպ. ԼԴ.)։

**39.** Յետ սակաւուց Վահան գումարելով գունդ մի այրուձիոյ իւր հաւատարիմ նախարարներով կ'երթայ առ Վաղարշ, որ կ'ըն-դունի զնա մեծ պատուով։ Յետ տալոյ նմա օր մի ոգի առնուլ ճա-նապարհորդութեան աշխատութենէն՝ յաջորդ օրը կը կազմէ ժողով մեծ յաւագանւոյն, և յիշելով ինչ որ արդէն Վահան յայտնած էր բանիւ և նամակաւ ի ձեռն Նիխորոյ՝ կ'արդարացունէ ապստամբու-թիւնը։ Վահան կը պատասխանէ թագաւորին, ցուցնելով թէ Հայ-ոց համար գլխաւոր դժգոհութեան պատճառ՝ իւրեանց հաւատոյն դէմ բռնութիւնն էր, և թէ նոքա որ ուրացութեան համար պա-

ռիւ և պաշտօն ընդունած են՝ առհասարակ շողոքորթ և անպիտան մարդիկ են, յորոց գարշի Հայոց ռամիկն անգամ։ Ի վախճանի կը խնդրէ Վահան բառնալ ուրացութեան պատճառը, զոր կ՚անուանէ խաբէութեան վաճառ, թողուլ զքրիստոնէութիւնն ազատ, և պահանջել հաւատարիմ ծառայութիւն, զոր պիտի չզլանան նոցա երբէք Հայք։ Վաղարշ գովելով Վահանայ համարձակութիւնը՝ կը խոստանայ կատարել Հայոց խնդիրը.—«Յետ սակաւ աւուրց ժողովեալ Մամիկոնենին Վահանայ զայրուձին Հայոց, ինքն և ամենայն ուխտակից նախարարքն ընդ նմա՝ չուեալ գնային առ թագաւորն Վաղարշ, և հասեալ ի դուռն փաղփաղակի ճեպով ժամ արարեալ յանդիման լինէր թագաւորին և ամենայն Արեաց աւագանւոյն։ Ածեալ զմտաւ զճանապարհորդութեանն աշխատութիւն թագաւորին Վաղարշու զՄամիկոնենին Վահանայ, միայն ստէպ հարցեալ զողջոյն՝ ուրախանայր, այլ ոչինչ աւելի քան զայն հարցանէր զնա զայն օր։ Եւ ի վաղիւն ժողովէր զամենայն աւագանի դրանն արքունի և զայլ ամենայն բազմութիւն Արեաց, և լինէր խորան մեծ լցեալ սաստիկ որերով։ Սկսանէր խօսել թագաւորն Վաղարշ ընդ Մամիկոնենին Վահանայ. Լուաք, ասէ, լիով զամենայն խօսեցեալսն քո ընդ Նիխորայ, և՛ զոր ինչ պատգամաւորօք էիր ասացեալ, և՛ զոր ինչ նամակաւ, և՛ զոր ինչ դէմ յանդիման քո և նորա խօսեցեալ էր ընդ միմեանս, պատմեաց մեզ, և ոչ էր քո ստեալ ի բանիցն զոր խօսեցեալ էր և ոչ բան մի։ Պերոզի իմ եղբօրն… եթէ զքեզ միայն էր կորուսեալ յԱրեաց՝ թեթև ինչ էր վնասն. ծառայ մի կորնչէիր, որում թերևս փոխանակ գտանէր. բայց նա այնչափ անթիւ բազմութիւն լաւ արերոյ կորոյս, որոց այսօր փոխանակ չիք, յետոյ ապա և զինքն կորոյս և. զորդիս և զկանայս։ Արդ՝ եթէ դու եղեալ էիր պատճառ քո կորստեանդ և այնչափ բազմութեանն որ կորեան ընդ քո ձեռն՝ դու այսօր հարցման արժանի էիր և պատուհասի և չարաչար մահու. բայց զի այլ է պատճառ ամենայն գործոյդ և կորստեան զոր գործեցեր՝ զքեզ ընդ այլոյ բռնութեան և վնասու պատուհասել կարի ծանր է, և. օրէնք մեր չհրամայեն։ Զայդ գործ զոր դուդ կարացեր գործել՝ բազումք խորհէին յԱրիս գործել, բայց չեղեն ձեռնհաս, զի չկարացին զանձինս ի մահ տալ այդպէս աներկիւղ՝ որպէս դուքդ ետուք։ Երանի՜ թէ և այլ որերոյ, զորս ի զուր տարաւ կորոյս Պերոզ՝ կարացեալ էր առնել զայնպիսի քաջութիւն զոր դուքդ արարէք. թերևս այսօր կենդանի էին իբրև զձեզ և ի միջի առ մեզ։

«Պատասխանի տուեալ Մամիկոնենին Վահանայ թագաւորին Վաղարշու առաջի ամենայն բազմութեանն՝ ասէ. Խօսել առաջի

Աստուծոյ և առաջի ձեր թագաւորաց երկայն բանիւք չէ արժան։ Ես զամենայն զխօսս մեր և զխնդիր և զհամարձակութիւն գործոյն ցուցի ձեզ և ամենայն դրանն աւագանւոյն ի ձեռն Նիխորայ գրով և կնքով. զնոյն բազում անգամ ասել՝ յերկարումն է խօսից և ձանձրութիւն։ Զոր ասացէք դու զեղբօրէն ձերմէ զՊերոզէ՝ շատ էր։ Եթէ յայլ ոք լինէր ի նմանէ բանութիւն՝ տամբ էր արդեօք և կամ կենօք և կամ պատուհասիւ ինչ այլով։ Իսկ զմեզ հոգւով հարկանէիք. որում կարեաց և վտանգի ո՛չ մեր նախնիքն և ոչ մեք առաջի չկարացաք կալ։ Եւ հանապազ բողոքեալք և բողոքեմք. մի՛ բռնադատել զմեզ թշնամանել՝ զոր կամաւ և խորհրդով պատուել ոչ կարեմք և ոչ սիրել. իշխանաբար չլուեալ բողոքոյն մերոյ՝ կամէիք կորուսանել զմեզ։ Օրէնք մեր տերանց հրամայեն ծառայել և հնազանդ լինել որպէս Աստուծոյ. արդ, աղէ, ցուցէք այր մի որ զձեր օրէնս (կրօնս) կատարեալ և պատուեալ է՝ վաստակ և գործ ցուցեալ իցէ վասն պիտոյութեան և կամ ի կռուի։ Ձեր Արեաց զօրագլուխք բազում եղեալ են ի տեղիս տեղիս. ասասցեն զմիոյ ուրուք ի դոցանէ զերևելի գործ ինչ, և վասն այնպիսի վաստակոց ձեր հաստուցումն արարեալ է։ Զգործս նոցա գիտեն զաւառակիցք նոցա և այլ մարդիկ աշխարհին Հայոց, թէ որպիսի՛ մարդիկ են... ընդ որս կրտսեր շինական մարդիկ աշխարհին Հայոց հաց զարշէին ուտել, և կամ ընաւ մօտ իսկ երթալ առ նոսա... զայլն խաբէութեամբ զձեր օրէնսդ ունէին, և ըստ կամի աղտեղեալ զկրակն՝ զձեզ առ անմիտս ունէին։ Յաղագս որոյ համարձակապէս ձայնիւ բարբառով առաջի ձեր ասեմ այսօր. ի բաց բարձէք զխաբէութեան զվաճառդ զայդ յաշխարհէն Հայոց։... Եթէ դուք ի մէնջ որպէս ի ծառայից զձեր տերանց զպատիւն խնդրէք, զգործ և զվաստակ և զհպատակութիւն, զօգուտ, զարդարմտութիւն՝ անզրկող մտօք զիւրաքանչիւր մարդոյ ըստ իւրաքանչիւր վաստակոյ զարժանն հատուցէք։ Մեր ամենեցուն այդ բանք են և այդ խնդիր, եթէ շնորհեալ հաստատէք զխնդիրդ զայդ մեզ, և ի ծառայութենէ ձերմէ զմեզ ի բաց չկամիք հանել՝ որպէս օրէնքն են թագաւորաց՝ գրով և կնքով զայդ մեզ հաստատուն արարէք, և ի մէնջ որպէս ի ծառայ որերոյ գործ խնդրեցէք և հպատակութիւն. և ձեր մտացի և ամենահայեաց ակամբ հայեցարուք յայր և ի գործ նորուն, և հատուցէք զարժանն։ Իբրև խօսեցաւ զայս ամենայն բանս Մամիկոնեանն Վահան առաջի թագաւորին Վաղարշու և առաջի ամենայն աւագանւոյ դրանն՝ բարձր ձայնիւ գովեցին ամենեքեան և առ լաւս կալան զնա, զարմացեալք ընդ իմաստութիւնն և ընդ շնորհ աջողութեան բանիցն որ ելանէին ի բերանոյ նորա։... Յայնժամ պա-

տասխանի տուեալ Թագաւորին Վաղարշու՝ ասէր ցՄամիկոնեանն Վահան և ցամենայն Հայ նախարարսն ուխտակիցս նորա. Զամենայն զոր ինչ խորհեալ է ձեր և իմացեալ, և խօսեցաւ առաջի մեր ձեր Վահան՝ տուեալ եղիցի ձեզ մեր գրով և կնքով այսօր մինչև ցյաւիտեանս. և զգործ ապստամբութեանդ զոր ի բռնութենէ Պերոզի և ոչ ի ձեր կամաց գործեցէք՝ թողեալ լիցի ձեզ այսօր, և մի ոք իշխեսցէ ի թագաւորաց որ զայս գահ ունին և կամ Արի այր յիշել զայդ կամ առանձինն յիւրեանց խօսս և կամ առաջի առն Հայոյ յայսմհետէ մինչև յաւիտեան: Բայց դուք զհպատակութիւնն զոր արժան է ծառայից առ տեարս առնել՝ հաստուցէք առ մեզ լիով և կատարեցէք: Զայս ասացեալ թագաւորին արձակեաց զատեանն» (Փարպ. ՂԵ.):

**40.** Աւագանին գիտնալով թագաւորին յօժարութիւնը՝ կը խնդրեն տալ Վահանայ Մամիկոնեան ցեղին նահապետութիւնն հանդերձ սպարապետութեամբ: Վահան իմանալով զայս՝ հազիւ կ'առնու յանձն, ի թախանձելոյ նոցա ստիպեալ: Միւս նախարարաց ևս կը տրուի ինչ որ պատշաճ էր: Երբ Վահան և իւրքն կու գան հրաժարել թագաւորէն՝ Վաղարշ կը հարցունէ Վահանայ, թէ գո՞հ էք ընդունելութենէն որ եղաւ նմա և իւրոցն: Վահան յետ պատշաճ շնորհակալութեան, լի իմաստութեամբ և խոնարհութեամբ կը խնդրէ տալ նաև Կամսարականաց իւրեանց տոհմին նահապետութիւնը, և կը տրուի: Արծրունեացը միայն կը մնայ առ ժամն: Այսպէս կ'արձակուին Վահանեանք, և հասնելով ի Հայս՝ կ'ընդունուին մեծ ուրախութեամբ կաթողիկոսէն և ժողովրդենէն, և գալով ի Վաղարշապատ, յետ այց առնելոյ սուրբ տեղեաց՝ Վահան կու գայ ի Դուին որ բուն ոստանն էր.—«Ի վաղիւն խորհեալ աւագանւոյ դրան թագաւորին Վաղարշու, որ գիտէին թէ կարի սիրով ախորժէ և կամի լսել և առնել՝ խնդրեցին տալ Մամիկոնենին Վահանայ զտէրութիւն Մամիկոնէից և զսպարապետութիւն Հայոց, և թագաւորն կամաւ և սիրով յանձն առնոյր: Իբրև ծանուցին Վահանայ զկամս թագաւորին՝ պատասխանի արարեալ ասէր. Ընդդիմանալ կամացն ձերոց և հրամանին չունիմ իշխանութիւն, և չիս կողմն կամք ձեր և արարուած կարի մեծ է և առաւել: Բայց կամէի թէ սակաւ մի գործ ցուցանէի և սպաս, որով ձեզ ըստ արժանի հաճոյ եղեալ՝ հայէիք ի վերայ, և ապա որ ինչ թուէր ձեզ և կամէիք առնել՝ առնէիք. բայց առ այս նուազ կամէի թէ ներէիք ինձ: Եւ թագաւորին և ամենայն աւագանւոյն լռեցուցեալ զբանս Մամիկոնենին Վահանայ՝ բազմեցուցանէին զնա ի գահու տէրութեան Մամիկոնենից, տուեալ ցնա ըստ օրինի նախնեաց իւրոց և

զսպարապետութիւն Հայոց աշխարհին։ Շնորհէին և այլոց ուխտապահ նախարարացն Հայոց իւրաքանչիւր ումեք ի ժամուն որ ինչ պէտք էին պատշաճ ըստ անձին արժանաւորութեան։ Եւ ընկալեալ զամենեսին թագաւորին Վաղարշու և ամենայն աւագանւոյն լի սիրով և պատուով՝ ի հրաժեշտ կացուցանէին երթալ խաղաղութեամբ յաշխարհն Հայոց։ Եւ եկեալ տէրն Մամիկոնէից և սպարապետն Հայոց Վահան հրաժարել ի թագաւորէն Արեաց Վաղարշէ և յամենայն դրանն աւագանւոյն՝ հարցանէր թագաւորն Վաղարշ զնա և ասէր. Վահան, սպարապետ Հայոց, գո՞հ ես զմէնջ. քաջ կալո՛ք՝ թէ պիտի այլ ևս ինչ. ասա։ Եւ զօրավարին Հայոց Վահանայ պատասխանի տուեալ ասէր ցթագաւորն. Զոր ինչ ձեր բարերարութիւնդ առ մեզ արար՝ Աստուծոյ միայն որ ամենեցուն արարիչ է և զամենայն մարդոյ կամի զբարի և զօգուտ, հնար և վայելուչ է առնել առ մարդ, դուք արարէք զայդ առ մեզ անարժան ծառայս։ Քանզի զվնասն թողէք, զահ և պատիւ տուեալ մեծարեցէք, մեռելութեան յարուցիչ եղայք, զգլորեալ և զկորուսեալ աշխարհ մի գտեալ կանգնեցէք։ Բայց որովհետև հարցէք և համարձակեցուցէք զորդարն ասել, որպէս եղէք աստուածաբար կենդանացուցիչ մեռելութեան իմոյ, և յարուցեալ զիս ի միջի արարէք՝ կամէի թէ զբովանդակ անձնս յարուցեալ էր և ոչ զկէսս, վասն զի զկէսս մեռեալ տեսանեմ դեռ։ Եւ թագաւորին Վաղարշու հարցեալ ասէր. Ա՛զէ, յայտնապէս ծանո մեզ զպէտս բանիդ զի գիտասցուք։ Եւ սպարապետն Հայոց Վահան ասէ. Զի թէ հնար էր շնորհել ձեզ զտանուտէրութիւնն Կամսարականին՝ ապա բովանդակապէս շնորհեալ ի ձէնջ տեսանէի զմեռելութիւն ամենայն անդամոցս կենդանացեալ։ Եւ թագաւորին Վաղարշու պատասխանի արարեալ սպարապետին ասէր. Յաղագս ոչ կարի տրտմեցուցանելոյ զքեզ ի ժամուս, և զարձեալ վասն զի նախ և առաջին զայդ պարգև խնդրեցեր ի մէնջ՝ եղիցի վասն քո տուեալ զտէրութիւն Կամսարականին։ Իսկ յաղագս տէրութեանն Արծրունւոյն, թող վայր մի մարդիկն որ ի տոհմէն են՝ սպաս ինչ արժանաւորապէս ցուցցեն առ մեզ, և վաստակս ինչ յօգուտ Արեաց վաստակեսցեն, հայեսցուք ապա և մեք յարժանն. բայց դու այժմու ի մէնջ պարգևիդ գոհ լեր, և ջանա ամենայն ուժով տիրասէր լինել յայսմհետէ և արդարամիտ և աշխարհաշէն, և երթ բարեաւ ի քո ընտանիս և յաշխարհն, և հասելոյ երբէք ի մէնջ հրամանի կազմ կաց և պատրաստ։ Եւ հրաժարեալ թագաւորին Վաղարշու զսպարապետն Հայոց զտէրն Մամիկոնէից զՎահան և զամենայն նախարարս Հայոց՝ արձակէր խաղաղութեամբ։ Իբրև գայր զօրավարն Հայոց Վահան յաշխարհս Հայոց՝ ընդ առաջ ելա-

նէր նմա սուրբ այրն Աստուծոյ կաթողիկոսն Յոհան պատուական նշանաւ Խաչին... որով յուղարկեացն իսկ ի դուռն զամենեսեան, և ողջունեալ զնա և զամենայն նախարարս որ ընդ նմա և զամենայն բազմութիւն զօրուն օրհնութեան համբուրիւ՝ առնէր ուրախալից սրտիւ. Ցնծացէ անձն իմ ի Տէր, զի զճգնեալ եկեղեցւոյ իւրոյ ջնջեաց զքիրտն որ վասն անուանն Քրիստոսի քրտնեցան, հանգոյց զաշխատութիւնն, սրբեաց զաղտ զինուցն, լուաց զոգիս հաւատարմաց, և զգեցոյց ամենեցուն հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան, որպէս փեսայից եդ պսակս, և որպէս հարսն արքայութեան իւրոյ զարդարեաց զարդու: Ասացեալ զայս ամենայն սրբոյ կաթողիկոսին՝ օրհնեաց զամենեսեան: Նախ գային ի քաղաքն Վաղարշապատ, և ըստ սովորութեան իւրում սպարապետն Հայոց Վահան ուխտակից նախարարօքն որ ընդ նմա էին՝ կային անդ աւուրս, կատարէին զուխտս և զնուէրս ի սուրբ եկեղեցւոջն կաթողիկէի, և ապա յիւրաքանչիւր տեղիս նահատակելոց կուսանաց, և հոգացեալ զպէտս զարմանոյ աղքատացն՝ գային միաբան... ուրախ լինէին զուարճացեալք առ զօրավարին Հայոց տեառն Մամիկոնէից Վահանայ և առ միմեանս. և կացեալ անդ աւուրս՝ ապա չուեալ զօրավարին Հայոց գայր մտանէր ամենայն Հայոց զօրուն բազմութեամբն ի բուն ոստանն Հայոց ի Դուինն»: (Փարպ. ՂԶ, ՂԷ.):

**41.** Յետ ոչ բազում աւուրց գալստեանն Վահանայ ի Հայս, ինչպէս կը թուի՝ Անդեկան ոմն այր զգօն կու գայ իբրև մարզպան, որ տեսնելով Վահանայ իմաստութիւնն յամենայնի, սիրեց զնա, և շատ անգամ գովութեամբ կը յիշէր զՎահան ի թուղթս իւր առ աւագանին Պարսից և առ Վաղարշ: Ապա յերթալ նորա ի դուռն՝ խրատ տուաւ թագաւորին՝ զնոյն ինքն զՎահան կարգել մարզպան Հայոց, և եցոյց, թէ որչափ օգտակար լինելոց է այս թէ Հայոց և թէ տէրութեան: Հաճոյ թուեցաւ թագաւորին և աւագանւոյն խորհուրդն Անդեկանայ, և Վահան կարգեցաւ հրովարտակաւ մարզպան Հայոց փոխանակ Անդեկանայ, յանպատում ուրախութիւն Հայոց, ինչպէս համառօտիւ բայց գեղեցիկ կը պատմէ Փարպեցին.—«Յայնժամ գայ յերկիրս Հայոց մարզպան որում անուն էր Անդեկան, այր մտադիր, որ գիտէր որոշել զիմաստունն յանմտէն և զլաւն ի վատթարէն: Տեսեալ նորա օր ըստ օրէ զաստուածատուր իմաստուն աջողութիւնս, որ բնակեալ էին ի զօրավարին Հայոց տեառն Մամիկոնէից Վահանայ՝ զարմանայր ի միտս իւր ի ծածուկ. սիրէր զՎահան և ի դուռն ամենայն աւագանւոյն ծանուցանէր: Տայր գիտել և թագաւորին Վաղարշու լիով զամենայն: Ճանապարհորդեալ և ինքն ի դուռնն՝ խօսէր ընդ թագաւորին առաջի ամենայն աւագա-

ւոյն յոյժ զարմանալով։... Համարձակիմ, ասէ, առաջի ձեր ասել
յայտնապէս, թէ աւելի է ձեզ և անդէպ այլ մարզպան կացուցա-
նել։ Քանզի այլ մարզպան որ երթայ յաշխարհն Հայոց՝ նախ և ա-
ռաջին զայն խրատ չունի զոր այրն այն ունի։... Եւ դարձեալ օ-
տար մարզպան որ երթայ յաշխարհն Հայոց, քանզի աշխարհն մեծ
է՝ յամս երկուս և երիս հազիւ կարէ ճանաչել զիրս աշխարհին,
զդիւրն և զդժուարն, ապա զմարդիկ աշխարհին, զլաւսն և զվատ-
թարսն, զանպիտանս և զպիտանիս, և վարելով ըստ անգիտու-
թեան խառն ի խուռն՝ ոգւոց շատ ծանր լինի։ Իսկ նա, զի բնիկ
յաշխարհէն է՝ զամենեսեան յականէ ճանաչէ, և զլաւն առ լաւն
ունի, և զանպիտանս առ յետինս։ Առաւել ևս՝ մարզպանն պարսիկ
որ երթայ յաշխարհն՝ կնաւ երթայ և որդւովք, դրամբ և սիրելեօք,
ծառայիւք և աղախնեօք, և այն ամենեքեան եթէ զԱրեաց տեառն
զռոճիկ ուտեն՝ չեն սակաւ ծախք, և եթէ զաշխարհին ուտեն՝ շատ
վտանգ հասանէ աշխարհին մարդկան։ Իսկ նա թէ լինի՝ զիւր տանն
համբար ուտէ, և զամենայն յարքունի գանձ համարի, և արքունի
իրաց օգուտ լինի։...։ Եւ լուեալ զայս ամենայն բանս յԱնդեկանայ
թագաւորին և ամենայն դրանն աւագանւոյն՝ հաճեալ մեծաւ գո-
վութեամբ առ լաւս կալան զԱնդեկան, որպէս զայր տիրասէր և աշ-
խարհաշէն։ Վաղվաղակի հրամայէր թագաւորն Վաղարշ միաբանու-
թեամբ ամենայն աւագանւոյն դրանն և Արեաց՝ հրովարտակ առնել
ի Հայս, և զտէրն Մամիկոնենից զզօրավարն Հայոց Վահան մարզպան
ի վերայ աշխարհին Հայոց կարգել։ Բերեալ զհրովարտակ մարզպանու-
թեանն տային ցՎահան, և մարզպան ի վերայ աշխարհին Հայոց
կարգեալ հաստատէին զնա։ Իսկ Վահան ընկալեալ զհրովարտակ
մարզպանութեանն ի ձեռաց դեսպանին, թէպէտ և զխանդաղատու-
թիւն Հայ մարդկանն ճանաչելով ծանրանայր ընդ իրսն՝ այլ սա-
կայն և ոչ ընդդիմանալ հրամանի թագաւորին իշխէր և անհնա-
զանդ լինել։ Առեալ զհրովարտակն՝ խնդրէր վաղվաղակի անդրուար,
երթալ ի տունն Աստուծոյ։ Եւ լուեալ զայս մարդկանն որ ի քա-
ղաքին, զրօհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախարա-
րաց և ազատաց, ոստանկաց և ռամկաց, արանց և կանանց, ծերոց
և տղայոց, այլ և հարսանց անգամ յառագաստաց, մոռացեալ առ
վայր մի առ խնդին զամօթ հարսնութեանն՝ դիմեալ ընթանային
յեկեղեցին։ Ոչ բաւեալ ընդունել զամենեսին տանն Աստուծոյ՝ լնուին
արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրա-
պարակացն շուրջանակի։ Եւ էր այն օր անյագ խնդութիւն և ան-
սպառ ուրախութիւն աստուածասէր բարեսիրացն և ողջախորհուրդ-
մտաց լուսահայեցաց, և սուգ թախծալից և տրտմութիւն անմխ-

թար՝ խօթամտացն և խարդախաց։ Եւ սրբոյ կաթողիկոսին Հայոց Յովհաննու տեսեալ զանկարծելի աւետաւորութիւնն շնորհեալ յԱստուծոյ՝ ցնծալից սրտիւ տայր սաղմոսել ի ժամուն. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, և զՏէր յաղբերացն Իսրայելի. և կարդացմունս հրամայէր զտեղի ելիցն Իսրայելի ի ծառայութենէն Փարաւոնի, և ի Թագաւորութենէն զընթերցուածն՝ ուր թագաւորեցոյց Դաւիթ զորդին իւր զՍողոմոն»։

**42.** Ըստ Փարպեցւոյն՝ Յոհան Մանդակունի որ կաթողիկոս էր ժամանակին՝ այս առթիւ խօսեցաւ ճառ, որոյ օրինակն կայ ի փախճանի պատմութեան Փարպեցւոյն, բայց մեք կը թողունք, իբրև ոչ արժանի, թէ ըստ լեզուին և թէ ըստ մտացն, անուան Մանդակունւոյն, որ եթէ ոչ աշակերտակից՝ գէթ մօտ էր ժամանակաւ թարգմանչաց։ Ճառն է ո՛չ յորդորակ, ո՛չ գովեստ, ոչ շնորհակալութիւն։ Չիք ի նմա ամենևին ո՛չ ակնարկութիւն վերջին յաջող ելից, յորմէ թելադրեալ խօսի առենաբանն, ո՛չ յիշատակութիւն Վահանայ անձին և վաստակոց, և ոչ յիշատակութիւն տիրող իշխանութեան շնորհաց, պարագաներ՝ զորս ակնարկել հարկ էր և վայել. այլ է հասարակաց տեղի Ս. Գրոց պատմական դիպաց ինչ, որ չունին ամենևին պատշաճութիւն օրուան նիւթոյն։ Միթէ այնչափ հեռի՞ էր Յոհան յոճոյ և ի ճարտարմտութենէ աշակերտակցին կամ գէթ ժամանակակցին իւրոյ Եզնկայ, որ ունի ըստ ամենայնի յոյն հարց երևելիներուն, Բարսղի, Նիւսացւոյն, Ոսկեբերանի և այլոց կատարեալ նկարագիրը։ Զայն կարծիս կը թուի թէ ունէր և հրատարակիչ Փարպեցւոյն, որ կամելով արդարացունել զՄանդակունին՝ ասէ ի ծանօթութեան, էջ 548. «Թուցէ ըստ ճեպ ի ճեպոյ և յանպատրաստից խօսից հայրապետին գրեալ է ճառդ, յորում ընդ բազում վայելուչ և պատշաճ իմաստից՝ են և անյարմար բանք, յաւագոյն օրինակօք ուղղելի»։ Բայց այս պատճառ չթուիր բանաւոր։ Եթէ չլինէր վկայութիւն Փարպեցւոյն, որ կ'ընծայէ զճառն Յովհաննու, և կապակցութիւնն չէր այնպէս սերտ ընդ պատմութեան Փարպեցւոյն՝ մարթ էր թերևս համարել զայն յետնագոյն ժամանակի և դրչի գործ, այսինքն առանց պատրաստութեան խօսուած ի Մանդակունւոյն, և յետոյ յայլմէ յօրինուած ըստ մտացն։ Ուստի եթէ գրուածն է, ինչպէս հաւանական է, նորին իսկ Յովհաննու՝ զարմանալի նշան է արագ խանգարման և՛ մատենագրական հանճարոյ և՛ լեզուին թարգմանչաց այնպէս ի սուղ ժամանակի, այն է ի ժամանակի իբր երեսուն կամ քառասուն ամաց (440—485)։

**43.** Փարպեցւոյն մատեանն, որում հետևեցաք իբրև գլխաւոր

աղբեր երկու մեծ ապստամբութեանց, այն է Վարդանանց և Վահանայ՝ ունի լբը երեսուն և հինգ կամ քառասուն ամաց խռովալից դառն ժամանակներու գործեր, յորս գլխաւոր գործիչ և առաջնորդ է Մամիկոնեան ցեղն։ Կը համարձակինք կոչել զՓարպեցին հաւատարիմ պատմիչ, որ երկրորդ մասին, այն է Վահանայ պատմութեան ժամանակակից՝ իրիք իրիք ականատես ևս է, և այնու մանաւանդ է վստահութեան արժանի, զի կ'ուղղէ զպատմութիւն իւր առ նոյն ինքն Վահան, երկրորդ ապստամբութեան դիւցազն, որոյ և հրամանաւ ասէ թէ գրեց, ինչպէս հաւատալի է։ Կան սակայն երկու կէտեր. որ չկրաւի կու տան տեղի կասկածանաց անաչառ և լուսաւորեալ ընթերցողին. նախ՝ հրաշալիք, որոց ուրեք ուրեք կու տայ մուտ պատմիչն. երկրորդ՝ ճառք կամ բանագնացութիւնք, զորոց բուն պատճէնն կամ զօրինակն կը թուի տալ Փարպեցին։ Առաջնոյն համար կ'արդարացունենք զնա, խորհելով ժամանակին ոգին, որ սովոր էր նորանշան դիպուածներ, որոց պատճառն անյայտ էր՝ ընծայել վերին իրիք զօրութեան, ոգի՝ յոր մէտ էր ոչ երկիւղած Փարպեցին միայն, այլև դիւցազն իսկ նորա, կորովի և՛ ուժով և՛ մտօք։ Իսկ երկրորդին, այն է նամակներու և ատենաբանութեանց համար գիտենք, թէ քան զՓարպեցին շատ աւելի հաւատարիմ հին պատմիչք փորձած են դնել պատմութեան գլխաւոր անձանց բերանը ճառեր, և ընծայել նոցա ատենախօսի կերպարան։ Բուական ստուգութիւն կրնայ մատուցանել բանագնացութեանց որ գրով կամ նամակաւ եղած են։ Հանդերձ այսու չէ հնար աւելաբանութեան գոյն չտեսնել այս մասերուն մէջ, մանաւանդ որ կամ գովեստ են Վահանայ և նորայոցն քաջութեան, և կամ իբր թէ անաչառ պարսաւ երևելի հակառակորդի, ինչպէս Պերոզի վրայ դառն և կծու մեղադրութիւնն, զոր կը դնէ Փարպեցին ի բերան Նիխորոյ և այլոց, նա յաջորդին իսկ Պերոզի՝ Վաղարշու։ Հանդերձ այս ամենայն թերութեամբք, որ չեն մեծ ըստ մեզ՝ պատուական պատմիչ է Փարպեցին։ Առանց Փարպեցւոյն, Եղիշէն միայն՝ անհնար էր մեզ եթէ ոչ բոլորովին ստոյգ, գէթ հաւանական դատաստան կազմել Վարդանանց ինքնին առեղծուածոյ պատմութեան վրայ։

Ձենք կարծեր թէ գգայուն ընթերցողք մեղադրեն զմեզ, որ այնպէս երկայն և մանր առինք երկու ապստամբութեանց, Վարդանայ և Վահանայ պատմութիւնն, որ է արդարև տխուր ժամանակի, մինչ ակար բայց մեծարոյ Հայն, թող իւր ազատութեան կորուստը՝ կ'ողբար ոչ միայն անհնարին վիշտը զոր կը կրէր Սասանեան հարստութեան մոլեռանդ բռնութենէն, յորոյ ի ծուղակն ինկած էր աչօք բացօք, այլ և այն պատճառաւ գիւր ներքին երկ-

*պառակութիւնն։ Փարպեցին կ'աւանդէ մեզ մեր պատմութեան այս ողբալի մասն այնպէս՝ որ անհնար է զգալուն ընթերցողին չհեղուլ արտասուաց կաթիլներ։ Փառաւոր նախարարութիւն՝ յանդգարձ օտարութեան, պատուական զինուորութիւն՝ նշաւակ անթիւ վտանգներու կանայք, արդարև փափկասունք ըստ Եղիշէի՝ ի յետին կարօտութեան, տխեղծ մանկտի՝ ընդ խնամով անխնամ մարց, սքանչելի հովիւ՝ սրտառուչ ի գլուխ հօտին—զայս ամենայն զոր հազիւ բաւական էր պատմել Մեղուն ատոխկեցի՝ կը պատմէ մեզ Փարպեցին այնպէս խանդակաթ։ Եթէ մեր բովանդակ պատմութիւնն համեմատենք մարմնոյ՝ Վարդանայ և Վահանայ պատմութիւնն է այն մարմնոյն սիրտը։*

Վ Ե Ր Ջ։

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

## *Չորրորդ մասին։*


ԳԼՈՒԽ Ա. *Հայք յանտէրնչութեան։ Մատենագրական շարժումն* . . . . . . . . . . եր. 5

ԳԼՈՒԽ Բ. *Առաջին նահատակութիւն Հայոց։ Գործք Վարդանայ* . . . . . . . . . . » 112

ԳԼՈՒԽ Գ. *Անցք որ զկնի* . . . . . . . . . . » 169

ԳԼՈՒԽ Դ. *Երկրորդ նահատակութիւն Հայոց։ Քաջութիւնք Վահանայ* . . . . . . . . » 213

# ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ Ա.

| էջ | տող | | | |
|---|---|---|---|---|
| 1 | 7 | ըստ մեր | ընթերցիր | ըստ մեզ |
| 12 | 15 | պատանը | » | տապանը |
| 45 | 8 | նոր ստոյգ | » | ստոյգ |
| 63 | 33 | օր | » | որ |
| 68 | 1 | Արմենոյ | » | Արմենիոյ |
| » | 25 | մտրակ | » | մտրուկ |
| 80 | 18 | նոյն | » | յոյն |
| 95 | 26 | նոյն | » | ի նոյն |
| 101 | 20 | ետ | » | յետ |
| 104 | 23 | զկազմութիւն | » | զբազմութիւն |
| 126 | | (Այս էջին առաջին երկու տողերը կարդա երրորդ և չորրորդ տողերէն ետքը)։ | | |
| 126 | 1 | Նախ... Ցինուէի | ընթերցիր | Նախ... Նինուէի |
| 127 | 31 | Վակարշակ | » | Վաղարշակ |
| 156 | 3 | Հրաժարելով | » | Հրաժարելոյ |
| 162 | 4 | Յուղագս | » | (Խոր. յաղագս |
| 163 | 27 | կ'սպաննէ | » | կ'սպաննէ զմայրն |
| 171 | 33 | ի շնորհակալութեան | » | ի շնորհակալութիւն |
| 182 | 3 | եկան | » | եղան |
| 185 | 5 | կաթողիկսի | » | կաթողիկոսի |
| 188 | 21 | ո՛րպիս | » | որպիսե՞ |
| 196 | 36 | Խորենացեն | » | Խորենացին |
| 198 | 29 | մոլոր | » | մոլար |
| 199 | 34 | Խորենացւոյն | » | ի Խորենացւոյն |
| 207 | 35 | սափարակ | » | տափարակ |
| 209 | 23 | ար" | » | արս |
| » | 28 | կոչէն | » | կոչին |

[Հռ-5ԵՀ]

665

ուՀանգստեան



| էջ | տող | | | |
|---|---|---|---|---|
| 222 | 36 | լ | ընթերցիր | ցեղէ |
| 223 | 7 | Իսմայելա ի | » | Իսմայելացի |
| 235 | 13 | թէ ու | » | թէ դու |
| 245 | 39 | եայ | » | յեա |
| 248 | 11 | ի գաւակայ | » | ի գաւակացն |
| 256 | 20 | Վանձ ահագն | » | անձ Վահագն |
| 258 | 1 | համարեցան | » | համարեցաւ |
| 261 | 32 | քամակեալ | » | քամահեալ |
| 265 | 36 | պատմութեանը | » | պատմութեան |
| 269 | 38 | ազգայնին | » | ազգայինն |
| 272 | 5 | հայկական | » | հայական |
| 273 | 36 | ին | » | մին |
| 277 | 22 | anguement | » | augment |

---

## ՄԱՍՆ Բ.

| էջ | տող | | | |
|---|---|---|---|---|
| 11 | 23 | արիւնական | ընթերցիր | արիւնահան |
| » | 30 | արիւնականք | » | արիւնահանք |
| 14 | 9 | գլատիճն | » | գլատիժն |
| 78 | 11 | Հռոմայեցւոյն | » | Հռոմայեցւոցն |
| 85 | 1 | մինչև | » | մինչ |
| 118 | 17 | գմմրիկ | » | գմրրիկ |
| 131 | 27 | «Հայն | » | Ստրաբոն յասելն, «Հայն |
| 140 | 10 | վտանգի | » | ի վտանգի |
| 156 | 14 | (կը թուի | » | (կը թուի թէ |
| 161 | 16 | մինչև | » | մինչ |
| 170 | 39 | մարդկանց | » | մարդկան |
| 185 | 13 | հայ | » | կայ |
| 193 | 9 | Հրահատ Գ. | » | Հրահատ Դ. |
| 194 | 4 | կը խնդրէին | » | կը խնդրեն |
| » | 27 | ինչպէս | » | մինչև |
| 195 | 3 | արժան | » | արժանի |
| » | 20 | առնլոյ | » | առնելոյ |
| 202 | 1 | Անրշակունեաց | » | Արշակունեաց |
| 223 | 7 | ի խարս | » | ի խարս |
| 268 | 9 | դրութիւնը | » | տեսութիւնը |
| 271 | 3 | ի մի մեհենին | » | ի մեհենին |

| էջ | տող | | | |
|---|---|---|---|---|
| 273 | 36 | Նորա | | |
| 274 | 3 | (եւ այլուր) | | |

---

## ՄԱՍՆ Գ.

| էջ | տող | | | |
|---|---|---|---|---|
| 14 | 26 | այն | ընթերցիր | այն է |
| 30 | 9 | ի մի | » | մի ի |
| » | 27 | բուն | » | գրուն |
| 74 | 38 | Յայնպխում | » | «Յայնպխում |
| 116 | 23 | տապարեզի | » | տապարեզին |
| 119 | 11 | Համագապուհու | » | Համագ… ուհւոյ |
| 154 | 29 | դաՀի | » | … Հարեալ |
| 196 | 35 | այրին». – Սուրենայ | » | այրին. «Սուրենա- |
| 209 | 26 | Սա ակայ | » | ՍաՀ… |
| 212 | 15 | ոչ չենք | » | ի պատիւ |
| 242 | 8 | պաշտիւ | » | մինչ |
| 255 | 7 | այդ | » | արդ |
| 276 | 29 | ով | » | ով որ |
| 299 | 13 | որդի | » | որդիք |
| 354 | 1 | է ի նի վաղուց | » | էին ի վաղուց |
| 370 | 32 | Հոգևոր | » | Հոգևորի |
| 376 | 20 | Հետակազօր | » | Հետևակազօր |
| 381 | 13 | պատմութեան | » | պատմութիւնը |

---

## ՄԱՍՆ Դ.

| էջ | տող | | | |
|---|---|---|---|---|
| 73 | 18 | խաղցրախօս | ընթերցիր | քաղցրախօս |
| 74 | 24 | բայց ի | » | բաց ի |
| 79 | 19 | չէ յիշեր | » | չեն յիշեր |
| 82 | 32 | ձեռն | » | ձեռք |
| 83 | 19 | Հայս | » | ի Հայս |
| 85 | 25 | այն և | » | այլ և |
| 91 | 1 | ի պատանին | » | ի տապանին |
| 107 | 5 | բանի | » | բունի |

[Չո-50Ն]
665



ըԸ ջաՀանաջկս
նգուՆինք

| էջ | տող | | | |
|---|---|---|---|---|
| 222 | 36 | լ | ընԹերցիր | ցեր բարեկամներն: Խզեց |
| 223 | 7 | Իսմայելա ի | » | յարաբերուԹիւնը Վրաց |
| 235 | 13 | Թէ ու | » » | ախորժուԹեամբ |
| 245 | 39 | եայ | » | բերելով |
| 248 | 11 | ի զաւակայ ,Թ.) | » | (Փարպ. ԾԹ.) |
| 256 | 20 | Վանձ . | | |
| 258 | 1 | Հայ | | |
| 261 | 32 | | | |
| 265 | 36 | | | |
| 269 | | | | |
| 272 | | | | |
| 273 | | | | |
| 277 | | | | |

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0080176

Լիբռ-Հ
665